

ԼՐԱԲԵՐ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК**

**НАУЧНО-ОБЩЕСТВЕННЫЙ ЖУРНАЛ
ԼՐԱԲԵՐ ԱՏԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

3(654)

**ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ**

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈՐՈՒՆՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆՅԱՆ,
ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԴԻԿ ԿԱԶԻՆՅԱՆ,
ՐՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ,
ՎԱՇԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՏՅԱՆ, ԳԵՎՈՐԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՐՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

© Լրաբեր հասարակական գիտությունների

© Вестник общественных наук

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարգարյան Ե.Հ. – Խորհրդային Հայաստանում հեղինակական հետազոտությունների պատմությունից.....	12
Նահապետյան Ռ.Ա. – Ազաթանգեղոսի երկը՝ վաղմիջնադարյան հայոց կենսաապահովման մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր.....	25
Սահակյան Ա.Ս. – Գրիգոր Լուսավորչի ազաթանգեղոսությունից մինչև «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց».....	41
Ավագյան Ք.Ռ. – Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը՝ սփյուռքահայության առաջնահերթությունների վերաբերմամբ (համաշխարհային գործընթացների համատեքստում).....	59
Սարգսյան Կ.Ա. – Քաղաքական սոցիալականացումը քաղաքացիական մշակույթի համակարգում.....	71
Արշակյան Ա.Ս. – Արդի գերմանահայ համայնքի կազմավորման նախապատերազմյան շրջանը.....	83
Աղասարյան Վ.Կ. – Քրդական ազգայնականության ձևավորման հիմնական փուլերը Թուրքիայում և Սիրիայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո.....	98
Հովհաննիսյան Գ.Ս. – Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական պատկերն Առաջին աշխարհամարտի նախաշեմին.....	106
Ստեփանյան Ա.Վ. – Անիի Բագրատունյաց թագավորության անկումը. Գագիկ Բ-ի հաստատվելը Կապադովկիայում.....	116

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Տ.Վ. – ՀՀ հարկային օրենսդրության ընդհանուր բնութագիրը.....	129
Միքայելյան Մ.Վ., Միքայելյան Գ.Մ. – Տնտեսական մրցակցության կարգավորման որոշ հարցեր.....	148
Հախվերդյան Դ.Ն. – Տեխնոլոգիական հեղափոխությունը և համաշխարհային տնտեսությունը.....	157
Դավթյան Ս.Ռ. – Անշարժ գույքի հետ կապված գործարքները X-XVI դդ. Հայաստանում.....	164
Մանասյան Վ.Գ. – Աշխատանքի տարածքաճյուղային բաժանման առանձնահատկությունները ՀՀ պտղաբուծության ենթաճյուղում.....	174

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Արամյան Ա.Գ. – Հայկական և իսպանական վարքերը Հակոբոս առաքյալի մասին.....	188
Աբրահամյան Ա.Ա. – Մաղի տեսակների անվանումները հայերենի բարբառներում.....	199
Գալստյան Ն.Բ. – Ազգապահպանության խնդիրը օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում.....	217
Զաքյան Հ.Ս. – Բարբառային կրկնասեռ բայերը արդի հայերենում.....	225

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ասատրյան Ա.Գ., Սարգսյան Ա.Վ. – Մի ստեղծագործության պատմություն. Յեզար Կյուրիի «Հ.Կ. Այվազովսկու հիշատակին» ռեքվիեմը.....	235
Գամաղեյան Վ.Մ. – Գրիգոր Խանջյանի «Անլուելի զանգակատուն» կոմիտայան շարքը.....	245
Ավետիսյան Ա.Ա. – Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցին.....	259
Սիմոնյան Ա.Ա. – Հայտնության փորագրապատկերները Ոսկան Երևանցու և Թովմա Վանանդեցու հրատարակություններում.....	278
Արտեմյան Լ.Ռ. – Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ստեղծագործական գործունեության հիմնական ուղղությունները.....	300

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյան Ա.Ե. – Հայկական Սաթենիկը և նրա կովկասյան զուգահեռները.....	310
Բաբայան Ֆ.Ս. – Նորահայտ շինություն Դվինի միջնաբերդում.....	332
Հովսեփյան Ռ.Ա. – Տաթև գյուղի (Հայաստան)՝ անձրևին առնչվող ծեսերի մասին (ազգագրական դաշտային գրառումներ).....	347
Մկրտչյան Լ.Ա. – Հայաստանի աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությունից.....	357
Մկրտումյան Լ.Է. – Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթի ժանրային-կառուցվածքային առանձնահատկությունները.....	366

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Սուքիասյան Հ.Կ. – Վահան Թոթովենցի նորահայտ ինքնակենսագրությունը (ծննդյան 125-ամյակի առթիվ).....	380
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննիսյան Ս.Գ. – <i>Իրմա Սաֆրազբեկյան, Օլգա Թումանյան</i>	385
Հովսեփյան Լ.Ս. – <i>Տիգրան Դավիթապյան, Ադրբեջանի հատուկ ծառայությունները և դրանց հակահայ գործունեությունը</i>	391

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Ավագյան Բ.Ռ., Սուքիասյան Հ.Կ. – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հոբելյանը (հիմնադրման 75-ամյակի առթիվ).....	396
---	-----

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ասատրյան Ա.Գ. – Հայ երաժշտագիտության նվիրյալը (Գևորգ Գյուդակյանի ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ).....	402
---	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Маргарян Е.Г. – Из истории эллинистических исследований в Советской Армении.....	12
Нагапетян Р.А. – Труд Агафангела как первоисточник по изучению армянской раннесредневековой культуры жизнеобеспечения.....	25
Саакян А.С. – От благовестничества (агафангельства) Григора Просветителя к "Истории Армении Агафангела".....	41
Авакян К.Р. – Кризис армянской общины Сирии как основа переоценки приоритетов армянской диаспоры (в контексте мировых процессов).....	59
Сароян К.А. – Политическая социализация в системе гражданской культуры.....	71
Аршакиян А.С. – Довоенный период формирования современной армянской общины в Германии.....	83
Агасарян В.К. – Основные этапы формирования курдского национализма в Турции и Сирии после Второй мировой войны.....	98
Оганнисян Г.С. – Демографическая картина армянского населения Елизаветпольской губернии в преддверии Первой мировой войны.....	106
Степанян А.В. – Падение Багратидского царства Ани: утверждение Гагика II в Каппадокии.....	116

ЭКОНОМИКА

Арутюнян В.Л., Арутюнян Т.В. – Общая характеристика налогового законодательства РА.....	129
Микаелян М.В., Микаелян Г.М. – Некоторые вопросы регулирования экономической конкуренции.....	148
Ахвердян Д.Н. – Технологическая революция и мировая экономика...	157
Давтян С.Р. – Транзакции с недвижимостью в Армении в X-XVI вв. ...	164
Манасян В.Г. – Особенности территориально – отраслевого разделения труда в подотрасли плодоводства РА.....	174

ФИЛОЛОГИЯ

Арамян А.Г. – Армянский и испанский апокрифы об апостоле Иакове	188
Абрамян А.А. – Названия видов сита в армянских диалектах.....	199
Галстян Н.Б. – Вопрос сохранения нации в произведениях иноязычных армянских писателей.....	217
Закиян Г.С. – Диалектные глаголы двойственного залога в современном армянском языке.....	225

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Асатрян А.Г., Саргсян А.В. – История одного произведения: реквием Цезаря Антоновича Кюи “Памяти И.К. Айвазовского”	235
Гамагелян В.М. – Комитасовский цикл Григора Ханджяна «Несмолкаемая колокольня».....	245
Аветисян А.А. – Гндевазская церковь Св. Богородицы.....	259
Симонян А.А. – Гравюры апокалипсиса в публикациях Воскана Ереванци и Товма Ванандеци.....	278
Артемьян Л.Р. – Основные направления творческой деятельности армянского государственного симфонического оркестра.....	300

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Петросян А.Е. – Армянская Сатеник и ее кавказские параллели.....	310
Бабаян Ф.С. – Нововыявленное строение в Двинской цитадели.....	332
Овсепян Р.А. – Об обрядах села Татев (Армения), связанных с дождем (этнографические полевые заметки).....	347
Мкртчян Л.А. – Из истории изучения башнеподобных сооружений Армении.....	357
Мкртумян Л.Э. – Жанрово-композиционные особенности армянских народных сказок о животных.....	366

ПУБЛИКАЦИИ

Сукиасян А.К. – Нововыявленная автобиография Ваана Тотовенца (к 125-летию со дня рождения).....	380
---	-----

РЕЦЕНЗИИ

Ованесян С.Г. – <i>Ирма Сафразбекян</i> , Ольга Туманян.....	385
Овсебян Л.С. – <i>Тигран Давитавян</i> , Спецслужбы Азербайджана и их антиармянская деятельность.....	391

НАУЧНАЯ ХРОНИКА

Авакян К.Р., Сукиасян А.К. – Юбилей Института истории НАН РА (к 75-летию со дня основания).....	396
---	-----

НАШИ ЮБИЛЯРЫ

Асатрян А.Г. – Заслуженный армянский музыковед (к 90-летию со дня рождения Геворка Геодакяна).....	402
--	-----

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

E. Margaryan – From the History of Hellenistic Studies in the Soviet Armenia.....	12
R. Nahapetyan – The Work of Agathangelos as a Source on Studying of Life-Sustaining Culture of Early Medieval Armenia	25
A. Sahakyan – From the Gregory Illuminator's Being Agathangelos to the "History of Armenia of Agathangelos".....	41
K. Avagyan – The Crisis of the Armenian Community of Syria as a Ground for Reevaluation of Armenian Diasporan Priorities (In the Context of World Processes).....	59
K. Saroyan – Political Socialization in the System of Civic Culture.....	71
A. Arshakyan – The Prewar Period of Formation of Modern Armenian Community in Germany.....	83
V. Agasaryan – The Main Stages of Formation of Kurdish Nationalism in Turkey and Syria after the Second World War.....	98
G. Hovhannisyan – The Demographic Picture of the Armenian Population of the Elizavetpol Governorate on the Eve of the First World War.....	106
A. Stepanyan – Destruction of the Bagratid Kingdom of Ani: The Affirmation of Gagik II to Cappadocia.....	116

ECONOMY

V. Harutyunyan, T. Harutyunyan – General Nature of Tax Legislation of RA.....	129
M. Mikaelyan, G. Mikaelyan – Some Issues of Settling Economic Competition.....	148
D. Hakhverdyan – Technological Revolution and World Economy.....	157
S. Davtyan – Real Property Transactions in Armenia during the 10 th -16 th Centuries.....	164
V. Manasyan – Peculiarities of Work Division in the Branch of Horticulture in RA.....	174

PHILOLOGY

A. Aramyan – Armenian and Spanish Apocrypha about the Apostle Jacob.....	188
A. Abrahamyan – Denominations of Sieve Types in the Armenian Dialects.....	199
N. Galstyan – Question of Preservation of National Identity in the Works of Foreign Language Armenian Writers.....	217
H. Zakyan – Reciprocal Dialect Verbs in Modern Armenian.....	225

CULTURE AND ART HISTORY

A. Asatryan, A. Sargsyan – The History of one Artwork: The Requiem by César Cui “To the Memory of I.K. Aivazovsky”.....	235
V. Gamaghelyan – The Komitas cycle of Grigor Khanjyan’s “Never-Silent Bell Tower”.....	245
A. Avetisyan – Holy Virgin Church in Gndevaz.....	259
A. Simonyan – Engravings of the Apocalypse in Publications of Voskan Erevantsi and Thovma Vanandetsi.....	278
L. Artemyan – Main Directions of the Armenian State Symphony Orchestra’s Creative Activity.....	300

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

A. Petrosyan – Armenian Satenik and her Caucasian Parallels.....	310
F. Babayan – A Newly Found Structure in the Citadel of Dvin.....	332
R. Hovsepyan – On the Rain-Related Rituals of Tatev Village, Armenia (Ethnographic Field-Notes).....	347
L. Mkrtchyan – From the History of Investigation of Tower-Like Constructions in Armenia.....	357
L. Mkrtumyan – The Genre and Compositional Peculiarities of the Armenian Animal Folk Tales.....	366

PUBLICATIONS

H. Sukiasyan – A New Autobiography of Vahan Totovents (Towards His 125 th Anniversary).....	380
---	-----

LITERARY REVIEWS

- S. Hovhannisyan** – *Irma Safrazbekyan*, Olga Tumanyan..... 385
L. Hovsepyan – *Tigran Davitavyan*, Special Services of Azerbaijan and
their Antiarmenian Activity..... 391

SCIENTIFIC CHRONICLE

- K. Avagyan, H. Sukiasyan** – The Jubilee of the Institute of History,
NAS RA (75 Years since Foundation)..... 396

OUR JUBILEES

- A. Asatryan** – The Devotee of Armenian Musicology (Towards the 90th
Anniversary of George Geodakyan)..... 402

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ե.Հ.

Հելլենիստական հետազոտությունները Հայաստանում սկիզբ են առել համեմատաբար ուշ: Դա կարող է տարօրինակ թվալ մի ժողովրդի համար, որի հին և հարուստ պատմությունը միշտ եղել է ազգային հպարտության առարկա, յուրատեսակ ազգային բրենդ: XIX դարում հին և միջնադարյան պատմությունը որպես «մշակության անդաստան» տրվեց հայ վիպասաններին, որոնց հեղինակությունը մարդկանց մեջ շատ ավելի բարձր էր, քան ակադեմիական պատմաբաններին: Իսկ ակադեմիական հայագիտությունը սաղմնավորվեց Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան կաթոլիկ միաբանության գիտական միջավայրում և երկար ժամանակ զարգանում էր գերազանցապես Արևմուտքում (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա) և Ռուսաստանում: Հայաստանի հին պատմության զարգացման մեջ զգալի ավանդ են ունեցել այնպիսի ականավոր պատմաբաններ և բանասերներ, ինչպիսիք են Անտուան Ժան դը Սեն-Մարթենը (1791-1832)¹, Հուլիուս Հերման Պետերմանը (1801-1876)², Մարի Բրոսսեն (1802-1880), Հենրիխ Հյուբշմանը³, Յոզեֆ Մարկվարտը⁴, Թեոդոր Ռեյնախը⁵, Ֆ. Վինդմանը,

¹ **Saint-Martin A.J.** Histoire d'Arménie XLVIII-462 p., Paris: Impr. royale, 1841; Fragments d'une histoire des Arsacides 2 vol. Paris, 1850.

² **Petermann J.H.** Grammatica linguae armenicae, Berlin, 1837; De Ostikanis, Arabicis Armeniae gubernatrobis, Berlin, 1840; Beiträge zu einer Geschichte der neuesten Reformen des Osmanischen Reiches, Berlin, 1842; Reisen im Orient, 2 Bde., Leipzig, 1860-1861, S. 47.

³ **Hübschmann J.H.** Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen // Zeitschrift für vergleichende Sprachforschung der indogermanischen Sprachen, 1877, Bd. 23, 5-49; Armenische Studien, vol. I, Grundzüge der armenischen Etymologie 1, Leipzig, 1883; = **Hübschmann J.H.** Die altarmenischen Ortsnamen: Mit Beiträgen zur historischen Topographie Armeniens. Indogermanische Forschungen 16, 1904, S. 197-490.

⁴ **Markwart J.** Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien: Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien, 1928, S. 64. Mit 3 Tafeln; id. "Über das Volkstum der Komanen" in W. Bang and J. Marquart, Hrsg.,

Ֆրանց Բուպեն, Ֆ. Մյուլլերը, Պաուլ Անտուան դը Լագարդը⁶, Մաքս Լաուերը, Սոֆուա Բուգեն, Հերբերտ Պետերսոնը⁷ և այլք:

Եվրոպացիների և ռուսների հետաքրքրվածությունն արևելագիտությանը և հայագիտությանը՝ որպես եվրոպական արևելագիտության մի մասի, ակադեմիականից բացի, նաև քաղաքական ենթատեքստ ուներ: XIX–XX դդ. առաջին քառորդում Ռուսաստանը և առաջատար արևմտյան տերություններն Օսմանյան կայսրությունն ընկալում էին որպես «Եվրոպայի հիվանդ մարդ», որի օրերը հաշված են, և նրան համարժեք այլընտրանք էին որոնում, որը ներդաշնակորեն կներգրվեր եվրոպական քրիստոնեական «օրքեստրում»⁸: Եվրոպական մեծ քաղաքականության հետնաբեմում պարբերաբար քննարկվում էր Օսմանյան կայսրության մասնատման և դրա տարբեր հատվածները Հին աշխարհի առաջատար տերությունների հովանուն հանձնելու հարցը: Ենթադրվում էր, որ կայսրության առանցքային տարածքները՝ Բալկանները և Փոքր Ասիան, ձևականորեն կհանձնեն մի ինչ-որ քրիստոնյա ժողովրդի, որը տարածաշրջանում կվարի արևմտյան տերությունների շահերին համապատասխան քաղաքականություն: Բավական երկար ժամանակ այդպիսի ժողովուրդ համարում էին հույներին, որոնք ավանդաբար ընդունվում էին իբրև ինչպես արևմտյան, այնպես էլ արևելաքրիստոնեական քաղաքակրթությունների հիմնադիրներ: Դեռևս Եկատերինա Մեծն էր Միջերկրական ծովում թուրքական նավատորմի լիակատար ջախջախման և Կիլիկիայի կղզիներում հունական հանրապետության⁹ ստեղծման ծրագրեր փայփայում, որից կսկսվեր Հունաստանի և

Osttürkische Dialektstudien, Berlin, 1914, S. 25–238; wiedergedruckt Nendeln-Göttingen, 1970; id. Ērānshahr nach der Geographie des Pseudo-Moses Khorenaci, Berlin, 1901; id. Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903; id. Ueber den Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biographie des heil. Maš't'oc', Vienna, 1917; id. Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Vienna, 1928; id. A Catalogue of the Provincial Capitals of Ērānshahr, Roma, 1931; id. L'Origine et la reconstitution de la nation arménienne/ auteur(s): Josep Marquart - Traduction de Marie-K.-J. Basmadjian, Paris, 1919.

⁵ Reinach T. Mitrادات Eupator, König von Pontos, Leipzig, 1895.

⁶ de Lagarde P.A. Armenische Studien, Dieterich, 1877.

⁷ Petersson H. Arische und armenische Studien, Leipzig, 1920.

⁸ Հին հուն. ὀρχήστρα, անտիկ թատրոնում հարթակ երգչախմբի համար, ունիսոն նվագող կոլեկտիվ, նվագախումբ:

⁹ Տե՛ս Усыкин Л. Екатерина Вторая: Архипелаг – кулак./ <http://www.polit.ru/article/2008/12/19/ekaterina/>; Смилянская Е.Б. Русские в Средиземноморье. Архипелагская

Բյուզանդիայի վերածնունդը¹⁰: Նման ծրագրեր փայփայում էին Հաբսբուրգ-ների կայսերական ընտանիքում և Եվրոպայի այլ երկրներում:

Պատահական չէ, որ հենց այդ շրջանում են կատարվել Բյուզանդիայի պատմությանը նվիրված առաջին հիմնարար հետազոտությունները, այդ ժամանակ է շրջանառության դրվել «արևելյան հելլենիզմ» հասկացությունը: Հույներին առաջ են մղում որպես Բալկանների և Փոքր Ասիայի իսկական տերեր: Սակայն որոշ ժամանակ անց Արևմուտքի և Ռուսաստանի քաղաքական շրջանակներում, մանավանդ 1770 թ. Պելոպոնեսյան ապստամբության ճնշումից հետո (արևմտյան գրականության մեջ հայտնի է որպես Օրլովյան ապստամբություն)¹¹, ռուս-հունական հարաբե-

экспедиция как опыт освоения культурного пространства. ГИИМ: Доклады по истории 18 века – DHI Moskau: Vorträge zum 18. Jahrhundert Nr. 4 (2010) http://www.perspectivia.net/publikationen/vortraege-moskau/smilyanskaya_mittelmeerraum; **նույնի՝** Опыты российского управления «заморскими территориями»: к истории Архипелагского княжества Екатерины Великой (Русь, Россия: Средневековье и Новое время, вып. 4. Четвертые чтения памяти академика РАН Л.В. Милова. Материалы международной научной конференции, М., 26 октября – 1 ноября 2015 г., М., 2015, с. 517-522; **Арш Г.** Греция. Торговля. Просвещение. Война 1768-1774 гг. Восстание в Море; **Зорин А.** Русская ода конца 1760-х – начала 1770-х годов, Вольтер и «греческий проект» Екатерины II. Հրապարակված է НЛО ամսագրում, 1997, 24. <http://magazines.russ.ru/nlo/1997/24/zorin.html>; **Басилов Ю.** Трансфер республиканских идей во время экспедиций русского флота в Греческий архипелаг (1770-1774).

¹⁰ Անգլիայի դեսպան Զ. Հարիսն այս առիթով տեղեկացնում էր Լոնդոնին. «Իշխան Պոտյոմկինի միտքն անընդհատ զբաղված է արևելքում կայսրության ստեղծման գաղափարով. նրան հաջողվել է կայսրուհուն վարակել այդ գզացումներով, և նա այնքան է ենթարկվել քիմերների, որ նորածին Մեծ Իշխանին կնքել է Կոնստանտին անունով, նրա համար ստնտու է վարձել հույն կնոջ՝ Հեղինե անունով, և իր շրջապատում խոսում է այն մասին, որ նրան բազմեցնի Արևելյան կայսրության գահին: Այդ ընթացքում նա քաղաք է կառուցում Յարսկոյե սելոյում, որը կոչվելու է Կոնստանտինգրոդը» (**Гаррис Д. лорд Мальмсбери.** Россия в царствование Екатерины II (переписка английского посланника при дворе Екатерины II, 1778-1783 (Русский архив, 1874, кн. 1, № 6, стб. 1465-1512):

¹¹ Ալեքսեյ Օրլովն այսպես էր գրում Գրիգորիին այդ տարածաշրջանում ռուսների խնդիրների մասին. «Եթե պիտի գնանք, ապա գնանք մինչև Կոստանդնուպոլիս և ազատագրենք բոլոր ուղղափառներին և բարեպաշտներին ծանր լծից: Եվ կասեմ այնպես, ինչպես ասել է մեր տեր Պետրոս 1-ին իր հրովարտական. իսկ նրանց՝ անհավատ մահմեդականներին, քշել ավազուտ տափաստանները՝ իրենց հին բնակատեղիներ: Իսկ այստեղ կրկին կտիրի բարեպաշտությունը, և կասենք փառք մեր ամենազոր Աստծուն» (**Орлов А.Г.** 1870 - Первая мысль о морейской экспедиции графа А.Г. Орлова (Заря, 1870, № 6, Прилож). Տե՛ս նաև **Зорин А.Л.** Кормя двуглавого орла... (Русская литература и государственная идеология в последней трети XVIII-первой трети XIX века,

րություններում խոր ճեղք առաջացավ¹²: Օսմանյան լծի տակ գրեթե կես հազարամյակ անցկացրած հույները կորցրել էին երբեմնի ավյունը¹³ և, ինչպես պարզվեց, այնքան չէին համապատասխանում թուրքերի քրիստոնեական այլընտրանքը լինելու դերին: Եվ այդ ժամանակ արևմտյան և ռուս արևելագետների ուշադրությունը տեղափոխվեց հայերի, սիրորինե-

М., 2001, с. 50); Ср. также: **Достоевский Ф.М.** Дневник писателя (Полное собрание сочинений в 30 томах, т. 26, Л., 1984, с. 83).

¹² Ինչպես Պյոտր Մեծի Կասպիական արշավանքի ժամանակ, ռուսները չցուցաբերեցին պատշաճ հաստատամտություն և հետևողականություն ծրագրված խնդիրների իրագործման հարցում. անպատասխանատու կերպով հուսադրելով տեղի քրիստոնյաներին, հատկապես հայերին՝ նրանք վճռական պահին զիջեցին թուրքերին՝ դաշնակիցներին թողնելով բախտի քմահաճույքին: Հույների համար դա վերածվեց ողբերգության, սոսկալի կոտորածի Պելոպոնեսում, որը մնացածներից շատերն ընդմիշտ լքեցին Մորեան: Ծաղկուն երկրամասը վերածվեց խանձված անապատի: Շատերը հիասթափվել էին Ռուսաստանի օգնության հարցում, քանի որ հույների ապստամբությունը, ինչպես պարզվեց, ընդամենը նպատակ ուներ շեղել թուրքերի ուշադրությունը Դանուբի ճակատում ռուսական զորքերի հարձակումից: Իր շահերը պաշտպանելով մերձդանուբյան իշխանություններում՝ Ռուսաստանը լքեց ապստամբներին, մատնելով գազազած մահմեդականների կամայականությանը: Վերջիններս իրենց պարտության վրեժը հանեցին թշվառ հույներից: Բացի այդ, Պելոպոնեսի տեռորը նպատակ ուներ օսմանահպատակ քրիստոնյաների մեջ մեկընդմիշտ կոտրելու ռուսների հետ համագործակցելու փափագը:

¹³ «Տեղի ժողովուրդները կեղծավոր են, խաբեբա, անկայուն, ամբարտաճան, վախկոտ, փողի ու ավարի սիրահար, այնպես որ՝ ոչինչ նրանց չի կարող հետ պահել այս ձգտումից: Դյուրահավատությունը և թեթևամտությունը, թուրքերի անունը լսելուց դողալը նույնպես մեր հավատակիցների վերջին հատկանիշներից չեն», - զայրույթով գրում էր Ա.Գ. Օրլովը: Մերօրյա պատմաբան Կ. Գոլովաստիկովն այսպես է բնութագրում այդ իրավիճակը. «Օրլովի արշավախմբի հետ արշիպելագ եկած ռուսները ստիպված էին հուսահատություն ապրել. ժամանակակից հույները նման չէին հին սպարտացիներին և Մարաթոնի հաղթողներին: Ե՛վ ռուսները, և՛ եվրոպացիները սկսեցին հանգել այն մտքին, որ կղզիների բնակիչները, որոնք քամահրանքով էին վերաբերվում անտիկ հուշարձաններին, արժանի չեն իրենց մեծ անցյալին: Ըստ էության, դա արդարացում ծառայեց մշակութային արժեքների կոլեկցիոնության և դուրսկրման համար. արխիպելագի «հին մարմարե իրերը» («древняя мраморная штучка»), Սպիրիդովի ըտախայտությամբ, շուտով դարձան էրմիտաժի ցուցանմուշներ» (**Головастики К.** Россия – владелица греческих островов. Как русские в порядке эксперимента создали Архипелагское великое княжество – колонию в Эгейском море, гораздо более свободную, чем метрополия, и нашли на ней могилу Гомера (http://riata.ru/kul_tura/item/642-rossiya-vladelitsa-grecheskikh-ostrovov.html; <https://arzamas.academy/materials/87>)). Տե՛ս **Смилянская Е.Б.** Русские в Средиземноморье. Архипелагская экспедиция как опыт освоения культурного пространства. ГИИМ: Доклады по истории 18 века – DHI Moskau, Vorträge zum 18 Jahrhundert, Nr. 4 (2010) http://www.perspektivla.net/publikationen/vortraege-moskau/smilyanskaya_mittelmeerraum.

րի, արաբների ու հրեաների վրա: Այդ ժողովուրդների մեջ թերևս ամենապասիոնար և ճկուն հայերը, այսպես կոչված «Արևելքի շվեյցարացիները», թվում էր՝ ամենահարմարն էին էմիսար ազգի դերի համար: Հայերը պետք է բոլորից շատ շահագրգռված լինեին տարածաշրջանում արևմտյան քաղաքակրթական արժեքների առաջնության գործում: Արաբները հարմար չէին այդ դերին, քանի որ մահմեդական էին և խաչակրաց արշավանքների ժամանակներից չէին վստահում եվրոպացիներին, ասորիների մեծ մասն իսլամացված և արաբացված էր, հրեաները, չնայած վառ արտահայտված պասիոնարությանը, կրոնական և մի շարք այլ գործոնների պատճառով նույնպես հարմար չէին տարածաշրջանում արևմուտքի և հատկապես Ռուսաստանի գործադիր տնօրենի դերին: Հայերի օգտին վկայող ևս մեկ հանգամանք էր այն, որ քաղաքական առումով հայությունը բավարարում էր թե՛ Արևմուտքին, թե՛ Ռուսաստանին, ինչպես նաև տարածաշրջանի մահմեդական ժողովուրդների մեծ մասին (բնականաբար, թուրքերից, քրդերից և չերքեզներից բացի, որոնց, ինչպես ենթադրվում էր, նրանք պետք է դուրս մղեին այս տարածաշրջանից)¹⁴: Այս ամենով է բացատրվում Նոր և Նորագույն ժամանակների առաջատար տերությունների ակադեմիական շրջանակների աճող հետաքրքրությունը արևելագիտության և ի մասնավորի՝ հայագիտության հանդեպ:

Որևէ տարօրինակ բան չկա առ այն, որ հելլենիստական պատմության հետազոտությունները զարգացել են նաև «գաղութային» արևելագիտության հունով: Գրեթե մեկուկես հարյուրամյակ հելլենիզմի պատմության առանցքային քննույթն է եղել այսպես կոչված «սպիտակ մարդու բեռը»: Այդ քննույթի հիմքում արևմտյան գաղութարարի կոլտուրուրեզերյան առաքելության գաղափարն էր, որը եվրոպական քաղաքակրթության լույսն էր բերում Արևելքի ժողովուրդներին՝ հանուն սեփական իսկ բարօրության: Հունա-մակեդոնական նվաճողներին և նրանց հաջորդած հռոմեացիներին հետազոտողները դիտարկում էին բացառապես եվրոպական քաղաքական և էմոցիոնալ «էլիտիզմի» դիրքերից:

¹⁴ Հայերը, հույների նման, չնայած եվրոպական երկրներում, Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում վառ արտահայտված ողջ պասիոնարությանը, իրենց հայրենիքում պատրաստ չէին լուծելու լուրջ խնդիրներ և անհաջողության մատնվեցին:

Սակայն տարօրինակորեն առաջատար արևմտյան պատմաբաններից կամ բանասեր հայագետներից գրեթե ոչ մեկը Հայաստանի պատմության և մշակույթի մեջ չտեսավ հեղինակի գծեր: Ճիշտ նույն կերպ էլ հեղինակի XIX դարի և XX դարի առաջին կեսի պատմագրության հսկաներից և ոչ մեկը, լինեն Յ. Դրոյզենը, Մ.Ա. Ռոստովցևը, Ֆ.Ֆ. Զելինսկին, Է. Բիքերմանը, Վ. Թարնը, Ֆ. Ուոլբանքը թե այլ, չփորձեց ներառել Հին Հայաստանի պատմությունը և մշակույթը հեղինակական քաղաքակրթության միասնական համատեքստում: Քաղաքական, տնտեսական և մշակութային առումով Հայաստանը, ըստ էության, դիտարկվում էր որպես Pax Iranica-ի մաս, որը հնում գրեթե թշնամական վերաբերմունք ուներ հեղինակական-հռոմեական աշխարհի նկատմամբ: Գուցե սա բացատրվում է նրանով, որ հայկական, Կոմագենեի և Ծոփքի երվանդականները, ընդհուպ այդ հարստության անկումը, հաջողությամբ դիմադրում էին Սելևկյան էքսպանսիային, իսկ Արտաշեսյանների գահակալումից հետո Հայաստանն էլ ավելի արդյունավետ էր դիմակայում Սելևկյաններին՝ Տիգրան Մեծի օրոք ուղղակիորեն ոչնչացնելով այդ հունա-մակեդոնական թագավորությունը: Ինքնիշխանության ձգտումը և սեփական պետականության ամրապնդումը, մրցունակությունն ու ազգային շահերին հետամուտ լինելը արևմտյան և ռուս հետազոտողներն ընկալում էին որպես հայերի և Հայաստանին սահմանակից ժողովուրդների կողմից հեղինակական արժեքների անընկալունակության դրսևորում: Հունա-մակեդոնական և հունա-հռոմեական քաղաքակրթությունների տարրերը, որոնք ամենուրեք հանդիպում են Եփրատից արևելք ընկած երկրներում, դիտարկվում էին որպես պատահական և անէական օտար մասնիկներ, որոնք հեռավոր արևելք են բերել հույն գաղութարարները: Սելևկյանների պետության կազմի մեջ չմտած երկրների և ժողովուրդների պատմության և մշակույթի՝ որպես հեղինակականի ընկալումը եկավ ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհայինից հետո (ընդ որում՝ ոչ միանգամից և ոչ բոլորի մոտ): Իսկ մինչ այդ Հայաստանը և մյուս առաջավորասիական երկրները արևմտյան և ռուսաստանցի պատմաբանների կողմից դիտարկվում էին (գաղութատիրական քննության լավագույն ավանդույթներով) լոկ որպես օբյեկտ, որին ուղղված էր հույն-մակեդոնացիների և նրանց փոխարինած հռոմեացիների ակտիվ քաղաքական և էմոցիոնալ գործունեությունը:

Սակայն հայ պատմաբաններն իրենք էլ Հայաստանը չէին ընկալում որպես հելլենիստական քաղաքակրթության բաղկացուցիչ մաս: Մխիթարյան նշանավոր հայագետների՝ Մ. Չամչյանի (1738-1823), Ա. Գարազաշյանի (1818-1903), Ղ. Ալիշանի (1820-1901) և նաև ռուսահայատակ հայագետների աշխատություններում, ինչպիսիք էին օրինակ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովբե Պատկանովը¹⁵, Գրիգոր Խալաթյանցը (1858-1902), իսկական գաղտնի խորհրդական Մկրտիչ Էմինը¹⁶, Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932), գեթ մի ակնարկ չկա Հայաստանում հելլենիզմի վերաբերյալ: Անգամ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի աշխատություններում չեն հիշատակվում հելլենիստական հարաբերությունները Հայաստանում կամ հարակից երկրներում, և դա այն դեպքում, երբ Ն. Ադոնցի ռուսանողական և մագիստրոսական տարիները Ս. Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում և դասախոսական կարիերայի սկիզբը համընկան նույն համալսարանում Ռուսաստանում հելլենիզմի խոշոր մասնագետ Մ. Ռոստովցևի դասավանդման տարիների հետ: (Թեպետ, հանուն արդարության պետք է նշել, որ Ն. Ադոնցի գիտական հետաքրքրությունների ոլորտն ավելի շատ կապված էր Հայաստանի միջնադարի, քան հին պատմության հետ, իսկ նույն Ռուսաստանում, Եվրոպայում սովորած Վ. Ռոստովցևից բացի, ոչ ոք հելլենիզմի մասին պատկերացում չուներ):

Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում լավ դպրոց անցած հայ հետազոտողները նվիրական աշխատանք են կատարել արևմտյան և ռուսաստանյան ակադեմիական հանրությանը արժեքավոր այն տեղեկություններին ծանոթացնելու գործում, որը կա հայկական միջնադարյան

¹⁵ Catalogique de la litterature armenienne depuis le commencement du V jusqu'a XVI siecle. -St.Petersburg, 1859; **Патканов Н.О.** Библиографический очерк армянской литературы, СПб., 1880; «Ванские надписи и значение их для истории Передней Азии». Սույն աշխատանքը տպագրվել է առանձին հոդվածներով՝ «Журнал Министерства Народного Просвещения» ամսագրի էջերում, 1874, 1875, 1881 և 1883 թթ. համարներում, ամսագրի 1883 թ. դեկտեմբերյան (№ 12) համարում:

¹⁶ **Эмин Н.О.** Очерк религии и верований языческих армян, М., 1864; **նույնի՝** Краткий очерк истории армянской восточной церкви (Православное обозрение, 1872, № 5, с. 657-698) և առանձին՝ М., 1872; **նույնի՝** Вахагн-Вишапаках армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды, СПб., 1873, **նույնի՝** Несколько страниц сравнительной мифологии (Труды Восточного Отделения Императорского Русского Археологического Общества, ч. 17, 1874 с. 93-129) և այլն:

աղբյուրներում և ազգագրական նյութերում: Սակայն Ռուսաստանի հայագետների միայն երկրորդ սերունդը՝ Ն. Ադոնց, Ն. Մառ և Հ. Օրբելի, Հ. Մանանդյան, իսկ Վենետիկում՝ Դ. Ալիշան, համարձակվեց ինքնուրույն ընդհանրացումներ կատարել հայագիտության ոլորտում:

Հայաստանի պատմության հեղինակական հետազոտությունների ոլորտում բեկում նկատվեց XX դարի կեսին մոտ: Որակական փոփոխություններն ակնհայտ դարձան արդեն XX հարյուրամյակի երկրորդ կեսին: Այդ ժամանակ անտիկագիտության¹⁷ և Հին Հայաստանի պատմության ուսումնասիրման կենտրոններ էին մնում Լենինգրադի համալսարանական և ակադեմիական կենտրոնները: Այստեղ հիմնարար դպրոց է անցել երիտասարդ հետազոտողների մի ամբողջ սերունդ, որոնք, վերադառնալով Հայաստան, հայկական հեղինաբանության հիմքերը դրեցին:

Ինչպես և ողջ խորհրդային պատմագրությունը, հայկական խորհրդային պատմագրությունը նույնպես խցկեցին ֆորմացիոն տեսության պրոկրուստյան մահիճ: 1920-1930 թթ. ԽՍՀՄ-ում ծավալվեց գիտական բանավեճ Արևելքում ստրկության և ստրկատիրական հասարակարգի շուրջ: Որոշ խորհրդային պատմաբաններ, լինելով Օսվալդ Շպենգլերի տեսությունների ազդեցության ներքո, փորձում էին խորհրդային պատմագիտության մեջ հայտնի և ընդունված հինգ հասարակական-տնտեսական հասարակարգերին հավելել ևս մեկը՝ «ասիական» (արխաիկ) հասարակական-տնտեսական հասարակարգը՝ հիմնված արտադրության ուրույն՝ ասիական եղանակի վրա, որը գոյություն ուներ միայն ասիական հասարակություններում¹⁸: Ինչպես հայտնի է, «ասիական» հասարակարգի տեսությունը մշակել է դեռևս Կարլ Մարքսը «Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը» աշխատությունում («1857-1859 թթ. տնտեսական ձեռագրեր» բաժնում): Սակայն արտադրության ասիական եղանակի կողմնակիցների դեմ հանդես եկան մարքսիստ պատմաբան-ունիվերսալիստները, որոնք աշխարհի երկրներում և տարածաշրջաններում արտադրահարաբերությունների վերլուծության հիման վրա եկել են այն եզրահանգման, որ նման արտադրաեղանակ գոյություն ունի ոչ միայն

¹⁷ St'u Проект «Санкт-Петербургские антиковеды» // <http://centant.spbu.ru/spbant/alph.html>:

¹⁸ St'u Рабство в странах Востока в средние века. Отв. Ред. О.Г. Большаков, Е.И. Кычанов, М., 1986:

արևելյան հասարակությունների զարգացման նախնական փուլերում, այլև առհասարակ բոլոր հասարակություններում՝ այն համարելով բացարձակ և ընդհանրական: Սրանից ելնելով՝ արևելյան այնպիսի հասարակություններ, ինչպիսին է Եգիպտոսը, Նոր թագավորության շրջանում կամ Աքեմենյանների տերությունը, սկսեցին սահմանվել որպես դասական ստրկատիրական հասարակություններ, որոնք, ըստ էության, ոչնչով չէին տարբերվում հունական պոլիսներից կամ Հին Հռոմի հասարակարգից: Մարքսիստական այս պարզեցված տեսության հիմքում համաշխարհային պատմական գործընթացի միասնության գաղափարն էր, որը դրսևորվում էր հասարակարգերի հերթագայության միջոցով՝ որպես մարդկության պատմական զարգացման ընդհանրական փուլեր:

«Հնգանդամ տեսության» հիմնադիր ընդունված է համարել խոշոր եգիպտագետ և ասորագետ, Խորհրդային Միությունում Հին Արևելքի պատմագիտական դպրոցի հիմնադիր Վ.Վ. Ստրուվեին: Նրա տեսական սխեմաները նույնացվել են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մոտեցումների հետ և, որոշ վերապահումներով ու շտկումներով, տիրապետող են մնացել խորհրդային պատմագիտության մեջ ընդհուպ վերակառուցման սկիզբը:

Սակայն ողջ արհեստականությամբ և «գաղափարախոսական ականջները ձգելով» հանդերձ՝ «հնգանդամ տեսությունը» թույլ տվեց նորովի նայել Արևելքի պատմությանը և ազդակ հաղորդեց Հին Հայաստանի պատմության զարգացմանը: Վ.Վ. Ստրուվեի ունիվերսալիստական, համահավասարեցնող մոտեցումը, հատկապես հրաժարումը հատուկ՝ զուտ ասիական հասարակական-տնտեսական հասարակարգի հարացույցից, համենայնդեպս՝ տեսության մեջ, հավասարության նշան դրեց Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի միջև: Եվրոպան զրկվեց բացառիկության և եզակիության բրենդից՝ փոքր-ինչ թուլացնելով ավանդական արևմտակենտրոն դիրքորոշումները խորհրդային պատմագիտության, հատկապես արևելագիտության մեջ: Խորհրդային պատմագիտության մեջ դրվեց հելլենիստական աշխարհի աշխարհագրական և ժամանակագրական շրջանակների հարցը, որոնք զգալիորեն ընդլայնված էին: Առաջարկվեց դրանք տարբեր կերպ սահմանել յուրաքանչյուր առանձին երկրի համար: Մի կողմից՝ հելլենիզմի աշխարհագրական սահմանները բավական ընդլայնվեցին դեպի Արևելք, մյուս կողմից կասկածի տակ դրվեց հելլենիստական աշխարհի շրջանակների մեջ Մակեդոնիան և Հունաստանն ընդգրկելու

իրավաչափությունը: Նշվեց հեղինակի կենսունակության և անգամ Արևելքում հունա-մակեդոնական թագավորությունների անկումից հետո նրա տարրերի ամրապնդման և արմատավորման երևույթի մասին: Ա.Բ. Ռանովիչն առաջարկեց հեղինակը դիտարկել որպես անտիկ ստրկատիրական հասարակարգի զարգացման փուլ¹⁹, որն ինքնին տարօրինակ չի թվում, եթե նկատի ունենանք, որ Վ.Վ. Ստրուվեն դասական ստրկատիրական հասարակությունների թվին էր դասում Աքեմենյան տերությունը և Քաղդեական թագավորությունը:

Այդ նույն ժամանակ ի հայտ են գալիս Սուրեն Տիգրանի Երեմյանի (1908-1992) աշխատությունները՝ նվիրված հեղինակին Հայաստանում: Հայաստանը հեղինիստական պետություն ճանաչելու առաջին քայլը դարձան այն ուսումնասիրությունները, որոնցում Ս. Երեմյանը, հենվելով առաջին հերթին հայկական աղբյուրների վրա, փորձեց Հին Հայաստանը ներկայացնել որպես Միջերկրածովյան տիպի ստրկատիրական երկիր²⁰: Նա մշակեց Հայաստանում և սահմանակից երկրներում ստրկատիրական կարգի զարգացման շրջափուլայնացումը. համայնքային-ստրկատիրական շրջան (մ.թ.ա. VII–IV դդ.), ստրկատիրական տնտեսության ծաղկման շրջան (մ.թ.ա. III դ. – մ.թ. II դ.), ստրկատիրական արտադրահարաբերությունների ճգնաժամի և անկման շրջան (մ.թ. III–IV դդ.): Այս մոտեցումը լիովին տեղավորվում էր Վ.Վ. Ստրուվեի և Ա.Բ. Ռանովիչի սխեմայում և արժանացել է Ի.Վ. Ստալինի բարձր գնահատության, որը երկու անգամ Ս. Երեմյանին հրավիրել է իր մոտ՝ Կրեմլ, որպեսզի մուրաբայով մի բաժակ թեյի շուրջ քննարկի Խորհրդային Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի պատմության հետ կապված հայեցակարգային հարցերը: Ըստ էության, Ս. Երեմյանի հայեցակարգն ընդունվեց որպես առանցքային ԽՍՀՄ հին ժողովուրդների պատմության լուսաբանման համար: Այդ նույն ժամանակ մեծ թափ են ստանում Հյուսիսային Մերձսևծովյան հեղինիստական քաղաք-պետու-

¹⁹ Ранович А.Б. Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950.

²⁰ Еремян С.Т. История СССР с древнейших времен до образования древнерусского государства (ձեռագիր իրավունքով), М.-Л., 1939, ч. I-II; նույնի՝ Основные черты общественного строя Армении в эллинистический период (Изв. Академии наук Армянской ССР. Общественные науки, 1948, № 11).

յունների հնագիտական հետազոտությունները: Հյուսիսային Մերձսևծովի հելլենիստական ուսումնասիրություններում մեծ ավանդ ունեն Հ.Ա. Օրբելին²¹, Տ.Վ. Բլավատսկին²², Վ.Ֆ. Գրինևիչը²³, Գայդուկևիչը²⁴, Գ.Ա. Կոշելենկոն:

Հայաստանում և Անդրկովկասում ստրկատիրական հասարակարգի հայեցակարգն իր հետագա զարգացումն ստացավ Սուրեն Երեմյանի ավելի ուշ շրջանի աշխատություններում²⁵: Ինչպես հայտնի է, քաղաքային կարգը միշտ էլ եղել է հելլենիզմի ցուցիչը: Նրա օգնությամբ համեմա-

²¹ Նախապատերազմյան տարիներին բուռն գործունեություն ծավալեց Հ.Ա. Օրբելին, որն իրավամբ համարվում է խորհրդային ստորջրյա հնագիտության հիմնադիրը [Տե՛ս **Օրբելի Ք.Լ.** Исследования и изыскания: материалы к истории подводного труда с древнейших времен до наших дней, М.-Л., 1947]. Նա հասցրեց իրականացնել մի ամբողջ շարք հետախուզական հետազոտություններ և կազմեց ստորջրյա հնագիտության զարգացման բազմամյա հեռանկարային ծրագիրը: Այդ ծրագրի առաջնահերթ խնդիրներից մեկը ԽՍՀՄ հիդրոհնագիտական քարտեզի կազմումն էր (Տե՛ս **Ագբուнов Մ.Վ.** Античная география Северного Причерноморья. Российская Академия наук. Серия «Страницы истории нашей Родины», М., 1992, с. 15). **Свенцицкая И.С.** Македония, Греция и Северное Причерноморье в период эллинизма (История Древнего мира. Расцвет древних обществ, М., 1983, с. 353-367).

²² **Блаватский Т.В.** Западнопонтийские города в VII-I вв. до н.э., М., 1952; **Նույնի՝** О северной окраине Скифии Геродота (Материалы и исследования по археологии СССР, далее – МИА, 1969, № 169); **Նույնի՝** Природа и античное общество, М., 1976; **Նույնի՝** Дионисий Ольвианский (Советская археология, далее – СА, 1978, № 3); **Նույնի՝** О древней навигации и задачах подводной археологии (Проблемы советской археологии, М., 1978); **Косшеленко Г.А.** Открытие затонувшего мира, М., 1963; **Потере Б.Г.** Кораблекрушение конца IV-начала III в. до н.э. около Донузлава (СА, 1969, № 3); **Петерс Б.Г.** Приемы подводных археологических работ при изучении остатков древнего кораблекрушения (Морские подводные исследования, М., 1969).

²³ **Гайдукевич В.Ф.** Боспорское царство, М.-Л., 1949; **Նույնի՝** О путях прохождения древнегреческих кораблей и Понте Эвксинском (КСИА, 1969, вып. 116, 64).

²⁴ Վ.Է. Գրինևիչի աղմկահարույց հնագիտական հետազոտությունները Խերսոնեսի շրջանում [**Гриневиц К.Э.** Исследования подводного города в 1930-1931 гг., М., 1931; **Նույնի՝** О достоверности сведений Геродота об Ольвии (ВДИ, 1964, № 1) հիմնված էին նյութերի անբարեխիղճ կեղծումների վրա, սակայն դրանք ազդակ հաղորդեցին ԽՍՀՄ-ում ստորջրյա հնագիտության զարգացմանը:

²⁵ **Еремян С.Т.** Армения в период кризиса рабовладельческого общества и формирования феодальных отношений (Очерки истории СССР. III-IX вв. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III-IX вв., М., 1958, с. 167-169); **Նույնի՝** О рабстве и рабовладении в Древней Армении (ВДИ, 1950, № 1, с. 12-26); **Նույնի՝** Рабовладельческое общество древней Армении (դոկտորական ատենախոսության ավտոռեֆերատ), М., 1953; **Նույնի՝** Проблемы падения рабовладельческого общества и зарождения феодальных отношений в древней Армении (Доклад советской делегации на XXIII Международном конгрессе востоковедов, М., 1958).

տաքար դյուրին էր այս կամ այն երկիրը հարաբերակցել հեղինակական քաղաքակրթության հետ: Ուստի, Ս. Երեմյանի՝ Հին Հայաստանում և Անդրկովկասում հեղինիզմի պատմության ուսումնասիրման հաջորդ քայլը դարձան Հայաստանի հեղինակական ուրբանիստիկայի հարցերին նվիրված հետազոտությունները²⁶: Ս. Երեմյանի տեսական մշակումները հեղինակական հետազոտությունների խթան հանդիսացան ոչ միայն Հայաստանում, այլև առհասարակ խորհրդային պատմագիտության մեջ:

Հեղինակական Հայաստանի քաղաքական պատմության հանդեպ հետաքրքրության ակնհայտ դրսևորում սկսվեց պատերազմական և հետպատերազմյան տարիներին: Ըստ երևույթին, հեղինակական և հեղինակատական-հռոմեական դարաշրջանների պատմությունը, հատկապես պատերազմը Հռոմի և Արևելքի հեղինակական տերությունների միջև, ոչ ակնհայտորեն առնչվում էր Հայրենական մեծ պատերազմի և Սառը պատերազմի իրողություններին: Պատահական չէ, որ պատերազմական տարիներին հայկական գեղարվեստական գրականությունում վերածնվեց պատմավեպի ժանրը, որը մինչ այդ «պահված էր թաքստոցում»: Մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել ստեղծագործություններ, որոնք գովերգում էին հայ ժողովրդի հերոսական սխրանքը արտաքին և ներքին թշնամիների հանդեպ²⁷: Իսկ պատմագրությունում ի հայտ են գալիս աշխատություններ՝ նվիրված Մեծ Հայքի թագավորության ռազմական պատմությանը և Արտաշեսյանների փայլուն հարստության որոշ ներկայացուցիչներին: Այդ տարիներին լույս տեսան Հ.Հ. Մանանդյանի (1873-1952)²⁸ թերևս լավագույն աշխատությունները: Առաջին անգամ հայ-հռոմեական պատերազմներն սկսեցին դիտարկել ոչ հռոմեական իմպերիալիզմի դիրքերից, ինչպես ավանդաբար ընդունված էր արևմտյան և ռուսական պատմագրության մեջ: Հռոմն այլևս չէր ընկալվում որպես առաջավոր արևմտյան քա-

²⁶ **Еремян С.Т.** Развитие городов и городской жизни древней Армении (ВДИ, 1950, № 3, с. 11-31).

²⁷ 1943-46 թթ. Դ. Դեմիրճյանը գրեց «Վարդանանք» վեպի 1-2 հատորները զրադաշտական Իրանի դեմ հայոց պատերազմի մասին (2-րդ վերամշակված տարբերակը հրատարակվել է 1951 թ.), իսկ Ս. Զորյանը 1944 թ. հրատարակեց «Պապ թագավոր» և «Հայոց բերդը» (1959 թ.) վեպերը: Հայոց երիտասարդ թագավոր Պապը ներկայացվել է որպես բարեփոխիչ-պետական գործիչ, Ստալինի սիրելի՝ ռուս ցար Իվան Ահեղի տիպի: Պապին խանգարեցին իրականացնել բարեփոխումները իշխանները և եկեղեցականները, որի պատճառով երկիրը թուլացավ և բաժանվեց կայսրությունների միջև:

²⁸ **Манандян А.Я.** Круговой путь Помпея в Закавказье (ВДИ, 1939, № 4 (9), с. 70-82).

ղաքակրթության քվինթեսենցիա, որի առաքելությունը լուսավորության լույս սփռելն էր բարբարոս Արևելքի վրա: Ընդհակառակը, այն ներկայացվում էր որպես գիշատիչ իմպերիալիստական կայսրություն, որը, ձգտելով համաշխարհային տիրապետության, ժողովուրդներին բերում էր ստրկացման և տնտեսական լծացման, իսկ երբեմն էլ՝ ամբողջ ազգերի և ցեղերի բնաջնջման²⁹: Միևնույն ժամանակ, Արտաշեսյանների հայկական հելլենիստական թագավորությունն ընկալվում էր որպես հիմքային պետական կազմավորում, որը ներդաշնակորեն համադրում էր բուն տեղական (համայնքային), արևմտյան պոլիսային (հունա-մակեդոնական) և արևելյան կայսերական (իրանա-սեմական) սկզբունքները: Սա հայկական պատմագիտության էական առաջընթաց էր: Հելլենիստական Հայաստանի հոգևոր կյանքի ուսումնասիրության հարցում մեծ ներդրում կատարեցին իրենց ժամանակից առաջ անցած այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք էին Թադոս Ավդալբեգյանը³⁰ և Կարապետ Մելիք-Օհանջանյանը³¹:

Հոդվածի շարունակությունը կտպագրվի 2019 N 1-ում:

²⁹ **Манандян А.Я.** Тигран Второй и Рим: в новом освещении по первоисточникам (Арм. фил. АН СССР, Ин-т истории [հայ. թարգմ.՝ Ա.Ա. Պապովյան], Ե., 1943).

³⁰ **Ավդալբեգյան Թ.**, Միհրը հայոց մեջ (Հայագիտական հետազոտություններ, Ե., 1960):

³¹ **Մելիք-Օհանջանյան Կ.**, Ազաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1964, հ. 4]:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԵՐԿԸ՝ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՈՑ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ.Ա.

V դարի հայ մատենագրության առաջին ներկայացուցիչներից մեկի՝ Ագաթանգեղոսի¹ «Հայոց պատմությունը» անգնահատելի սկզբնաղբյուր է վաղմիջնադարյան Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական, առավել ևս մշակութային կյանքն ուսումնասիրելու տեսակետից: Այն միաժամանակ գրական հուշարձան է, որ նշանակալիորեն նպաստել է հայ պատմագիտության և գրականության զարգացմանը: Ըստ V դ. պատմիչ Ղազար Փարպեցու՝ երկը նախապես կոչվել է «Գիրք Գրիգորի», հետագայում է վերանվանվել «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց»: Իրոք, գիրքն ամբողջությամբ նվիրված է III-IV դդ. Հայաստանի կրոնամշակութային կյանքի մեծագույն երևույթներից մեկի՝ հայոց քրիստոնեական դարձի, Հայ առաքելական եկեղեցու հիմնադրման հարցերին: Պատմագրի ծառայությունն անգնահատելի է հատկապես հեթանոսական Հայաստանի պետական կրոնական համակարգը ներկայացնելու առումով: Վերջինս ներառում է հայկական դիցարանը, աստվածություններին նվիրված արձանների նկարագրությունները, տաճարների ու բազիլիկների գտնվելու վայրերի, այնտեղ կատարվող զոհաբերությունների, պաշտամունքային դրսևորումների վերաբերյալ հիշատակությունները:

Այս երկում ուշագրավ վկայություններ կան նաև Հին Հայաստանի քաղաքական անցուդարձերի, պետական սահմանների, ներքին կյանքի՝ զբաղմունքների, նյութական մշակույթի, լայն առումով՝ ազգագրական ընդհանուր պատկերի վերաբերյալ, որոնց համառոտակի բնութագրմանն է

¹ Ագաթանգեղոսի վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրություններից են՝ **Սարգիսյան Բ.**, Ագաթանգեղոս և իր բազմադարյան գաղտնիքը, Վենետիկ, 1890, **Յակովլբոս Տաշեան**, Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին և պատմական ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ, Վիեննա, 1891 և այլք:

նվիրված սույն հոդվածը²: Ըստ որում, Ագաթանգեղոսն իր աշխատության հավաստիությունը արժևորում է ականատես վկայի դիտանկյունից [Ագ., գլ. ՃԻԷ. 897, էջ 495]՝ միաժամանակ նշելով, որ իր գրառումների մի մասը ուրիշներից է լսել. «Իմ այս ամբողջ շարադրանքը ճշմարիտ է, քանզի ես դեպքերի մի մասի մասնակիցն եմ և ականատեսը, մյուսների մասին լսել եմ վստահելի մարդկանցից: Ոչ թե ստապատում ճշմարտախոս լինելով (գրեցինք) մեր խոսքերով, այլ հաճախագույնը թողնելով և նշանավոր գիտականներից քաղելով՝ այս համառոտը կարգեցինք, որը ոչ միայն մեզ, ով թագավոր, այլև երբ քո առջև կարդան այս մատյանը, հայտնի կդառնա (ճշմարտությունը)» [Ագ., գլ. 14, էջ 19]: Այնուհետև գրքի հավաստիությունը ավելի ընդգծելու համար նույն տեղում համոզիչ ասում է. «Արդ, մեր այս գրված օրինակի մեջ, ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով այս [բոլորը] կարգով մատենագրել ենք, այլ մենք՝ ինքներս ականատեսն ենք եղել անձնավորություններին և ներկա հոգևոր գործերին ու լուսավոր շնորհապատում վարդապետությանը»: Այս ինքնախոստովանությունից դժվար չէ կռահել, որ պատմիչը նաև բանահավաք է եղել, և վստահ կարելի է ասել, որ նրա «Հայոց պատմությունը» գրական, պատմաաշխարհագրական, ազգագրական, բանահյուսական մի արժեքավոր ժողովածու է:

1. Տնտեսական-արտադրական մշակույթ:

1.1. Դաշտամշակություն և այգեգործություն: Ագաթանգեղոսը պատկառանքով է խոսում հայերի երկրագործական հմտությունների մասին. բառացի գրում է. «[մշակները] վար են վարում՝ ցելում, կակղացնում, հերկում սևակոշտ երկիրը ակոսածիզ պատառելով, պարարտացնում, սկզբից քրտնաբեր աշխատությամբ մոլաբույս արմատները ընդ վայր կտրելով (արգելելով) սիզաբույս բանջարեղենի տարապարտ աճումը, ապա սերմանում են օգտակար ցանքի սերմերը» [Ագ., գլ. ԿԲ. 519, էջ 287]: Պատմիչը ակնարկում է, որ հայ հողագործի «օգտակար սերմերն են՝ ցորենը, հաճարը, գարին, կորեկը, գավարսը (դեղին կորեկ), ոսպը, ոլոռը, որիզը (բրինձ), կուղը (բակլա), սիսեռը և բազում այլ մշակաբույսեր, որ կարելի չէ (ամբողջը) թվարկել: Սրանցից յուրաքանչյուրը գարնանը, իր

² Օգտվել ենք «Ուսանողի գրադարան» մատենաշարի՝ Ագաթանգեղոս. Հայոց պատմություն (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի), աշխարհաբար թարգմ. և ծանոթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի աշխատությունից (այսուհետև՝ Ագ., գլ. և էջը), Ե., 1983:

ժամանակին ցույց է տալիս իր հարությունը՝ բույսով, համով, հոտով, բողբոջով, ծաղկով և պտղով: Տերևազգեստ բույսերն իրենց մերկությունը ծածկում են յուրաքանչյուրն ըստ իր ձևի» [Ագ., գլ. 2Ե. 647, էջ 361]:

Ինչպես տեսանք, կերակրի ընդեղեն պարագաները ևս հայերին հայտնի են հնուց ի վեր: Տնտեսական կարևորության շնորհիվ դրանք հարատևում են մինչև այսօր: Ագաթանգեղոսը հպարտությամբ գրում է. «կալերը պիտի լցվեն ցորենով, գինու յուղի (ծեթի) հնձանները պիտի գեղան» [Ագ., գլ. ԿԵ. 537, էջ 297]: Նա նաև նշում է, որ երկիրը կշենանա միայն մշակի քրտնաբեր ու համառ աշխատանքով: Պատմագիրը հիշատակում է խելամիտ լինելու համար ասույթ դարձած, տարածում ստացած հետևյալ խոսքերը. «Ի՞նչ վարի ու սերմանի մարդը, նույնն էլ կհնձի» [Ագ., գլ. ԿԲ. 518, էջ 287]: Հաճախ է դիմում ժողովրդական ասույթներին. «...Եթե մշակը չքրտնի սաստիկ շոգին՝ արևահար լինելով, ձմեռային հանգստյան օգտավետ ուրախության պտղաբեր արդյունքը չի հասկանա», մինչդեռ «...երբ ցորենի խորձը հնձի ժամանակ սերմանողներին մատուցի պարարտ, բերրի պտուղը, նրա հետ և ուրախալի, բերկրալի ցնծություն է բերում ամենքին» [Ագ., գլ. Ը. 104-105, էջ 71]: Մեկ այլ առիթով էլ որպես նախատինք, զգուշացում՝ ուղղված անօրեն մարդկանց, գրում է. «Այդպիսիների հանդերը, որում (մոլախոտ) էր հասել, դրա համար նրանց մանգաղը գործի անցավ, հնձեց ու կիզեց նրանց իր հրդեհով: Թրթուրը կերավ նրանց և ջորյակը (բզեզ) նրանց ոչնչացրեց ու նրանց մեղքերի մորեխը արածեց նրանց վրա: Դրա համար վաղաժամ գոսացան» [Ագ., գլ. ԿԶ. 539, էջ 299]:

Գեղարվեստական վառ գույներով է նկարագրել հողագործական աշխատանքների՝ վար ու ցանքի եռուզեռի, գարնան զարթոնքը ազդարարող թռչունների վերադարձը [Ագ., գլ. 658, էջ 369]. «Արդ, բուսաբեր ու ծաղկաբեր գարունների ժամանակ, որոնք ձմեռվա հնությունից հետո գարնանային գեղեցկության վերածնունդն են բերում, թռչուններն էլ գիտեն իրենց գալստյան ժամանակը: Արդարև, ծիծեռնակն ու տատրակը և խորդը (կռունկ), որոնք դաշտի թռչուններ են, գիտեն իրենց գալստյան ժամանակը: Քանզի գարնան ժամանակով իրենց գալստյամբ ցույց են տալիս մարդկանց ուրախ կյանքի ժամանակը, երգելով, ճչալով, ճովողելով և բույն շինելով» [Ագ., գլ. 2Ը. 655, էջ 367]: Ապա ավելացնում «թռչունները (նկատի ունի ծիծեռնակը, տատրակը, կռունկը), որ «դաս-դաս գալով,

երամներով տարածվում են» երկրագործության, հողագործության փողեր են, գոչաձայն աղաղակ են բարձրացնում, քնից զարթնեցնում են մշակներին մարդկանց օգտակար գործի արթնության և կանուխ [զարթնողներին] փութացնում են եզների մոտ» [Ագ., գլ. ԶԸ. 657, էջ 367-369]: Գարնան գալը և երկրագործական աշխատանքների սկիզբը ազդարարող մեկ այլ խորհուրդ է բերում պատմագիրը. «Թզենու ծառից սովորեցեք առակը, քանզի երբ ոստերը կակղեն ու տերևակալեն, գիտեցեք, թե մերձ է գարունը» [Ագ., գլ. 624, էջ 359]: Ուշագրավ է, որ Ագաթանգեղոսը այդ բարիքները ստեղծող շինականներին անվանում է նաև «բնակք» [Ագ., գլ. ԺԲ. 131, էջ 82], «ծեռատունկ» կամ «ծեռասունկ» [նույն տեղում]:

Վաղմիջնադարյան Հայաստանում գործածելի են եղել երկրագործական փորող ու վարող գործիքների այն տեսակները, որոնք լայն կիրառություն են ունեցել ավելի քան մեկ և կես հազարամյակ անց ևս: Հին բրիչները հայ մատենագրության մեջ անբավարար են նկարագրված, բայց Ագաթանգեղոսի երկում հանդիպում ենք դրանց զանազան տեսակների գոյությանը և գյուղատնտեսության մեջ ու հողարկավորման ժամանակ օգտագործված լինելուն: Ուշագրավ է Ագաթանգեղոսի մի վկայություն. «Նույնպես և նրանք երկուսով՝ Աշխեն տիկինը ու թագավորի քույր Խոսրովիդուխտը, բրոդների նման, իրենց հանդերձի մեջ վերցնելով հողը, դուրս էին թափում» [Ագ., գլ. ԾԶ. 766, էջ 431]: Ագաթանգեղոսը տարբեր աշխատանքներ ներկայացնելիս հիշատակել է փորող գործիքներ՝ բիր, բրիչ (փայտատ) ու բահ: Ագաթանգեղոսը հաղորդում է. «Արդ՝ թագավորը բրիչ (փայտատ) ու բահ առած փորեց սրբերի հանգստյան գերեզմանները» [Ագ., գլ. ԾԶ. 766, էջ 431]: Իսկ վարող գործիք էր «...լուծը, որ ձգում էր եզների ամուլը» [Ագ., գլ. ԿԷ. 543, էջ 301]: Որպես հնձի գործիք է հիշատակում մանգաղը. «Վերցրեք մանգաղները, քանզի հասել է կթոցի (բերքահավաքի, հնձի) ժամանակը, մտեք հարեք հնձանները, քանզի հնձանները լցված են և իրենց գութերը (կարասները) զեղում են...» [Ագ., գլ. ԿԵ. 537, էջ 297-299]: Պատմագիրը ականարկում է ցանքերը մաքրել թրթուրից, ջորյակից, ժանգն (որդ) ու մորեխից, փուշ ու տատասկից, նրանց վնասաբեր ազդեցություններից [Ագ. գլ. ԿԵ. 539, էջ 299]: Ամենատարածված հացի մշակաբույսերից մատնանշում է ցորենն ու հաճարը [Ագ. գլ. ԿԲ. 524, էջ 294]:

Դժբախտաբար, Քսենոփոնից մինչև հայ մատենագրության հանդես գալը մենք հայկական գյուղական համայնքի մասին և ոչ մի վկայություն

չունենք: Մեր մատենագիրները, ինչպես հայտնի է, շատ սակավախոս են, երբ խոսքը վերաբերում է հասարակության համար անմիջական նյութական բարիքներ արտադրողներին: Բայց եղած հատուկենտ վկայությունները ցույց են տալիս, որ վաղ ավատատիրական դարաշրջանում ավելի ու ավելի էին կատարելագործվում երկրագործական արտադրամիջոցները, համեմատաբար արդյունավետ են դառնում հողամշակման ձևերն ու մեթոդները: Պահպանվել են վկայություններ այն մասին, որ հողագործ մշակները հողերը մաքրում են մոլախոտերից, դաշտ են փոխադրում պարարտանյութեր՝ մոխիր գոմաղբ: Մշակում են տեխնիկական մշակաբույսեր՝ կտավատ, վուշ, կանեփ, բամբակ, բրինձ³:

Խաղողագործությամբ զբաղվում էին ոչ միայն հայկական գյուղերում, այլև տարբեր քաղաքներում, որտեղ կային դրա համար բարենպաստ կլիմայական պայմաններ: Այն մասին, որ հին Հայաստանի խոշոր քաղաքներից մեկում՝ Վաղարշապատում, աճեցվում էր խաղողը, և կային գինու հնձաններ՝ գիտենք Ագաթանգեղոսի վկայությունից: Մատենագիրը այգեստաններ և հնձաններ է հավաստել Վաղարշապատ մայրաքաղաքի հյուսիսարևելյան կողմերում: Պատմիչը խոսում է հայկական գինու ընտիր որակների մասին [Ագ. գլ. ՃԻԱ. 847, էջ 473]: Հայկական գինին համարել է «հուր», «հրաբաժակ». «Շտեմարանները հրով լցվեցին և նրանով զեղան նրանց հնձանները» [Ագ. գլ. ԿԵ. 539, էջ 299]: Պատմագիրը հիշատակում է այգու բարիքները, որոնցով այնքան հարուստ է եղել Հայաստան երկիրը, «քանզի ամեն տեսակ ծառատունկերը լավ նմուշներ և օրինակներ են... արմավենին, թզենին, կարմրախնձորը, կարմրատանձը, կարմրադեղձը... տեսակ-տեսակ մրգեր են... կիտրոնը, բաղասամոնը, դափնին, գեղեցիկ ձիթենին, սերկևիլը, մուրտն ու ընկույզը, նուշը, քնարուկը, հաճարուկը, թուփը, նուռը և հոնը» [Ագ., գլ. ՁԵ. 644, էջ 359]: Առավել հստակ Ագաթանգեղոսի վկայություններում ենք հանդիպում պտղատու ծառերի՝ թզենու, խնձորենու, տանձենու, դեղձենու և բազմաթիվ այլ մրգատուների անվանումների: Պատմիչը նաև նշում է. «Նրանք նույն բնությունից են, սակայն նրանց պտուղները այլագույն են քանզի յուրաքանչյուրը նրանցից նույնիսկ իր առանձին հոտն է արձակում» [Ագ., գլ. ՁԵ. 643, էջ 359]: Գրքում պատ-

³ Տե՛ս **Ագաթանգեղայ** Պատմություն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 259, 324-325, հմմտ. նաև 262, 264, 267-270 և այլն:

միջը գովաբանում է թզենին՝ «պտղաբեր իր քաղցրության մեջ...» [Ագ., գլ. ԿԵ. 537, էջ 297]:

Պատմագիրը ներկայացնում է նաև Հայկական լեռնաշխարհի բուսականության բազմազանությունը. «Ամենայն մրգաբեր, ծաղկաբեր, տերևաբեր և հասկաբեր ծառերի տեսակներ՝ բարձր և հսկա՝ ինչպես մայրին, նոճին, սոճին, թեղոշը (կարմիր կաղնի), սարդը (սարդենի), սարոն (կիպարիոս), սոսը (չինարին), հակրին (արքայամորի), գիհին (նոճիների կարգին պատկանող փշատերև թուփ, որի պտուղները գործ են ածվում իբրև խունկ, իսկ փայտը՝ ճախարակագործության մեջ⁴), կաղամախը, ուռին, տոսախը» [Ագ., գլ. 644, էջ 559-561]: Սրանց հետ միասին թվարկում է նաև գույնզգույն և երփներանգ ծաղիկները, ինչպես՝ «մանրագորը (մարդախոտ), վարդը, շուշանը, ասպազանը (տիպատատուկ), հասմիկը, անիարը (լուտաս), սմնակը (տերեփուկ), նարգիզը, շամպղիտակը (քարխոտ), մեղրուկը (թոքախոտ), հորոտն ու մորոտը, մանուշակը և ամենայն համասպրամ (անուշահոտ) ծաղիկներ, որոնց բողբոջը երևալու է գարնանը, ձմեռվանից հետո» [Ագ., գլ. 2Ե. 645, էջ 361]: Զանց չի առնում հիշատակելու նաև «տեսակ-տեսակ դալար մանրախոտերը՝ լոռը (ջրիմուռ), վարսակը և կնյուկը (վաղմեռուկ) և նրանց նմանները» [Ագ., գլ. 2Ե. 647, էջ 361]: Փշոտ բույսերից էլ առանձնացնում է «դժնիկը (եղջերափուշ) ու տատասկը, եղինճն ու կայծուկը (ուղտափուշ), վնասակար դաղձը (գայլախոտ)» [նույն տեղում] և այլն:

1.2. Արհեստների և առևտրի վերաբերյալ հիշատակություններ:

Ագաթանգեղոսի գրքում կան որոշ հիշատակություններ արհեստների և երկրում ու երկրից դուրս կատարվող առևտրի վերաբերյալ: Այրարատ գավառում, Վաղարշապատ քաղաքում, որը Նորաքաղաք էր կոչվում և հայոց թագավորների նստավայրն էր, նրա հյուսիսարևելյան կողմում՝ այգեստանների հնձաններում էին հաստատվել Հռիփսիմյան կույսերը: Այստեղ նրանք կերակրվում էին իրենց ունեցվածքը քաղաքում վաճառելով, չունեին իրենց հետ ապրուստի միջոցներ, բայց մեկը նրանցից գիտեր ապակեգործության արհեստը և «ապակեղեն ուլունքներ պատրաստելով՝ իրենց օրական ապրուստի ու պարենի դրամն էին ճարում» [Ագ. գլ. ԺԳ. 150, էջ 93]:

Պատմիչը տեղեկություններ է հաղորդում երկրի առևտրական կապերի, հեռավոր երկրների հետ այդ կապերն աշխուժացնելու կարևորու-

⁴ Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. I, Ե., 2010, էջ 435:

յան մասին: «Լցնելով մեծաբեռ ծանր ապրանքներ, թանկագին ու հարգի իրեր որպես զարդ և օգուտ... փութանք բացել մեր վաճառականական խանութների առևտուրը՝ վաճառենք ունկնդիրներին մեր աշխատանքի արդյունքները՝... բերելով մեր առևտրի շահը ի նպաստ երկրի շենացմանը՝ ավելացնենք երկրի գանձը...» [Ազ., 17, էջ 23]: Ագաթանգեղոսը, խոսելով վաճառականության դերի մասին, գրում է, որ նրանք թագավորներին զարդարում էին ծանրագին մարգարիտներով, զանազան պատվական քարերով և երփներանգ գունագեղ կերպասներով, և երկիրը զարդարում էին նոր ու չքնաղ բարիքներով: Նրանք քաղաքների զարդ են և գավառների հպարտություն, երկար ճանապարհների չափարարներ են, աշխարհի ճամփորդներ և օտարություն ճաշակողներ: Նրանք ամենքին խնդացնում են և շատերին ուժ տալիս, իսկ աշխարհին՝ կարողություն: [Իրենց ապրանքներով] մերկերին հագցնում են, քաղցածներին հագեցնում, ծարավներին արբեցնում և հարուստների համար գանձեր հավաքում» [Ազ., 4, էջ 9-11]: Այնուհետև ավելացնում է, որ դրանք [ապրանքները] վաճառականների կողմից հեշտությամբ չեն ձեռք բերվում, այլ «երկայն ուղիներ անցնող, մեծ չարչարանքով, երկար ճանապարհներում բավականաչափ պաշար օգտագործելով, մեծ ջանքերի գնով» [Ազ., 8, էջ 13]:

1.3. Փոխադրության և կապի միջոցների, չափ ու կշռի վերաբերյալ տեղեկություններ: Հայկական լեռնաշխարհը, լինելով Առաջավոր Ասիայի հնագույն մշակույթի և քաղաքակրթության կենտրոններից մեկը, տակավին վաղնջական ժամանակներից (V-IV հազ. մ.թ.ա.) դարձել էր նաև առաջնակարգ, ժողովրդական տնտեսության մեջ կենսունակությունը պահպանած հաղորդակցության երթուղիների, ցամաքային լծկան ու գրաստային, ինչպես նաև ջրային փոխադրամիջոցների ու դրանց ծառայությունների ստեղծման և օգտագործման տարածաշրջան⁵: Հայ և օտար մատենագիրները չափազանց կցկտուր վկայություններ են թողել նյութական մշակույթի այս ոլորտի վերաբերյալ:

Ագաթանգեղոսի սուղ, բայց և բացառիկ արժեքավոր տեղեկությունները ևս հնարավորություն են ընձեռում վեր հանելու փոխադրության որոշ

⁵ Տե՛ս **Պետրոսյան Լ.Ն.**, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ, Ա, Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմագագագրական ուսումնասիրություն) – Հայագագություն և բանահյուսություն, գ. 6, Ե., 1974, էջ 93-157, **նույնի՝** Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղբյուրները, նույն տեղում, գ. 22, էջ 241-264:

տեսականների մոտավոր պատկերը: Դրանցից մեկը շքակառքերի օգտագործումն է եղել վաղ միջնադարում: Պատմագիրը դրանց տվել է «ոսկեպատ գահավորակներ» անվանումը, որ հիմնականում կիրառվել է բարձրաշխարհիկ հասարակության շրջանում, մանավանդ արքունիքում: Բուզանդի նման Ագաթանգեղոսը ևս նշում է, որ արքունական, պատվավոր կանանց տեղից տեղ փոխադրման համար գործածել են շքեղ գահավորակները: Այսպես, պատմագրի հավաստումներից մեկում ասվում է թե, երկրի արքա Տրդատը, Հռիփսիմե կույսի գեղեցկությամբ զմայլված, սպասավորներով հանդերձ՝ արքունիքից շուտափույթ **ոսկեպատ գահավորակներ** է ուղարկում քաղաքից [մայրաքաղաք Վաղարշապատից – Ռ.Ն.] դուրս հնձանի դուռը, ուր նրանց կացարանն էր (վանքը)՝ նրան արքունիք բերելու, կնության առնելու համար [Ագ., գլ. ԺԵ. 166, էջ 99]: «Գահավորակ» եզրույթը, բացի նստելու և պառկելու բազմոց նշանակությունից, վաղ միջնադարում գործածվել է նաև շարժական բազմոցի՝ դեսպակի նշանակությամբ, որի վրա նստում էին, և որի առջևից և հետևից՝ ծողերից բռնած ծառաները ձեռքով կամ սպիտակ ջորիներ լծած՝ մեկը առջևից, մյուսը հետևից, փոխադրում էին տեղից տեղ⁶: Այն **հովանի ունեցող թագավորական** պատգարակ էր: Հայ մատենագրության մեջ փոխադրության այդպիսի միջոցը անվանվել է նաև **ժանվար, անդրուար, պատգարակ**⁷: Երկար ճանապարհ կտրել անցնելու համար գործածել են **ոսկեպատ կառքեր**, որոնց լծում էին սպիտակ ջորիներ, օրինակ՝ «հանեցին Գրիգորին (Գրիգոր Լուսավորչին) արքունական ոսկեպատ կառքը՝ լծված սպիտակ ջորիներով» [Ագ., գլ. ՃԺԳ, 803, էջ 451]: Այդ նույն տեղում հավելում է՝ «հունաց երկիրը հյուրամեծարության մեկնելու համար արքայի և Գրիգորի շքախմբին միացել էին նաև երկրի իշխանները՝ իրենց **կառքերով ու երիվարներով**, զորքով, զինանշաններով, յուրաքանչյուրն իր գնդով» [նույն տեղում]: Հատուկ, սպիտակ ջորիներով լծված կառքերում էին տեղափոխում «աստվածային գանձերը՝ սրբերի նշխարները...» [Ագ., գլ. ՃԺԴ, 811, էջ 455]: Արքունական գահավորակներին կամ կառքերին սպիտակ ջորիներ լծելու սովորույթը բացատրվում է հետևյալ հանգամանքով. ջորին երկար ուղևորությունների համար ամենադիմացկուն կենդանին էր, իսկ սպիտակ գույնը անմեղության, պարզության, բարի կամքի, հաջողության խորհրդանշանային դեր է

⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, էջ 506:

⁷ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1968, էջ 233, 237 և այլն:

կատարել, հաջողության նշան էր: Նույնպիսի պատկերացում կար նաև գրաստի մյուս տեսակների՝ ձիու և ընտանի այլ անասունների՝ ցուլ, գոմեշ, եզ, և այլնի նկատմամբ: Ըստ հայ ժողովրդական ավանդության սովորությունների և պատմիչների, հատկապես Ագաթանգեղոսի հավաստումների՝ ջորին ծառայել է հիմնականում որպես բարձկան և լծկան, ձին՝ հեծկան փոխադրամիջոց: Ներբնակավայրային, անտառաշատ տեղանքներում մշտական, բարձկան, առանձին դեպքերում նաև հեծկան տարածված փոխադրամիջոց է ծառայել էշը: Դրան հեծնելու ու բարձելու համար անհրաժեշտ հարմարանքներ ու սարքեր մեզանում գործածվել են հնուց ի վեր: Մեծ չափերով օգտագործվել են կաշվե, թաղիքե և փայտե զանազան հարմարանքներ, որոնք, բնականաբար, մեզ չեն հասել [Ազ., գլ. ՃԺԳ. 803, էջ 407, ՃԺԴ. 811, էջ 411 և այլն]:

Ուշագրավ են վկայությունները նավարկության, ջրային տրանսպորտի մասին: Դրանք, ըստ երևույթին, եղել են լաստանավեր: Նա գրում է. «Թիավարում է փայտաշեն և երկաթե բեռներով ամրացված սրընթաց նավերը» [Ազ., գլ. 1, էջ 7]:

Չափ ու կշիռների, դրանց թվում նաև երկարության չափական միավորների գիտական մեկնաբանությունը տնտեսական կյանքի և գիտության շատ խնդիրների լուծման կարևոր բանալի է: Թեև սակավ, բայց ուշագրավ են տարածության և ժամանակի չափի միավորների մասին պատմագրի հիշատակությունները: Տարածության չափի նրա նկարագրած ամենափոքր միավորներից են **թիզը**, **քիլը** և ձեռքի **ափը**. «Ո՛վ է չափել իր ափով բոլոր ջրերը, իր թիզով՝ երկինքը և իր քիլով՝ ամենայն երկիրը» [Ազ., գլ. ԻԴ. 267, էջ 151]: Թիզը՝ հին ժամանակներում և այժմ էլ ժողովրդի մեջ ընդունված երկարության չափ է, որը հավասար է լայն բացված բութ մատի և ճկույթի միջև եղած տարածությանը: Այն հավասար է 24-25 սմ-ի: Ինչ որ նախկինում չափում էին թզով, այժմ չափում են մետրով⁸: Քիլը թզից փոքր է և հավասար է բթամատի և ցուցամատի բացվածքին, որն էլ հավասար է ութ մատնաչափի հաստության⁹: Պատմագրի գրքում հիշատակված են **ասպարեզ** կամ **ծիլնթաց** տարածության չափերը: Զիլնթաց հեռավորության մասին ունենք այսպիսի հիշատակություն. «Երբ եկան մո-

⁸ Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. II, Ե., 2010, էջ 106:

⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 574:

տեցան Եփրատ գետին (Գրիգոր Լուսավորչին դիմավորելու համար եկած նախարարները), երկու ձիւնթաց հեռավորությամբ և դեռ կամենում էին անցնել մի փոքր ձորակ, սակավ ջրի միջով, կանգնեցին կառքերի սպիտակ ջորիները, որոնց վրա գտնվում էին աստվածային գանձերը՝ սրբերի նշխարները և չկարողացան հանել ձորակի միջով» [Ագ., գլ. ՃԺԴ. 811, էջ 455]: Ասպարեզ, որ բառացի նշանակում է ձիարշավ, ձիւնթացարան, գործածվել է իբրև երկարության չափ՝ հավասար է ձիւնթացարանի երկարությանը, որը հավասար է 230, 112 մետրի¹⁰:

Հնագույն ժամանակներից սկսած՝ մինչև XX դարի սկիզբն անգամ, երթուղիների անցման ժամանակի և նրանց հեռավորության ժողովրդական չափանիշը հանդիսացել են օրը և դրա տարբեր մասերը: Այսպես, երկրի արքան Վաղարշապատից «մինչև Մասիսն ի վեր անցել է յոթնօրյա ճանապարհ» [Ագ., գլ. ՃԶ. 767, էջ 431]: Իրոք, եթե մեկ օրում միջին հաշվով կարող էր կտրել անցնել 25-35 կմ, ապա մայրաքաղաք Վաղարշապատից Մասիսն ի վեր գնալն ու գալը կարող էր տևել յոթն օր, նամանավանդ, ըստ պատմագրի՝ այնտեղից արքան շալակով պետք է բերեր լեռան գլխից «կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանր, երկայն, հաստ ու մեծամեծ քարեր...»:

Ագաթանգեղոսը ուշագրավ հավաստում ունի ուղենիշ խաչքարերի տեղադրության մասին: Քրիստոնեացվող հին բազիլիկները սահմանագծող քարե ուղենիշ խաչքարեր էին տեղադրում՝ տերունական [խաչի] նշաններով և ավանը իր ամրություններով հանդերձ եկեղեցուն ի ծառայություն նվիրելու համար [Ագ., գլ. ՃԹ. 785, էջ 441]: Բազիլիկների տեղերը, տաճարային շինությունները, որ հետագայում վերաշինվում էին եկեղեցիների, վանական համալիրները պարսավում էին «քաղաքորմով, տերունական խաչի նշանն էին կանգնեցնում: Նույնպես և ճանապարհների ելքերի ու մուտքերի մոտ, փողոցներում, հրապարակներում, խաչմերուկներում, որպես պահապան ու ապավեն, կանգնեցրեցին ամենքի երկրպագած նույն նշանը» [Ագ., գլ. ՃԼ. 72, էջ 439-441]:

2. Վաղմիջնադարյան Հայաստանի նյութական մշակույթը:

2.1. Տարագ: Հագ ու կապ: Ագաթանգեղոսի երկում ակնարկային նկարագրությունների ենք հանդիպում տարագի, շենքերի, կահույքի, լուսավորության, կիրառական արվեստների մասին: Հագուստի վերաբերյալ

¹⁰ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 273:

բազմաթիվ հաղորդումներ կան, որոնք սոցիալական տարբեր զբաղմունքների տեր մարդկանց բնութագրող ցուցիչներ են: Այսպես, դրանցից մեկում ներկայացվում է արքունական ազնվական կնոջը բնութագրող տարազային համալիրը. «Տրդատը Հռիփսիմե կույսին արքունիք բերելու համար նրա հետևից «ոսկեպատ գահավորակներ հասցրին, սպասավորներով հանդերձ, հնձանի դուռը, քաղաքից դուրս, ուր նրանց կացարանն (վանքն) էր: Նաև ազնիվ, գեղեցիկ, փափուկ ու պայծառ հանդերձներ և երևելի զարդարանքներ մատուցեցին նրան արքունիքից, որպեսզի զարդարվի և շուքով ու պատվով քաղաք մտնի ու ներկայանա թագավորին» [Ագ., գլ. ԺԵ, 166, էջ 99]: Հակիրճ ակնարկների ենք հանդիպում թագավորական զգեստի ու զարդարանքի մասին, թեև դրանք շատ սեղմ, ոչ ամբողջական համալիր պատկերներ են: Հռոմի կայսր Դիոկղետիանոսի (284-305) կողմից հայոց Տրդատ Մեծին թագադրելու առիթով Ագաթանգեղոսը գրում է. «Կայսրը հրամայեց ծիրանի պատմունճանը Տրդատի վրա նետել, և զարդարեցին կայսերական զարդով, գցելով նրա վրա թագավորական նշանը...» [Ագ., գլ. Դ. 45, էջ 37]: Ըստ պատմիչի մեկ այլ հիշատակության՝ [Դիոկղետիանոս կայսրը] հույժ բարձրացրեց և մեծամեծ պարգևներ տվեց նրան, թագ դրեց գլխին և ծիրանի պատմունճաններով զարդարելով՝ պատվեց նրան: Կայսերական զարդով շքեղացնելով մեծարեց և օգնական բազում զորք հանձնելով՝ ուղարկեց նրան սեփական Հայոց աշխարհը [Ագ., գլ. Դ. 46, էջ 37-39]: Փ. Բուզանդից զատ՝ Ագաթանգեղոսը նույնպես հաստատում է արքայական ազնիվ կտորից ծիրանագույն պատմունճանների գործածության մասին: Յոթ մեհյանների բազիններին ուխտի գնալու աստվածների կուռքերին պաշտամունք կատարելու օրերին արքայական նվիրատվությունների ճոխ նկարագրությունների ենք հանդիպում:

«[Տրդատ արքան] իր Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրերը մեծարեց՝ նվիրաբերելով սպիտակ ցուլեր ու նոխազներ, ճերմակ ձիեր ու ջորիներ, **ոսկեղեն ու արծաթեղեն զարդեր, փողփողուն ծոփերով, պսակներով ու շարաններով զարդարուն մետաքսե զգեստներ, ոսկի պսակներ ու արծաթե զոհարաններ, թանկագին քարերով լի գեղեցիկ անոթներ, ոսկի ու արծաթ պայծառագույն հանդերձներ և գեղեցիկ զարդեր:** Մեկ հինգերորդ բաժին հանեց բերված հարուստ ավարից և մեծ պարգևներ շնորհեց քուրմերին, իսկ իր հետ եղած զորքին ընծաներ տվեց ու արձակեց» [Ագ., գլ. Ա. 22, էջ 27-29]:

Ագաթանգեղոսը շոայլ տեղեկություններ է հայտնում հայոց թագավորներին արևելյան, մասնավորապես հնդկական թանկագին քարերով, «ծանրագույն մարգարիտներով, զանազան պատվական քարերով և երփներանգ գունավոր կերպասներով» [Ագ., գլ. 4, էջ 9] զարդարելու սովորության մասին: Հնդկաստանից բերված «թանկագին մարգարիտը՝ նուրբ բոլորակաձև, լուսավոր, հազվագյուտ, չունի բիծ կամ արատ իր ճաճանչավոր փայլի մեջ՝ առատորեն զարդարում է թագավորների վայելույթ թագերը և կամ Հնդկաց աշխարհից բերված թանկագին քարերի [նման], որոնք վայելույթ զարդով, խույրով ու պսակով զարդարում են թագավորին» [Ագ., գլ. 8, էջ 13]: Պատմագիրը անդրադառնում է դրանց ոչ միայն ճոխ ու շքեղ, արտահայտիչ կողմերին, այլև առողջապահական նշանակությանը: Նա գրում է. «Իսկ սրանց լույսի ճաճանչը, ոչ միայն թագավորի գլուխն է զարդարում ի տես այլոց, այլև ամենքին է զարդարում, լուսավորում, ճոխացնում, ամենքին է գոհացնում, մխիթարում, բժշկում, թագավորներին շքեղացնում է փողփողուն վերջավորությամբ արտախույր պսակի նման...» [Ագ., գլ. 9, էջ 13]: Ագաթանգեղոսի մի հաղորդումից էլ պարզ է դառնում, որ հայ թագավորները կրել են ծանրագին մարգարիտից, իբրև սրտի (բարի) կամքով զարդ՝ ականջից կախված գինդ [Ագ., գլ. 11, էջ 15]: Շատ սեղմ հաղորդում ունենք նկարչական արվեստի վերաբերյալ: Պատմագիրը այս առնչությամբ գրում է, թե Հռոմի Դիոկղետիանոս կայսեր համար գեղեցկատես կին որոնողները, տեսնելով «պարկեշտագեղ Հռիփսիմեին, սքանչելի տեսիլքով ապշած, զարմացած՝ նկարը տախտակի վրա նկարեցին և թագավորին հասցրեցին» [Ագ., գլ. ԺԳ. 139, էջ 85]:

Ուշագրավ է նահատակված Հռիփսիմե կույսերի հուղարկավորմանը նրանց հետ դրվող նյութական մշակույթի թանկարժեք տարրերի նկարագրությունը. «Թագավորն ու բոլոր արքայազունները, մեծամեծները, նախարարները, ազատները և ամբողջ զորքը յուրաքանչյուրը բերում էր անուշահոտություններ ու ազնիվ խունկեր, պատանքի գույնզգույն նարոտներ ու մետաքսահյուս ոսկեթել կերպասներ, թագավորի տիկինը, թագավորագուն օրիորդները, պատվականների կանայք և մեծամեծների դուստրերը բերում էին ծիրանի ոսկեհուռ դիպակ և երկնագույն ու ձյունասպիտակ հանդերձներ սրբերի համար: Նույնպես ոսկին և արծաթը և կտավը շտապով կուտակում էին հնձանի դռան առջև» [Ագ., գլ. ՃԴ. 761, էջ 429]:

2.3 Բնակավայր և բնակարան: Պատմագիրը մատնանշում է «շեն» և «անշեն»՝ «անբնակ» վայրերի գոյության մասին: Ցավոք, նա հիմնականում անդրադառնում է «անշեն» այրերին: Շեն բնակավայրերից զատ՝ «անշեն» վայր էին համարվում քրիստոնյա քարոզիչների հանգրվանները՝ քարանձավներում, խցերում հաստատված կացարանները: Այնուհետև տալիս է նման բնակավայր-կացարանների շոյլ տարածվածության հանգամանքների բացատրությունը: Նա գրում է. «Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում հաստատեց (խոսքը Գրիգոր Լուսավորչի մասին է – Ռ.Ն.) դաշտաբնակ, շենաբնակ, լեռնական անձավաբնակ, արգելափակ վանականների բազում ու անհամար խմբեր: Քրմերի որդիներից ոմանց առավ աշակերտ, ձեռնասուն դարձրեց, ջանում էր ուսում տալ նրանց հոգևոր խնամքով ու երկյուղով դաստիարակել: Ով որ եպիսկոպոսության աստիճանի արժանի էր, նրան ձեռնադրում էր... սրանք էին, որ առանձնացվեցին քրմերի որդիներից՝ տարբեր կողմերի եպիսկոպոսներ լինելու քարոզությունը տարածելու համար... Բոլոր մենաստաններից առնում էր որոշ աշակերտների և գնում դառնում էր լեռնակյաց, մենակյաց, մտնում էր լեռների խոռոչների ու ճեղքերի մեջ և առօրյա սնունդը հայթայթում խոտեղեն ուտելիքներով...» [Ազ., գլ. ՃԳԱ. 845, էջ 471]:

Ուշագրավ վկայություններ է հաղորդում քրիստոնեության քարոզիչներ Հռիփսիմյան կույսերի բնակության վերաբերյալ. «Հոռմ քաղաքում, շրջակա լեռներում, կույսերի մի արգելավանքում, մեկուսացած, բուսակեր, ժուժկալ, պարկեշտ և սրբանվեր կանայք էին, որոնք քրիստոնեական հավատքով լի, գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ և օրհնությամբ իրենց աղոթքը արժանավորապես դեպի վեր առ Աստված էին առաքում: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ աստվածապաշտ մարդու դուստրերից՝ թագավորական տոհմից, որի անունն է Հռիփսիմե¹¹ [Ազ., գլ. ԺԲ. 138, էջ 85]:

¹¹ Ուշագրավ է հայագետներից մեկի՝ Հ. Տաշյանի այն վարկածը, թե Հռիփսիմյան կույսերը հավանաբար Փոքր Հայքից պետք է եկած լինեին, այսինքն՝ ոչ թե Հոռմից են եկել, այլ հոռոմների կողմից (տե՛ս **Յակովբոս Տաշեան**. Ազաթանգեղոս առ Գեորգայ Ասորի եպիսկոպոսին և պատմական ուսումնասիրության Ազաթանգեղայ, Վիեննա, 1891, էջ 137): Հիրավի, քրիստոնեությունը վաղ շրջանից տարածվել էր Փոքր Հայքում: Ինչպես Գրիգոր Լուսավորչի, այնպես էլ Հռիփսիմյան կույսերի ծագումը, ըստ երևույթին պետք է փնտրել Փոքր Հայքի սահմաններում, որի հայ ազգաբնակչությունը հունական ազդեցությանը ենթարկված լինելու պատճառով հոռոմ էր համարվում բուն Հայաս-

[Նրանք] քարոզիչները «հոգեկրոն գործով շատ օրեր անց էին կացնում անբնակ տեղերում, Եփրատ գետի ակունքների մոտ, բնակվելով երկրի քարայրներում ու քարածերայերում, լեռների կատարներին, օրինակ առնելով մեծ մարգարե Եղիայից և երանյալ առաքինի Հովհաննես Մկրտչից... նույն առաքինի ապրելակերպը և աստվածամուկ կյանքը իրենց անձի վրա էին ցույց տալիս» [Ագ., գլ. ՃԻԱ. 848, էջ 473]: Մեկ այլ տեղ էլ գրում է. «Արդ, գավառից գավառ անցնելով իր անձի համար անբնակ տեղերում հանգստյան կայան էր ընտրում և այնտեղ բնակվում էր ու անբնակ տեղերից ամենքին լուսավորում» [Ագ., գլ. ՃԻԳ. 855, էջ 477]: Այդ նույն տեղում էլ հավելում է, թե «Հայաստանի, իր իշխանության տակ եղած բոլոր գավառներում բազմացրեց, կարգեց տեսուչ-եպիսկոպոսներ. նրա կողմից ձեռնադրվեց ավելի քան չորս հարյուր եպիսկոպոս, որոնք տարբեր տեղերի տեսուչ նշանակվեցին: Անթիվ էին իրենց բազմությամբ Տիրոջ համար սպասավորություն անող երեցներն ու սարկավազները կամ գրակարդացածները» [նույն տեղում, գլ. ՃԻԳ. 856]: Մենք նույնանման վկայության ենք հանդիպում Փ. Բուզանդի երկում¹²: Եթե Բուզանդը նման բնակավայրերը անվանում է «անապատ», Ագաթանգեղոսն էլ՝ «անշեն», այսինքն՝ ոչ համայնքներով բնակեցված վայր: Իսկ բնակարանը նման վայրերում ոչ այլ ինչ էր, քան «ժայռերի ծակեր», «ժայռերի խորշեր», «քարանձավների ծերպեր՝ առանց գույքի և ստացվածքի, առանց խնամքի և դարմանի»: Դրանց լուսավորության հիմնական միջոցը, բացի մոմերից ու մեղրամոմից, ձիթածրագն է եղել: Ճրագ բառի հնագույն հիշատակությունը հանդիպում ենք Ագաթանգեղոսի մոտ, Հռիփսիմեի և Գայանեի աղոթքում. «Թող մեր լապտերների մեջ ձեթի պակասություն չլինի, և մեր սուրբ ուխտի հավատքի ճրագները չհանգչեն» [Ագ., գլ. ԺԳ. 145, էջ 89]:

Այսպիսով, Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» բացառիկ սկզբնաղբյուր է վաղմիջնադարյան Հայաստանի և հարևան երկրների քա-

տանի հայության կողմից (Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն» գրքի ծանոթագրություններ, էջ 513):

¹² Տե՛ս Փ. Բուզանդ, նշվ. աշխ., VI դար, գլ. ԺԶ, էջ 415: Նա գրում է. «Նրանք հրաժարվել էին աշխարհից և բնակվում էին անապատներում, հաստատվելով քարանձավներում, այրերում և երկրի ծերպերում, մի զգեստ ունեին նրանք, շրջում էին բոքիկ ոտներով, զգաստ կյանք էին վարում, կերակրվում էին խոտերով, ընդեղեններով, արմատներով, գազանների նման շրջում էին լեռներում, մաշկերով և այծի մորթիներով ծածկված նեղվում, տառապում, չարչարվում էին, անապատում մոլորված՝ ենթարկվում էին ցրտի ու տոթի, քաղցի ու ծարավի՝ Աստծո սիրո համար»:

ղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքն ուսումնասիրելու տեսանկյունից: Այն միաժամանակ գիտական-բանահյուսական հուշարձան է:

ТРУД АГАФАНГЕЛА КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ КУЛЬТУРЫ ЖИЗНЕОБЕСПЕЧЕНИЯ

НАГАПЕТЯН Р.А.

Резюме

Агафангел является одним из немногих авторов раннего средневековья, повествующих об истории древней и раннесредневековой Армении. Весьма ценны его сведения о государственном строе, обширных границах Армении, занимаемых нахарарскими (потомственными княжескими) домами, владениях и государственных должностях в политической системе Великой Армении. Агафангел сообщает отрывочные, однако ценные данные о растительном мире, разнообразных сферах хозяйственной жизни Армении (о земледелии, садоводстве, виноградарстве и виноделии), описывает средства передвижения, ремесла, предметы прикладного искусства, культуру питания, национального костюма и т.д.

THE WORK OF AGATHANGELOS AS A SOURCE ON STUDY- ING OF LIFE-SUSTAINING CULTURE OF EARLY MEDIEVAL ARMENIA

R. NAHAPETYAN

Abstract

Agathangelos is one of few authors concerning the history of Ancient and Early Medieval Armenia. His records about state system in Armenia, vast domains of lords and positions filled by them, are of great importance. The historian collected fragmentary, but valuable information about plants, different spheres of Armenian economic history (agriculture and land-tenure, gardening, viticulture and winemaking). Transport (for both civic population and high-ranking persons), time and linear measures, artisanship branches (also artistic ones), different court costumes, adornments, meals, details of applied arts' production are highlighted in his "History of Armenia".

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ
«ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»

ՍԱՀԱԿՅԱՆ Ա.Ս.

«Պատմություն Ագաթանգեղայ» կոչվող երկի, ինչպես ավելի շատ հայտնի է հանրությանը, Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» միջուկն աստիճանաբար ձևավորվել է IV դարում՝ բանավոր պատմելու միջոցով: Բնականաբար, որքան էլ պատմողները լինեին ուսյալ մարդիկ, նյութը պատմից պատում, վիպական-բանահյուսական տարրերով օժտվելով, ընդարձակվում էր, ներառում նորաստեղծ սյուժետային դրվագներ ոչ միայն գլխավոր, այլև նրա հետ առնչվող մյուս հերոսների շուրջ:

Թե IV դ. երկրորդ կեսի բանավոր պատումներում արդեն հրաշագործ Գրիգոր Լուսավորիչը քարոզչական ինչ «այցեր» ու սքանչելագործություններ է կատարել, ինչ դարձաբանական արկածների միջով է անցել, ինչպես է առնչվել Հռիփսիմյան կոյսերի նահատակության հետ և այլն, շատ դժվար է կռահել: Բայց որ սկզբնապես բանավոր նյութի կազմում չէին կարող լինել վարդապետությունը, տեսիլքը, ինչպես նաև Հռիփսիմյանների վկայաբանությունը, պարզ է, որովհետև պատմվող ու տարբերայնացվող սյուժեի միջուկը ձեռք էր բերել դարձաբանական վեպի ժանրի գծեր և այդպես էլ փոխանցվել V դարին¹: Այդ միջուկը Տրդատ արքայի հրաշալի դարձն էր: Այնուամենայնիվ, ժողովրդական քրիստոնեական շրջանակներում ձևավորված բանավոր վեպը կամ ավանդապատումները պետք է ունենային դրանք կյանքի կոչող ստեղծագործական ուժեր, պատմողական նախաձեռնություն ու շահ ունեցող մեկնակետեր կամ սկզբնավայրեր, որոնց դերում, «Ագաթանգեղոսի պատմության» դեպքում, կարող էին հանդես գալ Ս. Գրիգորի տոհմական կալվածքների՝ Թիլի ու Թորդանի նախկին

¹ **Մելիք-Օհանջանյան Կ.**, Ագաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջ [Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1964, N 4, էջ 55-56]: Տե՛ս նաև **Մելիք-Օհանջանյան Կ.**, Ագաթանգեղոսի Պատմությունը և նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները (Մառը և հայագիտության հարցերը, Ե., 1968, էջ 95-118):

գյուղական տաճարային համայնքները, ինչպես նաև՝ պաշտոնի բերումով, Գրիգորի սեփականացրած բնակավայրերը՝ Աշտիշատն ու Բագավանը՝ դարձյալ իրենց տաճարային համայնքներով:

Ժողովրդաքրիստոնեական բանահյուսական զարգացումներին զուգահեռ՝ պաշտոնական եկեղեցին շարունակում էր ամրանալ Գ. Լուսավորչի ժառանգորդների ղեկավարությամբ՝ նրա իսկ բացած հունով: Ուստի հընթացս աճում էին նրա հեղինակությունը և այն գիտակցումը, որ Գրիգորը ոչ միայն աստվածաբանական ու բարոյախոսական ուղղորդողն էր, այլև հիմնադիրը հայ եկեղեցու: Կարելի է կարծել, որ IV դ. կեսերին արդեն մոռացվել էր դրանից 100 տարի առաջ Հայքի Եպիսկոպոս եղած Մերութանի անունը: Սակայն Գ. Լուսավորչին հիշում էին ոչ միայն նրա համար, որ իր ժառանգները՝ թոռներն ու ծոռներն էին իշխում, այլև, որ Գրիգորի հունագիր ճառերը կարդում ու օգտագործում էին²: Դրա համար էլ, հավանաբար, Ներսես Պարթևի օրոք կամ նրա պատվերով հավաքվեցին Գ. Լուսավորչի հունարեն ճառերը և ի մի բերվեցին մեկ գրքում, որի վերնագիրը հետագայում միանգամայն հունարան ոճով թարգմանվելու է՝ «Ճառք հաճախապատումք»³: Հունարեն «Յաճախապատում» ժողովածուի կազմումը Ներսես Մեծի անվան հետ կապելու համար կա երկու նուրբ հանգամանք: Առաջինը «Հարցումն տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի առ Եպիփան միայնակեաց» փոքրիկ բնագիրն է, որի մեջ հույն Եպիփան վարդապետի պատասխանը քաղագրված է Գրիգոր Պարթևի «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի դարձեալ հարցումն և պատասխանիք նորա» վերնագրով հայտնի բնագրից (հարց N 14), որից և օգտվել է Եզնիկ Կողբացին, խմբագրաբար՝ նաև Հովհան Մանդակունին (կամ Մայրագոմեցին), ինչպես իրավամբ հավաստիացնում է Լ. Խաչիկյանը⁴: Միայն թե Ներսեսի «Հարցումը»

² Առայժմ դրա միակ և խոսուն վկայությունը հայտնի է Ներսես Պարթևի առ Եպիփան ուղղված «Հարցմունքից», որում Եպիփանը, ի պատասխան տեղական ոգիների մասին հարցի, օգտագործել է Գրիգորի ճառերը: Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա, Ե., 1995, էջ 42):

³ Հետ թարգմանելու դեպքում ստացվում է՝ „λογοι παλασοι“, հետևաբար՝ բազում, բազմակի, շատ, հաճախ, հաճախապատիկ ճառեր, իսկ ռուս. «Многократные речи» և ոչ թե «многовещательные речи», ինչպես թարգմանել է Սեն Արևշատյանը ռուսերեն «Հաճախապատումներ» վերնագիրը:

⁴ Տե՛ս **Խաչիկյան Լ.**, «Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք» (Բանբեր Մատենադարանի, 1964, N 7, էջ 301-330), նաև **Խաչիկյան Լ.**, Աշխատություններ, հ. Ա, Ե., 2012, էջ 67-69:

և Գրիգորի «Հարցումը» իրարից անկախ են թարգմանվել հայերեն V դ. առաջին կեսին, որով էլ բացատրվում են երկու հարազատ բնագրերի տարբերությունները:

Երկրորդը Ներսես Մեծի կազմակերպած Աշտիշատի եկեղեցական ժողովն է (354 թ.), որտեղ ընդունված հայտնի կանոնը՝ հեթանոսական հոռի սովորությունների դեմ ուղղված, դարձյալ առնված է Գրիգորին պատկանող Կանոնաշարքից (Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի՝ յաւելումն Նիկիական⁵): Ներսես Մեծի վերոնշյալ երկու առնչությունները Գ. Պարթևի գրական ժառանգության հետ կարող էին հուշել նրան՝ հավաքելու և ի մի բերելու իր ապուրապի հունարեն երկերը, որի շնորհիվ էլ դրանք ոչ առանց կորուստների հասել են V դ. և թարգմանվել հայերեն: Այսպես եկեղեցին ընթացավ մինչև 387 թ., երբ Մեծ Հայքի բաժանումը պատճառ դարձավ նշանակալի պատմաքաղաքական ու եկեղեցական տեղաշարժերի, իսկ Գրիգոր Պարթևի կերպարը, ժողովրդա-քրիստոնեական միջավայրում տարեցտարի գավառից գավառ անցնելով, սրբացվում էր:

Հայոց Արշակ III թագավորը նախընտրեց իր կառավարումը շարունակել Արևմտյան Հայքում, իսկ Արևելյան մասում պարսիկները թագավոր չկարգեցին, դրա համար էլ երևի կաթողիկոս Ասպուրակեսը չգնաց թագավորի հետ և մնաց իր նստավայր Դվինում կամ գուցե ավելի ճիշտ՝ ավանդական հոգևոր կենտրոն Աշտիշատում: Սակայն մեկ տարի անց Տիգրանում, տեսնելով, որ արքունական հարկերի գանձումը Հայքից ավելի է պակասել, քան ակնկալում էին, որոշեցին Տիգրանի Պարթև Արշակունի տոհմի ներկայացուցիչ Խոսրովին կարգել հայոց արքա (388/9-392/3 թթ.): Պարսիկները, հավանաբար քննելով գործը, պարզեցին, որ հայկական նախարարական տնտեսակարգը կարող է արդյունավետ գործել միայն թագավորական իշխանության առկայությամբ, ինչպես հաստատված էր դարավոր ավանդույթով: Եվ իրոք, նոր Արշակունի թագավորը կարողացավ իր շուրջը հավաքել հայ նախարարներին, Արշակ III-ի հետ Արևմտյան Հայաստան տեղափոխված իշխանների մեծ մասին հետ հրավիրել Արևելյան Հայք, Երևել դաշտի ճակատամարտում պարտության մատնել ընդդիմացող Արշակ III-ի զորքին, բացի այդ, հասցրեց նաև սեպարատ հարաբերվել կայսրի հետ և ինքնագլուխ կաթողիկոս նշանակել Սահակ Պարթևին: Վերջին երկու քայլը Տիգրանում գնահատեցին իբրև իրավասությանց խախտում և

⁵ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 594:

Խոսքով IV-ին բանտարկեցին Անհուշ բերդում: Նրա հետ Տիգրան կանչվեց և գահընկեց եղավ նաև Սահակ կաթողիկոսը, բայց վերանշանակվեց և նոր թագավոր կարգված Վռամշապուհ Արշակունու հետ ուղարկվեց Հայաստան՝ ի ցույց այն բանի, որ Հայոց արքայի հետ Տիգրանն է նշանակում նաև կաթողիկոսին: Վռամշապուհ I-ը Խոսքովի եղբայրն էր, և ինքը նույնպես հայերենը պիտի սովորեր տեղում՝ մայրաքաղաք Վաղարշապատում: Երբեմնի Կայնոպոլիսը, որ Տրդատ Մեծի կամ նրա նախորդի օրոք դադարել էր արքայանիստ քաղաք լինելուց, նորից մայրաքաղաք դարձավ 388/9 թ. Խոսքով IV-ի կողմից: Վռամշապուհ արքան գործուղվեց Հայք՝ նույն պայմանով. հավատարիմ լինել արքայից արքային և թագաժառանգին, ապահովել հարկերի մուծումը գանձարան, ինքնագլուխ չհարաբերվել Հռոմի կայսրության հետ: Դատելով այն բանից, որ Հայոց արքան Սասանյանական անվանում ունի, կարելի է կարծել, որ նրա պարթևական անունը մոռացվել է, որովհետև թագադրման ժամանակ նրան կնքել են նոր անունով, որը բաղադրված է Պարսից արքայից արքա Շապուհի և գահաժառանգ Վռամի անուններից: Այս նոր անունը պետք է ըստ ամենայնի ընկալել իբրև պատվանուն, Տիգրանի արքունիքում ընդունված վստահության ու նվիրվածության մեծագույն տիտղոսանշան: Քաղաքական-դիվանագիտական ճկուն ու հեռատես դերակատար է դառնում Վռամշապուհը, եթե հաշվի առնենք, որ նա շուտով եղբոր նման դառնալու է հայոց գահի ու երկրի շահերի կրողն ու պաշտպանը: Հայքի հետագա ճակատագրում նա եղավ ամենաօգտակար մարդը, բայց և մնաց մինչ ի մահ իր գերագահի (սյուզերեն) վստահյալը:

Վռամշապուհի հավասարակշիռ վարքագծի մասին մի շարք տեղեկություններ են հասել մեզ, որոնցից այստեղ արժե նշել երկուսը: Երբ Սահակ կաթողիկոսը, անսալով իր դուստր Սահականուշի թախանձանքին, խնդրում է Վռամշապուհին իր որդեգրյալին՝ փեսա Համագասպ Մամիկոնյանին, նշանակել հայոց սպարապետ, թագավորը խոհեմաբար հիշեցնում է ինքնագլուխ գործելու պատճառով իր եղբայր Խոսքովի գլխին եկածը և խորհուրդ է տալիս Սահակին այդ հարցը համաձայնեցնել Տիգրանի հետ: Իսկ մի ուրիշ դեպքում Վռամշապուհը կարողանում է դիվանագիտորեն ստանձնել նաև հռոմեական մասի հարկահավաքի դերը և պարսից արքունիքում արժանանալ դրվատանքի, երբ նույն գործի ու ձգտումի համար Խոսքով արքան արժանացավ պատժի:

Վռամշապուհ արքան (393/4-414/5 թթ.) կառավարման հենց սկզբից, շարունակելով Խոսրովի ու Սահակ Պարթևի ձեռնարկած գործը՝ կաթողիկոսական աթոռի տեղափոխումը մայրաքաղաք Վաղարշապատ, հիմնում է նոր Մայր տաճար, որը, նոր համահայկական դերին համապատասխան, օծվում է իբրև Ս. Կաթողիկէ (=ընդհանրական): Տաճարը կառուցվում է քաղաքային եկեղեցու հիմքի վրա՝ նախ փայտակերտ⁶:

Տեղին է հիշել, որ այդ քաղաքային եկեղեցին իր հերթին հիմնադրվել էր Գ. Լուսավորչի օրոք զրադաշտական ասորուշանի հիմքի վրա, որն այսօր էլ կարելի է տեսնել Մայր տաճարի խորանի տակ, և որտեղից հայտնաբերվել է Հայքում պահպանված պահլավական հագվադեպ արծա՜նագրության նմուշ՝ կրակարանին նվիրաբերված կավե սափորի բեկորների տեսքով⁷:

Քանի որ նախկին եկեղեցին հիմնադրվել էր Գրիգոր կաթողիկոսի օրոք, նոր Մայր տաճարը ևս կապվում է նրա անվան հետ՝ բայց արդեն հրաշագծված և Ս. Գրիգորի տեսիլքով «վավերացված»: Դրա համար էլ շուտով տաճարը ձեռք է բերում մի նոր ժողովրդական անվանում՝ Ս. Շողակաթ, ի նշանավորումն այն հրաշալի տեսլեան, որում երկնային շողն ընկել է գետնին՝ ի ցույց տաճարի կառուցման տեղի⁸: Հասկանալի է, որ կաթողիկոս Ս. Պարթևը, եթե անգամ չի ուղղորդել, ապա գոնե խրախուսել է Լուսավորչի լուսապսակի ձևավորումը, ինչպես նաև նրա բանավոր Տեսիլի ստեղծման գործը: Սա բնորոշ երևույթ է, երբ նորակառույց սրբավայրի շուրջ հյուսվում է սրբազան ավանդապատում՝ ցույց տալու ոչ միայն նրա հնությունը, այլև որևէ հայտնի սրբի կողմից հիմնադրված լինելը:

⁶ Վ դ. վերջին քառորդին Վահան Մամիկոնյանի հովանավորմամբ այն դառնում է քարակերտ վանական տաճար, որովհետև Մայր Աթոռն արդեն Դվինում էր:

⁷ Նվիրատվական բնույթի արձանագրության հայտնաբերումը և վերծանումը կատարել է ամերիկացի իրանագետ Ջեյմս Ռասելը՝ տողերիս գրողի ներկայությամբ, երբ առաջին հայագիտական միջազգային գիտաժողովի ժամանակ, իմանալով, որ նա զրադաշտական է, նրան հատուկ ուղեկցեց վերջինս Մայր տաճարի նկուղի ատրուշան:

⁸ Ի դեպ, նույնպիսի տեսիլ կապվել է նաև Բագավանի տաճարի կառուցման հետ՝ ըստ պատմահայր Մովսես Խորենացու: Տե՛ս Պատմություն Հայոց, Ե., 1981, III, ԿԶ, էջ 334 («ի տեղուջն, ուր ծագեաց լոյս երկնից ի մկրտել սրբոյն Գրիգորի զՏրդատ արքայ և զբոլոր հայս»): Իսկ նշանավոր քրմապետ Կարտիրի պայկույան արձանագրությունից հայտնի է, որ Բագարանի հեթանոսական տաճարի տեղում կառուցվել էր զրադաշտական կրակարան դեռևս III դ. երրորդ քառորդին:

Սակայն պարզվում է, որ թե՛ նորաստեղծ տեսիլը, թե՛ Գ. Լուսավորչի մասին եղած բանավոր հրաշապատումները շատ բարեպատեհ էին Ս. Պարթևի ծրագրի իրագործման, այն է՝ Գ. Լուսավորչի սրբադասման կամ ժողովրդի մեջ սրբացած Գրիգորի կանոնացման համար: Ինչո՞ւ էր այդպես կամենում Սահակը. արդյո՞ք նրա համար, որ իր ապուպապն էր Գրիգորը, իսկ ինքն էլ տոհմի վերջին ժառանգորդն էր, ինչպես մեզ հուշում է հետագայում ստեղծված «Սահակի տեսիլը», հետևաբար և մտածում էր Գրիգորի սրբությամբ վավերացված ժառանգությունն անձեռնմխելի փոխանցել դստեր Մամիկոնյանական զավակներին: Թե՛ մարդկայնորեն ուզում էր միայն հավերժացնել և մեկընդմիջտ եկեղեցու հետ կապել պապի և նրա տոհմի անունը: Իսկ ինչպե՞ս կընդունեն Տիգրանը, որը քաջատեղյակ էր պապի գործերին, դրանց թվում և զրադաշտական կրակարանների հիման վրա եկեղեցիներ կառուցելուն: Իհարկե, ծրագիր ունեցող կաթողիկոսը գտնում է նաև այն իրագործելու կերպը: Վճռապաշտի հենց այն օրինակն էր տալիս, թե ինչ հանգամանքներում արքայից արքան կարող էր ոչ միայն հանդուրժել, այլև գնահատել Պարթև Արշակունիների ծառայությունները: Իզուր չէ, որ առաջին անգամ կաթողիկոս Սահակի ուղեղում ծնվեց այն միտքը, որ Գրիգոր Լուսավորիչը որդին է Պարթև Անակի, որ ամենամեծ ծառայությունն է մատուցել Սասանյանների արքայական տոհմի հիմնադիր Արտաշիրին՝ հանուն նրա փառքի սպանելով սեփական եղբորը կամ արյունակցին: Դրանով կաթողիկոսը Պ. Անակի միջոցով հավաստում է նաև իր նվիրումն ու միամիտ ծառայությունը պարսից գահին: Ոչինչ, որ հայերը «Անակ» բառին կարող են տալ «չարագործ» իմաստը՝ ըստ նրա վիպական դերի: Սա լրջախոհ Ս. Պարթևի քաղաքական հնարքն էր, որ «աշխատեց» և ընդունվեց Տիգրանում, ու փաստացի թույլատրվեց ժողովրդական սրբի համբավ ստացած Գրիգորին սրբադասելու հայ եկեղեցում: Մնում էր գրել Գրիգորի վարքը և այդ ամենը պատմել նրա մեջ: Իհարկե, հունարենը ևս չէր բացառվում, բայց գրավոր վարքի լեզուն պետք է լիներ ասորերենը, որովհետև Տիգրանում դեռևս նախանձախնդիր էին լեզվի հարցերում:

Այսպիսով, IV դ. վերջերին կաթողիկոս Սահակ Պարթևը, Վճռապաշտի և Տիգրանի արքունիքի հետ համաձայնեցրած, հայ եկեղեցում պաշտոնապես կանոնացնում է ժողովրդի մեջ արդեն սրբացած Գրիգորի պաշտամունքը՝ նրա անվան հետ կապելով Մայր տաճարի հիմնադրումը և գրել

տալով սրբի վարքը: Այսու հասկանալի է, որ պետք չէ լուրջ ընդունել որոշ բանասերների այն դրույթը, թե Գրիգորն ու իր Վարքը V դ. մատնված էին լռության:

Ո՞վ էր Վարքի գրողը: Հավանաբար Սահակը կամ Վռամշապուհի քարտուղար Մաշտոցը, որը ևս Սահակի ազգականներից էր. երկու եղբոր՝ Պապի և Աթանագինեսի թոռներն էին՝ ըստ Փավստոսի մշուշապատ տեղեկության: Բայց եթե անգամ Վարքը գրած լիներ Մաշտոցը, միևնույն է, հեղինակը Սահակն է, որովհետև նա է հորինել իր մեծ պապի կենսագրությունը՝ ի հավելումն բանավոր վարքի, սկսած նրանից, որ Գրիգորն Անակի որդին է, որ վերջինս Հայաստան գալու ճանապարհին պատահաբար գիշերել է իր տիկնոջ հետ Թադևոս առաքյալի գերեզմանի վրա, որից հղացված Գրիգորը ձեռք է բերել առաքելական շնորհ⁹, որ Տրդատը, իմանալով, որ Գրիգոր քարտուղարն իր հորն սպանող Անակի որդին է, վրեժ է լուծում ու բանտարկում նրան և այլն: Այսինքն՝ Սահակի տարբերակում փոխվում է նաև բանտարկության պատճառը, իսկ մնացյալը՝ Տրդատի և Գրիգորի հակամարտությունը ընդհուպ Մուսն ի Վիրապ ու Ելն ի Վիրապէն, խոզակերպ Տրդատի բուժումն ու նրա, ընտանիքի ու արքունիքի դարձն ի քրիստոնեություն, ամբողջովին բանավոր դարձաբանական սյուժեի մասեր են՝ տարածված ողջ աշխարհում:

Եվ իրոք, պատմագիտությանը հայտնի չէ պատմաքաղաքական մի իրավիճակ, հասարակական-տնտեսական մի համատեքստ, որում տեղավորվեր Տրդատ Մեծի քրիստոնեական հալածանքը, սեփական քարտուղարին քրիստոնյա լինելու պատճառով հալածելու քաղաքական մթնոլորտը և դրա քաղաքական հիմնավորումը՝ հոգուտ հեթանոսների, այն դեպքում, երբ Հայքում Տրդատից առաջ հեթանոսներին այնպես էին հալածել ու տաճարները քանդել, որ միայն երևում էին զրադաշտական ատրուշաններ, և գուցե միակ «կասկածելի» բացառությունը Գառնու մեհյանն էր՝ նվիրված Արև-Միհրի պաշտամունքին: Բացի այդ, ինչպես ասվեց, Տրդա-

⁹ Հետևաբար Սահակի հորինածը նպատակ ուներ ճշգրտելու ոչ միայն Գրիգորի բանավոր վարքը՝ ազգաբանության, ծննդյան ու մահվան մասերով, այլ նաև հաշտեցնելու Գրիգորի առաքելությունը Ս. Թադևոս առաքյալի մասին եղած հարավահայոց ավանդույթի հետ: Այս տեղեկանքի առաջին հեղինակը Խորենացին է, որ աղբյուր է նշում Սահակ Պարթևին. «Եւ աստ ասեմ զորոյց զսքանչելի ծերոյն, որ ասէր...» (**Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Ե., 1981, II, ՀԴ):

տի մինչքրիստոնեական իշխանությունն անցել է խաղաղ շրջանում՝ հռոմեական հովանու ներքո, երբ Դեկոսի սկսած հալածանքները վաղուց մարել էին (260թ.), իսկ Դիոկղետիանոսինը դեռ չէր սկսվել (303թ.): Այնպես որ ակնհայտ է դառնում վարքագրական ժանրի պահանջով Գ. Լուսավորչի և նրա գործակիցների համար Ս. Պարթևի հորինած կենսապատումը:

Երբ այս բոլոր հատվածները Սահակ կաթողիկոսը հարմարեցնում է, մնում էր սրբի գերեզմանի հարցը լուծել, որովհետև, ըստ կանոնի, անհրաժեշտ էր ունենալ սրբի գերեզմանը: IV դարում, երբ Գրիգորը գործել ու վախճանվել է, բարձրաստիճան քրիստոնյա և իշխանավոր է եղել: Հարյուր տարվա մեջ նրա գերեզմանը ոչ թե անհայտ է եղել, այլ եկեղեցու պաշտոնական շրջանակներում անտեսվել է Մեծ Հայքի բաժանումից հետո: Բնական է, որ թաղվել է իր տոհմական դամբարանում, բայց քանի որ այդ տեղը գտնվում էր Հայաստանի հռոմեական մասում (Բարձր Հայք), լուրջան է տրվել և համարվել, որ գերեզմանն անհայտ է մնացել, թեկուզ լավ էլ հայտնի էր արևմտահայ ուխտավորներին: Դրա համար էլ Վարքի մեջ հորինում են այն վարկածը, թե իբր նա այնքան սուրբ է եղել, որ իմացել է գալիքում իրեն պաշտելու մասին, ուստի այդ պաշտամունքից խուսափելու համար, որպեսզի կռապաշտական սովորույթի պատճառ չդառնա, իբր իր մահը թաքցրել է այնպես, որ ոչ ոք չիմանա իր տեղը: Նախօրոք հեռացել է լեռներում ճգնելու, այնտեղ վախճանվել է, և մի հովիվ տեսել ու թաղել է նրան առանց իմանալու, թե ում է թաղում:

Դա էր պատճառը, որ, ըստ Սահակի, գերեզմանը հայտնի չէր: Սահակը դրանով կարողացել է աստվածաբանական իմաստ և հատուկ փիլիսոփայական երանգավորում հաղորդել Գրիգորի անհետացմանը: Փաստորեն, Սահակն արդարացրել է գերեզմանի անհայտ լինելը: Իսկ Սահակի ծոռը՝ Վահան Մամիկոնյանը, որը ոչ միայն հայոց մարզպանն էր, այլև քրիստոնեական դավանանքի այն պաշտպանը, որը կարողացավ պարսիկներից նվաճել հավատքի ազատություն և կազմակերպել Գրիգորի գերեզմանն ի հայտ բերելու գործը ճգնավոր Գառնիկի տեսիլքի միջոցով: V դարի վերջերին այն իրականացվում է միանգամայն նոր քաղաքական պայմաններում:

Այն, ինչի հիմքը դրեց իր պապը V դարի սկզբներին, նա դարի վերջերին ավարտեց Գառնիկ անունով ճգնավորի տեսիլքի միջոցով: Տեսիլքի մեջ վերին հուշումով գտնում են գերեզմանը, պատվով տանում են Թոր-

դան, այնտեղից էլ մի մասը տրվում է Ջենոն կայսրին, նրանից հասնում Հռոմի պապին, այդտեղից էլ մեր օրերում վերադառնում Երևան: Ահա ինչպես է լեգենդը շարունակվում և նորոգվում եկեղեցու մեջ: Իսկ Փավստոս Բուզանդը, կարծես այդ ամենից անմասն, գրում է, որ Գրիգորը վախճանվում է, և նրան թաղում են Թորդանում¹⁰:

Սակայն ուշադրություն է պետք դարձնել այն փաստին, որ թաղելու պահը հակասում է նրա ծննդյան տարբերակին: Եթե Անակից հղացվել է ճանապարհին ու, դեռ գրկի երեխա, դայակը նրան փախցրել է, ուրեմն որտեղի՞ց նրան տոհմական գերեզման:

Բայց վարքագիրը ուշադիր չէ մի այլ բնագրի նկատմամբ ևս, որում, երբ Գրիգորի որդիները կամ թոռները մահանում են, սկսած Արիստակեսից, թաղվում են իրենց տոհմական գերեզմանոցում: Ուշադիր ու հետևողական չեն եղել, թե որտեղից է հայտնվել տոհմական գերեզմանը, եթե նրանց հայրը, որպես տոհմի առաջին հանգուցյալ, թաղված էր անհայտ վայրում: Այս արհեստական հակասությունը հանելուց հետո կստացվի, որ Գրիգորի բնօրրանը, տոհմական ժառանգությունը, ունեցվածքը Բարձր Հայքում էին: Ի դարից Արշակունիները, որ եկել են Հայքում թագավորելու, Բարձր Հայքի Անիում են հիմնել իրենց դամբարանը, որովհետև այնտեղ է Արամազդի տաճարը՝ գլխավոր սրբավայրը: Իսկ դա նշանակում է, որ Արշակունիներից առաջ պաշտամունքի գլխավոր կենտրոնը Անիում է եղել (այսինքն՝ Արտաշեսյանների օրոք, բայց ոչ նաև Երվանդյանների), որը վկայում է, որ Բարձր Հայքում է եղել Արտաշեսյանների տոհմական իշխանական բնօրրանը:

Արշակունիները, տուրք տալով նախկին թագավորական ավանդույթին, շարունակել են այն, որ ժողովուրդը, հասարակությունը տեսնի, որ ինչպես իշխանությունը, այնպես էլ պաշտամունքը առաջվա նման օրինաչափորեն շարունակվում են¹¹: Փաստորեն, առաջինը Անին էր, իսկ նրա հարևան գավառում Գրիգորի տոհմական դամբարանն էր: Նշանակում է,

¹⁰ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմ., ներած. և ծան. աղագ. Ստ. Մալխասյանցի, Ե., 1968, էջ 105:

¹¹ Հայտնի է, որ Շապուհը Արշակունիների դամբարանը կողոպտեց, բայց Սանատրուկի գերեզմանը չկարողացավ քանդել: Հայերը ճանապարհին հետ խլեցին իրենց սրբությունները և ամփոփեցին Աղցքի նոր դամբարանում, որն էլ մինչև օրս մնացել է որպես Արշակունիների դամբարանատեղի: Վերջերս հնագետ Հակոբ Սիմոնյանի պեղումներից ի հայտ եկան արքայական աճյուններն ամփոփող երեք սնդուկներ:

որ Գրիգորի նախնյաց ընտանիքը I դարում թագավորին ուղեկցող պարթև իշխանական ընտանիքներից է եղել կամ թագավորական ընտանիքի մաս է կազմել և ստացել է Թիեյի, Թորդանի գավառները՝ իբրև սեփականություն, և դամբարանատեղի է հիմնել այդ տաճարներին կից, այսինքն՝ Նանէի և Բարշամինայի սրբավայրերի մոտ: Նրանք ևս, ինչպես վերը նշվեց, Բարձր Հայքի վրա պարսիկների հարձակման պատճառով (260/261 թ.) թողնում են ամեն ինչ և ժամանակավոր ապաստան գտնում Կեսարիայում: Երբ վերադառնում են (287-88 թթ.), արդեն քրիստոնյա Գրիգորը և առանց հալածվելու քարտուղար էր աշխատում Չրմեսի արքունիքում: Տրամաբանորեն ընդունելի է, որ Տրդատը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելիս իր ազգականին կարգի գլխավոր եկեղեցապետ, որովհետև այդ պաշտոնին օտար մարդ չէր դիտվում: Գրիգորն էլ իր ծագումով և դավանանքով, որպես պարթև Արշակունի և քրիստոնյա քահանա, հարմար էր այդ պաշտոնին ու երկրի երկրորդ դեմքը դարձավ: Սակայն բարոյական տեսակետից հարմա՛ր էր, որ Տրդատը նախորդ եպիսկոպոսին գահընկեց աներ և տեղը նշանակեր Գրիգորին. չէ՞ որ այդ նախորդներին իրենք պարտական էին քրիստոնեությունը և եկեղեցին Հայքում պահպանելու և հեթանոսական ու զրադաշտական հալածանքներին դիմանալու միջոցով մինչև իրենց իշխանության օրերը հասցնելու համար: Դա Տրդատը պետք է հաշվի առներ, մանավանդ որ նոր կրոնի ներդրման ժամանակ իրեն ամենից առաջ պետք էր Հայաստանի քրիստոնյա համայնքների աջակցումը: Ուստի կարելի է ենթադրել, որ քրիստոնեությունը Հայքում պետական կրոն հռչակելու պահին քրիստոնյա հայերի եպիսկոպոսը վախճանված էր, աթոռը թափուր էր և անարգել կարող էր տրվել Գրիգորին:

Ի դեպ, քարտուղարի պաշտոնին զուգահեռ, Գրիգորի հունական Վարքը նրան համարում է քահանա, ինչը շատ հավաստի է թվում, որովհետև նա, որպես շրջիկ քարոզիչ, հետևաբար և կոչումով Ագաթանգեղոս, այսինքն՝ բարի լուր տվող, ավետաբեր, պիտի ունենար այդ բարի լուրն ընդունողին մկրտելու իրավունք:

Գրիգորը V դարի գրավոր և բանավոր ավանդություններում հայտնի էր Լուսավորիչ մականվամբ, որ ասես մոտավոր թարգմանությունը լիներ Գրիգոր բառի (հուն.՝ հսկող, տքնող, լուսավորող կամ արթուն լուսացնող)¹², ագաթանգեղոսություն էր անում, երևի ոչ միայն Բարձր Հայքում պաշտո-

¹² Այդ իմաստով էլ Մաշտոցը փոխաբերաբար կոչվեց հսկող, երկրորդ լուսավորիչ:

նավորելիս, այլև Մեծ Հայքի մյուս մասերում՝ Պարսից տիրապետության սահմաններում: Դատելով այն բանից, որ հետագայում, երբ նշյալ ազաթանգեղոսության գործառույթը դուրս է մղվում, բայց դրա հիման վրա հատուկ անուն է առաջանում (վկաները՝ IV դ. հայր Ազաթանգեղոսից մինչև XIX դ. վերջերից հայտնի Ազաֆանգել Կրիմսկի՝ Ռուսական կայսրության գիտության ակադեմիայից), կարելի է եզրակացնել, որ տեղի է ունեցել նույնը, ինչ Եվանգելոսի հետ, այն է՝ անձնանվան առաջացում մարդու զբաղմունքի, նրա որևիցե գործառույթի հիման վրա:

Այսինքն՝ II դ. երկրորդ կեսին, երբ Ս. Գրքի ճանաչման հետ աստիճանաբար «եվանգելոսը» հատկացվեց միայն չորս ավետարանիչների, վաղ քրիստոնեական շրջանակներում շրջիկ քարոզչին պետք է որ կոչեին այլ հոմանիշով՝ ազաթանգեղոս: Ուստի Գրիգորը պետք է համարվի նախորդ դարում Հայքում եղած տասնյակ ազաթանգեղոսներից վերջինը:

Եթե Տրդատը պարզում է, որ քարտուղարը քրիստոնյա է, չէր հալածի նրան այնպես, ինչպես գրված է Վարքում: Նա, իհարկե, անձամբ լսած կլիներ հալածանքների մասին, սակայն նրա կյանքի ընթացքում կայսրությունը հալածանք չի վարել, Տրդատի համար քրիստոնյաները հասարակության մեջ պիտանի խավ են եղել՝ շատ հայտնի մարդկանցով: Տրդատը չէր կարող անտեղյակ լինել, որ կայսրության և Պարսկաստանի միջև ձևավորված հարաբերությունների զոհն է դարձել Հայաստանը, և որ այդ հարաբերություններում անհաջող մասնակից է եղել քրիստոնյա կայսր Փիլիպոսը:

Տրդատը չէր կարող Գրիգորին նետել Արտաշատի Խոր Վիրապի բանտը, որովհետև, նախ՝ նրանք այդ ժամանակ պետք է լինեին Փոքր Հայքում կամ Չրմեսում, ապա՝ այդ ժամանակ քրիստոնյաները ծաղկած չէին, և Տրդատը նախապես կիմանար իր զարմիկի մասին: Տրդատի կողմից Գրիգորի հալածվելն անիրական է և բխում է Վարքի ժանրային պահանջից: Հունական Վարքից հայտնի է, որ Կեսարիայում քահանա էր ձեռնադրվել, իսկ հայերեն Ազաթանգեղոսում իբր թե հետո են նրան ձեռնադրում, այն էլ միանգամից եպիսկոպոս: Նշանակում է՝ հունական Վարքի տվյալներն ավելի նախնական են, որովհետև նա քահանայություն էր անում Փոքր ու Բարձր Հայքերում, իսկ Մեծ Հայքում՝ 293 թվականից հետո: Շատ հնարավոր է, որ ինքը, որպես ազաթանգեղոս, 288-293 թթ. նույնպես շրջեր Հայքի պարսկական մասում ու այնտեղ քարոզեր, դարձի բերեր մարդկանց՝ մկրտելով նորադարձ քրիստոնյաներին:

V դարի ուսուցիչներն արդեն չգիտեին, թե ինչ է ագաթանգեղոսությունը, որովհետև կրոնի պետականացումից հետո այդ գործառույթն այլևս վերացել էր:

Երբ նրանք դարի երեսնականների սկզբին շարադրում էին հայոց դարձի պատմությունը, այն հայտնի էր բանավոր ավանդույթում իբրև «Ագաթանգեղայ պատմություն», որն իրականում նշանակում էր Գրիգորի պատմություն: Ժողովրդի լեզվում պատմությունը նշվում է հերոսի անունով, ինչպես՝ Դավթի պատմություն, Քաջ Նազարի պատմություն և այլն: Եվ քանի որ V դ. արդեն մոռացել էին բառի հին նշանակությունը, և հայտնի էր միայն անձնանունը, կարծեցին թե պատմության հեղինակն Ագաթանգեղոսն է՝ շփոթելով հերոսին հեղինակի հետ: Բայց V դ. դեռևս մնացել է այդ պատմությունը հերոսի անունով կոչելու հետքը Ղազար Փարպեցու մոտ՝ «Գրիգորիսի գիրք»¹³, որը ևս կարելի է համարել Գրիգորի և Ագաթանգեղոսի նույնության վկայություն: Ըստ էության, հայոց դարձաբանական պատմությունը կազմողներին մնում էր առաջաբանում բացատրել, թե ով էր հեղինակ Ագաթանգեղոսը՝ հունագիր ականատես, արքունի քարտուղար, որն իրապես լիովին համապատասխանում է Գրիգորի բնութագրին: Բայց երբևէ հարց չի տրվել, թե քարտուղար Ագաթանգեղոսի ներկայությամբ, եթե Վարքում քարտուղարը Գրիգորն է, ուրեմն երկրորդ քարտուղարն էր ստացվում, թե՞ հաջորդն էր: Այստեղ երևում է բանավոր ավանդույթից մնացած Ագաթանգեղոսի և Գրիգորի նույնության առաջին հետքը: Այսպիսով, առաջաբանի կեղծիքը ծնվել է ոչ թե կեղծարարությունից, այլ Ագաթանգեղոս անունը մեկնաբանելու համոզմունքից: Իսկ թե այդ բացատրությունը ումից և երբվանից է գալիս, վերջնական պատասխանելը դժվար է, որովհետև այն կարող էր նաև լինել IV-V դդ. սահմանին առաջացած կոլեկտիվ պատկերացում:

VII դ. երկրորդ տասնամյակում Կոմիտաս կաթողիկոսը վերակառուցեց Ս. Հռիփսիմեի տաճարը և վերարձարձեց Ս. Գրիգորի ու Հռիփսիմյան կույսերի պաշտամունքն ու հիշատակը, հավանաբար, կաթողիկոսարանի պահանջով էլ կատարվեց «Ագաթանգեղայ Պատմութեան» մեզ հասած խմբագրությունը:

¹³ **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնյան, քննական բնագիրը Գ. Տեր Մկրտչեանի, Ստ. Մալխասյանցի, աշխ. թարգմ. և ծան. Բ. Ուլուբաբյանի, Ե., 1982, էջ 6:

Համաձայն Կոմիտաս կաթողիկոսի օգնական Եզնիկ Երեցի խոստովանության, երբ Ս. Հռիփսիմնի գերեզմանը բացել, հետո Սահակի կնիքին ավելացրել են երկրորդ կնիքը և օրհնել են, նա անձամբ է տեսել մասունքները: Ն. Ադոնցը բավական մանրամասն գրում է այս Եզնիկ Երեցի մասին¹⁴, բայց չի ասում, որ նա կարող էր լինել խմբագիրը կամ Կոմիտաս կաթողիկոսի պատվերով առաջաբանի այդ մասի գրողը: Թե ինչ նոր բան է տվել այս նոր և վերջին խմբագրությունը, դժվար է հստակ ասել, բայց պետք է ենթադրել, որ նորամույժ տեղիները եղել են դավանաբանական բնույթի... Որովհետև ինչ վերաբերում է դարձաբանական սյուժետային գծին, որ առկա է մեզ հասած Ագաթանգեղոսի բնագրում, արդեն իսկ ծանոթ է եղել Ղազար Փարպեցուն V դ. վերջին քառորդին¹⁵:

Այսպիսով, IV դ. վերջին տասնամյակի ընթացքում վերստին մայրաքաղաք դարձած Վաղարշապատում կառուցվում է Մայր տաճարը՝ Ս. Կաթողիկեն, սրբադասվում է Գրիգոր Լուսավորիչը, գրվում է նրա առաջին համառոտ վարքը: Գրերի գյուտից հետո, հավանաբար, Սահակի նախածեռնությամբ, V դ. երկրորդ տասնամյակի սկզբներին, ասորերենի հիման վրա կամ նորովի գրվում է Գրիգոր Լուսավորչի հայերեն Վարքը, որից հետագայում թարգմանվում են հունարենը, սրանից էլ՝ մյուսները: Իսկ ահա 20-ական թվականներին Սահակ Պարթևը աշակերտներից մեկին պատվիրում է գրել Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը՝ վերջինների վկայարանների նորոգման և հիշատակի վերարձարման առիթով, որովհետև թե՛ վկայարանները, թե՛ հիշատակը դարձյալ կապված էին Գ. Լուսավորչի անվան հետ՝ ըստ չորրորդդարյան բանավոր վիպական ավանդույթի:

V դ. 30-ական թվականներին, երբ կաթողիկոսական աթոռն անցնում է Տիգրանի դրածոներին (Սուրմակ, Բրքիշո, Շմուէլ, նորից Սուրմակ), Սահակ Պարթևն ու Մաշտոցը Հայոց եկեղեցական միաբանության նորաստեղծ ուխտն ամրացնելու և նրա հետևորդներին ճշմարիտ դավանաբանական հունի մեջ պահելու նպատակով անհրաժեշտ սեպեցին շարադրելու հայ եկեղեցու վարդապետությունը և հիմնադրման պատմությունը՝ ելնելով, անշուշտ, Եփեսոսի ու Նախորդ տիեզերաժողովների ոգուց և

¹⁴ **Ադոնց Ն.**, Նշանագիր կարգաց բանից Եզնկան Երեցու, Երկեր, հ. Բ, Ե., 2006, էջ 184-201:

¹⁵ **Ղազար Փարպեցի**, էջ 8, 10: Հմմտ. նաև **Տեր-Ղևոնդյան Ա.**, Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1973, N 1, էջ 209-237):

Գ. Լուսավորչի ավանդներից: Երկու նպատակները մեկտեղելով՝ Մաշտոցը Վարդապետությունը շարադրեց իբրև եկեղեցու սրբազան պատմության՝ Ագաթանգեղոսի մաս՝ հիմքում հավանաբար ունենալով դեռևս գրերի ստեղծման արշալույսին իր իսկ համառոտ վերաշարադրած Աստվածաշնչի հայերեն առաջին տարբերակը, որը համոզիչ ցույց է տվել ներհուն բանասիրության դոկտոր Ա. Մուշեղյանը: Արգո հեղինակը, զարգացնելով նախորդ ագաթանգեղագետների և հատկապես հայագիտության երախտավոր Ժ. Գարիտի դրույթները, ապացուցել է, որ ոչ միայն Ագաթանգեղոսի ու նրա մաս կազմող Վարդապետության, այլև Եվագրոսի, Պրոկղի և գուցե այլ աղբյուրների հիման վրա ևս գրվել է առավել հակիրճ և դավանաբանական սահմանումներով ձևակերպված մի վարդապետական ուղեցույց՝ «Վասն հաւատոյ» վերնագրով, որը պահպանվել է միայն վրացերեն, այն էլ հետագայի գրչի կողմից թյուրիմացաբար վերագրված Հիպոլիտոսին¹⁶:

Այսպիսով, եկեղեցու իսկատիպ դեմքը դրածո գահակալներից փրկելու համար հարկավոր էր գրավոր շարադրել Հայոց դարձի ու հայ եկեղեցու հիմնադրման պատմությունը, որը, իբրև սրբազան ավանդություն, արդեն բանավոր ձևավորվել է IV դ. ընթացքում: Մնում էր այն պաշտոնապես վավերացնել հայերեն, և այդ գործը ևս ստանձնեց Մաշտոցն իր աշակերտ Կորյունի հետ՝ դարձյալ Ս. Պարթևի ծրագրի համաձայն: Ահա այդ ծրագիրը. Սասանյանները թշնամացան հայ Արշակունիների հետ, Անակին ուղարկեցին՝ դավադրաբար սպանելու հայոց Խոսրով թագավորին, ճանապարհին կնոջ հետ գիշերեց առաքյալի գերեզմանին, ինն ամիս անց ծնվեց Գրիգորը, սպանությունից հետո վերջինս և արքայի որդի Տրդատը փրկվում և ապաստան են գտնում արտերկրում, Տրդատը վերադառնում է հոր գահին, քրիստոնյա Գրիգորը դառնում է նրա քարտուղարը, և երբ բացահայտվում է, թե ում որդին է, բանտարկվում է Խոր Վիրապում, որտեղից շատ տարիներ անց դուրս է գալիս և բուժում Հռիփսիմյան կույսերի

¹⁶ Տե՛ս **Garitte G.** Documents pour l' etude d' Agathange, Vatican, 1946, p. 23-116: Հայերեն հրատ. տե՛ս «Էջմիածին», 1966, է. էջ 28-34, ը, էջ 46-51, թ-ժ, էջ 79-87 (թարգմ. Հր. Բարթիկյանի): Նաև՝ **Van Esbroeck M.** Le resume' Syriaque de l' Agathangel, Analecta Bollandiana, 1977(93), p. 293-357: Նաև՝ **Վան Էսբրոկ Մ.**, Ագաթանգեղոսի բնագրի պատմությունից (ՊԲՀ, 1984, N 3, էջ 28-34): Նաև՝ **Մուրադյան Պ.**, Ագաթանգեղոսի վրացերեն խմբագրությունները, Ե., 1982, էջ 72-81: Նաև **Մուշեղյան Ալբ.**, Ագաթանգեղոսի «Հայոց Պատմությունը» և հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, N 4, էջ 63-72):

սպանության պատճառով խոզակերպված Տրդատին: Դարձի է բերում նրան և ողջ արքունիքին, վարդապետում է 65 օր, կառուցում է Մայր Տաճարը, վկայարաններ ու եկեղեցիներ և դառնում Հայոց աշխարհում առաջին եկեղեցապետ-կաթողիկոսը՝ ձեռնադրվելով Կեսարիայում:

Պարզվեց, որ ծրագրի մասերն առանձին-առանձին արդեն գոյություն ունեն հայերեն. Գրիգորի վարքը, Տեսիլքը, Հռիփսիմյանների վկայաբանությունը, վարդապետության նախահիմքը: Հարկավոր էր այդ ամենը միացնել՝ ոչ թե արիեստականորեն կցելով, այլ մոնտաժման սկզբունքով դրանք մի առանցքի շուրջ շարելով և ստանալով դարձաբանական ժանրի նոր ստեղծագործություն՝ «Պատմութիւն Ագաթանգեղայ»: Հասկանալի է, որ մոնտաժելիս որոշ հատվածներ շարադրվեցին նորովի, ինչպես Գրիգորի Վարքը և Հայոց դարձը, որոշ հատվածներ մասնակի փոխվեցին նախատիպի համեմատ, ինչպես կարելի է կարծել Հռիփսիմյանների վկայաբանության դեպքում, որոշ դեպքերում էլ գրական աղբյուրը վերարտադրվեց ոչ ամբողջովին, այլ ընտրողաբար՝ ըստ անհրաժեշտության, ինչպես վարդապետության հարցում¹⁷: Թե՛ նորովի շարադրման, թե՛ փոփոխման ու խմբագրման այս աշխատանքը հմտորեն կատարեց Կորյունը: Տարիներ անց, երբ վերջինիս առաջ դրվեց Մաշտոցի վարքը գրելու խնդիրը, նա, լինելով մտահոգ իր անարժան ու անպատրաստ անձով, հանկարծ լուսավորվելու էր Հայոց I և II Լուսավորիչների կենաց նմանությամբ, անգամ ավելին՝ նույնությամբ... Եվ Մաշտոցի վարքը դյուրին հյուսելու էր նույն բաներով ու արտահայտչաձևերով, ինչով ինքը մոտ մեկ տասնամյակ առաջ հյուսել էր Ս. Գրիգորի վարքը Մաշտոցի հայացքի ներքո:

Իսկ վարդապետությունը, դա ինչի՞ էր պետք նորաստեղծ գործում, չէ՞ որ ոչ մի օտարալեզու թարգմանություն այն չի ընդգրկել Ս. Գրիգորի վարքում: Իսկ թարգմանում էին ոչ թե դարձի պատմությունը, այլ վարքը: Վարքի մեջ այն, իրոք, ավելորդ է, բայց պարտադիր է դարձաբանական ժանրի երկում, որովհետև քրիստոնյա հերոսը՝ քարոզիչ, առաքյալ, ավետարանիչ թե ագաթանգեղոս, թագավորին ու ժողովրդին որևիցե սքանչելագործության միջոցով դարձի բերելուց հետո պետք է հռչակի այն վարդապետությունը, որով պիտի ապրեն: Եվ եթե Գրիգոր Լուսավորիչ-Ագաթանգեղոսը 65 օր շարունակ քարոզում է Տիրոջ ուսմունքը՝ օրական մեկ-

¹⁷ Տե՛ս Վան Էսքրոք Մ., նշվ աշխ.:

մեկ համառոտ ներկայացնելով Հին ու Նոր Կտակարանների գրքերը, դրանով սահմանում է նորաստեղծ եկեղեցու վարդապետությունը:

Ժանրային այդ պարտադիր պահանջն էլ պատճառ է դարձել, որ որոշ գիտնականներ «Վարդապետությունը» վերագրել են Ս. Գրիգորին՝ շփոթելով դարձյալ հերոսին հեղինակի հետ: Այսինքն այն, ինչ գրել էր Մաշտոցը «Վարդապետություն» (կամ՝ «Վասն հաւատոյ») վերնագրով՝ առանձին վերցրած, շփոթել են Հիպոլիտեսի գրվածքի հետ և վերագրել նրան, իսկ դարձաբանական պատմության կազմում շփոթել են Գ. Լուսավորչի ասածի հետ և վերագրել սրան: Բնական է, այդ շփոթը չէր լինի, եթե Մաշտոցի նշանավոր գործը առանձին ու անաղարտ մեզ հասներ:

Հետաքրքիր է, որ այդ շփոթին ակամա նպաստել է նաև Կորյունը՝ համապատասխան վարքերում վարդապետություն վերագրելով և՛ Գրիգորին, և՛ Մաշտոցին: Կորյունը Մաշտոցին վերագրում է՝ պատմականորեն ականատես կամ տեղյակ լինելով, իսկ Գրիգորին վերագրում է՝ դարձաբանական ժանրի պահանջով: Մի խոսքով, ուսուցիչների պատվերով ու հսկողությամբ գրված «Ագաթանգեղայ պատմութեան» հեղինակ-կազմողը Կորյունն է¹⁸, բայց նա չունի հեղինակի դեր ու գիտակցում, որովհետև գործը խմբագրական բնույթի է՝ մեկ, առանձին մասերում շարադրված պատմական ու հոգևոր տեղեկատվությունը համընդհանուր սեփականություն էր՝ տրված ավանդույթի միջոցով՝ երկու, կազմված էր ուսուցիչների ծրագրով և ցուցումներով՝ երեք:

Ագաթանգեղոսը, որ, այդ իսկ ավանդույթի համաձայն, միշտ նշվել է բանավոր զրույցների վերնագրում՝ «Պատմութիւն Ագաթանգեղայ», առաջին իսկ հայացքից V դարից մինչև հիմա ընկալվել է իբրև հեղինակի անուն, և դա բնական էլ է, որովհետև մեր գրավոր կյանքն ու գործունեությունը գերազանցապես հեղինակային իրավունքի ու միջավայրի հետ են առնչվում:

Եվ երևի նաև այդ հանգամանքն է դեր խաղացել, որ Ագաթանգեղոսը հերոսի անունից վերընկալվի իբրև հեղինակի անուն, մանավանդ որ այդ անունը դարձել էր օտար ու անհասկանալի արդեն IV դ. վերջերին,

¹⁸ Հմմ. Տեր-Մկրտչյան Գ., Ագաթանգեղոսի աղբյուրներից, Վաղարշապատ, 1896, ինչպես նաև Բյուզանդացի Ն., Կորյուն և նորին թարգմանությունը, Տփղիս, 1900:

երբ ազաթանգեղոսության երևույթը վաղուց վերացել էր ոչ միայն Հայքում, այլև ողջ Հռոմեական կայսրությունում:

ОТ БЛАГОВЕСТНИЧЕСТВА (АГАФАНГЕЛЬСТВА) ГРИГОРА ПРОСВЕТИТЕЛЯ К "ИСТОРИИ АРМЕНИИ АГАФАНГЕЛА"

СААКЯН А.С.

Резюме

В 80-х гг. III в. Григорий Парфянин как странствующий проповедник христианства в Каппадокии, Малой и Великой Армении получил прозвище Агафангел. После провозглашения христианства в качестве государственной религии царем Тиридатом Великим, начиная с середины века на основе связанных с именем Григория Агафангела чудодеей в рамках монастырского фольклора стал формироваться устный роман об обращении армян в христианство, названный "История Агафангела" или "Повесть об Агафангеле". В 30-х гг. V в. по поручению Саака Парфянина Маштоц с учениками (Корюн и, возможно, Езник), переизложив этот устный роман, создали историю основания армянской церкви и обращения армян в христианство под заглавием "История Армении Агафангела", где Агафангел выступал как автор текста, а в предисловии – как секретарь царя Тиридата, так как прежнее значение слова "агафангел" было забыто в IV-V вв. не только в Армении, но и во всей Римской империи, и это слово воспринималось как антропоним. Впоследствии, в 40-х гг. V в., Корюн при написании "Жития св. Маштоца" использовал те же средства выражения, что и при написании "Жития св. Григория".

FROM THE GREGORY ILLUMINATOR'S BEING AGATHANGELOS TO THE "HISTORY OF AGATHANGELOS"

A. SAHAKYAN

Abstract

In the 80s of the 3rd century, being an evangelist in Cappadocia, Lesser and Greater Armenias, Gregory Parthev was named Agathangelos. After Trdat the Great made Christianity the state religion in Armenia, in the middle of the 4th century a tale about the magical deeds of Gregory Agathangelos was formed within the circles of Armenian monastic folklore that was called "History of Agathangelos" or "The Story of Agathangelos". In the 30s of the 5th century, as ordered by Sahak Parthev, Mashtots, with his pupil Koryun and maybe also with Yeznik, reinterpreted that oral story, so forming the history of the foundation of Armenian Church and the history of Armenian conversion – "Agathangelos History of Armenia" where Agathangelos is presented as the author instead of the hero. In the introduction of the book Agathangelos appears as the secretary of Trdat the Great because in the 5th century the former meaning of the word "Agathangelos" was already forgotten and was understood as a personal name. Ten years later, in the 40s, when Koryun undertook to write "Mashtots's vita" he used the same sentences and stylistic devices as in "Agathangelos History of Armenia".

КРИЗИС АРМЯНСКОЙ ОБЩИНЫ СИРИИ КАК ОСНОВА ПЕРЕОЦЕНКИ ПРИОРИТЕТОВ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (в контексте мировых процессов)

АВАКЯН К.Р.

Возникший в XX в. терроризм во всех своих проявлениях (переворот младотурок в Османской империи в 1908 г., Первая мировая война 1914-1918 гг., геноцид армян 1915-1923 гг., Февральский переворот и Октябрьская революция 1917 г. в Российской империи, Вторая мировая война 1939-1945 гг. и дальнейшие события на Ближнем Востоке) имел и по сей день имеет катастрофические последствия для мировой цивилизации, а также приводит к изменению демографической ситуации и перекраиванию исконных территорий.

Имевшим место в годы Первой мировой войны геноцидом армян, падением Османской и Российской империй была задействована новая масштабная программа захвата Ближнего и Среднего Востока, принявшая более развернутые формы в последующие десятилетия (в годы Второй мировой войны и в дальнейшем в результате периодических длительных войн) и достигшая своего апогея в наши дни, в процессе необъявленной Третьей мировой войны.

Характерной особенностью трех мировых войн был геноцид в отношении коренных народов – автохтонов (армян, славян, народов Восточной и Западной Европы, а также арабов, езидов, ассирийцев и иных этнических и религиозных групп), продолжающийся по сей день, а также изгнание этих народов с их территорий, что, как правило, сопровождается уничтожением общечеловеческого цивилизационного наследия (материальных и духовных культурных ценностей как древнего,

так и нового периода¹), равно как и изгнанием со своих земель христианского населения, в частности, армян: в течение одного столетия это было осуществлено вначале на их исторической Родине – в Западной Армении, Киликии, а также в населенных армянами провинциях Османской империи, затем – в армянских колониях.

Сказанное в первую очередь коснулось армянского народа, а именно – западных армян, поскольку Армения занимает территорию, расположенную на перекрестке Востока и Запада, что и стало одной из главных причин геноцида армян и их изгнания с родины. В результате этих трагических событий армяне рассеялись по всему миру, что повлекло за собой постепенное отчуждение их ощущаемой части (более резко выраженное в странах Запада, нежели Востока, где это происходит более замедленными темпами). Помимо этого неизбежным оказался процесс их отчуждения от $\frac{1}{10}$ части исторической колыбели – Армении (Республики Армении, Нагорно-Карабахской Республики, с 2017 года – Республики Арцах).

Фактически, спустя 100 лет после геноцида армян и насильственного изгнания западных армян с их исторической родины, а также после длительных периодических войн, последовавших за Второй мировой войной, на Ближнем и Среднем Востоке имели место процессы, приведшие к уничтожению населявших эти территории коренных народов и представителей иных этносов, что веком раньше было осуществлено в отношении армян.

После террористического акта в США в 2001 г. (11 сентября) последовала волна террористических войн, гражданских столкновений, переворотов, осуществленных по одному и тому же сценарию, которые имели и ныне имеют необратимые последствия также для армянских общин тех или иных стран (Ирак, 20 марта 2003 г. – май 2007 г., с 2008 г. – по сей день, Египет, 25 января 2011 г. – 3 июля 2013 г., Сирия,

¹ Главным директором UNESCO Ириной Боковой действия “Исламского государства” были охарактеризованы как форма “культурной чистки” [*UNESCO seeks to save Jewish sites from Islamic State's claws*. 2014, December 1, <<http://www.israelhayom.com/2017/07/20/unesco-seeks-to-save-jewish-sites-from-islamic-states-claws/>>].

с 15-го марта 2011 г. по настоящее время). Это были армянские общины, образовавшиеся в названных странах, предоставивших пристанище уцелевшим во время геноцида армянам.

И не случаен тот факт, что потомки пострадавших от геноцида армян, которые подверглись первому в мировом масштабе геноциду и депортации со своих исконных земель (из Западной Армении, Киликии, а также из населенных армянами провинций Османской империи), организованным при попустительстве общемировых преступных сил, и сегодня становятся жертвой осуществляемых теми же криминальными силами террористических нападений, вынуждающих их покинуть свои “родные пепелища”. Сегодня это происходит на некогда гостеприимной арабской земле – на Ближнем и Среднем Востоке, где в свое время нашли пристанище их предки.

В результате развязанной террористическими силами в Сирии (2011 г.) длительной и разрушительной войны тысячи сирийских армян нашли прибежище, помимо Ливана, Иордании, Объединенных Арабских Эмиратов, США, Канады, Швеции и т.д., и на своей родине – в Республике Армении и Республике Арцах.

В то же время в силу нормативных (Quota) привилегий², предоставляемых эмиграционными службами стран Запада эмигрантам-

² Так, когда во время сирийской войны мишенью нападений стали также армяне и армянские общинные организации, ряд американских армянских деятелей обратились в соответствующие структуры США с предложением о пересмотре доли выделенных армянам квот в проектах для беженцев. 11-го ноября 2012 г. правительство США, откликнувшись на заявление четырех видных армянских юристов США, пересмотрело предыдущее решение Службы гражданства и иммиграции Соединенных Штатов (СГИСШ) (US Citizenship and Immigration Services - USCIS) и его отделения “Безопасность Родины” (Homeland Security) о предоставлении сирийским армянам “Статуса временной защиты” (Temporary Protected Status - TPS) и “Визы праволишенных” (Visa Waivers). В упомянутом решении было указано следующее: “В условиях насильственной смены власти и усугубляющейся [в Сирии] ситуации СГИСШ выступила с заявлением о том, что сирийские граждане ... могут обратиться с просьбой о предоставлении в США статуса временной защиты”. Апеллируя к факту бомбардировки армянской церкви Св. Геворка в Алеппо, а также похищения семерых армян – пассажиров автобуса, следовавшего из Бейрута в Алеппо, являвшийся когда-то помощником директора проекта Корпуса мира – “Действие” известный юрист Вардгес Егияян и бывший мэр Пасадены Уильям Папарян 12-го октября 2012 г. обратились к госсекретарю США Хиллари Клинт-

христианам (в США, Канаду, европейские страны, Австралию и т.д.), жертвой “плавильного котла” Запада становятся новые поколения сохранивших свою национальную идентичность армян, обосновавшихся в странах Востока.

Из-за *объективных и субъективных историко-политических* обстоятельств армянство как **Диаспоры** (Спюрк – на арм. яз.) (общинные организации), так и **Армении** (речь идет о властных структурах) в целом не было готово к решению проблем армянских общин Ближнего Востока (в частности, армянской общины Сирии), связанных с вызванным войной кризисом и с предоставлением пристанища десяткам тысяч покинувших Сирию наших соотечественников.

Так, ***национальные структуры армянской общины Сирии*** – Армянская Апостольская церковь (с двумя епархиями, подчиняющимися Киликийскому католикосату и католикосату Первопрестольного Св. Эчмиадзина в Дамаске), а также руководящие органы политико-партийных и национально-общинных структур оказались не готовыми к сложившейся в результате войны ситуации, хотя и будучи очевидцами военно-политических событий, имевших место после Второй миро-

тон и секретарю отдела Безопасности Родины Дженнет Наполитано, выразив обеспокоенность судьбой христианских граждан оккупированной Сирии: “Столкновения [в Сирии] охватили крупные районы страны, в результате чего и без того безнадежное положение христиан стало невыносимым. Исходя из этого, зная законодательство и в то же время будучи осведомленными о факте распространения “Статуса временной защиты” на сирийских граждан, считаем, что этого недостаточно, чтобы выстоять в данной изо дня в день ухудшающейся гуманитарной ситуации, посему обращаемся к правительству Соединенных Штатов”. Вскоре после этого их бесчисленные друзья и родственники из США и других стран выразили правительству США свое желание оказать содействие по облегчению въезда сирийских армян в США. Согласно Уильяму Папаряну, они будут продолжать “оказывать давление на правительство США, чтобы оно незамедлительно приняло меры по облегчению страданий христиан в Сирии”, и информировать армянскую общину Сирии, их семьи и родственников о ходе дальнейших действий [US Government responds to Prominent Armenian-American lawyers call upon US Government to issue visa waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release, 2012, November 12, <<http://www.cente.rarnews.com/>>]. Между тем Армянской диаспоре следовало проявить сплоченность, дабы, поддерживая действия властей Республики Армения и Республики Арцах, материально содействовать переезду сирийских армян не в США, а на Родину – в Армению, а также предоставлению им жилищ и работы.

вой войны на Ближнем и Среднем Востоке (Палестина, Египет, Ливан, Сирия, Ирак, Иран и т.д.), общинные структуры *объективно* должны были предвидеть неизбежность назревающего военного исхода и его сокрушительных последствий. Следовательно, являясь общинными структурами “Главной колонии”³, они должны были пересмотреть первоочередные общедиаспоральные вопросы, в частности общинные приоритеты (пассивное сохранение армянской идентичности, сохранение общины любой ценой, даже ценой человеческих жизней, восстановление “родины” в чужих странах, даже в условиях обстрела).

Ответственные за сирийских армян (до войны армянская община Сирии насчитывала 80.000 человек, большая часть которых, почти 60.000, была сосредоточена в Алеппо⁴) общинные и общеообщинные структуры, имея исторический опыт создания классических армянских колоний (в качестве сугубо временного и бесперспективного пристанища) не имеющих государственности армян (колонии в Индии, Польше, Голландии и т.д.), а также после развала СССР и фактического прекращения Холодной войны поддерживая разносторонние государственно-политические и социально-экономические отношения с Республикой Армения (которая после провозглашения независимости в 1991 г. и обретения независимости НКР (Республика Арцах) находится на этапе воссоединения), тем не менее, исходя из *субъективных* мотивов, были заинтересованы в том (и, следует отметить, заинтересованы по сей день), чтобы образовавшуюся на Ближнем Востоке в результате геноцида 1915 г. “Главную колонию” сохранить даже на руинах⁵.

³ Имеется в виду армянская община Сирии, ставшей основным пристанищем для переживших геноцид армян.

⁴ **Փաշայան Ա.**, Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը, «Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», N 3, 2011, 31 մայիսի, <http://www.no-ravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5811>: **Գալստյան Հ.**, Սիրիահայեր. Վերադարձ, որ չէին նախատեսել, 2015, 3 հունիսի, <<http://hetq.am/arm/news/60582/syrian-armenians-a-return-they-never-predicted.html>>:

⁵ Դէպի Վերականգնում. Արամ Ա-ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տազնապահար Հալէպէն, 2017, 9 Յունիսար, <<http://asbarez.com/arm/272583/>>:

Между тем, **Восточная Армения**, в особенности после вхождения в состав России (Армянская область – 1828-1840 гг., Эриванский уезд – 1840-1849 гг., Эриванская губерния – 1849-1918 гг.) и тем более на протяжении всего XX века (Первая Республика Армении – 1918-1920 гг., Армянская Советская Социалистическая Республика (1920-1991 гг.) и Республика Армения – с 1991 г. по настоящее время), несмотря на тяжелые историко-политические, социально-экономические условия была и остается объективным пристанищем для армян-скитальцев, которые оказались здесь в результате индивидуальной, организованной, массовой репатриации.

Разумеется, Армения, которая сумела выстоять в сложных социально-экономических и военно-политических условиях, в силу субъективных причин, не была готова дать приют огромному числу соотечественников из Сирии, находившихся в бедственном положении. При всем при этом содействие и помощь сирийским армянам носили более организованный и координированный характер (нежели помощь нашим соотечественникам из Ирака, репатриировавшим в Армению в результате войны в Ираке) благодаря Министерству диаспоры РА, созданному в 2008 г. При поддержке правительства министерство, задействовав соответствующие рычаги, а также скоординировав свои действия как с рядом отечественных общественных и благотворительных организаций, так и с организациями Спюрка (в том числе сирийских армян), равно как и с отдельными международными структурами, попыталось всеми возможными средствами решить вопросы обустройства сирийских армян на Родине.

Так что кризис сирийской армянской общины стал для Министерства диаспоры РА – со дня его основания – первым серьезным испытанием в вопросе вовлечения Родины в решение проблем сирийских армян как части Диаспоры, а также в плане оценки эффективности сотрудничества Армении и Диаспоры.

Кризис армянской общины Сирии явился также испытанием для взаимопонимания двух ветвей армянства (после периодических репа-

триаций в советские годы), их сотрудничества и проверки идеолого-психологической готовности жить и созидать бок о бок.

Исходя из объективных и субъективных **идеолого-политических причин**, армянство **Диаспоры и Армении**, в плане национальной готовности принять репатриантов, находится в разных условиях.

К примеру, для армян из **Сирии**, когда-то побывавших в Армении либо получивших здесь образование, занимавшихся тем или иным родом деятельности (научной, предпринимательской и т. д.), приобщенных к языковой среде (в том числе к использованию русского языка), знакомых с жизненным укладом, нравами, обычаями, *объективно* не сложно было еще задолго до начала военных действий или сразу после них принять решение репатриировать в Армению.

Между тем, частью сирийских армян (“репатриантов поневоле”), вынужденных найти пристанище в Армении в связи с затянувшейся войной, Армения рассматривалась как всего лишь временное прибежище, транзитная страна для переезда в Европу, США, Австралию, восточные страны или для возвращения в Сирию, что в основном имеет *субъективные* причины (отсутствие желания адаптироваться к армянской среде, к сложившейся в Армении сложной экономической ситуации, к военно-политическим трудностям, к особенностям восточноармянского мышления, а также к использованию русского языка и, как уже было отмечено, к жизненному укладу, нравам, обычаям). Определенную роль играет и незнание либо неприятие особенностей культуры и быта и т.д.

Однако в целом граждане (с отдельными исключениями) **независимой Армении** проявляли и по сей день проявляют толерантное отношение к своим соотечественникам из Сирии, что обусловлено *объективными* факторами (приобщенность к западноармянскому языковому мышлению как результат контакта с репатриантами-армянами из Диаспоры – в советские и постсоветские годы, к использованию частью репатриантов турецкого, арабского и иных языков, к их быту, нравам, обычаям, к особенностям их культуры, в отдельных случаях ставших уже привычными и даже перенятыми ими).

Посему в *субъективном* восприятии осязаемой части населения Республики Армения и Арцах необъясним тот факт, что Армения (которая с 1991 г. стала свободной, независимой и со дня провозглашения НКР вступила на путь консолидации) некоторой частью наших соотечественников в Спюрке не рассматривается в качестве эпицентра массового воссоединения армян (репатриация, призыв “Вернись домой”, “Возвращение на Родину”, “Воссоединение армян”). Помимо этого, по сей день Родина не воспринимается как место широкомасштабных инвестиций, равно как и не приветствуется репатриация на Родину представителей сирийской армянской общины, которая занимает особое место в плане “сохранения” армянской национальной идентичности.

Прошло четверть века со дня распада СССР, который для определенной части Диаспоры являлся основным препятствием в отношениях Спюрк-Армения. На сегодняшний день ряд представителей Диаспоры в качестве новых препятствий (причем со стороны тех же сил) усматривают социально-экономические трудности, политическую ситуацию в Арцахе, восточноармянское языковое мышление, использование русского языка в армянской речи и т.д.

Более того, звучат призывы о восстановлении национальных структур “сирийской родины”⁶, которые препятствовали и будут препятствовать общедиаспоральным усилиям по реконструкции истинной Родины, а также по претворению в жизнь первоочередной для всех времен задачи – идеолого-практической программы консолидации армян.

К сожалению, некоторые политические и партийно-идеологические структуры, за отдельными исключениями, и сегодня делают все возможное, дабы Армянская диаспора была бы отчуждена от Армении и не оказала содействие соотечественникам в поддержке армян, репатрировавших из Сирии в Армению, в отдельных случаях отдавая предпочтение тому, чтобы армяне – беженцы обосновались за рубежом, тем самым обрекая целые поколения армян на создание очеред-

⁶ Там же.

ной “родины”, на “(вос)создание” все новых и новых “Армений” на чужбине (что само по себе бесперспективно и бессмысленно), в то время как Родина – Армения – бесспорно, нуждается в бескорыстном содействии и всецелой поддержке своих сыновей.

Такая картина наблюдается и в других зарубежных армянских общинах, где даже в случае развития и разворачивания событий по подобному сценарию возвращение на Родину, в Армению, а также предоставление материальной помощи по обустройству на Родине остается спорным, не приоритетным для армянской Диаспоры вопросом (имеем в виду прецедент армян, эмигрировавших из Ирака, Египта, Сирии). При этом отдается предпочтение зарубежным странам, либо свободная, независимая, а с освобождением Арцаха вставшая на путь объединения Армения⁷ в отдельных случаях рассматривается в качестве некоего трамплина и страны-транзита.

Современные геополитические вызовы должны послужить основой для переоценки общедиаспоральных приоритетов, радикальной реорганизации общинной жизни в морально-психологическом, идеологическом и практическом плане. Эту эпохальную миссию должны взять на себя все общинные структуры Диаспоры, в частности, армянская церковь (апостольская, евангелическая, католическая), национальные партии (Социал-демократическая партия Гнчакян – СДПГ, Армянская революционная федерация Дашнакцутюн – АРФД, Либерально-демократическая партия Рамкавар – ЛДПР), всеармянские благотворительные организации, союзы и клубы, армянские и иноязычные армянские СМИ (периодика, радио, телевидение, интернет), учебно-образовательные учреждения, а также Родина – Армения, религиозные, общественные и иные структуры, дабы скоординировать совместные усилия.

Необходимо, чтобы определенные структуры на Родине и в Диаспоре, занимающиеся патриотической и направленной во благо нации деятельностью в условиях сегодняшней мировой дестабилизации, пре-

⁷ “Свободная, независимая и объединенная Армения” – политическое кредо АРФД, озвученное в 1919 г. См.: Свободная и объединенная Армения, <https://hy.wikipedia.org/wiki/Անկախ_և_Արժանի_Հայաստան>].

жде всего, в идеологическом плане пересмотрели бы общенациональные приоритеты армянства, перспективы его дальнейшего существования и наметили бы будущие свои действия. Своими публикациями, выступлениями, агитацией общеармянским и общедиаспоральным структурам следует проводить активную, разъяснительную и просветительскую работу в армянских общинах, ознакомливая их с истинной геополитической ситуацией, общемировыми процессами и вызовами, с угрозой извращения (в результате ассимиляции и смены поколений) и модификации армянской самости.

В противном случае диаспора как важная национальная общность, ратуя за бесцельное и неэффективное “сохранение армянства”, в условиях стремительной глобализации и новых геополитических вызовов обречена на ассимиляцию и исчезновение.

На фоне бесперспективного будущего и изо дня в день нарастающей опасности на Ближнем и Среднем Востоке и в странах Запада, а также мощных геополитических процессов, касающихся человечества и цивилизации в целом, спустя 100 лет после геноцида у армян зарубежья (перед которыми вновь встал вопрос физического существования, равно как и угрозы отчуждения и извращения) появилась возможность идеологически и морально-психологически подготовиться к переходу от векового пассивного, неэффективного и **бесперспективного сохранения национальной идентичности на чужбине к практическому сохранению Родины – к массовой и всесторонней репатриации**. Репатриация, которая предполагает как идеологическую, так и физическую и материальную подготовку и ориентацию (без партийно-идеологических и политических притязаний) Армянской диаспоры на Республику Армения, а также на ценою пролитой крови героев освобожденный Нагорный Карабах – Республику Арцах, во имя сохранения и спасения армянского генофонда и последовательной реализации национальных целей.

**ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԳՆԱԺԱՄԸ՝
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ
(համաշխարհային գործընթացների համատեքստում)**

ԱՎԱԳՅԱՆ Ք.Ռ.

Ամփոփում

Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար ապագայի, մարդկության ու քաղաքակրթության նկատմամբ ահագնացող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում, Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, օտար ավերում նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգնած, ուժացման ու այլասերման դատապարտված հայությանը գաղափարապես ու բարոյահոգեբանական առումով հնարավոր է նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ, *անհեռանկար հայապահպանությունից դեպի գործնական հողապահպանություն՝ «Դեպի Երկիր»* Հայրենադարձության և Հայրենաշինության: Հայրենադարձություն, որը ենթադրում է սփյուռքը գաղափարապես, ֆիզիկապես ու նյութապես նախապատրաստել և ուղղորդել բացառապես դեպի Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև հերոսների արյան գնով ազատագրված Լեռնային Ղարաբաղ՝ Արցախի Հանրապետություն, անսակարկ (առանց կուսակցական-գաղափարական-քաղաքական նկրտումների) զանգվածային և համակողմանի Տունդարձի, հանուն հայկական գենոֆոնդի պահպանման ու փրկության և համազգային նպատակների իրականացման շարունակականության:

Հակառակ դեպքում, սփյուռքը՝ որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, աննպատակ և ապարդյուն «հայապահպանությամբ», հարափոփոխ, արագ գլոբալացվող և անընդհատ նորանոր մարտահրավերների առերեսվող աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ծուլման ու անհետացման:

**THE CRISIS OF THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA
AS A GROUND FOR REEVALUATION OF
ARMENIAN DIASPORAN PRIORITIES
(In the Context of World Processes)**

K. AVAGYAN

Abstract

Under the conditions of a precarious and unpromising future and the gradually threatening dangers in the Near and Middle East and the Western countries, in addition to the dreadful geopolitical developments imperiling humanity and civilization, and a 100 years following the Armenian Genocide, it is advisable to ideologically and psychologically prepare those living in foreign lands and facing the danger of the maintenance of their physical existence and assimilation to make a transition from a century-old passive and inefficient, migratory and *dubious Armenian-preserving policy into a practical land-preserving policy*, into Repatriation to the Native Country. This idea implies that the Diaspora should be ideologically, physically and materially prepared and aimed (without party, ideological and political pretensions) exclusively at the Republic of Armenia and the Republic of Mountainous Karabagh – the Republic of Artsakh, liberated at the price of the blood of heroes, aimed at an unbargainable massive and multilateral Home-Coming, for the sake of preservation and salvation of the Armenian genofund and for the maintenance and continuity of the realization of the pan-national objects.

Otherwise, the Diaspora, as a collective body of national importance, with its aimless and inefficient “Armenian-preservation,” is doomed to assimilation and disappearance under the constantly changing, rapidly globalizing geopolitical conditions, ceaselessly facing new challenges.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՍԱՐՈՅԱՆ Կ.Ա.

Քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում ներգրավված քաղաքական դերակատարները հաճախ ձգտում են հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ժողովրդավարական ինստիտուտների ու ընթացակարգերի ներդրման վրա՝ անտեսելով այն հանգամանքը, որ կայուն և արդյունավետ ժողովրդավարական կարգի ապահովման համար միայն քաղաքական և կառավարչական կառուցակարգերի ամրագրումը բավարար չէ: Ժողովրդավարական ռեժիմի հաստատումն ու հետագա համախմբումը մեծապես կախված են նաև քաղաքական համակարգի նկատմամբ հասարակության անդամների կողմնորոշումներից և դիրքորոշումներից, այլ կերպ ասած՝ տվյալ հանրության բնորոշ քաղաքական և քաղաքացիական մշակույթի տիպերից: Հետևաբար, եթե այդ մշակույթն իր բնույթով չի կարող սպասարկել ժողովրդավարական համակարգը, ապա այդ համակարգի հաջողության հասնելու հնարավորությունը մոտենում է նվազագույնի: Այս տեսանկյունից էլ առաջնային է դառնում քաղաքացիական մշակույթի համատեքստում այնպիսի երևույթի դիտարկումը, ինչպիսին քաղաքական սոցիալականացումն է:

Քաղաքական սոցիալականացումը ենթադրում է սերնդային փոփոխության շրջափուլերի պայմաններում քաղաքական համակարգի հարաբերական կայունության ապահովում, որը քաղաքացիական մշակույթի տեսանկյունից էական նշանակություն ունեցող հանգամանք է: Ըստ էության, քաղաքական սոցիալականացումը քաղաքացիական մշակույթի կարևորագույն տարրերի՝ քաղաքական գիտելիքների, քաղաքական նորմերի, կողմնորոշումների, արժեքների ձևավորման, յուրացման ու փոխանցման յուրօրինակ գործընթաց է՝ կոչված ապահովելու ոչ միայն քաղաքականության ընկալումն անձի մեջ, այլ նաև վերջինիս մուտքը քաղաքականության: Այս կերպ ապահովելով քաղաքացիական մշակույթի վերարտադրությունը՝ քաղաքական սոցիալականացման գործընթացն ուրվագծում է պատմական տվյալ ժամանակահատվածում խաղի այն ընդհանուր կանոն-

ները՝ քաղաքական գիտելիքներ, նորմեր, արժեքներ, որոնց շուրջ պայմանավորվում են քաղաքացին ու պետությունը¹: Մյուս կողմից՝ քաղաքական սոցիալականացման գործընթացի վերջնաարդյունքը ենթադրում է քաղաքացիական գիտակցության հասուն մակարդակ ունեցող քաղաքացու ձևավորում, որ հստակ պատկերացնում է իր տեղն ու դերը քաղաքական համակարգում²: Տեսական առումով անդրադարձերը քաղաքական սոցիալականացմանը բավական շատ են, հայեցակարգը լայնորեն ուսումնասիրված է թե՛ սոցիոլոգիայի և թե՛ քաղաքական գիտության՝ հատկապես քաղաքական հոգեբանության շրջանակներում: Եթե փորձենք ընդհանրացնել այդ տեսական մոտեցումները, ապա կարելի է ասել, որ մի դեպքում հետազոտողների ուշադրության կենտրոնում քաղաքական համակարգն է, իսկ մյուս դեպքում՝ անհատը: Առաջին պարագայում քաղաքական սոցիալականացումն ընդունված է դիտարկել որպես քաղաքական համակարգի զարգացումն ապահովող կարևոր գործոն, քաղաքական համակարգի կենսագործունեությունն ապահովող գործառույթ: Այս տեսանկյունից քաղաքական սոցիալականացման կարևորությունն այն է, որ քաղաքական համակարգի գործառույթությունն իր վրա կրում է քաղաքացիների քաղաքական գիտելիքների, քաղաքական պատկերացումների, վարքաբանական և արժեքաբանական կողմնորոշումների ազդեցությունը: Կառավարման ռեժիմի տեսակը, քաղաքական համակարգի ինստիտուտների հանդեպ քաղաքացիների չեզոքության մակարդակը, համակարգի կայունությունը անմիջականորեն կապվում են քաղաքական սոցիալականացման հետ: Համակարգային մոտեցմամբ, օրինակ, քաղաքական սոցիալականացումը սահմանվում է որպես «գործընթաց, որի միջոցով ձևավորվում են քաղաքացիների քաղաքական հայացքները, որոնք էլ իրենց հերթին ազդում են ողջ երկրի քաղաքական կյանքի վրա»³: Մյուս խումբ սահմանումների դեպքում քաղաքական սոցիալականացման կենտրոնում անհատն է՝ մասնավորապես, թե երբ, ինչպես և ինչի հետևանքով են անհատի մեջ ձևավորվում քաղաքական գիտելիք, քաղաքական հմտություն,

¹ Տե՛ս **Ирхин Ю.В.** Социология культуры, М., 2006, с. 513-515:

² Տե՛ս **Մարգարյան Մ.**, Քաղաքական PR-ը և անձի սոցիալականացումը նոր հանրային կառավարման համակարգում, «Հանրային կառավարում» հոդվածների ժողովածու, Ե., 2011, էջ 112:

³ Տե՛ս **Dawson R., Prewitt K., Dawson K.** Political Socialization: An Analytic Study, Little Brown, 1977, p. 14:

կողմնորոշում ու վարքաբանական մոդելներ: Անհատի, քաղաքական համակարգի ու նրա ինստիտուտների միջև փոխգործակցությունը, որն ընդհանուր առմամբ պայմանավորում է այս կամ այն հասարակության քաղաքացիական մշակույթի մակարդակը, կարևորվել է նաև քաղաքական սոցիալականացման Չիկագոյի դպրոցի ներկայացուցիչների (Դ. Իստոն, Ռ. Լիպտոն, Թ. Պարսոնս) կողմից, որոնք սոցիալականացումը դիտարկում են որպես մարդու կողմից հատուկ դերերի յուրացման գործընթաց, որոնք նրանց անհրաժեշտ են քաղաքական գործունեություն ծավալելու կամ այլոց քաղաքական գործունեությունը գնահատելու համար⁴: Գ. Ալմոնդը, Ս. Վերբան, Մ. Ջենինգսը, Օլջանսկին, Շեստոպալը, Շիբուտանին և շատ այլ հեղինակներ քաղաքական սոցիալականացման անդրադառնում են նաև քաղաքացիական մշակույթի համատեքստում՝ քաղաքական սոցիալականացմանը վերապահելով այնպիսի կարևոր գործառույթ, ինչպիսին քաղաքական և քաղաքացիական մշակույթների փոխանցումն է սերնդեսերունդ⁵: Առհասարակ, քաղաքացիական մշակույթի տեսանկյունից արժեքավոր են քաղաքական սոցիալականացման վերաբերյալ այն տեսական մոտեցումները, որոնք սոցիալականացման գործընթացում շեշտն հատկապես դնում են աշխարհի նկատմամբ մարդու ակտիվ հարաբերությունների ձևավորման ու հաստատման վրա: Անհատի անկախության հանգամանքն ընդգծող այս հայեցակարգերը որպես այլընտրանք են հանդես գալիս այն մոտեցումների, որոնք անհատին կախման մեջ են դնում ինստիտուցիոնալ ազդեցություններից, անհատի կենսագործունեությունը սահմանափակում են հասարակության մեջ ընդունված նորմերով, կանոններով: Այս կերպ անձը դառնում է ոչ միայն իրեն փոխանցված և անցյալի սերունդների ուժով կուտակած քաղաքացիական մշակույթի կրող, այլև հանդես է գալիս այդ մշակույթին նոր որակներ, ուղենիշներ հաղորդողի ու թելադրողի դերում: Սա քաղաքական սոցիալականացման կարևորագույն գործառույթներից մեկն է, որն ապահովում է քաղաքացիական մշակույթի ձևավորումը հատկապես այն հասարակություններում, որոնցում ժողովրդավարությունը չունի խոր արմատներ:

⁴ Տե՛ս **Շափաղաթյան Հ.**, Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ, Ե., 2007, էջ 22-23:

⁵ Տե՛ս **Ольшанский Д.В.** Основы политической психологии (Учебное пособие для вузов, 2001, с. 128):

Որպես ողջ կյանքի ընթացքում անձին ուղեկցող գործընթաց՝ քաղաքական սոցիալականացումը կրում է փուլային բնույթ՝ պայմանավորված անձի տարիքով, որտեղ յուրաքանչյուր փուլի համար դիտարկվում են քաղաքական սոցիալականացման համապատասխան գործակալներ, իսկ ընդհանուր առմամբ ընդունված է համարել, որ գոյություն ունի անձի առաջնային և երկրորդային սոցիալականացում: Քաղաքական սոցիալականացման գործընթացում գործակալների առանձնացումը կարևոր նշանակություն ունի, որքանով թույլ է տալիս պատկերացում կազմել, թե ինչ պայմաններում է անձը ձեռք բերում քաղաքական գիտելիքներ, հմտություններ, կողմնորոշումներ և վարքային մոդելներ: Քաղաքական սոցիալականացման գործընթացի տրամաբանությունը, ըստ էության, փոխվում է բոլոր այն դեպքերում, երբ գործ ենք ունենում քաղաքական համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունների կամ առհասարակ քաղաքական համակարգի ու դրա կառուցակարգերի փոփոխության հետ: Շուրջ երկու տասնամյակից ավել Հայաստանում, ի թիվս հետխորհրդային այլ երկրների, տեղի է ունենում քաղաքական համակարգի կերպափոխման խորքային գործընթաց, որը մեկնարկեց Հայաստանի անկախացմամբ: Հրաժարվելով խորհրդային ամբողջատիրական քաղաքական կառուցակարգերից՝ երկրի քաղաքական օրակարգում որպես գերխնդիր հռչակվեց քաղաքական համակարգի զարգացման ժողովրդավարական մոդելի հաստատումը՝ հանրային կյանքի կազմակերպման ազատական ու պլյուրալիստական մոդելներով: Այս ողջ գործընթացում հավասարապես ներառված է ինչպես քաղաքական ընտրախավը, այնպես էլ սովորական քաղաքացին: Եվ եթե քաղաքական սոցիալականացման տեսանկյունից անկախ Հայաստանում ծնված սերնդի համար այդ գործընթացը պակաս մարտահրավերային կարող է լինել, քանի որ այն նոր իրողությունների ու պայմանների պարագայում անցնում է իր առաջնային քաղաքական սոցիալիզացիան, ապա նույնը չի կարելի ասել ավագ սերնդի մասին: Խորհրդային քաղաքական կառուցակարգերի առաջնորդությամբ իրենց առաջնային քաղաքական սոցիալիզացիան իրականացրած ավագ սերունդը խնդիր ուներ և դեռ շարունակում է ունենալ հնարավորինս առանց ցնցումների ադապտացվել նոր իրողություններին: Կերպափոխման գործընթացն ակնհայտ դարձրեց, որ նոր իրողությունները հարաբերությունների խիստ հիերարխիկ, կառավարման առավելապես ռեպրեսիվ գործի-

քակազմով, գաղափարական ինդոկտրինացիայի պայմաններում իրենց քաղաքական սոցիալականացումն անցած, քաղաքական գիտելիքներ, կողմնորոշումներ, պատկերացումներ ձեռք բերած ավագ սերնդի քաղաքացիների համար այդ ամենը վերանայելու լուրջ նախադրյալ և անհրաժեշտություն են ստեղծում: Հետևաբար, այս պայմաններում հատկապես քաղաքացիական մշակույթի տեսանկյունից անհրաժեշտ հրամայական է դառնում դիտարկել քաղաքական ռեսոցիալիզացիայի գործընթացը համակարգային կերպափոխումների համատեքստում: Հոգեբանության մեջ ռեսոցիալիզացիա եզրույթն առաջին անգամ կիրառել են ամերիկացի սոցիալական հոգեբաններ Ա. Քենեդին և Դ. Քերբերը՝ այդ կերպ բնութագրելով սոցիոմշակութային միջավայր անհատի երկրորդ մուտքն այն բանից հետո, երբ նախորդ փուլն անցել է խափանումներով ու խնդիրներով⁶: Սոցիալական և մշակութային մարդաբանության հայեցակարգը ռեսոցիալիզացիան սահմանում է որպես «ադապտացիա», սոցիոմշակութային նոր միջավայրի յուրացում, որը ենթադրում է ինտեգրացիա հասարակական նոր հարաբերություններում, զգացմունքային հարմարավետություն և բավարարվածություն նյութական դրությամբ⁷: Սոցիոլոգիան քաղաքական ռեսոցիալիզացիան դիտարկում է որպես ավելի վաղ յուրացրած արժեքներից, սոցիալական դերերից, վարքի կանոններից տարավարժում⁸: Քաղաքահոգեբանական մոտեցմամբ, ռեսոցիալիզացիան դիտարկվում է ոչ միայն որպես նոր սոցիալական որմնախորշերի յուրացում, այլև վաղ փուլերում ձեռք բերվածի վերանայում, վերաիմաստավորում⁹: Կերպափոխվող հասարակություններում քաղաքացիական մշակույթի տեսանկյունից ռեսոցիալիզացիայի դիտարկումն առաջին հերթին ցույց է տալիս, թե անցման գործընթացի մեկնարկին և հետագա փուլերում քաղաքացիների վերաբերմունքը ժողովրդավարության գաղափարին, նորմերին ու սկզբունքներին ինչպիսին է, որքանով են դրանք ընդունելի և որքանով են արտացոլված հանրության կողմնորոշումներում, պատկերացումներում: Մյուս կող-

⁶ St'u **Самаркина И.В.** Политическая ресоциализация: актуальный контекст исследования (Человек, сообщество, управление, 2006, № 4, с. 140):

⁷ Նույն տեղում, էջ 141:

⁸ St'u **Шестопап Е.Б.** Политическая социализация и ресоциализация в современной России (Полития, 2005, № 4, с. 52):

⁹ St'u **Шестопап Е.Б.** Политическая психология: учебник для вузов, М., 2002, с. 274:

մից՝ ռեսոցիալիզացիայի ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ, թե այսպես կոչված ավտորիտար քաղաքական մշակույթի պայմաններում ձեռք բերված արժեքաբանական մոտեցումներն արդյո՞ք հակասության մեջ են ժողովրդավարության գաղափարի հետ: Պատահական չէ, որ ժողովրդավարական քաղաքացիական մշակույթի արմատավորման տեսանկյունից, ի թիվս ժողովրդավարության տարբեր բաղադրատարրերի, քաղաքացիների մեջ համոզմունքն այն մասին, որ ժողովրդավարությունը որպես կառավարման ձև առավել նախընտրելի է, քան որևէ այլ ավտորիտար կառավարման ձև, ընդունված է դիտարկել որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի կայունության ապահովման համար առանցքային նշանակություն ունեցող պայման: Այլ կերպ ասած՝ «ժողովրդավարությունը հիմնավոր արմատավորված է, եթե քաղաքացիներն այն ընկալում են որպես «հնարավոր լավագույն տարբերակը»/the only game in town»¹⁰: Վերը բերված հարցադրումների ու դիտարկումների համատեքստում արժեքավոր դիտարկումների հնարավորություն են ընձեռում ամերիկացի սոցիոլոգ Ռ. Ինգելհարթի մեթոդաբանությամբ մշակված «Արժեքային համակարգերն աշխարհում» սոցիոլոգիական նախագծի 1995-1998 և 2010-2014 թվականների¹¹, ինչպես նաև Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի մեթոդաբանությամբ մշակված «Կովկասյան բարոմետր 2017» հետազոտական նախագծի հասանելի տվյալները: Ըստ այդմ, օրինակ, Հայաստանի հասարակության պարագայում անցման մեկնարկից մի քանի տարի անց (1995-1998 թթ.) աջակցությունը ժողովրդավարության գաղափարին էականորեն բարձր է եղել: Այսպես՝ հարցվածների շուրջ 76 տոկոսը կողմ է արտահայտվել ժողովրդավարության գաղափարին, շուրջ 60 տոկոսն էլ համաձայն է եղել այն պնդմանը, որ «ժողովրդավարությունը կարող է և խնդիրներ ունենալ, սակայն որպես կառավարման ձև ավելի լավ է, քան որևէ այլ ձև»: Համապատասխանաբար, 2010-2014 թթ. շրջափուլում հարցվածների շուրջ 75 տոկոսը կողմ է եղել ժողովրդավարական քաղաքական համակարգ ունենալուն՝ այդ կերպ կարևորելով ժողովրդավարության գաղափարը՝ որպես

¹⁰ St' u Di Palma G. To Craft Democracies: An Essay on Democratic Transitions, Los Angeles, 1990, p. 113:

¹¹ St' u World Values Survey (2010-2014), Crossings by country//Study# 906-WVS2010 v.2015.04.18: «Կովկասյան Բարոմետր-2017», Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը, Ե., 2017:

նախընտրելի կառավարման ձև: «Կովկասյան բարոմետրի» արդյունքներով՝ 2017թ. նոյեմբերի դրությամբ հարցվածների շուրջ 46 տոկոսի համար ժողովրդավարությունը նախընտրելի է համարվել կառավարման մյուս համակարգերից: Հայ հասարակության համար ժողովրդավարության իդեալի նախընտրելի լինելու մասին է վկայում նաև հարցադրումն այն մասին, թե օրինակ «որքանով է նախընտրելի ունենալ քաղաքական համակարգ բանակի կառավարմամբ»: Այսպես՝ 1995-1998 թթ. շրջափուլում հարցվածների մոտ 70 տոկոսը, իսկ 2010-2014 թթ. ավելի քան 60 տոկոսը բացասական է արտահայտվել նման հեռանկարի օգտին: Ընդ որում, հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանի հանրության շրջանում ժողովրդավարության գաղափարը բովանդակային առումով բավական լայն ընկալում ունի: Ունենալ ժողովրդավարական կառավարման ձև կամ ժողովրդավարական քաղաքական համակարգ հարցվածների համար նշանակում է ոչ միայն քաղաքական և քաղաքացիական հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիք, այլև սոցիալական իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության ապահովման գործուն մեխանիզմ: Հատկանշական է, որ եթե դիտարկում ենք քաղաքացիական մշակույթի տեսանկյունից այնպիսի կարևոր ցուցիչներ, ինչպիսիք են հանրության վստահությունը քաղաքական համակարգի ինստիտուտներին կամ ժողովրդավարության տվյալ պահին գոյություն ունեցող մակարդակով բավարարվածությունը, ապա բոլորովին այլ պատկեր ենք ստանում: Մասնավորապես, նկատելի է, որ, օրինակ, 1995-1998 թթ. հարցվածների գրեթե 31 տոկոսի մոտ է եղել վստահություն կառավարության հանդեպ, շուրջ 26 տոկոսի մոտ՝ խորհրդարանի հանդեպ, իսկ կուսակցությունների հանդեպ՝ հարցվածների մոտ 14 տոկոսը: 2010-2014 թթ. շրջափուլից՝ կառավարության հանդեպ վստահություն է ունեցել շուրջ 34 տոկոսը, խորհրդարանի հանդեպ՝ շուրջ 24 տոկոսը, իսկ քաղաքական կուսակցությունների հանդեպ՝ շուրջ 21 տոկոսը: Այս խորապատկերի վրա համապատասխանաբար բավական ցածր ցուցանիշ է արձանագրվել նաև ժողովրդավարության առկա մակարդակով բավարարվածների առումով՝ միջինացված այն չի անցնում շուրջ 30 տոկոսը: Հատկանշական է, որ եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների, Ինգլիզարթի մեթոդաբանությամբ մշակված «Արժեքային համակարգերն աշխարհում» սոցիոլոգիական նախա-

գծի տվյալների հիման վրա դիտարկենք հետխորհրդային տարածաշրջանի երկրների փորձը, ապա օբյեկտիվ պատճառներից ելնելով, բացառությամբ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև հետխորհրդային եվրասիական տարածաշրջանի մի շարք երկրների (առաջին խմբի երկրները դասվում են ժողովրդավարական անցման կոնսոլիդացիոն փուլին շատ մոտ կատեգորիայում, իսկ երկրորդ խմբի երկրները՝ հակառակը, հատել են ավտորիտարիզմի կոնսոլիդացիայի փուլը), տեսանելի է դառնում, որ հայաստանյան փորձին էականորեն մոտ է Վրաստանի օրինակը: Ինչպես և Հայաստանի դեպքում, Վրաստանում նույնպես աջակցությունը ժողովրդավարության գաղափարին նշանակալիորեն բարձր է եղել անկախությունից ի վեր՝ միջինացված Վրաստանի բնակչության շուրջ 70%-ը միշտ կողմ է արտահայտվել ժողովրդավարական քաղաքական համակարգ ունենալու օգտին, համապատասխանաբար էլ բնակչության 70%-ից ավելիի համար ժողովրդավարությունը՝ որպես կառավարման ձև չունի այլընտրանք: Հայաստանյան օրինակի նման Վրաստանի դեպքում ևս նկատելի է կորելացիա՝ ժողովրդավարության իդեալին աջակցության բարձր մակարդակի և առկա ժողովրդավարական ընթացակարգերից դժգոհ լինելու մեջ: Հայաստանի և Վրաստանի փորձերի նմանության մասին են վկայում նաև ժողովրդավարացման գործընթացները գնահատող "Freedom House" միջազգային կազմակերպության «Ազատությունն աշխարհում» ամենամյա զեկույցի տվյալները: Զեկույցում Հայաստանն ու Վրաստանը վերջին 15 տարիներին մշտապես դասակարգված են «մասամբ ազատ» երկրների շարքին¹²:

Այսպիսով, քաղաքական սոցիալականացման տեսանկյունից առանձնացված ցուցիչների շուրջ առաջնային աղբյուրների հիման վրա դիտարկումները, ըստ էության, մի շարք կարևոր եզրահանգումների տեղիք են տալիս: Նկատելի է, որ ամբողջատիրական քաղաքական համակարգի պայմաններում գաղափարաքաղաքական այլընտրանքի բացակայության և հանրային կյանքի բոլոր ոլորտների ընդհանուր վերահսկողությամբ իրենց առաջնային քաղաքական սոցիալականացումն անցած հանրային լայն շերտերի մեջ, այդուհանդերձ, ժողովրդավարության հանդեպ հանրու-

¹² Տե՛ս Freedom House. Freedom In The World-2017: Populists and Autocrats: The Dual Threat to Global Democracy <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2017>:

թյան լայն շրջանակների վերաբերմունքը դրական է: Առկա է «Ժողովրդավարություն» հասկացության բովանդակային ընկալումների բավական լայն սպեկտր, և այն չի ասոցացվում կոնկրետ մեկ, նեղ բնութագրիչի հետ: Մյուս կողմից պարզ է դառնում, որ գաղափարական առումով Ժողովրդավարությունը նախընտրելի համարող հանրությունը, ըստ էության, Ժողովրդավարական ընթացակարգերի և իրականացման պրակտիկաների հետ կապված լուրջ խնդիրներ է տեսնում: Դրանով էլ պայմանավորված՝ վստահության բավական ցածր մակարդակ է առկա քաղաքական այնպիսի կարևորագույն ինստիտուտների գործառության հանդեպ, ինչպիսիք են կառավարությունը, խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները: Եթե անցման սկզբնական փուլում հանրության շրջանում այս ինստիտուտների հանդեպ նման վերաբերմունքն ինչ-որ կերպ կարելի էր բացատրել և պայմանավորել դրանց կառուցվածքային կամ կազմակերպչական չկայացվածությամբ, ապա անցման հաջորդ տասնամյակներում շարունակվող ցածր վստահության մակարդակը կարող է վկայել այն մասին, որ քաղաքական իշխանության, քաղաքական վերնախավի նախաձեռնած և իրականացրած քաղաքական գործընթացներն արդյունավետության ցուցիչների մասով լուրջ խնդիրներ ունեն: Ինչպես և հետխորհրդային այլ երկրների, այնպես էլ Հայաստանի դեպքում, ըստ էության, անցման գերակշիռ մասում ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ Ժողովրդավարության կառուցման փորձերը առասպելականացվել են, և արդյունքներն ամենևին էլ բավարար չեն, արդյունքում Ժողովրդավարական ինստիտուտները վերածվում են քաղաքական կյանքի «ձևականության»¹³: Ընդ որում, հատկանշական է, որ քաղաքական ինստիտուտների մասով ի հայտ եկող լեգիտիմության հետ կապված խնդիրները, ըստ էության, ամենևին էլ պայմանավորված չեն քաղաքական սոցիալականացման այնպիսի կարևոր մեխանիզմով, ինչպիսին ընտրական մասնակցությունն է: Պաշտոնական տարբեր գնահատականներով՝ Հայաստանում ընտրական մասնակցությունն անկախությունից ի վեր բավական բարձր է եղել, միջին ցուցանիշը գրեթե միշտ 70 տոկոսի շրջակայքում է եղել: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ քաղաքական ինստիտուտների լեգիտիմության հետ կապված խնդիրներն առավելապես կապված են ինստիտուցիոնալ միջավայրի հետ

¹³ Տե՛ս **Алексанян А.** Цивилиархические основы демократизации политического режима в Армении (Центральная Азия и Кавказ, т. 14, вып. 3, 2011, с. 136):

և դրա այնպիսի կարևոր ցուցիչի հետ, ինչպիսին գործառական արդյունավետությունն է: Հետխորհրդային տարածաշրջանում ժողովրդավարական անցման գործընթացում բավական նկատելի այս իրավիճակը, ըստ Շեստոպալի, որը դիտարկում է Ռուսաստանի օրինակը, պայմանավորված է այն հանգամանքով, որ անցման մեկնարկից տևական ժամանակ անց հասարակության մեջ տեղի են ունեցել առանցքային քաղաքական արժեքների և հանրային գիտակցության մեջ արմատավորված ստանդարտների մասով բավական կտրուկ փոփոխություններ, որոնք արդեն իրենց ակնհայտորեն զգացնել են տալիս հանրության լայն շերտերի կողմից հակառակվարական բողոքի ակցիաներին ու ցույցերին մասնակցությամբ¹⁴: Այս համատեքստում թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի օրինակները ցույց են տալիս, որ քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահության ցածր մակարդակի և ժողովրդավարության գաղափարին աջակցության բարձր մակարդակի միջև կորելացիան առնվազն կարող է վկայել այն մասին, որ դիտարկված երկու երկրների հասարակությունն անկախությունից ի վեր քաղաքական սոցիալականացման գործընթացում քաղաքացիական գիտակցության մակարդակի էական, դրական տեղաշարժ են արձանագրել, ինչը թույլ է տալիս ավելի քննադատական և պահանջատեր դիրքորոշում որդեգրել քաղաքական առաջընթացի և հետագա ժողովրդավարացման համար պատասխանատու քաղաքական էլիտաների հանդեպ: Պատահական չէ, որ քաղաքացիական մշակույթի արդի տեսությունները ռեժիմի ժողովրդավարացման տեսանկյունից քաղաքացիական մշակույթի դերը դիտարկելիս հենց այդ հանգամանքն են առանցքային համարում:

Եզրակացություններ

1. Քաղաքական սոցիալականացումը քաղաքացիական մշակույթի կարևորագույն տարրերի՝ քաղաքական գիտելիքների, քաղաքական նորմերի, կողմնորոշումների, արժեքների ձևավորման, յուրացման ու փոխանցման յուրօրինակ գործընթաց է:

2. Ապահովելով սերունդների քաղաքական մշակույթի, քաղաքական փորձի կուտակումը, արժևորումն ու հաջորդական փոխանցումը՝ քաղաքական սոցիալականացումն էական դերակատարում է ստանձնում քա-

¹⁴ См.у Шесто́пал Е.Б. Ценностные характеристики российского политического процесса и стратегия развития страны (Полис, 2014, № 2, с. 62):

ղաքական համակարգի կայունության ու կենսունակության ապահովման գործընթացում:

3. Ժողովրդավարական անցման և քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացում գտնվող հայ և վրաց հասարակության քաղաքական սոցիալականացման փորձը ցույց է տալիս, որ, չնայած խորհրդային անցյալին, ամբողջատիրական կառավարման ավանդույթներին ու արժեքաբանական կողմնորոշումներին, այդուհանդերձ, հայ հասարակության գերակշիռ մեծամասնության համար ժողովրդավարության իդեալն այլընտրանք չունի:

4. Ժողովրդավարական ընթացակարգերի առկա մակարդակով բավարարված չլինելը դիտարկված երկրների հասարակության հատկապես երիտասարդ շերտերի շրջանում խթանում է քաղաքական սոցիալականացման այնպիսի նոր մոդելների զարգացումը, ինչպիսիք են քաղաքացիական շարժումներն ու նախաձեռնությունները:

5. Քաղաքական կյանքին մասնակցության այս նոր մոդելները կենսունակ հիմքեր են ստեղծում քաղաքացիական մշակույթի զարգացման համար, նպաստում են քաղաքական համակարգի հետագա ժողովրդավարացմանը՝ կառավարող ընտրախավերին դարձնելով ավելի հաշվետվողական և արդյունավետ քաղաքական որոշումների նախագծման, ընդունման և իրականացման գործընթացներում:

ПОЛИТИЧЕСКАЯ СОЦИАЛИЗАЦИЯ В СИСТЕМЕ ГРАЖДАНСКОЙ КУЛЬТУРЫ

САРОЯН К.А.

Резюме

Политическая социализация является составной частью гражданской культуры. Опыт политической социализации армянского общества позволяет заключить, что, несмотря на советское прошлое и его тоталитарные традиции управления, подавляющее большинство армянского общества считает, что демократический режим является безальтернативным ориентиром в процессе развития общества и государства. В связи со сказанным

следует отметить, что на постсоветском пространстве Армения и Грузия обладают хорошим опытом политической социализации. Исходя из гражданской активности как новой модели политической социализации, можно констатировать, что гражданские движения и инициативы оказывают положительное влияние на дальнейшую демократизацию политической системы.

POLITICAL SOCIALIZATION IN THE SYSTEM OF CIVIC CULTURE

K. SAROYAN

Abstract

Political socialization is an integral part of civic culture. The experience of political socialization of the Armenian society allows to conclude, that despite the Soviet past and its totalitarian governance traditions, the huge majority of the Armenian society believes, that democratic regime as a landmark in the process of development of society and state has no alternative. In connection with the above mentioned, it should be stated, that among post Soviet countries, Armenia and Georgia have a good experience of political socialization. On the basis of civic culture as a new model of political socialization, it can be stated, that civic movements and initiatives have a positive impact on the further democratization of the political system.

ԱՐԴԻ ԳԵՐՄԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ

ԱՐՇԱԿՅԱՆ Ա.Ս.

Արդի գերմանահայ¹ համայնքը, որն այսօր աչքի է ընկնում աշխարհի տարբեր երկրներից Գերմանիա արտագաղթած էթնիկ² հայկական խմբերի բազմազանությամբ, իր ձևավորման և կայացման տարաբնույթ պայմաններն է ունեցել՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, որոնք դինամիկ փոփոխություններ են կրել ժամանակի ընթացքում: Համայնքը տարբերվում է աշխարհում հայկական այլ համայնքներից ստեղծման նախապատմությամբ, ձևով, ժամանակային և կառուցվածքային առանձնահատկություններով:

Ընդունված է համարել, որ Գերմանիայում հայերի զանգվածային բնակեցումն սկսվել է XIX դարի վերջից և XX դարի սկիզբից, երբ հայ մտավորականների և վաճառականների փոքր խմբեր են գնացել Բեռլին, Լայպցիգ, Դրեզդեն, Համբուրգ և հաստատվել այդ քաղաքներում: «Գերմանահայ համայնք» եզրույթն այս դեպքում թերևս նպատակահարմար չէ կիրառել, քանի որ Գերմանիան ներգաղթյալ հայկական հանրույթի համար դեռևս գաղթավայր էր, որտեղ էթնիկ համայնքային ինստիտուցիոնալ

¹ Խնդրահարույց է ազգային պատկանելությունը որոշելու չափանիշների վերաբերյալ համընդհանուր սահմանված կամ ընդունելի համարվող որևէ կոնկրետ գիտական տեսակետ հիմք ընդունելը: Տվյալ դեպքում մեր ուսումնասիրության ընթացքում ելնում ենք անձի էթնիկ պատկանելության փաստի և իր ազգային պատկանելության վերաբերյալ սեփական ընտրանքի հիմնավորումներից:

² Գլոբալացվող աշխարհում «ազգային ինքնության» բովանդակությունը խոր վերաիմաստավորվում է: Ազգային ինքնությունը հաճախ փոխարինվում է էթնիկ ինքնությամբ, քանի որ վերջինիս հետ ավելի կոնկրետ մշակութային և խորհրդանշական իմաստներ են կապված: Էթնիկ խումբը, որպես մարդկանց «ակամա միություն», ունենալով ընդհանուր պատմություն կամ նախնիներ, որոնց հետ ինքն իրեն նույնակա-նացնում է նույն «ակամա» սկզբունքով, համախմբվում է մշակութային հատկանիշների շուրջ, և ինքն էլ իր հերթին ստեղծում այդպիսի հատկանիշներ, այդ թվում՝ լեզու, հավատք, ավանդապահություն, պատմական հիշողություն, ընդհանուր արժեքներ, առասպելներ, «մերոնք» և «ուրիշներ» զանազանման կերպեր/ծեսեր (Nollmann G.H. Strasser, Das individualisierte Ich in der modernen Gesellschaft, Frankfurt/New York, 2004, S. 51, Бромлей Ю. Очерки теории этноса, М., 1983).

կառույցները լիարժեքորեն չէին կազմավորվել: 1860 թ. (որոշ տվյալներով՝ 1884, 1885 թթ.) հիմնվել է Գերմանիայի *հայ ուսանողության առաջին կազմակերպությունը* Լայպցիգի համալսարանում՝ «Հայ ակադեմիականների միությունը»: Կազմակերպությանը վերաբերող փաստաթղթերի մեծ մասը պատերազմի վերջին տարիներին՝ ռմբակոծությունների ժամանակ, այրվել է: Այնուամենայնիվ, պահպանվել է նրա և, մասնավորապես, «1860» թ.-ի մասին 1942 թ. դր. Փաուլ Ռոհրբախի և դր. Արտաշես Աբեղյանի խմբագրությամբ «Գերմանահայկական ընկերության տեղեկագիր»³ գիտամշակութային պարբերականում հրատարակված հաղորդումը, որում նշված է 1941 թ. փետրվարի 13-ին «Հայ ակադեմիականների միություն 1860»-ի իրավարար գրանցումը Ասոցիացիաների գրանցամատյանում Բեռլինի դատարանի կողմից՝ համապատասխան համարով (Nr. 12696): Դա, ըստ էության, նացիների կողմից (նրանց պահանջով, բնականաբար) «Հայ ակադեմիականների միություն 1860»-ի Գլխավոր ժողովի անունից ներկայացված՝ 1940 թ. հոկտեմբերի 21-ի հայտի բավարարման արձանագրումն էր՝ կազմակերպությունը Բեռլինում՝ համապատասխան հասցեում գրանցելու (Charlottenburg 4, Niebuhrstraße 68. Ruf 32-06-83. Postschecknummer: Berlin 217504) և գույքագրելու վերաբերյալ: Այս տեղեկագրում պարագրաֆներով ներկայացված է նաև «Հայ ակադեմիականների միություն 1860»-ի գործունեության կանոնակարգերը, ինչպես նաև հավաստագրումը, որ կազմակերպությունը 1860 թ.-ին Լայպցիգում ստեղծված «Հայ ակադեմիականների միության» իրավահաջորդն ու շարունակողն է:

1914թ. Բեռլինում հիմնվեց «Գերմանահայկական ընկերություն» (DAG-Deutsch-Armenische Gesellschaft e.V) ոչ առևտրային միավորումը: Գերմանացի հիմնադիր անդամները հայասեր ինտելեկտուալներ էին, ինչպես Յոհանես Լեփսիուսը, Փաուլ Ռոհրբախը, Փասթոր Շթիերը, հայագիտության պրոֆեսոր Յոզեֆ Մարքվարդը և մյուսները: Հայ հիմնադիր անդամները քաղաքական, մշակութային և գիտական ոլորտի ակտիվ մտավորականներն էին՝ ՀՅԴ անդամներ և նրանց համակիրներ, բանաստեղծ

³ Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e.V., Im Auftrage der Gesellschaft herausgegeben von Dr. Paul Rohrbach u. Dr. Artasches Abeghian, Berlin, Oktober 1942, Nr. 13-14.

Ա. Իսահակյանը, բժիշկ Ա. Հայրապետյանը, իրավաբան Ռ. Դարբինյանը, հրապարակախոս Լ. Նազարյանցը և այլք⁴:

1915-23 թթ. գերմանահայերի հանրության արդեն ընդլայնվել էր ցեղասպանությունից փրկված հայերի՝ այստեղ հասած քիչ թվով ընտանիքներով և 20-ական թթ.-ին նախ՝ Վրաստանի, ապա՝ Հայաստանի խորհրդրդայնացումից հետո Գերմանիա տեղափոխված հայերով (մասնավորապես՝ դաշնակցականներ), որոնք հիմնականում հաստատվել էին Բեռլինում և Համբուրգում⁵: Հայերի թիվը Գերմանիայում այս ժամանակահատվածում կարող էր ավելի մեծ լինել, եթե հայերի գիտակցության վրա հետևանք թողած չլինեին Օսմանյան սուլթանության և գերմանական կայսերական կառավարության համագործակցությունը, ինչպես նաև ավելի ուշ երիտթուրքերի հետ որոշ գերմանացի սպաների ու քաղաքական գործիչների ակնհայտ հանցակցությունը Հայոց ցեղասպանությանը, վիլիելմյան կառավարության լռությունն ու անգործությունը⁶: Այնուամենայնիվ, Առաջին աշխարհամարտում պարտությունից հետո Գերմանիայում, ըստ էության, չկար երկիր մուտքի համար խիստ վիզային կարգ, որն ամեն տեսակ իրավունքներից զրկված փախստականների համար չափազանց կարևոր էր⁷:

⁴ Երկրորդ աշխարհամարտից հետո «Ընկերության» աշխատանքը ընդհատվեց, վերաբացվեց միայն 1972-ին (Festschrift, 75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft, Mainz 1989, Die DAG in Frankfurt. In Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 101, Jg. 1998, Heft 3, S. 34):

⁵ **Deusse M.** Die armenische Diaspora in Deutschland. Ihr Beitrag zur Entwicklung Armeniens, Frankfurt a. M., 2008, S. 9.

⁶ Հայոց ցեղասպանության (ճանաչման) մասին Բունդեսթագի բանաձևում (2006-2016) գրված է. «Բունդեսթագը ցավում է Գերմանական ռայխի անփառունակ դերի համար՝ որպես Օսմանյան կայսրության դաշնակցի, որը, չնայած գերմանացի քաղաքական գործիչների և միսիոներների միանշանակ տեղեկություններին, ոչինչ չձեռնարկեց մարդկության դեմ այդ հանցագործությունը կանգնեցնելու համար: Բունդեսթագում հիշատակումը նաև առանձնահատուկ հարգանքի դրսևորում է աշխարհի ամենախիստ քրիստոնյա ազգի նկատմամբ: Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի առանձնահատուկ պատմական պատասխանատվությունը»: Բանաձևի վերջում՝ մի շարք կոչերի թվում, ասվում է «...շարունակել հետագա հանրային լայն քննարկումները 1915-1916 թթ. հայերի զանգվածային տեղահանումների և բնաջնջման, ինչպես նաև այդ գործում Գերմանական ռայխի ունեցած պատասխանատվության շուրջ» (Deutscher Bundestag - 18. Wahlperiode, Die Armenien-Resolution zum Nachlesen, Antrag der Fraktionen CDU/CSU, SPD und BÜNDNIS 90/DIE GRÜNEN, Drucksache 18/8613, 31.05.2016, S. 1, 3):

⁷ **Мурадов Г.** Международный опыт защиты соотечественников за рубежом, М., 2002, с. 18; **Глэд Д.** Беседы в изгнании. Русское литературное зарубежье, М., 1991, с. 8.

Թեպետ Վերսալյան⁸ «խայտառակ» պայմանագրով նվաստացած Գերմանիան շարունակում էր պահպանել դեռևս 1913 թ.-ին ընդունված՝ «արյան իրավունքով» («ius sanguinis») հիմնավորվող «քաղաքացիության մասին օրենքը»⁹, որի պահանջը, փաստորեն, քաղաքացիությունն էր՝ էթնիկ ծագման հիման վրա, և որը, ի դեպ, շարունակեց իրավաբանորեն համադրվել գերմանական քաղաքացիական հայեցակարգի հետ մինչև 2000 թ.: Մինչև Վերսալյան պայմանագրի ուժի մեջ մտնելը և, մասնավորապես, Անտանտի պետությունների կողմից Գերմանիայի ծովային շրջափակման պայմաններում Գերմանիան լիովին կախված էր հաղթական այս երկրների բարի կամքից և հատկապես սննդի մատակարարման հարցում: Հետևաբար, ռազմական գործողություններից հետո, այնուամենայնիվ, որոշ անկանոնություն տիրեց՝ հանգեցնելով սովի, քաղաքացիական հասարակության մեջ մահվան դեպքերի, և ի վերջո, քաղաքական, տնտեսական, բարոյափոխական ճգնաժամի¹⁰: Հետպատերազմյան Գերմանիային պատուհասած բարդ իրավիճակում շատացել էին աղանդավորները, մարմնավաճառները, կոմունիստները՝ հաճախակի ահաբեկչական գործողություն-

⁸ 1919 թ. հունիսի 28-ին՝ Փարիզի հաշտության համաժողովից հետո, Վերսալյան պալատում հաշտության պայմանագիր կնքվեց պարտված Գերմանիայի և Անտանտի հաղթող պետությունների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և նրանց այլ փոքր դաշնակից պետությունների միջև, որը պաշտոնապես վերջ տվեց Առաջին աշխարհամարտին: Կնքվեցին նաև այլ պայմանագրեր, որոնցով պաշտոնապես ավարտվեցին պատերազմական հարաբերությունները Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կենտրոնական տերությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև: Ստեղծվեց Ազգերի լիգան: Վերսալի պայմանագրի թվով 440 հոդվածների մեջ ներառվեց հաղթական Անտանտի երկրների պահանջը, որպեսզի կապիտուլացված Գերմանիան պաշտոնապես ընդունի, թե ինքը պատասխանատու է պատերազմն սկսելու համար (Վերսալի պայմանագրի հոդված 231-րդ) և վճարում է Առաջին համաշխարհային պատերազմի տնտեսական ռեպարացիաները: Վերսալի պայմանագիրը նաև կտրուկ սահմանափակեց Գերմանիայի ռազմական մեքենայի հզորությունը, արգելվեց մշակել և ունենալ հիմնական ծանր ռազմական սպառազինություններ: Ի վերջո, Գերմանիան՝ գերմանական Երկրորդ ռայխը, զգալիորեն փոքրացավ՝ վերածվեց Վայմարյան Հանրապետության՝ կորցնելով բոլոր գաղութները: Պայմանագիրն ուժի մեջ մտավ մեկ տարի անց (B. Asmuss© Deutsches Historisches Museum, Berlin, 8. Juni 2011, **Davis Robert T.** U.S. Foreign Policy and National Security: Chronology and Index for the 20th Century 1: Santa Barbara, 2010, p. 49):

⁹ **Bade, Klaus J.** Europa in Bewegung. Migration vom späten 18. Jahrhundert bis zur Gegenwart, München, 2002, S. 122-136.

¹⁰ **Aristotle, Kallis.** When Fascism became Mainstream: The Challenge of Extremism in Times of Crisis, Fascism 4.1 (2015):1-24.

ներով, և այս հենքի վրա կտրուկ աճել էր ազգային փոքրամասնությունների, նաև հայերի թիվը:

1923 թ. Բեռլինում ձևավորվում է *հայկական համայնքային առաջին միավորումը*¹¹ «Բեռլինի հայկական գաղութային միությունը» (Verein der Armenischen Kolonie zu Berlin)¹¹: Առաջին ժողովը գրանցվել է 1923 թ. մայիսի 20-ին, որտեղ Բեռլինից 60 հայեր՝ որպես հիմնադիր անդամներ, ընտրեցին ղեկավար կազմ, իսկ նոյեմբերի 1-ին ընդունվեց առաջին կանոնադրությունը:

1925 թ. Բեռլինի համալսարանին կից Արևելյան լեզուների սեմինարում (Seminar für Orientalische Sprachen) բացվում են *հայագիտության դասաժամեր*¹²: Հայ բանասեր, պատմաբան և փիլիսոփա Արտաշես Աբեղյանը ոչ միայն Գերմանիայի գրողների միության անդամ էր, գերմանական մի շարք թերթերի ու ամսագրերի թղթակից, ակադեմիական գործիչ, այլև իր գործունեությամբ համախմբում էր հայկական նորակազմավորվող հանրույթն իր մտավոր ներուժով¹³, որը գիտական, թարգմանչական մեծաքանակ ու մեծածավալ հրապարակումները (հայերենից՝ գերմաներեն, գերմաներենից՝ հայերեն), աշխատանքային¹⁴, հասարակական բազմաբնույթ զբաղվածությունն ու եռանդը մղելով ի նպաստ հայ մշակույթը Գերմանիայում պրոպագանդելուն, հայ-գերմանական մշակութային հարաբերությունների զարգացմանը:

¹¹ 1924 թ. հունվարի 2-ին միությունը պաշտոնապես գրանցվեց Շառլոտենբուրգի շրջանային դատարանում, 1940-ին վերագրանցվեց՝ իբրև «Բեռլինի հայկական գաղութային միություն», 1980-ին՝ իբրև «Բեռլինի հայ առաքելական եկեղեցական համայնք», 1998-ին՝ «Բեռլինի հայկական համայնք», որին զուգահեռ ստեղծվեց «Բեռլինի հայ եկեղեցական համայնքը»: (Honorarkonsulat der Republik Armenien, Konsularbezirk Land Badenwürttemberg, Diaspora. Armenier in Deutschland, offizielle Webseite: <http://honorarkonsulat-armenien.de/diaspora.htm/>):

¹² Այդ առաջարկով Պրուսիայի կրթության նախարարին դիմում է Արտաշես Աբեղյանը: Նրա այդ նախաձեռնությունը պաշտպանում են մի քանի անվանի գիտնականներ, և հայտը բավարարվում է (**Բախչինյան Հ.**, Արտ. Աբեղյան, Գյոթե Յ.Վ., Թատերգություններ, թարգմանիչ՝ Արտ. Աբեղյան, Ե., 1995, էջ 277):

¹³ «Պեռլին» Ա. Աբեղեանի փոքր բնակավայրը, հավաքատեղի մըն էր, կենտրոնավայր մը, այդ փոքրիկ գաղութին մեջ հայութեան ոգին վառ պահողը Աբեղեանն էր» (Ժամանակի վկաներից՝ բեռլինահայ Արշակ Սարգսյան, Հայրենիք, 18.05.1955):

¹⁴ «Աբեղեան մասամբ կընմաներ Պօղոս Առաքեալի. ինչպէս որ Առաքեալը, ուր որ երթար, Քրիստոնէութիւն կըքարոզէր, նոյնպէս Աբեղեանալամ է նպարագայիտակ, ամենատենու ամենուրեք կըլլար դասախօս, ըսէ՝ քարոզիչ հայագիտութեան» (Հայրենիք, 18.05.1955):

1928 թվականին, ի թիվս այլ ազգերի, հայերն էլ Բեռլինում ունեցան իրենց անունով փողոց՝ *"Armenische Straße"* («Հայկական փողոց», այսօր էլ առկա է), որի համար դիմումը ներկայացրել էր Ա. Աբեղյանը՝ որպես համայնքի պատասխանատու:

1930-ականներին Գերմանիայում արդեն ապրում էր 5-7000 հայ¹⁵: Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով նոր աշխարհաքաղաքական վերաձևումներ ստացած Եվրոպայում տարածում էին ստանում ազգայնական գաղափարախոսությունները: Գերմանական քաղաքացիության հիմքը, որը, ըստ էության, էթնոմշակութային էր և ոչ քաղաքական, և որը պահպանվեց մինչև 2000 թ.-ին տեղի ունեցած քաղաքացիության իրավունքի մասին օրենքի բարեփոխումները¹⁶, 1920-30-ականներին առավել ամրապնդվեց Վերսալյան պայմանագրով իրենց նվաստացած զգացած գերմանացիներին պարտադրված տարածքային կորուստներով, ռազմական ուժից զրկելով, դրանով իսկ երկրի տնտեսական զարգացման հեռանկարներն ի չիք դարձնելու և հատկապես պայմանագրում առկա «պատերազմի մեղավորության» հետևանքով: «Պատերազմում մեղավորության» ակտիվ ժխտումը, Անտանտի կողմից իրականացված պատժամիջոցները պատերազմից հետո մեծ հետք թողեցին գերմանացիների հիշողությունների մեջ: Չպարտվելու լեգենդը և մեղքի ընդունումը հող հանդիսացան ազգայնական շարժումների ձևավորման համար, որոնք կարողացան ժողովրդի տրամադրվածության շնորհիվ հասնել իշխանության և ծնել վրեժի հոգեբանություն¹⁷: Ըստ էության, «արյան իրավունքով» քաղաքացիական

¹⁵ Հայրապետյան Հ., Արտաշես Աբեղյան. մեծ բանասերն ու հասարակական գործիչը (Հայագիտության հարցեր 3 (9), Ե., 2016, էջ 126):

¹⁶ **Bade, Klaus J.** 2007. Versäumte Integrationschancen und nachholende Integrationspolitik. In: Aus Politik und Zeitgeschichte, S. 22-23, 32-38.

¹⁷ Նախագահ Հինդենբուրգն այլևս չէր կարողանում ղեկավարել երկիրը: Տեղի էին ունենում բազում կոմունիստական ահաբեկչություններ: Օրեցօր ավելանում էին եֆրեյտոր Հիտլերի գաղափարակիցները, որոնք պահանջում էին Գերմանիայի անկախացումը կոմունիստներից՝ դատապարտելով մարքսիզմը, Մարքսին և Էնգելսին համարելով ազգի թշնամիներ: Նացիստները խորապես ներշնչված էին Իտալիայի հեղափոխությունից, որն իրականացրել էր ֆաշիստական կուսակցության առաջնորդ Բենիտո Մուսոլինին՝ Դուլչեն: 1925 թ. ցույցի ժամանակ նացիստները տապալվում են, իսկ նրանց առաջնորդ Ադոլֆ Հիտլերը դատապարտվում 5 տարի ազատազրկման, սակայն Հիտլերը բանտում մնում է միայն 10 ամիս՝ գրելով իր առաջին աշխատությունը՝ «Իմ պայքարը» գիրքը՝ կենսագրությունը մեկտեղելով Գերմանիայի ազատագրման իր պլանների հետ: Նախագահ Հինդենբուրգը, փորձելով ազատվել ճգնաժամից, առերես

այս հայեցակարգն արդեն նշանակում էր ուժեղ իրավական սահմանափակումներ ծագումով ոչ գերմանացիների համար և էքսպանսիա (ընդլայնում) «էթնիկ» գերմանացիների նկատմամբ, որը հանգեցրեց ազգերի ռասայական «տեսակավորման» քաղաքականության:

Նախապատերազմյան գերմանահայ համայնքի պատմության զարգացումն ու հետագա կազմավորումը, բնականաբար, պայմանավորվում էին Երկրորդ աշխարհամարտին նախորդող ու անմիջապես հաջորդող իրադարձություններով: 1933 թ. Գերմանիայում իշխանության եկած նացիոնալ-սոցիալիստների ծավալած հակահրեական լայնածավալ գործընթացներին զուգահեռ՝ երկրում հրապարակվեց նացիստական դեկրետ, ըստ որի՝ բոլոր ոչ արիական հավաքականությունները՝ հիմնականում սեմական ժողովուրդները, այդ թվում՝ հայերը¹⁸, որոնք իբր թե ցեղակցական ընդհանրություններ ունեն հրեության հետ, պետք է հեռանան Գերմանիայից: Հայության համար ստեղծված վտանգավոր և հակագիտական մտայնության դեմն առնելու համար հայ-գերմանական մշակութային, սոցիալական ու քաղաքական ընտրախափի գիտակցված և կազմակերպված ջանքերով աննախադեպ գիտական հրապարակումներ, ակտիվ հանդիպումներ և քննարկումներ նախաձեռնվեցին՝ օգտագործելով հայ-գերմանական կապերի ու մշակութային միությունների ողջ հնարավորությունները: Մասնավորապես, այս գործընթացի մեջ մտան միջազգայնորեն ճանաչված գերմանացի գիտնականներ, պատմաբաններ, մշակութային գործիչներ, կրոնական և քաղաքական հեղինակություններ (այդ թվում՝ Կ.Ֆ. Լեհման Հաուպտը, Պ. Ռոիրբախը, Յ. Ռիխտերը, Սաքսոնիայի դուքս ֆոն Մաքսը, Յ. Ֆոնլեբերը և այլք, որոնք զուգահեռաբար վկայակոչվում էին նաև

կանցլեր է նշանակում արտաքին գործերի նախարար Բրյունինգին, սակայն նրա փոխարեն գործում են ուրիշները՝ գեներալներ և քաղաքական գործիչներ: Տեսնելով որ երկիրն ավելի է կործանվում, 1933 թ. հունվարի 30-ին նախագահ Հինդենբուրգը Հիտլերին նշանակում է կանցլեր: 1934 թ. Հինդենբուրգը մահանում է, իսկ վարչապետի և նախագահի պաշտոնները միացվում են: Հիտլերը վարչական գործերի հետ մեկտեղ սկսում է կատարել հասարակաքաղաքաշինական գործեր՝ արգելելով հրեական ծագմամբ մարքսէնգելսյան գրքերի տարածումը, ապա այրելով բոլոր օրինակները: Փոխվում են սահմանադրությունը, օրենսգիրքը: Գերմանիան պաշտոնապես անվանվում է Երրորդ ռայխ, իսկ Հիտլերը՝ ֆյուրեր: Վերակառուցվում է Ռայխստագը, որը 1933 թ. հրկիզել էին կոմունիստները: **Gläser E.** The Treaty of Versailles: A Reassessment After 75 Years: New York, 1998, p. 388-391.

¹⁸ Հայրենիք, Բոստոն, 9.6.1955:

անցյալի ականավոր գիտնականների՝ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի, Հայնրիխ Հյուբշմանի, Յոզեֆ Մարկվարտի և այլոց հետազոտություններն ու տեսակետները հայ ժողովրդի մասին): Տպագրվեցին բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ¹⁹՝ հայ ժողովրդի պատմական անցյալի, ազգաբանական²⁰, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ՝ հիմնավորելով հայերի պատկանելությունն արիական ռասային²¹: Հեղինակներն ընդգծում էին, թե հայերին «հրեացնելու» թյուր պնդումը պատմության անբավարար իմացություն է, և որ «ստորացվում» է մի ժողովուրդ, որը դեռ համաշխարհային պատմական առաքելություն ունի Արևելքի ապագայի հարցում²²: Երկրորդ համաշխարհային պատերազմի հենց սկզբին հայերի արիական ծագումը կրկին կասկածի տակ առնվեց: Մեղադրվեցին նաև որպես «բուլշևիկների աջակիցներ»՝ հատկապես դաշնակից Թուրքիայի հրահրմամբ ու կոնկրետ գործողություններով՝ հակահայկական քարոզչության ֆինանսավորումով ու Անկարայից գործուղված, նացիստների կողմից քաղաքական նկատառումներով²³ գրկաբաց ընդունված

¹⁹ 1934 թ. սկզբին Բեռլինի գերմանահայկական ընկերությունը (նախագահ՝ Պ. Ռոիրբախ, փոխնախագահ՝ Ա. Աբեղյան) Պոտսդամում գերմաներեն հրատարակեց “Armeniertum-Ariertum” («Հայկականություն-արիականություն») ժողովածուն: Գիրքը ներառում է Եվրոպայի մի շարք նշանավոր գիտնականների և հանրային գործիչների (Հանս Հայնրիխ Շեդեր, Յոհաննես ֆոն Լեերս, Կառլ Ռոթ, քահանա Գերհարդ Քլինգե, Էվալդ Շթիռ, Եոզեֆ Ստրիժկովսկի, ֆոն Մաքս, Ռիխարդ Շեֆեր, Պաուլ Ռոիրբախ) ուսումնասիրությունները՝ տարբեր տեսանկյուններից հիմնավորելով հայերի արիական ծագումը: Ա. Աբեղյանը այս ժողովածուում հանդես է եկել «Նորդիկ տիպեր Հայոց մեջ» հոդվածով (Dr. von Leer. Dr. Abeghian. Dr. Roth, Dr. Stier, by Deutsch-Armenische Gesellschaft (Hrsg.), Potsdam, 1934:

²⁰ Die Armenier – keine Juden, “Orient im Bild”, 1933, S. 32; Rassentum der Armenier, “Der Orient”, 1933, S. 65-66.

²¹ Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Ե., 2002, էջ 463:

²² Rohrbach P., Kaukasien; Totomianz V. Die Rolle der Armenier in Osteuropa und Asien; Stier E. Josef Strzygowski und sein Werk, “Deutsch-Armenische Gesellschaft”, Berlin, 1933.

²³ Դեռևս 1933 թ.-ին Հիտլերը թուրքական «Milliyet» օրաթերթին տված հարցազրույցում Աթաթուրքին անվանեց XX դարի «մեծագույն մարդ»: Հիտլերը թուրքական շարժումը անվանեց «պայծառ աստղ»: 1938 թ. իր ծննդյան օրը Հիտլերն ասաց. «Աթաթուրքը առաջինն էր, որ ցույց տվեց, որ հնարավոր է մոբիլիզացնել և միասնականացնել այն ռեսուրսները, որոնք երկիրը կորցրել էր»: Այս առումով, Աթաթուրքը ուսուցիչ էր Հիտլերի համար. «Մուսոլինին նրա առաջին, իսկ ես՝ նրա երկրորդ աշակերտն էի» (O'Connor W. The 20th-Century Dictator Most Idolized by Hitler, Dailiy Beast, 11.24.14 5:45 AM ET):

թուրք գործակալների աջակցությամբ: Որոշ ժամանակ անց «Արևելաեվրոպական տարածքների խնդիրների ուսումնասիրման» վարչության ղեկավար Ալֆրեդ Ռոզենբերգը Հիտլերին հանձնեց մի զեկուցագիր, որտեղ, գիտական սկզբնաղբյուրների հիմամբ փաստվում էր հայերի արիական ծագումը. ըստ այդմ՝ հայերենը հնդգերմանական լեզվաընտանիքին է պատկանում, իսկ հայերը հին «արիացիների» ուղղակի ժառանգներն են²⁴: Սակայն միամիտ կլինի կարծել, թե զուտ գիտական դիսկուրսի արդյունքով հայերը կասեցրին ցեղասպանվելու հերթական վտանգը: Դրան զուգահեռ՝ Գերմանիայի հայերի և հայկական Սփյուռքի քաղաքական, ռազմական և ինտելեկտուալ ուժերի համախմբված գործունեություն սկսվեց՝ Եվրոպայի հայության հետաքրքրությունները գերմանական ղեկավարության մոտ ներկայացնելու համար, որը նախ և առաջ համագործակցություն էր ենթադրում: Ըստ էության, հենց այս ժամանակահատվածում Գերմանիան դարձավ հայ ազգայնականության կենտրոն, բայց դա նացիստական գաղափարախոսության ենթատեքստում պայմանավորված էր ընդամենը մեկ մտահոգությամբ՝ Գերմանիան առաջխաղացում էր գրանցում, պատերազմի ելքը դեռ չէր նշմարվում, ինչ էր լինելու Հայաստանի և Գերմանիայի գրավյալ տարածքներում ապրող շուրջ 500.000 հայության հետ: Նացիստները և մասնավորապես Հիտլերը ԽՍՀՄ բանակի բարոյալքման և թուլացման ուղղությամբ ծրագրերում իրենց հաշվարկներն ունեին բազմազգ երկրի և մասնավորապես Կովկասի՝ միմյանց հետ տարբեր խնդիրներ ունեցող ժողովուրդների հետ կապված (տվյալ դեպքում հայերին և այս պատերազմում նրանց հարցը վերջնականապես լուծել փափագող Գերմանիայի դաշնակից Թուրքիային առնչվող նացիստական գոյություն ունեցող կամ չունեցող ծրագրերի մասին կարելի է միայն ենթադրություններ անել): Ուստի, անկախ իրենց քաղաքական և ներանձնային նախընտրություններից, տարագիր հայերի այս հատվածը, վտանգավոր խաղի մեջ ներգրավվելով, լինելով հակառակ ճամբարում, ամենաանբարենպաստ քաղաքական և ռազմական իրավիճակում, ցանկանում էր հայությանը նվազագույն

²⁴ Այդ ընթացքում վերատպագրվեցին «Հայկականություն-արիականություն», «Գերմանական արիական պետության արևելյան դարպասների պահապանները», «Հայերը և Հայաստանը», «Նարեկացի», «Հայերը ընդհանուր պայքարում», «Ձեյթուն», «Հայերի և գերմանացիների պատմական բարեկամությունը», «Քեզ վրա նայում են արիացիներ», «Մեր կամավորների պատմական դերը» և այլ գրքույկներ (Абрамян Э.А. Забытый легион, Е., 2005, с. 22-24):

կորստով կամ, եթե հաջողվեր, նաև ձեռքբերումներով դուրս բերել այդ ավերիչ պատերազմից: 1942 թ. դեկտեմբերի 15-ին Արևելյան գրավյալ շրջանների նախարարության հովանավորությամբ Բեռլինում ստեղծվում է Հայ Ազգային խորհուրդը (նախագահ՝ Ա. Աբեղյան²⁵, փոխնախագահ՝ Աբրահամ Գյուլխանդարյան, անդամներ՝ Դրո (Դրաստամատ Կանայան), Տիգրան Բաղդասարյան, Վահան Փափազյան (Կոմս), Դավիթ Դավիթխանյան, Գարեգին Նժդեհ, Սահակ Տեր-Թովմասյան, քարտուղար՝ Հարություն Բաղդասարյան և ուրիշներ): Խորհուրդը տպագրում էր «Ազատ Հայաստան» անունով թերթը, որի խմբագիրն էր Ա. Գյուլխանդարյանը, փոխխմբագիրը՝ Գ. Նժդեհը: Գերմանիայի հետ գրեթե նույն ծրագրով համագործակցում էր նաև կազմավորված Հայկական լեգեոնը²⁶, որը «պարտադրված» քայլ էր. Գերմանիայի հետ համագործակցության անվան տակ այն ապահովում էր հայերի գոյությունը. իրական ու գլխավոր նպատակը հայ գերիներին փրկելն ու օգնելն էր, հայության ազգային շահերը պաշտպանելը: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Գերմանիայում հայերի թիվն ավելացավ Հունաստանից 300-400 հայերի՝ այս երկիր բռնի կամ հարկադրված տեղափոխման հետևանքով: Նրանց անմիջական օգնություն ցուցաբերողներից էր Միսաք Թորլաքյանը, որը գրում է. «Բոլորին գտնուած տեղերը ստուգեցինք, թէ ո՞ւր են, որքա՞ն հեռու, քանի՞ հոգի եւ այլն: Եկանք Ռոտվայլտ: Ամէնէն առաջ հագուստ հաւաքեցինք եւ Վաղարշակ Դիլանեանի հետ դրկեցինք այս դժբախտներուն: Անցայ Պերլին, որպէսզի այս խեղճերուն վիճակը ներկայացնեմ մերիններուն: Դրօն Պերլին էր: Անմիջական աշխատանքն ու անհրաժեշտ դիմումները կատարուեցան եւ բոլորն ալ ազատեցան»²⁷: Գերմանական հրամանատարության

²⁵ Այդ ժամանակահատվածում՝ Աբեղյանի մասին. «Ամեն դուռ բախեց, խօսեցաւ, լուսաբանելով նացի ազդեցիկ շրջանակները, յօգուտ Հայութեան: «Դուռ բախելը» ըսելու ձև մըն է, որ սակայն նացիներու պարագային բոլորվին տարբեր, չարագուշակ բան մը կը նշանակեր յաճախ: Կրնայիր դուռէ մը ներս մտնել և ա՛լ դուրս չելլել» (Հայրենիք, 16.03.1975):

²⁶ ԽՍՀՄ ժողովուրդներից զինվորական միավորումներ ստեղծելու հարցը 1942 թ. մարտի 28-ին բարձրացրել էր Ա. Ռոզենբերգը հատուկ փաստաթղթով, որտեղ հիմնավորում էր այդ միավորումների կազմավորման անհրաժեշտությունը: Նա առաջարկում էր հավաքագրել հայերի, վրացիների, ադրբեջանցիների և մյուս ազգերի ու ցեղերի ներկայացուցիչների՝ շուրջ 6.5 հազար մարդ, որոնք գործելու էին գերմանական հրամանատարության ներքո (**Розенберг А.** Коричневая папка, Нюрнбергский процесс, М., 1954, т. 2, с. 208):

²⁷ «Օրերուս հետ», Պոսթըն, 1953:

ներքո՝ վերմախտի 30 գումարտակներում «գործող» հայ լեգեոներների թիվը հասավ 25-30 հազարի²⁸, դրանց մեծ մասը ռազմագերիներ էին: Հայ ազգային խորհուրդը մի քանի ամիս անց դարձավ Հայ ազգային կոմիտե²⁹, որն ուներ մի քանի բաժին: Կոմիտեներն այն նպատակով էին, որ Խորհրդային Միության պարտության դեպքում այդ կառույցները արդեն կազմ ու պատրաստ մեկնեին իրենց երկրները և իրականացնեին համապատասխան գործառույթներ³⁰ (հայերի նպատակը Հայաստան մտնելն ու Թուրքիայից ակնկալվող «ընդհատված» ցեղասպանական ծրագիրը կանխելն էր):

Երբ Դաշնակցային զինված ուժերը 1945 թ. գարնանը գրավեցին Գերմանիան, ազատ արձակեցին 6,5-7 մլն արտասահմանցի քաղաքացիների³¹: Նրանք անվանվեցին "Displaced Persons"³² (տեղահանված անձինք): Հայ «տեղահանված անձինք» (DPs) բաղկացած էին հետևյալ խմբերից՝ նախկին հայ ռազմագերիներ ԽՍՀՄ-ից, Ֆրանսիայից և մյուս երկրներից, հայ հարկադիր-բռնավոր աշխատողներ ԽՍՀՄ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից և մյուս երկրներից, հայեր հյուսիսային Կովկասից, Ղրիմից, Ռուսաստանից և եվրոպական տարբեր երկրներից, որոնք խորհրդային ռեպրեսիաներից խուսափելու համար գերմանական զորքերի նահանջի ընթացքում և հետո Գերմանիա էին եկել, և վերջապես, վտարանդի հայեր, որոնք պատերազմից առաջ և ընթացքում Գերմանիայում էին եղել ու աշխատել³³: Խորհրդաամերիկյան համաձայնագրի (11.2.1945 թ.) շրջանակներում, որում անմիջական և մեծ մասնակցությամբ

²⁸ **Օրդուխանյան Ա.**, Հայ տարագիրներ յետպատերազմեան Գերմանիայում (1945-1953) եւ նրանց յետագայ ճակատագիրը Շթուֆկարթի ֆունկերկազերնի հայկական ճամբարի օրինակով, մաս 1, ՀԱՍԿ, Պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, ԿԸ տարի 1999 թ., Թիւ 8-9-10, էջ 571-576:

²⁹ 1941 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գերմանական հրամանատարությունը որոշում կայացրեց կազմավորել Արևելյան Լեգեոններ ("Osttruppen"): Դեկտեմբերի 30-ին հրաման տրվեց կազմավորել Հայկական և Վրացական լեգեոնները: 1944 թ. կեսերին ազգային լեգեոնները վերանվանվեցին «Ազգային-ազատագրական առանձին կազմավորումների»:

³⁰ **Օրդուխանյան Ա.**, նշվ. աշխ., մաս 2, ԿԸ տարի 1999 թ., Թիւ 11-12, էջ 738-744:

³¹ **Wetzel J.**, a.a.O., S. 34.

³² **Jakobmeyer W.**, a. a.O., S. 15-16.

³³ **Ordukhanyan A.** Die armenischen Displaced Persons in Deutschland nach dem zweiten Weltkrieg: Im Armenologie in Deutschland, Armenuhi Drost-Abgaryan, Herman Golz (Hg.), Münster, 2005, S. 221-224.

յուն ուներ աջակից Ֆրանսիան, «տեղահանվածները» (DPs), նաև հազարավոր հայեր պարտադիր պետք է վերադառնային հայրենիք: 1947 թ. հայկական ճամբարները ՄԱԿ-ի օգնության և վերականգնման վարչության օժանդակությամբ (UNRRA) և Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության (IRO) միջոցով սնունդ և այլ օգնություններ ստացան: ԻՍՀՄ վերադարձած ռազմագերիների՝ «ֆաշիստների հետ համագործակցության» մեղադրանքով, աքսորով ու այլ պատիժներով ավարտվող անփառունակ ճակատագիրը մտահոգեց հայ գործիչներին: Նրանց հաջողվեց նախկին ռազմագերիների մի մասին (4-5 հազար մարդ) տեղափոխել Գերմանիայի արևմտյան մասերը, որոնք գրավել էին ԱՄՆ-ի զորամիավորումները՝ այդ կերպ նրանց ազատագրելով ստալինյան մոտալուտ հետապնդումներից: Նրանք բնակվեցին Էսլինգենում³⁴ գերմանական նախկին «Կապի զորանոցներում» (Funkerkaserne): Հայկական այս ճամբարը, որ կոչվում էր «Հայանոց», և որը կազմավորել և ղեկավարում էր Արսեն Թափալցյանը, իր գոյության հինգ տարիների ընթացքում, ըստ էության, *էթնիկազգային ինքնակեցության յուրօրինակ համակարգ էր, կազմակերպված քաղաքակրթական հայկական միավոր*: Նախ ստեղծվեցին վարչական օրգաններ, այնուհետև՝ եկեղեցական մարմին և մշակութային կոմիտե, 25-հոգանոց ոստիկանություն, դատարան, դպրոց, թատրոն, հայ և արտասահմանյան երաժշտական և պարային երկու խումբ, մամուլ («Տարագիր», «Բանբեր» թերթերը, «Զարթոնք», «Ալիք» ամսագրերը³⁵), հետախուզական խումբ (200-հոգանոց) և այլն: Հայկական այս ճամբարում, ընդհանրապես, կար չորս վարչակազմ՝ տարբեր գործառնություններով³⁶: Փաստորեն, սա հերթական փոքր «Հայաստան» ստեղծելու յուրօրինակ փորձ էր «ազգայնական» ինտելեկտուալների կողմից: Հետպատերազմյան Գերմանիայում, բացի այս հայկական ճամբարից, որոշակի թվով հայեր էին ապրում Մյունխենում, Ֆրանկֆուրտում, Համբուրգում, Բրեմենում, Բեռլինում, Օս-

³⁴ **Hayruni A.** Flüchtlingsschicksal, in Hayastani Hanrapetutyun, Nr. 7, 1990.

³⁵ **Geworgyan K.** Die armenischen DPs in Deutschland, Beirut, 1954, S. 156.

³⁶ Սրանք փայտյա էին, որոնցում ամերիկյան զինվորականները «չէին կարող ապրել», ուստի հայերը վերանորոգման աշխատանքներ տարան՝ հարմարեցնելով կեցության պայմանները ոչ միայն անհատ անձանց, ընտանիքների, այլև ընդհանուր և այլ նպատակներով կիրառելու համար (ժողով, թատրոն (350-400-տեղանոց), դպրոց, ներառյալ՝ խոհանոց, լոգարան, պահեստ):

նաբրյուքում և այլուր³⁷: Հայ ազգային կոմիտեն (ANK) կապող ռազմական և տնտեսական կապերի, Միավորված ազգերի կազմակերպության օգնության և ռեաբիլիտացիայի վարչության (UNRRA), Գերմանիայի տարբեր մասերի ռազմական վարչությունների, ինչպես նաև Գերմանիայից դուրս հայերի համար: ՀԱԿ-ի նստավայրը մինչև լուծարումը (20.05.1949), Շթուբարթում էր (ղեկավարը՝ հայտնի դաշնակցական Սեդրակ Զալալյան): 50-ականների սկզբին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պատասխանատվություն ստանձնեց այս խմբերի նկատմամբ, փոխվեց նրանց անվանումը: Այժմ վերջիններս կոչվեցին «անհայրենիք» (կամ «հայրենազուրկ»), որոնք, փաստորեն, քաղաքացիություն չունեցող արտասահմանցիներ էին³⁸: Ամերիկահայ Զորջ Մարտիկյանը, որը 1948 թ. ստեղծել էր «Հայրենազուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն» (ANCHA), մինչև 1952 թ. մեծ ջանքերի գործադրմամբ կարողանում է խորհրդային հաշվեհարդարից փրկված Գերմանիայում մնացած մոտ 3000 մարդու (այդ թվում՝ ԽՍՀՄ տարածքից ռազմագերիներ, հունահայեր և այլ վայրերից այստեղ եկած, տեղահանված հայեր) ԱՄՆ-ի իշխանությունների օժանդակությամբ տեղափոխել Միացյալ Նահանգներ³⁹ (400-ից ավել տարբեր երկրներ): 1953-ին Գերմանիայում հայերի թիվը կազմեց մոտ 1000-2000, որոնք քիչ թե շատ կենտրոնացած էին Շթուբարթի շրջաններում, Բեռլինում և Մյունխենում, ընդ որում, սրանք այն հայերն էին, որոնք դեռ պատերազմից առաջ էլ ապրել էին Գերմանիայում⁴⁰: 1960-ին հայկական համայնքը գործնականորեն գոյություն չունեցող, մնացած մոտ 1000 հայերը տեղ-տեղ ցրված ապրում են Գերմանիայի տարբեր վայրերում, հայկական կազմակերպություններն այլևս չէին գործում:

Այսպիսով, *գերմանահայ համայնքի կազմավորման առաջին փուլը* երկրորդ աշխարհամարտի առաջին տարիներից աննախընթաց «զարգացում» ապրեց՝ նախ և առաջ ռազմագերիների ու տեղահանվածների թվի հաշվին, և մարող ընթացք ունեցավ՝ հետպատերազմյան բազմաթիվ խնդիրների հետևանքով:

³⁷ **Ordukhanyan A.**, նշվ. աշխ., էջ 225-231:

³⁸ **Jakobmeyer W.**, նշվ. աշխ., էջ 15-16:

³⁹ ԱՆՉԱ-ի օգնությամբ Գերմանիայից հայերը, ԱՄՆ-ից զատ, տեղափոխվեցին նաև այլ երկրներ (**Toriakyan M.**, Mit meinen Tagen, S. 569):

⁴⁰ **Geworgyan K.**, նշվ. աշխ., էջ 171:

Գերմանահայ համայնքի կազմավորման նախապատերազմյան փուլն ընդգծում է, որ էթնիկ համայնքային կազմակերպությունները, միավորումները, կառույցներն ստեղծում են այնպիսի մարդիկ, որոնք կիսում են ծագումնաբանությունը և «սփռման» պատմությունը: Նույն տրամաբանությամբ միևնույն ազգային պետությունից (Հայաստանի առաջին Հանրապետություն) և այլ երկրների տարածքներից ժամանած ներգաղթյալները և նրանց կազմակերպությունները դարձել են համասեռ ամբողջականություն՝ էթնիկ ազգային ինքնագիտակցության, ինքնապահպանման բարձր զգացողությամբ: Իրավիճակային գործոններով պայմանավորված՝ գերմանահայ հանրության ինքնակազմակերպչական դաշտը և լեգիտիմության ակնկալիքները կարծես որոշիչ դեր են խաղացել համայնքի կենսունակության, նրա ֆունկցիոնալ գործունեության, զարգացման և կազմակերպվածության հարցում: Թե որքան հեռուն է գնացել գերմանահայերի կազմակերպչական լանդշաֆտը ժամանակի ընթացքում, պայմանավորվել է երկրում նրանց բնակվելու տևականությամբ, մասնավորապես, ստեղծվելիք համայնքային կառույցների ու կազմակերպությունների հեռանկարը կաճեր՝ նրանց միջին և երկարաժամկետ բնակեցման տևողության հետ:

ДОВОЕННЫЙ ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В ГЕРМАНИИ

АРШАКЯН А.С.

Резюме

На протяжении первой половины XX в. миграция армян в Германию была обусловлена политическими и военными катаклизмами: геноцид армян в Турции, большевистская революция в Армении и на Кавказе, политические преследования и репрессии в отношении диссидентов, в основном членов бывшей правящей партии в Армении – АРФ Дашнакцутюн, Вторая мировая война, поражение и капитуляция Германии и ход дальнейших событий.

Формирование армянской общины в Германии в годы Второй мировой войны характеризовалось увеличением ее численности за счет воен-

нопленных и перемещенных лиц. В дальнейшем этот процесс пошел на спад.

Организационный ландшафт общины был обусловлен сроком проживания армянских мигрантов в Германии.

THE PREWAR PERIOD OF FORMATION OF MODERN ARMENIAN COMMUNITY IN GERMANY

A. ARSHAKYAN

Abstarct

During the first half of the 20th century migration of Armenians to Germany was due to political and military cataclysms: Armenian Genocide in Turkey, Bolshevik revolution in Armenia and the Caucasus, political persecution and repression against dissidents - mostly members of the former ruling party in Armenia-ARP Dashnaktsutyun, The Second World War, defeat and capitulation of Germany and course of future events.

Formation of the Armenian community in Germany during the Second World War was characterized by an increase in its strength at the expense of prisoners of war and displaced persons. In the future this process has gone on recession.

ОСНОВНЫЕ ЭТАПЫ ФОРМИРОВАНИЯ КУРДСКОГО НАЦИОНАЛИЗМА В ТУРЦИИ И СИРИИ ПОСЛЕ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

АГАСАРЯН В.К.

Турция, внимательно следя за движением Барзани в Ираке и созданием Мехабадской республики, была крайне не заинтересована в том, чтобы допустить похожие сценарии у себя. Иракская революция, в результате которой был свержен король Фейсал Второй, послужила сигналом к тому, чтобы турки решили курдский вопрос.

Итак, в конце 1959 года в Стамбуле и Анкаре были задержаны 40 курдских активистов, которые принимали участие в создании Революционной курдской партии в 1958 году.

40 активистов, являвшиеся студентами, торговцами и военными, были обвинены в прислужничестве другим государствам и подрыве территориальной целостности Турции, помимо этого, обвинения были предъявлены еще 9 активистам, и этот список получил название "Группа сорока девяти"¹.

После того, как Комитет национального единства во главе с Джемалем Гюрселем пришел к власти в Турции в результате государственного переворота, в стране были задержаны еще 485 активистов. Из них 55 вождей и шейхов насильственным образом были переселены на запад Турции.

Турецким курдам понадобилось порядка тридцати лет, чтобы возобновить движение, и основным шагом явилось создание Демократической партии Курдистан в Турции в 1965. Следует отметить, что ДПКТ являлась ветвью Демократической партии Ирака.

¹ Simsir B. Kurtculuk II, Ankara, 2007, s. 520.

ДПКТ ставила перед собой цель создать условия для развития курдского языка и культуры. На турецких курдов оказало огромное влияние движение Барзани в Ираке.

С началом перехода ДПКТ к военным действиям многие в турецком правительстве выступили с обвинениями партии в антитурецкой деятельности и финансировании из-за рубежа.

Убийство генсека ДПКТ Фаика Бучака, а вслед за ним Сайида Элчи привело к тому, что в 1969 году от партии откололась радикальная группа, которая видела выход в отделении Курдистана от Турции. После военного переворота в Турции в 1971 г. репрессии в отношении курдов продолжались, и были арестованы тысячи курдских активистов.

На 8 пленуме партии ДПТК была принята программа, согласно которой вооруженная борьба вместе с пролетарской идеологией легла в основу борьбы за независимость, хотя в качестве основного элемента революции рассматривалось крестьянство, которое должно было взять на вооружение идеологию рабочего класса².

В силу внутрипартийных разногласий и конфликтов ДПТК распалась на мелкие и более крупные организации.

И уже в 1977 году ДПТК приняла новую программу и была переименована в Рабочую Партию Курдистана, целью которой было строительство бесклассового общества в Курдистане.

В 1970-ые годы усилился процесс разветвления ДПТК, что было связано с поражением Барзани в Ираке. Были созданы такие организации как:

- "Национальные освободители Курдистана" – организация, заявлявшая о том, что она является единственной наследницей ДПТК; именно на этой почве в дальнейшем отношения с другими курдскими партиями у них не складывались, а порой переходили в военные действия с другими курдскими группировками.

² Курдское движение в Турции в новое и новейшее время. Под ред. М.А. Гасратяна, М., 1987, с. 243.

- Социалистическая партия Турецкого Курдистана была основана курдской интеллигенцией, которая была объединена вокруг журналов "Рия Азади", "Рожа Велят" и "Озгюрлюк Иолу".

- Рызгари – организация, преследовавшая цель осуществить революцию на всем Ближнем Востоке и пропагандировать независимость Курдистана³.

Особую роль сыграло движение, а в дальнейшем и партия "Текошин (борьба)"; сторонники этого движения стремились утвердить истинно пролетарскую идеологию без элементов сталинского догматизма:

"Большинство курдских партий, в основу [формирования] которых легла пролетарская идеология, на самом деле опирается либо на крестьянство либо на интеллигенцию и студентов, по этой причине они не могут быть пролетарскими"⁴.

Другой отличительной чертой данного движения было то, что курды отстаивали не только национальные, но и религиозные права: партия состояла в основном из курдов-алевитов, курдов-курманджи и заза. Поэтому данная партия не настаивала на предоставлении независимости Курдистану, а желала получить право на самоопределение⁵.

В 20-ых годах XX века, когда кемалисты разгромили Махмуда Барзанджи, который был одним из лидеров курдского восстания в Южном Курдистане, около 25 тысяч курдов вынуждены были бежать в Сирию. Данный исторический факт в будущем, после обретения независимости, стал предметом спекуляции для сирийского правительства в оправдание своей дискриминационной политики в отношении курдов, хотя курды жили на данной территории еще до крестовых походов XI века.

Курды являются самым крупным национальным меньшинством в Сирии. Они составляют около 9 процентов от численности населения Сирии. Самые крупные города, где проживают курды, это Эль-Камышлы, Хасеке и Айн-эль-Араб. Курды в основном живут на северо-востоке

³ **Вертяев К.В., Иванов С.М.**, указ. соч., с. 206.

⁴ **Seyfi C.** Dynamics of the Kurdish and Kirmanc-Zaza Problems in Anatolia, Sydney, 1996, p. 4.

⁵ Там же, с. 6.

Сирии, которая занимает большую часть мухафазы Хасеке, где имеется также ассирийское меньшинство. Главные города в этой области – Хасеке и Эль-Камышлы. Ещё одна область со значительным курдским населением – Айн-эль-Араб расположена на севере Сирии. Значительное число курдов живёт также в Курдских горах, на северо-западе, близ турецкой границы, в районе города Африн (провинция Алеппо). Ещё одним курдонаселённым центром является район Рукн аль-Дин в Дамаске, который ранее был известен как Хави-аль-Акрад (Курдский квартал).

Общая численность курдов в Сирии составляет приблизительно 2,5 миллиона человек, большинство из них говорят на курманджи и являются суннитами – за исключением курдов-езидов.

Первые два десятилетия после обретения Сирией независимости (1946) вошли в историю как период нестабильности и борьбы за Сирию, когда в результате переворотов имел место захват власти⁶. Во главе двух краткосрочных военных режимов в 1949 г. стояли лидеры курдского происхождения – полковники Хусни Заим и Адиб аль Шишакли, их помощниками были также курды – Мухсен Барази и Фавзи Село.

Однако несмотря на национальную принадлежность ни Заим, ни Шишакли не говорили на курдском, не подчеркивали своего курдского происхождения и не защищали интересов курдов. Более того, аль Шишакли, провозгласив Сирию арабским исламским государством, стал закрывать курдские организации, запретил использовать курдскую атрибутику, заявив, что требования курдов о предоставлении привилегий приведут к государственному расколу. В силу подобной позиции властных структур курды стали рассматриваться в качестве тайных агентов иностранных врагов арабского национализма. Следует отметить, что в самом названии новой независимой страны – "Сирийская Арабская Республика" присутствовал элемент дискриминации по отношению к другим национальностям, в том числе и курдам.

После того, как Египет и Сирия декларировали о создании Объединённой Арабской республики (1958-1961), в Сирии стала проводить-

⁶ Seale P. Struggle for Syria. A Study of Post War Politics 1945-1958, London, 1965.

ся политика репрессий по отношению к курдам, которая усугубилась после прихода к власти Баасистов в 1960-х годах: началась чистка в рядах офицеров, молодым курдам не разрешалось вступать в ряды армии. Создание Курдской Демократической партии Сирии в 1957 году послужило еще одной причиной для ужесточения антикурдской политики. КДПС выступала с требованием признать курдов в качестве этнической группы. Новая партия акцентировала отсутствие экономического и социального прогресса на территориях, населенных курдами, выступала против репрессий в армии и полиции. В ответ на данные действия правительство арестовало курдских лидеров, и была запрещена курдская периодика. 13 ноября 1960 года в Амуде 283 малолетних курда погибло во время киносеанса в результате пожара. Курды считают, что данный инцидент был спровоцирован правительством, однако они не располагают какими-либо доказательствами. Сирийское правительство на протяжении многих лет пыталось умалить значение курдов в сирийском обществе, всячески дискриминировать их вплоть до лишения всех прав.

В 1962 году правительственным указом 93 120 000 курдов, которые в то время составляли 20 процентов курдского населения Сирии, были лишены также избирательного права, не имели возможности состоять на государственной службе и иметь собственность. Данная группа населения называлась "аджаниб" (иностранец) – "официально зарегистрированные". Они получали красные карты, удостоверяющие личность, то есть имели право проживания, но были лишены сирийского гражданства. В настоящее время их число достигает 300 000 человек⁷. Около 75 000 сирийских курдов получило статус "мактумен" (второстепенный). У них не было никаких гражданских прав, и их статус был ниже статуса "аджаниб" и по сути у них не было легального статуса и каких-либо гражданских прав. Какое-то время "мактумены" имели возможность получать неофициальный "белый документ", иденти-

⁷ Ten years of Bashar al Asad and No compromise with the Kurds – 14.05.2011 [Электронный ресурс] URL:<http://ekurd.net/mismas/articles/misc2011/5/syriakurd317.htm>.

фицирующий их личность по месту проживания. Нередки были случаи, когда родители и дети, проживающие в одной курдской деревне, получали разные статусы. Даже генерал Тавфик Низам Альдин, являвшийся одной из ключевых фигур сирийской армии, был лишен сирийского гражданства при проведении данной дискриминационной политики. У таких людей не было возможности официально вступать в брак, передвигаться по стране и за ее пределами, они также не имели права на приобретение собственности, были лишены избирательного и предпринимательского права. Хотя курдские дети имели право на начальное образование, они не имели права говорить на своем родном языке, что в дальнейшем затрудняло их поступление в университеты Сирии. Детям, имевшим статус "мактуменов", не выдавались аттестаты, что окончательно лишало их возможности получить высшее образование.

В 1963 году, после прихода баасистов к власти, стали претворять в жизнь план по созданию "арабского пояса" на границах Сирии с Ираком и Турцией, чтобы разобщить курдов и заселить территорию арабами. Арабский пояс достигал 9 миль в ширину и 120 миль в длину вдоль турецкой границы. Выселенные курды должны были уехать в Ливан или же переселиться в центр Сирии. Опустошенные курдские населенные пункты получали в дальнейшем арабские названия.

С 1967 г. из сирийских учебников истории были сняты всякие упоминания о курдах. Согласно указу от 1977 г. курдские географические названия были заменены на арабские. В 1965 и 1989 годах были изданы указы, согласно которым курдам запрещалось использовать свой родной язык на работе, во время торжеств и свадебных обрядов.

Эта завуалированная этническая напряженность усугубляется антикурдской политикой Асада, направленной против курдов. В 1970-ые годы сирийское правительство переселило огромное число арабов на курдские территории, которые были захвачены государством. Эти арабские племена, известные как гумары, живут там по сей день. В период правления Асада сирийские курды часто подвергались всяческому унижениям, лишались гражданства и причислялись к людям второго класса.

В 1970-ые годы в Турции курдские политические партии формировались за счет отделившихся от Демократической партии Турецкого Курдистана общественных организаций и различных диссидентских и левых марксистских группировок, которые объединяли часть среднего класса, интеллигенцию и студенчество. Следует отметить, что к началу 80-х годов XX века в Турции имелось около 10 незаконных курдских политических организаций. Раскол в рядах сирийских курдов и их политических организаций был вызван внешними факторами, включая политику курдских партий Турции и Ирака, а также родовые, племенные и личностные противоречия. Идеологические различия также сыграли одну из ключевых ролей в раздроблении курдских партий.

**ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԼԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ**

ԱՂԱՍԱՐՅԱՆ Վ.Կ.

Ամփոփում

Քրդական հարցը այսօր Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական հիմնախնդիրներից մեկն է: Քրդերը, որոնց թիվը կազմում է 30 միլիոն, ապրում են Թուրքիայում, Իրաքում, Իրանում և Սիրիայում: Քրդական գործոնը կարևորագույն նշանակություն ունի այդ երկրների ներքին և արտաքին քաղաքականության մեջ, ինչպես նաև ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացներում: Մասնավորապես, այն հիմնարար դեր ունի սիրիական ճգնաժամի կարգավորման գործում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում և Սիրիայում քրդական ազգայնականության ձևավորմանն ու զարգացմանը նպաստեցին աշխարհաքաղաքական նոր իրողություններն ու գործընթացները:

THE MAIN STAGES OF FORMATION OF KURDISH NATIONALISM IN TURKEY AND SYRIA AFTER THE SECOND WORLD WAR

V. AGASARYAN

Abstract

The Kurdish question today is one of the main geopolitical problems of the Middle East. Kurds live in Turkey, Iraq, Iran and Syria, numbering 30 million people. Taking into account the significant importance of the Kurdish factor in the internal and external processes of these countries, as well as the current geopolitical realities in the world, it should be noted that it is fundamental in resolving the Syrian crisis. In this article we tried to consider the main stages of the formation of Kurdish nationalism in Turkey and Syria.

ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.Ս.

XX դարասկզբին Անդրկովկասում տեղի ունեցած շրջադարձային իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան տարածաշրջանի ինչպես քաղաքական քարտեզի վերաձևման, այնպես էլ երկրամասի բնակչության ազգագրական ու ժողովրդագրական տեղաշարժերի վրա: Այստեղ միմյանց էին բախվում երեք էթնոկրոնական հանրույթների՝ հայերի, վրացիների և մահմեդականների (մուսուլմաններ)¹ խիստ հակադիր և տարբերվող քաղաքական կողմնորոշումներն ու ձգտումները: Հատկանշական է ամերիկացի հայտնի ժողովրդագրագետ Ֆ. Լորիմերի տեսակետը, որը, անդրադառնալով քննարկվող ժամանակաշրջանում Անդրկովկասի ազգագրական խնդիրներին, ընդգծում է, որ տեղի ժողովուրդները «...նման էին իրար միայն քանակով, ...ներանք օտարացել էին միմյանցից նախընթաց հակամարտություններով և արմատապես տարբերվող պատմական հետնահիմքով, լեզվով, կրոնով ու մշակույթով»²:

XIX դարի ընթացքում՝ Ռուսաստանի կողմից Անդրկովկասի նվաճումից հետո, վերջինս քանիցս ենթարկվում է վարչական փոփոխությունների, որոնց հիմքում ամենևին էլ ընկած չէր տարածաշրջանի ազգային ու ազգագրական տարանջատման սկզբունքը: Այս կապակցությամբ ճանաչված քաղաքական գործիչներից Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «...ինչպես Թուրքիոյ մեջ սուլթանները «Էրմենիստան էլայեթը» ...կ'ենթարկէին այնպիսի վարչական բաժանման մը, որ ամէն տեղ Հայերը կազմէին ընդհանուր ազ-

¹ Կրոնական պատկանելություն արտահայտող այս անվանումը ժամանակի վիճակագրական աղբյուրներում նշանակում է ազգային պատկանելության ցուցիչ: Տարածաշրջանի էթնիկ կազմի վերաբերյալ տվյալները, հաշվարկների ճշգրտության նպատակով, սույն հոդվածում ևս ներկայացված են ըստ այդ սկզբունքի:

² **Lormier F.** The Population of the Soviet Union, History and Prospects, Geneva, 1946, p. 53.

գաբնակչության 50% էն պակաս, Ռուսաստանն ալ նոյն սիստեմով կ'առաջնորդուէր և կը ձեռնարկէր Անդրկովկասի վարչական նոր բաժանման»³:

Նկատենք նաև, որ ռուսական վարչական փոփոխությունների հիմքում ընկած յուրատեսակ «հավասարակշռություն» ստեղծելու քաղաքականությունը կարելի էր համարել բավական «հաջողված», քանզի XX դարասկզբին Անդրկովկասի երկրամասերից բնակչության ընդհանուր թվակազմի կեսից ավելին կազմում էին հայերը միայն Երևանի նահանգում⁴:

Տարածաշրջանում հայության երկրորդ մեծաքանակ հատվածը բնակվում էր Ելիզավետպոլի նահանգում: Ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի՝ 1867 թ. հրամանագրով ստեղծված այս վարչամիավորի կազմում հայտնվեցին Բաքվի նահանգի Նուխիի և Շուշիի, Թիֆլիսի նահանգի Ելիզավետպոլի և Երևանի նահանգի Օրդուբադի գավառների մի մասը: Ընդ որում, նորաստեղծ նահանգն «ընդգրկում էր ինչպես լեռնային, այնպես էլ հարթավայրային շրջաններ, իսկ բնակչությունը և՛ հայկական էր, և՛ թաթարական՝ հայ ժողովրդի համար ոչ նախընտրելի համամասնությամբ»⁵: Հյուսիսում այն սահմանակցում է Թիֆլիսի նահանգին, Ջաքարթալայի օկրուգին և Դադստանի մարզին, արևելքում՝ Բաքվի նահանգին, իսկ հարավում՝ Արաքս գետով Պարսկաստանին: Նահանգը բաղկացած էր ութ գավառից՝ Արեշի, Ելիզավետպոլի, Ջանգեզուրի, Կարյազինոյի (Ջեբրայիլի), Ղազախի, Նուխիի, Շուշիի և Ջևանշիրի⁶:

1914 թ. դրությամբ նահանգի ամբողջ տարածքը կազմում էր 38922,2 քառ. վերստ⁷, որից Արեշի գավառը՝ 2318,1, Ելիզավետպոլի գավառը՝ 8724, Ջանգեզուրի գավառը՝ 6742,9, Կարյազինոյի (Ջեբրայիլ) գավառը՝ 3276,3, Ղազախի գավառը՝ 5096,5, Նուխիի գավառը՝ 3685,03, Շուշիի գավառը՝ 4423,3, Ջևանշիրի գավառը՝ 4654,06 քառ. վերստ⁸:

³ **Ռուբէն**, Գանձակ-Ղարաբաղի վեճը, տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1926, N 2, թ. 46:

⁴ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 539, թ. 18: Ըստ այս վավերագրի XX դարի սկզբին հայության ամենամեծաթիվ հատվածը բնակվում էր Երևանի (669.871 մարդ), ապա Ելիզավետպոլի (418.859 մարդ) և Թիֆլիսի (411.747 մարդ) նահանգներում:

⁵ **Шахатунян А.** Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 93.

⁶ Տե՛ս Обзор Елисаветпольской губернии за 1913 год, Тифлис, 1915, с. 11:

⁷ 1 վերստը հավասար է 1.06 կմ-ի:

⁸ Տե՛ս Кавказский календарь на 1915 год. Пространство и население Кавказского края к 1-му января 1914 г. (коренное и вр. проживающее), Тифлис, 1914, с. 226-233:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Ելիզավետպոլի նահանգի ամբողջ բնակչությունը կազմում էր 1175836 մարդ, որից 634461-ը կամ 54%-ը՝ տղամարդ, իսկ 541375-ը կամ 46%-ը՝ կին: Գավառներում ապրող բնակչության ընդհանուր թիվը 1020109 մարդ (86,8%) էր, իսկ քաղաքային բնակչությունը՝ 155727 (13,2%):

Էթնիկ կազմի առումով երկրամասի բնակչության 59,6%-ը կամ 700387-ը կազմում էին մահմեդականները (ընդ որում, նրանց 407192-ը կամ 58,1%-ը՝ շիա, իսկ 293195-ը կամ 41,9%-ը՝ սուննի), 33,7%-ը կամ 396815-ը հայեր էին, 3,1%-ը կամ 36647-ը՝ ռուսներ (որից 20910-ը՝ ուղղափառ, 15737-ը՝ սեկտանտներ), 1,6%-ը կամ 18925-ը՝ կովկասյան լեռնականներ: Մեկ քառ. վերստի վրա միջին հաշվարկով ապրում էր 30 մարդ⁹: Նահանգը գերազանցապես գյուղատնտեսական էր. 1000 բնակչից գյուղատնտեսությամբ զբաղվում էր 861 մարդ (86,1%), իսկ առևտրով և արհեստով՝ 78-ը (7,8%)¹⁰:

Ինչպես նկատելի է վերոնշյալ տվյալներից, երկրամասը կազմող հիմնական էթնիկ խմբերն էին մահմեդականները և հայերը, առավել փոքրաթիվ էին ռուսները, կովկասյան լեռնականները, վրացիները, հրեաները, գերմանացիները, քրդերը, եզդիները:

Ելիզավետպոլի նահանգի տարածքում հատկապես զգալի էր մահմեդականների թիվը: Հարկ է ընդգծել, որ էթնոնիմի դեր ստացած հավաքական այս անվան ներքո սկզբնաղբյուրային արժեք ունեցող ռուսական վիճակագրական տարեգրքերն ընդգրկում էին ինչպես թյուրքական ծագման կովկասյան թաթարներին, օսմանյան թուրքերին, թուրքմեններին, կարափափախներին, այնպես էլ իրանական ծագման պարսիկներին, թաթերին, թալիշներին ու քրդերին: Այլ կերպ ասած. «...կար մահմեդական բնակչություն, նոյն կրօնին պատկանող ցեղերի մի կատարեալ կօնգլոմերատ. զուրկ պատմական անցեալից, զուրկ սեփական մշակոյթից, զուրկ ազգային գիտակցութիւնից: Ռուս վիճակագրութիւնն յաճախ նրանց խառնում էր

⁹ Հաշվարկները կատարված են ըստ "Кавказский календарь на 1915 год" տարեգրքի, տե՛ս նույն տեղում:

¹⁰ Статистический ежегодник России 1914 г., 1-й отдел. Территория и население, Петроград, 1915, с. 88.

մէկ ամանի մէջ եւ պարզապէս մահմեդական «ընդհանուր» յորջորջման տակ արձանագրում»¹¹:

Միաժամանակ, հարկ է նշել, որ տարածաշրջանի մահմեդականների կազմում մեծաթիվ էին հատկապէս կովկասյան թաթարները¹²: Մասնավորապէս, ըստ Բ. Իշխանյանի տվյալների, այս էթնիկ խումբը XIX դարի վերջին Անդրկովկասի մահմեդականների ընդհանուր թվի 58.63%-ն էր¹³:

Ինչպէս նշվեց, Ելիզավետպոլի նահանգի բնակչության երկրորդ մեծաքանակ էթնիկ խումբը հայերն էին, որոնց ճնշող մեծամասնությունը, պայմանավորված խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոնների բացակայությամբ, 1914 թ. դրությամբ կենտրոնացված էր գյուղերում. թվական տվյալներով այն 353254 մարդ էր կամ ամբողջ հայ բնակչության 89%-ը (տե՛ս աղյուսակ 1):

Խոսելով նահանգի տարածքում հայ բնակչության տեղաբաշխման մասին՝ հարկ է ընդգծել, որ հայության գերակշիռ մեծամասնությունը կենտրոնացած էր իր պատմական հայրենիքի արևելյան հատվածում՝ ի մասնավորի Շուշիի, Ղազախի և Ջանգեզուրի գավառներում:

Անդրադառնալով Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած ժամանակաշրջանում հայ բնակչության աճման տեմպերին՝ անհրաժեշտ է նկատել, որ 1897 թ. համառոտաստանյան մարդահամարի համեմատությամբ հայ բնակչության քանակը Ելիզավետպոլի նահանգի գավառներ-

¹¹ **Աբեղեան Ա.**, Մենք եւ մեր հարեանները, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոսթոն, N 2, 1927, էջ 148: Հավելենք նաև, որ վերոհիշյալ հանգամանքից մեծապէս օգտվում և ներկայումս շահարկում են ադրբեջանցի պատմաբանները, որոնք տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի առնչությամբ հնչեցվող իրենց կեղծարարություններում որպէս ադրբեջանցիներ հիշատակում են հենց ռուսական վիճակագրական աղբյուրներում «մահմեդականներ» հավաքական անվան ներքո ներկայացված թվական տվյալները. մանրամասն տե՛ս **Кочарли Т.** К истории Карабахского вопроса (вымыслы и действительность), Баку, 2009, с. 43-58:

¹² Մանրամասն տե՛ս **Իշխանեան Բ.**, Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների. Առաջին մաս. Ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում, Բագու, 1919, էջ 53: Նկատենք, որ գլխավորապէս «կովկասյան թաթարներ» էթնիկ խումբն էր, որ հետագա վիճակագրական աղբյուրներում և մասնագիտական գրականությունում հանդես եկավ «ադրբեջանցի թուրքեր» և «ադրբեջանցիներ» անվանմամբ, մանրամասն տե՛ս **Ляйстер А., Чурсин Г.** География Кавказа. Природа и население, Тифлис, 1924, с. 329-330:

¹³ Տվյալները վերցված են Բ. Իշխանյանի հաշվարկներից, մանրամասն տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 114:

րում ընդհանուր առմամբ ավելացել էր 92809-ով (աճման տեմպը՝ 35,6%, տե՛ս աղյուսակ 2):

Ինչպես նկատելի է աղյուսակից, աճման բարձր տեմպերով հատկապես աչքի էին ընկնում Կարյազինոյի, Նուխիի, Ելիզավետպոլի և Զանգեզուրի գավառները:

Աղյուսակ 1. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչության տեղաբաշխումը 1914 թ. դրությամբ

Գավառներ	Ամբողջ բնակչություն	Հայ բնակչություն	Տոկոս. հարաբ.
Արեշ	85864	16800	19,6%
Ելիզավետպոլ	191710	47723	24,9%
Զանգեզուր	207775	88207	42,4%
Կարյազինո	91845	24599	26,9%
Ղազախ	134546	60120	44,7%
Նուխի	112680	22890	20,3%
Շուշի	135513	72841	53,8%
Ջևանշիր	60176	20074	33,4%
Ընդամենը	1020109	353254	34,6%

Ինչ վերաբերում է երկրամասի քաղաքային հայ բնակչությանը, ապա այն կազմում էր 43561 մարդ կամ ամբողջ հայ բնակչության 11%-ը: Ընդ որում, քաղաքաբնակ հայերի կեսից ավելին՝ 51,5%-ը, կենտրոնացած էր Շուշիում, որի 42568 բնակիչներից հայեր էին 22416-ը կամ 52,7%-ը, մահմեդականներ՝ (գերազանցապես շիա)՝ 18865-ը կամ 44,3%-ը, ռուսներ՝ 1188-ը կամ 2,8%-ը (տե՛ս աղյուսակ 4):

1897 թ. մարդահամարի համեմատությամբ՝ հայ բնակչության քանակը Ելիզավետպոլի նահանգի քաղաքներում ավելացել էր 11818-ով (աճման տեմպը՝ 37,2 %, տե՛ս աղյուսակ 5):

Անդրադառնալով նահանգի հայ բնակչության սեռային կազմին՝ նշենք, որ ըստ 1914 թ. տվյալների, բնակչության 54%-ը կամ 214535 մարդ արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ 46%-ը կամ 182280-ը՝ իգական (տե՛ս աղյուսակ 5 և 6):

Աղյուսակ 2. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչության աճի դինամիկան 1897-1914 թթ.¹⁴

Գավառներ	1897 թ.	1914 թ.	Աճման տեմպ
Արեշ	13822	16800	21,5%
Ելիզավետպոլ	30985	47723	54,01%
Զանգեզուր	62540	88207	41,04%
Կարյազինո	15746	24599	56,9%
Ղազախ	43555	60120	38,0%
Նուխի	14713	22890	55,6%
Շուշի	59533	72841	22,4%
Ջևանշիր	19551	20074	2,7%
Ընդամենը	260445	353254	35,6%

Աղյուսակ 3. Ելիզավետպոլի նահանգի քաղաքային հայ բնակչությունը 1914 թ. դրությամբ

Քաղաքներ	Ամբողջ բնակչություն	Հայ բնակչություն	Տոկոս. հարաբեր.
Գերյուսի	2176	1699	79,2%
Ելիզավետպոլ	56305	11257	21,7%
Նուխի	54678	8189	14,8%
Շուշի	42568	22416	52,7%
Ընդամենը	155727	43561	28%

¹⁴ 1897 թ. տվյալները ներկայացված են ըստ Լ. Ասոյանի ատենախոսության մեջ բերված տվյալների, տե՛ս **Ասոյան Լ.**, Հայերի տեղաբաշխումը ռուսական կայսրությունում ըստ 1897թ. համառուսաստանյան մարդահամարի տվյալների, Ե., 2006, էջ 55:

Աղյուսակ 4. Ելիզավետպոլի նահանգի քաղաքային բնակչության աճի դինամիկան 1897-1914 թթ.

Քաղաքներ	1897 թ.	1914 թ.	Աճման տեմպ
Գերյուսի	1082	1699	57%
Ելիզավետպոլ	12055	12257	1,7%
Նուխի	4186	8189	95,6%
Շուշի	14420	22416	55,4%
Ընդամենը	31743	43561	37,2%

Աղյուսակ 5. Ելիզավետպոլի նահանգի գավառական հայ բնակչության սեռային կազմը 1914 թ. դրությամբ

Գավառներ	Տղամարդ	Կին	Սեռային հարաբերակցություն (100 տղամարդու հաշվով)
Արեշ	9242	7558	82
Ելիզավետպոլ	24429	23294	95
Զանգեզուր	46669	41538	89
Կարյազինո	13809	10790	78
Ղազախ	33538	26582	79
Նուխի	12686	10204	80
Շուշի	39800	33041	83
Ջևանշիր	10855	9219	85
Ընդամենը	191028	162226	84

**Աղյուսակ 6. Ելիզավետպոլի նահանգի քաղաքային հայ բնակչության
սեռային կազմը 1914 թ. դրությամբ**

Քաղաքներ	Տղամարդ	Կին	Սեռային հարաբերակցություն (100 տղամարդու հաշվով)
Գերյուսի	848	851	100
Ելիզավետպոլ	4950	6307	127
Նուխի	4495	3694	82
Շուշի	13214	9202	70
Ընդամենը	23507	20054	95

Անհրաժեշտ է նկատել, որ Անդրկովկասը պատկանում է այն տարածաշրջանների թվին, որտեղ արական սեռը զգալիորեն գերազանցում է իգականին: 1914 թ. տվյալներով Անդրկովկասի գավառներում սեռերի ընդհանուր հարաբերակցությունը կազմում էր 88 կին յուրաքանչյուր 100 տղամարդու հաշվով, իսկ քաղաքային միջավայրում՝ 77 կին¹⁵: Ինչպես նկատելի է ներկայացված տվյալներից, քաղաքային հայ բնակչության շրջանում այդ ցուցանիշը զգալիորեն բարձր էր տարածաշրջանային ցուցանիշից, որը հետևանք էր հայ բնակչության շրջանում լայն տարածում ունեցող աշխատունակ տարիքի տղամարդկանց մեծածավալ արտագաղթի: Սեռերի հարաբերակցության նման պատկերն առավել արտահայտիչ դարձավ Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո:

Ինչ վերաբերում է Ելիզավետպոլի նահանգի բնակչության երրորդ մեծաթիվ խմբին՝ ռուս բնակչությանը, ապա հարկ է ընդգծել, որ քննարկվող ժամանակաշրջանում ընթացքի մեջ էր դեռևս XIX դարի 40-ական թթ. սկզբներից Արևելյան Հայաստանը ռուս էթնիկ տարրով վերաբնակեցնելու ցարական քաղաքականությունը¹⁶: Այսպես՝ Կովկասի կառավարչապետ Վ. Դաշկովը կայսր Նիկոլայ II-ին ուղղած հաշվետվությունում նշում է, որ

¹⁵ Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 68-69:

¹⁶ Անդրկովկասը վերաբնակեցնելու ցարական կառավարության քաղաքականության մասին մանրամասն տե՛ս **Հայթյան Ա.**, Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920 թթ., Ե., 1989:

իր կառավարման առաջին հնգամյակի ընթացքում (1905-1910 թթ.) Անդրկովկասում կազմավորվել է 261 ռուսական գյուղ, որտեղ բնակեցվել է մոտ 54 հազար մարդ¹⁷: Ի մասնավորի, Ելիզավետպոլի նահանգի տարածքում 1913թ. սկզբի տվյալներով կար ռուսներով վերաբնակեցված 28 գյուղ՝ 4913 արական սեռի բնակիչներով: Նախատեսվում էր հաջորդ տարվա ընթացքում վերաբնակիչների թիվը հասցնել մինչև 7075-ի¹⁸:

Ընդհանրացնելով սույն հոդվածում առաջ քաշված փաստարկները՝ կարող ենք գալ այն եզրահանգման, որ Առաջին աշխարհամարտի նախաշեմին Ելիզավետպոլի նահանգը տարածաշրջանում հայ ժողովրդի բնակության ամենախիտ կենսատարածքներից էր՝ այդ ցուցանիշով զիջելով միայն Երևանի նահանգին: Հայ բնակչությունն աչքի էր ընկնում աճման դրական տեմպերով, որը պահպանվել է ընդհուպ պատերազմի բռնկումը: Հավելենք նաև, որ ինչպես պատերազմը, այնպես էլ 1917 թվականից տարածաշրջանում ստեղծված անկայուն իրավիճակը բացասական ազդեցություն ունեցան երկրամասի հայ բնակչության ժողովրդագրական պատկերի վրա:

ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ В ПРЕДДВЕРИИ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

ОГАННИСЯН Г.С.

Резюме

В преддверии Первой мировой войны Елизаветпольская губерния была одним из наиболее густо населенных армянами районов Закавказья, уступая по численности населения лишь Ереванской губернии. Однако Первая мировая война и нестабильная ситуация, сложившаяся в результате событий, имевших место в 1917 г., отрицательно сказались на естественном приросте населения края.

¹⁷ Տե՛ս **Дашков В.** Всеподданнейший отчет за пятилетие управления Кавказом, СПб., 1910, с. 34:

¹⁸ Տե՛ս Обзор Елисаветпольской губернии за 1913 год, с. 7-8:

THE DEMOGRAPHIC PICTURE OF THE ARMENIAN POPULATION OF THE ELIZAVETPOL GOVERNORATE ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

G. HOVHANNISYAN

Abstract

On the eve of the First World War the Elizavetpol Governorate was one of the densely Armenian populated regions in Transcaucasia, yielding only the population of Erivan Governorate. However, the First World War and the unstable situation that arose as a result of the events of 1917, had a negative impact on the natural growth of the population of governorate.

ԱՆԻԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ. ԳԱԳԻԿ Բ-Ի ՀԱՍՏԱՏՎԵԼԸ ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅՈՒՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա.Վ.

XI դարում Բյուզանդական կայսրությունը բուլղարների դեմ մղած ռազմական գործողություններում հաջողությունների հասնելուց հետո իր ուշադրությունը սևեռեց Արևելքի վրա: Տայքի (1000 թ.) և Վասպուրականի (1022 թ.) միացումը կայսրությանը բարդացրեց Շիրակի Բագրատունիների դրությունը: Բյուզանդիան ձգտում էր Բագրատունյաց թագավորությունը վերածել կայսրության սովորական մի նահանգի, ինչը և հետագայում իրականացրեց: Դրա համար առիթ դարձավ Վասիլ II կայսեր՝ 1021 թ. արշավանքը վիրա-աբխազաց թագավոր Գեորգիի (1014-1027) դեմ: Դրա նկարագրությունը տալիս է պատմիչ Արիստակես Լաստիվերցին, որը հաղորդում է, թե կայսրը Կարինում գտնվելու ժամանակ հնազանդության կոչով իր մոտ է կանչում Գեորգիին, սակայն վերջինը ի պատասխան հրդեհում է Ուլթիք¹ դաստակերտը: Չայրացած կայսրը Բասեն գավառի Օկամի ավանի և շրջակա բնակավայրերի բնակչությանը բռնությունների է ենթարկում և հայերին գերեվարում. «...Ապա ի սպառել պատգամաւորացն, ի բարկութիւն շարժեալ թագաւորն՝ հրաման տայր հրով եւ սրով եւ գերութեամբ ապականել զմեծ աւանն, որ կոչի **Աւկամի**², եւ որ շուրջ զնովաւ գիւղք եւ ագարակք, որ ի բաժնին էին. զորոյ զգերիսն առեալ՝ հրաման տայ խաղացուցանել ի գաւառն **Խաղտեաց**, եւ ինքն դէմ եղեալ անցանէ ընդ Բասեան եւ հասանէ ի գաւառն Վանանդ, ի Կարմիր Փորակ»³: Այսպիսով, գերեվարված հայերը տարվում են Խաղտիք:

Բագրատունյաց թագավոր Հովհաննես Սմբատը (1020-1041) ստեղծված իրադրության պատճառով երկյուղում էր կայսրությունից, քանի որ

¹ **Ուլթիք**-քաղաք (ավան) Մեծ Հայքի Տայք աշխարհում, Ուխթիք կամ Ոքաղե գավառում: Համապատասխանում է Օլթի քաղաքին, Կարսի մարզի Օլթիի շրջանում (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Ե., 2001, էջ 187):

² **Օկամի** - Ավան Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում (նույն տեղում, էջ 469):

³ **Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցույ** (Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, Ե., 2012, էջ 532-533):

Գեորգիի դաշնակիցն էր⁴։ Երկիրը ավերածությունից զերծ պահելու համար նա Պետրոս կաթողիկոսի (1019-1058) գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Տրապիզոն՝ կայսեր հետ բանակցելու⁵ և հանձնարարում է կտակ գրել իր մահից հետո՝ իր քաղաքը և երկիրը թողնել կայսրությանը՝ որպես ժառանգություն⁶։ Բյուզանդական աղբյուրների հաղորդած վկայություններից ակներև են դառնում կայսրության իրականացրած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և կտակի ստեղծման իրական դրդապատճառները։ Պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը, անդրադառնալով Տրապիզոնի պայմանագրին, հաղորդում է, որ Հովհաննես Սմբատը իր երկիրը կայսրությանը կտակել է կայսեր խիստ ճնշման հետևանքով։ Հովհաննես Սկիլիցեսի վկայությամբ՝ կայսրը նրանից գրավոր փաստաթուղթ է պահանջում, որ իր մահից հետո համայն երկիրը դառնա հռոմեական պետության բաղկացուցիչ մաս⁷։

Այս կտակի վերաբերյալ Արիստակես Լաստիվերցին գրում է. «...անդ եղել Հայոց կորստեան գիր և նամակ...»⁸։ Հետագայում Բյուզանդական կայսրությունը 1021 թ. Տրապիզոնում Պետրոս կաթողիկոսի և Վասիլ II-ի միջև կնքված պայմանագիրը բազմիցս շահարկելու էր հայկական պետականության վերացման և այն կայսրությանը միացնելու նպատակով։ Ճիշտ է՝ Հովհաննես Սմբատի կտակը երկիրը առժամանակ զերծ պահեց ավերածությունից, սակայն դա ժամանակավոր էր։

⁴ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979, էջ 146։

⁵ Դեպքերի ժամանակակից Հակոբ Սանահնեցին նշում է, որ Պետրոս կաթողիկոսի շքախմբում եղել են 12 եպիսկոպոս, 80 այլ կրոնավորներ, ինչպես նաև 300 հեծյալից բաղկացած պահակախումբ (տե՛ս **Խաչիկյան Լ.**, Աշխատություններ, հ. Ա, Ե., 1995, էջ 128-155)։

⁶ Տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, էջ 535։ Այս դեպքերի առիթով այլ է Մատթեոս Ուռհայեցու վկայությունը, հայոց ՆՀ թվականին (1021) Վասիլ II-ը անթիվ զորքով եկավ Արևելք և հայոց թագավորից խնդրեց Անին և Կարսը։ Իսկ Հովհաննես Սմբատը որոշեց տալ իր թուլասրտության պատճառով (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 49)։ Հմմտ. Հաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի** լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 93, **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. 3, Ե., 1977, էջ 20-23։

⁷ Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես**, էջ 146-147։

⁸ **Արիստակես Լաստիվերցի**, էջ 535։

Նրա մահից հետո Վեստ Սարգիսը փորձում էր իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում և որպես բյուզանդական գործակալ՝ իշխել երկրում⁹, սակայն վերջինիս ծրագրերը չիրականացան, քանի որ կենտրոնական իշխանության կողմնակիցները 1042 թ. սպարապետ Վահրամ Պախլավունու գլխավորությամբ հայոց գահին են նստեցնում Հովհաննես Սմբատի եղբոր՝ Աշոտի 18-ամյա որդի Գագիկին¹⁰: Գագիկ Բ-ի (1042-1045) թագադրումը տեղի է ունեցել Անիի Մայր տաճարում Պետրոս կաթողիկոսի կողմից¹¹: Թագադրողը Գրիգոր Բջնեցին էր¹²:

Չնայած իր երիտասարդ տարիքին, Գագիկ Բ-ն դրսևորեց ռազմական և քաղաքական գործչի մեծ ընդունակություններ: Արձանագրություններից մեկում նա հիշատակվում է Գագիկ Շահնշահ պատվատիտղոսով¹³: Պատմական աղբյուրներում նրան տրված գնահատականները մեծ մասամբ դրական են: Օրինակ՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եւ մանուկս այս **Գագիկ** էր յոյժ **իմաստուն** և երկիւղած և **աստվածասէր**¹⁴»: Նույն դրական վերաբերմունքն ունի նաև Սմբատ սպարապետը. «Եւ յայնժամ ծագեալ երեւեցաւ պատանեակ մի վայելուչ և իմաստուն, Գագիկ անուն, որդի Աշոտոյ արքայի Բագրատունոյ, հմուտ աստվածային ուսմանց... Գագիկ եղև բարեպաշտ և աստուածասէր...»¹⁵:

1044 թ. բյուզանդական կայսր Կոնստանտին Թ Մոնոմախը (1042-1054) սկսեց վճռական գործողությունների դիմել՝ Անիի Բագրատունյաց թագավորությանը տիրելու համար կրկին առաջ քաշելով Հովհաննես Սմբատի

⁹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 84:

¹⁰ Արիստակես Լաստիվերոցի, էջ 557, հմմտ. Վարդան Վարդապետ, էջ 99, Գրեգին Ա կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 223, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ՝ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 87:

¹¹ Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ՝ Կ. Մաթևոսյանի, Ե., 2014, էջ 186:

¹² Մատթեոս Ուռհայեցի, էջ 96-97, հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 36-37, Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Ե., 2015, էջ 59-60:

¹³ «... այս ի հրամանք են **Գագկա Շահանշահի** որդոյ Աշոտոյ, ազատեալ եմ զՄրենոյ զհարկն...» (Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 197), տե՛ս նաև **Ղևոնդ Ալիշան**, «Շիրակ» տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 138-139:

¹⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 86:

¹⁵ Սմբատ Սպարապետ, էջ 36-37, հմմտ. Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 101:

կտակը: Միքայել Իասիտեսի գլխավորած բյուզանդական զորաբանակը հաջողության չհասավ: Գագիկ Բ-ն, կենտրոնացնելով ուժերը և համառ մարտեր մղելով, կարողացավ պաշտպանել երկիրը: Կոնստանդին Թ Մոնոմախը սխոլների դոմեստիկոս պրոդերոս Նիկոլայոսի գլխավորությամբ շուտով մեկ այլ զորաբանակ ուղարկեց Անին գրավելու¹⁶: Այդ նպատակով կայսրը գործակցել էր Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի հետ՝ նրան տալով խրիստոնյություն¹⁷ հաստատված գրություն, ըստ որի՝ Գագիկ Բ-ին պատկանող այն բոլոր տարածքները, որոնք կգրավեր ամիրան, կհամարվեին նրա սեփականությունը¹⁸: Արիստակես Լաստիվերցին էլ հաղորդում է, որ բյուզանդական զորքը չորս անգամ արշավում է Անիի դեմ, սրածում և գերեվարում է հայերին: Սակայն քաղաքը գրավել չի կարողանում¹⁹:

Տեսնելով, որ զենքով հնարավոր չէ հաջողության հասնել՝ կայսրը փոխեց մարտավարությունը և փորձեց սիրաշահելով դիվանագիտական հնարքներով Գագիկ Բ-ին մոլորեցնել և քաղաքը գրավել: Վեստ Սարգիսը կայսերը խորհուրդ է տալիս Գագիկ Բ-ին բանակցություններ վարելու համար հրավիրել Կոստանդնուպոլիս և խաբեությամբ վերցնել Անի քաղաքը²⁰:

Կայսրը, հրավեր է ուղարկում պատանի արքային՝ իբր բարեկամություն հաստատելու երկու երկրների միջև. «...քանզի երդմամբ եւ խաչի հաւանեցուցին զԳագիկ՝ հրամանաւ թագաւորին, թէ՛ «Միայն ի տեսանելն զքեզ, դարձուցից ի քեզ զթագաւորութիւնդ քո եւ գրեցից զքեզ ժառանգ յափտենից աշխարհիդ եւ քաղաքիդ քոյ...»²¹: Գագիկ Բ-ն, չլսելով Վահրամ Պաիլավունու և մյուս հայրենանվեր նախարարների հորդորները, որոշում է ընդունել կայսեր հրավերը և քաղաքի բանալիները հանձնելով Պետրոս կաթողիկոսին, 1044 թ. մեկնում է Կոստանդնուպոլիս²²: Թեպետ նրան թագավորավայել ընդունելություն են ցուցաբերում, սակայն բանակցությունների ժամանակ ի հայտ են գալիս Կոստանդին Թ Մոնոմախի իրական նկրտումները Անիի Բագրատունյաց թագավորության նկատմամբ: Նա

¹⁶ Մատթէոս Ուռհայեցի, էջ 96, հմմտ. Հովհաննէս Սկիլիցես, էջ 147-148:

¹⁷ Խրիստոնյութիւն կայսեր ոսկե կնիքը կրող և նրա կողմից կարմիր թանաքով ստորագրված փաստաթուղթ (տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդական տերմիններ, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 2, Ե., 2006, էջ 126):

¹⁸ Տե՛ս Հովհաննէս Սկիլիցես, էջ 147-148:

¹⁹ Արիստակէս Լաստիվերցի, էջ 558:

²⁰ Մատթէոս Ուռհայեցի, էջ 93-94:

²¹ Արիստակէս Լաստիվերցի, էջ 561: Մատթէոս Ուռհայեցի, էջ 93-94:

²² Արիստակէս Լաստիվերցի, էջ 561:

հայոց թագավորից պահանջում է Անին և խոստանում նրան հանձնել Մալաթիան՝ իր շրջակա գավառներով, բայց Գագիկ Բ-ն մերժում է²³: Այս ժամանակ Պետրոս կաթողիկոսը Վեստ Սարգսի հետ, դավաճանելով արքային, կայսերն են ուղարկում Անիի 40 բանալիները: Գագիկ Բ-ն 30 օր ևս համառորեն դիմադրում էր, սակայն, ընկճվելով արտաքին և ներքին դավաճանություններից, այլ ելք չունենալով՝ հրաժարվում է թագավորությունից: Կայսրը նրան թույլ չի տալիս վերադառնալ հայրենիք՝ կարգադրելով, որ հայոց թագավորի ընտանիքը ևս բերեն Բյուզանդիա²⁴: Այդ լուրը լսելով՝ Անիի բնակչությունը հուսալքվում է, և բյուզանդական զորաբանակը, 1045 թ. գրավելով քաղաքը, վերջ է դնում Բագրատունյաց թագավորության գոյությանը²⁵:

Թագավորության անկումը խորապես սգացող Արիստակես Լաստիվերցին գրում է, որ հեծելագործ անտերունչ շրջում էր այս ու այն կողմ՝ ոմանք Պարսկաստանում, ոմանք Հունաստանում և ոմանք էլ Վրաստանում: Հայրենի երկրից դուրս էր եկել նաև ազատների Սեպուհ գունդը, արքունական ապարանքները դարձել էին ավերակ ու անմարդաբնակ²⁶:

Անիի գրավումը աղետալի հետևանք ունեցավ հայության համար: Սկզբնավորվեցին հայության զանգվածային արտագաղթերը: Գաղթում էին ոչ միայն ազնվականությունը՝ ընտանիքներով, ազատանին, այլև հասարակ բնակչությունը՝ հաստատվելով Կապադովկիայում, Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և այլ շրջաններում՝ ստվարացնելով մինչ այդ գաղթած իրենց հայրենակիցների շարքերը:

Հայկական պատմական աղբյուրները հիշատակում են, որ Հայոց թագավորը կայսրից ստանում է տարածքներ Կապադովկիայում²⁷ Կալոն

²³ «Եւ ասէր Գագիկ ցՄոնոմախն, եթէ Տեր և թագաւորն ես եմ տանն Հայոց. ահա ես ոչ տաց զՀայք ի ձեռս քո, զի դու զիս խաբէութեամբ ածեր ի Կոստանդնուպօլիս» (**Մատթէոս Ուռհայեցի**, էջ 95):

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 97:

²⁶ **Արիստակէս Լաստիվերցի**, էջ 559-560:

²⁷ **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 95, հմմտ. **Վարդան Վարդապետ**, Մ., 1861, էջ 133, **Վահրամայ Բաբունոյ**, Ոտանաւոր պատմություն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 190-191, **Չամչեանց Մ.**, Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 935, **Միքայելյան Գ.**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Ե., 2007, էջ 61: Մ. Ճևահիրճյանը Գագիկ Բ-ի՝ Կապադովկիայի տիրությունները ներկայացնում է հետևյալ սահմաններում. «Ճիսասադաղ և Հողուլդաղ լեռների և Կուր-բաղազյոյու լճի ու դրանից հյուսիս գտնվող ճահճի միջև ընկած «դաշտն Առճիասու»

Պեղատը²⁸ և Պիզուն²⁹: Գագիկ Բ-ի՝ տարածքներ ստանալու հետ կապված հարկ է նշել, որ նա կայսեր հորդորով ամուսնացավ 1035 թ. մահացած Դավիթ Արծրունու դստեր հետ և տեր դարձավ նաև նրա բաժնին: Որպես Դավիթ Արծրունու տիրույթներ՝ հայ պատմիչները հիշատակում են Կեսարիա³⁰, Ծամնդավ³¹, Խավատանեք³² քաղաքները³³: Գագիկ Բ-ն, ինչպես երևում է, տիրեց Դավիթ Արծրունու կալվածքներին: Սակայն պետք է նշել, որ Բյուզանդական կայսրությունը Դավիթ Արծրունու մահից հետո նրա

կոչվող հովիտը, այժմյան Ինճեսու գյուղաքաղաքով ու Բաշքոյ գյուղով, ուր նա թաղված է: **Ճեվահիրճյան Մ.Հ.**, Գագիկ Բ Բագրատունու Պիզու քաղաքը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), № 2, 1980, էջ 128]:

²⁸ «...արդի Ինճեսուն է: Հունարեն Կալուն Պաղատ նշանակում է գեղեցիկ ակ, աղվոր ջրի հոր, անուշ ջրի աղբյուր: Ինճեսուն գտնվում է տարանցիկ ճանապարհների հանգույցում, այնտեղով են անցնում Կեսարիայից դեպի արևմուտք՝ Լիակոնիա և հարավ՝ Կիլիկիա տանող տարանցիկ ճանապարհները» (տե՛ս **Ճեվահիրճյան Մ.Հ.**, նշվ. աշխ., էջ 127-128): **Կալոնպեյատ** - դղյակ, ամրոց Փոքր Հայքում, նախկին Կապադովկիայում, հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 902-903, **Friedrich H., Restle M.** Kappadokien (Kappadokia, Charsianon, Sebasteia und Lykandos), Tabula Imperii Byzantini (այսուհետև՝ TIB), Band. 2, Wien 1981, S. 196.

²⁹ «Պիզուն այժմ կոչվում է Բաշքոյ: Գտնվում է Հողուղաղ լեռան հյուսիսարևելյան լանջին, ծովի մակերևույթից մոտ 1700 մ բարձրության վրա: Բնակավայրի մոտ սկիզբ է առնում Ալիս գետի ձախակողմյան վտակներից մեկը, որն անցնում է Բաշքոյի միջով ու Յուրգյուբի մոտով և Ալիս գետին է խառնվում Ավանոսից արևելք: Պիզուն գտնվում է Արգեսոսի դաշտում՝ Ալիս գետի ջրավազանը, Լիակոնիան և Գաղատիան իրար միացնող ճանապարհների հանգուցային մի վայրում» (**Ճեվահիրճյան Մ.Հ.**, նշվ. աշխ., էջ 123), հմմտ. TIB. 2, S. 259.

³⁰ Կեսարիա - քաղաք Փոքր Հայքում, Արգեսոս լեռան հյուսիսային կողմում, Ալիս գետի վերին հոսանքի շրջանում (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 97), հմմտ. Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, հեղինակ՝ **Հարությունյան Բ.**, Ե., 2007, էջ 58-59, 62-63:

³¹ Բերդաքաղաք Փոքր Հայքում, այսօրվա Կուսկալեսի (Զամանթի կալեսի), Կեսարիա քաղաքից 30-35 կմ արևելք Սարոս գետի Ծամնդավ վտակի ապառաժոտ լեռան վրա (տե՛ս **Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 2, էջ 841), հմմտ. TIB. 2, S. 300-301:

³² «Քաղաք (ամրոց) պատմական Կապադովկիայում, նրա հարավ-արևմտյան մասում, Կեսարիայից հարավ, Կիլիկիայի սահմանային շրջանում, Թոմարգայից ոչ հեռու» (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 683):

³³ **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 51, 161, հմմտ. **Արիստակէս Լաստիվերոցի**, էջ 537, **Seibt W.** Die Eingliederung von Vaspurakan in das Byzantinische Reich (etwa 1019 bzw. Anfang 1022) [տե՛ս Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1978, № 1-12 (հոդվածը լույս է տեսել 1980 թ.), S. 59-60], **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Ե., 2016, էջ 229-230, **Степаненко В.** Владиславичи, Арцруниды и Багратиды в Византии XI в., Екатеринбург, 2015, с. 183:

կալվածքները վերցրել էր իր վերահսկողության ներքո, թերևս սրանով կարելի է բացատրել այդ տարածքները հանձնելը Գագիկ Բ-ին: Իսկ արդեն 1065 թ. Կապադովկիա գաղթած Գագիկ Բ Կարսեցուն ևս կալվածքներ տրամադրվեց (Ծամնդավ, Լարիսա, Կոմանա, Ամասիա քաղաքները և 100 գյուղ³⁴) արդեն Գագիկ Բ-ին անցած տարածքների մի մասի հաշվին:

Նշանակում է՝ կայսրությունը, այս կերպ վարվելով, փորձում էր լարել հարաբերությունները Կապադովկիայում հաստատված հայ ազնվականական ընտանիքների միջև՝ շահարկելով տարածքային խնդիրներ՝ մասնավորապես նախապես Արծրունիներին տրված տարածքները հետագայում հանձնելով Բագրատունի թագավորներին:

Գագիկի Բ-ի՝ կայսրությունում տարածքներ ստանալու խնդիրն անդրադարձել է Հովհաննես Սկիլիցեսը. «Գալով կայսեր մոտ, նա (Գագիկ Բ) **մագիստրոսի** պատվաստիճան ստացավ, շատ եկամտաբեր շրջաններ **Կապադովկիայում, Խարսիանոնում, Լիկանդոսում** և այսուհետև խաղաղ ու անվրդով կյանք ապրեց»³⁵:

Ուշագրավ է, որ Գագիկ Բ-ն կայսրից ստացել է **մագիստրոսի** պատվաստիղոս և տեր դարձել մի շարք շրջանների:

Արճճե կնիքների հաղորդած վկայությունը մեծ արժեք ունի, և արդի պատմությանը անհայտ շատ հարցեր այլ լույսի ներքո է ներկայացնում: Այսպես, պատմական աղբյուրներում նշվող Խարսիանոնը գտնվում էր Գագիկ Բ-ի վերահսկողության ներքո, այժմ այդ հանգամանքը փաստվում է նաև կնիքով. «**Κύριε βοήθει τῷ σῷ δούλῳ Κακικίῳ πρωτοπροέδρῳ, ἐπὶ τοῦ κοιτῶνος καὶ πρωτοδοουκὶ Χαρσιανοῦ τῷ Ἀνιώτῃ, Գագիկ Անցեի Խարսիանոնի պրոտոպրոեդրոս և պրոտոդուքս**»³⁶: Նա այս կոչումը ստացել էր 1071 վերջին կամ 1072 թ. սկզբին³⁷: Ըստ երևույթին, կայսրությունը, հաշվի առնելով Կապադովկիայում հաստատված հայության շրջանում Գագիկ Բ-ի համախմբող և գերակա դիրքը, փորձում էր նրան սիրաշահել և համերաշխել նրա հետ: Կապադովկիայի հայերը Գագիկ Բ-ին ըն-

³⁴ Վարդան Վարդապետ, Վենետիկ, 1862, էջ 102, հմմտ. **Dédéyan G.** L'immigration arménienne en Cappadoce au XIe siècle, Byzantion, t. XLV, Bruxelles, 1975, p. 83-85:

³⁵ **Հովհաննես Սկիլիցես**, էջ 148:

³⁶ **Cheyne J.-Cl., Theodoridis D.** Sceaux byzantins de la collection D. Theodoridis: les sceaux patronymiques, Paris, 2010, p. 18-19.

³⁷ **Վեռներ Զ.**, Արդյո՞ք Մեծ Հայքի Գագիկ II-ն է 1072-1073 թթ. եղել Խարսիանոնի մեծ դուքսը (ՊԲՀ, 1994, № 1-2, էջ 188-194):

կալում էին որպես հայոց թագավոր, որ գերակա դիրք ուներ այդտեղ հաստատված մյուս հայ իշխանների նկատմամբ: Թերևս, այս հանգամանքով կարելի է բացատրել դավանաբանական խնդիրներով Կոստանդնուպոլսում գտնվող Ատոմ և Աբուսահլ Արծրունիների պատասխանը կայսերը. «...ասացին զթագաւորն Ատոմն և Ապուսահլ. **«Մեք առանց Գագկայ Աշոտոյ որդւոյ ոչ ինչ կարեմք առնել, զի նա այր քաջ է և թագաւոր և մեր փեսայ.** Առաքեա և կոչեա զնա այսր, զի եթէ մենք առանց նորա իրք առնեմք, հրով այրէ զմեզ ի գաւառն մեր»³⁸:

Բյուզանդացի հեղինակներ Հովհաննես Սկիլիցեսի և Միքայել Ատտալիատեսի այն վկայությունը, որ Գագիկ Բ-ն նոր միջավայրում «խաղաղ ու անվրդով կյանք ապրեց», ինչպես ստորև կտեսնենք, չի համապատասխանում իրականությանը³⁹:

Գագիկ Բ-ն Կապադովկիայում իր նստավայրը դարձրեց Պիզու քաղաքը: Նա այստեղ ձեռնամուխ եղավ նաև շինարարական գործունեության՝ կառուցելով Պիզուի համանուն վանքը⁴⁰:

Գագիկ Բ-ն, հանդես գալով Կապադովկիայի հայության պաշտպանության դիրքերից, դավանաբանական խնդիրներում ևս նրանց սատարելու նպատակով զորքով գնում է Կեսարիա, մետրոպոլիտ Մարկոսի մոտ, որը հայությանը կրոնական հալածանքների էր ենթարկում: Նա հրամայում է զինվորներին սպանել հույն մետրոպոլիտին⁴¹:

Նոր միջավայրում հաստատվելուց հետո էլ Գագիկ Բ-ին երբեք չէր լքում կորցրած պետականությունը վերականգնելու ձգտումը: Նա այդ նպատակով փորձում էր համագործակցել տարածաշրջանում նոր հայտնված սելջուկ-թուրքերի հետ: Նա կապ հաստատեց սելջուկ առաջնորդ Ալի-Արսլա-

³⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 161:

³⁹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 17, Բյուզանդական աղբյուրներ, 2, Միքայել Ատտալիատես, Պատմություն, թարգմանությունը բնագրից առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Ե., 2015, էջ 42, հմմտ. **Հովհաննես Սկիլիցես**, էջ 148:

⁴⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 184: Վարդան Վարդապետ, Վենետիկ, 1862, էջ 105, հմմտ. Պալեան Տ., Հայ վանորայք, Էջմիածին, 2008, էջ 101-103, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 335:

⁴¹ Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Մարկոսը մետրոպոլիտը այնքան էր լրբացել, որ իր շան անունը «Արմեն» էր դրել: Գագիկ Բ-ի հրամանով, զինվորները Մարկոսին և իր շանը գցում են պարկի մեջ և հարվածում են շանը, որն էլ հարձակվում էր Մարկոսի վրա: Այսպիսի տանջանքների ենթարկվելով՝ սպանվեց Մարկոսը (**Մատթեոս Ուռհայեցի**, էջ 180-182), հմմտ. **Kurkjian V.M.** A History of Armenia, New York, 1959, p. 203.

նի (1063-1072) հետ: Վերջինս ևս դեմ չէր Գագիկ Բ-ի ձեռնարկին⁴²: Այս իրադարձությունները, ըստ երևույթին, տեղի էին ունենում 1064 թ. հետո, երբ սելջուկները գրավել էին Անին⁴³ և տարածաշրջանում արդեն լուրջ դերակատարներ էին⁴⁴: Թերևս, այս կերպ սելջուկ առաջնորդը՝ ի դեմս Գագիկ Բ-ի փորձում էր լուրջ դաշնակից ձեռք բերել և նրա զինական ներուժը օգտագործել ընդդեմ կայսրության:

Գագիկ Բ-ի ձեռնարկը, սակայն, իր հանգուցալուծումը չստացավ: Պետք է ենթադրել, որ Ալփ-Արսլանը առաջ էր քաշել կրոնափոխ լինելու գաղափարը, ինչը և մերժել էր հայոց թագավորը: Այսպիսի ենթադրության համար հիմք են դառնում պատմիչի հետևյալ տողերը. «...զի բազում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն, և նա յաղագս քրիստոնէական հաւատոյ արգելեալ լինէր»⁴⁵: Նշենք որ, կորցրած պետականության վերականգման համար քայլեր էին անելու նաև Գագիկ Բ-ի ժառանգները:

Պատմական աղբյուրները Գագիկ Բ-ի մասին վերջին անգամ տեղեկություններ են հաղորդում 1079 թ. Կիզիստրա⁴⁶ բերդում արգելափակվելու և սպանվելու առիթով: Նա գնում էր Տարսոն՝ Վասպուրականից գաղթած Ապղարիպ Արծրունու հրավերով և պատրաստվում էր իր կրտսեր որդուն՝ Դավթին ամուսնացնել Ապղարիպի դստեր հետ⁴⁷: Սակայն խնամախոսությունը ձախողվում է, Գագիկ Բ-ն հետ է դառնում և ճանապարհին գավառի բոլոր իշխաններին ձերբակալելով՝ շղթայակապ տանում է իր առջևից. գալիս հասնում է Կիզիստրա բերդի մոտ⁴⁸: Այս խնդրի հետ կապված՝ ուշագրավ դիտարկում է կատարում Ե. Քասունին. ըստ նրա՝ Գագիկի

⁴² Մատթեոս Ուռհայեցի, էջ 180:

⁴³ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Ե., 1977, էջ 63:

⁴⁴ Laurent J. Byzance et les turcs seldjoudides dans l'Asie occidentale jusqu'en 1081, Paris, 1913, p. 24-25, հմմտ. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 32, Dédéyan G. L'immigration arménienne en Cappadoce, նշվ. աշխ., էջ 110-111:

⁴⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 180:

⁴⁶ Կիզիստրա -այսօր՝ Ջենգիբար կալեսի, 1557 մ. բարձրության վրա ընկած ամրոցի ավերակ: Յեսիլիիսարից 4 կիլոմետր հարավ-արևմուտք, մոտավորապես 56 կիլոմետր հարավ-արևմուտք Կեսարիայից (TIB. 2, S. 219), հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 131:

⁴⁷ Ակինյան Ն., Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի (կեսնքը և գրական վաստակները հանդերձ ազգաբանությամբ Պահլաունեաց և Լամբրոնի Հեթմեանց), Վիեննա, 1956, էջ 413:

⁴⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 219: Սմբատ Սպարապետ, էջ 86-87:

Բ-ի զայրույթը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա գնում էր Ապլլարիայի կողմից բանտարկված որդուն օգնության, սակայն մինչ նրա հասնելը Ապլլարիայն արդեն սպանել էր տղային: Սրանով պետք է բացատրել Գագիկ Բ-ի զայրույթը և իշխաններին ձերբակալելը, որոնք Ապլլարիայի ենթակայության ներքո էին գտնվում⁴⁹: Վարդան Վարդապետը ևս փաստում է, որ Գագիկ Բ-ի որդին սպանվել էր դրա ձեռքով. «Եւ պիղծն Ապլլարիայ սպան դեղով զփեսայն»⁵⁰: Ապլլարիայ Արծրունու այդ գործելաճան թերևս բխում էր կայսրությանը հաճոյանալու միտումից:

Ըստ Մատթեոս Ուռհայեցու, Գագիկ Բ-ն եկավ Արժախասի դաշտը՝ Կիզիստրա բերդի մոտ և, իր զինվորներին թողնելով ճանապարհին, երեք հոգով գնաց առաջ: Կիզիստրա բերդի տերեր՝ Մանդալեի երեք որդիները, բռնելով Գագիկ Բ-ին, ձիուց վայր են գցում, ուղեկցողները դիմում են փախուստի և արքային տանում են բերդ: Ըստ պատմիչի՝ Մանդալեի որդիների այս արարքը մեծ վրդովմունք է հարուցում հայ ազնվականության շրջանում: Կարսի վերջին թագավոր Գագիկ Բ Կարսեցին, Սենեքերիմի որդիներ Ատոմն ու Աբուսահլը նաև մյուս հայ իշխանները համառ մարտերով փորձեցին գրավել բերդը, սակայն նրանց ջանքերն ապարդյուն անցան, քանի որ բերդը շատ անառիկ էր⁵¹:

Մանդալեի որդիները, չլսելով հայ ազնվականների կոչերը, բերդում աղեղի լարով խեղդամահ են անում հայոց թագավորին և նրա դիակը մեկ օր պարսպից կախված պահելուց հետո բերդից դուրս են հանում և թաղում: Վեց ամիս անց Բանիկ անունով մի մարդ հանում է արքայի մարմինը և տանում Պիզու: Ուշագրավ է, որ Մատթեոս Ուռհայեցին Գագիկ Բ-ի մահն է համարում Բագրատունյաց թագավորության ավարտը, ոչ թե Անիի գրավումը բյուզանդացիների կողմից. «Եւ աստանօր դադարեալ եղև թագաւորութիւնն ի տանէն Հայոց և յազգէն Բագրատունեաց»⁵²:

⁴⁹ **Քասունի Ե.**, Տարսնի իշխանը Ապլլարիայ Հասան Արծրունի (Հայկազեան հայագիտական հանդես, հ. Գ, Պեյրուֆ, 1972, էջ 97-99):

⁵⁰ **Վարդան Վարդապետ**, Վենետիկ, 1862, էջ 106:

⁵¹ **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 220: Գագիկ Բ-ի սպանության վրեժը լուծեց Թորոս Ա Ռուբինյանը (1110-1129)՝ սպանելով Մանդալեի որդիներին: Նույն տեղում, էջ 318-321, հմմտ. **Վահրամ Բաբունի**, էջ 194-195: **Հեթմոյ արքայորդույ ճաշոց**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, կազմեց Մաթևոսյան Ա., Ե., 1984, էջ 583:

⁵² **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 218-220:

Պատմագրության և պատմագիտության մեջ որոշակի տարակարծությունների տեղիք է տվել Գագիկ Բ-ի սպանության թվականը:

Սամուել Անեցու երկի տարբեր շարունակողներ Գագիկ Բ-ի սպանությունը թվագրում են 1076, 1078, 1081 թվականներով⁵³: Հեթում Կողիկոսցին այն համարում է 1076 թ.⁵⁴, Մ. Ուռհայեցին՝ 1079 թ.⁵⁵, Ն. Ադոնցը՝ 1071 թ.⁵⁶, Ժ. Դեդեյանը՝ է 1073 թ.⁵⁷: Մեզ հավանական է թվում, որ Գագիկ Բ-ն մահացել է 1076-1079 թթ. ընկած ժամանակահատվածում: Քանզի մոտ 1075 թ. ողջ էր և կայսրությունից ստացել էր Կուրապաղատի և դուքսի աստիճան. **«Κύριε βοήθει τῷ σῷ δούλῳ Κακικίῳ κουροπαλάτῃ καὶ δουκὶ τῷ Ἀνιώτῃ, Գագիկ Անեցի Կուրապաղատ և դուքս»**⁵⁸: Այս փաստը խոսում է այն մասին, որ Գագիկ Բ-ն կայսրության ներքին գործերում լուրջ դերակատարություն է ունեցել, ինչի արդյունքը նրան տրված պատվաստիճաններն են: Նշանավոր կնիքագետ Ժ.-Կլ. Շեյնեն, մեկնաբանելով այս կնիքը, նշում է, որ ամենափորձառու թեմերի զորահրամանատարներն էին հավակնում այդ կոչմանը, և հավանական է համարում, որ սա եղել է Գագիկ Բ-ի՝ երբևէ ունեցած ամենաբարձր կոչումը, որից նա օգտվել է⁵⁹:

Գագիկ Բ-ի ժառանգների մասին պատմական աղբյուրներում սակավ տեղեկություններ են պահպանվել: Ինչպես արդեն նշեցինք, նրա մի որդին՝ Դավիթը, Ապլղարիպ Արծրունու դավադրության զոհը դարձավ, նրա ավագ որդու՝ Հովհաննեսի և թոռան՝ Աշոտի մասին տեղեկություններ է հաղորդում Վարդան վարդապետը: Ըստ նրա՝ Հովհաննեսն ամուսնացել է Անիի դքսի դստեր հետ և տեղափոխվել է Անի: Սակայն, այստեղ ենթարկվելով ճնշումների, ստիպված անցնում է Վրաստան, իսկ այնտեղից էլ՝ Կոստանդնուպոլիս: Հովհաննեսն ամեն կերպ փորձում էր վերականգնել Բագրատունյաց թագավորությունը, սակայն ձախողվեց:

Հովհաննեսի որդին՝ Աշոտը, գնալով սելջուկների մոտ նրանցից ստանում է Անիի իշխանությունը: Բայց զոհ է դառնում Մանուչե ամիրայի սադ-

⁵³ Մաթևոսյան Կ., Հեթում պատմիչ Կողիկոսցին և նրա ժամանակագրությունը, Ե., 2011, էջ 59, հմմտ. Տեր-Պետրոսյան Լ., հ. Բ, նշվ. աշխ., էջ 64-66:

⁵⁴ Մաթևոսյան Կ., Հեթում պատմիչ Կողիկոսցին, էջ 46:

⁵⁵ Մատթէոս Ուռհայեցի, էջ 218-220:

⁵⁶ Ադոնց Ն., Երկեր, հ. Ե, Հայ բյուզանդական ուսումնասիրություններ, Ե., էջ 512-515:

⁵⁷ Տե՛ս Dédéyan G. Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés..., vol. 1, Lisbonne, 2003, p. 289-292, նույնի՝ L'immigration arménienne en Cappadoce, p. 92:

⁵⁸ Տե՛ս Cheynet J.-Cl., նշվ. աշխ., էջ 19-20:

⁵⁹ Նույն տեղում:

րանքին, որը թունավորում է նրան: Մինչ որդու սպանությունը, խարդավանքների զոհ էր դարձել նաև Հովհաննեսը⁶⁰: Այսպիսով, Գագիկ Բ-ի և նրա ժառանգների՝ կորցրած պետականությունը վերականգնելու փորձերն ապարդյուն անցան արտաքին ճնշումների և խարդավանքների պատճառով: Որոշ հետազոտողների կարծիքով, Գագիկ Բ-ն ունեցել է նաև Մարիամ անունով դուստր: Այսպիսի եզրահանգման համար հիմք է ծառայել Գերմանիայի Վիսբադենի Նումիզմատիկների (նամականիշների) թանգարանի հավաքածուում պահվող մի արճճե կնիք, որի վրա գրված է. «**Μαρία Θυγάτηρ Κακίκη τοῦ Ἀνιῶτου, Μαρίας դուստր Գագիկ Անեցու**»⁶¹: Ըստ Ժ-Կլ. Շեյների՝ հավանական է, որ խոսքը ծագումով Անիից մեկ այլ հայի մասին է որը, հնարավոր է, իր գործունեությունը ծավալած լինի Բյուզանդիայում կամ կոչում ստացած լինի Գագիկի Բ-ի միջոցով: XI դ. վերջին Անեցի ազգանունը այլևս չէր ընդունվում որպես դինաստիայի անվանում, ի տարբերություն Սենեքերիմյանների⁶²: Պատմական աղբյուրներում ևս տեղեկություն չկա Գագիկ Բ-ի դստեր մասին, ուստի հաստատապես հնարավոր չէ պնդել, որ Գագիկ Բ-ն դուստր ուներ, և այս արճճե կնիքը պատկանում էր նրան:

Այսպիսով, Բյուզանդական կայսրությանը հաջողվեց նենգ քաղաքականություն վարել ու կործանել Անիի Բագրատունյաց թագավորությունը և նրա վերջին թագավորին պատանդ պահել կայսրության սահմաններում: Գագիկ Բ-ն, լինելով ռազմական ու պետական հմուտ գործիչ, կարողացավ կայսրության հետ հարաբերություններ հաստատել և ստանալ մի շարք բարձր տիտղոսներ: Նոր միջավայրում նա դարձավ տեղի հայությանը համախմբող կարևոր ուժ և ընկալվեց որպես հայոց արքա: Գագիկ Բ-ի՝ կորցրած պետականությունը վերականգնելու փորձերը հետագայում շարունակում են նաև նրա ժառանգները:

⁶⁰ Տե՛ս Վարդան Վարդապետ, Մ., 1861, էջ 141:

⁶¹ Տե՛ս **Stavrakos Ch.** Die byzantinischen Bleisiegel mit Familiennamen aus der Sammlung des Numismatischen Museums Athen, Wiesbaden, 2000, էջ 70-71, Nr. 16:

⁶² Տե՛ս **Cheyne J.-Cl.**, նշվ. աշխ., էջ 21, **նույնի՝** La société Byzantine l'apport des sceaux, Paris, 2008, vol. 2, p. 600:

ПАДЕНИЕ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА АНИ: УТВЕРЖДЕНИЕ ГАГИКА II В КАППАДОКИИ

СТЕПАНЯН А.В.

Резюме

Византийской империи удалось уничтожить Багратидское царство Ани, а последнего царя взять в заложники. Будучи опытным стратегом и государственным деятелем, Гагик II сумел наладить отношения с Византийской империей и удостоиться высоких почестей. В новой среде Гагик II стал ключевой фигурой, объединившей местных армян, которые его воспринимали в качестве армянского царя. При этом Гагик II всячески пытался восстановить утраченную государственность, и это начинание Гагик II в будущем было продолжено его потомками.

DESTRUCTION OF THE BAGRATID KINGDOM OF ANI: THE AFFIRMATION OF GAGIK II TO CAPPADOCIA

A. STEPANYAN

Abstract

The Byzantine Empire managed to destroy the Bagratid kingdom of Ani and block the last king within the borders of empire. Being a qualified military and statesman, Gagik was able to establish relations with the empire and receive a number of high honors. In the new environment, he became an important force uniting local Armenians, and was adopted as an Armenian king. Attempts of Gagik II to restore the lost statehood was continued in the future by his descendants.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.Լ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տ.Վ.

1990-ական թվականներից ՀՀ իշխանությունների կարևորագույն ձեռնարկումներից մեկը հարկային օրենսդրության ձևավորումն է, որը բաժանվում է երկու փուլի¹.

- հարկային օրենսդրության առաջին կամ ձևավորման փուլ՝ 19.04.1992-14.04.1997 թթ.,

- հարկային օրենսդրության ձևավորման երկրորդ կամ բարեփոխումների փուլ՝ 14.04.1997 թվականից մինչև օրս:

Հարկային օրենսդրության ձևավորման սկիզբը դրվեց, երբ ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց մի շարք հարկային կարևորագույն օրենքներ²՝ «Հայաստանի Հանրապետության հարկերի ու տուրքերի մասին» (19.04.1992 թ.)³, «Ակցիզային հարկի մասին» (06.06.1992 թ.)⁴, «Ավելացված արժեքի հարկի մասին» (30.06.1992 թ.)⁵, «Շահութահարկի մասին»

¹ **Հարությունյան Վ.**, Հարկային քաղաքականության և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2003, էջ 66: Հարկային օրենսդրության փուլերի բաժանման հիմքում դրվել են հարկերի մասին հին ու նոր օրենքների ընդունման տարեթվերը (19.04.1992 թ., 14.04.1997 թ.):

² Մինչև հարկերի հիմնական և դրան հաջորդող օրենքների ընդունումը հարկերի ու տուրքերի հաշվարկը և գանձումը կատարվում էին հիմնականում նախկին ԽՍՀՄ հարկային օրենսդրության, ՀՀ նախագահի հրամանագրերի, ՀՀ Գերագույն խորհրդի առանձին դեպքերում ընդունած որոշումների կամ օրենքների (քանի որ մինչ այդ բացակայում էր հարկային քաղաքականությունը կանխորոշող հարկերի և տուրքերի մասին հարկային հիմնական օրենքը), ՀՀ կառավարության որոշումների, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ու ՀՀ հարկային պետական տեսչության մշակած կարգերի, ցուցումների ու պարզաբանումների հիման վրա:

³ Հարկային տեղեկատու, № 1, ՀՀ ՀՊՏ, 1993 թ., էջ 5-16:

⁴ Հարկային տեղեկատու, № 3, 1993 թ., էջ 21-22:

⁵ Հարկային տեղեկատու, № 4, 1994 թ., էջ 13-22:

(18.01.1992 թ.)⁶, «Հողի հարկի մասին» (27.04. 94 թ.)⁷, «Գույքահարկի մասին» (03.02.95 թ.)⁸ և «Եկամտահարկի մասին» (08.02.95 թ.)⁹: Իսկ որոշ օրենքներում՝ «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» (06.06.92, 30.12.92, 18.04.93)¹⁰, «Շահութահարկի մասին» (19.06.92, 30.12.92, 14.02.94, 19.12.94, 05.05.95)¹¹, «Ակցիզային հարկի մասին» (18.04.93, 30.11.94, 02.11.95)¹², «Ավելացված արժեքի հարկի մասին», (10.12.94 թ.)¹³, կատարվեցին փոփոխություններ և լրացումներ:

ՀՀ հարկային օրենսդրության ձևավորման սկզբում «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքով առաջին անգամ օրենսդրական մակարդակով սահմանվեցին՝

- հարկեր և տուրքեր հասկացությունները, դրանց տեսակները (շահութահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, սոցիալական հարկ, հողի հարկ, մասնագիտական հարկ, գույքահարկ, բնապահպան հարկ, ճանապարհային հարկ, պետական տուրքեր, մաքսեր, ժառանգության ու նվիրատվության հարկ, տեղական հարկեր, այլ հարկեր ու տուրքեր),

- հարկման օբյեկտները և վճարողները, հարկային արտոնությունների տեսակները (հարկից ազատում, հարկման օբյեկտի նվազում, հարկի նվազում, հարկի հաշվարկման և վճարման ժամկետային արտոնություն, հարկի դրույքաչափի նվազում, հատուցումներ վճարողին),

- ծագած վեճերի լուծման կարգը և հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունը,

- հարկման այն հիմնական սկզբունքները (բոլոր վճարողների միատեսակ և միանման հարկումը), որոնց վրա հենվում է հարկերի և տուրքերի մասին ՀՀ օրենքը:

Նշված դրական ձեռքբերումների հետ մեկտեղ բավական խստացված, իսկ երբեմն նաև ուղղակիորեն սնանկացնող էին հարկային օրենսդրության խախտումների համար սահմանված տնտեսական պատժամի-

⁶ Հարկային տեղեկատու, № 2, 1993 թ., էջ 7-23:

⁷ Հարկային տեղեկատու, № 5, 1994 թ., էջ 56-60:

⁸ Հարկային տեղեկատու, № 6, 1995 թ., էջ 275-280:

⁹ Նույն տեղում, էջ 61-82:

¹⁰ Հարկային տեղեկատու, № 1, էջ 17-18, 126, 127-128; № 2, էջ 250-252:

¹¹ Հարկային տեղեկատու, № 2, էջ 24-31; № 5, էջ 16-20; № 6, էջ 12-17; № 7, 1996 թ., էջ 57:

¹² Հարկային տեղեկատու, № 3, էջ 48-51; № 6, էջ 232; № 7, էջ 109-111:

¹³ Հարկային տեղեկատու, № 6, էջ 169-173:

ջոցները (չհաշված վարչական և քրեական պատասխանատվությունը), որոնք առաջանում էին եկամուտների հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ վարելու կամ եկամուտների մասին հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու և այլնի հետևանքով: Խստացված տնտեսական պատժամիջոցների սահմանումն ընդգծում է այդ շրջանում Կառավարության միանշանակ կողմնորոշվածությունը հարկային ֆիսկալ քաղաքականության իրականացման նկատմամբ, որը, սակայն, ցանկալի արդյունքներ չտվեց, քանի որ ապամոնտաժված պլանային տնտեսությունը խիստ դանդաղորեն էր վերաճում շուկայականի, երկիրը պատերազմական իրավիճակում էր, հարկատուները գրեթե չէին իրազեկվում հարկային օրենսդրության մեջ կատարվող փոփոխություններին, ընդհանուր առմամբ ցածր էր հարկային քաղաքականությունը կյանքի կոչողների մասնագիտական մակարդակը և այլն: Դեռ ավելին, հարկատուները պաշտպանված չէին օրենքով, քանի որ հարկերի և տուրքերի մասին օրենքով սահմանված էր, որ հարկային պետական մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում էին այդ անձինք, այսինքն՝ տարածքային հարկային տեսչություններին, որոնց որոշումները հարկատուն կարող էր (ոչ թե իրավունք ուներ) գանգատարկելու վերադաս հարկային մարմնին կամ դատարան: Այդ ամենի հետևանքով նաև շատ հարկատուներ դարձան անվճարունակ, շատ քաղաքացիներ, խուսափելով հարկային պարտավորությունների (որի գերակշիռ մասը վերաբերում էր տույժերին ու տուգանքներին) չվճարմամբ պայմանավորված քրեական պատասխանատվությունից, հեռացան հանրապետությունից (որոնց մասով սահմանափակվում էր նաև հարկման բազան), և շարունակում էր ցածր մնալ հարկային մուտքերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում¹⁴:

Հարկային մուտքերի կազմում այդ տարիներին բարձր էր ուղղակի հարկերի տեսակարար կշիռը¹⁵, որի համար, սակայն, հող էր նախապատրաստված հարկերի և տուրքերի մասին օրենքի 13-րդ հոդվածով, ըստ այդմ՝ հարկերի և տուրքերի վճարման հերթականության մեջ անհասկա-

¹⁴ Հարկային մուտքերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում կազմել է՝ 1995 թ.՝ 10.7%, 1996 թ.՝ 10.6% («Հայաստան, տնտեսական միտումներ, 1999 թվական, հոկտեմբեր», Ե., 2000, էջ 40):

¹⁵ Հարկային ընդհանուր մուտքերում ուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է. 1995 թ.՝ 58.5%, 1996 թ.՝ 40.4% («Հայաստան տնտեսական միտումներ...», էջ 40):

նախորեն առաջնահերթությունը վերապահված էր գույքային հարկերին (հողի հարկին, գույքահարկին և ճանապարհային հարկին)՝ հարկատուից «խլելով» այս կամ այն հարկատեսակի առաջնահերթ փոխանցման նախապատվության որոշման իրավունքը:

Հարկ է նշել նաև, որ հարկային օրենսդրության խախտումների համար սահմանված խստացված տնտեսական պատժամիջոցների հետևանքով այնքան շոշափելի չափերի հասավ հարկատուների հարկային պարտավորությունների «չարդարացված» բեռը (տույժերի ու տուգանքների մասով), որ նրանց ստացած եկամուտները երբեմն ամբողջությամբ նույնիսկ չէին բավարարում ժամկետանց հարկային պարտավորությունների մարմանը, և պարտաճանաչ էին համարվում այն հարկատուները, որոնք ժամանակին էին մարում ընթացիկ հարկային պարտավորությունները: Տնտեսական ակտիվության վրա հարկային պարտավորությունների «չարդարացված» բեռի տարիներ շարունակվող բացասական ազդեցության ներգործությունը չեզոքացնելու նպատակով կիրառված հարկային համաներումները չհանգեցրին հարկային ապառքների նշանակալի նվազման: Այսպես, «Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններին և անհատ ձեռներեցներին հարկային տույժերից ազատելու մասին» կառավարության 1996 թ. նոյեմբերի 20-ի հ. 369 որոշմամբ հարկային ապառքները մինչև 1996 թ. դեկտեմբերի 1-ը և դեկտեմբերի 20-ը մարող հարկատուներն ազատվեցին դրանց վճարումներն ուշացնելու համար հաշվարկված տույժերից՝ համապատասխանաբար 100 և 50 տոկոսներով: Սակայն այդ ընթացքում հարկային ապառքների նվազումը այդ նույն ժամանակահատվածում հաշվանցումների եղանակով պետական բյուջե մուտքագրված եկամուտների շուրջ կեսն էր: Ավելին, Կառավարության՝ 1997 թ. փետրվարի 25-ի «ՀՀ ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների կողմից հարկային ապառքների մարման պայմանագրային կարգի մասին» հ. 28 որոշմամբ նախատեսվեց 1997 թ. ընթացքում հարկային ապառքների մարմանը համամասնորեն հաշվարկված տույժերից նրանց ազատել: Սակայն տարվա ընթացքում հարկային ապառքներն աճեցին՝ հասնելով 1996 թ. նոյեմբերի 1-ի մակարդակին: Նման մեխանիզմներն իրենց անգործությունն են ցուցաբերել նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների առումով, երբ 1998 թ. դեկտեմբերին ընդունված օրենքով երրորդ համաներման միջոցով ապահովադիրներին հնարավորություն տրվեց որոշա-

կի ժամկետում ապառքների մարմամբ ազատվելու հաշվարկված տույժերից (որոնց մեծությունը երբեմն մինչև 20-25 անգամ գերազանցում էր ապառքի գումարը), որևէ դրական արդյունք չտվեց:

Կառավարության հարկային ու տուրքային օրենսդրությունն իր ձևավորման պահից սկսած մինչև օրս¹⁶ աչքի է ընկնում իրավասությունների ընդգծված կենտրոնացվածությամբ: Հարկային և տուրքային քաղաքականության ապակենտրոնացման միակ փորձը, որ արվել է մինչև «Տեղական հարկերի և վճարների մասին» օրենքի ընդունումը, եղել է 1992 թ. ապրիլի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հարկերի ու տուրքերի մասին» օրենքը, որի 6-րդ հոդվածով սահմանվել է. «Պատգամավորների տեղական խորհուրդների առաջարկությամբ կարող են սահմանվել տեղական հարկեր և տուրքեր միայն համապատասխան տարածքի բնակչությունից՝ բնակչության առանձին սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու համար և միայն տվյալ վարչատարածքային միավորմամբ այդ առիթով հանրաքվեի դրական արդյունքի դեպքում»: Այդպիսի փակուղային ձևակերպմամբ հարկային ու տուրքային քաղաքականություն իրականացնելու իրավասության փոխանցումը իշխանության ստորադաս մարմիններին հենց սկզբից դատապարտված էր անգործության: Եվ պատահական չէր, որ նշված օրենքի 6-րդ հոդվածի գործողության հինգ տարիների ընթացքում հանրապետությունում նշված հոդվածի կիրարկման գոնե մեկ փորձ անգամ չի կատարվել:

«Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» օրենքի ընդունումից (19.04.92 թ.) ուղիղ մեկ տարի հետո օրենսդրորեն նահանջ կատարվեց օրենքի 4-րդ հոդվածով բոլոր վճարողների միատեսակ ու միանման հարկման սահմանված սկզբունքից, և 1993 թ. ապրիլի 18-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով իրավունք վերապահվեց Կառավարությանը՝ ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ՝

¹⁶ Բացառությամբ տեղական տուրքերի ու վճարումների և այն էլ սկսած 26.12.1997 թվականից, երբ Ազգային ժողովն ընդունեց «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը, և տեղական տուրքերի ու վճարների բնագավառում իրականացվող քաղաքականությունը մասամբ փոխանցվեց տեղական ինքնակառավարման մարմիններին:

ա) առանձին վճարողների կամ վճարողների խմբի համար կիրառելու տուգանքների, տույժերի այլ չափեր, դրանց հաշվարկման, մուծման ու գանձման այլ կարգ, քան նախատեսված է հարկերի ու տուրքերի մասին օրենքով.

բ) ազատելու հարկերի ու տուրքերի մասին օրենքով նախատեսված տուգանքներից և տույժերից՝ լրացուցիչ կարգով համապատասխան բյուջեներ մուտքագրված դրանց ընդհանուր գումարի 40%-ի սահմաններում, ինչպես նաև հետաձգելու տուգանքների և տույժերի գանձման ժամկետը մեկ տարի ժամանակով:

«Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով (18.04.93) հանրապետությունում սկիզբ դրվեց հարկման համընդհանրության (կամ ինչպես օրենքում անվանվում է՝ միատեսակություն ու միանմանություն) սկզբունքի խախտմանը:

Հարկերի ու տուրքերի մասին օրենքով սահմանված դրույթներից մյուս շեղումն այն էր, որ գործնական կիրառություն չստացան «Հայաստանի Հանրապետությունում հարկերի և տուրքերի մասին» օրենքում (19.04.92 թ.) սահմանված և համաշխարհային պրակտիկայում տարածում ստացած այնպիսի հարկատեսակներ, ինչպիսիք են¹⁷ մասնագիտության հարկը (մասնագիտական որոշակի գործունեություն ծավալելու համար), ժառանգության և նվիրատվության հարկը (ժառանգության և նվիրատվության արժեքից), ինչպես նաև սոցիալական հարկը, որը որպես այդպիսին չգործեց, բայց բովանդակային առումով այն նվիրատվության հարկի նման տարրալուծվեց եկամտահարկի հետ¹⁸, իսկ բենզինի ու դիզելային վառելիքի վաճառքից և տրանսպորտային միջոցներից (ըստ դրանց հզորությունների) գանձվող ճանապարհային հարկերից առաջինն ընդհանրապես չգործեց, իսկ երկրորդը՝ բովանդակային առումով, տարրալուծվեց գույքահարկի հետ¹⁹:

Ինչ վերաբերում է բնապահպանական հարկին (բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման համար), ապա այն ընդհանրապես չգործեց և միայն հարկային քաղաքականության բարեփո-

¹⁷ Հարկային տեղեկատու, էջ 8:

¹⁸ Հարկային տեղեկատու, № 6, էջ 61-62:

¹⁹ Նույն տեղում, էջ 276:

խումների փուլում վերանվանվեց վճարի և օրենսդրական մակարդակով 1999 թ. հունվարի 1-ից կիրառության մեջ մտավ բնապահպանական և բնօգտագործման վճարների տեսքով²⁰, այսինքն՝ բնապահպանական գումարները հարկերի դաշտից տեղափոխվեցին վճարների դաշտ: Դրա հետ մեկտեղ, հարկային քաղաքականության բարեփոխումների փուլում 1998 թ. մարտի 25-ից կիրառության մեջ մտավ ճանապարհային վճարների համակարգը²¹, որոնց հաշվարկման հիմքում ընկած են ոչ թե տրանսպորտային միջոցների հզորությունները (ինչպես ճանապարհային հարկի, գույքահարկի մասով), այլ դրանց նստատեղերի թիվը (ավտոբուսների և թեթև մարդատար ավտոմեքենաների մասով) և բեռնատարողությունները (բեռնատար ավտոմեքենայի և ավտոգնացքների մասով):

Այսպիսով, հարկային օրենսդրության ձևավորման կամ առաջին փուլում հանրապետությունում գործել են վեց հարկատեսակներ՝ ուղղակի հարկերից՝ շահութահարկը, եկամտահարկը, գույքահարկը և հողի հարկը, իսկ անուղղակի հարկերից՝ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքով ավելացված արժեքի հարկը սահմանվեց որպես իրացված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների արժեքի և սահմանված կարգով արտադրության ու շրջանառության ծախսերի (այն ծախսերը, որոնց դիմաց մատակարարների օգտին հաշվարկվել է ավելացված արժեքի հարկ) արժեքի տարբերության չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար, իսկ որպես հարկ վճարողներ դիտարկվեցին բոլոր ձեռնարկությունները²² (անկախ սեփականության ձևից), ինչպես նաև անհատ ձեռներեցները, բայց տարեկան եկամուտների այն մասով, որը հարկի վճարման պահին գերազանցում է 75 նվազագույն աշխատավարձի չափը²³:

«Ակցիզային հարկի մասին» օրենքի ընդունմամբ ենթաակցիզային ապրանքներ դիտարկվեցին գինու և օղու արտադրանքը, շոկոլադը, ծխա-

²⁰ «Հարկեր, տուրքեր և վճարներ» Երևան, «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ, 2002, էջ 282-292:

²¹ Նույն տեղում, էջ 270-281:

²² Հարկային տեղեկատու, № 4, էջ 14:

²³ ՀՀ կառավարության 7.10.1993 թ. «Անհատ ձեռներեցի տարեկան եկամտից (հասույթից) ավելացված արժեքի հարկ սահմանելու մասին» № 513 որոշումը (Հարկային տեղեկատու, № 4, էջ 45):

խոտը, մորթին ու մորթեղենը, ավտոդողերը, բարձրորակ ճենապակյա, բյուրեղապակյա և ոսկերչական իրերը, գորգերն ու գորգագործական արտադրանքը և բնական կաշվից հագուստը, որոնց գծով հարկման օբյեկտ հանդիսացավ դրանց իրացման շրջանառությունը, այդ թվում՝ դրանց իրացումը նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, որը վկայում է հանրապետության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի մնացած հանրապետությունների տնտեսական և օրենսդրական (նաև հարկային) ոչ լիարժեք անկախության մասին, մանավանդ որ նախկին ԽՍՀՄ անդամ չհանդիսացող պետություններից այդպիսի ապրանքների ներմուծումը (բացառությամբ շոկոլադի և ոսկերչական իրերի) հարկվում էր ներմուծման արժեքի նկատմամբ 5-10 տոկոս²⁴ դրույքաչափով՝ պաշտպանելով ներքին արտադրողի շահը, իսկ նախկին ԽՍՀՄ տարածքից դուրս արտահանվող այդպիսի ապրանքների իրացումը ակցիզային հարկով չէր հարկվում՝ խթանելով հանրապետությունում արտադրված այդպիսի ապրանքների իրացումը նախկին ԽՍՀՄ տարածքից դուրս²⁵:

Սակայն ինչպես ավելացված արժեքի հարկի, այնպես էլ ակցիզային հարկի բնագավառում ՀՀ իշխանությունները հետապնդում էին առավել շատ ֆիսկալ նպատակներ, քանի որ մի կողմից, ՀՀ օրենսդիր մարմինը ընդլայնում էր այդպիսի ապրանքատեսակների ցանկը (ձեռագործ գորգեր, զարեջուր, խաղողի գինիներ, գինեյուր, զարդեղեն կամ բիժուտերիա, մորթի և մորթեղեն՝ 1995 թ. հունվարի 1-ից²⁶, և ձկան խավիար, մարդատար ավտոմեքենաներ, ներմուծվող բենզին՝ 1995 թ. դեկտեմբերի 1-ից²⁷), իսկ մյուս կողմից Կառավարությունը սահմանում էր²⁸ բարձրացված դրույքաչափեր, որոնց մեծությունը կազմում էր այդ ապրանքատեսակների բացթողման գների 5-70 տոկոսը: Դեռ ավելին, եղել են նաև դեպքեր, երբ Կառա-

²⁴ ՀՀ կառավարության 19.10.1992 թ. «Ներմուծվող ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերի մասին» № 519 որոշում (Հարկային տեղեկատու, № 3, էջ 46):

²⁵ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք (նույն տեղում, էջ 21):

²⁶ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (Հարկային տեղեկատու, № 6, էջ 232):

²⁷ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (Հարկային տեղեկատու, էջ 111):

²⁸ Հարկադրույքների սահմանման իրավասությունը ՀՀ կառավարությանը վերապահված էր (ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ) «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով (06.06.92 թ.):

վարությունը, գերազանցելով իրեն վերապահված իրավասությունները, ակցիզային հարկի դրույքաչափեր է կիրառել այնպիսի ապրանքատեսակների գծով, որոնք Գերագույն խորհուրդը դեռևս ընդունած չի եղել որպես ենթաակցիզային ապրանքատեսակներ: Խոսքը մասնավորապես վերաբերում է գինեկության (սեղանի, թնդեցված աղանդերային և կոնյակի) և ոչխարի մորթուց կարված բանվորական ու զինվորական կիսավերարկուններին, որոնց գծով Կառավարությունը 12.11.1992 թ. և 19.04.1993 թ. համապատասխան որոշումներով սահմանել էր ակցիզային հարկի համապատասխանաբար 25 և 0 տոկոսի դրույքաչափեր, այն դեպքում, երբ դրանք, ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքներով ենթաակցիզային ապրանքների խմբում են ընդգրկվել. գինեկութ՝ 1995 թ. հունվարի 1-ից²⁹, իսկ ոչխարի մորթուց կարված բանվորական և զինվորական կիսավերարկուններ՝ 1995 թ. դեկտեմբերի 1-ից³⁰: Երևի թե դա էր նաև պատճառը, որ ՀՀ Գերագույն խորհուրդը 1995 թ. նոյեմբերի 2-ից Կառավարությանը զրկեց ակցիզային հարկի դրույքաչափերի սահմանման իրավասությունից և օրենսդրական մակարդակով սահմանեց ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների տոկոսային դրույքաչափերը³¹ դրանք ենթարկելով որոշակի փոփոխությունների:

ՀՀ հարկային օրենսդրության ձևավորման կամ առաջին փուլի հիմնական բնորոշ գծերն են՝

- հայրենական հարկային օրենսդրական դաշտի ձևավորումը, որն ընդհանրություններ ուներ նախկին ԽՍՀՄ հարկային օրենսդրության հետ,
- հարկային իրավասությունների կենտրոնացվածությունը,
- հարկատուների միատեսակ ու միանման հարկման օրենսդրորեն սահմանված սկզբունքից շեղումը և հարկման համընդհանրության սկզբունքի խախտումը,
- հարկային մուտքերում ուղղակի հարկերի գերակշռումը,
- հարկային օրենսդրության խախտման համար սահմանած բավականին խստացված տնտեսական պատժամիջոցների կիրառումը,

²⁹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (Հարկային տեղեկատու, № 6, էջ 232):

³⁰ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (Հարկային տեղեկատու, № 7, էջ 109-111):

³¹ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (նույն տեղում, էջ 109-111):

- հարկատուներից կանխավճարների գանձման պրակտիկայի օրենսդրական ամրագրումը,
- հարկային օրենսդրությունում հաճախակի կատարվող փոփոխությունները և դրանց մասին հարկատուներին չիրազեկելը,
- օրենքի առջև հարկատուների պաշտպանված չլինելը,
- հարկային համաներումների չհաջողված փորձերը,
- և այլն:

Հարկային օրենսդրության ձևավորման երկրորդ փուլի կամ բարեփոխումների սկիզբը դրվել է 1997 թ., երբ ընդունվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքը³²: Ըստ այդմ՝ ՀՀ օրենքով և դրանում կատարված փոփոխություններով՝

- հարկի սահմանումը հարստացվել է նոր տարրերով, ներմուծվել է «հարկային գործակալի»³³ ինստիտուտը, սահմանվել է «հարկային օրենսդրություն» եզրույթի էությունը, հստակեցվել է հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի «հիերարխիան»,
- հարկատուների շահերի պաշտպանությունն ամրագրվել է այնպիսի նորմերի սահմանմամբ, ինչպիսիք են հարկի սահմանումը կամ վերացումը միայն ֆինանսական տարվա սկզբից կատարելը, կրկնակի հարկման բացառումը,
- սահմանվել են հարկերի միայն այն տեսակները, որոնց մասով արդեն ձևավորված էր օրենսդրական դաշտը (շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ և հողի հարկ)՝ որդեգրելով նոր հարկատեսակներ չկիրառելու և գործող հարկատեսակների հաշվարկման ու գանձման մեխանիզմները բարեփոխելու քաղաքականություն,
- հարկից ազատման և վճարողին հատուցումներ հարկային արտոնությունները փոխարինվել են տույժերից և տուգանքներից ազատելու, նվազեցման, վճարման ժամկետների հետաձգման արտոնություններով,

³² Հարկային տեղեկատու, ՀՀ ՀՏ, Ոսումնամթոթական կենտրոն, № 14, 1997 թ., էջ 1-7:

³³ Այն հարկ վճարողներին եկամուտներ վճարող իրավաբանական անձն է, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունը, ինչպես նաև անհատ ձեռներեցը, որի վրա օրենքի համաձայն դրված են հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս նրանց եկամուտներից հարկերը հաշվարկելու, պահելու և բյուջե վճարելու պարտականությունները:

որոնք պակաս չափով էին բխում հարկատուների շահերից, քանի որ առաջին դեպքում զրոյացվում էր հարկային պարտավորությունների հաշվարկման բազան,

- սահմանվել է «հարկային պարտավորություն» ինստիտուտի կազմը,
- հարկային արտոնության, հարկի դրույքաչափի և վճարման կարգի սահմանման իրավասությունը վերապահվել է ՀՀ Ազգային ժողովին, այն էլ միայն առանձին հարկատեսակների մասին օրենքի ընդունման ժամանակ,
- օրենսդրական մակարդակով տարանջատվել են հաշվապահական հաշվառումը և հարկային հաշվառումը (օրենքում նշված է «այլ հաշվառում և (կամ) գրանցումներ»),
- մեղմացվել է հարկերը ժամանակին չվճարելու համար կիրառվող տույժերի համակարգը,
- միասնականացվել են հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար գանձվող տույժի 0.1 և 0.3 տոկոսաչափերը և դարձվել է 0.2%³⁴, որն էլ հետագայում նվազեցվել և 2001 թ. հունվարի 1-ից սահմանվել է 0.15%,
- մեղմացվել է հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները (հայտարարագրերը) հարկային մարմիններ ուշ ներկայացնելու համար սահմանված պատժամիջոցը. օրական 5%-ից իջեցվել է 0.3%, որը կիրառվում է միայն 15-օրյա ժամկետն անցնելուց հետո, և ոչ ավելի, քան հարկի գումարի չափն է, իսկ օրենսդրական այս դրույթը 2004 թ. հունվարի 26-ից տարածվել է նաև հարկային գործակալների վրա³⁵:

Նշված ձեռքբերումների հետ մեկտեղ «Հարկերի մասին» նոր օրենքը զերծ չէ նաև էական բացթողումներից ու թերություններից, որոնց մասնավորապես վերաբերում են՝

ա) հարկատուի նկատմամբ պետության արտոնյալ կարգավիճակի ամրագրումը, քանի որ հարկ վճարողներին պարտավորեցված է ստուգման ակտով արձանագրված հարկային պարտավորությունները բյուջե փոխանցելու տասնօրյա ժամկետ (հոդ. 29), իսկ հարկատուի՝ բյուջե ավելի

³⁴ «Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (Հարկային տեղեկատու, № 28, 1999, էջ 3):

³⁵ Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Ե., 2004, էջ 26:

մուծված գումարը բյուջեից հարկատուին վերադարձնելու ժամկետը սահմանված է 30 օր (հոդ. 37).

բ) օրենսդրության դրույթների հակասական, տարակարծիք և վիճաբանության տեղիք տվող մեկնաբանությունների հետևանքով հարկատուների և հարկային մարմինների միջև ծագող խնդիրների լուծման գործընթացի կարգավորված չլինելը, որը, հոգուտ հարկ վճարողի, բարեբախտաբար իր լուծումն ստացավ. մեկնաբանման առումով՝ 2001 թ. հունվարի 1-ից³⁶, իսկ կիրառման առումով՝ 2004 թ. հունվարի 26-ից³⁷.

գ) հարկման օբյեկտները հարկումից թաքցնելու համար սահմանված տնտեսական բավական խիստ պատժամիջոցների ամրագրումը տուգանքների (հոդ. 25, 27, 28) ձևով, ինչպես նաև վարչական տույժերի և քրեական պատիժների սահմանումը, որոնք, թեպետ հետագայում, օրենքում կատարված փոփոխություններով ու լրացումներով³⁸, մասամբ մեղմացվել են, սակայն շարունակում են պահպանել խստացվածության մակարդակ, քանի որ օրենքի նշված հոդվածները «հարստացվել են» տուգանքի նոր տեսակներով³⁹, իսկ 2004 թ. հունվարի 26-ից դրանք տարածվել են նաև հարկային գործակալների վրա⁴⁰.

դ) հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողություններից հարկատուների ոչ լիարժեք պաշտպանվածությունը, քանի որ նոր օրենքով ևս ամրագրված է, որ տարածքային հարկային տեսչությունների գործողությունները հարկատուն կարող է գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթակա են նրանք (հոդ. 36):

«Հարկերի մասին» նոր օրենքի կիրառությունից հետո ընդունվել են անուղղակի հարկերը կարգավորող «Ավելացված արժեքի հարկի մասին» (14.05.97 թ.)⁴¹, «Ակցիզային հարկի մասին» (23.06.97 թ.)⁴² և ուղղակի

³⁶ «Հարկեր, տուրքեր և վճարներ»: ՀՀ ՊԵՆ, «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ, Ե., 2002, էջ 6:

³⁷ Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, էջ 19:

³⁸ Հարկային տեղեկատու, 1999, էջ 2-3:

³⁹ «Հարկեր, տուրքեր և վճարներ»: ՀՀ ՊԵՆ, «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ, էջ 18:

⁴⁰ Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, էջ 26-27:

⁴¹ Հարկային տեղեկատու, № 15, 1997, էջ 1-12:

⁴² Հարկային տեղեկատու, № 16, 1997, էջ 2-4:

հարկերը կարգավորող «Շահութահարկի մասին» (30.09.97 թ.)⁴³, «Եկամտահարկի մասին» (27.12.97 թ.)⁴⁴ և «Գույքահարկի մասին» (27.12.97 թ.)⁴⁵ ՀՀ օրենքները, որոնց հաջորդել են որոշակի փոփոխություններ ու լրացումներ:

Հարկային օրենսդրության բարեփոխումների փուլում «Ավելացված արժեքի հարկի մասին» նոր օրենքի ընդունմամբ արտահանման և ներմուծման հարաբերություններում կիրառվել է «Ըստ նշանակման վայրի» սկզբունքը, այսինքն՝ ցանկացած արտահանման (որը հետագայում օրենքում կատարված փոփոխությամբ ու լրացմամբ փոխարինվեց «արտահանում շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանմամբ) ժամանակ կիրառվում է 0 տոկոս դրույքաչափ (հարկի չհաշվարկում)⁴⁶ և ցանկացած երկրից ներմուծման դեպքում 20 տոկոս դրույքաչափի կիրառում⁴⁷, որը տարածվել է նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետությունների հետ հարաբերությունների վրա (եթե ՀՀ առանձին միջազգային պայմանագրերով այլ կարգ չի սահմանվում)՝ դրական ազդեցություն ունենալով ԱՊՀ անդամ երկրների տնտեսությունների հետ հանրապետության առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի վրա:

ԱԱՀ-ի «ըստ նշանակման վայրի» սկզբունքի կիրառման հետ կապված հաջորդ կարևոր քայլն այն է, որ ՀՀ տարածք ապրանքների ներմուծման դեպքում նախատեսվել է ԱԱՀ-ի գանձում ՀՀ մաքսային մարմինների կողմից (ապրանքները ՀՀ տարածք մուտք գործելիս)⁴⁸, իսկ մինչև այդ ներմուծված ապրանքներից ԱԱՀ գանձվում էր հանրապետության տարածքում՝ դրանք իրացնելուց հետո: Հետագայում օրենքում կատարված փոփոխությամբ ու լրացմամբ ԱԱՀ-ով հարկվող գործարք է դիտարկվել «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը⁴⁹: Ընդ որում, ներմուծվող ապրանքների գծով ԱԱՀ-ը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ (ներմուծվող

⁴³ Հարկային տեղեկատու, № 20, 1997, էջ 1-16:

⁴⁴ Հարկային տեղեկատու, № 21, 1998, էջ 1-12:

⁴⁵ Հարկային տեղեկատու, № 25, 1998, էջ 2-8:

⁴⁶ Հարկային տեղեկատու, № 15, էջ 6:

⁴⁷ Նույն տեղում, էջ 2:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ «Հարկեր, տուրքեր և վճարներ»: ՀՀ ՊԵՆ «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ, էջ 99:

ենթաակցիզային ապրանքների համար՝ մաքսային արժեքի և ակցիզային հարկի գումարի նկատմամբ), որի նորամուծությունը բացասական ազդեցություն է ունենում տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հնարավորությունների ու գործարար ակտիվության զարգացման վրա, քանի որ նրանք մինչև ապրանքի իրացումը վճարում են հարկեր՝ փաստորեն «անտոկոս վարկ» տրամադրելով պետությանը:

Սակայն պետք է փաստել նաև, որ ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկումը չտարածվեց այն ապրանքների վրա, որոնց գծով սահմանված էր 0 տոկոս մաքսատուրք⁵⁰, որոնց ԱԱՀ-ով հարկումը (եթե, իհարկե, գործարքը համարվում էր հարկվող) կատարվում է հանրապետությունում դրանց իրացումից հետո: Ներմուծման հետ կապված մյուս առանձնահատկությունը վերաբերում է ֆիզիկական անձանց, որոնց ներմուծած ապրանքները ներմուծման պահին ևս հարկվում են ԱԱՀ-ով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք չեն գերազանցում ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված քանակային կամ արժեքային համապատասխան չափերը: Բացի վերոհիշյալներից՝ ԱԱՀ վճարողներ դիտարկվել են նաև այն բոլոր ֆիզիկական անձինք⁵¹, որոնք իրականացնում են օրենքով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (օրենքի 6-րդ հոդվածի համաձայն իրականացվող ապրանքների մատակարարումը, ծառայությունների մատուցումը, անհատույց և մասնակի հատուցմամբ սպառումը, ապրանքների ներմուծումը⁵²), որն այդ հարկատեսակի հարկման բազան ընդլայնելու կարևոր քայլ է:

Դրանց հետ մեկտեղ՝ մանրածախ առևտրի և հասարակական սննդի ձեռնարկությունների, ինչպես նաև անհատ ձեռներեցների վրա նույնպես տարածվել է ԱԱՀ-ի հաշվարկման ընդհանուր սկզբունքը, այսինքն՝ որպես իրացումից հաշվարկված (ստացված) և մատակարարների (ներմուծման դեպքում՝ մաքսային մարմինների կողմից գանձված) հարկային հաշիվներում առանձնացված հարկի գումարների տարբերություն՝ այն դեպքում, երբ մինչև այդ մանրածախ առևտրի ձեռնարկություններից այն հաշվարկվում էր որպես ապրանքների ձեռքբերման և վաճառքի գների (հարկը ներառող) տարբերություն, իսկ անհատ ձեռներեցներից՝ նվազագույն աշխա-

⁵⁰ Հարկային տեղեկատու, № 15, էջ 2:

⁵¹ Հարկային տեղեկատու, № 15, էջ 1:

⁵² Նույն տեղում, էջ 2: Հարկեր, տուրքեր և վճարներ, էջ 98-99:

տավարձի 75-ապատիկ չափը գերազանցող համախառն եկամտին բաժին ընկնող զուտ եկամտից:

Հարկային արտոնությունների բնագավառում դադարել են գործել հարկից ազատման բազմաբնույթ արտոնություններ (բնակչությանը մատուցվող կոմունալ ծառայությունները, պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գիտահետազոտական, նախագծային-հետախուզական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքները, խաղատների և խաղային ավտոմատների գործունեությունը, կրթության բնագավառի ուսումնական հաստատությունների սննդի օբյեկտների սեփական արտադրության արտադրանքը), իսկ դրանց փոխարեն սահմանվել են հարկից ազատման այլ և միևնույն ժամանակ նախկինի համեմատ հարկման սահմանափակ բազա ունեցող այլ արտոնություններ (գիտահետազոտական աշխատանքները, ռադիո և սպառողների կողմից չհատուցվող հեռուստատեսային հաղորդումները, թերթերի և ամսագրերի իրացման և դրանց վաճառքի հետ կապված գործառնությունները, մանկական և դպրոցական գրականության, գիտական ու գիտամեթոդական գրականության իրացումը, անասնաբուժական դեղամիջոցների և թունաքիմիկատների իրացումը և այլն⁵³):

Վերոհիշյալ բարեփոխումների արդյունքում աճել են ոչ միայն ավելացված արժեքի հարկի ծավալները, այլև դրանց տեսակարար կշիռները հարկային եկամուտներում և համախառն ներքին արդյունքում: Բավական է նշել, որ ավելացված արժեքի հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է՝ 1997 թ.՝ 37.0%, 1998 թ.՝ 49.4%, 1999 թ.՝ 45.8%, 2000 թ.՝ 46.5%, իսկ 2001թ.՝ 51.3%: համախառն ներքին արդյունքում այն կազմել է՝ 1997 թ.՝ 4.6%, 1998, 1999 թթ.՝ 7.0-ական տոկոս, 2000 թ.՝ 6.5%, իսկ 2001 թ.՝ 7.0%, իսկ անուղղակի հարկերում, որը կազմել է՝ 1997 թ.՝ 67.1%, 1998 թ.՝ 75.0%, 1999 թ.՝ 75.9%, 2000 թ.՝ 72.0%, իսկ 2001 թ.՝ 71.9%⁵⁴:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ՝

▪ վերացվել է ԱԱՀ-ի գծով գանձվող կանխավճարների համակարգը, և բոլոր հարկ վճարող անձանց համար սահմանվել է հարկի բյուջե վճարման միայն մեկ ժամկետ (եռամսյակը մեկ մինչև հաշվետու եռամսյակին

⁵³ Հարկային տեղեկատու, № 15, էջ 4-5:

⁵⁴ Հաշվարկների համար հիմք է հանդիսացել Հայաստանի վիճակագրական տարեգիրքը, Ե., 2002, էջ 217, 392:

հաջորդող ամսվա 25-ը) և հարկի հաշվարկները միայն եռամսյակային կտրվածքով ներկայացնելու ժամկետ⁵⁵ (մինչև այդ, կախված ԱԱՀ-ի ծավալներից, հաշվարկները ներկայացվում էին նաև ամսական կտրվածքով.

▪ սահմանվել է ԱԱՀ վճարող անձանց համար ԱԱՀ-ով չհարկվող նվազագույն (շեմ) 1.0 մլն դրամի չափ⁵⁶ (այն չէր տարածվում ՀՀ տարածք ապրանքներ ներմուծողների վրա՝ ներմուծման պահին հարկը մաքսային մարմինների կողմից գանձելու պատճառով), որն օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների հետևանքով դարձել է 3 մլն դրամ⁵⁷:

Չհարկվող նվազագույնը որոշվում է յուրաքանչյուր եռամսյակին նախորդող տարվա կամ ավելի կարճատև ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս) ընթացքում իրականացված հարկվող գործարքներից ստացված հասույթի հիման վրա.

▪ կիրառվող հաշվարկային փաստաթղթերը փոխարինվել են հատուկ հաշվարկային փաստաթղթերով՝ «հարկային հաշիվների» տեսքով⁵⁸, որոնք հարկի հաշվարկման ու հաշվանցման հիմք հանդիսացող միակ փաստաթղթերն են: Սակայն դրանք, ցավոք, չդիտարկվեցին որպես խիստ հաշվառման փաստաթղթեր.

▪ ՀՀ-ում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված և «հարկ վճարողի հաշվառման համար» չունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից ապրանքների մատակարարմանը կամ ծառայությունների մատուցմանը ՀՀ-ում ԱԱՀ վճարող անձանց մասնակցելու և նրանց անունից կամ հաշվին հանդես գալու դեպքերում ՀՀ-ում ԱԱՀ վճարող նշված անձինք դիտարկվել են այդ ապրանքների մատակարարներ կամ ծառայության մատուցողներ և նշված օտարերկրյա անձանց փոխարեն սկսել են կրել հարկային պարտավորություն ԱԱՀ-ի վճարման գծով⁵⁹ (մինչև այդ ԱԱՀ վճարողներ էին օտարերկրյա անձինք).

⁵⁵ Հարկային տեղեկատու, № 15, էջ 10:

⁵⁶ Նույն տեղում, էջ 1:

⁵⁷ Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, էջ 33:

⁵⁸ Հարկային տեղեկատու, № 15, էջ 7:

⁵⁹ Նույն տեղում, № 15, էջ 3:

▪ հարկի գրոյական դրույքաչափի կիրառման և ԱԱՀ-ից ազատելու⁶⁰ դաշտը ընդլայնվել է, իսկ օրենքի խախտումների համար կիրառվող պատասխանատվության չափը մեղմացվել է, որոնց վերաբերում են հարկային հաշիվների սխալ լրացման դեպքում (հարկը առանձին տողով չնշելը) հարկի գումարի 10%-ի (նախկին 20%-ի դիմաց), հարկվող օբյեկտը թաքցնելու դեպքում այդ գումարի 30%-ի (նախկին 50%-ի դիմաց) չափով տուգանքի կիրառումը և այլն⁶¹:

ՀՀ հարկային օրենսդրության բարեփոխումների կամ ձևավորման երկրորդ փուլի բնորոշ գծերն են՝

▪ հարկային գործակալի ինստիտուտի ներմուծումը, հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի «հիերարխիայի» և հարկային պարտավորության ինստիտուտի կազմի հստակեցումը.

▪ կրկնակի հարկման բացառման, ինչպես նաև հարկատուների շահերի պաշտպանության օրենսդրորեն ամրագրումը՝ կապված հարկի սահմանումը կամ վերացումը միայն ֆինանսական տարվա սկզբից կատարելու պարտադիր նորմի սահմանման հետ.

▪ հարկից ազատման հարկային արտոնության վերացումը և դրա փոխարինումը հարկային արտոնությունների նոր տեսակներով (տույժերից ու տուգանքներից ազատում, նվազում ու դրանց վճարման ժամկետների հետաձգում).

▪ հարկային հաշվառումը և հաշվապահական հաշվառումը օրենսդրորեն տարանջատելը.

▪ հարկային արտոնության, հարկի դրույքաչափի և վճարման կարգի սահմանման իրավասությունից Կառավարությանը զրկելը.

▪ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տույժերի համակարգի մեղմացումը և տուգանքների համակարգի խստացումը.

▪ հարկատուի նկատմամբ պետության արտոնյալ կարգավիճակի օրենսդրորեն ամրագրումը.

▪ հարկատուների և հարկային մարմինների միջև ծագող խնդիրների լուծման գործընթացի կարգավորումը հօգուտ հարկ վճարողի՝ կապված օրենսդրական դրույթների տարակարծիք մեկնաբանությունների դեպքում

⁶⁰ Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, էջ 40:

⁶¹ Հարկային տեղեկատու, № 15, էջ 11-12:

հոգուտ հարկատուի խնդիրը լուծելու հետ.

- հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողություններից հարկատուների ոչ լիարժեք պաշտպանվածությունը.

- արտահանման-ներմուծման հարաբերություններում՝ «ըստ նշանակման վայրի» սկզբունքի համատարած կիրառումը.

- ներմուծման դեպքերում ավելացված արժեքի հարկը ներմուծման պահին գանձելու նորմի օրենսդրորեն ամրագրումը.

- ավելացված արժեքի հարկ վճարողների ցանկի ընդլայնումը այն ֆիզիկական անձանց մասով, որոնք իրականացնում են ԱԱՀ-ով հարկվող գործարքներ.

- ԱԱՀ-ի հաշվարկման ընդհանուր սկզբունքի տարածումը նաև մանրածախ առևտրի, հասարակական սննդի ձեռնարկությունների և անհատ ձեռնարկատերերի վրա.

- պլանային տնտեսությանը բնորոշ հարկային արտոնությունների նվազեցումը.

- ԱԱՀ-ի գծով կանխավճարների համակարգի վերացումը, հարկի բյուջե վճարման միայն եռամսյակային ժամկետի, ինչպես նաև չհարկվող շեմի և հարկային հաշիվների սահմանումը.

- շահութահարկի գծով հարկ վճարողների բաժանումը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ անձանց, հարկվող շահույթի որոշման ժամանակ օգտագործվող եկամուտների, ծախսերի և այլ հասկացությունների օրենսդրորեն պարզեցումն ու հստակեցումը, օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին հարկային արտոնության վերապահումը, շահութահարկի գումարի տարեկան կտրվածքով որոշումը, կանխավճարները միայն ամիսը մեկ կատարելը.

- եկամտահարկի գծով ռեզիդենտ հասկացության, համախառն եկամտի կազմի ու համախառն եկամտից կատարվող նվազեցումների օրենսդրորեն հստակ սահմանումը.

- եկամտահարկի հաշվարկման գծով ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հարկատուների համար անհավասար հարկման դաշտի ձևավորումը:

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА НАЛОГОВОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА

АРУТЮНЯН В.Л., АРУТЮНЯН Т.В.

Резюме

Налоговые реформы как инструменты управления государственными финансами в разные периоды экономического развития интерпретировались по тем или иным особенностям. В частности, общий характер налогового законодательства в Армении заключается в том, что налоговая политика в Республике Армения в целом основана на налоговой политике и налоговом законодательстве бывшего СССР.

GENERAL NATURE OF TAX LEGISLATION OF RA

V. HARUTYUNYAN, T. HARUTYUNYAN

Abstract

Tax reforms as tools of public finance management have been interpreted at different times by certain peculiarities. Particularly, the general character of the tax legislation in Armenia is that the tax policy in the Republic of Armenia is mainly based on the fiscal policy and the former USSR tax legislation.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մ.Վ., ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գ.Մ.

ՀՀ հարկային օրենսգրքի՝ ուժի մեջ մտնելով /01.01.2018 թ./ երկրի տնտեսության մեջ նկատվեցին գնաճային երևույթներ, որոնց արձագանքեցին իրավասու պետական մարմինները¹: Մասնավորապես, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը /այսուհետև՝ Հանձնաժողով/, ուսումնասիրելով բենզինի ու դիզելային վառելիքի ապրանքային շուկաներում 2018 թ. հունվարի 1-ից գնաճային երևույթները, եզրակացրել է, որ դրանք պայմանավորված են միայն ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխությամբ ու դիզելառելիքի իրացման՝ ավելացված արժեքի հարկի արտոնության վերացմամբ, և այդ շուկաներում «չարաշահման մասին խոսք լինել չի կարող»²: Տեսնենք, թե որքանով է հիմնավոր պետական մարմնի այդ եզրակացությունը: Մինչև այդ շուկաներում 2018 թ. հունվարի 1-ից գնաճին անդրադառնալը, նախ, փորձենք գնահատել դրանցում մրցակցության տեսանկյունից շուկաների մի քանի պարամետրերի, այն է՝ շուկաների մասնակից ֆիրմաների կազմի, թվի և բաժինների, ինչպես նաև համակենտրոնացման մակարդակների փոփոխությունը 2006-2016 թթ.:

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ի տվյալները, բենզինի և դիզելառելիքի շուկաներում էապես փոփոխվել են թե՛ տնտեսավարողների թիվը, թե՛ դրանց կազմն ու բաժինների մեծությունը: Տասը տարում ի հայտ է եկել մի տնտեսավարող սուբյեկտ («Սիփիէս օյլ քորփորեյշն» ՍՊԸ), որը 2006 թ. շուկաներում ունեցած բաժիններով առաջին եռյակում չի եղել (նույնիսկ 5% բաժին չի ունեցել) և հանկարծ դարձել է այդ շուկաներում առաջա-

¹ Ս.թ. հունվարի 23-ին Ազգային ժողովում փորձագետների մասնակցությամբ քննարկում էր կազմակերպվել գնաճի պատճառների և դրա զսպման մեխանիզմների շուրջ:

² Տե՛ս ՀՀ մրցակցային մարմնի պատասխանը ՀՅԴ-ին. http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1.

տարը: Արդար մրցակցության պայմաններում դա անհնար կլիներ. Հանձնաժողովը պարտավոր էր ուսումնասիրել, վերլուծել և գնահատական տալ դրան, սակայն պետական մարմինը այդ հարցին երբևիցե չի անդրադարձել³:

Հանձնաժողովը 2018 թ. իր տարեկան գործունեության ծրագրում այդ ապրանքային շուկաներում գների փոփոխությունները մեկնաբանել է որպես արտաքին տնտեսական գործոններով պայմանավորված օբյեկտիվ գործընթաց: Միայն այն փաստը, որ «2017 թ. հունվարին 2016 թ. սեպտեմբերի համեմատ ներմուծված 1լ բենզինի ձեռքբերման գինը նվազել է 50 դրամով, նույն չափով նվազելով մանրածախ գինը», կամ «2017 թ. փետրվարին բենզինի ձեռքբերման գինը բարձրացել է 50 դրամով, որի հետևանքով մանրածախ վաճառքի գները բարձրացել են գրեթե 40 դրամով»⁴, պետք է Հանձնաժողովի համար ահազանգի առիթ դառնար: Սակայն պետական մարմինը առանց հիմնավորման եզրակացրել է, որ բենզինի մանրածախ գների փոփոխությունները համարժեք են ձեռքբերման գների փոփոխություններին, և տնտեսավարողների կողմից չարաշահում չկա: Մեր կարծիքով, Հանձնաժողովը այդ վերլուծության մեջ դրսևորել է կամ մասնագիտական լուրջ թերացում և անփութություն, կամ ստանձնել տնտեսավարողների չարաշահումներն արդարացնելու և «չտեսնելու» պարտականություն: Երկու դեպքում էլ գործ ունենք հարկատուներիս հաշվին գործող պետական մարմնի՝ իր գործառույթները լիարժեք չկատարելու ամենաթողության հետ: Այդ մասին լրացուցիչ անգամ վկայում է ս.թ. հունվարի 1-ից ակցիզային հարկի նոր դրույքաչափերի և դիզվառելիքը ավելացած արժեքի հարկով հարկելու հետևանքով գնաճի մեկնաբանության և տնտեսավարողների գործողությունները այդ փոփոխություններով արդարացնելու փորձը:

³ Տե՛ս ՀՀ ՏՄՊԴՀ-ի 2006 և 2009 թթ. տարեկան գործունեության հաշվետվությունները, 2018 թ. տարեկան գործունեության ծրագիրը և այդ շուկաներում գնաճի վերաբերյալ Հանձնաժողովի մեկնաբանությունը. http://competition.am/uploads/resources/Report_2006_Vo_13_11_04_07.pdf, http://competition.am/uploads/resources/Report_2009_vo52.pdf, http://competition.am/uploads/resources/Annual_Program_2018.pdf, http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1.

⁴ Տե՛ս ՀՀ ՏՄՊԴՀ-ի 2009 թ. տարեկան գործունեության հաշվետվությունները, 2018 թ. տարեկան գործունեության ծրագիրը՝ http://competition.am/uploads/resources/Annual_Program_2018.pdf:

Աղյուսակ 1

«Բենզին» և «դիզելային վառելիք» ապրանքային շուկաների մի քանի բնութագրական ցուցանիշների դինամիկան 2006-2016 թթ.

Ապրանքային շուկայի անվանումը	2006				2016 *			
	Ֆիրմաների թիվը	Համակենտրոնացման մակարդակը, %	Առաջատար ֆիրմաների		Ֆիրմաների թիվը	Համակենտրոնացման մակարդակը, %	Առաջատար ֆիրմաների	
			անվանումը	բաժինը			անվանումը	բաժինը
«Բենզին»	7	82.6	«Ֆլեշ» ՍՊԸ, «Քաղ պետրոլ սերվիս» ԱԿ, «Միկա Արմենիա թրեյդինգ»	45.1 37.5 5.3	3	100	«Սիփիէս օյլ քորփորեյշն» ՍՊԸ, «Ֆլեշ» ՍՊԸ, «Մաքս պետրոլ» ՓԲԸ,	60 34 6
«Դիզելային»	11	79.8	«Ֆլեշ» ՍՊԸ, «Սոկոլ օյլ» ՍՊԸ, «Քաղ պետրոլ սերվիս» ԱԿ,	41.0 24.4 14.4	3	100	«Սիփիէս օյլ քորփորեյշն» ՍՊԸ, «Ֆլեշ» ՍՊԸ, «Մաքս պետրոլ» ՓԲԸ,	- - -

* Հանձնաժողովը դիզելային վառելիքի շուկայի ուսումնասիրությանն ու վերլուծությանը վերջին անգամ անդրադարձել է 2009 թ. տարեկան գործունեության հաշվետվության ժամանակ, համաձայն որի՝ 2009 թ. առաջին ինն ամսվա ցուցանիշներով շուկայում գործել են 8 տնտեսավարող սուբյեկտ՝ «Ֆլեշ» ՍՊԸ, «Սիփի պետրոլ գրուպ» ՍՊԸ, «Քաղ. պետրոլ սերվիս» ԱԿ-ն, համապատասխանաբար՝ 51.4, 25.8 և 9.9 % բաժիններով: Մինչդեռ 2006 թ. «Սիփի պետրոլ գրուպ» ՍՊԸ-ի փոխարեն եղել է «Սոկոլ օյլ» ՍՊԸ-ն: Օսմանյան կայսրությունում 1839 թ. սկսած ժանդարմերիան ներկայացնում էր գավառական հեծյալ ոստիկանությունը:

Տեսնենք, թե իրականում բենզինի և դիզելային վառելիքի գները ինչպես են համապատասխանել օրենսդրական փոփոխություններին (աղյուսակ 2): Նախորդ տարվա դեկտեմբերի 30-ին լիցքավորման կետերում 1լ բենզինը վաճառվել է 410, իսկ դիզելայինը՝ 380 դրամով: Բենզինի վաճառքի գինը առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) և ակցիզային հարկի 30.12.2017 թ. կազմել է 322.8 դրամ, ս.թ. հունվարի 15-ին՝ 328.14 դրամ, տարբերությունը՝ 5.34 դրամ: Այսինքն, ակցիզային հարկի նոր դրույքաչափի կիրառումից հետո տնտեսավարող սուբյեկտը հունվարի 15-ին 1լ-ի հաշվով 5.3 դրամի չափով լրացուցիչ շահույթ է ստացել, հունվարի 22-ին՝ 13.68, փետրվարի 15-ին՝ 22 դրամի չափով, իսկ վաճառքի գնի (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) հավելածի տեմպը կազմել է 6.8%, ինչը զգալի է, և այն պետք է գերիշխող դիրքի չարաշահման առումով մտահոգեր Հանձնաժողովին:

Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, Հանձնաժողովի՝ դեռևս 2018 թ. հունվարի 12-ի լավատեսական գնահատականով՝ վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող⁵: Նույնիսկ դրանից հետո, երբ տնտեսավարող սուբյեկտները երկու անգամ 10-ական դրամով բարձրացրեցին բենզինի գինը, կարգավորողը հարկ չհամարեց չարաշահումների բացահայտման նպատակով վարույթ սկսել:

Մի փոքր այլ է վիճակը դիզելային վառելիքի շուկայում: Դիզելառելիքը 2017 թ. ընթացքում ԱԱՀ-ով չի հարկվել, իսկ ակցիզային հարկը կազմել է բացթողման գնի 10%-ի չափ, բայց ոչ պակաս 1տ-ի հաշվով՝ 35 հազար դրամ: Ս.թ. հունվարի 1-ից դիզելառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը 1 տոննայի հաշվով կազմել է 13 հազար դրամ և սկսել է հարկվել ԱԱՀ-ով: 1 լիտրի հաշվով դիզելառելիքի ակցիզային հարկը նախորդ տարվա դեկտեմբերին կազմել է 29.17, վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի)՝ 350.83, իսկ 2018 թ. հունվարից համապատասխանաբար՝ 10.83 դրամ և 355.84-ից դարձել է 372.5 դրամ:

Համադրելիություն ապահովելու համար, նույն պայմանների դեպքում, եթե նախորդ տարվա դեկտեմբերի համար ենթադրենք, որ դիզելառելիքը ևս հարկվել է ԱԱՀ-ով (հաշվի առնենք ԱԱՀ-ի ազդեցությունը), այդ

⁵ Տե՛ս ՀՀ մրցակցային մարմնի պատասխանը ՀՅԴ-ին. Վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող՝ http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1:

Աղյուսակ 2

Ակցիզային հարկի և ԱԱՀ-ի ազդեցության հաշվարկը բենզինի և դիզելային վառելիքի գների վրա 2017 թ. դեկտեմբեր - 2018 թ. հունվար ամիսներին

	30.12.2017	15.01.2018	22.01.2018	15.02.2018	15.02.2018-ը՝ %-ով 30.12.2017 թ. նկատմամբ
1. Բենզին՝					
1) 1լ գինը, դրամ	410	430	440	450	109,76
2) Ակցիզային հարկը, դրամ (30. 12. 2017 թ.՝ 1 տ-ի համար 25000, 2018 թ. հունվարի 1-ից՝ 40000)	18.87	30.19	30.19	30.19	160
3) ԱԱՀ, դրամ	68.33	71.67	73.33	75.00	109.8
4) Բենզինի վաճառքի գինը առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի	322.8	328.14	336.48	344.81	106.8
5) Տարբերությունը 30.12.2017 թ. նկատմամբ, դրամ	-	5.34	13.68	22.01	-
2. Դիզելային վառելիք՝*					
1) 1լ գինը, դրամ	380	440	450	460	121.1
2) Ակցիզային հարկը, դրամ (30.12. 2017 թ.՝ 10 %, բայց ոչ պակաս 1 տ-ի համար 35000, 2018 թ. հունվարի 1-ից՝ 13000)	29.17	10.83	10.83	10.83	37.1
3) ԱԱՀ, դրամ	-	73.33	75	76.67	-
4) Դիզվառելիքի վաճառքի գինը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի/հաշվի առած ԱԱՀ-ի ազդեցությունը**	350.83 / 321.6	355.84 / -	364.17 / -	372.5 / -	106.2 / 115.8
5) Տարբերությունը 30.12.2017 թ. համեմատությամբ, դրամ	- / -	5.01 / 34,24	13.14 / 42.57	21.67 / 50.9	- / -

* Բենզինի խտության գործակիցը, միջինը՝ 1տ=1325 լ:

* Դիզվառելիքի խտության գործակիցը, միջինը՝ 1տ=1200 լ:

* Եթե 2017 թ. դիզվառելիքը ավելացված արժեքի հարկով հարկվեր և ընդունելով, որ վաճառքի գնի մեջ աշխատավարձը, հիմնական միջոցների մաշվածքը և շահույթը համատեղ կազմեին 50%, ապա, առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի, վաճառքի գինը կկազմեր 321.6 դրամ:

պարագայում դրա վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) կլինի 321.6 դրամ: Անցած տարվա դեկտեմբերի հետ համեմատած՝ այս տարի դիզվառելիքի վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) դիտարկվող օրերին համապատասխանաբար գերազանցել է՝ 32.24, 42.57 և 50.9 դրամով: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտները, ինչպես բնորոշ է օլիգոպոլացված շուկայական տնտեսություն ունեցող երկրներին, օգտվելով հարկային օրենսդրության փոփոխության հնարավորությունից, լրացուցիչ գերշահույթներ են ստացել:

Բերված օրինակները եզակի չեն: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև այլ ապրանքային շուկաներից, որոնց մի մասին արդեն անդրադարձել ենք⁶: Սրանք ցույց են տալիս ոչ միայն Հանձնաժողովի գործունեության անարդյունավետությունը, այլև անտարբերությունը և մասնագիտական անիրազեկությունն ու անկարողությունը: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ 2018 թ. մայիս-հունիս ամիսներից սկսած՝ Հանձնաժողովը զգալի աշխատանք է կատարել կայացրած որոշումների հրապարակայնությունն ապահովելու համար՝ 2013 թ. առ այսօր կայացրած որոշումները տեղադրելով իր կայք-էջում⁷:

«Հ սահմանադրության նոր խմբագրումը անհրաժեշտություն էր առաջացրել փոփոխություն մտցնել նաև Օրենքի մեջ: Այդ և մի շարք այլ նկատառումներից ելնելով՝ ս.թ. մարտի 23-ին Ազգային ժողովը Օրենքում

⁶ Տե՛ս **Միքայելյան Մ.Վ., Միքայելյան Գ.Մ.**, «Հ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2017, N 2, էջ 229-234), **Միքայելյան Մ.**, Անբարեխիղճ մրցակցությունը և Հայաստանում դրա կարգավորման մարտահրավերները (Բանբեր Երևանի պետական համալսարանի, Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 2017, N 3 (24), էջ 11-18):

⁷ Սկսած 2009 թ.՝ Հանձնաժողովը չէր հրատարակում տեղեկագիր, իսկ 2013 թ. Հանձնաժողովի որոշումները չէին տեղադրվում իր կայք-էջում: Դրա անհրաժեշտության մասին մենք խոսել ենք մեր մի քանի հրապարակումներում: Տե՛ս, օրինակ, **Միքայելյան Մ.**, Մրցակցության պաշտպանության բարելավման անհրաժեշտությունը, 17 մարտի 2016 թ., <http://hetq.am/arm/news/66495/mrcakcutyan-pashtpanutyanyan-barelavman-anhrzheshtutyuny.html>, **Միքայելյան Մ.Վ., Միքայելյան Գ.Մ.**, նշվ. հոդվ., էջ 230 և այլն: Հրապարակայնության ապահովման առումով Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է եղել նաև տեղեկագիր հրատարակել, սակայն Օրենքում 23.03.2018 թ. կատարված փոփոխությամբ /ՀՕ-249-Ն, 29.03.2018/ տեղեկագիր հրատարակելու պարտադիր պահանջը հանվել է:

կատարեց էական փոփոխություններ և լրացումներ⁸: Մասնավորապես, փորձ է արվել հստակեցնել կարգավորող այլ մարմինների հետ գործառույթների համընկնումով պայմանավորված փոխհարաբերությունները, լրացվել է «հակամրցակցային համաձայնությունների թույլատրման հիմքերը և կարգը» (հոդվ. 5.1), տնտեսական գործունեության համակարգումը (հոդվ. 5.2) նոր հոդվածներով, փոփոխվել են պատժամիջոցների մեծությունները (առանձին դեպքերում խստացվել, երբեմն էլ՝ անհամեմատ մեղմացվել), որոշ հասկացություններ հստակեցվել են, էապես փոփոխվել են նաև Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները: Այդուհանդերձ, Օրենքում չեն վերացվել առկա կոռուպցիոն ռիսկերը: Մասնավորապես, հոդվ. 36-ում նախատեսված բոլոր պատժամիջոցներում չկա հստակություն: Իրավախախտումների համար նախատեսված «մինչև 5 տոկոս», «մինչև 10 տոկոս», «մինչև 5 մլն դրամ» տուգանքի չափերը կոռուպցիոն ռիսկ են պարունակում⁹:

Մեր կարծիքով, արդարացված չէ Հանձնաժողովի անդամի պաշտոնավարմանը տարիքային սահմանափակում մտցնելը: Հանձնաժողովի գործառույթներն իրականացնելիս նրա անդամը որոշում կայացնելուց առաջ նախապես կատարում է վերլուծական, ստեղծագործական և գիտական աշխատանք: Իսկ ֆիզիկապես առողջ մարդը միշտ կարող է զբաղվել վերոհիշյալ աշխատանքներով: Հետևաբար, Հանձնաժողովի անդամի պաշտոնավարմանը տարիքային սահմանափակում մտցնելով, Հանձնաժողովի գործունեությունը, այլ հավասար պայմաններում, որակական կորուստ կունենա: Ելնելով դրանից՝ առաջարկում ենք Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «լրանալը» բառից հետո ավելացնել հետևյալ արտահայտությունը՝ «բացառությամբ իրավագիտության կամ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող և Հանձնաժողովի խնդիրների, գործառույթների և լիազորությունների վերաբերյալ առնվազն 10 մամուլ ծավալով մենագրություն կամ այդ ծավալով հանրագումարային գիտական հոդվածներ ունեցող անդամների»:

⁸ Սույն հոդվածում կանդիդատանք միայն մեկ-երկու փոփոխության և լրացումների:

⁹ Այդ մասին առավել հանգամանալից տե՛ս **Միքայելյան Գ.Մ.**, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին (Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժողովածու, գիրք 6, Ե., 2015, էջ 255-260):

Նկատի ունենալով, որ ս.թ. մարտի 23-ի Օրենքի փոփոխությամբ վերացվել է Հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը՝ Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից մեկը (հոդված 23, մաս 2): Մեր կարծիքով, Հանձնաժողովի անդամի կախվածությունը նրա նախագահից չեզոքացնելու նպատակով վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում «նրան փոխարինելու՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարական տալու» իրավասությունը անհրաժեշտ է վերացնել: Այդ նպատակով առաջարկում ենք Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում»:

Այսպիսով, Հանձնաժողովի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, չնայած որոշակի դրական տեղաշարժին, այն շարունակում է գործել ոչ արդյունավետ, իսկ Օրենքում կատարված լրացումներն ու փոփոխությունները մասամբ են նպաստել Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հիմնախնդրի լուծմանը կարելի է հասնել ինստիտուցիոնալ կառույցների վերափոխման, ինչպես նաև կարգավորման նոր մեխանիզմների կիրառման միջոցով:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ

МИКАЕЛЯН М.В., МИКАЕЛЯН Г.М.

Резюме

После вступления в силу отдельных статей Налогового кодекса РА /01.01.2018/ в экономике Армении имела место инфляция. Государственная комиссия по защите экономической конкуренции РА (далее – Комиссия),

изучая инфляцию на товарных рынках бензина и дизельного топлива, пришла к заключению, что это явление было обусловлено лишь изменением ставок акцизных налогов и продаж дизельного топлива по НДС. Однако расчеты показывают, что экономические субъекты, воспользовавшись изменениями в налоговом законодательстве, получили дополнительную прибыль.

Хотя и 23 марта 2018 года были внесены Изменения и дополнения в конкурентное законодательство, но они лишь частично способствовали повышению эффективности деятельности Комиссии.

Решение проблемы может быть достигнуто путем преобразования институциональных структур и применения новых механизмов их регулирования.

SOME ISSUES OF SETTLING ECONOMIC COMPETITION

M. MIKAELIAN, G. MIKAELIAN

Abstract

After the entry into force of certain articles of the RA Tax Code /01/01/2018/, inflationary phenomena were observed in the Armenian economy. The State Commission for the Protection of Economic Competition of the Republic of Armenia (hereinafter – the Commission), studying these inflationary phenomena in the gasoline and diesel fuel commodity markets, concluded that they were caused only by changes in excise tax rates and the sale of diesel fuel for VAT in these markets. However, calculations show that economic entities, taking advantage of changes in tax legislation, received additional profits.

Despite March 23, 2018 Amendments and additions to the competition legislation were made, they partially contributed to improving the efficiency of the Commission's activities.

Problem solving can be achieved by transforming institutional structures and applying new regulatory mechanisms.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Դ.Ն.

Մարդկությունը նոր տեխնոլոգիական հեղափոխության եզրին է, որը կտրականապես կփոխի մեր վերաբերմունքը կյանքի, աշխատանքի և միմյանց նկատմամբ: Բանական աշխարհին դեռևս բախտ չի վիճակվել հանդիպելու այս մասշտաբի և բարդության փոփոխությունների: Իհարկե, հիմա չենք կարող կանխատեսել, թե այն ինչպես կընթանա, սակայն արդեն ակնհայտ է, որ իր ազդեցությունը կունենա մարդկության բոլոր խմբերի, շերտերի, ենթաշերտերի, նրանց մասնագիտությունների վրա և այլն:

Տեխնոլոգիական հեղափոխության անցյալն ու ներկան

Առաջին արդյունաբերական հեղափոխության ընթացքում ջրի և գուրջու շնորհիվ արտադրությունը մեքենայացվեց: Արդյունաբերական երկրորդ հեղափոխության գլխավոր շարժիչ ուժն էլեկտրականությունն էր, որը հնարավորություն ընձեռեց զանգվածային արտադրության կազմակերպման համար: Երրորդ հեղափոխության կենտրոնում էլեկտրոնիկան և տեղեկատվական տեխնոլոգիաներն էին, որոնք ավտոմատացնում էին արտադրությունը:

Արդյունաբերական չորրորդ հեղափոխությունը, որը սկիզբ առավ նախորդ դարի կեսերից, կարծես բխում է երրորդից. այն նաև անվանում են «թվային»: Սա բնութագրվում է տեխնոլոգիաների միաձուլմամբ և ֆիզիկական, թվային ու կենսաբանական ոլորտների միջև սահմանների վերացմամբ: Պրոֆեսոր Շվաբը երեք պատճառ է տեսնում, որոնց հիմամբ արդի փոփոխությունները կարող ենք համարել ոչ թե արդյունաբերական երրորդ հեղափոխության շարունակություն, այլ չորրորդի սկիզբ: Դրանք են տեղի ունեցող փոփոխությունների արագությունը, նրանց մասշտաբները և հետևանքների համակարգային բնույթը¹:

¹ **Мануков С.** 4-я промышленная революция в Давосе, «Expert Online» 2016, <http://expert.ru/2016/01/21/chetvertaya-promyshlennaya-revolutsiya/>.

Ստացվում է, որ եթե գլոբալացումը գաղափարների փոխանակման ու ռեսուրսների միասնական օգտագործման գործընթաց է, որը տարածվում է սահմաններով, ապա վերը դիտարկվող փոփոխությունները ավելի շուտ համարվում են դրական: Ֆինանսական գլոբալացման դինամիկան փոխել է ուղղությունը, բայց հնարավոր է, որ նոր մակարդակն արտացոլում է ավելի առողջ զարգացում: Ավելին, ընդհանուր անդրսահմանային հոսքերի մեծ մասը հիմա կազմում են ՕՌԻՆ-երը, որոնք համեմատաբար ավելի կայուն են, ավելի նշանակալի չափով են գիտելիքներ պահանջում և կապիտալի անդրսահմանային հոսքերի առավել արդյունավետ ձև են, քանի որ այս գործընթացի մասնակիցներին ընդունող երկրում բիզնես վարելու անմիջական դեր է տրվում: Առևտուրը տուժում է քաղաքական մթնոլորտից, սակայն առևտրի վերաբերյալ վերջին տվյալներն այնքան էլ անհանգստացնող չեն, ինչպես կարող է թվալ:

Միևնույն ժամանակ, մարդկանց տեղաշարժը, որը հավանաբար գլոբալացման երեք ձևերից ամենակարևորն է, շարունակում է գերազանցել աշխարհի բնակչության աճին: Եթե գլոբալացման վերջնական նպատակն է մարդկանց տալ ազատություն իրենց ձգտումներն ու հնարավորություններն իրականացնելու համար ազգային սահմանների ներսում կամ պարզապես ազատվել հայրենիքում առկա խիստ պայմաններից, ապա այս գործընթացի դանդաղեցման նշաններ չեն նկատվում:

Սակայն լավատեսության առավել համոզիչ պատճառն այլ է: Վերջին 15 տարիների ընթացքում ձևավորվել է գլոբալացման չորրորդ բաղադրիչը, որը գրեթե չէր նկատվում Բեռլինյան պատի փլուզման ժամանակներում: Միջազգային մասշտաբով գաղափարների, տվյալների, նորությունների և ժամանցային նյութերի փոխանակումը համացանցի միջոցով անգնահատելիորեն ավելի մեծ է, քան երկրների միջև համագործակցության սովորական ավանդական եղանակներն են: McKinsey գլոբալ ինստիտուտի տվյալների² համաձայն՝ այս թվային գլոբալացումը ներկա աճի վրա ավելի զգալի նշանակություն ունի, քան ապրանքների առևտուրը: Միլիոնավոր փոքր ընկերություններ, որոնց չափերը չեն բավարարում միջազգային ասպարեզ դուրս գալու համար, վերափոխվել են արտահանողների և մասնակցում են ինտերնետ հարթակների առևտրային գործառնություններին:

² Manyika J., Lund S., Bughin J., Woetzel J., Stamenov K., Dhingra D. Digital Globalization: The New Era of Global Flows, Washington, 2016.

Մոտ 900 մլն մարդ օգտագործում է համացանցը այլ երկրներից իրենց ընկերների ու գործընկերների հետ կապ հաստատելու համար, իսկ միլիոնավոր ուսանողներ «հանդիպում են» երկրագնդի հակառակ կողմում գտնվող դասախոսների հետ վիրտուալ տիրույթներում³:

Գլոբալացման առաջընթացը կախված է երկու ուժերից՝ տեխնոլոգիաներից, որոնք հեշտացնում են ճանապարհորդությունն ու կապը, ինչպես նաև քաղաքական հարաբերություններից, որոնք ընկած են «բաց» աշխարհի հիմքում: 1990-ական թթ. առանձնահատկությունն այն էր, որ այս երկու ուժերը գործում էին միասին: Ճանապարհորդությունների ու կապի էժանացումն ամրապնդվեց Չինաստանի «բացմամբ» և առևտրի ազատականացմանն ուղղված քայլերով, օրինակ՝ ազատ առևտրի մասին հյուսիսամերիկյան համաձայնագիրը, միասնական եվրոպական շուկան և համաշխարհային առևտրային բանակցությունների Ուրուգվայի ռաունդը:

Չենք կարող բացառել, որ աշխարհում սկսվել է նոր դարաշրջան. տեխնոլոգիաները նախկինի պես խթանում են ինտեգրման գործընթացները, սակայն քաղաքական դիմադրությունն ուժեղանում է: Այնուամենայնիվ, քաղաքականության կողմից առկա խոչընդոտները ներկայումս ավելի թույլ են, քան տեխնոլոգիաների շարժիչ ուժը: Իսկապես, խոշոր ցնցումների բացակայության պարագայում (օրինակ՝ համաշխարհային պատերազմը կամ ճգնաժամը) ավելի հավանական տարբերակ է թվում գլոբալացման շարունակումը⁴:

Ներկայացված փաստերը վկայում են, որ նորազատական ծրագրի հավանական արդյունքների գնահատման ժամանակ պետք է հենվել ավելի տարբերակված մոտեցման վրա: Օրինակ՝ Օ. Բլանշիդը 2010 թ. նշեց, որ «զարգացած երկրների մեծամասնությունն արդյունավետ միջնաժամկետ բյուջետային համախմբման կարիք ունի, այլ ոչ թե ներկայիս բյուջետային «ծուղակի»։ Երեք տարի անց Ք. Լագարդը մատնանշում էր, որ ԱՄՆ Կոնգրեսը հիմնավորված է բարձրացրել պետական պարտքերի վերին սահմանը, «որովհետև դրա նպատակն այն է, որ այն ժամանակ, երբ աճը թափ է հավաքում, ծախսերի կտրուկ կրճատման պատճառով տնտե-

³ **International Monetary Fund (IMF)**, 2016, World Economic Outlook (Washington, October).

⁴ **Маллаби С.** Перегрузка глобализации (Финансы и развитие, ежеквартальный журнал международного валютного фонда, декабрь 2016, вып. 53, N 4, с. 10).

ությունը չկրճատվի»: 2015 թ. ԱՄՀ-ն հրահանգ տարածեց այն մասին, որ եվրագոտու երկրները, որոնք ունեն խելամիտ բյուջետային տարածություն, պետք է այն օգտագործեն ներդրումների աջակցության համար⁵:

Ընդ որում, եթե նախկինում կապիտալի հետ կապված գործառնությունների նկատմամբ վերահսկողության միջոցառումները գրեթե միշտ անարդյունավետ էին, ապա ներկայում դրանք դիտարկվում են որպես կապիտալի հոսքերի անկայունության խնդիրների լուծման ավելի ընդունելի տարբերակներ: ԱՄՀ-ն նաև ընդունում է, որ կապիտալի հոսքերի ամբողջական ազատականացումը միշտ չէ վերջնական նպատակ հանդիսանում, և վերջնական ազատականացումն ավելի օգտակար ու պակաս ռիսկային կլինի, եթե երկրները հասնեն ֆինանսական ու ինստիտուցիոնալ զարգացման կոնկրետ սահմանային մակարդակների:

Չիլիում նորազատականացման նորարարական փորձը Մ. Ֆրիդմանի կողմից բարձր գնահատականի արժանացավ, սակայն ներկայումս շատ տնտեսագետներ եկել են ավելի տարբերակված եզրահանգման, որը ձևակերպել է Ջ. Ստիգլիցը. «Չիլին շուկայի ու ճիշտ կարգավորման համադրման օրինակ է»⁶: Ջ. Ստիգլիցը նշում էր, որ նորազատական ճանապարհով շարժման առաջին տարիներին Չիլիում սկսեցին կիրառվել «կապիտալի հոսքերի նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ այնպես, որ նրանք չողողեն երկիրը», ինչպես դա տեղի ունեցավ մեկ ու կես տասնամյակ անց Թայլանդում՝ ասիական առաջին երկրում, որը տուժել էր ճգնաժամից: Չիլիի (որը ներկայումս հրաժարվել է կապիտալի հետ կապված գործընթացների նկատմամբ վերահսկողության մեխանիզմներից) ու այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ ոչ մի ծրագիր չի կարող բարենպաստ հետևանքներ ապահովել բոլոր երկրների համար բոլոր ժամանակներում⁷:

⁵ Berg A., Tsangarides C., 2014, “Redistribution, Inequality, and Growth”, IMF Staff Discussion Note 14/02 (Washington: International Monetary Fund).

⁶ Stiglitz J., 2002, “The Chilean Miracle: Combining Markets with Appropriate Reform”, Commanding Heights Interview.

⁷ Остри Д.Д., Лунгани П., Фурчери Д. Не переоценен ли неолиберализм? (Финансы и развитие, ежеквартальный журнал международного валютного фонда, июнь 2016, вып. 53, N 2, с. 41).

Այս համատեքստում հատուկ ուշադրության են արժանի այն հետևանքները, որոնք կարող են ունենալ տնտեսական ազատականացման ծրագրերն ու թվային տեխնոլոգիաները բիզնես միջավայրի, կառավարությունների և մարդկանց համար:

Բիզնեսի համար հետևանքները

Արդյունաբերության շատ հատվածներում արդեն ներդրվել են նոր տեխնոլոգիաներ, որոնք կտրուկ փոփոխության են ենթարկում այն: Սպառողների վարքագծի և պահանջարկի փոփոխությունները ստիպում են ընկերություններին ամեն ինչ՝ արտադրանքը, շուկաները, ապրանքների ու ծառայությունների առաքումը հարմարեցնել նրանց:

Այսօր կարևոր նշանակություն ունի տեխնոլոգիական հարթակների զարգացումը. դրանք միավորում են պահանջարկն ու առաջարկը և արմատապես վերափոխում տնտեսության կառուցվածքը:

Ընդհանուր առմամբ, արդյունաբերական չորրորդ հեղափոխությունը բիզնեսի վրա 4 հիմնական ազդեցություն կունենա: Դրանք են սպառողների սպասումները, ապրանքների ու ծառայությունների կատարելագործումը, միասնական նորարարությունները և կազմակերպչական ձևերը:

Պարզ թվայնացումից (արդյունաբերական երրորդ հեղափոխություն) անցումը տեխնոլոգիական համակցությունների վրա հիմնված նորարարություններին (չորրորդ հեղափոխություն) ստիպում է ընկերություններին վերանայել իրենց աշխատառճը:

Կառավարությունների համար հետևանքները

Քանի որ ֆիզիկական, թվային և կենսաբանական աշխարհներն ավելի են մոտենում, նոր տեխնոլոգիաներն ու հարթակները ֆիզիկական անձանց հնարավորություն են տալիս կառավարությունների հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու, տարբեր հարցերի վերաբերյալ արտահայտելու իրենց կարծիքները, համատեղելու ջանքերը և նույնիսկ շրջանցելու իշխանությունների հսկողության համակարգերը:

Իրենց հերթին, իշխանությունները նոր հնարավորություններ են ունենում հասարակության վրա հսկողությունն ուժեղացնելու համար՝ ավելի հզոր համակարգերի և թվային ենթակառուցվածքների վերահսկման շնորհիվ:

Ընդհանուր առմամբ, բնակչության ու պետական կառավարման նկատմամբ վերաբերմունքի փոփոխության նպատակով իշխանության վրա

ճնշումները կշարունակեն աճել: Հետևաբար իշխանությունների գոյատևումը կախված կլինի փոփոխությունների նկատմամբ իրենց հարմարվողականությունից:

Եթե նրանք կարողանան հարմարվել կյանքին հեղափոխական փոփոխությունների աշխարհում և վերափոխեն իրենց կառուցվածքներն ու համակարգերը թափանցիկության և արդյունավետության անհրաժեշտ մակարդակի, ապա կկարողանան գոյատևել:

Արդյունաբերական չորրորդ հեղաշրջումը խոր ազդեցություն կունենա հասարակական և ազգային անվտանգության վրա: Ռազմական տեխնիկայի և միջազգային անվտանգության պատմությունը համարվում է տեխնոլոգիական նորարարությունների պատմությունը:

Փոփոխությունները կվերաբերեն շատ հարցերի: Օրինակ՝ ավելի ակնհայտ կդառնան այնպիսի հասկացությունների միջև առկա տարբերությունները, ինչպիսիք են պատերազմն ու խաղաղությունը, պատերազմող և չպատերազմող երկրները, բռնությունը և համերաշխությունը:

Հետևանքները մարդկանց համար

Արդյունաբերական չորրորդ հեղաշրջումը ի վերջո կփոփոխի ոչ միայն այն, ինչով զբաղվում են մարդիկ, այլև հենց մարդկությանը: Սա իր ազդեցությունը կունենա մարդկանց ինքնությունության և դրա հետ կապված ամեն ինչի վրա:

Իհարկե, գոյություն ունեն նոր հեղափոխության զարգացման նաև հոռետեսական սցենարներ: Ամենից մոայլն այն է, որ այն «կոռուտացնի» հասարակությանը և մարդկանց կզրկի սրտից և հոգուց⁸:

Այնուամենայնիվ, արդյունաբերական չորրորդ հեղափոխությունը մարդկությանը թույլ կտա հասարակական և բարոյական գիտակցության նոր մակարդակի բարձրանալ, որի հիմքում կլինեն աշխարհի բոլոր մարդկանց ճակատագրերը:

⁸ Маныков С. 4-я промышленная революция в Давосе, «Expert Online» 2016, <http://expert.ru/2016/01/21/chetvertaya-promyshlennaya-revolutsiya/>.

ТЕХНОЛОГИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ И МИРОВАЯ ЭКОНОМИКА

АХВЕРДЯН Д.Н.

Резюме

При оценке вероятных результатов неолиберальных программ следует опереться на более дифференцированные подходы. При этом, если в прошлом мероприятия, направленные на контроль операций с капиталом почти всегда были неэффективными, то сейчас эти мероприятия рассматриваются в качестве более приемлемых вариантов по решению проблем нестабильности потоков капитала. В этом контексте особое внимание необходимо уделять тем последствиям для бизнес – среды, правительств и людей, к которым могут привести программы экономической либерализации и цифровые технологии.

TECHNOLOGICAL REVOLUTION AND WORLD ECONOMY

D. HAKHVERDYAN

Abstract

The facts indicate that when evaluating the probable results of neoliberal programs, one needs to rely on more differentiating approaches. At the same time, if in the past events related to the control of capital transactions have almost always been ineffective, now these activities are viewed as more acceptable options to address the problems of volatility in capital flows. In this context, special attention needs to be paid to the consequences for the business environment, governments and people, to which programs of economic liberalization and digital technologies can bring. In particular, for business it may be consumer expectations, improvement of goods and services, new organizational forms, for governments – fundamental changes in ensuring public and national security, for people – raising public and moral consciousness, and in the pessimistic scenario – “robotization” of humanity.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ X-XVI ԴԴ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԴԱՎԹՅԱՆ Ա.Ռ.

Մասնավոր սեփականության ծագումից հետո հողը և անշարժ գույքը դարձան հողագույքային հարաբերությունների օբյեկտ: Դրանց շրջանառությունը տնտեսական կյանքի ակտիվության յուրատեսակ ցուցիչ է: Միջնադարյան Հայաստանում անշարժ գույքի ակտիվ շուկայի մասին են վկայում պատմական աղբյուրները՝ պատմիչների գործերը, վիճագիր արձանագրությունները, հիշատակությունները և այլն:

Յուրաքանչյուր սեփականատեր իրավունք ուներ գնման, նվիրաբերման, նվաճման, փոխանակման, կամ այլ եղանակով ձեռք բերված անշարժ գույքը օտարելու ցանկացած ձևով՝ վաճառելու, նվիրելու, կտակելու կամ իրականացնելու այլ գործառույթներ (վարձակալության տրամադրում, գրավադրում և այլն):

Գործարքի օբյեկտներ էին անշարժ գույքի տարբեր միավորներ՝ հողատարածքներ, գյուղախմբեր, առանձին գյուղեր (համայնքներ), գյուղերի մասեր, առանձին հողատեսքեր՝ այգիներ, վարելահողեր, կառույցներ՝ հյուրատներ, ջրաղացներ, կրպակներ և այլն:

Պատմական աղբյուրներում նկարագրված են բազմաթիվ գործարքներ, որոնցով իրականացվել են անշարժ գույքի առք ու վաճառք, նվիրատվություն, վարձակալություն, գրավ, փոխանակում և այլն: Բոլոր գործարքները վավերացվել են համապատասխան բովանդակությամբ փաստաթղթերում (նվիրագիր, պայմանագիր, ընծայագիր, վճռագիր, կալվածագիր և այլն): Սովորաբար այդ փաստաթղթերը բաղկացած են եղել 7 մասից, որոնց հերթականությունը կարող էր փոփոխվել.

1. փաստաթուղթը կազմելու ժամանակաշրջանը.
2. փաստաթուղթը կազմողների և ներկաների անունները.
3. փաստաթուղթը կազմելու նպատակը՝ գործարքի անվանումը (պայմանագրի առարկան) և (կամ) գործարքի կողմերը.
4. անշարժ գույքի նկարագրությունը (տեսակը, գտնվելու վայրը, սահմանները).

5. անեծքների բաժինը.

6. փաստաթուղթը հաստատողների և վկաների անունները.

7. փաստաթուղթը կազմելու և հաստատելու ժամանակը:

Այս մասերն ընդգրկող գործարքները կազմվել են հիմնականում բարձրագույն աշխարհիկ և հոգևոր դասերի մասնակցությամբ տեղի ունեցած գործարքների ժամանակ, որտեղ գործարքի առարկան եղել է շատ արժեքավոր, սովորաբար մեծ տարածքներ ընդգրկող անշարժ գույք՝ հողատարածքներ, գյուղատեղիներ և այլն: Հանդիպում են նաև այս կանոնից որոշակի շեղումներով կազմված համառոտ փաստաթղթեր, որոնք կազմվել են փոքրարժեք կամ ընդամենը մեկ անշարժ գույքի նկատմամբ գործարք կազմելու համար, սակայն անգամ այդ պարագայում դրանց բովանդակությունը ցույց է տալիս գործարքի ամբողջական պատկերը: Համառոտ տարբերակի դեպքում գործարքների բովանդակությունն ընդգրկում է տվյալներ մասնակիցների, գույքի, գործարքի տեսակի և ժամանակի մասին:

Փաստաթղթերը հաճախ կրկնօրինակվում էին տարբեր շինությունների պատերին կամ կոթողների (խաչքարների) կողերին: Հենց այս հանգամանքի շնորհիվ են մեզ հասել անշարժ գույքի գործարքներ նկարագրող հազարավոր վկայություններ:

Միջնադարյան Հայաստանում իրականացված գործարքներից առավել լայն տարածված էին նվիրատվությունը, առք ու վաճառքը, փոխանակումը, վարձակալությունը և այլն:

Նվիրատվություն: Միջնադարյան Հայաստանում ամենից հաճախ իրականացված գործարքները կապված են եղել նվիրատվությունների հետ: Նվիրատվությունների մասին վկայություններ են արտացոլված թագավորական հրովարտականերում, բարձրաստիճան հոգևորականների որոշումներում, շինարարական վավերագրերում, նվիրագրերում, առևտրական գործարքների վկայագրերում և այլն: Դրանք պայմանագրեր են նվիրատուի և նվիրառուի միջև՝ երկուստեք պարտավորությունների ստանձնումով: Նվիրատուն հիշատակում է նվիրաբերվող անշարժ գույքի նկատմամբ ունեցած իրավունքի տեսակը, ձեռք բերելու եղանակը և նվիրաբերելու (օտարելու), այդ թվում՝ հետագա պայմանները: Այսպես, նվիրաբերողը կարող էր նվիրառուին արգելել գույքը այլ անձի վաճառել, փոխել կամ գրավադրել, կամ էլ թույլատրել վարվել իր հայեցողությամբ՝ վաճառել, նվիրել և այլն: Նվիրառուն էլ իր հերթին հանձն էր առնում իրականացնել

որոշակի գործողություններ: Որոշ պայմանագրերում նվիրաբերումը միակողմանի է՝ առանց որևէ փոխհատուցման¹: Նվիրատվությունները հիմնականում կատարվել են կրոնական հաստատություններին՝ վանքերին ու եկեղեցիներին: Դրանք ձեռք էին բերվում նորակառույց կրոնական հաստատությունների բացման և օծման հետ կապված արարողությունների՝ նավակատիքների ժամանակ: Նվիրատվությունները շատ հաճախ կատարվում էին մեծ հանդիսավորությամբ՝ ուղեկցվելով շարժական ու անշարժ գույքի տեսքով նվերների ստացումով: Խոշոր վանքերի ստացած նվերների մեջ մեծ բաժին էին կազմում հողատարածքները, գյուղերը, գյուղատնտեսական հողահանդակները (այգիները, վարելահողերը), եկամտաբեր շինությունները (ջրաղացներ, հյուրատներ, կրպակներ) և այլն: Նվիրատվությունների հետևանքով վանքերը միջնադարյան Հայաստանում դարձել էին խոշոր հողատերեր, որոնք վարում էին նաև տնտեսական գործունեություն: Նման ավանդույթի սկիզբը դրել է Գրիգոր Լուսավորիչը՝ Մշո Առաքելոց վանքին նվիրելով հողեր²:

Նվերների դիմաց նվիրառուները՝ եկեղեցու հոգևոր հայրերը, պարտավորվում էին իրականացնել նվիրաբերողի ցանկությունը, օրինակ, նրա և նրա հարազատների համար մատուցել պատարագ կամ օրհնություն³, հյուրընկալություն, աղքատների խնամք և այլն: Երբեմն նվիրատվությունը կատարվել է վանական հաստատության բնականոն գործունեությունը ապահովելու համար:

Նվիրված գույքն անձեռնմխելի էր՝ ոչ ոք իրավունք չուներ այն վաճառելու կամ նվիրելու այլ սուբյեկտի: Գործող օրենքները թույլ չէին տալիս իրականացնել նման եղանակով ձեռք բերված անշարժ գույքի օտարման գործարք: Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Նրանց մասին, որ եկեղեցուն տուն, այգի և այլ իրեր են տալիս» ՄԼԹ գլխի՝ նվիրատուները նվիրված գույքը կարող են հետ վերցնել և նորից նվիրել ուրիշ եկեղեցու՝ առաջինի ավերակ լինելու և չվերակառուցվելու դեպքում⁴:

¹ Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X-XIV դդ.), Էջմիածին, 2002, էջ 7:

² Սարգիսեան Ն., Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 235:

³ Գրիգորյան Գ.Մ., Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Ե., 1973, էջ 97:

⁴ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Ե., 2001, էջ 176-177:

Չնայած նվիրաբերությունների հսկայական մասը կատարվում էր կրոնական հաստատություններին, այնուամենայնիվ, պահպանվել են նաև հիշատակություններ անշարժ գույքն այլ սուբյեկտների նվիրելու մասին: Այսպես, Գթաշեն բնակատեղիից բերված և Մայր Աթոռի տարածքում հանգրվանած 1569 թ. խաչքարի թիկունքին փորագրված վիմագիր արձանագրության համաձայն, Սարու Ամիրջանի ժառանգները աղբյուրների ջրերը հասցրել են Գթաշենի տարածք, կառուցել են 2 ջրաղաց և դրանք անհատույց նվիրել գյուղին⁵:

Առք ու վաճառք: Միջնադարյան Հայաստանում անշարժ գույքի առք ու վաճառքը երկրորդ ամենատարածված գործարքն էր հանդիսանում: Գործարքի մի կողմը՝ վաճառողը պարտավորվում էր որոշակի գումարի դիմաց գնորդին որպես սեփականություն հանձնել իր անշարժ գույքը: Այստեղ հանդիպում են գործարքներ ինչպես աշխարհիկների, այնպես էլ աշխարհիկների ու վանական հաստատությունների միջև: Այդ գործընթացում հատկապես ակտիվ էին վանքերն ու եկեղեցիները, որոնք անշարժ գույք էին ձեռք բերում նաև գնումների միջոցով: «Գանձագին» եղանակով, այսինքն՝ կանխիկ դրամով մեծաքանակ անշարժ գույք էին ձեռք բերում հատկապես խոշոր վանական հաստատությունները:

Ինչպես նվիրատվության գործարքների ժամանակ, այս դեպքում էլ կազմվում են համապատասխան փաստաթղթեր՝ կալվածագրեր, որտեղ նկարագրվում են գործարքը և դրան ուղեկցող այլ տվյալներ, որոնք էլ վավերացվում են վկաների ներկայությամբ: Այդպիսի գործարքները սովորաբար նկարագրվում էին մի քանի տողով. «Ես՝ Փիրագիզս, Վարդէվանս մեր Ջրախառնուրթի հողն ծախէցինք ի վերայ Բարսեղ եպիսկոպոսին: Տէր Սարգիս, Փիրագիզս, Իսկանտարս վրկայ ենք: Թվականն Ռ (1000/1551) էր»⁶:

Կրակ և ժառանգություն: Ժառանգությունը կարող էր անցնել ըստ կտակի կամ ըստ օրենքի: Գործող կարգի համաձայն՝ անշարժ գույքը փոխանցվում էր հորից որդուն, իսկ կանայք օգտվում էին ժառանգության իրավունքից որոշակի սահմանափակումներով: Եթե չամուսնացած դուստրը օգտվում էր ժառանգված գույքի նկատմամբ հավասար իրավունքներից, ապա ամուսնացած դուստրը՝ մեկ եղբոր ստանալիք բաժնի կեսի չափով:

⁵ Սաղումյան Ա., Վիմագիր մասունքներ (Էջմիածին, 1994, N 8, էջ 100-112):

⁶ Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), Էջմիածին, 2007, էջ 135:

Ժառանգատուն կարող էր իր ցանկությամբ գույքը կտակել ցանկացած սուրբեկտի այն դեպքում, եթե նա չունենար զավակներ⁷: Իր ցանկությունը նա կարող էր ձևակերպել կտակի միջոցով: Կտակի միջոցով ժառանգատուն հայտնում էր իր կամքը մահվան դեպքում իրեն պատկանող գույքը այլոց փոխանցելու մասին: Կտակները ձևակերպվում էին նույն սկզբունքով, ինչ կիրառվում էր գույքային այլ իրավունքների գրանցման ժամանակ՝ նշելով գործարքի օբյեկտը, կտակարարը, ժառանգությունն ստացողին և այլ տվյալներ:

Վարձակալություն: Վարձակալության պայմանագրով անշարժ գույքի վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրել հողամաս կամ շենք (շինություն): Ի տարբերություն առք ու վաճառքի և նվիրատվության՝ վարձակալության գործարքների վերաբերյալ մատենագիտական տեղեկություններ համեմատաբար քիչ են հանդիպում: Նման մի գործարքի մասին է նկարագրում Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն հայոց»-ում, ըստ որի՝ Արճեշից Աղբայրիկի որդի Աստվածատուրը «...ունեւ բազմաթիւ խանութներ. դրանք վարձով տվեց և ամեն ամիս վարձերը առնում էր...»⁸:

Անշարժ գույքի վարձակալության մի շարք օրինակներ է բերում նաև Լ. Խաչիկյանը՝ վերլուծելով Մատենադարանում պահվող գրությունների բովանդակությունը: Ըստ նրա՝ վարձակալվող օբյեկտներ են հանդիսացել հիմնականում վարելահողերը, որոնց վարձակալները պարտավորվում էին հողերից ստացված բերքի մի մասը հանձնել հողի սեփականատիրոջը⁹:

Փոխանակում: Փոխանակման ժամանակ գործարքի յուրաքանչյուր կողմ պարտավորվում էր իր սեփական անշարժ գույքը փոխանցել մյուսին որպես սեփականություն՝ ձեռք բերելով նրա սեփական գույքը: Գործարքների կողմ էին աշխարհիկ և հոգևոր դասերի ներկայացուցիչները:

Փոխանակման գործընթացին մասնակցել են ոչ միայն առանձին հողամասեր, այլև ամբողջական համայնքներ ու բնակավայրեր՝ գյուղեր, ագարակներ: Անշարժ գույքի փոխանակությունը կատարվել է ոչ միայն համար-

⁷ Սուրբասյան Ա.Գ., Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Ե., 1965, էջ 131:

⁸ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 136:

⁹ Խաչիկյան Լ., Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը (Բանբեր մատենադարանի, 1960, N 5, էջ 27):

ժեք (գյուղը՝ գյուղի հետ), այլև անհամարժեք պայմաններով (մեկ գյուղը՝ երկուսի հետ):

Սյունիքի Բեխ և Արուքս գյուղերի 871 թ. փոխանակությունը կատարվել է համարժեքության սկզբունքով, քանի որ վերոհիշյալ երկու գյուղերի հարկերի չափերը հավասար էին: Համաձայն փոխանակող կողմերի միջև կնքած պայմանագրի՝ «Հայոց երեք հարյուր քսան թվականին, աստվածապատիվ հոգևոր տեր Սողոմոնի՝ Սյունյաց եպիսկոպոսի ժամանակ, ես՝ Սյունյաց տեր, աստվածապահ իշխան Սահակի որդի Ջևանշիրի, Բաղք գավառի Արուքս անունով իմ մի գյուղը, որը հորիցս ու եղբայրներիցս ինձ կատակված ժառանգություն էր հասել, և իմ սեփական կալվածքն էր, անվիճելի տեղ, կամեցա փոխանակել Կովսական գավառում գտնվող Բեխ գյուղի հետ: Այդ գյուղը բուն Սուրբ խաչի և հոգևոր տերերի՝ Սյունյաց եպիսկոպոսների կալվածքն էր: Եվ ես ու Տեր-Սողոմոնը մեր կամքով և փոխադարձ համաձայնությամբ փոխանակեցինք: Քանի որ փոխանակումը մեր երկուսի միջոցով կատարվեց, ուստի մենք էլ [գործարքը] հաստատող պայմանագիրը կազմեցին»¹⁰:

Ոչ համարժեք փոխանակության մասին է վկայում Հաղպատի վանքի մեծ գավթի արևմտյան մուտքի բարավորի վրա 1210 թ. փորագրված արձանագրությունը, համաձայն որի՝ Հալալաշեն և Վաշխ գյուղերը փոխանակվում էին Հաղք գյուղի հետ¹¹: Չնայած այստեղ որպես փոխանակման պատճառ նշվում էր Հաղպատի վանքից Հալալաշեն և Վաշխ գյուղերի հեռավորությունը, սակայն չի բացառվում, որ կային նաև այլ պատճառներ՝ ցածրարժեք գյուղի փոխանակություն բարձրարժեքի հետ և այլն:

Սեփականության խախտված (կամ կորսված) իրավունքի վերականգնում: Միջնադարում Հայաստանում կան բազմաթիվ դեպքերի արձանագրություններ, երբ տեղի է ունեցել անշարժ գույքի բռնազավթում: Սովորաբար իշխանական համակարգում ավելի բարձր կարգավիճակ ունեցող սուրբեկտը, օգտագործելով իր դիրքը և ուժը, բռնազավթել (խլել) է հիերարխիայի ստորին աստիճանում գտնվող սուրբեկտի գույքը: Նման դեպքերը սովորական են եղել հատկապես այն ժամանակ, երբ Հայաստանը եղել է օտար պետությունների տիրապետության տակ: Եվ հենց

¹⁰ Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 203:

¹¹ Ղաֆադարյան Կ., Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Ե., 1963, էջ 168-169:

դրանց ներկայացուցիչներն էլ կատարել են այդպիսի ապօրինի գործողություններ, չնայած կան նաև փաստեր, որ դրանք իրականացրել են նաև տեղի ֆեոդալները: Այն ժամանակ, երբ թուլացել կամ ոչնչացվել է վերջիններիս տիրապետությունը, վերականգնվել է գույքի նկատմամբ եղած նախկին կարգավիճակը: Նախկին տերերին անշարժ գույքը վերադարձնելու մասին որոշում են կայացրել աշխարհիկ իշխանները և հոգևոր դասը Ադվենի ժողովի ժամանակ¹²: Գույքի նկատմամբ կորսված իրավունքը վերականգնվել է կա՛մ նախկին իրավատիրոջ, կա՛մ դրա իրավունքն ունեցող սուրբեկտի նախաձեռնությամբ, որի ձեռքին էր դատական իշխանությունը (սովորաբար նման գործառույթ էր իրականացնում տվյալ տարածքը կառավարող ֆեոդալը): Երբեմն միևնույն անշարժ գույքը կարող էր մի քանի անգամ բռնազավթվել և նույնքան անգամ էլ կարող էին վերականգնվել դրա նկատմամբ նախկինում գրանցված օրինական իրավունքները: Սեփականության իրավունքի խախտման և կրկին նախկին կարգավիճակի վերականգնման փաստին է անդրադարձել Ստ. Օրբելյանը, որը նկարագրում է այդպիսի մի քանի դեպք՝ կապված Խոտ գյուղի հետ: Առաջինը վերաբերում է Սյունյաց եպիսկոպոս Սողոմոնին, որը 881 թվականով թվագրված վկայագրում գրում է. «Իմացա, որ առաջներում Տեր-Գեորգը Խոտի կալվածք-կոռավայրը հոգեբաժին էր արել սուրբ նշանին, բայց ինչ-ինչ հանգամանքներով այն հափշտակել էին: Երբ հաջորդելով գահակալեցի այս սուրբ աթոռին, այդ կալվածքը վերադարձրի եկեղեցուն»¹³: Երկրորդ դեպքը վերաբերում է 1006 թվականին, երբ Խաղբակի որդի Դլենը իր տիրույթներից Տաթևի վանքին է նվիրել դեռևս 906 թ. վանքին նվիրաբերված Խոտ գյուղը: Երրորդ դեպքը վերաբերում է 1274 թ., երբ Տարսայիճ Օրբելյանը Տաթևի վանքին են վերադարձվում մի շարք գյուղեր, այդ թվում՝ Խոտ գյուղը¹⁴:

Այլ տեսակի գործարքների (ռենտա, գրավ և այլն) վերաբերյալ վկայություններ քիչ են հանդիպում, չնայած գործող օրենքները թույլ են տվել իրականացնել նաև այդ տեսակի գործարքներ: Օրինակ՝ Մխիթար Գոշը

¹² **Սարգսյան Լ.Ա.**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դդ.), Ե., 2007, էջ 18:

¹³ **Օրբելյան Ստ.**, էջ 202:

¹⁴ Նույն տեղում:

խոսում է գրավի պայմանների մասին¹⁵: Մեկ գործարք վավերացնող փաստաթղթերից բացի, հայկական միջնադարյան աղբյուրներում պահպանվել են նաև բազմաքայլ գործարքներ արտացոլող փաստաթղթեր՝ անշարժ գույքի գնում-նվիրատվություն, գնում-փոխանակում, փոխանակում-նվիրատվություն, գնում-բարելավում-նվիրատվություն և այլն:

Անշարժ գույքի գնում-նվիրատվություն: Բազմաթիվ վկայություններ կան համայնքի բնակիչների կողմից անշարժ գույք գնելու և այն իրենց նախընտրած սուբյեկտներին (համայնքին կամ հոգևոր հաստատությանը) նվիրելու մասին: Սովորաբար միջնադարյան Հայաստանում ձեռք բերված անշարժ գույքը (հիմնականում վարելահողեր, այգիներ, հասութաբեր հաստատություններ՝ ջրաղացներ, հյուրատներ և այլն) նվիրաբերվել է իրենց նախընտրած վանքին կամ եկեղեցուն¹⁶:

Անշարժ գույքի գնում-բարելավում (կառուցապարելու կամ այգիներ փակելու միջոցով)-նվիրատվություն: Գործարքի այս տեսակը համեմատաբար քիչ տարածում է ունեցել, սակայն շրջանառության մեջ են ներառվել անշարժ գույքի տարբեր տեսակներ և քանակներ: Նման արձանագրություն է պահպանվել Անիի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային պատի վրա: Համաձայն արձանագրության՝ 1215 թ. Տիգրան Հոնենցը նախկին տերերից գնել է հողատարածք, բարեկարգել ու կառուցել է վանական համալիր և այն նվիրել եկեղեցուն: Եկեղեցուն է նվիրում նաև այլ գույք՝ իր կառուցած կամ գնած 8 գյուղեր և գյուղերի հատվածներ (Գորոխոնեց, Քարհատ, Մշակունեց, Կաղղուց, Յամաքծով, Խուզած Մահմունդ, Ունընդ, Խաչորիկ), 2 պանդոկ (մեկը Անիում՝ կամարակապ), ջրմուղ, հյուրատուն, մարագներ, բաղնիքներ, ծիթհանք, ախոռներ, բանջարանոցներ, լանջ, գետի ափ, ջրաղաց, կրպակ, Հատեցոնց փողոցի տները, հողեր՝ Անիում, մեկական այգիներ՝ Երևանում, Օշականում, Կոշում, Արուճում, Մրենում և Ծմակում¹⁷:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարող ենք եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում լայն տարածում են ստացել անշարժ գույքի հետ կապված գործարքները, որոնք արտացոլվել են համապատասխան բովանդակություն ունեցող փաստաթղթերում (վճռագիր, նվիրագիր, ընծայագիր և

¹⁵ Մխիթար Գոշ, էջ 81:

¹⁶ Սարգսյան Լ.Ա., էջ 90:

¹⁷ Դիվան հայ վիմագրության, պր. 1, Ե., էջ 63:

այլն): Դրանցում նկարագրվում են ինչպես մեկ, այնպես էլ միաժամանակ մի քանի գործարքներ: Մեկ գործարքի ժամանակ իրականացվում է միայն մեկ գործողություն՝ նվիրատվություն, առք ու վաճառք, փոխանակում, վարձակալություն և այլն: Բազմաքայլ (մի քանի) գործարքների դեպքում իրականացվում է առնվազն երկու գործարք, օրինակ՝ առք (գնում) և նվիրատվություն, փոխանակում և փոխանակված գույքի վաճառք, փոխանակում և նվիրատվություն և այլն: Գործարքի առարկա կարող էին դառնալ ինչպես անշարժ գույքի մեկ միավոր, այնպես էլ անշարժ գույքի տարբեր տեսակների մի քանի միավորներ:

ТРАНЗАКЦИИ С НЕДВИЖИМОСТЬЮ В АРМЕНИИ В X–XVI ВВ.

ДАВТЯН С.Р.

Резюме

Еще в X-XVI вв. в Армении выполнялись транзакции с недвижимостью. Предметами сделок являлись сельские общины, фруктовые сады, пашни и другая недвижимость (мельницы, постоянные дворы и др.). Были распространены не только одношаговые транзакции, фиксирующие разные виды сделок с недвижимостью (дарение, продажу (покупку), аренду), но и многоступенчатые, включающие одновременно несколько видов сделок: покупка – дарение, покупка – застройка-дарение и др.

REAL PROPERTY TRANSACTIONS IN ARMENIA DURING THE 10TH-16TH CENTURIES

S. DAVTYAN

Abstract

In Armenia in the 10th-16th centuries transactions related to real property were realized. Rural communities, fruit orchards, arable lands and other real property (watermills, hotels, etc.) were the subjects of the transactions. Common transaction types included not only one-step deals to record diverse real property transactions including donations, or sale and purchase, or lease, but also multi-step deals incorporating several types of transactions in the same time, like purchase and donation, or purchase, development and donation, etc.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՃՅՈՒՂԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՃՅՈՒՂՈՒՄ

ՄԱՆԱՍՅԱՆ Վ.Գ.

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածն ընդհանրապես և պտղաբուծությունը մասնավորապես ծանր ժամանակներ են ապրում: 2012-2016 թթ. պտղատու այգիների և հատապտղանոցների տարածությունները, համեմատած 1986-1990 թթ. հետ, կրճատվել են 22,2%-ով: Չնայած որ այդ ժամանակահատվածում պտղաբուծության մեջ բերքատվությունը ավելացել է 46,1%-ով, ենթաճյուղի համախառն արտադրանքի ցածր մակարդակի մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան: Առայժմ այդ մակարդակը գիտականորեն հիմնավորված չափաքանակների կամ բարձր զարգացած պտղաբուծությամբ երկրների փաստացի ցուցանիշների գծով կազմում է պահանջների մոտ 50-55%-ը:

Պտղատու այգիների և հատապտղանոցների միջին բերքատվությունը առևտրային կազմակերպություններում 8 անգամ ավելի ցածր է, քան բնակչության տնտեսություններում, որոնց մասնաբաժինը պտուղների և հատապտուղների ընդհանուր արտադրության մեջ 99,8% է: Առևտրային ցանցում ենթաճյուղի հայրենական արտադրանքը գերակշռում է, իսկ նրա մի մասը, հատկապես գյուղացիական տնտեսություններում, չի գտնում վաճառահանման շուկաներ. կենդանիներին են կերակրում, կամ էլ փչանում է:

Մենաշնորհային գների պայմաններում վերամշակող ձեռնարկությունները պտղաբուծական արտադրանքի մեծաքանակ գնումները կատարում են շատ ցածր գներով, որոնք նույնիսկ չեն հատուցում արտադրության ծախսերը: Դա պտղաբուծության զարգացմանը արգելք է դառնում և թույլ չի տալիս ամբողջությամբ օգտագործել պահածոյագործության արտադրական հզորությունները: Վերջին տարիներին դրանց օգտագործման մակարդակը կազմել է 60-65%, ընդ որում, վերամշակվող մթերքների զգալի մասը ներմուծվող ցածր որակի խտացրած հյութերից է պատրաստվում: Հայրենական պտղաբուծության զարգացման համար խիստ անհրա-

ժեշտ է պետական աջակցության կատարելագործման մեխանիզմների մշակումը:

Այնուամենայնիվ, պտղահատապտղային արտադրանքի ապրանքային արտադրություն իրականացնող մասնագիտացված ագրոհոլդինգային տիպի խոշոր տնտեսությունների հաջողությունները, պտղաբուծության գծով նոր գիտական մշակումները վկայում են այն մասին, որ առկա են ենթաճյուղի արդիականացման և ավելի կատարյալ տեխնոլոգիական հիմքի վրա տնտեսության վարման ժամանակակից համակարգեր կիրառելու հնարավորություններ: Այդ համակարգերի շրջանակներում կարևոր է ենթաճյուղի՝ տնտեսապես հիմնավորված աշխատանքի տարածքաճյուղային բաժանումը:

Տնտեսապես հիմնավորված տեղաբաշխումը, այսինքն՝ ենթաճյուղի հողային, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները առավել ռացիոնալ օգտագործելու նպատակներով հանրապետության տարածքում ընդհանրապես և նրա գյուղատնտեսական գոտիներում, մարզերում, տարածաշրջաններում և կոնկրետ տնտեսություններում մասնավորապես պտղահատապտղային արտադրանքի առանձին տեսակների արտադրության բաշխումը բարձր որակի պտղահատապտղային արտադրանքով ազգաբնակչության ապահովվածությունը բարելավելու կարևոր նախադրյալ է: Պտղաբուծության տեղաբաշխման հիմնական սկզբունքներն են՝

- արտադրության մոտեցումը վերամշակող ձեռնարկություններին և պատրաստի արտադրանքի սպառման շուկաներին, որը թույլ է տալիս կրճատել տրանսպորտային ծախսերը և պտղահատապտղային արտադրանքի կորուստները,

- ենթաճյուղի տեղաբաշխման դեպքում տարբեր մարզերում ու տարածաշրջաններում միավոր արտադրանքի հաշվով ծախսերի նվազագույնը ենթադրող ծախսերի գնահատականի անցկացումը և որոշ պտուղների ու հատապտուղների աճեցման համար առավել նպաստավոր ագրոկլիմայական պայմանների ընտրությունը,

- պտղաբուծության տեսակային և սորտային կառուցվածքի լավագույն հարաբերակցությունը, ընդ որում, այն գյուղատնտեսական գոտիներում, մարզերում ու տարածաշրջաններում, որտեղ ենթաճյուղի առաջին կամ երրորդ ոլորտները թույլ են զարգացած, անհրաժեշտ է խթանել լրա-

ցուցիչ արտադրական հզորությունների, առևտրային կազմակերպությունների և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը,

- պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հաշվառումը. տվյալ մարզում կամ տարածաշրջանում պտղահատապտղային արտադրանքի ավելցուկը կարող է արդյունավետ կերպով իրացվել ուրիշ մարզերում կամ տարածաշրջաններում, որտեղ բարձր է պահանջարկը արտադրանքի այդ տեսակների նկատմամբ, պտուղների և հատապտուղների այնպիսի տեսակներով մարզի կամ տարածաշրջանի ինքնաբավությունը, որոնք թույլ են տալիս սեփական արտադրության հաշվին մեծ չափերով բավարարել նրանց պահանջարկը,

- պտղահատապտղային արտադրանքի գծով հանրապետության պարենային անվտանգության ապահովումը, ինչպես նաև ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելը,

- ձևավորված արտադրատնտեսական կապերի պայմաններում առկա ռեսուրսները առավել արդյունավետ օգտագործելու և պտղահատապտղային արտադրանքի առանձին տեսակների նախնական վերամշակումը կազմակերպելու նպատակով ավանդական պտղաբուծության առավելագույն օգտագործումը:

Պտղաբուծությունը տեղաբաշխվում է մի շարք գործոնների փոխազդեցությամբ: Մասնավորապես, դրանց են դասվում՝

- ագրոկլիմայական պայմանները. հողի որակը, վեգետացիոն շրջանի տևողությունը, ակտիվ ջերմաստիճանների գումարը, տեղումների քանակը, ջրային ռեսուրսներով ապահովվածությունը, երաշտի ու ցրտի՝ վրա հասնելու հավանականությունը, հաճախակի և տևական կարկտահարությունը, ջրային և հողմնային էրոզիայի առկայությունը,

- հողային ռեսուրսներով ապահովվածությունը, այգիներ և հատապտղանոցներ հիմնելու համար պիտանի բազմամյա տնկարկների առկայությունը,

- որակավորման անհրաժեշտ մակարդակով աշխատանքային ռեսուրսների առկայությունը և աշխատողների աշխատանքային ունակություններն ու մասնագիտական հմտությունները,

- նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածությունը, որ հնարավորություն է ընձեռում որակական տեսակետից կատարելագործել դրանք,

- ցածր փոխադրելի ու արագ փչացող արտադրանքի կորուստների և տրանսպորտային ծախքերի կրճատումը թույլ տվող ճանապարհատրանսպորտային ցանցի և լոգիստական ծառայությունների առկայությունը,
- ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի, նորարարական տեխնոլոգիաների և կենսատեխնոլոգիաների առկայությունը,
- կոնկրետ մարզում կամ տարածաշրջանում պտղաբուծության արտադրանքի առանձին տեսակների արտադրության տնտեսական արդյունավետությունը:

Պտղաբուծության մեջ, ամբողջությամբ վերցրած, ռացիոնալ տեղաբաշխման և աշխատանքի տարածքաճյուղային բաժանման տնտեսական արդյունավետությունը որոշվում է ցուցանիշների համակարգով, որն ընդգրկում է միավոր արտադրանքի ինքնարժեքը, 1 հա պտղատու հասակի տնկարկների հաշվով շահույթը, արտադրանքի առանձին տեսակների շահութաբերության մակարդակը, պտղատու այգիների ու հատապտղանոցների բերքատվությունը: Պտուղների և հատապտուղների արտադրության տեղաբաշխման արդյունավետությունը ձեռք է բերվում վերևում նշված բոլոր սկզբունքների և գործոնների առավելագույն հաշվառման միջոցով, մարզում և տարածաշրջանում պտղահատապտղային արտադրություն վարելու համակարգերի նպատակահարմարությունը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտմամբ, հետագայում դրանց լուծմամբ:

Պտղաբուծությունը ՀՀ-ում ամենուրեք զարգացել է, սակայն նրա ռացիոնալ տեղաբաշխումը և գոտիական մասնագիտացումը միշտ չէ, որ համապատասխանել են նպատակահարմարության և աշխատանքի տարածքաճյուղային բաժանման խնդիրներին:

Պտղատու այգիների ու հատապտղանոցների տարածությունների և համախառն բերքի գերակշիռ մասը կենտրոնացված է ապրանքային պտղաբուծության հիմնական գյուղատնտեսական գոտիներում, որտեղ ագրոկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմանները առավել բարենպաստ են դրանց համար: Պտղատու այգիների և հատապտղանոցների ընդհանուր տարածությունների 68,2%-ը տեղաբաշխված է հանրապետության չորս մարզերում. Արմավիրում՝ 21,3%, Արարատում՝ 19,9%, Արագածոտնում՝ 16,2%, Կոտայքում՝ 10,7%: Այդ մարզերում է աճեցվում պտուղների և հատապտուղների համախառն բերքի 78,2%-ը. Արարատում՝ 30,8%, Արմավիրում՝ 23,1%, Արագածոտնում՝ 24,7%, Կոտայքում՝ 4,8% (տե՛ս աղ. 1):

**ՀՀ-ի մարզերում պտղաբուծության տեղաբաշխումը՝ 2016 թ.
ցուցանիշներով¹**

Երևանը և ՀՀ մարզերը	Պտղատու այգիների և հատապտղա- նոցների տարածույթ- յունները՝ հա-ով	Որից՝ պտղատու հասակի՝ հա-ով	Պտղի և հատա- պտղի համախառն բերքը՝ հազ. տ-ով	Բերքատվու- թյունը՝ ց/հա-ով	Պտղի և հատապտղի արտադրու- թյունը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, կգ-ով
Հայաստանի Հանրապետություն	40510	36620	242,6	66,1	81,0
Երևան	1328	1328	4,0	30,1	3,71
Արագածոտն	6582	5859	47,5	81,2	370,0
Արարատ	8073	7146	74,7	103,6	288,9
Արմավիր	8652	7505	56,0	74,7	210,8
Գեղարքունիք	1403	1364	11,2	82,5	48,8
Լոռի	2293	2073	1,6	7,6	7,14
Կոտայք	4325	3919	11,7	29,8	46,2
Շիրակ	534	527	8,1	152,9	33,8
Սյունիք	2601	2516	12,1	48,1	87,2
Վայոց ձոր	2139	1946	5,0	25,6	98,9
Տավուշ	2580	2437	10,6	43,7	85,5

Պտղատու այգիների ու հատապտղանոցների ամենամեծ տարածու-
թյունները և հիմնական համախառն բերքը կենտրոնացված են Արմավիրի
և Արարատի մարզերում: Սակայն այդ մարզերի առանձին տարածաշրջան-
ների ագրոկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմանները զգալիորեն
տարբերվում են, հետևաբար, այդ մարզերի մեջ մտնող ոչ բոլոր տարա-
ծաշրջաններում է հնարավոր պտղաբուծության համակողմանի զարգա-
ցումը: Այսպես, օրինակ, Արմավիրի մարզում առավել հաջողությամբ այն
իրականացվում է Արմավիրի և Էջմիածնի տարածաշրջաններում, իսկ
ավելի քիչ չափերով՝ Բաղրամյանի տարածաշրջանում:

¹ Տե՛ս Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազ-
մամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և բերքատվությունը 2016
թվականին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (Վիճակագրական տեղեկա-
գիր, Ե., 2017, էջ 67-71), ՀՀ-ի մշտական բնակչության թվաքանակը 2017 թ. հունվարի
1-ի դրությամբ (նույն տեղում, էջ 3-6):

Մարզերում պտղատու այգիների և հատապտղանոցների միջին բերքատվությունը կտրուկ կերպով տատանվում է. Լոռիում՝ 1 հա-ից 7,6 տ, Շիրակի և Արարատի մարզերում՝ համապատասխանաբար մինչև 152,9 տ և 108,6 տ: Շիրակի և Արարատի մարզերում պտղատու այգիների և հատապտղանոցների ավելի բարձր բերքատվությունը բացատրվում է ենթաճյուղի ինտենսիվացման մակարդակով, պտուղների առանձին տեսակների ապրանքային արտադրության խոշորամասշտաբ գոտիների ձևավորմամբ, դրա համակենտրոնացմամբ, պտղի ու հատապտղի տեսակային կազմի ընտրությամբ և այլն:

ՀՀ մարզերում պտղի և հատապտղի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով նույնպես կտրուկ տատանվում է. 2016 թ. Լոռու մարզում այն կազմել է 7,14 կգ, իսկ Արագածոտնի մարզում՝ 370 կգ: Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում պտուղների և հատապտուղների սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով համապատասխանել է տարեկան սպառման հանձնարարելի չափաքանակին՝ 76 կգ:

Պտղահատապտղային արտադրանքով մարզերի ինքնաբավության մակարդակը, որը հաշվարկվում է որպես մարզի տարածքում արտադրանքի հարաբերություն դրա ներքին սպառմանը և արտահայտվում է տոկոսներով, տատանվել է. Լոռու մարզում՝ 53,4%, Արագածոտնի մարզում՝ մինչև 102,2%: Պտուղներով և հատապտուղներով մարզերի ապահովվածության մակարդակը (սպառման հարաբերությունը սնման ռացիոնալ չափաքանակին) փոփոխվում է. Լոռու մարզում՝ 16,5 կգ, մինչև 165,8 կգ, Արագածոտնի մարզում²: Պտուղներով և հատապտուղներով որոշ մարզերի (Սյունիք, Տավուշ և Կոտայք) բնակչությանն ապահովելու խնդիրը կարելի է լուծել հիմնականում ենթաճյուղի խոշորամասշտաբ մասնագիտացված գոտիների ձևավորման, իսկ մյուսներինը՝ միայն ներմուծվող արտադրանքի հաշվին:

Պտղատու այգիների և հատապտղանոցների տեղաբաշխման կառուցվածքում ակնառու են հետևյալ տարբերությունները՝ Շիրակի, Լոռի Փամբակի, Կենտրոնական և Սևանի ավազանի գյուղատնտեսական գոտիների մի շարք մարզերի բազմամյա տնկարկների կառուցվածքում գերակշռում են հնդավորները. Գեղարքունիքում՝ 90,8%, Շիրակում՝ 70,0%,

² Հաշվարկները կատարել ենք ՀՀ մարզերի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների տվյալների խմբավորված վերլուծության հիման վրա:

Կոտայքում՝ 62,9%, Լոռիում՝ 58,5%: Հյուսիսարևելյան, Արարատյան դաշտի, Նախալեռնային որոշ տարածաշրջանների և Վայքի գյուղատնտեսական գոտիների մարզերում գերակշռում են կորիզավորները: Արմավիրում՝ 88,2%, Արարատում՝ 79,6%, Տավուշում՝ 40,5%, Վայոց Ձորում՝ 40,2%:

Ընկուզապտուղների առավել մեծ մասնաբաժին ունեն Արագածոտնի (20,5%), Վայոց Ձորի (19,9%), Սյունիքի (16,2%), Կոտայքի (12,2%) մարզերը: Բոլոր հատապտուղների գծով մեծ մասնաբաժին ունեն Արագածոտնը՝ 53,4%, Սյունիքը՝ 9,1%, Արմավիրը՝ 7,8%, Լոռին՝ 6,2%:

Շատ ավելի սահմանափակ տարածում ունի մերձարևադարձային պտուղների խումբը: Սյունիքում՝ 46,1%, Տավուշում՝ 35,9%:

ՀՀ-ի տարածքում պտղաբուծության ռացիոնալ տեղաբաշխումը նպաստում է արտադրության ծավալների ավելացմանը և դրա տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Պտղահատապտղային արտադրանքը նպատակահարմար է համակենտրոնացնել ենթաճյուղի ապրանքային արտադրության խոշորամասշտաբ մասնագիտացված գոտիներում: Արարատյան դաշտ, Նախալեռնային, Հյուսիսարևելյան և Զանգեզուր: Այստեղ նորարարական տեխնոլոգիաների հիման վրա պտղաբուծության զարգացման համար բարենպաստ են ինչպես ագրոկլիմայական, այնպես էլ սոցիալ-տնտեսական պայմանները:

Ռիսկային պտղաբուծության գյուղատնտեսական գոտիներում (Արարատյան դաշտի, Նախալեռնայինի, Կենտրոնականի, Վայքի, Զանգեզուրի որոշ ենթագոտիներում), որտեղ կանոնավոր կերպով ջերմաստիճանների կտրուկ տատանումներ, ձնհալք, գարնանային ժամանակահատվածում ծառերի արևային այրվածք, երաշտ, կարկտահարություն են դիտվում, մեր կարծիքով, գերակշռություն են ունենալու ավանդական պտղատու այգիները և հատապտղանոցները: Այդ գյուղատնտեսական գոտիներում միշտ չէ, որ կապիտալ ներդրումները փոխհատուցվում են ինտենսիվ այգիներ ու հատապտղանոցներ հիմնելու և աճեցնելու գործում: Այդ պատճառով, ավանդական պտղատու այգիներ ու հատապտղանոցներ հիմնելուց և աճեցնելուց հրաժարվելը հոգուտ ինտենսիվների ՀՀ շատ գյուղատնտեսական գոտիներում տնտեսապես արդարացված չէ:

ՀՀ Զանգեզուրի և Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտիների ցածրադիր գետահովտային տեղամասերում ու հարավային կողմնադրության լեռնալանջերին և Արարատյան դաշտի որոշ հատվածներում գե-

րակշռելու են ինտենսիվ պտղատու այգիները և հատապտղանոցները, որովհետև այնտեղ առավել բարենպաստ են դրանց աճեցման պայմանները: Այդ գյուղատնտեսական գոտիներում հաջողությամբ են իրականացնում տեղական լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների ագրոկլիմայական պայմաններին հարմարեցված ինտենսիվ պտղատու այգիներ և հատապտղանոցներ հիմնելու նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացները:

Պղտաբուծության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ պայման է պտուղների առանձին տեսակների ապրանքային արտադրության խոշորամասշտաբ մասնագիտացված գոտիների ձևավորումը: Արտադրության մասնագիտացումը՝ որպես աշխատանքի տարածքաճյուղային բաժանման ձև, դրսևորվում է առավելապես արտադրանքի որոշ տեսակների արտադրության, իսկ երբեմն նաև պատրաստի արտադրանքի թողարկման մեջ՝ առանձին տեխնոլոգիական փուլերին տրվող նախապատվության միջոցով: Մասնագիտացումն ունի կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն: *Առաջին*, նպաստում է նյութական և ֆինանսական ռեսուրսների կենտրոնացմանը մրցունակ արտադրանք թողարկելու համար, *երկրորդ*, բարենպաստ պայմաններ է ստեղծում կատարելագործված տեխնոլոգիաների արմատավորման, ենթաճյուղը զարգացման արդյունաբերական բնույթ ունեցող ուղի փոխադրելու համար, *երրորդ*, թույլ է տալիս կատարելագործել աշխատանքի կազմակերպման ձևերը և աշխատողների աշխատանքային հմտություններն ու մասնագիտական ունակությունները, *չորրորդ*, նպաստում է ենթաճյուղի տնտեսական արդյունավետության ու տնտեսավարման առանձին ձևերում արտադրության համակենտրոնացման մակարդակի բարձրացմանը:

Պղտաբուծության արտադրանքի մասնագիտացումը պայմանավորված է ենթաճյուղի առանձնահատկություններով՝ վերարտադրության տնտեսական և կենսաբանական օրենքների միահյուսումով, արտադրության սեզոնային և տարածքային բնույթով, պտղահատապտղային արտադրանքի ստացման սեղմ ժամկետներով, արագ փչացող արտադրանքի մեծ ծավալներով, դրա հավասարաչափ սպառումով և այլն: Այդ առանձնահատկությունները հիմնավոր ազդեցություն են թողնում մասնագիտացման ձևերի, տեմպերի և, ամբողջությամբ վերցրած, գործընթացի վրա:

Պտուղների առանձին տեսակների ապրանքային արտադրության մասնագիտացված գոտիները ձևավորվում են բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, որոնք նպաստում են դրա զարգացմանը կամ կասեցնում են այն: Մասնագիտացման խորացումը ենթադրում է տեխնիկայի, տեխնոլոգիաների և արտադրության կազմակերպում, կատարելագործում՝ նորաստեղծարար զարգացման նվաճումների արմատավորման հիման վրա, բարեկարգ ճանապարհատրանսպորտային պայմանների և լոգիստական ծառայությունների առկայություն: Միայն պտուղների ու հատապտուղների ապրանքային արտադրության խոշորամասշտաբ, մասնագիտացված գոտիների ձևավորման դեպքում կարելի է իրականացնել պտղաբուծության համալիր մեքենայացում, կիրառել արտադրանքի թողարկման և վերամշակման ինտենսիվ ու ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ և օգտագործել աշխատանքի կազմակերպման առաջավոր ձևեր ու տնտեսավարման ազգային ավանդույթներ: Շուկայական ձևավորված տնտեսավարման պայմաններում մասնագիտացման խորացումը կասեցվում է անհրաժեշտ տեխնիկական բազայի բացակայությամբ:

Պտուղների և հատապտուղների առանձին տեսակների ապրանքային արտադրության մասնագիտացման համար էական են գլխավոր կամ հիմնական ենթաճյուղեր ընտրելը և դրանց համար առավել զարգացման պայմաններ ստեղծելը: Մասնագիտացման խորացումը կարող է իրականացվել ապրանքային ենթաճյուղերի քանակը կրճատելու, ինտենսիվացման հիման վրա գլխավոր (հիմնական) ենթաճյուղի արտադրանքի ծավալներն ավելացնելու, գլխավոր (հիմնական) ենթաճյուղի ապրանքայնության մակարդակը բարձրացնելու հաշվին:

Պտղաբուծական տնտեսությունում պտուղների և հատապտուղների տարբեր տեսակների ռացիոնալ զուգակցումը և մասնագիտացման խորացումը իրագործվում են հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- առավելագույն շահույթ ստանալու համար աշխատանքի և միջոցների նվազագույն ծախսերի դեպքում շուկայական մրցունակ պտուղների ու հատապտուղների արտադրությամբ,
- ագրոկլիմայական և սոցիալ – տնտեսական պայմանների հաշվառմամբ,

- առավելապես պտուղների և հատապտուղների այն տեսակների արտադրության գծով մասնագիտացման խորացմամբ, որոնք տեխնոլոգիապես և կազմակերպչական առումով կապված են միմյանց հետ,

- գյուղատնտեսական հողատեսքերի, առաջին հերթին, բազմամյա տնկարկների ռացիոնալ օգտագործմամբ և բերրիության բարձրացմամբ,

- աշխատանքային ռեսուրսների, առաջին հերթին, աշխատողների աշխատանքային հմտությունների ու մասնագիտական ունակությունների և տեխնիկական միջոցների արդյունավետ կիրառմամբ,

- արտադրության սեզոնայնության մեղմացմամբ և տարվա ընթացքում դրամական միջոցների հավասարաչափ մուտքերով:

Ելնելով արտադրության նպատակներից, տնտեսությունների առանձնահատկություններից, բնատնտեսական պայմանների և գյուղատնտեսական հողատեսքերի շուկայական տեղադրության ու կառուցվածքի հաշվառումից՝ պտղաբուծական տնտեսությունում պտուղների ու հատապտուղների տեսական ու գիտականորեն հիմնավորված զուգակցումը կապվում է բուսաբուծության և անասնաբուծության տարբեր ենթաճյուղերի միջև լավագույն համամասնություններ ընտրելու հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել բարձր արդյունքներ ունեն տնտեսավարման այն ձևերը, որոնցում պտղաբուծության մասնաբաժինը ապրանքային գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում կազմում է 40- 75 %:

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումից կախված՝ ստեղծվում են պտղաբուծական տնտեսությունների հետևյալ տարատեսակները՝ պտղաբուծական, հատապտղաբուծական և տնկարանային:

Պտղաբուծական տնտեսություններում պտուղները տնկարկների կառուցվածքում գրավում են 95%-ից ավելին, իսկ նրանց այգիները 40-ից մինչև 150 հա են և ավելի: Նրանցում զգալի զարգացում են ստացել պտուղների վերամշակումը և պահեստավորումը: Բայց պտուղների վերամշակման և պահեստավորման գծով ստորաբաժանումներ ունեցող յուրաքանչյուր տնտեսություն չէ, որ ագրոարդյունաբերական, ագրոհողիչնգային և ագրոֆիրմային՝ տիպաբանորեն զարգացող մասնագիտացված ձեռնարկություն է: Տնտեսությունները վերջիններիս դասելու չափանիշ կարելի է համարել ապրանքային արտադրանքի կառուցվածքում վերամշակող ստորաբաժանումների և պտղապահեստների արտադրանքի մասնաբա-

ժինը, որն առնվազն 25% է: Այդ դեպքում վերամշակող ստորաբաժանումների և պտղապահեստների արտադրությունը մտնում է հիմնական ենթաճյուղերի կազմի մեջ՝ դրանց հետ միասին որոշելով տնտեսության տեղը աշխատանքի տարածքաճյուղային բաժանման համակարգում: Արդյունաբերական արտադրության ապրանքային արտադրանքի արժեքը հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև դրանց պահեստավորման դեպքում ստեղծվող արժեքը, որովհետև պահեստավորումը՝ որպես արտադրական գործընթաց, առանձնացվում է արդյունաբերական ճյուղի մեջ: Պահեստավորման մեջ զբաղված աշխատողների աշխատանքն արտադրողական է, որովհետև այն ստեղծում է նոր արժեք:

Հատապտղաբուծական տնտեսություններն ունեն պտղատու այգիների և հատապտղանոցների համեմատաբար ոչ մեծ տարածք (25-150 հա), բայց դրանց կառուցվածքում զգալի մասնաբաժին են կազմում հատապտղանոցները (25-35%):

Պտղաբուծության ենթաճյուղում մասնագիտացման խորացումը հանգեցրել է նրան, որ տնկարանաբուծությունը առանձնացվել է ինքնուրույն ենթաճյուղի մեջ: Առանձին տնտեսություններ մասնագիտանում են պտղատուների և հատապտղուղների համար տնկանյութի արտադրության գծով: Այսպես, օրինակ, տնկարանային խոշորագույն տնտեսություններից մեկը՝ «Նորատունկ տնկարան» ՍՊԸ-ն, հիմնադրվել է Կոտայքի մարզի Առինջ համայնքում, որը ներառելով ինչպես Հայաստանի, այնպես էլ համաշխարհային ընտրասերման միջոցով ստեղծված լավագույն պտղատեսակները՝ արտադրում է կորիզավոր ու հնդավոր 10 պտղատեսակ 63 սորտի տնկիներ և հատապտղուղների բարձրորակ տնկանյութ³:

Համագործակցելով տարբեր երկրների պտղաբուծական կենտրոնների հետ՝ «Նորատունկը» ներկրում և մեր հանրապետությունում փորձարկում է պլանետային պտղաբուծության նոր սորտեր և պատվաստակալներ: Մասնավորապես, որպես առաջատար ծիրանենու ցածրաճ պատվաստակալների արտադրության ոլորտում՝ ՍՊԸ-ն ընտրության միջոցով կազմակերպել է ծիրանենու հայկական տեսակների պատվաստումը 3 տեսակի ցածրահասակ՝ պլանետային պատվաստակալների վրա, որոնք հարմարվողական-լանդշաֆտային առումով լավ են դրսևորվում լեռնային ռելիեֆի

³ Տե՛ս **Ավետիսյան Ս.**, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Ե., 2010, էջ 42:

պայմաններում: Եթե այդ բոլորին գումարենք նաև այն, որ ավանդական պտղաբուծության համեմատությամբ պալմետային պտղաբուծությունը ակնհայտ առավելություններ ունի (այս ծառերը 2-3 անգամ ավելի շատ բերք են տալիս, 1 հա-ի վրա կարելի է 1140 ծառ տնկել, և շատ աշխատանքներ հնարավոր է մեքենայացնել), ապա ավելի պարզ կդառնա պալմետային պտղատուների առավելությունը խոշոր պտղատուների համեմատությամբ:

Պտղաբուծության մեջ, մեր կարծիքով, լայն տարածում կարող է ստանալ հայկական ազնվամորու արտադրության գծով խոշորամասշտաբ, մասնագիտացված գոտիների ձևավորումը, որովհետև այդ հատապտղի աճեցումը հենվում է գրեթե բոլոր արտադրական գործընթացների համալիր մեքենայացման վրա և թույլ է տալիս կտրուկ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը (հայկական ազնվամորու աճեցման նորարարական տեխնոլոգիան թույլ է տալիս 2-3 անգամ իջեցնել արտադրության աշխատատարությունը): Բացի դրանից, հայկական ազնվամորին՝ վաղապտղաբեր հատապտուղ է: Երրորդ տարին արդեն մուտք է գործում պտղաբերության մեջ: Ապրանքային արտադրության խոշորամասշտաբ, մասնագիտացված գոտիներում հատապտղաբուծական տնտեսությունների լավագույն օրինակ են Ապարանի տարածաշրջանի Արայի, ինչպես նաև Սիսիանի տարածաշրջանի Աշոտավան համայնքները՝ համային յուրահատուկ հատկանիշներ ունեցող և էկոլոգիապես մաքուր ազնվամորու արտադրության գծով:

Հայկական ազնվամորու ապրանքային արտադրության խոշորամասշտաբ, մասնագիտացված գոտիների ձևավորման կազմակերպման նորարարական նախագիծը հետևյալն է:

1. Ինտենսիվ հատապտղանոցներ: Տնկադաշտ անհրաժեշտ է հիմնել մեքենայացված աճեցման համար պիտանի և հատապտուղների բերքահավաքի ժամանակահատվածը 3-4 շաբաթով երկարաձգելը թույլ տվող սորտերով:

2. Տնկարան ազնվամորու տնկիների արտադրության համար: Տնկարանաբուծությունը խոշորամասնագիտացված տնտեսություններում կարող է լրացուցիչ ենթաճյուղ լինել, որը տեխնոլոգիապես զուգակցվում է հիմնականի հետ: Բազմացման համար կարելի է օգտագործել տնկելուց հետո առաջին տարում հատապտուղների էտումից ստացված պատվաստաշիվերը: Մասնագիտացված տնտեսության ձևավորման առաջին փուլում տնկա-

րանը, երբ տնկարկը դեռևս պտղաբեր չէ, թույլ է տալիս ոչ միայն տնտեսությանը ապահովել սեփական տնկանյութով, այլև նրա իրացումից դրամական միջոցներ ստանալ ընդլայնված վերարտադրության համար:

3. Հողաբարելավման կառույցներ (ոռոգման ցանց): Հայկական ազնվամորու բարձր բերք ստանալու համար (մինչև 60-65 g/հա), Կենտրոնական և Զանգեզուրի գյուղատնտեսական գոտիներում անհրաժեշտ է ոռոգում: Սակայն որոշ տնտեսությունների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ տնկարկներ հիմնելու համար հողամասի ճիշտ ընտրությունը թույլ է տալիս նաև առանց ոռոգման կանոնավոր կերպով ստանալ մինչև 40 g/հա բերք:

4. Արտադրական կառույցները (տեխնիկայի և արտադրանքի պահպանման համար շենքերը վերամշակող ստորաբաժանումները և այլն):

Նախագծում հիմնավորված է հայկական ազնվամորու աճեցումը ամբողջությամբ մեքենայացման ենթարկելու թույլ տվող տնկարկների տեսակային կազմը և տեխնիկայի անհրաժեշտ հավաքակազմը:

Այսպիսով, աշխատանքի ռացիոնալ տարածքաճյուղային բաժանումը, պտղահատապտղային արտադրանքի մասնագիտացված գոտիների ձևավորումը՝ պտղաբուծության տնտեսապես արդյունավետ զարգացման կարևոր պայման են, այդուամենայնիվ, էական է ենթաճյուղի պետական աջակցության հիմնախնդիրը, որի մակարդակը մնում է շատ ցածր և չի համապատասխանում արդիականացման ու նորարարական տեխնոլոգիաների զարգացման խնդիրներին:

ОСОБЕННОСТИ ТЕРРИТОРИАЛЬНО – ОТРАСЛЕВОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА В ПОДОТРАСЛИ ПЛОДОВОДСТВА РА

МАНАСЯН В.Г.

Резюме

В современных условиях рыночного хозяйства актуальность повышения экономической эффективности плодоводства тесно связана с его территориально-отраслевым разделением труда в РА и производством плодо-

во-ягодной продукции в специализированных поясах с оптимальным уровнем концентрации и специализации производства. Важно отметить, что в процессе территориально-отраслевого разделения труда подотрасли широкое распространение получила внутриотраслевая специализация, которая зависит от целевого назначения продукции. В хозяйствах, продукция которых предназначена для вывоза в отдаленные города и промышленные центры, как правило, преобладают семечковые породы зимних сортов, отличающиеся хорошей транспортабельностью и пригодностью для длительного хранения. В хозяйствах пригородных поясов высокий удельный вес занимают ягодные, косточковые породы, летние и осенние сорта семечковых культур.

PECULIARITIES OF WORK DIVISION IN THE BRANCH OF HORTICULTURE IN RA

V. MANASYAN

Abstract

In modern conditions of market economy, the relevance of increasing the economic efficiency of fruit growing is closely related to its territorial and sectoral division of labor in the RA and the production of fruit and berry products in specialized belts with the optimal level of concentration and specialization of production and the production of fruit and berry products in specialized belts with an optimal level of concentration and production specialization. It is important to note that in the process of territorial and sectoral division of labor, the subsector is widely distributed intra-industry specialization, which depends on the intended use of products. In farms whose products are intended for export to remote cities and industrial centers, seeds of winter varieties, characterized by good transportability and suitability for long-term storage, predominate. In the farms of suburban belts, berry, stone fruit, summer and autumn varieties of pome crops have a high proportion.

АРМЯНСКИЙ И ИСПАНСКИЙ АПОКРИФЫ ОБ АПОСТОЛЕ ИАКОВЕ

АРАМЯН А.Г.

В армяно-испанских культурно-исторических и литературных отношениях, уходящих корнями к V-VII вв., можно отметить самые разные по интенсивности периоды сближения, как, например, в средние века, когда Испания стала центром притяжения для многочисленных армянских паломников, стремящихся посетить галисийский храм Сантьяго-де-Компостелу, где по преданию покоилось тело апостола Иакова, а голова находилась в армянском храме св. Иакова в Иерусалиме. Апокриф о подвижнической жизни и мученической смерти святого апостола Акопа относится к числу древнейших и популярных армянских апокрифов, видимо, этим и обусловлено упоминание в армянских средневековых источниках "страны святого Иакова" вместо Испании.

Наиболее ранние письменные свидетельства о пребывании армян в Европе относятся к X-XI вв. В числе первых армянских паломников европейские источники называют Макара, Симеона и Давида, трех епископов, совершивших паломничество по святым местам в европейских странах, прославившихся многочисленными чудесами и причисленных католической церковью к лику святых¹. Двое из них – Симеон и Давид посетили Испанию. Как гласит предание, Симеон обитал в одном из монастырей Аршаруникского уезда, где, уединившись в хижине, вел отшельническую жизнь. Затем он совершил паломничество в Иерусалим и прославился многими чудесами. Симеон побывал в Риме,

¹ Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. I, Գաիիրէ, 1941, էջ 339:

в городах Тосканы, странствовал по Франции, Британии, Испании. В Испании он посетил Сантьяго-де-Компостелу, а в Астурии молитвами и заклинаниями исцелил дочь короля, избавив ее от «искушений дьявола» и великодушно отказавшись принять преподнесенные ему в знак благодарности дары. После странствий по Европе Симеон обосновался в Италии, в бенедиктинском монастыре Мантуи, где и умер в 1016 г., но чудеса продолжали происходить и после его смерти².

Давид – также уроженец Армении (San Tavino Armeno), совершил паломничества в Иерусалим и Рим, снискал славу мученика и чудотворца, умер по пути в Сантьяго-де-Компостелу в Лукке (Италия) в 1050 г.³

К числу известных исторических фактов, несомненно, относится приезд в Испанию "дочери армянского царя" со своей свитой и паломничество в Сантьяго-де-Компостелу (XI в.). В известном монастыре Сан-Сальвадор де Красто де Авелас, в окрестностях Брагансы, она была принята доном Мендо Алао де Браганса, который взял ее в жены⁴. У них родились сын и дочь, сын женился на дочери кастильского короля Альфонса VI, потомство которого "в дальнейшем составило большую часть дворянства Португалии и Кастилии"⁵.

Армяне были в числе частых посетителей храма св. Иакова, о чем свидетельствуют многочисленные факты, приведенные известным медиевистом Р. Гюльбенкяном: так, в "Книге св. Иакова" папы Каликста II, датированной 1139-1173 годами, помещен гимн апостолу, в котором среди паломников, посещавших могилу св. Иакова, первыми названы армяне⁶. Известно также, что армяне имели в Компостеле свой приют "Иерусалим", где проводились богослужения, хранилась религиозная литература, к сожалению, армянские манускрипты не сохранились⁷. На-

² Չանչեանց Մ., Հայոց պատմութիւն, հ. ք, Ե., 1985, էջ 860, 865:

³ Մաթևոսյան Վ., Սանթիակո տէ Գոմփոստելա եւ հայերը (Բազմալէպ, 2005, N 1-4, էջ 198):

⁴ Там же, с. 198-202.

⁵ Կյուլպենկյան Ռ.Վ., Հայ-պորտուգալական հարաբերություններ, Ե., 1986, էջ 9-10 (далее – Ռ. Կյուլպենկյան):

⁶ Там же, с. 33.

⁷ Там же, с. 38.

до полагать, что название приюта для армянских паломников свидетельствует о связи между храмами св. Иакова в Иерусалиме и в Компостеле, и эта обитель, видимо, предназначалась для пилигримов-армян из Иерусалима.

С именем апостола Иакова (Сантьяго) долгое время ассоциировалось возникновение христианства в Испании, однако позднейшие исследования показали, что культ Иакова в этой стране возник в первой половине VII в. Особый интерес к этому святому отмечается в период Реконкисты (VIII-XV вв.), когда сознательно поддерживались религиозный фанатизм и нетерпимость, столь типичные для средневековой Испании. К этому времени в Галисии были "открыты" мощи св. Иакова, был создан рыцарский орден Сант-Яго, ставший "выражением складывающегося единого национального самосознания испанцев, выработанного в борьбе против политических и религиозных врагов-мусульман. Воины Испании теперь шли в бой с кличем "Сант-Яго и единая Испания!"⁸.

Свидетельством популярности культа апостола стало сооружение в Сантьяго-де-Компостеле, на месте старого храма, великолепного собора с идеальными пропорциями, который на протяжении последующих веков достраивался и украшался прекрасными барельефами и скульптурами, многочисленными изображениями библейских сцен, а "у алтаря из алебаstra, яшмы и серебра была установлена прекрасная статуя Святого Иакова, покрытая серебром, инкрустированным бриллиантами"⁹, – все это вызывало восторг и восхищение верующих. Подобно Риму и Иерусалиму, Компостела превратилась в крупнейший центр паломничества, привлекавший многочисленных пилигримов из самой Испании и других стран.

Путешествие к св. Иакову было сопряжено с многочисленными трудностями: паломники должны были обладать огромной силой воли, чтобы преодолеть все препятствия к заветной цели. Данте хорошо

⁸ Народы зарубежной Европы, М., 1965, с. 426.

⁹ **Джордж Т.** Мир паломничества, М., 1988, с. 92.

представлял моральные и физические трудности этого путешествия, когда писал в "Новой жизни": "Странником почитается лишь тот, кто идет к дому св. Иакова, или же возвращается оттуда"¹⁰.

Поклонение армян и испанцев одному и тому же святому, занимавшему почетное положение среди христиан (по преданию апостол Иаков был первым епископом Иерусалима), подвигло религиозных деятелей обоих народов ознакомиться с бытовавшими у армян и испанцев легендами и преданиями об апостоле. Как утверждает Г. Алишан, в средние века паломничество армян в Компостелу было чрезвычайно популярно, и поэтому "в XIII в. или раньше они отправили в Испанию некоего вардапета Ованеса для перевода истории обезглавленного апостола, а испанцы в XVI в., по повелению своего короля Карла V, посылают к армянам рыцаря Бакеко с сыном, епископом Мурсии, который переводит историю, переданную нам в Прологе"¹¹.

Отметим, что выдающийся арменовед Н.О. Эмин (1815-1890), придававший большое значение изучению апокрифов, "которыми так богата армянская письменность", выдвинул идею "приведения в известность апокрифов", то есть перевода их на русский и европейские языки, предвидя "возможность для сличения с ними европейских апокрифов"¹². Таким образом, ученый наметил одно из направлений, по которому могли пойти будущие арменоведы и вывести изучение апокрифов на новый международный уровень.

Армянский и испанский апокрифы об Иакове, имея в основе жизнеописание одного и того же святого, не повторяют друг друга: армянское предание посвящено возвращению апостола из Испании в Иерусалим, его мученической гибели и посмертному возвращению в Испанию, а испанское – деяниям Иакова в этой стране. В армянском Прологе (Синаксарии) повествуется о том, как апостолы по жребию разошлись по всему свету: "И великий Иаков дошел до Испании, где он проповедовал евангелие и основал церковь, назначал священников и

¹⁰ Данте Алигьери. Новая жизнь. Божественная комедия, М., 1967, с. 72.

¹¹ Ղ. Միշին, Միսկան, Վենետիկ, 1893, էջ 457:

¹² Переводы и статьи Н.О. Эмина, М., 1897, с. 344.

служителей, и с этих пор среди испанцев утвердилось христианство. Затем он вернулся в Иерусалим, где и был обезглавлен Еродеем за открытое противостояние и смелые упреки евреев, некоторые же говорят, что он был убит в Кесарии... Ангел взял голову святого и перенес в Иерусалим, установив ее там, где сейчас находится великолепный и знаменитый храм армянской нации. Женщина знатного испанского рода по имени Ириа Флабия¹³, которая была ученицей Иакова в Иерусалиме, подкупив палача, взяла тело безглавого святого, чтобы увезти в Испанию. В ожидании корабля она привязала тело к прибрежному камню, и волею бога тело апостола отвязалось, и волны моря понесли его в Испанию... И столкнулось (тело апостола–А.А.) со слепым, который мыл руки в реке, и когда рука слепого коснулась тела святого, а лицо омылось водой, раскрылись глаза его, и увидел он святое тело, и тотчас раздался громкий вопль: "Идите, посмотрите на безглавого бога, который раскрыл мои помутневшие глаза"! И прибежали все, почтили тело святого и назвали безглавым богом, пока не прибыли апостол Павел и та женщина из знатного рода, которая хотела увезти тело в свою страну, и сказали они и научили испанцев, что это не бог, а слуга бога и апостол бога. А тело обезглавленного апостола руками учеников его или чудом было перенесено в Компостелу, галисийский город, ставший известным местом паломничества"¹⁴.

О личности армянского священника, который перевел испанское предание об апостоле, история умалчивает, вероятно, не располагал сведениями и Г. Алишан, назвав его "неким вардапетом Ованесом".

А. Алпояджян высказал предположение, что это мог быть "один из обосновавшихся в Киликии латинских проповедников, изучивший армянский для ознакомления испанцев с армянским апокрифом о муче-

¹³ Ученица апостола названа "Ириа Флабия", однако мы полагаем, что в текст вкралась ошибка, так как "Ириа Флабия" по-латыни означает "город Флавиес", который в древности был построен римлянами на северо-западном побережье Испании. Вероятно, ученица апостола была из этого города.

¹⁴ **Ավգերյան Մ.**, Լիակատար վարդ եւ վկայաբանութիւն սրբոց որք կաւն ի հին Տոնացոցի եկեղեցոյ Հայաստանեայց, հ. Ժ, Վենետիկ, 1894, էջ 303-304:

ничестве св. Иакова"¹⁵. Однако с этим трудно согласиться. Если бы Ованес был латинским священником, ознакомившим испанцев с армянским апокрифом о св. Иакове, то зачем нужно было в XVI в. направлять с той же целью в Армению епископа Мурсии.

Что же касается личности Ованеса, мы полагаем, что это не мог быть "некий", безвестный священник, посланный в Испанию с официальной миссией.

Благодаря изысканиям А. Мушегяна стало известно об армянском священнослужителе (упоминаемом в европейских источниках того времени), странствовавшем по многим европейским странам и совершавшем паломничество к памятным местам религиозного поклонения. К началу XIII в. относится сообщение в хронике "Цветы истории" английского летописца Роджера Уэндоверского о посещении бенедиктианского аббатства св. Альбана армянским архиепископом. Как пишет хронист, "в 1228 г. из Великой Армении прибыл в Англию некий архиепископ с целью паломничества по святым местам и поклонения святым мощам, как он делал в других краях"¹⁶. Священник представил рекомендательное письмо римского папы, в котором поручалось "достопочтенным мужам и церковным владыкам с честью принять его и отнестись с уважением", что и было исполнено английскими священниками: "Настоятель и вся братия встретили его с надлежащим почтением. Он прибыл сюда, уставший от странствий, чтоб он и его спутники могли немного передохнуть, и через переводчика начал с интересом расспрашивать о принятых в Англии обрядах, ритуалах, жизненном укладе и, в свою очередь, в ответ на полученные сведения рассказывал о разных удивительных особенностях своей страны"¹⁷.

В "Рифмованной хронике" фламандца Филиппа Муске, написанной приблизительно в 1243 г., также сообщается об армянском архи-

¹⁵ Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հ. II, Կահիրե, 1955, էջ 627:

¹⁶ Մուշեղյան Ա., Գերմանական մի լեգենդի հայկական ակունքները (Հայ գրականության միջազգային կապերը, հ. 2, Ե., 1987, էջ 27):

¹⁷ Там же, с. 28.

епископе, который в период великого поста три дня пробыл в аббатстве Турне, чтобы приобрести там припасы. Фламандская хроника дает весьма лестную характеристику армянскому священнослужителю, называя его "достопочтенным архиепископом, осененным благодатью"¹⁸.

А. Мушегян, детально проанализировав тексты летописцев, сопоставив сообщаемые ими сведения, пришел к заключению, что в обеих хрониках речь идет об одном и том же архиепископе-армянине, и хотя Муске написал свою хронику намного позднее, несомненно, что "почтенная личность", описанная в английской летописи, до прибытия в Англию гостила в Турне в феврале – марте 1228 г.¹⁹

Примечательно, что оба хрониста приводят рассказ армянского священника о человеке, присутствовавшем при казни Христа и обреченном им на бессмертие, что по мнению А. Мушегяна, является письменным свидетельством и первоисточником, подготовившим почву для создания и распространения позднее, в середине XVI в. в Германии, легенды о вечном жиде по имени Агасфер²⁰. Ф. Муске было известно о паломничествах, которые намеревался совершить армянский священник в Англию и Испанию: "К святому Томасу Кентерберийскому, о славе которого он слышал, а затем к святому Иакову"²¹. По поводу путешествия к испанской святыне А. Мушегян замечает: "Что же касается св. Иакова, к которому намеревался совершить паломничество армянский архиепископ, то под этим, пожалуй, надо подразумевать известный центр паломничества в Испании Сантьяго-де-Компостелу"²².

В результате тщательного историко-филологического исследования А. Мушегян аргументированно обосновал, что армянским паломником, о котором упоминают английский и фламандский хронисты, был Ованес Гарнеци, видный церковный деятель первой половины XIII в., которого хорошо знал Вардан Аревелци (Великий). Со слов последнего,

¹⁸ Там же, с. 34.

¹⁹ Там же, с. 35.

²⁰ Там же, с. 50.

²¹ Там же, с. 34.

²² Там же, с. 36.

Киракос Гандзакечи в "Истории Армении" поведал о жизни вардапета и чудесах, связанных с его именем, в главе "Об Иованнесе Гарнеци"²³, где рассказал об удивительной личности вардапета, снискавшего любовь и уважение окружающих, наделенного мистическим воображением и даром ясновидения, прожившего богатую приключениями и знаменательными встречами жизнь. Так, побывав в иерусалимском храме св. Иакова, Гарнеци рассказал об "иерее, видевшем там дивное видение" – ожившие изображения святых, воспевающих богоматерь. Благодаря Гандзакечи стало известно о путешествии Гарнеци в Колонию (Кельн) где, используя свой магический дар, он спас мальчика, падающего с крепостной стены и т.п.

Идентификация личности армянского архиепископа, описанного в хрониках Роджера Уэндоверского и Филиппа Муске, с известной исторической личностью, вардапетом Ованесом Гарнеци, путешествовавшим по многим городам и странам, с именем которого связаны многочисленные чудесные видения и волшебные преобразования, благодаря исследованию А. Мушегяна, позволила соединить воедино эти образы в лице Ованеса Гарнеци, священника-паломника, посетившего в 20-ых годах XIII в. Германию, Фландрию, Англию и Испанию²⁴.

Намерение Ованеса Гарнеци посетить храм св. Иакова в Сантьяго-де-Компостеле могло быть мотивировано несколькими причинами:

1. Наряду с Римом и Иерусалимом Компостела пользовалась славой крупнейшего паломнического центра, куда стекались пилигримы со всего мира.

2. Компостела была особенно привлекательна для армян, имевших в Иерусалиме храм св. Иакова, где по преданию хранилась голова апостола, а тело было похоронено в Компостеле.

3. И самое главное: путешествие Ованеса Гарнеци в Испанию могло преследовать вполне конкретную цель – ознакомление с испанским преданием о св. Иакове и перевод его на армянский.

²³ К. Гандзакечи. История Армении, М., 1976, с. 213-217.

²⁴ Մուշեղյան Ա., указ. соч., с. 36.

О том, что паломничество Гарнеци носило не случайный характер, а было predetermined особой миссией, может свидетельствовать то обстоятельство, что он путешествовал в сопровождении свиты, имея рекомендательные письма папы к церковным владыкам с просьбой проявлять к нему надлежащее уважение. В составе свиты был и переводчик – антиохийский рыцарь Матевос или рыцарь по имени Роджер, который, помимо французского, несомненно, владел латынью, а может быть и испанским.

Колоритная личность Ованеса Гарнеци, заслужившая внимание английского и фламандского хронистов, на наш взгляд, могла привлечь и испанцев. В этой связи нам представляется достойным внимания сообщение о любопытном факте из истории древней Испании: о хранящейся в древнем соборе Толедо картине "Крестный ход в соборе", изображающей "шествие армянских монахов, облаченных в клобуки и ризы"²⁵. Нам кажется, что для написания подобной картины должен был быть повод: возможно, она была посвящена армянским паломникам во главе с Ов. Гарнеци, посетившим не только Компостелу, но и религиозный центр средневековой Испании и столицу государства – Толедо.

Связывая с подвижнической деятельностью апостола Иакова распространение христианства на Пиренеях, испанское предание отмечает:

"А насколько праведным было странствие святого апостола Иакова по Испании и какие события нашли освещение в национальных преданиях, то с древнейших времен до наших дней во всех испанских церквях, в частности, братии сарагосской церкви или цезаря Августа арагонской, так называемой Пиларской богородицы, известно предание о том, как св. Иаков, придя со своими учениками на берег реки Иберис или Эброс, целую ночь молился и читал проповедь. И привиделась ему

²⁵ Հայաստանեայց եկեղեցի, Նյու-Յորք, 1941, սեպտեմբեր, էջ 373: Данная публикация посвящена встрече с молодым испанистом, окончившим калифорнийский университет и специализировавшимся на сравнительном исследовании армянского и испанского языков, который и познакомил с репродукцией упомянутой картины автора заметки. К сожалению, о молодом компаративисте известно лишь то, что он "из рода амасийских Зорикянов".

благословенная богоматерь, которая восседала на мраморном пьедестале или высокой колонне из яшмового камня, окруженная небесными ангелами. И когда Иаков преклонился пред ней, святая дева-богоматерь сказала ему: "На этом месте построй в мою честь церковь, так как я знаю, что эта провинция Испании будет благоговейно поклоняться мне, и я буду ее защитницей". И когда видение исчезло, исполнил апостол повеление владычицы, и в часовне, которую он построил, поставил ту самую колонну"²⁶.

Полагаем, что приведенный выше апокриф об апостоле Иакове, выполненный благодаря миссии Ов. Гарнеци, является первым испанским источником, переведенным на армянский с латинского оригинала.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԵՐԸ ՀԱԿՈՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԱՍԻՆ

ԱՐԱՄՅԱՆ Ա.Գ.

Ամփոփում

Հակոբոս առաքյալի մասին հայկական ավանդությունը դարձավ հայերի՝ Իսպանիա այցելելու ձգտումները հիմնավորող պատմամշակութային առնչությունների սկզբնավորման և զարգացման վճռական գործոններից մեկը, քանի որ, ըստ ավանդության, առաքյալի գլուխը պահվում էր Երուսաղեմի Ս. Հակոբոսի հայկական տաճարում, իսկ մարմինը՝ Սանտյագո դե Կոմպոստելում: Իսպանական միջնադարյան աղբյուրները հայերին հիշատակում են Կոմպոստելի հաճախադեպ այցելուների թվում: Ինչպես հաղորդում է Ղևոնդ Ալիշանը, հայերը XIII դ. Իսպանիա են ուղարկում Հովհաննես վարդապետին՝ առաքյալի մասին ավանդությունը հայերեն թարգմանելու:

Ա. Մուշեղյանի հետազոտության շնորհիվ հայտնի դարձած՝ XIII դ. եվրոպական աղբյուրները հիշատակում են Անգլիա և Ֆլանդրիա այցելած հայ եկեղեցականի մասին, որը մտադրված էր այցելել նաև Իսպանիայում գտնվող Ս. Հակոբոսի տաճարը: Պատմաբանասիրական մանրագնին,

²⁶ **Ավգերյան Մ.**, указ. соч., с. 302. Речь идет об известной базилике Мария де Пилар в Сарагосе.

փաստարկված քննության շնորհիվ Ա. Մուշեղյանը հաստատեց, որ եվրոպական քրոնիկներում հիշատակվող հայ վարդապետը XIII դ. կրոնական նշանավոր գործիչ Հովհաննես Գառնեցին է:

Հենվելով տեղեկությունների տվյալների վրա՝ փորձել ենք հիմնավորել այն իրողությունը, որ Հովհ. Գառնեցու այցը Իսպանիա կարող էր հետամտել որոշակի նպատակ՝ ս. Հակոբոսի մասին իսպանական ավանդությունը թարգմանել հայերեն:

ARMENIAN AND SPANISH APOCRYPHA ABOUT THE APOSTLE JACOB

A. ARAMYAN

Abstract

The Armenian legend about the apostle Jacob became one of the key factors in the origin and development of the Armenian-Spanish historical and cultural ties, which motivated the Armenians to visit Spain, as according to the legend, the head of the apostle was kept in the Armenian church of St. Jacob in Jerusalem, and the body of the saint – in Santiago de Compostela. Medieval Spanish sources mention Armenians among the frequent visitors to Compostela. As reported by Gh. Alishan, Armenians sent the Archimandrite Hovhannes to Spain in the 13th century to translate the legend of the apostle into the Armenian language.

Thanks to A. Musheghyan's research, it became known about the European sources of the 13th century, mentioning the visit of the Armenian priest to England and Flanders: the priest intended also to visit the church of St. Jacob in Spain. As a result of a well-founded historical and philological research, A. Musheghyan confirmed that the Armenian priest, mentioned in European chronicles, is Hovhannes Garnetsi, a prominent religious figure of the 13th century.

Based on this information, we made an attempt to justify that the visit to Spain by Hovhannes Garnetsi could have pursued a definite goal – the translation of the Spanish legend about Jacob into the Armenian language.

ՄԱՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա.Ա.

«Մաղ» հասկացությունը՝ որպես բառահոդված, ընդգրկված է Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի «Բառային զուգաբանություններ» բաժնում (հ. 102): Մաղը կարևոր նշանակություն ունի ինչպես կալի աշխատանքներում, այնպես էլ կենցաղում:

Պայմանավորված գործառնությամբ՝ մաղերն ունեցել են համապատասխան անվանումներ՝ *այլորմաղ*, *կալմաղ*, *քարմաղ*, *ցորենի մաղ* և այլն: Որոշ տեսակի մաղեր կոչվել են ըստ կազմության, ինչպես, օրինակ՝ *ծարմաղ*, *փոկեմաղ* և այլն: Հայերենի բարբառներում մաղերն ունեցել են նաև այլ անվանումներ՝ *սառապ*, *խախալ*, *շափարար* և այլն:

Մաղ

Ըստ ՀԲԱ նյութերի՝ բառանունը *մաղ* ձևով գրանցվել է հայերենի բարբառների 19 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պոլսի միջբարբառը (2՝ Օրդու, Տրապիզոն), Ակնի (1՝ Ակն),), Արաբկիրի (1՝ Արաբկիր), Մուշի (2՝ Լիզ, Կտրած քար), Սասունի (2՝ Քոփ, Գոմք), Կարինի (2՝ Ախալքալաք, Ղասմաշեն), Պարսկահայոց (1՝ Գյուրջի), Ղարաբաղի (7), Շամախիի (1՝ Շահումյանավան) բարբառները: Վանի բարբառի Ապարանցի /Մամուտանց գյուղախմբից/ և Հաղինի ենթախոսվածքներում գրանցվել են համապատասխանաբար *մաղ* և *մաղ* հնչյունական տարբերակները:

Հարկ է նշել, որ *մաղ* ձևը գործածող խոսվածքների ու ենթախոսվածքների թվաքանակը չի սահմանափակվում միայն նշվածով: Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ փաստված են տվյալ ձևի գործածությունը հայերենի բարբառների մեծ մասում ինչպես գրական *մաղ* ձևով¹, այնպես էլ *մաղ*², *մուղ*³, *մուղ*⁴, *մող*⁵, *մյուղ*⁶ հնչյունական տարբերակներով:

¹ Տե՛ս Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 278, **Դանիելյան Թ.**, Մալաթիայի բարբառը, Ե., 1967, էջ 201, **Անթոնյան Ս.Մ.**, Կեսարիայի բարբառը, Ե., 1961,

Գրեթե բոլոր բարբառներում էլ արձանագրվել է *մաղել* բայի գործածությունը ինչպես ուղիղ, այնպես էլ փոխաբերական իմաստներով:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ գրանցված են *մաղ* բառով կազմված բազմաթիվ դարձվածքներ: Հ. Աճառյանը արձանագրել է մեկ տասնյակից ավելի օրինակներ. *հազար մաղով անցկացած* «աներես, լիրբ», *մաղի գլխին փոշի չի մնում* «ամենևին օգուտ չկայ» (Ղարաբաղի բարբառ), *հարիւր մաղի հաց է կերել* «հմուտ՝ փորձառու մարդ է», *մաղի մէջ պահել* «մեծ խնամք տանիլ» (Երևանի խոսվածք), *մաղէ անցունել* «թեթև մը մաղել», *մաղը պարէն կախել* «գործը վերջացնելով հանգչիլ՝ հանգստանալ» (Նոր Նախիջևանի և Պոլսի խոսվածքներ), *մաղ դառնալ* «մաշիլ, հիննալ ու ծակծկիլ», *մաղը ծակուեցաւ* «խարդախութիւնը բռնուեցաւ» (Պոլսի խոսվածք), *մաղը ծակ է /ծածկալեզու/ ա.* «հայերէն խօսիլ գիտէ կամ կը հասկնայ» (Ասլանբեկի, Կյուրինի, Սեբաստիայի, Կեսարիայի բարբառներ, Պոլսի խոսվածք) բ. «պարտական է, պարտք ունի» (Կարինի խոսվածք), գ. «անխելք է» (Թիֆլիսի խոսվածք), *մաղ ծախող* «աներես» (Դարենդեի խոսվածք) և այլն⁷: Սահակ վրդ. Ամատունին գրառել է *մաղը պարտել* «մահամերձ հիւանդութիւնից ազատուել», *մաղի ծակովն անցկենալ* «շատ նիհարիլ, նուագիլ» դարձվածքները⁸:

էջ 221, **Վարդանյան Ս.Գ.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Ե., 2009, էջ 304, 373, **Բաղդասարյան Ա.Հ.**, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 264, **Մաղաթյան Ք.Մ.**, Ավաշկերտի բարբառը, Ե., 1985, էջ 196, **Նաասարդեանց Տ.**, Բաղգիրք Արարատեան բարբառի, Տփլիս, 1903, էջ 77, **Աճառեան Հ.**, Քննություն Մարաղայի բարբառի, Ե., 1926, էջ 411, **Ասատրյան Մ.Ե.**, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 201, և այլն:

² Տե՛ս **Հանեյան Ա.Ն.**, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 192:

³ Տե՛ս **Ղարիբյան Ա.Ա.**, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958, էջ 68, **Անդրեասյան Տ.**, Սվեդիայի բարբառը (Քիսթինըզի լեզուն), Ե., 1967, էջ 23:

⁴ Տե՛ս **Զոլաթեան Յ.**, Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 217:

⁵ Տե՛ս **Աճառյան Հ.**, Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2003, էջ 326 (գրանցված է Մարաշ-Զեյթունի բարբառի Զեյթունի և Հաջընի բարբառի Հաջընի խոսվածքներում):

⁶ Նույն տեղում, էջ 578 (գրանցված է Քեսապ-Սվեդիայի բարբառի Սվեդիայի խոսվածքում):

⁷ Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայերէն գաւառական բառարան (ՀԳԲ) (=էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 51, 745-746:

⁸ **Սահակ վրդ. Ամատունի**, Հայերենի բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 456:

Գրանցված են նաև *մաղ* արմատով բառակազմական տարբերակներ: Հ. Աճառյանը փաստել է *մաղծակ ընել* «հինցնել /լաթը/, մաղի պէս ծակ ծակ ընել» հարադրությունը Չենկիլերի ենթախոսվածքում⁹:

Հայ մատենագրության մեջ բառանունն ավանդված է դեռևս V դարից. ՀԱԲ-ը և ՆՀԲ-ը¹⁰ հղում են Ոսկեբերանին, Սեբերիանոսին, Բարսեղ Կեսարացուն և ուրիշների, իսկ հետհինգերորդ դարյան շրջանի համար՝ «Վարք սրբոց հարանց» ժողովածուն¹¹: Դեռևս V դարից է ավանդված նաև *մաղել* բայը¹²: Հայ մատենագրության մեջ ավանդված են նաև *մաղ* ձևությամբ բառակազմական տարբերակներ.

մաղակ «փոքր մաղ». «...եթէ նստիցիս ի ձեռագործ ի խցի քում և գայցէ ժամ աղօթից քոց, մի ասեր կատարեցից զսակաւ արմաւենի տերևս կամ զպակասեալ *մաղակիս* և ապա յառնեմ...»¹³,

⁹ Տե՛ս ՀԳԲ, էջ 746:

¹⁰ ՀԱԲ (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., հ. Ա, 1971, հ. Բ, 1973, հ. Գ, 1977, հ. Դ, 1979), ՆՀԲ (Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիրմէլեան, Հ. Մկրտիչ Ազեբեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Ե., հ. Ա, 1979, հ. Բ, 1980):

¹¹ Տե՛ս Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, հ. Ա, Վենետիկ-Ս.Ղազար, 1862, Մեկնութիւն Թղթոյն Եփեսացւոյ, Ճառ 19, էջ 873 («Մեղուն զհա՛րդ զմաղսն գործիցէ, նախ զայն ասա...»), Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացոց եպիսկոպոսի Ճառք ԺԵ, Վենետիկ – Ս.Ղազար, 1830, Ճառ Թ, էջ 157 («...զայսպիսի մեղրախորսիս զաստուածեղէն պատգամացն մաղս գործեաց յանձինս»), Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ – Ս.Ղազար, 1830, Ճառ Ը, էջ 165 («Չմաղսն մեղերն մոմակերտ գործով շինեալ յարդարէ. և զմոմ մաղուցն ի ծաղկաբեր մարգոցն՝ մեծաւ փութով անդադար ժողովէ... Եւ յառաջին նուագին ի սկիզբն սկսուածոյ գործոյն անգայտ մաղովք անօսր գործոյն զգործած գրոցն յօրինէ, վասն ջրի լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ...»), Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հ. Բ, Վենետիկ – Ս.Ղազար, 1855, ԺԷ. Սիրել զԱստուած եւ զընկերն, էջ 367 («...եթէ նստաւ ի սենեկի աւուրս բազումս և ոչ ունէր կերակուրս, բայց միայն սիսեռն սակաւ, և գործէր մաղս: ... և առեալ զհացն օրինէր և փառատրէր զԱստուած, և զյաւանակն մաղիւքն իւր բարձեալ առաքեաց զնա») և այլն:

¹² Ես. ԻԹ 5 («Եւ եղիցի իբրև զփոշի անուոյ մեծութիւն ամպարշտաց. և իբրև զունգ մաղեալ բազմութիւն զրկողացն քոց և եղիցի»), Սեբերիանոս, նշվ. աշխ., Ճառ Թ, էջ 163 («...բայց յաճախութիւն բանիցս ասացելոցս այսր անդր մաղեցին զմիտս՝ հեռանալ ի խնդրոյն որ առաջի կայր»), Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթէոս, հ. Ա, Վենետիկ – Ս.Ղազար, 1826, էջ 165 («Մի ոք այսուհետև լիցի յարդ, և մի այսր անդր աղամողեալ իբրև զունգ, և մի չար ցանկութեանցն կայցէ առններ՝ ամէն ուրեք դիւրաւ հոսել և մաղել ի նոցանէ»):

¹³ Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հ. Բ, Խրատք ծերոյ մեծի, էջ 622:

մաղունչ «մաղելուց հետո մաղի երեսին մնացածը»։ «Եւ ամենայն մարմինք մարդկան գան ի վերայ երեսաց երկրի, որպէս մաղունչք ի վերայ ցորենոյն»¹⁴,

մանրամաղ «մանր մաղած, փոշի, հյուլե», վկայված է V դարից. «...փոշի մանրամաղ, որոյ ոչ կողմանք երևէին և ոչ դէմք յայտնէին...: Եվ ի մանրամաղ փոշւոյն, որ կցեցաւ եկն յարեցաւ ի միմիեանս...»¹⁵, «Եւ ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ հիւղէի, որ ...ի շողսն խաղասցէ բազմութիւն մանրամաղ փոշւոյն...»¹⁶, «...սոյնպէս և մանրամաղ փոշիացեալ հողս՝ ջրոյն խոնաւութեամբ զանգանի...»¹⁷,

խառնամաղ «մաղելուց հետո մաղի միջի խառը մնացորդը», վկայված է V դարից. «...զի զմանրիկն և զպարարտն, և զպիտանացու հողն ի մանրիսիճ աազոյ անտի պարզեն, և զխառնամաղ կոծտն ի բաց մաքրեն»¹⁸:

մաղաբախտություն «մաղը բախելով հմայություն» /մաղաբախ «մաղը բախելով հմայող»/, վկայված է V դարից. «Ի հմայս և ի կախարդութիւնս և ի դիւթութիւնս և ի մաղաբախտութիւնս ի հատահարցութիւնս և ի թովջութիւնս...»¹⁹, «Արդ յորժամ ի խտիրս և ի հմայս... և ի դիւթութիւնս և ի թովջութիւնս և ի հատարացութիւնս և ի հաւահմայութիւնս և ի մաղաբախտութիւնս...»²⁰, և այլ բառակապակցություններ:

Ի դեպ, հայ ազգագրության մեջ շատ սովորություններ կան՝ կապված մաղահմայությանը, ինչպես «մաղաբախտությունը»: Մաղահմայության ժամանակ մատից կախել են մաղը և տվել կասկածյալ մարդկանց անուն-

¹⁴ Գործածված է **Գրիգոր Տաթևացու** «Գիրք որ կոչի Ոսկէփորիկ»-ում, հղվում է ըստ՝ ՆՀԲ, հ. 2, էջ 200:

¹⁵ **Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու** Կապադովկացոց ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Ճառ Ա, էջ 4:

¹⁶ **Ազաթանգեղայ** Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, ՃԲ, 734, էջ 383:

¹⁷ **Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի** Մատենագրութիւնք, ըստ ընտրելագոյն ընթերցումոյ գրչագրաց, Վենետիկ, 1859, Բ եղանակ, էջ 26:

¹⁸ **Երանելոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի** Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, ԺԳ, էջ 245:

¹⁹ **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, հ. Ա, Մեկնութիւն Թղթոյն Եփեսացոյ, Ճառ Զ, էջ 734:

²⁰ **Տեառն Յովհաննու Մանդակունոյ** Հայոց Հայրապետի ճառք, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ – Ս.Ղազար, 1860, Ճառ ԻԶ, էջ 193:

ներ. որ անվան դեպքում մաղը պտտվել է, այդ մարդու հանցագործ լինելը հաստատվել է²¹:



Նկ. 1. Գուշակություն «մաղ պտտելու» միջոցով Բորչալուի գավառում (ըստ Ե. Լալայանի, Ազգագրական հանդես, Ժ, 1903, էջ 232-233-ի ներդիր)

Բորչալուի խոսվածքներում լայնորեն գործածվել է «մաղ պտտել» արտահայտությունը, որը մաղ բառով կազմված հարադիր բարդություն է: Մաղ պտտելը գուշակության մի ձև է, որը Ե. Լալայանը հանգամանորեն նկարագրել է Բորչալու գավառի ազգագրությանը նվիրված աշխատության «Կախարդություն» բաժնում և այն լուսաբանել լուսանկարով²²:

Այլուրմաղ

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 131 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ 15 հնչյունական տարբերակներով: *Ալլրի մաղ* տարբերակը գրանցվել է 21 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Վանի (7), Մուշի (2՝ Դուման, Վարդխաղ), Տավրիկ-Մոտկանի (2՝ Կոռ, Կուսգետ), Բայազետի (2՝ Մուսոն, Արծափ), Դիադինի (1՝ Ջուջան), Երևանի կամ Արարատյան (2՝ Փանիկ /Սուրմալու/, Քանաքեռ), Ջուղայի (2՝ Բոլդաջի, Ալբուլախ /Չարմահալ/), Ղարաբաղի (1՝ Շոտուֆ /Նախիջևան/), Պարս-

²¹ Տե՛ս Բազմավեպ, 1847, N 12, էջ 187:

²² Տե՛ս **Լալայան Ե.**, Բորչալու գավառ (Ազգագրական հանդես, Ժ, 1903, էջ 232):

կահայոց (2՝ Մարգիյան, Մերաբադ-Ղալա-Հաջիաբադ): Վանի (8), Մուշի (1՝ Բլուրմակ) և Ղարաբաղի (1՝ Տոլորս /Սյունիքի մարզ/) բարբառների 10 ենթախոսվածքներում արձանագրվել է *ալլորի մաղ* տարբերակը: Տարածական լայն ընդգրկում ունի *ալլորմաղ* տարբերակը, որը գրանցվել է Եդեսիայի (1՝ Եդեսիա), Մուշի (16), Սասունի (5), Տալվորիկ-Մոտկանի (3՝ Շեն, Թաղավանք, Թաղվու), Վանի (3՝ Բերկրի, Գործութ, Գյուզակ), Կարինի (15 /այդ թվում՝ Գյումրի/), Երևանի կամ Արարատյան (7), Խոյ-Մարաղայի (6) և Պարսկահայոց (15) բարբառների 71 խոսվածքներում ու ենթախոսվածքներում: Մուշի (1՝ Խարկեն), Վանի (2՝ Ապարանց /Մամոտանց գյուղախմբից/ և Սխկյա), Խոյ-Մարաղայի (2՝ Գառնի և Բալահովիտ/Կոտայքի մարզ/) բարբառների 5 ենթախոսվածքներում փաստվել է *ալլորմաղ* տարբերակը: *Ալլորի մաղ* տարբերակը գործածվել է Պոլսի (2՝ Պարտիզակ, Արմաշ) և Եվդոկիայի (1՝ Եվդոկիա) միջբարբառների 3 խոսվածքներում և Սեբաստիայի (2՝ Զարա, Դենդիլ), Մուշի (1՝ Հալնձի), Պարսկահայոց (2՝ Հաջիաբադ-Հուսենաբադ, Հազարջրիբ) բարբառների 5 ենթախոսվածքներում: Արաբկիրի բարբառի Արաբկիրի խոսվածքում և Խարբերդ-Երզնկայի բարբառի Նազարանի ենթախոսվածքում փաստվել է *ալիրմաղ*, իսկ Մալաթիայի բարբառի Մալաթիայի խոսվածքում և Վանի բարբառի Հազարենի և Քոերի ենթախոսվածքներում՝ *ալիրմաղ* տարբերակները: *Ալլորմաղ* ձևը արձանագրվել է Խարբերդ-Երզնկայի (1՝ Հաբուս), Խոյ-Մարաղայի (1՝ Ավան /այժմ՝ Երևանի կազմում, ՎԲ/), Պարսկահայոց (2՝ Հադան, Ղուրդուն) բարբառների 4 ենթախոսվածքներում: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Ասլանբեկի (1՝ Ասլանբեկ /*ալլորին մաղը*/), Մարաշ-Չեյթունի (1՝ Ֆուռնուս /*էլիրմող*/), Մուշի (1՝ Գեաբուլան /*ալլորի մախ*/), Սասունի (1՝ Մշկեղ /*ալլորը մաղ*/), Վանի (1՝ Տոսու-Վերին Հուրուք /*ալէրմաղ*/), Զուղայի (1՝ Զուղա /*հալլորի մաղ*/) բարբառների 4 խոսվածքներում ու ենթախոսվածքներում և Ղազախ-Կիրովաբադի բարբառի Նուխիի (*ալլորմաղ*) ենթախոսվածքում:

Կազմված է *ալլոր* և *մաղ* բառերից, որտեղ *ալլոր*-ը բնիկ հայերեն բառ է՝ հնիս. *al- «աղալ» արմատից²³:

Հայոց բանահյուսության մեջ բառաձևի գործածության հետևյալ օրինակն է բերել Գ. Տեր-Հովհաննիսյանը /Քաջբերունի/: Նկարագրելով Դա-

²³ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 94:

րալագյազում բնակություն հաստատած Սալմաստի գաղթականների սովորությունները, նա նշում է, որ հարսանիքի վերջում նրանք պարում են և երգում մի երգ, որն ավարտվում է հետևյալով՝ «Մածուն կուզեմ թան կբերի, / Ալըրմաղով ցան (աթարի փշրանք) կբերի»²⁴:

Հ. Աճառյանը փաստել է *ալըրմաղել* «ալըրմաղով ալիւրը մաղել» բայի գործածությունը Ջեյթունի խոսվածքում²⁵:

Հայերենի բարբառների շատ խոսվածքներում ու ենթախոսվածքներում գործածվել է *ալըրմաղի* /ալըրմաղ, ալըրմաղիկ/ «թիթեռնիկ» բառը, որը գրանցված է ինչպես բառարաններում, այնպես էլ բարբառագիտական գրականության մեջ²⁶, Ղարաբաղի բարբառում գործածական է *թըթըրմաղէ/թիթըրմաղէ* ձևով²⁷:

Կալմաղ

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 84 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ *կալմաղ* / *կալամաղ* և *կալի մաղ* ձևերով և 13 հնչյունական տարբերակներով: *Կալէմաղ* տարբերակը ամենամեծ տարածական ընդգրկումն ունի՝ 48 խոսվածք ու ենթախոսվածք. այն արձանագրվել է Վանի (31), Մուշի (7), Բայազետի (1՝ Մուսուն), Դիադինի (2՝ Դիադին, Ծաղկաշեն /Արագածոտնի մարզ, ՎԲ/), Երևանի կամ Արարատյան (2՝ Տեղեր /Արագածոտնի մարզ/, Կուրթան /Լոռու մարզ/), Խոյ-Մարաղայի (4) բարբառներում: Վանի բարբառի Ապարանցի /Մամուտանց գյուղախմբից/ և Բայազետի բարբառի Մոլլաղամարի /Սուրմալու/ ենթախոսվածքում գործածվել է *կալամաղ* տարբերակը, որի մի քանի հնչյունական տարբերակներ գրանցված են Վանի բարբառի Շատախի խոսվածքում և Միջայի-Կոնիսի/Մամուտանց գյուղախմբից/ ենթախոսվածքում /*կալամմաղ*/, նույն բարբառի Կճավի /*կալամաղ*/, Սեդի /Մամուտանց գյուղախմբից/ /*կալամմաղ*/, Արմշատի /*կալամմաղ*/ և Խալենցի /*կալամաղ*/ ենթախոսվածքներում: Նույն բարբառի Կողպանցի և Կվերսի ենթախոսվածքներում արձանագրվել է *կալէմաղ* տարբերակը: Խարբերդ-Երզնկայի (1՝ Երզնկա), Կարինի (4),

²⁴ Տե՛ս **Քաջբերունի**, Հայկական սովորություններ (Ազգագրական հանդես, Է-Ը, Թիֆլիս, 1901, էջ 199):

²⁵ Տե՛ս ՀԳԲ, էջ 53:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 51, **Սահակ վրդ. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 6, Բառգիրք Արարատեան բարբառի, կազմեց Տիգրան Նաասարդեանց, Տիֆլիս, 1903, էջ 6 և այլն:

²⁷ Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., էջ 196:

Մուշի (1՝ Սառնաղբյուր /Շիրակի մարզ, ՎԲ), Վանի (1՝ Գործուֆ) բարբառների խոսվածքներում ու ենթախոսվածքներում գրանցվել է *կալմաղ*, իսկ Պոլսի միջբարբառի (1՝ Չիբուխլու), Խարբերդ-Երզնկայի (1՝ Չմշկածագ և նրա գյուղերը), Սեբաստիայի (1՝ Դենդիլ), Սասունի (2՝ Ընկուզնակ, Սաղտուն), Համշենի (3՝ Ճենիկ, Բալլուդ, Ծեբելդա /Աբխազիա, ՎԲ/) խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ *գալմաղ* բառաձևերը: Սեբաստիայի բարբառի Զառայի ենթախոսվածքում գործածվել են ինչպես *կալիմաղ*, այնպես էլ *գալիմաղ* ձևերը, *կալիմաղ* ձևը գրանցվել է նաև Մուշի բարբառի Լիզի, իսկ *գալիմաղ* ձևը՝ նաև Համշենի բարբառի Ախալածեի /Աբխազիա, ՎԲ/ ենթախոսվածքներում: Մուշի բարբառի Մագրայի և Կարինի բարբառի Ալաստանի /Ախալքալաքի/ ենթախոսվածքներում արձանագրվել է *կալիմաղ* ձևը: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Հաջընի բարբառի Հաջընի խոսվածքում /*գալմող*/, Մուշի (Կապուտան/Կոտայքի մարզ, ՎԲ/ /*կալմաղ*/), Խոյ-Մարաղայի (Իքի Աղաջ/*կալը մաղ*/) բարբառների նշված ենթախոսվածքներում:

Բարդությունը կազմված է *կալ* «հացահատիկը կալսելու տեղ, որանի այն քանակը, որ մի անգամ փոում են ու ծեծում, բարդոց, խրձակոյտ...» և *մաղ* բառերից:

ՀԱԲ-ում *կալ* բառը ստուգաբանված չէ²⁸:

Քարմաղ

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 128 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ *քարմաղ* ձևով և 11 հնչյունական տարբերակներով: *Քարմաղ* տարբերակի գործածությունը փաստվել է հայերենի բարբառների 103 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պոլսի միջբարբառը (1՝ Պարտիզակ), Խարբերդ-Երզնկայի (4), Սեբաստիայի (2՝ Սեբաստիա, Մանջալիկ), Մուշի (31), Սասունի (6), Տալվորիկ-Մոտկանի (2՝ Շեն և Թաղավանք/Խոտ-Բոնաշեն գյուղախմբից/), Համշենի (1՝ Բալլուդ), Կարինի (17), Դիադինի (2՝ Ծաղկաշեն /Արագածոտնի մարզ, ՎԲ/, Արծաի), Բայազետի (2՝ Մոլլամաղար /Սուրմալու/, Քուչակ /Արագածոտնի մարզ, ՎԲ/, Երևանի կամ Արարատյան (15), Պարսկահայոց (1՝ Գուլիզարդ), Խոյ-Մարաղայի (16), Ղարաբաղի (3՝ Շուռուֆ և Բիստ /Նախիջևան/, Վերին Ճամբարակ/Գեղարքունիքի մարզ/): Վանի (1՝ Կող-

²⁸ Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 483:

պանց), Երևանի կամ Արարատյան (2՝ Արենի /Վայոց ձորի մարզ/, Մեծոփի /Նախիջևան/) բարբառների 3 ենթախոսվածքներում արձանագրվել է *քամաղ*, Ղարաբաղի (4) և Խոյ-Մարաղայի (1՝ Մասիս /Արարատի մարզ, ՎԲ/) բարբառների 5 ենթախոսվածքներում՝ *քամաղ*, Վանի (2՝ Մամենտ-Պողանց և Տոսու-Վերին Հուրուք) և Խոյ-Մարաղայի (1՝ Օհանավան/Արագածոտնի մարզ, ՎԲ/) բարբառների 3 ենթախոսվածքներում՝ *քարմաղ*, Ղարաբաղի (2՝ Կյաղ, Մեսրոպական) 4 ենթախոսվածքներում՝ *քարմաղ*, Մուշի (2՝ Գյաբոլներ, Ծղակ), Կարինի (1՝ Քյուրուկդարա), Խոյ-Մարաղայի (1՝ Կամարիս /Կոտայքի մարզ, ՎԲ/) բարբառների 4 խոսվածքներում՝ *քարմախ* տարբերակները: Եզակի հնչյունական տարբերակներ են գրանցվել Վանի (Տոսու /*քարմաղ*/, Ծուշանց /*քարմաղ*/), Մուշի (Շամիրամ /*քարմաղ*/, Կապուտան/Կոտայքի մարզ, ՎԲ//*քարմաղ*/), Երևանի կամ Արարատյան (Ղազուկըշլաղ /*քարմաղ*/) և Խոյ-Մարաղայի (Ագատավան/Արարատի մարզ, ՎԲ/ /*քամաղ*/) բարբառների նշված ենթախոսվածքներում:

Բարդույթյունը կազմված է *քար* և *մաղ* արմատներից:

Առաջին արմատը բնիկ հայերեն բառ է հնիս. *kar- «քար. 2. կարծր» արմատից²⁹:

Ցորենի մաղ

ՀԲԱ նյութերում բառանունն արձանագրվել է հայերենի բարբառների 75 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ 18 հնչյունական տարբերակներով: Ամենամեծ տարածական ընդգրկումն ունի *ցորենի մաղ* տարբերակը, որը գրանցվել է Խարբերդ-Երզնկայի (2՝ Բազմաշեն, Սվջող), Սեբաստիայի (1՝ Սեբաստիա), Եդեսիայի (1՝ Եդեսիա), Մուշի (8), Սասունի (2՝ Հազգո, Փսանք), Տալվորիկ-Մոտկանի (3՝ Կուսգետ, Կոռ, Թաղվու /Խոտ-Բռնաշեն գյուղախմբից/), Վանի (7), Կարինի (2՝ Կաղզվան, Ղզլախախ), Երևանի կամ Արարատյան (8), Պարսկահայոց (5), Խոյ-Մարաղայի (4) բարբառների և Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի (1՝ Յաղափլու) 44 խոսվածքներում և ենթախոսվածքներում: Պոլսի միջբարբառի (2՝ Պարտիզակ, Արմաշ), Սեբաստիայի (1՝ Մանջալիկ), Արաբկիրի (1՝ Արաբկիր), Պարսկահայոց (2՝ Հաջիաբաղ-Հուսենաբաղ, Մերաբաղ-Ղալա-Հաջիաբաղ) բարբառների 6 խոսվածքներում ու ենթախոսվածքներում արձանագրվել է *ցորենի մաղ*, Խոյ-Մարաղայի բարբառի 3 (Սեյրավար, Ն. Խաթունախ /Արմավիրի

²⁹ Նույն տեղում, հ. Դ, էջ 559–560:

մարգ, ՎԲ/, Նորաշեն /Նախիջևան, ՎԲ/)՝ ենթախոսվածքներում՝ *ցորնի մաղ*, Սասունի (1՝ Մշկեղ) և Խոյ-Մարաղայի (1՝ Աղավնատուն-Հայթաղ /Արմավիրի մարզ, ՎԲ/) բարբառների 2 ենթախոսվածքներում՝ *ցորնը մաղ*, Մուշի բարբառի (1՝ Փիրան) և Ղազախ-Կիրովաբադի միջբարբառի (1՝ Նուխի) ենթախոսվածքներում՝ *ցոնի մաղ*, Վանի բարբառի Արտամետի ենթախոսվածքում, Զուղայի բարբառի Հին Զուղայի խոսվածքում և Բոլդաջիի ենթախոսվածքում, Վանի բարբառի Արտամետի և Պարսկահայոց բարբառի Հազարջրիբի ենթախոսվածքներում՝ *ցոյնի մաղ* տարբերակները: *Ցիրմոզ* տարբերակը գրանցվել է Քեսաբ-Սվեդիայի բարբառի Քեսաբի խոսվածքում, Մարաշ-Ջեյթունի բարբառի Մարաշի խոսվածքներում և Ֆուռնուսի ենթախոսվածքում: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Մարաշ-Ջեյթունի (Ջեյթուն/*ցիմոզ*/), Հաջընի (1՝ Հաջըն /*ցիյմոզ*/), Մալաթիայի (1՝ Մալաթիա /*ցորմար*/), Ասլանբեկի (1՝ Ասլանբեկ /*ցորենին մաղը*/), Վանի (Տոսու /*ցըրնի մաղ*/, Հաղին /*ցուրնի մաղ*/, Դերըկ/*ցորանի մաղ*/, Ապարանց /Մամուտանց գյուղախմբից/ /*ցըրնըմաղ*/ և Խոյ-Մարաղայի (Մարաղա /*ցորոնի մաղ*/, Ավան /այժմ՝ Երևանի թաղամաս//*ցորնըմաղ*/, Բուրաստան /Արարատի մարզ, ՎԲ//*ցորոնի մաղ*/) բարբառների նշված խոսվածքներում ու ենթախոսվածքներում:

Բարբառագիտական գրականության մեջ *ցոյնի մաղ* տարբերակը գրանցվել է նաև Համշենի բարբառի Խոփայի ենթախոսվածքում³⁰:

Բարդությունը կազմված է *ցորեն* և *մաղ* բառերից:

ՀԱԲ-ում *ցորեն* բառը ստուգաբանված չէ³¹: Գ. Զահուկյանը այն համարում է անհայտ ծագման բառ³²:

Փոկեմաղ

ՀԲԱ նյութերում *փոկեմաղ*՝ «մաղ, որի ցանցը հյուսված է փոկից» բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 139 խոսվածքներում և ենթախոսվածքներում: 12 հնչյունական տարբերակներով: Մեծ տարածական ընդգրկում ունեն *փոկեմաղ* և *փոզեմաղ* տարբերակները: *Փոկեմաղ* տարբերակը գրանցվել է հայերենի բարբառների 64 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (14), Վանի (20), Կարինի (6) Դիադինի (3), Բայազետի (2՝ Մուսուն, Քուչակ /Արագածոտնի մարզ /ՎԲ/), Երևանի

³⁰ Տե՛ս Վարդանյան Ս.Գ., նշվ. աշխ., էջ 204:

³¹ Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 461-462:

³² Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 744:

կամ Արարատյան (8), Խոյ-Մարաղայի (11) բարբառները, իսկ *փոգեմաղ* տարբերակը՝ 54 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (22), Սասունի (2՝ Սեմալ, Արծվիկ), Տալվորիկ-Մոտկանի (5), Կարինի (16), Բայազետի (2՝ Մոլլաղամար, Բլուր /Սուրմալու/), Երևանի կամ Արարատյան (6), Խոյ-Մարաղայի (2՝ Ծաղկալանջ /Արմավիրի մարզ, ՎԲ/, Ակունք /Կոտայքի մարզ, ՎԲ) Պարսկահայոց (1՝ Նալբանդյան /Արմավիրի մարզ, ՎԲ/) բարբառները: Վանի բարբառի 4 ենթախոսվածքներում արձանագրվել է *փօկեմաղ*, Խոյ-Մարաղայի բարբառի 5 ենթախոսվածքներում՝ *փօկեմաղ*, իսկ Մուշի (1՝ Չըլկանի) և Երևանի կամ Արարատյան (1՝ Ղազուկըշլաղ Սուրմալու/) բարբառների 2 ենթախոսվածքներում՝ *փօգե մաղ* տարբերակները: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Ջուղայի բարբառի Հին Ջուղայի խոսվածքում/*փակամաղ*/, Սասունի (Իրիցանք/*փօգըմաղ*/), Կարինի (Արմուտլու/*փօղեմաղ*/), Բայազետի (Կարմիր/Գեղարքունիքի մարզ, ՎԲ//*փօգեմաղ*/), Խոյ-Մարաղայի (Ուզ /Սյունիքի մարզ, ՎԲ//*փեկամաղ*/, Արագած /Արմավիրի մարզ, ՎԲ//*փեկեմաղ*/), Եղեգիս /Վայոց ձորի մարզ//*փեյկեմաղ*/) բարբառների նշված ենթախոսվածքներում:

Բառանունը կազմված է *փոկ* և *մաղ* արմատներից: ՀԱԲ-ում *փոկ* «կաշվի նեղ և երկար շերտ» բառը ստուգաբանված չէ³³: Գ. Ջահուկյանը այն համարում է անհայտ ծագման բառ³⁴:

Ձարմաղ

Ձարմաղ «մաղ, որի ցանցը հյուսված է ձարից՝ ձիու բաշի ու պոչի մազից» բառանունը կազմված է *ձար* և *մաղ* արմատներից: ՀԱԲ-ում *ձար* բառը ստուգաբանված չէ³⁵: Գ. Ջահուկյանը գտնում է, որ այն պատկանում է հնիս. *g'hers- «հառել, սկեռել» արմատին³⁶:

Բառանունը վկայված է դեռևս XII դարից. «...այս ջրովս աղէկ աճոէ զթրջած դեղեր, քամէ ընդ ձարեմաղ ի վայր...»³⁷:

ՀԲԱ նյութերում բառանունն արձանագրվել է հայերենի բարբառների 25 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ 9 հնչյունական տարբերակ-

³³ Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 512:

³⁴ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 766:

³⁵ Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 461-462:

³⁶ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 171, **Նոյնի՝** Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 474:

³⁷ Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ – Ս. Ղազար, 1832, էջ 146:

ներով: Մուշի (4) և Երևանի կամ Արարատյան (1՝ Կուրթան) բարբառների 5 ենթախոսվածքներում գրանցվել է *ծարէմաղ*, Մուշի (1՝ Վարդիսաղ), Վանի (2՝ Դարման, Ծվստան) և Երևանի կամ Արարատյան (1՝ Փոքր Վեդի) բարբառների 4 ենթախոսվածքներում՝ *ծարէմաղ*, Վանի (6) և Կարինի (1՝ Ուզուն-քիլիսա) բարբառների 7 ենթախոսվածքներում՝ *ծրէմաղ*, իսկ Մուշի բարբառի 5 ենթախոսվածքներում՝ *հարէմաղ* տարբերակները: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Սեբաստիայի բարբառի Սեբաստիայի խոսվածքում */ծէրէ մաղ/* և Վանի (Տղացպար */ծալէմաղ/*, Հարպերտ */ծրմաղ/*), Կարինի (Քյուրուկդարա */հարմախ/*) և Խոյ-Մարաղայի (Ն. Խաթունարխ */ծճւմղ/*) բարբառների նշված ենթախոսվածքներում:

Բարբառագիտական գրականության մեջ արձանագրվել են հնչյունական այլ տարբերակներ ևս. *ծարմաղ* (Մալաթիայի, Սասունի բարբառներ), *ծրմաղ* (Վանի բարբառի Շատախի խոսվածք)³⁸ և այլն:

Հ. Աճառյանը նշել է *ծարմաղէլ* «ծարմաղով մաղել» բայի գործածությունը Զեյթունի խոսվածքում³⁹: Նշված են նաև *ծարմաղ* բառով կազմված դարձվածքներ, ինչպես, օրինակ, *ծարմաղի տակ եղող* «փոքրիկ» /Մալաթիայի բարբառ/⁴⁰:

Բառը գործածվել է Վանի բարբառով («Քեանց կալէ մաղ կալկլուես, / Քեանց փեօլէ մաղ պեյպեյուես, / Քեանց ծրէ մաղ ծրծրուես»), Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքով («Քընց քար մաղ քրքրիս, քընց ցարմաղ ծարծրիս...») գրառված անեծքներում⁴¹:

Շափարար

ՀԱԲ-ում բառանունը նշված է «Շատ» հոդվածում՝ տվյալ արմատով կազմված բարբառային բառերի շարքում, որից՝ *շափարարել*: Արմատը ծագում է պահլավերեն *šāt = պարսկերեն *šād «շատ, առատ» ձևից: Ըստ Հ. Աճառյանի՝ բառը հայերենից փոխառել է ուտիերենը՝ šadara «շատարար,

³⁸ Տե՛ս Դանիելյան Թ., նշվ. աշխ., էջ 219, Պետոյան Վ.Ա., Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 134, Մուրադյան Մ.Հ., Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 211:

³⁹ Տե՛ս ՀԳԲ, էջ 681:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Ժողովրդական երգ, առած, հանելուկ եւ այլն այլ եւ այլ բարբառներով, հաւաքեց Ս. Հայկունի – Էմինեան ազգագրական ժողովածու, Զ, 1906, էջ 311, 307:

մեծ ծակերով մաղ»⁴²: Տվյալ փոխառության մասին նշել է նաև Ս. Բարխուդարյանցը⁴³:

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 121 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ *շափարար* ձևով և 15 հնչյունական տարբերակներով: *Շափարար* տարբերակը գրանցվել է ընդամենը 1 խոսվածքում և 4 ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Կարինի (1՝ Միջին թաղ /Խոտորջուր/) և Երևանի կամ Արարատյան (4) բարբառները: Կարինի բարբառի Վելի Բաբայի և Նախիջևանի, Խոյ-Մարաղայի բարբառի Էլարի (Կոտայքի մարզ, վերաբնակներ /ՎԲ/) և Պարսկահայոց բարբառի Ազնավույի ենթախոսվածքներում գրանցվել է *շադարար*, իսկ Երևանի կամ Արարատյան բարբառի Աստապատի խոսվածքում և Մեծոփի /Նաև Հորսի/ /Նախիջևան/ ենթախոսվածքում և Խոյ-Մարաղայի բարբառի Նորսի /Նախիջևան/, Գառնիի և Բալահովիտի /Կոտայքի մարզ, ՎԲ/ ենթախոսվածքներում՝ *շանդար* տարբերակները: Եզակի հնչյունական տարբերակներ են փաստվել Կարինի (2՝ Փոզա /շադրա/, Ծպնի /շադրան/), Երևանի կամ Արարատյան (3՝ Կոտայքի մարզի Կաթնաղբյուր /շանդարալ/, Վայոց ձորի մարզի Խաչիկ /շոդանդար/ և Աղավնաձոր /շանդարան/), Ագուլիսի (2՝ Տանակերտ /շանդիր/ և Ցղնա /շանդրա/), Խոյ-Մարաղայի (1՝ Մարաղա /ԼՂՀ/շադարալ/), Հավարիկի (1՝ Հավարիկ /շադարա/), Ղարաբաղի (1՝ Ներքին և Վերին Խոտանան /ըշարարա/) բարբառների խոսվածքներում ու ենթախոսվածքներում: *Շըփարար* տարբերակը գրանցվել է հայերենի բարբառների 65 խոսվածքներում ու ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (1՝ Վարդաբլուր /ՎԲ Մուշից/), Երևանի կամ Արարատան (5), Մեղրու (1՝ Կարճևան), Ղարաբաղի (51) բարբառները և Ղազախ-Կիրովաբադի (7) միջբարբառը: Կարինի (1՝ Կարճախ), Պարսկահայոց (7) բարբառների և Ղազախ-Կիրովաբադի (1՝ Յաղափլու) միջբարբառի 9 ենթախոսվածքներում արձանագրվել է *շադըրար* տարբերակը: Հայերենի բարբառների 23 խոսվածքներում ու ենթախոսվածքներում գրանցվել է *շադրար* տարբերակը՝ ընդգրկելով Կարինի (5), Բայազետի (2՝ Արծափ, Մուսուն), Ջուղայի (3), Խոյ-Մարաղայի (1՝ Գեղաշեն /Կոտայքի մարզ, ՎԲ/) և Պարսկահայոց (12) բարբառները:

⁴² Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 498–499:

⁴³ Տե՛ս Մակար ծ. վրդ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 94:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ փաստված են բառանվան գործածությունը Շիրակում (*շափարար* «հաստ որեմից լայն ծակերով գործած մաղ»), Ղարադաղում (*շըփարար* «կաշվե փուկերից գործված մեծ անցքերով մաղ»)՝⁴⁴ և այլն:

Հ. Աճառյանը Ղարաբաղի բարբառում արձանագրել է *շափարար* բառով կազմված հետևյալ արտահայտությունը. *շափարար դառնալ* «ծակ ծակ ըլլալ, հիննալ ու մաշիլ»⁴⁵: Նույն բարբառում Հ. Աճառյանը արձանագրել է նաև *շափարարել* «մեծ մաղով մաղել» բայի գործածությունը: Նույն բայի գործածությունը փաստվել է նաև Երևանի կամ Արարատյան բարբառում⁴⁶:

Ե. Լալայանը Բորչալու գավառի ազգագրությանը նվիրված աշխատության «Կախարդություն» բաժնում բերում է *մաղ, մաղվել, շափարար, շափարարվել, խախալ, խախալվել* բառերով կազմված աղոթք՝ Չար աչքի համար. «...Մաղով մաղուի, /Շտարարով շտարարի,/ Իւրխալով խխալուի...»⁴⁷:

խախալ

Խախալը խոշոր ծակերով մաղ է, որը գործածվում է կալի աշխատանքներում:

ՀԱԲ-ում *խախալ* «մաղ» /որից՝ խախալել «մաղել»/ բառը ստուգաբանված չէ, Գ. Զահուկյանը այն համարում է անհայտ ծագման բառ⁴⁸: Բառի առաջին վկայությունը Գրիգոր Տաթևացու «Ամառան» քարոզգրքում է. «Առեալ խախալ՝ ելից ջուր, և կաթ մի ոչ կաթեցաւ ի նմանէ ջուր...»⁴⁹ Ս. Գրոց «Իմաստութիւն Յեսուայ Որդոյ Սիրաքայ» գրքում վկայված է *խախալել* բառը. «Ի մաղին խախալելոյ՝ մնայ աղբ...»⁵⁰:

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 142 խոսվածքներում և ենթախոսվածքներում: *խախալ* տարբերակը գրանցվել է 132 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Վանի (1՝ Վանք), Մուշի (2՝ Էգնախոջա, Լեռնապար /Արագածոտնի մագ, ՎԲ/), Կարինի (14),

⁴⁴ Տե՛ս Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Ա.Դ. Մխիթարեանց (=Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրապոլ, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1901, էջ 328, **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը, հ. 1, Ազգագրություն, Ե., 2009, էջ 174:

⁴⁵ Տե՛ս ՀԳԲ, էջ 823:

⁴⁶ Տե՛ս Սահակ վրդ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 531:

⁴⁷ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 239:

⁴⁸ Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 310:

⁴⁹ Մեջքերումը՝ ըստ ՆՀԲ, հ. 1, էջ 911:

⁵⁰ Սիր. Ի է 5:

Բայազետի (1՝ Արծափ), Երևանի կամ Արարատյան (34), Ղարաբաղի (39), Հավարիկի (1՝ Հավարիկ) և Շամախիի (2՝ Սաղյան, Մադրասա), Պարսկահայոց (19) բարբառները և Ղազախ Կիրովաբադի միջբարբառը (13): Ղարաբաղի բարբառի Տումիի, Սեյսուլանի և Կաղարծիի ենթախոսվածքներում արձանագրվել է *խախսիլ* տարբերակը, իսկ նույն բարբառի Ղասմաշենի /Ղարադաղ/, Եմիշճանի, Հադրուփի, Չափարի-Չարդախաչի և Շամախիի բարբառի Շահումյանականի ենթախոսվածքներում՝ *խսիխսիլ* տարբերակը: Եզակի հնչյունական տարբերակ է փաստվել Ղարաբաղի բարբառի Վաղուհասի ենթախոսվածքում՝ *խախալ*: Մուշի բարբառի (1՝ Մելիքյուղ, Հարթավան, Արագած, Արայի, Ափնա, Մուլքի /Արագածոտնի մարզ, ՎԲ/) նշված ենթախոսվածքում արձանագրվել է *խախալմաղ* բառակազմական տարբերակը:

Հայերենի բարբառներում *խախալել* «խախալով մաղել» բայի գործածությունը լայն ընդգրկում ունի: Ս.Ամատունին գրանցել է տվյալ ձևի գործածությունը Երևանի կամ Արարատյան բարբառի խոսվածքներում և ենթախոսվածքներում⁵¹:

Ս. Ամատունին արձանագրել է նաև *խախալի գլուխը բան քցել* «ունեցածի վրայ մի բան աւելացնել. կամ ձեռնարկած գործից շահուել, օգտուել» դարձվածքը⁵²:

Բորչալուի գավառում XX դարասկզբին շատ մայրերի է ծանոթ եղել «երեխան ծնուելիս խախալի մէջ առնել» արտահայտությունը. մայրերը այդպես են վարվել «երեխային չարից ազատելու համար»⁵³:

Արձանագրվել են նաև բառակազմական տարբերակներ. խախալամիտ «մոռացկոտ», *խախալտրակել* «մանրամասն որոնել», «աղել մաղել»⁵⁴ և այլն:

Սառապ

Ըստ Հ. Աճառյանի՝ *սառապ* «խոշոր ծակերով մաղ՝ որուն մէջէն սիսեռը կրնայ անցնիլ» բառանունը փոխառյալ է քրդերեն serrad բառից⁵⁵:

⁵¹ Սահակ վրդ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 262:

⁵² Նույն տեղում, նաև՝ Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. Բ, Ե., 1944, էջ 316:

⁵³ Տե՛ս Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 259:

⁵⁴ Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 316, Սահակ վրդ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 262:

⁵⁵ Տե՛ս ՀԳԲ, էջ 954:2

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 90 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ *սառապ* տարբերակով և 14 հնչյունական տարբերակներով: *Սառապ* տարբերակը գրանցվել է 23 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պոլսի միջբարբառը (1՝ Խասկալ /Նիկոմեդիա/), Ակնի (1՝ Ակն) Վանի (2՝ Նազարեն, Շեն), Մուշի (13), Սասունի (1՝ Ընկուզնակ-Սաղտուն), Տալվորիկ-Մոտկանի (1՝ Կրխու), Կարինի (3՝ Բուլանլիս, Խոսրովական-Իշխու, Կաղզվան), Դիադինի (1՝ Ծաղկաշեն /ՀՀ Արագածոտնի մարզ, ՎԲ/) բարբառները: Վանի բարբառի Կողպանցի և Սամետ-Պողոնցի ենթախոսվածքներում արձանագրված է *սսնսն* տարբերակը, իսկ Կյուսենցի և Կճավի ենթախոսվածքներում՝ *սսնսն* տարբերակը: *Սառադ* տարբերակը գրանցվել է 41 խոսվածքներում և ենթախոսվածքներում՝ ընդգրկելով Պոլսի միջբարբառը (1՝ Խասկալ /Նիկոմեդիա/), Սեբաստիայի (1՝ Խուռնավիլ), Մալաթիայի (1՝ Մալաթիա), Խարբերդ-Երզնկայի (5), Մուշի (18), Սասունի (3), Տալվորիկ-Մոտկանի (7), Կարինի (3), Դիադինի (1՝ Ջուջան) և Երևանի կամ Արարատյան (1՝ Կուրթան) բարբառները: Տիգրանակերտի (1՝ Տիգրանակերտ), Եդեսիայի (1՝ Եդեսիա) բարբառների 2 խոսվածքներում և Սասունի (1՝ Փսանք), Երևանի կամ Արարատյան (1՝ Կոշ) 2 ենթախոսվածքներում արձանագրվել է սառռադ տարբերակը, Սասունի (5) և Մուշի (1՝ Մառնիկ) բարբառների 6 ենթախոսվածքներում՝ *սրռադ* տարբերակը: Բառանվան *սսնսն* տարբերակը փաստված է Խոյ-Մարաղայի Վերնաշենի, Եղեգիսի /ՀՀ Վայոց ձորի մարզ, ՎԲ/ և Ազալի /Նախիջևան, ՎԲ/ ենթախոսվածքներում: Քեսաբ-Սվեդիայի բարբառի Քեսաբի խոսվածքում և Մարաշ-Չեյթունի բարբառի Ֆուռնուսի ենթախոսվածքում գրանցված է *սառոդ* տարբերակը: Եզակի հնչյունական տարբերակներ են արձանագրվել Քեսաբ-Սվեդիայի (1՝ Խտրբեկ /*սառռուր*/), Արաբկիրի (1՝ Արաբկիր /*սսնապ*/), Խարբերդ-Երզնկայի (1՝ Նազարան/*սառոդ*/), Վանի (1՝ Դերլկ /*սառաթ*/), Սասունի (1՝ Հազգո /*սրռադ*/), Տալվորիկ-Մոտկանի (1՝ Կուագետ /*սրդադ*/), Վանի (1՝ Խարիդ /*սրռապ*/) բարբառների 2 խոսվածքներում և 5 ենթախոսվածքներում:

Բարբառագիտական գրականության մեջ գրանցված են *սառապ* տարբերակի գործածությունը Խարբերդ-Երզնկայի բարբառի Երզնկայի խոսվածքում⁵⁶, *սառադ* տարբերակի գործածությունը Կեսարիայի բարբա-

⁵⁶ Տե՛ս Կոստանյան Դ.Մ., Երզնկայի բարբառը, Ե., 1979, էջ 165:

ռում⁵⁷, Խարբերդ-Երզնկայի բարբառի Քղիի, Բերիի և Խնձորեկի ենթախոսվածքներում⁵⁸, *սառաթ* տարբերակի գործածությունը Մալաթիայի բարբառում⁵⁹, *սարուօր* տարբերակի գործածությունը Քեսաբ-Սվեդիայի բարբառի Քեսաբի խոսվածքում⁶⁰, *սարուդ* տարբերակի գործածությունը նույն բարբառի Արամոյի խոսվածքում⁶¹:

Դարալագյազի Ազատակ գյուղում հարսանիքի վերջում երգում են մի երգ, որն ունի հետևյալ տողերը. «Տունը մէ քեռոէշք /որսելի/ տուէք էրնելու /քամել/ խամայ, / Տունը մէ *սարաթ* տուէք մաղելու խամայ...»⁶²:

ՀԳԲ-ն փաստել է *կալի սառաթ* և *հողի սառաթ* տարբերակների գործածությունը՝ առանց բարբառը նշելու⁶³:

Մաղի վերոնշյալ բոլոր տեսակների անվանումները ունեն տարածական լայն ընդգրկում: ՀԲԱ նյութերում և բարբառագիտական գրականության մեջ արձանագրված են նաև սահմանափակ տարածական ընդգրկում ունեցող կամ եզակիների թվին դասվող անվանումներ (*նքուր, խարբալ, հողամաղ, սյուզկէճ, փարմընի մաղ, աղըլ, ախալի մաղ, բէրմաղ, բըզդիզ մաղ, խօշօր մաղ, բըլղուրի մաղ, ծավրի մաղ, բնաղունի մաղ, գըլգըլի մաղ, գօզալագ, դաշկիլ, կաշէ մաղ, գարու մաղ, մազէմաղ, քօզառի մաղ, քյամ և այլն*), որոնց կանոնադաշտնանք մեր հաջորդ հոդվածում:

НАЗВАНИЯ ВИДОВ СИТА В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

АБРАМЯН А.А.

Резюме

Сито играет важную роль как в сельскохозяйственных работах, так и в быту. В зависимости от названия функциональной предназначенности ситам давали соответствующие названия: *alyurmat, kalmat, k'armat, c'oreni mat* и т.д. Названия определенных видов сит были обусловлены материалом, из

⁵⁷ Տե՛ս Անթուսյան Ա.Մ., նշվ. աշխ., էջ 296:

⁵⁸ Տե՛ս Բաղրամյան Ռ.Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960, էջ 165 (նշված է նաև՝ *սառադագ*):

⁵⁹ Տե՛ս Դանիելյան Թ., նշվ. աշխ., էջ 225:

⁶⁰ Տե՛ս Չոլաքեան Յ., նշվ. աշխ., էջ 294:

⁶¹ Տե՛ս Ղարիբյան Ա.Ա., նշվ. աշխ., էջ 68:

⁶² Տե՛ս Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 199:

⁶³ Տե՛ս ՀԳԲ, էջ 954:

которого они изготавливались: *jarmat p'okemat* и т.д. В армянских диалектах были распространены и другие названия: *sa'rat*, *haxal*, *šatarar* и т.д. Указанные названия имеют большой ареальный охват, поскольку со своими фонетическими разновидностями они зафиксированы в достигающих нескольких десятков диалектах и говорах армянских диалектов.

DENOMINATIONS OF SIEVE TYPES IN THE ARMENIAN DIALECTS

A. ABRAHAMYAN

Abstract

The sieve plays an important role both in agricultural work and in everyday life. Depending on the functions they perform, sieves were given appropriate names: *alyurmat*, *kalmat*, *k'armat*, *c'oreni mat*, etc. The names of certain sieve types were given based on their forms like *jarmat p'okemat*, etc. In the Armenian dialects, sieves had also other names: *sa'rat*, *haxal*, *šatarar*, etc. These names are widespread, since they have been recorded with their phonetic variations in dozens of Armenian dialects and speeches.

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Ն.Բ.

XX դարասկզբին եղեռնից փրկված բազմահազար փախստականներ ապաստան գտան աշխարհի տարբեր ծագերում՝ Մերձավոր Արևելք, Կովկաս, Բալկաններ, Ֆրանսիա, Ամերիկա և այլուր՝ համալրելով հայկական համայնքները: Լինելության ծանր պայմաններում գրականությունը կյանք մտավ, երբ դեռ վերապրող գրողներն ուշքի չէին եկել եղեռնի սարսափներից: Նրանք նոր միջավայրում փնտրում էին գոյատևելու և հարմարվելու հնարներ: Իսկ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ազգայինից աստիճանական նահանջի նախադրու: Եվ դա բնական էր: Նրանք իրենց ոտքի տակ չունեին ազգային հող, ըղձալի հայրենիք: Մնայունը միայն հիշողությունն էր: Այս պայմաններում ահա գրականությունը, մասնավորապես սփյուռքահայ գրականությունը, որի անքակտելի մասն է կազմում օտարագիր հայ գրականությունը, սփյուռքահայության կյանքում ձեռք բերեց բացառիկ դեր: Նա իր ուսերին տարավ հայապահպանության քաղաքական, մշակութային դժվարին խնդիրը: Ազգապահպանության հիմնահարցը թե՛ սփյուռքահայ, թե՛ օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում միշտ եղել է արդիական:

Սփյուռքում ստեղծվել ու ստեղծվում է մի գրականություն, որի հեղինակը հայ է, իսկ լեզուն՝ երբեմն ոչ հայերեն, այլ որևէ օտար լեզու, մասնավորապես անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն: Այդ գրականության մասին տասնամյակների ընթացքում եղել են թեր ու դեմ կարծիքներ՝ կռվան ունենալով գրականությունը սահմանող որևէ էական հատկանիշ, մի դեպքում՝ միայն լեզուն, մյուս դեպքում՝ բովանդակությունը, դրա բաղադրիչները կազմող նյութն ու հոգեբանական գործոնները: Սփյուռքահայ գրող Հակոբ Գույումճյանն իր «Անգլիագիր հայ գրողներու խնդիրները» հոդվածում խիստ թերահավատություն է ցուցաբերել այդ գրականության նկատմամբ՝ մասնավորապես նշելով դրա անխուսափելի խզումն իր ժողովրդից ու գրականությունից: Դրա հիմքը նա տեսնում էր լեզվական իրողության մեջ, որով-

հետև գտնում էր, որ «լեզուն միայն արտահայտության միջոց մը ըլլալէ ավելի, հոգեբանական ազդակ մըն է, որ կձևավորէ ու կկոփէ գրողին կամ ընթերցողին հոգին կամ նկարագիրը: Հայկական գրականությունը կենդանի կը պահեն միայն այն անձնուրաց հոգիները, որոնք հայ գիրին ոգիով և գեղեցկությամբ են ներշնչված և նվիրված են հայ գրականության մշակումին»¹: Ըստ այդմ՝ Մայքլ Արլենի, Վիլյամ Սարոյանի, Լևոն-Չավեն Սյուրմելյանի տարբեր ստեղծագործությունների մեջ նա մասնակի կամ լիովին հեռացում էր տեսնում հայ իրականությունից: Ֆրանսահայ գրող Վազգեն Շուշանյանը «Մարդ մը որ Արարատ մը չունի իր հոգվույն խորը» գրքում² խստագույնս քննադատում էր Շահնուրին՝ լեզվից, ազգային սրբություններից հրաժարվելու համար:

Այդ գրականության մասին վեճը հեռու էր սոսկ գրականագիտական խնդիր լինելուց, այն սերտորեն կապված էր ազգի գոյատևման, ազգային հոգեբանությանը հարազատ մնալու նախանձախնդրության հետ: Արշակ Չոպանյանն ահա մեկ ընդհանրության մեջ է միավորում հայագիր և օտարագիր հայ գրողներին և օտարագիր հայ գրականությունն արժեքավորում է առկա պատճառները և բարոյական հետևանքները նկատի առնելով: «Քանի մը գրագետներ, - գրում է Չոպանյանը, - հայերեն և օտար լեզուներով գործեր կարտադրեն և թե կգտնվին նաև իրենց մայրենի լեզուն քիչ իմացող և օտար լեզվի մը ավելի ընտել գրողներ, որ հենց հայու տաղանդը մեծ միջավայրերու մեջ կփայլեցնեն միայն եվրոպական մեծ ազգի մը բարբառովը, ատիկա՝ հայերու կողմէ արտադրված այդպիսի գործերու հաջողության պարագային՝ պատվաբեր է մեր ցեղի վարկին, այդ ցեղի քաղաքականության հատկությանց մեջ նոր ապացուցումը կդառնա և իբր այդ նույնիսկ ուրախադիթ երևույթ է»³:

Այդ նկատառումներից եկող տարբեր դիրքորոշումները վերջ ի վերջո հանգեցին Սփյուռքի գրականության մեջ «օտարագիր հայ» գրական երևույթին առնչվելու խնդրին», որն ինչպես երեկ, առավել ևս այսօր կարևոր գործնական նշանակություն է ստացել: Օտարագիր գրականությունը զարգացել ու զարգանում է Սփյուռքի հատկապես այն վայրերում, որտեղ

¹ **Գույումճյան Հ.**, Անգլիագիր հայ գրողներու խնդիրները (Հայաստանի կոչնակ, Նյու Յորք, 1952, N 46, էջ 1089):

² **Շուշանյան Վ.**, Մարդ մը որ Արարատ մը չունի իր հոգվույն խորը, Բեյրութ, 1998, էջ 66:

³ **Չոպանյան Ա.**, Գրական խնդիրներու շուրջ (Անահիտ, Փարիզ, 1932, N 1-2, էջ 72):

մեծ է «դրսի» ազդեցությունը, հայ համայնքը տարածականորեն ցրված է մեծ քաղաքներում, հայերեն ուսումնառություն չկա կամ գտնվում է երկրորդական կրթության մակարդակի վրա: Այդ պայմաններում գրական ասպարեզ են եկել ու գալիս են ծագումով հայ գրողներ, որոնք ստեղծագործել ու ստեղծագործում են օտար լեզուներով: Տարբեր է նրանց ճակատագիրը. ոմանք, անցնելով օտար լեզվի, շարունակել ու շարունակում են իրենց համարել հայ գրող, իսկ ոմանք հեռացել կամ ընդհանրապես ջանացել են հեռանալ ազգային արմատներից:

XX դարասկզբին մահվան ճիրաններից մազապուրծ հայ մարդն արժանանում էր աշխարհի հզորների արհամարհանքին և դասվում էր երկրորդ կարգի ժողովուրդների շարքը: «Հայ լինելը, երևի թե, թեթև վտանգ կամ երկրորդ կարգի պատկանելություն էր պարունակում, այլապես հայրս այդքան վճռական չէր լինի դրանից վեր բարձրանալու իր ձգտման մեջ: Այդպիսով ես էլ, հասկանալով հորս, հետևեցի նրան: Ուրիշ մեզնից զատ մարդիկ էին հայերը», - գրում է Մայքլ Արլեն Կրտսերը պատանեկան տպավորությունների մասին⁴:

Մեծ եղեռնից մազապուրծ ու եվրոպական երկրներում և Ամերիկայում ապաստանած հայության հոգևոր լքվածությունը, հայից ու հայությունից հեռանալու ձգտումը տարագիր մեկ այլ գրողի՝ Շահնուրի ընդհանրացնող բնորոշմամբ, անվանվում է «Նահանջը առանց երգի»: Անձանոթ միջավայրին հարմարվելու, օտար հասարակության մեջ տեղ ու դիրք գտնելու հոգեկան նահանջն է ստիպել, որ տարագիր հայերից շատ շատերը չհիշեն մայրենի լեզուն, հեռու ու մոտ նախնիների ազգային ավանդները, վարքուբարքը և սեփականացնեն օտարի ապրելակերպը: Դժբախտաբար, այս անկասելի ընթացքն այսօր էլ շարունակվում է: Այդպիսին է նաև Մայքլ Արլեն Կրտսերը՝ Ամերիկայում ապրող և իրեն կիսահայ համարող մի գրող: «Արմատների մասին դժվար չէ գրելը, մանավանդ եթե դրանք խորն են, ողբերգական ու կյանքով լեցուն, ինչպես հայ ժողովրդի արմատները: Մենք ոգեղեն ժողովուրդ ենք և կառչած ենք մեր երկրին, հողին, կառչած նաև հոգևոր իմաստով, մեր և հայրենի հողի միջև մագնիսական վիթխարի ձգողություն կա, և այս բանը կրկին երևաց Ղարաբաղի հետ կապված

⁴ Մայքլ Արլեն Կրտսեր, Դեպի Արարատ, Ե., 2000, էջ 6:

շարժման, երկրաշարժի բերած զգացմունքների մեջ»⁵: Նշանակում է՝ հայապահպանության կարևորագույն ազդակը առաջին հերթին արմատներին և երկրին ամուր կառչած լինելն է:

Քիչ չեն այն օտարագիր հայ գրողները, որոնք արտահայտում են հայի հոգեբանությունը, կյանքի իրողությունները՝ օտար լեզուներով: Օտարագիր հայ գրականությունը տասնամյակների մեջ կարողացել է ոչ միայն կենսունակ պահել դասական շրջանի ավանդույթները, այլև, բառիս բուն իմաստով, մաքառել է ազգային դիմագծերի պահպանման համար՝ պատմականորեն միանգամայն հասկանալի հարցադրումներով: Օտարագիր հայ գրողներից շատերին բնութագրական է Վիլյամ Սարոյանի խոստովանությունը. «Թեև անգլերեն կը գրեմ, ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլերեն են: Միջավայրը, որուն մասին կը գրեմ, ամերիկյան է: Ոգին, որ կստիպե ինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ: Խորապես կսիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը»⁶: Վիլյամ Սարոյանը ազգապահպանության հենքը համարում է առաջին հերթին ազգային ոգին, ազգային յուրօրինակ խառնվածքն ու բնավորությունը, հայրենյաց ավանդների, բարքերի ու սովորույթների պահպանումը: Գրողի այս տրամադրությունները պարզ երևում են հատկապես հայկական թեմատիկայով գրված գործերում: Նրա հայ հերոսները՝ «խենթ ու խելառ» քեռիները, օտար ափերում պահպանում են իրենց ազգային բնավորությունն ու խառնվածքը, սովորույթներն ու բարքերը: Քեռի Մելիքը, իր ազգային խառնվածքին հավատարիմ, հայ մարդու ջանասիրությամբ, համառությամբ ձգտում է օտար երկրում նոնենու այգի տնկել, խնամում է նոր տնկած նոնենիները, որոնք, սակայն, չորանում են: Նոնենին խորհրդանշում է հայությունը, նռան հատիկները աշխարհով սփռված հայերն են, որոնց ուզում է մեկ վայրում միավորել քեռի Մելիքը, ուզում է օտար ափերում նոր Հայաստան ստեղծել:

Ազգապահպանության մյուս կարևորագույն ազդակը Սարոյանը համարում է հայրենիքը՝ Հայաստանը, առանց որի հայը պարզապես գոյություն ունենալ չի կարող, Հայաստանն է, որ օտար եզերքներում հային ուժ ու

⁵ **Մայքլ Արլեն Կրտսեր**, Եթե հայ ես, դժվար մոռանաս անցյալդ (Նորք, 1989, N 5, էջ 152):

⁶ **Սարոյան Վ.**, Ընտիր երկեր, հ. 2, Ե., 1987, էջ 42:

կորով է տալիս ապրելու և հարատևելու. «Քանի որ Հայաստան չկա, պարոններ, Ամերիկա ալ չկա, Անգլիա ալ չկա, Ֆրանսա ալ չկա, Իտալիա ալ չկա, միայն աշխարհը կա, պարոններ», -ասում է աշխարհի դեմ զայրացած Սարոյանի հերոսը⁷:

Օտարության մեջ հայրենիքը մարդու գոյության հիմքն է: Իսկ ահա Լևոն-Չավեն Սյուրմեյանը ազգապահպանությունը տեսնում է ազգային հոգեբանության և ազգային արժանապատվության մեջ: Սյուրմեյանը մինչև վերջ էլ չի համակերպվում այն քար լուծյանը, որ աշխարհի հզոր պետությունները ցուցաբերեցին Հայոց եղեռնի հանդեպ, նրա՝ «Ձեզ եմ դիմում, տիկիներ և պարոններ» վեպը յուրօրինակ բողոք է քարսիրտ պետությունների դեմ: Ոչինչ հայ մարդուն հոգեպես սպանել, ոչնչացնել չի կարող. սա մեր ազգային հոգեբանության գլխավոր հայտանիշն է: «Մեր այս պատմական սերունդը, հաղթանակի ու երգի բնագոյն ունի: Մնացողներս շատ քիչ ենք, նրանք սպանեցին մեզնից շատերին, - ասում է Սյուրմեյանի հերոսը, - բայց վերապրողներս ուժեղ ենք...Մեր որբ սերունդը՝ վշտի հանճարը, վշտի աննվաճ ուժն ունի»⁸: Այս վեպը Սյուրմեյանի անունը դուրս բերեց ոչ միայն ազգային, այլև ամերիկյան իրականության սահմաններից: Դա XX դարասկզբի մեր ողբերգական պատմության հավաստի նկարագրությունն է, որը գեղարվեստավերագրական վկայության ուժ ունի՝ գրված ազնիվ ու ճշմարտացի գրչով: Գիրքը հուզում է իր արժանահավատությամբ: Թեև գրված է անգլերեն, սակայն հայաշունչ է: Խոր ցավով գրված վեպի բարոյական սլաքն ուղղված է մեկ նպատակի: Տեղի է ունեցել հրեշավոր նախճիր, կործանվել է մի ամբողջ աշխարհ, որի հիշողությունն իսկ անասելի ցավ է պատճառում վերապրողներին, սակայն մարդիկ պարտավոր են հիշել այդ ամենը թե՛ հանուն զոհերի, թե՛ հանուն ապագա սերունդների: Սյուրմեյանը ազգապահպանության հարցում խիստ կարևորում է նաև «հայկական ոգին», և պատահական չէ, որ անգլերեն թարգմանեց մեր դյուցազնավեպն ու հեքիաթները: «Հայկական ոգին, - գրում է նա, - հայոց երկրի ոգին ամենից ավելի լավ արտահայտվել է մեր ժողովրդական բանահյուսության և ժողովրդական երգերի մեջ, որքան ավելի հին են դրանք, այնքան ավելի գրավիչ են ու կատարյալ, քանի որ ավելի մոտ են բնությանը և առօրյա կյանքին, դրանք հորինող, երգող և

⁷ Սարոյան Վ., Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Ե., 1999, էջ 111:

⁸ Սյուրմեյան Լ.-Չ., Ձեզ եմ դիմում, տիկիներ և պարոններ, Ե., 1980, էջ 35:

գրող ժողովրդի հույսերին ու վշտերին. առանց դրանց ազգային ոգի լինել չի կարող»⁹:

Մերօրյա գրող Փիթեր Բալաքյանը Սյուրմեյանի նման ազգապահպանությունը տեսնում է ազգային արժանապատվության մեջ, եթե ազգը չունի արժանապատվություն, ապա նա ապրելու իրավունք չունի: Դա պարզ արտացոլված է գրողի «Պայծառ տխուր օրեր» և «Ճակատագրի սև շունը» հուշագրություններում: Ստեղծագործությունների հիմքում ընկած են ազգի դառը հիշողությունը՝ եղեռնը, ավետյաց երկրի կարոտը, սերնդից սերունդ փոխանցվող պատմական անարդարության դառնությունը, ինքնադատապարտումը. «Ինչո՞ւ մինչև օրս այս մասին ոչ մի անգամ չենք պատմել,- բորբոքված հարցնում է գրողը և հաղթահարելով լռության պատնեշը՝ ինքնաճանաչման ճանապարհով իր բողոքի ձայնն է բարձրացնում՝ դատապարտելով անմարդկային չարիքը: - Անցյալը գալարվող ստվերի նման իր խավար շուքն էր սփռում բոլորիս վրա: **Երկիր:** Հիմա եմ հասկանում, որ այն ծածկագրված արտահայտություն էր, նախատեսված չէր երեխաների համար: Այն պարտադրում էր միայն հայերի՝ թմբիրի մեջ ապրող լուռ սերունդը: Այն նշանակում էր կորուսյալ աշխարհ, վայր, որ թողնվել էր մխալու սեփական մոխիրների մեջ: Սակայն հնագույն միտքը չէր մարմնելու: Բարերար ապահով հողի վրա այն մի օր վերածնվելու էր նոր կենսունակությամբ, - հավաստում է գրողը, - վերագտնելու էր իր երեքհազարամյա քաղաքակրթության փաստերն ու իրողությունները: Եվ այսօր ամերիկահայերը հին աշխարհը տեսնում են նոր ձևով՝ իր հարաշարժության ու գաղտնազերծության մեջ, այնպես ինչպես զգացել են Արշիլ Գորկին, Վիլյամ Սարոյանը, Ալան Հովհաննեսը, Մարջորի Հովսեփյան-Դոբկինը, Մայքլ Արլենը, Ռուբեն Նակյանը և սփյուռքի այլ արվեստագետներ, այնպիսի ձևերով, որոնք պիտի ապշեցնեին իրենց հալածիչներին, որոնք հերքում էին այն թյուր կարծիքը, թե 1975 թ.-ից հետո ոչ մի ձայն չէր լսվելու հայերից»¹⁰:

Փիթեր Բալաքյանը իր ստեղծագործությամբ հին աշխարհը ներկայացնում է «նոր ձևով՝ իր հարաշարժության ու գաղտնազերծության մեջ», և գտնում է, որ սերունդները պետք է իրար փոխանցեն իրենց ազգի պատմությունը, ազգային կեցվածքը, ազգային մտածողությունը և տեր կանգնեն իրենց պատմությանը, այլապես ազգը չի կարող հարատևել:

⁹ Armenian Reporter, 1979, 1 november.

¹⁰ **Բալաքյան Փ.**, Ճակատագրի սև շունը, Ե., 2002, էջ 349:

Ֆրանսագիր Վահե Գողելը ազգապահպանության կարևորագույն պայման է համարում ազգային արմատներին ամուր կառչած լինելը, նաև ազգային պատմության իմացությունը: Նրա «Հայաստան» պոեմը¹¹ նման է Ռուբեն Մելիքի «Առասպելը հայկական» պոեմին՝ ժողովրդի պատմության և նրա լինելության իմաստավորման արծարծումներով: Իսկ դա պատահական զուգադիպություն չէ: Այդ ընդհանրության աղբյուրը բխում է հենց հայ ժողովրդի պատմությունից ու նրա իմաստասիրությունից, որ տարբեր ճանապարհներով, բախտի ու կենաց խութերը հաղթահարելով ծլարձակում, կենսավորվում են որպես ավանդներ օտարագիր հայ գրականության մեջ:

Այսպիսով, սփյուռքահայ գրականության մեջ և օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում միշտ արդիական է եղել ու մնում է ազգապահպանության խնդիրը՝ որպես լինելության անկապտելի պայման, և յուրաքանչյուր հեղինակ դրսևորում է խնդրի լուծման յուրովի մոտեցում՝ ամուր կառչած մնալով ազգային ոգուն, արմատներին և մայր հայրենիքին:

ВОПРОС СОХРАНЕНИЯ НАЦИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ ИНОЯЗЫЧНЫХ АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ

ГАЛСТЯН Н.Б.

Резюме

Иноязычная армянская литература была создана в тех странах, где армянская община была сосредоточена в больших городах, подверженных “внешнему” влиянию. Сказанное было обусловлено также отсутствием возможности изучать родной язык. При этом ряд писателей, творивших на иностранном языке, сохраняли верность корням и считали себя армянскими писателями.

Иноязычных писателей армянского происхождения (Вильям Сароян, Левон-Завен Сюрмелян, Питер Балакян, Ваге Годел и др.) объединяла идея сохранения национальной идентичности и нации, что нашло отражение в творчестве каждого из них.

¹¹ Գողել Վ., Հատուկ նշաններ, Ե., 1975, էջ 61:

QUESTION OF PRESERVATION OF NATIONAL IDENTITY IN THE WORKS OF FOREIGN LANGUAGE ARMENIAN WRITERS

N. GALSTYAN

Abstract

Foreign language Armenian literature was created in those countries where the Armenian community was concentrated in large cities, where there was great “external” influence. This was also due to the lack of opportunity to learn the native language. At the same time, a number of writers who worked in a foreign language remained faithful to the roots and considered themselves Armenian writers.

Foreign language Armenian writers (William Saroyan, Levon Zaven Surmelyan, Piter Balakyan, Vahé Godel, et al.) were unified in the idea of preservation of national identity, which found its reflection in their created works.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿՐԿՆԱՍԵՌ ԲԱՅԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԶԱՔՅԱՆ Հ.Ս.

Ներգործական և չեզոք սեռերի նշանակությունների համատեղմամբ ձևավորվող կրկնասեռությունը (հետայսու՝ նր//չբ)¹ որպես սեռի քերականական կարգի առանձնահատկություն, հատուկ է հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերին: Գրաբարում կան նր//չբ կրկնասեռություն ունեցող շուրջ 500¹, միջին հայերենում՝ մոտ 300², իսկ արդի հայերենում՝ մոտ 400 բայեր³:

Արդի հայերենի կրկնասեռ բայերը ներկայանում են երեք շերտով՝ գրաբարյան, միջինհայերենյան և արդիհայերենյան:

Բուն արդիհայերենյան կրկնասեռ բայերի առաջին խմբում սեռային տեղաշարժերով պայմանավորված կրկնասեռ բայերն են (սրանք արդի հայերենում կրել են հասկացության ծավալի տարատեսակ փոփոխություններ, որոնք հանգեցրել են քերականական հատկանիշների փոփոխության): Երկրորդ խմբում նորակազմ, իսկ երրորդում բարբառային կրկնասեռ բայերն են:

Ժամանակակից հայոց գրական լեզուն, կազմվելով բարբառային հիմքի վրա, հնչյունական, քերականական համապատասխան իրողությունների հետ ժառանգել է նաև բարբառային բառապաշարի որոշ մասը⁴: Բարբառային կամ գավառական բառերը (գավառաբանություններ և հասարակաբանություններ⁵) մեծ մասամբ հին կյանքը, կենցաղը, առտնին հարաբերությունները ցույց տվող, այլևայլ հասկացություններ արտահայ-

¹ Տե՛ս **Զաքյան Հ.**, Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն, Գյումրի, 2015:

² Տե՛ս **Զաքյան Հ.**, Միջին հայերենի կրկնասեռ բայերը, Գյումրի, 2016:

³ Հաշվարկները կատարվել ենք մենք:

⁴ Այդ շերտի մեջ կան այնպիսի բառեր, որոնց համագործերը չեն հիշատակվել գրաբարում կամ միջին հայերենում, իսկ շատերը, ենթադրվում է, իրենց հնությամբ գրաբարյան շրջանին են վերաբերում, թեև մեզ հասած գրավոր աղբյուրներում չեն արձանագրվել (տե՛ս **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 152):

⁵ **Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 108:

տող միավորներ են, որոնք գրական լեզվին են անցել խոսակցական լեզվի կամ գեղարվեստական գրականության միջոցով⁶:

Բարբառային կրկնասեռ բայերի մի մասն առաջացել է գրաբարյան բառերի հնչյունափոխության հետևանքով (օրինակ՝ խաղաղել-խախտանդել), մյուս մասը կազմվել է բնիկ ու փոխառյալ բառերով (սազել, թնջկել և այլն), և շատ դեպքերում ընդհանուր է միջին հայերենի հետ:

Այս բառաշերտի ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հաստատում է հայերենում նբ//չբ կրկնասեռության ձևավորման ընդհանուր օրինաչափությունը. անկախ որևէ հանգամանքից, եթե բայը հայերենում կրկնասեռ է, ուրեմն ունի կա՛մ նբ և չբ բառային տարբեր իմաստներ (օրինակ՝ **ծծմել** - նբ - 1. խնոցի հարել, չբ - 2. նստած տեղը ննջել, դանթել), կա՛մ նույն բառային իմաստը՝ գործողության հակադիր ուղղվածությամբ (օրինակ՝ **ակոլել** - նբ - քանդել, չբ - քանդվել (ակոլ-ավերակ)):

Ըստ սկզբնահիմքի կազմության՝ բարբառային կրկնասեռ բայերը բաժանվում են երկու խմբի.

ա) Պարզ սկզբնահիմքերով կրկնասեռ բայեր: Արդի հայերենի կրկնասեռ բայերի պարզ սերող հիմքերը սովորաբար գրաբարից ժառանգված արմատական բառեր են, ինչը չի կարելի ասել բարբառային կրկնասեռ բայերի մասին: Բարբառներում կրկնասեռ բայեր սերած պարզ սկզբնահիմքերը հին հայերենում սովորաբար չեն հանդիպում (կամ հիշատակված չեն): ԳԲ-ի և ՆՀԲ-ի զուգադրական քննությունը⁷ վեր է հա-

⁶ Ժամանակակից հայ գրական լեզվում բարբառային շերտը կազմող բառերը գործածության տեսակետից կարելի է բաժանել երեք խմբի՝ բառեր որոնք՝ ա) ամբողջապես ծովվել են գրական բառապաշարին, ունեն ամենօրյա անսահմանափակ գործածություն. այս կարգի բառերը միայն վերապահումով կարելի է համարել բարբառային, բ) դեռևս ամբողջովին չեն ծովվել գրական լեզվին, և բարբառային երանգը զգալի է թե՛ կազմությամբ, թե՛ իմաստով, թե՛ ոճական կիրառությամբ, գ) իրենց իմաստներով և ոճական կիրառության այլևայլ առանձնահատկություններով կանգնած են գրական լեզվի եզրին, մտնում են խոսակցական բառապաշարի մեջ: Գեղարվեստական գրականության մեջ այս բառերը գործածվում են միջավայրի բներանգ ստեղծելու կամ ծառայում են իբրև պատկերավորման-արտահայտչական միջոց՝ հերոսների կերպավորման համար (տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983, էջ 202):

⁷ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը» ընդգրկում է V-XI դդ. ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված հին գրական հայերենի բառերը, իսկ Նոր հայկազյան բառարանը՝ V-XVII դդ. գրաբարյան բազմաբնույթ ձեռագիր և տպագիր մատենագրական բոլոր հուշարձանները: Կարելի է ենթադրել, որ ԳԲ-ում չարձանագրված բառը գործածության մեջ մտել XI դ. հետո:

նում հետաքրքիր փաստեր. օրինակ՝ պիշ, փոթ, պրան, ձձում, փտոր, թակ, սոր և անվանական այլ բառույթներից «Գրաբարի բառարան»-ում հիշատակվում է միայն **պիշ** (աչքերը չռած, սևեռած, չռված) տարարժեք բառը, որով կազմված այլ բառույթներ հին հայերենը չունի (ԳԲ, Բ, 415): ՆՀԲ-ն հիշատակում է նաև **փոթ** գոյականը (ծալք, խորշոմություն, կնճիռ) և **փոթիլ** չեզոք սեռի բայը՝ կնճռել, խորշոմել նշանակություններով (ՆՀԲ, Բ, 944), ինչպես նաև **թակ** գոյականը՝ գնդաձև գլխով փայտ նշանակությամբ (ՆՀԲ, Ա, 792)⁸: Արդիհայերենյան բառարաններում արդեն հիշատակվում են ոչ միայն անվանական, այլ նաև բայական բառույթները:

Պիշ ածականն ունի 1. չռված, լայնորեն բացված, 2. հառած, սևեռուն, ակնապիշ, իսկ **պլշել** կրկնասեռ բայը՝ նբ, չբ - 1. աչքերը չռել, 2. աչքերը չռվել նշանակությունները (ԱՀԲԲ, Բ, 1215, ԺՀԼԲԲ, Դ, 202)⁹:

Թակ բառն ունի փայտե ձող՝ բուրդը կամ լվացքը ծեծելու համար, իսկ **թակել** բայը՝ նբ, չբ - 1. թակով մի բան խփել, 2. բախել, 3. ծեծել, փխբ. 4. ռազմական գործողություններով հարված հասցնել, 5. բաբախել, 6. խփելով նվագել իմաստները (ԱՀԲԲ, Ա, 413, ԺՀԼԲԲ, Բ, 128)¹⁰:

Փոթ անվանական բառույթն արդի հայերենում ունի շորի կտորի ծալք, դարս, իսկ **փոթել** կրկնասեռ բայը՝ նբ - 1. փոթեր անել, չբ - 2. փոթոտ դառնալ, ինչպես նաև նբ - 3. կնճիռներ առաջացնել և չբ - 4. կնճիռներ առաջանալ նշանակությունները (ԱՀԲԲ, Բ, 1523, ԺՀԼԲԲ, Դ, 657) և այլն:

Որոշ դեպքերում բայերի կրկնասեռությունը պայմանավորում են փոխաբերական իմաստները, օրինակ՝ **ձձում** բառն ունի առաստաղից թոկերով կախված խնոցի՝ կարագ հարելու համար նշանակությունը, իսկ **ձձմել** բայը՝ ոչ միայն նբ - 1. խնոցին հարել, այլ նաև չբ - փխբ. 2. նստած տեղը ննջել, դանթել իմաստները (ԱՀԲԲ, Ա, 925, ԺՀԼԲԲ, Գ, 420):

⁸ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» հիշատակվում են *փոթ* և *թակ* արմատները, առաջինը՝ որպես հայակերտ, իսկ երկրորդը՝ բնիկ հայերեն բառ (ՀԱԲ, Ա, 509 և Բ, 141):

⁹ Բերենք բնագրային օրինակներ արդիհայերենյան սկզբնաղբյուրներից. նբ - Ծալապատիկ նստեց անկողնում և աչքերը *պլշեց* ինձ վրա: Չբ - Անդամալույծի աչքերը *պլշեցին* (ԱՇ):

¹⁰ Թակել - չբ - Թակը *թակում է՝* թըխկ հա թըխկ: Պտույտ եկավ գլուխը, սիրտը ամուր *թակեց* (ԺՀԼԲԲ, Բ, 129): Նբ - Հարձակվեց կողպած դռան վրա, սկսեց *թակել*: Սրան մի անգամ այնպես եմ *թակել*, որ ձեռքերս երկու օր ցավում էին: Բարակ անձրևը *թակում էր* զինվորների վերարկուները (ԴԴ) և այլն:

Փսոր բառն ունի 1. փշրանք, փշուր, 2. աղտ, կեղտ, 3. փշրված, կտրված (կաթի մասին), իսկ **փսորել** կրկնասեռ բայը՝ նբ-1. կաթնային նյութերը շիճուկից զատվել, 2. չբ-կտրվել, 3. չբ-ծամոնը փսոր դառնալ, 4. փխբ. փչանալ, 5. փխբ. թարմությունը կորցնել, 6. ձախողվել նշանակությունները (ԱՀԲԲ, Բ, 1540, ԺՀԼԲԲ, Դ, 685) և այլն:

Սոր (ջրաղացի տակից հոսող ալյուրի հոսքը), **թնջուկ** (իրար խառնված, խճճված, թաղկած), սերող հիմքերը և **սորել**, **թնջկել** բայերը հիշատակված են միջինհայերենյան բնագրերում: Եթե միջին հայերենում խնդրո առարկա բայերն ունեն քերականական մեկ սեռ¹¹, ապա արդի հայերենում բայերի բնիմաստների զարգացման հետևանքով դարձել են կրկնասեռ՝ **սորել**-նբ-1. հոսեցնել, թափել, 2. չբ-սորալ, հոսել (ԱՀԲԲ, Բ, 1320, ԺՀԼԲԲ, Դ, 324), **թնջկել** - չբ-1. թնջուկ դառնալ, խճճվել, նբ-2. թնջուկ դարձնել (ԱՀԲԲ, Ա, 450, ԺՀԼԲԲ, Բ, 217)¹²:

Բարբառներում կրկնասեռ բայեր սերող պարզ հիմքերից շատերը **փոխառություններ** են, որոնք հաճախ արձանագրված են միջինհայերենյան սկզբնաղբյուրներում: Օրինակ՝ **ժղուկ** (զբաղմունք) և **թամամ** (1. լրիվ, ավարտված, ամբողջ, կատարյալ, 2. վերջ, ավարտ) բառերը արաբական փոխառություններ են: **ժղլել**-ը միջին հայերենում չեզոք սեռի բայ է՝ չբ-զբաղվել իմաստով¹³, իսկ **թամամել**-ը՝ ներգործական՝ լրացնել, վերջացնել, ամբողջացնել նշանակություններով¹⁴: Արդի հայերենում այս բայերը կրկնասեռ են. **ժղլել** - նբ, չբ - 1. ինչ-որ բան ասել, ավելորդ խոսել, 2. զբաղվել մի բանով¹⁵ (ԱՀԲԲ, Ա, 479), **թամամել** - չբ - 1. լրանալ, նբ - 2. լրացնել (ԱՀԲԲ, Ա, 416)¹⁶:

¹¹ Սորել-նբ-1. հոսեցնել, թափել. Այդ ով է երդիկս եկել, զայդ օտար հողն *կու սորայ* (ՄՀԲ, 710), թնջկել (միջին հայերենում՝ թնջկոյի)-չբ-իրար խառնվել. Զմանր մագմզուկսն որ *թնջկոեալ լինին* ի տակսն, հա՛ն և ձգեա՛ (ՄՀԲ, 247):

¹² «Հայոց լեզվի բարբառային բառարանում» հիշատակված են թնջուքել-խոշոր առամներ ունեցող սանրով մագերի թնջուկները հանել, թնջկոել-թնջուկ գոյանալ, խճճվել, թնջգոտիլ-թնջուկ դառնալ (ՀԼԲԲ, Բ, 120) բայերը:

¹³ Ամենայն ոք յիւր արուեստն *ժղլեցէ՛ք* (ՄՀԲ, 258):

¹⁴ Երբ որ Ովանէս արեղէն վախճանեցավ՝ Տէրտէրն չկարաց *թամամել* (ՄՀԲ, 233):

¹⁵ ՀԼԲԲ-ում բայն ունի հետևյալ իմաստային շրջանակը՝ ժղլել - 1. ասել-խոսել, զրուցել, զրուցելով ժամանակ անցկացնել, 2. մի կերպ ապրել, մի բանով տարվել, 4. մի բանով զբաղվել, 5. խորհրդածել, մտածել բայերը (Բ, 159):

¹⁶ ԺՀԼԲԲ-ում հիշատակվում է նաև կորած անասունները գտնել, միացնել նշանակությունը (Բ, էջ 193):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոխառյալ հիմքերով (**զիլ** (**պրսկ.**) - ած.- ուժեղ, բարձր, **հարամ** (**արաբ.**) - գոյ. ած. - ապօրինի, պիղծ, նզովյալ, **ջուխտ** (**պիլ.**) գոյ., ած. - երկյակ) բաղադրված մյուս կրկնասեռ բայերը միջին հայերենում չեն հիշատակվում, ենթադրում ենք, որ դրանք ավելի ուշ են կազմվել. **զլել** - նբ - 1. ձայնը ուժեղացնել, չբ - 4. ուժեղանալ, **հարամել** - նբ - 1. պղծել, կեղտոտել. չբ - 2. հարամվել, հարամ դառնալ, **ջխտել** - չբ - երկուս դառնալ, նբ - զույգ դարձնել¹⁷:

սկզբնահիմքը/բայը	գրաբար	միջին հայերեն	արդի հայերեն
պիշ	+	+	+
պլշել	-	-	+նբ//չբ
փոթ	-	+	+
փոթել	-	+ /չբ/	+ նբ//չբ
թակ	-	+	+
թակել	-	+	+ նբ//չբ
ծծում	-	-	+
ծծմել	-	-	+ նբ//չբ
փսոր	-	-	+
փսորել	-	-	+ նբ//չբ
սոր	-	+	+
սորել	-	+/նբ/	+ նբ//չբ
թնջուկ	-	+	+
թնջկել	-	+/չբ/	+ նբ//չբ
ժղուկ	-	+	+
ժղլել	-	+/չբ/	+ նբ//չբ
թամամ	-	+	+
թամամել	-	+/նբ/	+ նբ//չբ
զիլ	-	+	+
զլել	-	-	+ նբ//չբ
ջուխտ	-	+	+
ջխտել	-	-	+ նբ//չբ
հարամ	-	+	+
հարամել	-	-	+ նբ//չբ

¹⁷ *Չլել* – նբ – երբ զուռնան իր ձայնը *զլում*, դափի բերնից խոսքը եռում (ԳԷ): Դա այն պահին էր, երբ քսան դաստա նվագաժողովներ հենց նոր իրար գլխի հավաքվել ու *զլել էին* իրենց երգը (ՎԱ): Չբ – Հոգնածին ուրիշ զույգ է փոխարինում, զուռնան էլի *զլում է*, վարձկան կանայք *անկյունում մշում*, ձեն ձենի են տալիս (ԱԲ): *Հարամել* – նբ – ...մսի ահագին կտորները մի քիչ կծում, *հարամում* ու դնում էին իրենց կողքին (ՎԱ): Չբ – Կարմրաքարն ապրելու տեղ չի, էստեղ էլ ապրելը *հարամեց* (ԱԲ): *Ջխտել* – նբ – Ինչ անեն, որ մի բարձի գլուխս *ջխտի*, աղքյուր (ՀՇ): Նբ – Մի մոզի առնենք, մեր մոզին *ջխտենք* (ՀՇ): *Թամամել* – չբ – Ամիսը երբ *թամամեց*, երբ եկար (ԱԲ): Նբ – Մի քանի մանեթ էլ մոտս կար, դրի վրան, հիսուն մանեթ *թամամեցի* (ԺՀԼԲԲ, Բ, 133):

Այսպիսով, բարբառային կրկնասեռ բայերի պարզ սկզբնահիմքերից մի քանիսը հիշատակված են գրաբարում կամ միջին հայերենում, իսկ մի քանիսը փոխառություններ են: Միջին հայերենում արձանագրված բայերը սովորաբար կրկնասեռ չեն: Դրանք քերականական այդ հատկանիշը ձեռք են բերել հետագայում՝ բայերի բնախմաստների զարգացման հետևանքով:

բ) Բաղադրյալ սերող հիմքերով կրկնասեռ բայեր: Բաղադրյալ սերող հիմքերով կրկնասեռ բայերը ավելի փոքր թիվ են կազմում և տարբերվում են ըստ կառուցատիպերի.

1. Համատիպ բաղադրիչներով բարդություններ. լինում են՝

ա) անհոդակապ իսկական բարդություններ՝ **ջրփոխ** - 1. ջուրը փոխելը, օդը փոխելը, **ջրփոխել** - նբ - 1. ջուրը փոխել, 2. նոր տեսակի ջուր օգտագործել, չբ - 3. ջրփոխվել (ԱՀԲԲ, Բ, 1352, ԺՀԼԲԲ, Դ, 242)¹⁸ և այլն,

բ) բաղիյուսական հարադրություններից կազմված բարդություններ՝ **վերուվար** - ժող. 1. վերևն ու ներքևը, 2. բարձրանալ - իջնելը, **վերուվարել**¹⁹ - նբ, չբ - 1. խառնաշփոթություն առաջ բերել, բարձրացնել, իջեցնել, 2. բարձրանալ, իջնել (ԱՀԲԲ, Բ, 1387, ԺՀԼԲԲ, Դ, 408), **ետևառաջ** - 1. դեպի հետ և դեպի առաջ, 2. տեղերը փոխելով, ետևինը առաջ և առաջինը ետև գցելով, տանելով-բերելով, 3. գվռ. վաղ թե ուշ, վերջիվերջո, **ետևառաջել** - նբ, չբ - 1. ետևառաջ գցել, 2. ետևառաջ անել, գնալ-գալ (ԱՀԲԲ, Ա, 333, ԺՀԼԲԲ, Ա, 562), և այլն,

գ) արմատի կրկնությամբ կազմված կցական բարդություններ՝ **փլփլել** (բլբլել) - նբ - 1. զանազան տեղերում քանդել, չբ - 2. զանազան տեղերում քանդվել (ԱՀԲԲ, Բ, 1520, ԺՀԼԲԲ, Դ, 652), **տմտմալ** - նբ - 1. քթի տակ երգել, չբ - 2. կիզահողի վրա տատանվել (ԱՀԲԲ, Բ, 1449, ԺՀԼԲԲ, Դ, 513) և այլն:

2. Առմիջուկային բաղադրիչներով բաղադրություններ.

Դրանք գերազանցապես –ոտ բառակազմական ածանցով սերող հիմքեր են, օրինակ՝ **արցունքոտ**–արցունքով թրջված, արցունքներով

¹⁸ Միջին հայերենում ջրփոխել–ը չեզոք սեռի բայ է՝ 1. ջրփոխվել, օդափոխվել, 2. օդափոխության համար այլ տեղ գնալ նշանակություններով (ՄՀԲ, 647):

¹⁹ **Վերուվարել** - նբ - **Վերուվարել եմ** երկնքի փեշով արևը ոսկի, արեգակը սև (ՆԱ): չբ - ...քո հիշողության, քո լավուլատի, տաքուպաղի, ուշուշուտի պարույրներում **վերուվարել** (ԺՀԼԲԲ, Բ, 457):

լցված, **արցունքոտել**²⁰ - նր - 1. արցունքոտ դարձնել, չր - 2. արցունքով լցվել, **ծերտոտ** - ծերտ քսված, ծերտով կեղտոտված, **ծերտոտել** - նր - 1. շատ անգամ և շատ տեղերում ծրտել, չր - 2. ծրտոտվել, **սևոտ** - 1. սև բանով կեղտոտված, 2. սևավուն, **սևոտել** - նր - 1. որևէ բան սևացնել, կեղտոտել, չր - 2. կեղտոտվել, սևանալ, **վերքոտ** - վրան վերքեր ունեցող, **վերքոտել** - նր - 1. վերքերով պատել, չր - 2. վերքերով պատվել, և այլն²¹:

Որոշակի թվով կրկնասեռ բայեր կազմվել են **կախյալ բայահիմքերով**, օրինակ՝ **լիկել**²² - 1. նր. սաստիկ ծեծել, 2. չր - չորացած նյութը ջրի մեջ խիստ փափկել, 3. չափազանց հաստունանալուց փափկել, նեխել, 4. փոխ. աղջկա թարմությունը մասամբ անցնել, 5. խիստ ծերանալուց թուլանալ, մսերը կախկիսվել, **կոնծել**²³ - նր - ոգելից խմիչքով լիքը բաժակը միանգամից դատարկել, չր - ոգելից խմիչք ըմպել, հարբել, **ցնկնել**²⁴ - նր, չր - 1. ծնել, ձագ բերել (կենդանիների մասին), 2. անարգ. ծնել, ծննդաբերել, **կոնթղել** - նր - 1. ամանը կործել, չր - 2. բեռի, ծանրության տակ ճկվել և այլն:

Ի տարբերություն արդի հայերենի կրկնասեռ բայերի մյուս շերտերի՝ բարբառային մասնաշերտում որոշակի թիվ են կազմում **բայածանցավոր** բայերը, մասնավորապես -ցն- սեռային-քերականական և -ոտ-, -ատ- կերպային ածանցներով կազմված կրկնասեռ բայերը (երկրորդ բայախումբը բնորոշ է միայն արդի հայերենին):

-Ցն- ածանցը չեզոք սեռի բայերից կազմում է ներգործական, իսկ բնածայնական բայերից՝ նաև կրկնասեռ բայեր: Վերջիններս սովորա-

²⁰ Արցունքոտել - չր - Եգորի աչքերը *արցունքոտեցին* (ԱԲ): Նր - *Արցունքոտել են* իմ բախտը մենակ Ձեր արմատները, բառե՛ր ինքնիշխան (ԺՀԼԲԲ, Ա, 21):

²¹ Այլ ածանց ունեցող բառերը մեկ-երկուսն են, օրինակ՝ տարտղան-ցրված, տարտղնել՝ նր - 1. ցրել, բաժանել, չր - 2. բաժան-բաժան լինել, ցրվել և այլն: Նր - Ուր են Սասնա իմ քաջերը, ով իմ ցեղը *տարտղնեց* (ՀՇ): Չր - Եվ ավաղ, այնքան է *տարտղնած* ու ցրիվ եկած մեր ժողովուրդը... (ԺՀԼԲԲ, Դ, 476):

²² Լիկել - չր - Գերիսոնավ պայմաններում բույսը *լիկում է*: Նր - Մեկուսարանի մոտ մեր ներկայությամբ գլուխ էր գովում, թե ես *եմ լիկել* Խալաֆյանին (ԺՀԼԲԲ, Բ, 416):

²³ Կոնծել - նր-Ավարտելուց հետո միստը Սայքը սկսեց մոլեգնորն օղի *կոնծել* (ՉԴ): չր-Գնելը հաջողեցրել, *կոնծել էր* մի քիչ ու զգաց գլխապտույտ (ՎՄ):

²⁴ Նկատենք, որ բարբառային բառերը գրական հայերենին սովորաբար անցնում են հասկացության ոչ ամբողջ ծավալով, օրինակ՝ բամբակել բայի նշանակություններից արդի հայերենը ժառանգել է՝ նր - 1. հագուստի մեջ բամբակի շերտ դնել և չր - 2 բամբակի պես սպիտակել, 3. ցամաքել իմաստները, իսկ 4. մազերը սպիտակել, ծերանալ, 5. բորբոսնել, 6. լիկել իմաստները (ՀԼԲԲ, Ա, 156) գրական հայերենը չի ժառանգել:

բար ունեն իրենց սկզբնատիպ բայերը: Իմաստահավելական այս ածանցը բային տալիս է սերող բայի համեմատությամբ լրացուցիչ իմաստ, և դրանով պայմանավորված՝ նոր լրացումներ ստանալու հատկություն: Բնածայնական բայերի՝ պատճառական ածանցով կազմված կրկնասեռ հոմանիշներն ունեն նաև չեզոք սեռի հատկանիշ, օրինակ՝ **շվշվացնել**²⁵ - չբ-1. շվացնել, սուլել, նբ - 2. եղանակ սուլել, **շրմփացնել** - չբ - 1. շրմփալուծայն հանել, չբ - 2. շրմփոցով իրար խփել, **ծնգծնգացնել** - չբ - 1. ծնգծնգալ, նբ - 2. հնչեցնել:

Այս խմբում են նաև **գլգլացնել, զմբզմբացնել, քթքթացնել, տկտկացնել, վնգստացնել, վշվշացնել, շխշխկացնել, շնկշնկացնել** և բազմաթիվ այլ բայեր:

Հայերենում բազմապատկական կերպի գաղափարը ածանցումով արտահայտելը առանձնապես հատուկ է բարբառներին: Բազմապատկական բայերը սովորաբար ածանցվում են պատրաստի բայից, և, հետևաբար, այսպիսի ածանցում ունեցող բայերը գրեթե միշտ ունենում են իրենց ածանցազուրկ զուգակիցները²⁶, օրինակ՝ **շշել-շշատել** բայազույգերի տարբերությունը սոսկ ձևական չէ, այլ՝ ձևաիմաստային, գլխավորապես՝ կերպային. **շշել** նշանակում է շամփրել, սուր ցավել, իսկ **շշատել**-ը՝ նբ//չբ -1. սուր ցավ զգացվել, 2. սուր ցավ պատճառել, 3. տևականորեն ցավել և այլն:

Այսպիսով, արդիհայերենյան բառարանները հիշատակում են պարզ և բաղադրյալ սկզբնահիմքերով մի քանի տասնյակ բարբառային կրկնասեռ բայեր: Այս խմբում ևս բայերի կրկնասեռությունը պայմանավորված է կա՛մ նբ//չբ տարբեր նշանակություններով, կա՛մ գործողության հակադիր ուղղվածությունը ցույց տվող իմաստներով:

Ի տարբերություն հայերենի մյուս շերտերի՝ բարբառային կրկնասեռ բայերի մեջ բավական մեծ թիվ են կազմում բայածանցավոր (հիմնականում՝ -ցն պատճառական ածանցով կազմված) բայերը:

²⁵ Շվշվացնել - նբ - ...իսկ մյուսը շատ վատ էլ *շվշվացնում էր*՝ «Ծաղիկ ես...» (ՀՄ): Չբ -...հիմա երեսը շուտ տվեց, իբր թե *շվշվացրեց* (ԱՄ):

²⁶ **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 270:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀԲԲ - Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, 2, Ե., 1976:

ԳԲ - Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, Ե., 2000:

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 1972:

ՀԱԲ - Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, հ. Ա-Դ, Ե., 1971-1979:

ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Զ, Ե., 2001-2012:

ՄՀԲ - Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Ե., 1979, հ. 2, Ե., 1981:

ԱԲ - Ակսել Բակունց, Երկեր, Ե., 1986:

ԱՄ - Ալբերտո Մորավիա, Չոչարա, Ե., 1957:

ԱՇ - Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1929:

ԳԷ - Գևորգ Էմին, Երկու ճամփա, Ե., 1962:

ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան, Պատմվածքներ, Ե., 1950:

ՀՄ - Հրանտ Մաթևոսյան, Աշնան արև, Ե., 1977:

ՀՇ - Հովհաննես Շիրազ, Երկեր, Ե., 1984:

ՆԱ - Ներսես Աթաբեկյան, Բանաստեղծություններ, Ե., 2010:

ԶԴ - Զարլզ Դիքենս, Սուրբ ծննդյան երգը, Ե., 2003:

ՎԱ - Վախթանգ Անանյան, Անլեզու ընկերները, Ե., 1987:

ՎՄ - Վահագն Մուղնեցյան, Եկվորներ, Ե., 1989:

ՎՍ - Վազգեն Սարգսյան, Հացի փորձություն, Ե., 2010:

ДИАЛЕКТНЫЕ ГЛАГОЛЫ ДВОЙСТВЕННОГО ЗАЛОГА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЗАКЯН Г.С.

Резюме

В словарях современного армянского языка представлено несколько десятков диалектных глаголов двойственного залога, при этом как простых, так и составных. Двойственность залога диалектных глаголов обусловлена также либо различными значениями активного/нейтрального залога, либо значениями, указывающими на обратную направленность

действия. Среди глаголов двойственного залога достаточно много аффиксальных глаголов (в основном, образованных с помощью причинного суффикса – gñ).

RECIPROCAL DIALECT VERBS IN MODERN ARMENIAN

H. ZAKYAN

Abstract

Dozens of reciprocal dialect verbs are presented in dictionaries of modern Armenian: they are simple or compound due to their original base. The duality of dialect verbs also stems from either various meanings of active/neutral voice or meanings that point to reverse action. In comparison to other layers of Armenian, affixal verbs (generally, formed with the suffix –gñ) occupy a significant place among reciprocal verbs.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՅԵԶԱՐ ԿՅՈՒԻԻ «Հ.Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ» ՌԵՔՎԻԵՄԸ

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ., ՍԱՐԳՍՅԱՆ Ա.Վ.

1900 թ. ապրիլի 19-ին, իր ծննդավայրում՝ Դրիմի Թեոդոսիա քաղաքում, 83 տարեկանում հանկարծամահ եղավ աշխարհահռչակ հայազգի հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին՝ անավարտ թողնելով «Թուրքական նավի պայթյունը» ծովային մարտանկարը¹:

«Ողջ Թեոդոսիան սուգ մտավ: Թեև նկարիչն արդեն ծեր էր, սակայն նրա մահվան գույժն ասես շանթահարեց բոլորին: Անհնար էր պատկերացնել, թե Թեոդոսիան կարող է ապրել առանց Այվազովսկու: Քաղաքում կյանքը կանգ առավ. ուսումնական հաստատություններում դադարեցին պարապմունքները, փակվեցին խանութները, սակվեց շուկան: Իսկ դեպի նկարչի տուն էին շարժվում արտասովոր մարդկանց շարանները՝ ծաղիկներով և պսակներով... Անդադար հեռագրեր էին ստացվում Պետերբուրգից, Մոսկվայից, Կիևից, Օդեսայից, Թիֆլիսից, Սևաստոպոլից, Սիմֆերոպոլից, Յալթայից, Փարիզից, Վիեննայից, Բեռլինից, Հռոմից, Ֆլորենցիայից, Ամստերդամից... Իսկ նա պառկած էր պատկերասրահի հսկա դահլիճում՝ շրջապատված իր ստեղծագործություններով, և նրա դեմքը խաղաղ էր, լուսավոր...:

Ողջ Թեոդոսիան գնում էր դագաղի հետևից»²:

Համաձայն իր կտակի՝ Հ. Այվազովսկուն հուղարկավորում են Թեոդոսիայի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցու բակում:

Այվազովսկու մահից մեկ տարի անց՝ 1901 թ. ռուս կոմպոզիտոր Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովը ստեղծում է «Տաղիկ» («Песенка») դաշնամու-

¹ Տե՛ս **Աղայան Ա.**, Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի (Նկարչի ծննդյան 200-ամյակի առթիվ), Ե., 2017, էջ 35:

² **Вагнер Л., Григорович Н.** Жизнь Айвазовского, Е., 1986, с. 214.

րային պիեսը՝ նվիրված աշխարհահռչակ ծովանկարչի հիշատակին, իսկ 1902 թ. ռուս կոմպոզիտոր, երաժշտական քննադատ, ռազմական ինժեներ և գիտնական, ինժեներական ծառայության գեներալ, «Հզոր խմբակի» անդամ Յեգար Կյուին (1835-1918) գրում է «Հ.Կ. Այվազովսկու հիշատակին» («Памяти И.К. Айвазовского») ռեքվիեմը (op. 86 N 22, Des-dur)՝ ծայնի և դաշնամուրի համար, որը տպագրվում է մեկ տարի անց՝ 1903-ին Պետերբուրգում հրատարակված՝ Այվազովսկու հիշատակին նվիրված ալբոմում:

Յ. Կյուիի երաժշտական ժառանգությունն ընդգրկում է 14 օպերա, 4 մանկական օպերա, ստեղծագործություններ նվագախմբի, դաշնամուրի, ջութակի, թավջութակի համար, խմբերգեր, վոկալ անսամբլներ: Նրա ծավալուն ժառանգության արժեքավոր մասը կամերային վոկալ լիրիկան է: Ձայնի և դաշնամուրի համար Պուշկինի, Լերմոնտովի, Միցկևիչի, Նեկրասովի և այլոց խոսքերով նա գրել է ավելի քան 300 ռոմանս:

Կոմպոզիտորի վոկալ լիրիկայում կարևոր տեղ է գրավում հայկական ռոմանսների շարքը՝ հայ բանաստեղծների խոսքերով՝ «Հայի արյունը» (Ռափայել Պատկանյան), «Ինչպես հզոր մրրիկ» (Լևոն Մանվելյան), «Երազ» (Սմբատ Շահազիզ), «Անոր» (Պետրոս Դուրյան), «Մշուշ եկավ, թևը փռեց» (Ավետիք Իսահակյան), «Մարտիկի մահը» (Հովհաննես Հովհաննիսյան) և այլն, որոնք տեղ են գտել 1907-ին Պետերբուրգում հրատարակված «Արցունքներ» գեղարվեստական-երաժշտական ալմանախում: Յ.Ա. Կյուիի «Հ.Կ. Այվազովսկու հիշատակին» ռեքվիեմը ժամանակին մեծ տարածում է գտել: Հայտնի է, որ Ալեքսանդր Սպենդիարյանը այն հաճախ է երգել՝ ինքն իրեն նվագակցելով: Ահա մի հետաքրքիր պատմություն: 1903 թ. դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի մեծ դահլիճում Ռուսական երաժշտական ընկերության Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի կազմակերպած համերգի ընթացքում Ալ. Սպենդիարյանի ղեկավարությամբ տեղի է ունենում «Ղրիմի էսքիզներ» սյուիտի պետերբուրգյան պրեմիերան, որը գնահատվում է «որպես շատ հետաքրքիր և տաղանդավոր նորույթ» և մեծ հաջողություն է ունենում³:

Ի դեպ՝ Ալ. Սպենդիարյանը «Ղրիմի էսքիզների» առաջին սյուիտը (1903), որի պրեմիերան, հեղինակի ղեկավարությամբ, մեծ հաջողություն էր ունեցել Յալթայում (4.IX.1903) նվիրել էր Հ. Այվազովսկու պայծառ հիշա-

³ Ст'ю Русь, 23.XII.1903:

տակին, որը նրան անվանում էր «երիտասարդ Մոցարտ»: Խորհրդանշական է, որ հենց Այվազովսկու հիշատակին նվիրված ստեղծագործության պրեմիերայի ժամանակ տեղի ունեցավ Սպենդիարյան դիրիժորի դեբյուտը: Եվ ահա՝ Սյուիտի պետերբուրգյան պրեմիերայից հետո ռուս կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտական-հասարակական գործիչ, Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր (հետագայում՝ 1907-1928 թթ.՝ դիրեկտոր) Ալեքսանդր Կոնստանտինովիչ Գլազունովը բոլորին հրավիրում է ընթրիքի, որի մասին հետագայում ուշագրավ մանրամասներ կպատմի ռուս և խորհրդային երաժշտագետ և երաժշտական քննադատ Ալեքսանդր Վյաչեսլավովիչ Օստովսկին (1873-1957): «Սկսվեցին բաժակաճառերը: Ալեքսանդր Կոնստանտինովիչը սիրում էր բաժակաճառեր ասել: Սկզբում՝ Նիկոլայ Անդրեևիչի⁴՝ որպես ավագ կոմպոզիտորի մասին: Այնուհետև, լռություն հաստատելու խնդրանքով, Ալեքսանդր Կոնստանտինովիչը հարվածում է բաժակին, և երբ արդեն լռություն է տիրում, նա, սկսելով հեռվից (նա միշտ սկսում էր հեռվից), հանգում է այն մտքին, որ այդ օրը տեղի ունեցավ երաժշտական մկրտությունը երիտասարդ կոմպոզիտորի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի, որն առաջին անգամ հանդես եկավ իր ստեղծագործությամբ»:

Եվ հենց նույն ընթրիքի ժամանակ Ա.Վ. Գլազունովը հետաքրքրվում է Սպենդիարյանից, թե ինչու՞ է նա «Ղրիմի էսքիզները» նվիրել Հ. Այվազովսկու հիշատակին: «Ես, Ալեքսանդր Կոնստանտինովիչ, կփորձեմ բացատրել պատճառը, թեև այդ ամենը բավական բարդ է: «Ղրիմի էսքիզների» ստեղծմամբ ես ավելի շուտ երախտապարտ եմ մորս, որն իմ մեջ վաղ սեր արթնացրեց երաժշտության հանդեպ... Բայց Այվազովսկին դաստիարակեց ինձ որպես հայի և ներարկեց սեր այն ամենի հանդեպ, ինչը մերն է, հարազատ... Եթե Դուք, բարեկամներս, տեսնեիք, թե ինչպես էր հրճվում Իվան Կոնստանտինովիչը հայ հանճարի յուրաքանչյուր դրսևորման առիթով... Նա առաջինը ողջունեց Ռուսաստանում Պետրոս Ադամյանին և ջանքեր գործադրեց, որ ռուս հասարակությունը ճանաչի այդ մեծ արտիստին... Զրուցե՛ք մեր նկարիչների՝ Բաշինջադյանի, Սուրենյանցի, Մահտեսյանի հետ. նրանք պատմում են, որ Այվազովսկու նվիրական երազանքն էր բոլոր հայ նկարիչներին միավորելը... Եվ երբ մենք նվագում էինք, նա մշտապես իմ ուշադրությունը հրավիրում էր հայկական մոտիվների վրա... Հենց

⁴ Խոսքը Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի մասին է:

այդ պատճառով էլ ես իմ Սյուիտը նվիրեցի Իվան Կոնստանտինովիչի հիշատակին»:

– Այվագովսկու հզոր տաղանդը, նրա կտավները քանիցս աշխույժ վեճեր են առաջացրել մեր՝ «Հզոր խմբակի» անդամների միջև, – հավելեց Ռիմսկի-Կորսակովը: Մենք Յեզարի հետ արձագանքեցինք նրա մահվանը. ես գրեցի «Տաղիկը», իսկ Կյուին՝ «Ռեքվիեմը»: Նվագե՛ք, խնդրեմ, այն, Ալեքսանդր Աֆանասևիչ...

Սպենդիարյանը մոտենում է ռոյալին:

Սենյակում, որտեղ մինչ այդ աղմուկով քեֆ էին անում, հնչեց հանդիսավոր-վշտալի մեղեդին:

Սպենդիարյանը երգեց՝

Кисть вдохновенная упала
Из рук великого творца.
Могучий царь морской стихии
И моря пламенный поэт
Угас, и волны голубые
Поют прощальный свой привет....

Սպենդիարյանին աստիճանաբար ձայնակցեցին մյուսները: Հանդիսավորությամբ հնչեց մեծ նկարչին ձոնված ռեքվիեմը⁵.

Զարմանալիորեն՝ «Հ.Կ. Այվագովսկու հիշատակին» ռեքվիեմի որևէ հրատարակության մեջ նշված չէ խոսքերի հեղինակի անունը: Այդ մասին որևէ տեղ, որևէ տեղեկություն չկա ո՛չ ռուս և ո՛չ էլ հայ երաժշտագիտության մեջ:

Եվ բոլորովին վերջերս բացահայտվեց, որ այդ տեքստի հեղինակը երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ, հրապարակախոս, հետազայում՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Վասիլի Դավիդովիչ Կորզանովն է (Բարսեղ Ղորղանյան. 1865, Թիֆլիս - 1934, Երևան):

Շոշափելի է Բ. Ղորղանյանի վաստակը երաժշտագիտության բնագավառում: Հայտնի է, որ նա առաջինն է նկատել երիտասարդ Ֆ. Շալյապինի մեծ տաղանդը: Նա ճանաչվել է որպես խոշորագույն բեթհովենա-

⁵ Вагнер Л., Григорович Н., նշվ. աշխ., էջ 209:

գետ՝ տասնյակ տարիներ հավաքել, ուսումնասիրել և համակարգել է Բեթհովենի կյանքին վերաբերող փաստական հարուստ նյութեր, դեռևս 1888-ին Թիֆլիսում կոմպոզիտորի մասին հրատարակել գրքույկ, նրա նամականին (1300 նամակ, երկու գրքով՝ 1900 և 1904), մեծածավալ մենագրություն՝ «Կենսագրական էտյուդ» (1909): Նա գրել է ծավալուն աշխատություն Մոցարտի մասին (1900), ակնարկ՝ նվիրված Վերդիին (1897), առաջինն է լուսաբանել «Պուշկինը երաժշտության մեջ» թեման, ուսումնասիրել հայ և վրացական երաժշտությունը, հավաքած նյութերն ընդհանրացրել «Кавказская музыка» ժողովածուում (1901), որտեղ հեղինակի թարգմանությամբ լույս են տեսել Կոմիտասի «Հայկական եկեղեցական երաժշտություն» և «Հայ գեղջուկ պարերգեր» աշխատությունները: 1900-ին Թիֆլիսում հիմնել է Անդրկովկասում առաջին ռուսերեն «Кавказский вестник» գիտական-գեղարվեստական ամսագիրը (հրատարակել և խմբագրել է մինչև 1902 թ.), 1900-1904-ին եղել Միջազգային երաժշտական ընկերության կովկասյան բաժանմունքի տնօրենը: 1904-ին Կովկասի երաժշտության մասին ելույթներ է ունեցել Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինյան սեկցիայի նիստերին, 1909-ին՝ Վիեննայի կոնգրեսում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո գործել է Երևանում՝ 1925-1930-ին եղել է Հանրային գրադարանի դիրեկտորի տեղակալ, Պետհրատի երաժշտական սեկցիայի նախագահ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր՝ խորհրդատու: Արևմտաեվրոպական և ռուս երաժշտության խոշորագույն ներկայացուցիչներին նվիրված աշխատությունների հեղինակ է:

Հ. Այվազովսկու մահից ընդամենը օրեր անց Թիֆլիսում հրատարակվող «Кавказский вестник» ամսագրի 1900 թ. մայիսյան համարում տպագրվում է Բարսեղ Ղորղանյանի «Հովհաննես Կոնստանտինի Այվազովսկի» ծավալուն հոդվածը⁶:

⁶ Տե՛ս **В.Д.К.**, Иван Константинович Айвазовский (Кавказский вестник, Тифлис, 1900, № 5, май, с. 124-136): Արևմտավել է՝ **Корганов В.Д.** Иван Константинович Айвазовский (Статьи, воспоминания, путевые заметки, библиография, Е., 1968, с. 350-365):

2



Памяти

Н. К. АЙВАЗОВСКАГО.

Музыка Ц. КЮП, 1902 г.

Andantino. *mf*

Piano. *mf* *p*

Кисть вдохно -

венна-я у - па - ла пия, рукъ во - ли-ка-го твор-ца;

мо-гу-лѣй царь морской ети - xi - и и мо - ря пламенный по -

Յ. Կյուփի «Հ.Կ. Այվազովսկու հիշատակին» ռեքվիեմի նոտագրության 1-ին էջը

зт̑ у - гас̑ и вол - ны го - лу -

бы - я по - ют̑ про - щаль - ный

свой при - вѣт̑.

mf *f* *m.g.* *m.g.* *mf*

G. K.

Այվազովսկիագիտության մեջ Ղորղանյանի սույն՝ ոչ այնքան լայն շրջանառություն գտած հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ այստեղ բերված կենսագրական տվյալները վերցված են Այվազովսկու տիկնոջ՝ Աննա Բուռնազյանի քրոջ ամուսնու, ծագումով հույն գրող Սպիրիդոն Ալեքսանդրովիչ Կաչիոնիի (1858-1931) հետ մեծ նկարչի զրույցը ներկայացնող հետաքրքրական հոդվածից, որտեղ նկարիչը ձևակերպում է իր գեղագիտական հայացքներն ու սկզբունքները: Չնայած տարիքային մեծ տարբերությանը, նկարչի և Ա. Կաչիոնիի միջև առկա էին ոչ միայն բարեկամական, այլև ընկերական հարաբերություններ: Ի դեպ՝ իր նամակներից մեկում նկարիչը գրում է՝ «мой родственник г. Качиени, весьма даровитый и достойный молодой человек»⁷.

Ղորղանյանի հոդվածն իր ծավալով և նյութերի ընդգրկմամբ դուրս է գալիս մահախոսականի շրջանակից. ավելի շուտ, ականավոր նկարչի կյանքի ու գործունեության ակնարկ է և որոշ ստեղծագործությունների վերլուծություն:

Ղորղանյանի հոդվածի բնաբանը չափածո էր՝ այն նույն տողերը, որ հնչել էին վերոնշյալ ընթերցի ժամանակ՝

Այսպիսով, Յեզար Կյուիի «Հ. Կ. Այվազովսկու հիշատակին» ռեքվիեմի տեքստի հեղինակը հենց Բ. Ղորղանյանն է. փաստ, որն առ այսօր անհայտ է եղել հայ և ռուս երաժշտագիտության մեջ, և առաջին անգամ մենք այն ներկայացնում ենք գիտական հանրությանը:

ИСТОРИЯ ОДНОГО ПРОИЗВЕДЕНИЯ: РЕКВИЕМ ЦЕЗАРЯ АНТОНОВИЧА КЮИ “ПАМЯТИ И.К. АЙВАЗОВСКОГО”

АСАТРЯН А.Г., САРГСЯН А.В.

Резюме

19-го апреля 1900 года в Феодосии скончался великий маринист Ованнес Айвазовский. Через год после смерти художника, в 1901 году, русский композитор Н.А. Римский-Корсаков написал фортепианную пьесу “Песенка”, посвященную памяти Айвазовского, а в 1902 году русский ком-

⁷ Айвазовский. Документы и материалы, Е., 1967, с. 180.

позитор, музыкальный критик, член “Могучей кучки” Цезарь Кюи (1835-1918) сочинил реквием “Памяти И.К. Айвазовского” (op. 86 N 22, Des-dur) для голоса и фортепиано. Ценная часть довольно обширного творческого наследия Ц.А. Кюи – камерная лирика. Свыше 300 романсов для голоса и фортепиано сочинил композитор на слова Пушкина, Лермонтова, Мицкевича, Некрасова и др. Известно, что в вокальной лирике Ц. Кюи важное место занимает цикл армянских романсов, написанных на слова Рафаэла Патканяна, Смбата Шахазиза, Петроса Дуряна, Аветика Исаакяна, Ованнесса Ованнисяна и др.

И, как это ни странно, ни в армянском, ни в русском музыкознании до сих пор неизвестно имя автора стихотворного текста реквиема Ц.А. Кюи “Памяти И.К. Айвазовского”.

Мы выяснили, что автором текста реквиема “Памяти И.К. Айвазовского” является музыковед, музыкально-общественный деятель Василий Давыдович Корганов (Барсег Корганян). Дело в том, что через несколько дней после кончины И.К. Айвазовского, в майском номере журнала “Кавказский вестник” (Тифлис) была опубликована статья В.Д. Корганова “Иван Константинович Айвазовский”, эпиграф которой и послужил текстом для реквиема Ц. Кюи.

THE STORY OF ONE ARTWORK: THE REQUIEM BY CÉSAR CUI “TO THE MEMORY OF I.K. AIVAZOVSKY”

A. ASATRYAN, A. SARGSYAN

Abstract

On 19 April 1900 in Feodosia the great marine painter Hovhannes Aivazovsky passed away. A year after the painter's death in 1901 the Russian composer N.A. Rimsky-Korsakov wrote a piano piece “A ditty”, dedicated to the memory of Aivazovsky, and in 1902 the Russian composer, musical critic, member of “The Mighty Group” César Cui (1835-1918) composed a requiem “To the memory of I.K. Aivazovsky” (op. 86 N 22, Des-dur) for voice and piano. A valuable part of César Cui's quite extensive creative heritage is chamber music. The composer composed more than 300 romance songs for voice and

piano on the words of Pushkin, Lermontov, Mickiewicz, Nekrasov and others. It is known that in C. Cui's vocal music a series of Armenian romance songs, on the words of Raphael Patkanyan, Smbat Shahaziz, Petros Duryan, Avetik Isahakyan, Hovhannes Hovhannisyan and others plays an important role.

Oddly enough that neither in Armenian, nor in Russian musicology till nowadays the name of the author of C. Cui's requiem verse "To the memory of Aivazovsky" is not known.

We found out that the author of the requiem "To the memory of Aivazovsky" was musicologist and public figure Vasily Korganov (Barsegh Korganyan). Days after I. Aivazovsky's death, in May Issue of the "Caucasian bulletin" (Tiflis) V. Korganov's article "Ivan Konstantinovich Aivazovsky" was published, the epigraph of which served as a text for C. Cui's requiem.

КОМИТАСОВСКИЙ ЦИКЛ ГРИГОРА ХАНДЖЯНА “НЕСМОЛКАЕМАЯ КОЛОКОЛЬНЯ”

ГАМАГЕЛЯН В.М.

В творчестве выдающегося армянского художника Григора Ханджяна среди многих известных произведений, особенно графических, есть одно, которое силой художественного претворения (воплощения), своей значимостью и всеобщим признанием возводит его в ранг непреходящих ценностей. Это комитасовский цикл художника – иллюстрации к поэме Паруйра Севака “Несмолкаемая колокольня”, выполненные в середине 60-ых годов и изданные в виде книги в 1964-ом году. История издания книги ценой преодоления больших трудностей общеизвестна. Известен также факт огромного патриотического подъема, вызванного этим великим произведением искусства. Сильнейший резонанс был вызван не только поэтическим пафосом и патриотическим содержанием поэмы, но и равнозначными по художественности образными воплощениями Ханджяна.

В современной армянской литературе поэма Севака явилась первой, воплотившей в поэтической, образной форме обширнейший исторический материал. При этом освещение событий исторического прошлого в поэме произведено не с помощью описания, а путем проникновения в причинные, порождающие их связи, путем раскрытия исторической судьбы народа через его внутреннее состояние, его мироощущение. Выразителем такого мироощущения в поэме явился ее главный герой – Комитас, композитор, исполнитель, фольклорист.

Комитас, очистив от всего наносного национальную музыку, песни, собрав по крупицам из недр народного творчества музыкальные перлы, разработал их и преподнес своему же народу, явив тем самым самостоятельное, самобытное творческое лицо нации. Однако Комитас взволновал писателя не только как гениальная личность, но и как чело-

век незаурядной судьбы. Севак отмечает: “Редко бывает, когда биография поэта или артиста столь же замечательна, как и его творчество, чтобы биография эта стала бы отражением данной эпохи и судьбы народа. Жизнь Комитаса является таким исключением...”¹.

Основная идея и тема поэмы – тема общности героя с народом и их бессмертия – раскрывается с помощью варьирования ее во многих подтемах, которые на протяжении всей поэмы перемежаются, звучат параллельно или доминируют друг над другом. В этом сплетении тем и их развитии, стимулируемом борьбой антагонистических идей, рождаются сюжет и фабула поэмы. В процессе развития раскрываются: тема сиротства, страдания, боли; жизнеутверждающая тема природной одаренности; тема разрушительной стихии, варварства и, в противовес этому – сил народной мудрости, жизнелюбия, созидания; тема душевной драмы героя; тема народа во всей широте и глубине охвата – народного крестьянского быта, психологии характера; тема природы, сопутствующей всем событиям человеческой жизни; тема столкновения личности с темными силами общества; тема уничтожения, истребления; тема противостояния, героизма, возрождения и т.д. Многообразными вариантами и оттенками эти темы переходят из главы в главу, как бы из перезвона в перезвон, неся в себе внутренний конфликт – идею борьбы разрушающих и жизнеутверждающих сил. Темные силы отбрасывают светлые, свет одолевает тьму, в схватке их рождается мощный раскат звуков – перезвон колоколов, образов поэмы. Замечательно то, что идея противоборства двух начал – добра и зла – воплощается в поэме картинами жизненно убедительными, конкретными и типичными. Ритмика и мелодия стиха меняются в главах соответственно развивающейся теме, стиха, симфонически многозвучного, часто основанного на разработке какой-либо народной песни. Стих звучит величаво, торжественно в “Благовестном звоне”; скорбно патетически – в “Звоне сирот-

¹ Аристакесян А. Паруйр Севак, Е., 1984, с. 152.

ства”, ликующе – в “Звоне ликования”, раскатисто-гневно – в “Звоне пробуждения”.

Тема героя вводится с первых строк поэмы и сразу же ей вторит тема Родины, народа, общности судеб. Внутренний конструктивный принцип построения поэмы – сведение противоречивых начал – действителен и на уровне организации образа главного героя. В сложном, но цельном образе Комитаса тема борьбы раскрывается через внутренний душевный конфликт героя и через столкновение его с жизненными обстоятельствами. Человек незаурядной, тонкой, отзывчивой души, на протяжении всей жизни переносит удары и терпит превратности судьбы. Сначала сиротство, затем стены церковной кельи обрекают его на одиночество и подготавливают душевную драму героя. Обладая клочущими жизненными силами, он, будучи неестественно отлученным от мирской жизни, сохраняет беспрекословную верность долгу – служению церкви, богу. Одержимый идеей просвещения, Комитас вынужден беспрестанно вести борьбу с силами церковной реакции. Достигший, наконец, признания и славы, в зените творческих сил, он вынужден, испытав страшное горе – гибель своего народа, отойти от активной жизни.

Образ героя поэмы от начала до конца выдержан на высокой ноте драматического напряжения, граничащего с трагизмом. Личность композитора в поэме представлена теми качествами, которые характеризуют его как собирательный образ народного героя – носителя гения народа. По мнению поэта, воплощение такого значительного образа в одной картине невозможно. Необходим цикл, ряд картин, исчерпывающе характеризующих его. В поэме цикл создается на протяжении 46-ти частей, поэтапно раскрывающих душевное состояние героя, его психологию. Народные образы, картины крестьянской жизни соединяются с образом героя с помощью авторского слова, косвенно, незаметно объясняющего явления, обобщающего их, извлекающего их сущность. Подобным образом в поэме создается психологический портрет эпохи, на этом фоне выступает яркий, выпуклый образ гения, многогранно охарактеризованный на всех этапах жизни.

Художник Г. Ханджян, иллюстрировавший поэму Севака, оттолкнулся именно от этого многопластового и обобщенного прочтения образа Комитаса. Поставив во главу угла образ героя, художник от него стал развивать основные идейные, тематические и сюжетные линии. Внешне художник во многом отошел от подобия поэме, широкий энциклопедизм которой он сжал в содержательных обрисовках психологии героя, воспринимающего мир посредством мелодии, звуков.

Изобразительные образы связаны с поэтическими внутренними нитями, тянущимися из глубин обоих творений. Понимание образа Комитаса, выношенное художником, во многом самобытно, самостоятельно, однако в основных чертах созвучно севаковскому воплощению.

В ханджяновской интерпретации образ Комитаса стал как бы сплавом, синтезом поэтического с уже существующим в творческом воображении художника образом народного композитора. Руководствуясь севаковскими принципами сложения образа, Ханджян посредством девяти картин, запечатлевающих основные вехи жизни и творчества композитора, создал цельный, многогранно обрисованный изобразительный образ. Серию рисунков из девяти сцен художник построил в форме цикла песен. Этот принцип соответствует поэтической концепции, где лейтмотивом становятся народные песни: “Весна, а выпал снег кругом...”, “Эх, отрок бесприютный...”, “Журавль”, “Сона-яр” и др. Отголоском им звучат песни в рисунках: “Первая отроческая песня”, “Лирическая песнь”, “Песнь любви”, “Трудовая песнь”, “Свадебная песнь”, “Хормейстер”, “Песнь на чужбине (“Журавушка”)” и др. Песни эти – сказания, уже по задуманной форме своей являют собой глубоко поэтичные рисунки, воплощающие одухотворенный образ композитора в состоянии творческого напряжения. В девяти ипостасях предстает перед зрителем великий Комитас, олицетворяющий собой дух красоты, величия и трагизма. Поэтические строки Севака могут стать своеобразным эпиграфом к рисункам Ханджяна: “Где слышится песня – там всюду теперь Комитас...”. Образ композитора почти во всех рисунках связан с окружающей его средой и в основном крестьянской. И связь эта осуществляется через элемент песни. Всюду, где бы ни ока-

зался композитор, он напряженно вслушивается в песню – непосредственное выражение души армянского крестьянина. Однако композиционно в рисунках фигура Комитаса отделена от людского окружения. Он становится безмолвным и незамеченным свидетелем тяжелого крестьянского труда, удалого крестьянского веселья, игр, хороводов. Сохраняемая в рисунках “пауза” между композитором и народом продиктована поэтическим приемом введения образа в среду: на протяжении всей поэмы герой не произносит ни единого слова, и ощущаем мы его присутствие в сценах народной жизни лишь в возгласах и риторических обращениях поэта. Использованный в рисунках композиционный прием (объединения частей рисунка посредством белой полосы) позволил художнику остаться верным духу поэмы и воплотить те поэтические нюансы, которые трудно переводимы на язык изобразительный. Белая цезура проходит по середине разворотов и делит композицию на две части. Таким образом условно выделяется фигура композитора из среды и акцентируется его образ. При этом сохраняется естественное продолжение рисунка с одной части его в другую слева направо. Согласно ханджяновскому принципу книжной иллюстрации, композиция разворачивается почти по плоскости листа, изредка развивая более глубокие планы. Фигура композитора отделена от фона не иллюзорно-пространственно, а условно-ритмическим приемом. Художник добивается выражения идеи одновременного существования противоборствующих начал, внутренней борьбы героя. Всей душой герой стремится к людям, он и есть частица своего народа, но внутреннее напряжение сковывает силы, не позволяя ему соединиться с ним. Ханджяновский Комитас безмерно, почти трагически одинок не только по причине внешних обстоятельств (духовного сана), но и в большей мере в силу исключительности своей натуры. Белая пауза выделяет мир души композитора и одновременно притягивает его к миру реальности, к миру звуков и ощущений. (В станковом варианте этих же рисунков правая и левая половины выполнены отдельными листами. В книге они связываются белой полосой). Оригинальный композиционный прием организует ритмику рисунка и вместе с живописной средой порождает музыкаль-

ные ассоциации. Песня, создающая психологическое натяжение между композитором и окружением, связывает его с людьми, эмоциональной средой. Принцип симфонизма и песенного многоголосия стиха перерабатываются художником в рисунке в виде сложных чувственно-эмоциональных соотношений, в образе всеобъемлющей мелодии. Ритмы поэзии синтезируются в рисунке и определяют большое внутреннее напряжение композиции. Они тесно связаны друг с другом благодаря существующему в них психологическому заряду, который быть может в большей степени способствует их единению, нежели сюжетно-повествовательное их сцепление. Лирический дух поэзии преображается в эмоциональный накал рисунка, и этим устанавливается равновесие, равноценные соотношения между поэтическим оригиналом и изобразительным перевоплощением.

В поэме “Несмолкаемая колокольня” широко разворачивается картина крестьянской жизни, быта, обычаев эпохи рубежа XIX-XX веков, картина природы Армении; даются метафорические образные зарисовки времен года. Сжато, но очень метко обрисован образ цивилизованной Европы, отражены события начала века, в том числе и кровавые события в Западной Армении. Художник, осмысливший поэму как выражение величайшей трагедии человеческой души, как гимн создающим, светлым началам жизни, сконцентрировал многообразие тем и проблем в девяти поэтически насыщенных рисунках. Мир реальности в них отражает душевную драму героя – это мир, воспринятый глазами Комитаса. В рисунках запечатлены события и состояния действительности: земледельческие работы крестьян, отдых и веселье, концертные зрительные залы, ландшафт Араратской долины и др. Однако все эти реалии внешнего мира выступают в связи с героем. Обрисовки народных сцен не являются самоцелью, поэтому они даются в сжатых, общих чертах.


Как уже было отмечено, движущей, стержневой силой всех композиций становится идея диалектического единения противоборствующих начал. Однако, если идея борьбы в поэме стимулирует развитие тем и сюжета явственно, открыто, если противопоставление зла и

добра – резкое, полярное, то в рисунке – противоборство подспудное, психологически переживаемое. Композиции строятся не на противопоставлении, а на сопоставлении, качестве, усиливающем внутреннюю динамику рисунка. Она проявляется во всем комплексе изображения, начиная от композиционного приема соединения двух частей, кончая цвето-тоновыми решениями.

В возвышенном, богоподобном облики предстает молодой Комитас в лирической картине “Мечта”. Черты его отмечены печатью страдания и вдохновения. В крайнем напряжении духовных сил прислонился герой к дереву, слившись с природой, с музыкой. Томлением его объят весь окружающий мир, подернутый дымкой, подобный далекому видению: прекрасные, эфемерные феи – крестьянки, осенний ландшафт, оголенные деревья в причудливых изломах. Это сплетение воображения и реальности вторит напевам души Комитаса. Картина бесконечно поэтична, мелодична и одновременно драматична. Фигура композитора обособлена от окружения, влекущего его и уплывающего от него. Мягкая воздушная среда, окутывающая все изображение, роднит, сближает оба мира, растворяя их в мареве мечты. Размытые кистью полутона серого ассоциируются с нюансами легкого живописного валера. Серый тон, местами сгущающийся до черного и разрежающийся до белого, вылепляет пластические формы, затем опять растворяется в живописной атмосфере рисунка. Картина напоена поэзией и светлой мелодией. Особой музыкальностью и напряжением чувств пронизана следующая изобразительная плоскость, на которой разворачивается сцена концертного зала, где потрясенная публика внемлет звукам песен Комитаса. От хормейстера к слушающим растекается песня, единящая и очищающая души. Комитас растворился в звуках божественного пения и как бы воспарил душой в минуту трагически острого чувствования прекрасного. Образ маэстро в



1. Мечта (1963)



2. Помрачение (1963)



3. Трудовая песнь (1963)



4. Резня (1963)

трактровке Ханджяна, будучи реальным и узнаваемым в чертах, дематериализован, возведен в метафизические реалии, в которых и существует духовность. Подобно демиургу таинственным мановением рук он вбирает в ладони весь мир и возрождает его в перевоплощении искусства.

“Одухотворенная, обожествленная плоть” – таков Комитас в определении поэта, таков он в рисунке Ханджяна “Хормейстер”. В композиции изображение публики в европейском концертном зале намечено общими чертами, однако достаточно выразительными для передачи эмоциональной атмосферы. Образ же композитора, выполненный неуловимыми вибрациями света и тени, фрагментом рук и лица становится организующим нервом произведения и мощным кульминационным аккордом его созвучий. Движущиеся тени в полумраке зала, равнозначные появляющемуся и исчезающему строю голосов, своей тончайшей нюансировкой воссоздают настроение и состояние переполненности всех и вся возвышенным переживанием музыки, передающимся от маэстро к слушателю.

Драматическая тональность сгущается и нарастает в “Трудовой песне”, в которой страдания и боль души героя отражают жизненные невзгоды и злосчастную судьбу народа. Проходит Комитас по вспаханым полям, сосредоточенный и самоуглубленный. Он напряженно “прислушивается” к трудовым будням крестьян, полный внутреннего желания пригреть, приютить осиротевший, обездоленный свой народ. В “Трудовой песне” образ композитора обретает новое осмысление. Перед нами мыслитель, познающий и утверждающий себя в порождающих истоках и корнях и не ведающий счастья вне единения с родиной, с народом. Органическое внутреннее единство героя с землей выражено не только через изображенную среду, но, в особенности, посредством композиционных ритмов, периодичной повторяемости движений и пауз. Фигура Комитаса, в сущности, отделена от трехфигурной группы крестьян белой вертикальной полосой. Каждая из частей рисунка композиционно автономна. Однако идейную и эмоциональную полноценность они обретают в совместном, едином восприятии. Дей-

ствие развивается по диагональной направленности с левого глубинного края в правый передний, и находится оно в состоянии продолжения, продлевания, нескончаемого разворачивания из глубины (глубина не иллюзорная, а психологическая) в невидимые пространства за пределами аванплана. Движение начинается с приближающейся фигуры крестьянина, через определенную паузу передается центральной группе, сравнительно статичной, и более расширенной паузой продолжается в движущейся фигуре композитора по направлению к зрителю. Обе крайние, слева и справа, фигуры композиции урезаны, фрагментированы, благодаря чему, с одной стороны, частично воссозданы обостренное чувство момента, с другой – восприятие вечного продолжения жизни, земли, народа. Ритмическая повторяемость движений и пауз от крестьян к композитору психологически усугубляет ощущение цикличности, возвращения к истокам, к почве, к корням. Рожденные из недр природы, крестьяне сообщают свою силу, энергию и мудрость восприимчику – сыну, он же развивает путь к природе, к земле.

Обрисовка пейзажа, обработка форм – обобщенные, без навязчивых подробностей. Все служит выражению основной идеи – нерасторжимой связи Комитаса с землей. Холмистые долины являют обобщенный образ родной земли; могучие крестьянские образы – типизированные образы тружеников земли. А образ пожилой крестьянки обобщает в себе идею Матери-земли, Матери-родины, продолжая тему, начатую с предыдущих иллюстраций к “Ранам Армении”.

Образ композитора в рисунке – насыщенное, яркое воплощение образа гения, порожденного и вскормленного землей и возвеличивающего народ до высот самосознания. Этим своим качеством “Трудовая песнь» наиболее явственно, открыто выражает основную тему поэмы.

Фигуры моделированы живописными полутоновыми переходами. Силуэты замкнуты, но не разобщены, благодаря использованию градаций серой тональности во всем изображении. Композиционно рисунок выполнен по классическим принципам уравновешенного распределения сил по поверхности листа, но экспрессией мазка, фрагментарностью, двусторчатостью построения он остро современен. Извечная

нравственно-философская тема получает своеобразное воплощение, которое, возможно, очень сложными опосредованиями уходит в традиции европейской средневековой иконописи. Отголоски традиций сказываются не только во внешнем оформлении – построении частей рисунка подобно закрывающейся двустворчатой иконе (по обратным сторонам листов сомкнутого разворота – белые, неисписанные страницы, выдерживающие единство организма рисунка), но и в сакральном характере самой воплощенной идеи – предначертанности, предрешенности судьбы героя, его ниспосланности гибнущему народу. Она обнаруживается прежде всего в драматической насыщенности изображенного.

Драматизм, присущий всем листам иллюстративного цикла, развивается по нарастающей и с неизбежной трагичностью разрешается в “Резне”. Ужасающие сцены насилия и убийства ввергают душу композитора в бездну нечеловеческих страданий, граничащих с помрачением, с провалом в небытие.

В гулко звенящем безмолвии окровавленной пустыни пронзительным криком раздается вопль души человеческой о поруганном и сокрушенном мире. Среди поваленных, изрубленных тел неверной поступью движется Комитас, с опущенными веками, босой, в растрепанной сутане. Ноги уводят Комитаса дальше, спасая от наваждения, тело его в сопротивлении тянет назад. Он весь отпрянул от кошмарных картин, не в силах до конца пережить эту боль.

Необычайные ракурсы расprostертых тел и фигуры героя, разнонаправленное движение в нем до предела насыщают экспрессию рисунка. Рисунок выполнен ломкими, стремительными линиями, сообщающими силуэту нервную прерывистость, угловатость. Белая полоса в середине страницы пересекает изображение поваленных тел, разрезая их и тем усугубляя впечатление содеянного зла. Созданию атмосферы крайнего трагического накала способствует цветовое решение, которое, быть может, впервые за весь цикл иллюстраций построено на сильном столкновении черного и белого (однако в целом сдерживаемом пепельно-серым тоном). Соединение контрастных силуэтов с пла-

стически моделированными формами в композиции сообщает ее восприятию одновременное ощущение реальности и нереальности происходящего. Неглубокое, почти распластанное по поверхности листа пространство кажется воображаемой средой, в то же время пластические объемы и сокращения в перспективе подтверждают печальную реальность факта. Свершилось невиданное злодеяние: на глазах у человека растерзали весь его народ, его же живым приковали к кресту вечных мук и страданий.

Изображенная в рисунке трагедия воспринимается общечеловеческим бедствием, крушением нравственных и гуманных основ человеческого бытия.

И помрачился ум Гения, не выдержав земного ада. Коленопреклоненно поник он в углу комнаты, потрясенный, загнанный, безысходно одинокий. В последнем воплощении – в “Помрачении” – образ Комитаса доведен до апогея скорбного звучания. В воцарившейся тьме светлым излучением озарены голова и рука композитора, наклон и движение которых крайне остро выражают психологическое состояние его души. Арсенал выразительных средств в рисунке предельно ограниченный, детали – строго продуманы, доведены до минимума. Внутренняя атмосфера рисунка создается необычным освещением, экспрессией теней, четкостью силуэтов, крайне насыщенным, почти символическим осмыслением деталей.

Выросшее на стене силуэтное отражение согбенной фигуры Комитаса черным крылом касается лица его, зловеще возвышаясь над ним. Этот безликий двойник помраченной души героя властно расплывается по комнате, раздваивается, размножается в демонической переключке теней, наводя леденящую тоску. Отброшены некогда милые его душе флейта, изорваны в пылу безумия ноты. Смолкла музыка. Все погрузилось во мрак... Однако бумаги его освещены своим внутренним светом, явленная миру музыка его уже не смолкнет вовек. Бессмертна и душа композитора, которой не коснулась разрушительная сила тления. Напряженным внутренним борением осмысливается облик героя в противопоставлении с черным хаосом начертанного тенью безумия. Образ

Комитаса, благородный, светлый, утверждается в непримиримом противоборстве с мраком и безумием, вызывая к состраданию и постижению всей глубины трагизма пережитой судьбы. Порожденное рисунком крайнее напряжение чувств через сопереживание разрешается душевным просветлением, сообщая изображению воистину рембрандтовскую катарсическую силу воздействия на зрителя.

Последняя страничная иллюстрация – “Помрачение” – не создает чувства поверженности и обреченности героя, перерастает своим значением сюжетный мотив изображения. Своим внутренним, подспудным содержанием эта композиция воплощает не только строки трагической биографии композитора, но и поэтический дух всей последующей главы, воспевающей возрожденные силы народа и его бессмертного героя. Так, поэтические строфы концентрируются в визуальном воплощении, изобразительные образы в свою очередь рождают поэтические, словесные ассоциации. И этим чередованием перевоплощений создается впечатление органического единства словесных и изобразительных образов. Последние непринужденно вплетаются в общую симфоническую канву поэмы, обогащая гармонию ее звучания. Поэтому взаимные ассоциации образов и чувств возникают столь естественно непринужденно, без напряжения памяти и воображения.

Перерожденные в графических изображениях дух и пафос поэмы проникают во все уровни исполнения – композиционно-конструктивный, идейный, эмоционально-чувственный. Подобной органичностью характеризуется вся система книги, завершенная и цельная.

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻ «ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՇԱՐՔԸ

ԳԱՄԱՂԵԼՅԱՆ Վ.Մ.

Ամփոփում

1964 թվականը հայ իրականության մեջ նշանակալի դարձավ կարևոր մի իրադարձությամբ. լույս ընծայվեց Պարոյր Սևակի «Անլուելի զանգակա-

տուն» պոեմը: Այն ձևավորել և նկարագարող էր հայ մեծանուն նկարիչ Գրիգոր Խանջյանը: Թե՛ պոեմը և թե՛ պատկերաշարը, ամփոփված գրքի ընդհանրության մեջ, այնպիսի գեղարվեստական արժեք էին ներկայացնում, որ ականայից խթան դարձան 60-ականների կեսերին արդեն իսկ հասունացող ազգային զարթոնքին: Պոեմի հերոսը՝ հայ ազգի մեծ նվիրյալ Կոմիտասը, իր ժողովրդի հետ սերտորեն կապված լինելով, կրեց նաև վերջինիս ողբերգական ճակատագիրը: Նկարաշարում հերոսի կերպարը դրվագ առ դրվագ ձեռք է բերել այնպիսի ճշմարտացի մարմնավորում, որ ժամանակակիցները և գիտակաները այն համարել են համազոր, համահանճար պոետական տողերին:

THE KOMITAS CYCLE OF GRIGOR KHANJYAN'S “NEVER-SILENT BELL TOWER”

V. GAMAGHELYAN

Abstract

1964 became significant for the Armenian reality because of publication of Paruyr Sevak's "Never-silent bell tower", illustrated by the renowned Armenian artist Grigor Khanjian. Both the poem and the imagery of the book were of such a high artistic value, that already in the mid-sixties they unwittingly became stimulus for the maturing national awakening. Poem's hero, the great Armenian composer Komitas, being deeply connected with his nation, shared the tragic fate of it. In illustrations, scene by scene, the character of the hero received such a true embodiment, that by the contemporaries and connoisseurs they have been regarded as an equal and co-genius to the poetic stroke. The main purpose of this article is to discover the combinative edges of poetry and graphic arts and also the incarnations of Grigor Khanjyan's uniqueness.

ԳՆԴԵՎԱԶԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա.Ա.

Գնդեվազ գյուղը գտնվում է պատմական Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառում, Արփա գետի ձախակողմյան սարավանդի վրա: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ գյուղը հիմնադրել է Սյունյաց Սմբատ իշխանի կինը՝ Սոփի (Սոփիա) իշխանուհին, Գնդեվանքի շինարարության ավարտից (936 թ.) հետո և նվիրել վանքին. «Եւ երանելի տիկինն անուանէ զվանս Գնդեվանք. եւ շինէ զգիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ քարին. եւ տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն ազատ յամենայն հարկաց... Եւ այս լինէր ի թուականին Հայոց 385»¹: XIII դ. վերջի դրությամբ, երբ Օրբելյանը շարադրում էր իր աշխատությունը, գյուղը հարկատու էր Տաթևի վանքին²: Գնդեվազի՝ հետագա չորս դարերի անցուդարձը անհայտ է: Ենթադրելի է, որ այն մեծապես տուժել է շահ Աբաս I-ի կազմակերպած՝ 1604-1605 թթ. բռնագաղթից, քանզի «Եղեգաձորը» (Վայոց ձորը) մեկն էր այն գավառներից, որոնց բնակչությունը շահի հրամանով բռնի տեղափոխվեց Սպահան, Շիրազ և այլ վայրեր³: Հավանաբար, այս շրջանից են սկսում գյուղ ներթափանցել շրջակա բնակավայրերի թուրքական տարրերը (նկ. 1): XVII դ. վերջին նկատվում է նոր վերելք, ինչի վկայությունն են Գնդեվանքում իրականացված բուռն շինարարությունն ու գյուղամիջում կառուցված Ս. Աստվածա-

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Ա, Փարիզ, 1859, էջ 307: Որպես գյուղի հիմնադրման տարեթիվ՝ հիմնականում նշվում է 936 թ., երբ ըստ Օրբելյանի՝ ավարտվել է Գնդեվանքի շինարարությունը: Սակայն միակարծություն չկա այն հարցում, թե արդյո՞ք 936 թ. է ավարտվել Գնդեվանքի շինարարությունը [տե՛ս Մանուշարյան Ա., Ե՞րբ է կառուցվել Գնդեվանքը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1976, № 7, էջ 95-99)]: Բացի այդ, ըստ որոշ ուսումնասիրողների՝ գյուղը գոյություն է ունեցել նախքան Գնդեվանքի կառուցումը (տե՛ս Կարապետյան Հ., Վայոց ձորն ու նրա հուշարձանները, Մուսալեռ, 2012, էջ 107, Եղիազարյան Հ., Ազիզ-բեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Ե., 1955, էջ 97):

² Օրբելյանի ներկայացրած՝ Սյունիքի գյուղերի հարկացուցակում գյուղի դիմաց նշված է 10 միավոր հարկաչափ, ինչը վկայում է նրա բավական մեծ և հարուստ լինելու մասին (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., հ. Բ, Փարիզ, 1859, էջ 263):

³ Առաքել վարդապետ Դարիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 38:

ծին եկեղեցին: Թե XVIII դ. կամ XIX դ. սկզբի հատկապես որ դեպքերի հետևանքով է գյուղը հայաթափվել, կարող ենք միայն ենթադրություններ անել. փաստացի մինչև 1866 թ., երբ Խաչիկ, Գնիշիկ և Արենի գյուղերում հաստատված պարսկահայերի մի մասը տեղափոխվում է Գնդեվազ, գյուղն ամբողջովին թրքաբնակ էր, ինչը դեր է խաղացել թե՛ Գնդեվանքի ու գյուղամիջի Ս. Աստվածածին եկեղեցու, թե՛ մյուս պատմական հուշարձանների վիճակի վատթարացման գործում:



Նկ. 1. Ս. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից*

Գնդեվազը հայտնի է իր պատմաճարտարապետական հուշարձաններով: Բացի Գնդեվանքից, որից գյուղը ստացել է իր անվանումը⁴, Գնդեվազի հուշարձաններից են «Բերդի գլուխ» կոչվող ամրոցը (մ.թ.ա. III հազ.), նրանից ոչ հեռու գտնվող դամբարանադաշտը (մ.թ.ա. II հազ.), մոտ 24 կմ երկարության ջրանցքը (XI դ.), XIV-XV դդ. թվագրվող Ս. Խաչ մատուռը և Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցին (նկ. 1):

Ս. Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան մասում, փոքրիկ բլրի վրա, մի վայրում, որը նախկինում կոչվում էր «տաճկաց թաղ»: Ըստ արևմտյան մուտքի բարավորի արձանագրության՝ կառուցվել է 1686 թ.: Արտաքինից անշուք, իր ճարտարապետությամբ գրեթե աչքի

* Այս և մյուս լուսանկարները հեղինակին են:

⁴ Գյուղը, ինչպես և վանքը, ի սկզբանե կոչվել է Գնդեվանք: Հետագայում Գնդեվանս կամ Գնդեվաս ձևերից առաջացել է ներկայիս անվանումը:

չընկնող այս եկեղեցին, սակայն, խիստ հետաքրքրական է իր որմնանկարներով:

Եկեղեցու վերաբերյալ քիչ տեղեկություններ են պահպանվել: Մեզ հայտնի առաջին անդրադարձը Սարգիս արք. Ջալալյանցի համառոտ հիշատակությունն է «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» ուղեգրության Բ մասում. «Ի շինամիջի, ի վայելուչ տեղոջ կառուցեալ կայ սագաշէն եկեղեցի՝ ի վերայ չորից յարմարադիր սեանց ՚ի Պետրոս վարդապետէ ՚ի թուին Հայոց ոճիւ, որոյ երկարութիւնն քսան և չորս քայլ, և լայնութիւնն տասն և ինն»⁵:

Գրող, ազգագրագետ և բժիշկ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի) գրում է. «Տաճկական թաղի մեջ կանգնած է կրաշաղախ անտաշ քարից շինած եկեղեցին չորս սիւնի վերայ, հարաւային և արևմտեան դռներով: Սիւների վերայ դեռ ևս նշմարելի են սրբերի իւղաներկ մաշուած պատկերների հետքերը: Քրիստոսի խաչելութեան վերայ երևում են լատինական տառերը I. N. H. S. այն է սկզբնական տառերը «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» բառերի: Կոպիտ պատկերները նկարած են յունական ոճով և զգեստով: Եկեղեցու հիւսիսային կամարաշէն տանիքը խոնարհուած է և փայտով կարկտած: Այս ընդարձակ եկեղեցին, ինչպես ցույց է տալիս արևմտեան դրան արտաքին կողմի արձանագրութիւնը, շինել է Պետրոս վարդապետը 1135 հայոց թուականին, այսինքն 190 տարի մեզանից առաջ՝ իւր ծնողաց՝ Ովանէսի և Խանումի յիշատակի համար: Արձանագրութիւնը այս է. «Ես անարժան Պետրոս վարդապետ շինեցի Սուրբ Աստուածածնի եկեղեցիս վասն փրկութեան հոգւոյ իմոյ և ծնողացն Ովանէսին և Խանումին. թվ. ՌՃԼԵ (1135)»: Հայերի ժամասացութիւնը կատարվում է այս եկեղեցու մէջ»⁶:

Ղևոնդ Ալիշանը, ակնհայտորեն հիմնվելով Քաջբերունու հոդվածի վրա, տեղեկացնում է. «Ի Հս. գեղջն երեւին աւերակք բերդի. յարեւելակողմն՝ հին գերեզմանատուն և խաչվէմք. իսկ ի գիւղամիջին՝ ի թուրքաբնակ թաղին՝ կայ եկեղեցի մի ոչ վաղեմի, անտաշ քարամբք եւ պատկերանկար որմովք, որոյ և հիւսիսային մասն վերնայարկին քակտեալ անկեալ էր, և

⁵ **Սարգիս Սանահնեցի Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 144:

⁶ **Քաջբերունի**, Ճանապարհորդական նկատողութիւնք (Փորձ, Տփլիս, 1877-1878, հ. IV, էջ 353):

արդ փայտի կարկատեալ է. ի վերայ դրանն արձանագրեալ է հետեւեալ բանս թուականաւ 1686 ամի. Ես անարժան Պետրոս վարդապետ շինեցի Սուրբ Աստուածածնի եկեղեցիս վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ ծնողացն Ովանէսին եւ Խանումին. Թվ. ՌՃԼԵ.»⁷:

Երվանդ Լալայանը իր «Ազգագրական հանդեսի» էջերում գրում է. «Գնդեվազ գիւղը բաժանուած է երկու առանձին մասի, հայկական և թըրքական: Վերջինիս մէջ է գտնուում հայկական մի հին եկեղեցի սև քարերով շինած, որի դռան վերայի արձանագրութիւնից երևում է, որ շինել է Պետրոս վարդապետը 1686 թուին: Հայերը սրա հիւսիսային քանդուած մասը վերանորոգելով՝ նոր եկեղեցի շինելու հոգսից ազատուել են»⁸:

Սրանք են կառույցի մասին մինչխորհրդային շրջանի մեզ հայտնի հիշատակությունները: 1920-ական թթ. սկզբին, բազմաթիվ այլ եկեղեցիների ճակատագիրը կիսելով, Ս. Աստվածածին եկեղեցին վերածվում է գյուղական պահեստի (մինչև 1950-ական թթ.): Աղոթասրահը, ավագ խորանն ու արևմտյան մուտքի բարավորը պատվում են սվադի շերտով՝ իրենց տակ թողնելով որմնանկարներն ու վիմական արձանագրությունը: 1950-ական թթ. կեսերին գյուղի բնակիչների խնդրանքով պահեստը հանվում է, և եկեղեցին գոնե մասամբ, դարձյալ սկսում է ծառայել իր հոգևոր նպատակներին (այստեղ էր կատարվում հանգուցյալների հոգեհանգիստը): Հետագայում, հավանաբար գյուղի բնակչության նախաձեռնությամբ և միջոցներով, որմնանկարները բացելու նպատակով քերվում է պատերի վրայի սվադի շերտը (բացառությամբ ավագ խորանի), ինչի հետևանքով մեծ վնաս է հասցվում որմնանկարներին:

Հյուսիսային նավի ծածկի խոնարհված (մինչև 1870-ական թթ.) կենտրոնական հատվածը, որը բնակիչները «փայտով կարկատել» էին, խորհրդային շրջանում դարձյալ փլուզվում է⁹: Գյուղի բնակիչների ինքնագործ միջոցներով (այս անգամ՝ մետաղյա խողովակների և շվեյերների կիրառմամբ) այդ հատվածը դարձյալ վերականգնվում է, սակայն արդեն հետխորհրդային շրջանում՝ 2006 թ. փլուզվում է նշված հատվածին կից՝ հյու-

⁷ Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 103:

⁸ Լալայեան Ե., Շարուր-Դարալագեազի գաւառ (Ազգագրական հանդէս, գիրք XII, Թիֆլիս, 1904, էջ 255):

⁹ Այս փլուզման ժամանակաշրջանի մասին բնակիչների հաղորդած տեղեկությունները խիստ իրարամերժ են՝ 1950-ական թթ. մինչև 1970-ական թթ.:

սիսային պատի միջնամասը: Մոտ մեկ տասնամյակ անց՝ 2015 թ. փլվում է նույն հյուսիսային նավի ծածկի արևմտյան հատվածը՝ հսկայական անցք բացելով եկեղեցու տանիքին, իսկ դրանից մեկ տարի անց՝ 2016 թ., հարավային նավի ծածկի արևմտյան հատվածը: Եկեղեցին հայտնվում է խիստ անմխիթար վիճակում. վթարային հատվածները շարունակում են ընդլայնվել, իսկ բաց հատվածներից ներս թափանցած անձրևաջրերն ու խոնավությունը մեծ վնաս են հասցնում որմնանկարներին:

Ինչ վերաբերում է կառույցի ուսումնասիրությանը, ապա գիտական գրականության մեջ մինչ օրս որևէ անդրադարձ չի կատարվել ոչ կառույցի ճարտարապետությանը և ոչ էլ որմնանկարներին¹⁰:


Եկեղեցին կառուցված է թեք՝ հյուսիսից հարավ իջնող տեղանքի վրա: Արևելք-արևմուտք առանցքը բավականին մեծ շեղվածություն ունի՝ մոտ 23°: Արտաքին չափսերն են՝ 21,8/14,5/23,6/14,6մ (հմպտ.՝ հս.-արմ.-հրվ.-արլ. կողմերը): Հանդիպակաց կողմերի այս անհամապատասխանության պատճառը եկեղեցու կառուցման ժամանակ հատակագծի սխալ նշահարումն է. շինարարության ընթացքում արևմտյան և արևելյան պատերը կառուցվել են միմյանց ոչ զուգահեռ, զգալիորեն «ներս ընկած», ինչի հետևանքով հատակագիծը ստացել է սեղանի տեսք (գծ. 1): Բացի այդ, արևելյան պատը հյուսիսայինի հետ հատման կետից մոտ 3մ հեռավորության վրա շեղվում է դեպի արևմուտք՝ եկեղեցու հատակագիծը դարձնելով արդեն հնգանկյուն: Արտաքին անկանոն համամասնությունների ուղղակի հետևանք են ներքին անկանոն համամասնությունները, որոնք նկատելի են հատկապես հյուսիսային և հարավային պատերի՝ միջմույթային տարածություններում:

Թե ճարտարապետությամբ և թե շինարվեստով Ս. Աստվածածին եկեղեցին գրեթե նույնական է Սյունիքում (որը ներառում էր և Վայոց ձորը) XVII-XVIII դդ. լայն տարածում գտած եռանավ բազիլիկներին (Եղեգիսի Ս. Աստվածածին, Լորի Ս. Գևորգ, Լիճքի Ս. Կարապետ և այլն):

Որմածքը կատարվել է ավանդական «միդիս» համակարգով. արտաքին երեսները արված են քարի շարվածքով, իսկ դրանց արանքում լցված է բուտոբետոն: Օգտագործվել է սրբատաշ մոխրագույն բազալտ (անկունաքարեր, մույթեր, որմնամույթեր, կամարներ, բեմ, մուտքերի և լուսամուտների շրջանակներ), կոպտատաշ կապտավուն բազալտ (արտաքին

¹⁰ Հ. Եղիազարյանի վերոնշյալ գրքում (էջ 100) տրված է ընդամենը եկեղեցու համառոտ նկարագրությունը:

պատերի արտաքին երեսներ) և անմշակ կապտավուն բազալտ (արտաքին պատերի ներքին երեսներ, թաղերի ծածկեր):



ՊՃ. 1. Ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծն ու երկայնական կտրվածքը (չափագրությունը մերն է)

Ճարտարապետական հորինվածքով եկեղեցին սովորական եռանավ բազիլիկ կառույց է՝ երկթեք տանիքով, աղոթասրահը երեք նավերի բաժանող երկու զույգ «T»-աձև մույթերով և ավագ խորանին կից երկու ավանդատներով: Միջին՝ գլխավոր նավի լայնության հարաբերակցությունը կողայինների նկատմամբ մոտավորապես 2:1 է (4,95:2,45մ), բարձրության հարաբերակցությունը՝ մոտավորապես 1,3:1 (6,30:4,80մ): Չորս մույթերի միջև եղած հեռավորությունը գրեթե հավասար է (ընդլայնական հատվածը ընդամենը 10սմ-ով է պակաս երկայնականից), ինչի հետևանքով, Մալկի (Մեղրիի մոտ) Կուսանաց անապատի բազիլիկի նման, այստեղ ևս ունե-

նում ենք գմբեթատակ քառակուսի¹¹: Աղոթասրահում, կողային նավերի լայնական կամարներից բացի, մնացյալ բոլոր կամարները սլաքածն են, ինչը խիստ հազվադեպ է պատահում Սյունիքի XVII-XVIII դդ. եկեղեցիների դեպքում¹²: Արևելյան աբսիդը, հավանաբար, շինարարությունը կարճ ժամկետում ավարտելու նպատակով, չի պսակվել գմբեթարդով:

Եկեղեցին ունի երկու շքամուտք՝ արևմուտքից և հարավից: Սլաքածն կամարով ու պարանահյուս գոտիով պսակված արևմտյան շքամուտքի բարավորին կառույցի միակ վիմական արձանագրությունն է, որին դեռ կանդորադառնանք: Հարավայինը, որը փոքր-ինչ ավելի նեղ է, ունի կիսաշրջան կամար՝ երիզված նույնատիպ պարանահյուս գոտիով: Վերոնշյալ գոտիները, հարավարևմտյան մույթի արևմտյան երեսին քանդակված խաչն ու քառաթև ծաղկազարդն էլ ներկայացնում են ամբողջ կառույցի քանդակազարդ դեկորատիվ մասը, եթե, իհարկե, պատերի սվաղի տակ այլ զարդաքանդակներ չեն գտնվում:

Եկեղեցին լուսավորվում է կամարով պսակված և դեպի ներս լայնացող տասը լուսամուտներով. երկուական՝ հյուսիսային և հարավային պատերին, երեքական՝ արևմտյան պատին և մեկական՝ ավագ խորանի կենտրոնում և ավանդատներում¹³: Ներսի կողմից եկեղեցում առկա են տասներկու որմնախորշեր, որոնցից մեկը (հյուսիսային պատի մեջ) ծառայել է որպես մկրտության ավազան, մյուսները՝ որպես պահարաններ. չորս որմնախորշ առկա է աղոթասրահում (երկուսը՝ հյուսիսային, երկուսը՝ հարավային պատին), չորսը՝ ավագ խորանում, մեկը՝ հյուսիսային և երկուսը՝ հարավային ավանդատներում: Առանձնապես հետաքրքիր է հարավային ավանդատան հյուսիսային (հյուսիսարևելյան անկյանը կից) որմնախորշը՝ մոտ


¹¹ Նշված հանգամանքի հետ կապված՝ Մալկի բազիլիկի դեպքում Մուրադ Հասրաթյանը ենթադրում է, որ եկեղեցու շինարարությունը, հավանաբար, սկսել են գմբեթավոր բազիլիկ կառուցելու նկատառումով, սակայն հետագայում հրաժարվել են այդ մտադրությունից (տե՛ս **Հասրաթյան Մ.**, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973, էջ 75): Նույնը կարելի է ասել նաև Ս. Աստվածածին եկեղեցու վերաբերյալ, սակայն, ինչպես և Մալկի եկեղեցու դեպքում, դրանք ընդամենը վարկածներ են:

¹² XVII-XVIII դդ. եռանավ բազիլիկներում այսպիսի կամարներ տեսնում ենք նաև Հոստինի կիսաքանդ եկեղեցում, սակայն միայն գլխավոր նավի լայնական կամարներում:

¹³ Հյուսիսային պատի մեկ և արևմտյան պատի երկու լուսամուտների բացվածքները խորհրդային տարիներին քարերով շարվել ու փակվել են, այդպես էլ մնում են մինչ օրս:

երկու մետրի հասնող իր խորությամբ: Խորանալով՝ որմնախորշի բարձրությունը չի փոխվում. այն վերևից ծածկված է հարթ քարերով, սակայն որմնախորշ-պահարանին ոչ բնորոշ խորությունն ու հատակագիծը կարծես հուշում են դրա առաստաղից վեր գտնվող ևս մի դատարկ տարածության մասին: Իր դիրքով և ձևով այս որմնախորշը հիշեցնում է Շատիվանքի Ս. Սիոն եկեղեցու հարավային գաղտնախուցը: Վերջինիս մուտքը ավագ խորանի որմնախորշի միջով էր: Ս. Աստվածածնի պարագայում, ցավոք, ավագ խորանը ծածկված է սվաղի շերտով, ինչը հնարավորություն չի տալիս ստուգելու նույնպիսի մի որմնախորշի և գաղտնախցի առկայությունը:

Ինչպես նշեցինք, 1920-ական թթ. սվաղով է պատվել նաև արևմտյան մուտքի բարավորը՝ իր տակ թողնելով եկեղեցու հիմնադրման մասին վիմական արձանագրությունը (նկ. 2): Թե այն երբ է բացվել՝ տեղեկություններ չունենք: Այդուհանդերձ, Սեդրակ Բարխուդարյանը «Դիվան հայ վիմագրության» աշխատության երրորդ հատորը կազմելիս տառացիորեն ներկայացնում է Քաջբերունու վերձանությունը և ոչ սեփականը, ինչի պատճառը, հավանաբար, նրա այցելության ժամանակ արձանագրության՝ դեռևս բացված չլինելն է¹⁴: Սակայն Քաջբերունու վերձանության մեջ, բնագրի հետ համեմատ առկա են մի քանի անհամապատասխանություններ, որոնցից մեկը բավական ուշագրավ է և հարկ է անդրադառնալ առանձին¹⁵:



Նկ. 2. Եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի արձանագրության լուսանկարն ու գրչանկարը

¹⁴ Դիվան հայ վիմագրության, հ. 3, կազմեց Ս. Բարխուդարյանը, Ե., 1967, էջ 20:

¹⁵ Մյուսները զուտ լեզվական բնույթի են և կարիք չունեն մանրամասն նկարագրության:

Ինչպես երևում է լուսանկարից, «վարդապետ» բառի երկու արմատների արանքում տեղ է թողնված, ինչը Քաջբերունին ենթադրել է որպես «ա» տառի բացթողում և վերծանել է «վարդապետ»: Նկատենք, սակայն, որ տվյալ դեպքում բացակայում է պատվի նշանը, և բացի այդ, XVII-XVIII դդ. արձանագրություններում «վարդապետ» բառի համառոտագրությունը գրվում էր առանց ձայնավորների: Հավելենք նաև, որ Գնդեվանքի գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի արձանագրության մեջ (հեղինակը նույն Պետրոսն է), այս դեպքում արդեն առանց որևէ միջակայքի, նշված է «վարդապետ»¹⁶: Ուստի Ա. Աստվածածին եկեղեցու դեպքում, կարծում ենք, ճիշտ կլինի «վարդապետ» տարբերակը: Այսպիսով, կարող ենք ներկայացնել արձանագրության ճշգրիտ վերծանությունը.

ԵՍ ԱՄԵՐԴԱՄԵՆ / ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴՊԵՏՍ ԾԻՆԵՑԻ / ՍՆՈՒՐԲ
ԱՄՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՍՍԵՆ՝ ՓՐԿ / ՈՒԹԵՎԱՆԻՆ ՀՈԳՈՅ
ԻՄՈՅ ԵՒ ՇԼՕՂԱՅՆ / ՈՎԱՆԻՍԻՆ ԵՒ ԽԱՆՈՒՄԻՆ՝ ԹՎԻՆ՝ ՌՃԼԵ (1686 – Ա.Ա.)

Նշենք, որ արդեն իսկ XII դարից «վարդապետ» բառը գործածվում էր «ճարտարապետ» իմաստով¹⁷: Պետրոսը, անկասկած, եղել է հոգևորական. նման բովանդակությամբ արձանագրություններն արվում են, որպես կանոն, եկեղեցու հիմնադրի կողմից¹⁸: Կարծում ենք՝ Պետրոսը եղել է նաև Ա. Աստվածածին եկեղեցու և Գնդեվանքի վերանորոգության ճարտարապետը, ինչն ընդգծելու համար էլ հիշատակել է իր «մասնագիտությունը», ընդ որում, դրա հին ձևը՝ «վարդապետ»¹⁹:

Այժմ համառոտակի անդրադառնանք նաև եկեղեցու որմնանկարներին, որոնք, կարելի է ասել, հուշարձանի ամենահետաքրքրական մասն են կազմում: Դրանք տարբեր ժամանակներում ստեղծված գործեր են: Վաղ շրջանի պահպանված որմնանկարները գտնվում են ավագ խորանի սվաղի

¹⁶ Ըստ արձանագրության՝ 1691 թ. նորոգվել են գլխավոր եկեղեցին, գավիթը, վանքի պարիսպներն ու կից բնակելի և տնտեսական շինությունները (տե՛ս Դիվան հայ վիմագրության, հ. 3, էջ 19):

¹⁷ **Բարխուդարյան Ա.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ (Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 1, էջ 116):

¹⁸ Ըստ Երվանդ Լալայանի՝ «տէր Պետրոսը» Գնդեվանքի առաջնորդ է եղել 1685-1691 թթ. [**Լալայան Ե.**, Վայոց Ձոր. նշանատու վանքեր (Ազգագրական հանդես, հ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 9)]:


¹⁹ XVII դարում արդեն ընդունված էր ճարտարապետներին ոչ թե «վարդապետ», այլ «վարպետ» կամ «ուստա» անվանել:

տակ, ավագ խորանի աջակողմյան որմնամույթին, հարավարևելյան մույթի հյուսիսային, հարավարևմտյան մույթի արևմտյան և հյուսիսային, հյուսիսարևելյան մույթի հարավային և հյուսիսարևմտյան մույթի արևմտյան երեսներին: Վաղ շրջանի ևս երեք որմնանկար (հարավարևելյան մույթի արևմտյան, հյուսիսարևելյան մույթի արևմտյան և հյուսիսարևմտյան մույթի հարավային երեսներին) հետագայում վերանկարվել են այլ որմնանկարչի կողմից: Ուշ շրջանի որմնանկարները (ստեղծված 1906 թ.) առկա են ավագ խորանի ձախակողմյան որմնամույթին, բեմառաջքին, և ենթադրաբար՝ հարավարևմտյան մույթի արևմտյան երեսի վերին գոտում:

Վաղ շրջանի որմնանկարները XVIII-XIX դդ. հայ որմնանկարչության ամենայուրահատուկ և բարձրարժեք դրսևորումներից են: Ստեղծման ստույգ ժամանակաշրջանը բավական դժվար է որոշել. որմնանկարների մասին առաջին հիշատակությունը Քաջբերունու վերոնշյալ հոդվածն է, որի՝ «դեռ ևս նշմարելի են սրբերի իղաներկ մաշուած պատկերների հետքերը» տողերից ակնհայտ է դառնում, որ դրանք ստեղծվել են նրա այցելությունից՝ 1870-ականից բավական առաջ²⁰: Մեր կարծիքով, վաղ շրջանի որմնանկարներն արվել են ամենաուշը XIX դ. սկզբին, իսկ որ առավել հավանական է՝ XVIII դ.:

Գծ. 2-ում թվերով նշված են հետևյալ որմնանկարները. 1. Երկու սրբերի պատկերներ, 2. «Աստվածամոր անբասիր սիրտը», 3. Սրբի պատկեր, 4. Խորաններում զետեղված ծաղկանկարներ և խաչապատկերներ, 5. «Ծնունդ», 6. «Ավետում», 7. «Խաչելություն», 8. «Մկրտություն», 9. «Հարություն», 10. «Համբարձում», 11. Ս. Սարգիս (՝), 12. Ս. Ստեփանոսի քարկոծումը, 13. «Հոգեգալուստ», 14. Ս. Գևորգ, 15. Ս. Միքայել հրեշտակապետ:

²⁰ **Սարգիս արք. Զալալանցի** «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» աշխատության մեջ որմնանկարների մասին չնշելը չենք կարող համարել որմնանկարների՝ տվյալ ժամանակահատվածում դեռևս ստեղծված չլինելու փաստ, քանզի այստեղ Քոբայրի ու Կիրանց վանքերի, Գնդեվանքի և այլ վանքերի ու եկեղեցիների որմնանկարների մասին ևս մեկ բառով անգամ հիշատակված չէ:



ՊՃ. 2. Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարների տեղադրությունը²¹



Նկ. 3. Ավագ խորանի և նրան կից աջակողմյան որմնամույթի որմնանկարները

Ավագ խորանի որմնանկարներից տեսանելի են միայն ճախակողմյան հատվածի երկու պատկերները (Նկ. 3), որոնք ի հայտ եկան բոլորովին վերջերս՝ այդ հատվածի սվաղի թափվելու շնորհիվ։ Վերին հատվածում

²¹ Փակագծերում նշված են ուշ շրջանի՝ 1906 թ. որմնանկարները, կոտորակով՝ երկու գոտիներով պատկերվածները. համարիչում վերին գոտու որմնանկարի համարն է, հայտարարում՝ ստորին գոտունը։

պատկերված կերպարը նստած է, աջ ձեռքին՝ գիրք: Գլխի հատվածը չի պահպանվել: Ներքևի որմնանկարի սուրբը պատկերված է կանգնած վիճակում: Տեսանելի են միայն գլխի և իրանի ձախակողմյան մասերը (մնացյալը դեռևս գտնվում է սվաղի տակ): Ավագ խորանի մյուս հատվածներում, անշուշտ, ևս կլինեն որմնանկարներ, որոնք շուտափույթ բացելու և վերականգնելու անհրաժեշտություն կա:

Ավագ խորանին կից, արևելյան պատի հարավային որմնամույթին ևս մի սրբի պատկեր է, աջ ձեռքին գավազան է, ձախին՝ Ավետարան (°): Որմնանկարի վերին հատվածը չի պահպանվել:

Հարավարևելյան մույթի հյուսիսային երեսին «Ծննդյան» տեսարան է (նկ. 4, Ա): Կենտրոնական մասում պատկերված են Մարիամ Աստվածածինը, բարուրում պառկած մանուկ Հիսուսն ու հայացքը վերջինիս հառած հրեշտակը: Տիրամայրը նստած է, մարմնով թեքվել է դեպի Հիսուսը: Հագին մոխրագույն քիտոն է և կապույտ թիկնոց: Աջ կողմում երեք մոգերն են: Ճաղատ ու սպիտակամորուս ծերունին Գասպարն է, որը ծնկի է իջել, ընծան դրել գետնին և աջ ձեռքը մեկնել դեպի Հիսուսը: Գասպարի հետևում կանգնած են Բաղդասարն ու Մելքոնը, երկուսն էլ թագերով՝ որպես թագավորներ, ձեռքերում պահած իրենց ընծաները: Ինչպես և սովորաբար՝ Բաղդասարը պատկերված է թխադեմ երիտասարդի տեսքով, անմորուս է, Մելքոնը ավելի չափահաս է՝ սև մորուքով և երկար մազերով:

Աստվածածնի թիկունքում պատկերված են երկար, սպիտակ մորուքով, տարակուսանք արտահայտող դեմքով Հովսեփն ու մի հովիվ, նրանց գլխավերևում՝ մեկ եզ և մեկ ավանակ: Տեսարանի ամենավերին մասում ճառագող աստղն է՝ որպես աստվածահայտնության նշան: Որմնանկարը ներկա վիճակում բավական հողմահարված է, սակայն կերպարների արտահայտչականությունն ու խորությունը այժմ էլ հիացնում են դիտողին:

Հյուսիսարևելյան մույթի հարավային երեսին պատկերված է «Մկրտության» տեսարանը (նկ. 4, Բ): Այս որմնանկարը ևս շատ վատթար վիճակում է (ստորին մասը չի պահպանվել, իսկ պահպանվածն էլ մեզ է հասել խիստ խամրած գույներով): Կենտրոնական հատվածում Հովհաննես Մկրտիչն է՝ երկար մազերով ու մորուքով. երկու ձեռքերն առաջ պարզած՝ նա խեցիով ջուր է լցնում Հիսուսի վրա. հանգամանք, որ առավել բնորոշ է արևմտյան պատկերագրությանը (հայկական հուշարձաններում

Հովհաննես Մկրտիչը հիմնականում պատկերվում է ձեռքը Հիսուսի գլխին դրած՝ նրան օրհնելիս):

Հիսուսը կոնքակապով է, սև, երկար մազերով ու մորուքով, հայացքը փոքր-ինչ ցած է խոնարհել: Նա աջ ձեռքը դրել է կրծքին, ձախը՝ ուղղել դեպի Հովհաննես Մկրտիչը: Հիսուսի հետևում տեսնում ենք երեք անձանց՝ չափահասի, երիտասարդի և պատանու կերպարներով: Հովհաննես Մկրտչի հետևում, փոքր-ինչ դեպի ցած պատկերված է մեջքը դեպի մկրտությանն ուղղած Ադամը, որի միայն ուրվագծերն են մնացել: Ադամի դիմաց Հովհաննես Մկրտչի խոսքերը խորհրդանշող ծառն է, որի մոտ, հավանաբար, նկարված է եղել նաև կացինը: Տեսարանի ամենավերին մասում Հայր Աստվածն է՝ սպիտակամորուս ծերունու տեսքով, օրհնող աջը վեր պահած, իսկ Նրանից ներքև աղավնակերպ Ս. Հոգին է, որ իջնում է Հիսուսի վրա: Աղավնուց ցած օդում սավառնող հրեշտակներն ու քերովբեներն են, որոնք հետևում են մկրտությանը:



Նկ. 4. Ա - «Ծնունդ» (հարավարևելյան մույթ), Բ - «Մկրտություն» (հյուսիսարևելյան մույթ), Գ - «Ս. Ստեփանոսի քարկոծումը», Դ - «Հոգեգալուստ» (երկուսն էլ՝ հարավարևմտյան մույթ)

Հարավարևմտյան մույթի հյուսիսային երեսին երևում են Ս. Ստեփանոսի քարկոծման (վերին հատվածում) և «Հոգեգալուստ» (ստորին հատվածում) տեսարանները:

Ս. Ստեփանոս Նախավկան (նկ. 4, Գ) պատկերված է անմորուս երիտասարդի տեսքով, աջ ձեռքը՝ վեր պահած, հագին՝ երկար շագանակագույն զգեստ: Նրանից ձախ պատկերված են երեք քարկոծողները. երկուսը՝

քարը ձեռքներին, պատրաստվում են նետել, իսկ մեկը կռացած՝ փորձում է գետնից քար վերցնել:

«Հոգեգալուստը» (նկ. 4, Դ) եկեղեցու վաղ շրջանի որմնանկարներից համեմատաբար առավել լավ պահպանվածն է, և այս առումով էլ իր արտահայտչականությամբ, կերպարների մշակվածությամբ և անձնավորվածությամբ, գույների խորությամբ ու հարստությամբ, կարելի է ասել, առավել չափով է ի ցույց դնում այն վիթխարի կորուստը, որն ունեցել ենք ի դեմս այս եկեղեցու թե՛ վերջնականապես կորսված և թե՛ վնասված ու հողմահարված որմնանկարների:

Ի տարբերություն եկեղեցու, և առհասարակ նոր շրջանի հայ որմնանկարչության հուշարձանների մեծ մասի, որոնք հիշեցնում են հաստոցային գեղանկարչության գործեր, «Հոգեգալուստը» ավելի շատ նմանվում է սրբապատկերի: Որմնանկարի կենտրոնում նստած, ձեռքերը խաչածն կրծքին դրած Տիրամայրն է: Հայացքը տխրադեմ է ու մտածկոտ, աչքերը՝ ցած խոնարհած: Նրա աջ և ձախ կողմերում խմբված են առաքյալները, յուրաքանչյուր կողմում վեց հոգի: Առաքյալներից գրեթե յուրաքանչյուրի համար նկարիչը կերտել է անհատական դիմագիծ ու խառնվածք, ինչի շնորհիվ ընդհանուր տեսարանը բավական իրական տպավորություն է թողնում: Աջ կողմում գտնվող խմբից իր՝ համեմատաբար բարձր դիրքով և մեծ չափերով առանձնանում է Հովհաննես առաքյալը, որը պատկերված է երիտասարդի տեսքով, մյուսները հիմնականում միջին տարիքի են: Բացի այդ, առաքյալներից միայն Հովհաննեսն է կրում լուսապսակ: Տիրամոր գլխավերևում աղավաճակերպ Ս. Հոգին է: Վերևից իջնող սուրբ կրակները, որոնք սովորաբար պատկերվում են տվյալ տեսարանում, այս դեպքում բացակայում են:

Նույն՝ հարավարևմտյան մույթի արևմտյան երեսին ևս երկու որմնանկար է առկա. վերին հատվածում Ս. Գևորգն է՝ ձիավորի տեսքով (նկ. 5, Ա), ներքևում՝ Միքայել հրեշտակապետը (նկ. 5, Բ): Ս. Գևորգը պատկերված է սև մորուքով, գլխարկով, նետերով լի կապարճը մեջքին գցած, աջ ձեռքով բռնած մոխրագույն ձիու սանձը, ձախով՝ գավազանը: Ձախ հատվածում սևաներկ արձանագրությունն է՝ «ՍԲ ԳԷՈՐԳ»²²: Միքայել հրեշտակապետը լուսապսակով է, երկարամազ, թևերը պարզած են, և աջ ձեռքով

²² Եկեղեցու վաղ շրջանի որմնանկարների մեջ սա միակ պահպանված արձանագրությունն է:

բռնել է կշեռքը: Որմնանկարը ներկայումս խիստ հողմահարված վիճակում է:



Նկ. 5. Ա - Ս. Գևորգ, Բ - Ս. Միքայել հրեշտակապետ (երկուսն էլ հարավարևմտյան մույթ), Գ - Ս. Սարգիս (հյուսիսարևմտյան մույթ)

Հյուսիսարևմտյան մույթի արևմտյան երեսի որմնանկարում հավանաբար Ս. Սարգիս զորավարն է՝ աշխետ ձին հեծած, սաղավարտով, զրահով և թիկնոցով (նկ. 5, Գ): Աջ ձեռքին հավասարաթև խաչով ու ժապավենով պսակված երկար նիզակն է, ձախ ձեռքով բռնել է ձիու սանձը: Ձին այս դեպքում պատկերված է ոչ թե քայլելիս, ինչպես Ս. Գևորգի ձին, այլ՝ թռիչքի պահին:

Ինչպես նշեցինք, վաղ շրջանի երեք որմնանկարներ կրում են հետագա, ամենայն հավանականությամբ, 1906 թ. միջամտությունների հետքեր: Դրանք են «Խաչելությունը» (հարավարևելյան մույթի արևմտյան երեսին), «Հարությունը» (հյուսիսարևելյան մույթի արևմտյան երեսին) և «Համբարձումը» (հյուսիսարևմտյան մույթի հարավային երեսին):

Հարավարևելյան մույթի արևմտյան երեսին երկու որմնանկար է առկա. վերին մասում պատկերված է «Ավետումը», որին քիչ անց կանդրադառնանք, ստորին մասում «Խաչելությունն» է:

«Խաչելության» տեսարանի (նկ. 6, Ա) կենտրոնական հատվածում խաչված Քրիստոսն է՝ կոնքակապով, գլուխը թեքած աջ (երեսի հատվածը

միտումնավոր քերված է): Ձախ կողմում աղոթողի դիրքով պատկերված է Մարիամ Աստվածածինը, աջ կողմում՝ Հովհաննես Ավետարանիչը: Ստորին հատվածի՝ երկու ձեռքով խաչափայտը գրկած կինը, հավանաբար, Մարիամ Մագդաղենացին է: Խաչի տակ Ադամի գանգն է: Քրիստոսի երկու կողմերում սավառնում են քերովբեներն ու այլ հրեշտակներ: Վաղ շրջանի որմնանկարների հեղինակի ձեռագիրը հիշեցնում են թերևս քերովբեները, որոնք գրեթե նույնական են Մկրտության տեսարանի քերովբեներին: Մնացած մասով այստեղ տեսնում ենք միանգամայն այլ ձեռագիր, որակական առումով խիստ զիջող նախորդ որմնանկարներին: «Վերականգնման» հեղինակի նույնացումը 1906 թ. որմնանկարների հեղինակի հետ ակնհայտ է դառնում նախ և առաջ գույների «հարթ» լուծումներից և սահմանափակ ներկապնակից (խիստ գերակշռում է կապույտը): Բացի այդ, «վերականգնողն» այս որմնանկարի ստորին մասում ավելացրել է նաև ծաղկային զարդագոտին, որն էապես տարբերվում է այն զարդագոտուց, որը տեսնում ենք «Ծննդյան» տեսարանում (գծ. 3): Կարելի է ենթադրել, որ XX դ. սկզբին այս և մյուս երկու որմնանկարները գտնվել են խիստ վատթար վիճակում, և 1906 թ. որոշվել է, նոր որմնանկարներից զատ, «վերականգնել» նաև այդ որմնանկարները:



Գծ. 3. Դրվագներ որմնանկարների վաղ շրջանի (ձախից) և ուշ շրջանի՝ 1906 թ. (աջից) զարդագոտիներից (գրչանկարը մերն է)

Հյուսիսարևելյան մույթի արևմտյան երեսին պատկերված «Հարության» տեսարանի (նկ. 6, Բ) կենտրոնում՝ ամպերի մեջ Քրիստոսն է: Նա աջ ձեռքը օրհնության նշանով պարզել է վեր, ձախ ձեռքում գավազանն է: Ստորին հատվածում բացված սարկոֆագն է, աջ կողմում՝ կապտագույն զգեստներով հրեշտակը, որն աջ ձեռքով կարծես մատնացույց է անում հառնող Տիրոջը:

Հյուսիսարևմտյան մույթի հարավային երեսին պատկերված է «Համբարձումը» (նկ. 6, Գ): Վերին մասում, ամպերի վրա կանգնած է Քրիստոսը՝ առանց մանդոլայի, կապույտ քիտոնով և կարմիր թիկնոցով: Նրա աջ և ձախ կողմերում չորսական քերովբեներ են, որոնք Տիրոջն ուղեկցում են

դեպի երկինք: Ներքևի հատվածում տասներկու առաքյալներն են: Որմնանկարի՝ վաղ շրջանին պատկանելու հանգամանքը երևում է առաքյալների՝ դիմագծերի այն նույն մշակումից, ինչն առկա է «Հոգեգալուստ»-ում: «Համբարձման» ստորին հատվածում դարձյալ տեսնում ենք «Ծննդյան» տեսարանի նույն զարդագույնը:

1906 թ. ստեղծված գործերից են «Աստվածամոր անբասիր սիրտը» որմնանկարը (ավագ խորանի ծախակողմյան որմնամույթ), բեմի ճակատի դեկորատիվ ծաղկանկարները և ենթադրաբար՝ նաև «Ավետումը». բոլորն էլ առանձնանում են իրենց պարզունակությամբ և սիրողական բնույթով:

Առաջին որմնանկարի կենտրոնում Աստվածամայրն է՝ ձեռքը դրած կրծքին: Նրա երկու կողմերում հրեշտակներ են, որոնք կարծես ձեռքերով պահել են Աստվածամորը: Նկարի ստորին մասում թևերը տարածած մի քերովբե է, որից ներքև էլ պատվիրատուին հիշատակող արձանագրությունն է. «Յիշատակե Հանգուցեալ տէրուի Գայեանի Տէր-Կարապետեանցի 1906 ամի»: Այս որմնանկարն արված է վաղ շրջանի մի այլ որմնանկարի վրա, որի հետքերը երևում են վերին աջ անկյունում:



Նկ. 6. Ա - «Իսաչելություն» (հարավարևելյան մույթ), Բ - «Հարություն» (հյուսիսարևելյան մույթ), Գ - «Համբարձում» (հյուսիսարևմտյան մույթ)

Բեմառաջին պատկերված են կամարների ներքո իրար հաջորդող ծաղկամանով ծաղիկներ և խաչեր (պահպանվել է հիմնականում ծախա-

կողմյան հատվածը): Խաչերից մեկի վերին մասում դարձյալ որմնանկարների ստեղծման տարեթիվն է՝ «1906»:

«Ավետման» տեսարանը միայն պայմանականորեն ենք դասել 1906 թ. որմնանկարների շարքում, քանզի այստեղ վաղ շրջանի որմնանկարների հեղինակի ձեռագիրը որևէ կերպ չի նկատվում: Այդուհանդերձ, չի բացառվում, որ այս շերտի տակ պատկերված է եղել միևնույն տեսարանի առավել վաղ նկարված տարբերակը: Որմնանկարի ձախ կողմում, ոսկեգույն զգեստներ հագած, ծնկի իջած Գաբրիել հրեշտակապետն է, որն աջ ձեռքը օրհնության նշանով ուղղել է դեպի Մարիամը, իսկ ձախ ձեռքին ծաղիկներ են: Աջ կողմում ոսկեգոծ լուսապսակով, կարմրավուն քիտոնով ու կապույտ թիկնոցով Մարիամն է՝ նստած դազգահի առաջ, դեմքն ուղղած դեպի Գաբրիելը:

Նշենք, որ Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարները պատկերագրական և ոճական առումով կարիք ունեն առավել մանրակրկիտ և համակողմանի ուսումնասիրության (հուսանք՝ դա հնարավոր կլինի ներկայացնել եկեղեցու վերականգնման աշխատանքներից հետո, երբ կհեռացվի ավագ խորանի սվաղի շերտը և կբացվեն որմնանկարները): Կարծում ենք՝ դա հնարավորություն կտա հավելյալ տեղեկություններ ստանալ վաղ շրջանի որմնանկարների ստեղծման ժամանակի և հեղինակի մասին: Իսկ եկեղեցու վերականգնումն ու որմնանկարների ամրացումը հարկ է իրականացնել թույլ առաջ, հակառակ դեպքում խոնարհված ու միայն լուսանկարներում պահպանված հուշարձանների ցանկը կլրացվի ևս մեկով:

ГНДЕВАЗСКАЯ ЦЕРКОВЬ СВ. БОГОРОДИЦЫ

АВЕТИСЯН А.А.

Резюме

Село Гндеваз славится своими историко-архитектурными памятниками, одним из которых является церковь Св. Богородицы, построенная, согласно надписи на тимпане западного входа, в 1686 году. Строение представляет собой обычную трехнефную базилику на четырех «Т»-образных пилонах, имеющую два входа и две ризницы по бокам от главного алтаря.

Церковь была украшена росписями, основная часть которых, полагаем, выполнена в XVIII в. и является одним из лучших образцов армянской настенной живописи нового времени. Другая группа росписей церкви датируется 1906 годом.

Ни архитектура церкви, ни ее живописное оформление по сей день не стали предметом изучения специалистов. К сожалению, аварийное состояние церкви нанесло росписям большой ущерб, и если в ближайшее время не будут приняты меры по восстановлению частично обрушившихся стен церкви, то ее живопись будет полностью утрачена.

HOLY VIRGIN CHURCH IN GNDEVAZ

A. AVETISYAN

Abstract

Gndevaz village is famous for its historical and architectural monuments, one of which is the Holy Virgin Church, which, according to the inscription on the west entrance tympanum, was built in 1686. The construction is an ordinary three-nave basilica on four T-shape pylons and has two entrances and two vestries adjacent to the high altar.

The interior is decorated with mural paintings, most of which were created, as we suppose, in the XVIII century, and are of undoubted interest to the modern period of Armenian wall painting as one of its best samples. Another group of paintings is dated 1906.

Neither the architecture of the church, nor its picturesque decoration has so far been a subject of specialists' study. Unfortunately, because of the church's dilapidated state, the frescoes have been badly damaged and unless in the nearest future measures are taken to restore the ruined parts of the church, its paintings will be completely lost.

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՓՈՐԱԳՐԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԵՎ ԹՈՎՄԱ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍԻՄՈՆՅԱՆ Ա.Ա.

Ամստերդամի հայկական տպարանի պատմության մեջ նշանակալի դեր են խաղացել Ոսկանյան և Վանանդեցիների տպարանները, որոնց հիմնադիրները՝ Ոսկան Երևանցին և Թովմա Վանանդեցին, հայ տպագրության պատմության ամենանշանավոր դեմքերից են:

Ոսկան Երևանցին կարողացավ ոչ միայն տպարան հիմնել երեք քաղաքներում (Լիվոռնո, Ամստերդամ, Մարսել), այլև ավարտին հասցնել դարավոր մի ծրագիր՝ Աստվածաշնչի տպագրությունը, որն սկսվել էր իրենից շատ առաջ, բայց միշտ անհաջողության էր մատնվել: Հարուստ, բազմաթիվ մեծ և փոքր պատկերների առկայությամբ, շքեղ զարդանախշային համակարգով առաջին հայ տպագիր գիրքը, անշուշտ, Ոսկան Երևանցու «Աստվածաշունչն» է՝ տպագրված 1666-1668 թթ.: Տպարանի գործունեությունը Ամստերդամում շարունակվում է մինչև 1669թ.: Այնուհետև Ոսկան Երևանցու տպարանի համար նոր հանգրվան են դառնում նախ Իտալիայի Լիվոռնո (1669-1670), ապա՝ Ֆրանսիայի Մարսել (1670-1686) քաղաքները:

Ոսկանի տպարանից բացի, Ամստերդամում գործել է մեկ ուրիշ հայկական տպարան ևս, որը նույնպես կարևոր դեր կատարեց հայկական տպագրության զարգացման գործում: Դա Վանանդեցիների տպարանն էր, հիմնադիրը Մատթեոս Վանանդեցին էր: 1695 թ. տպարանի ղեկավարությունն անցավ նրա քեռորդի Թովմա Վանանդեցի Նուրիջանյանին: Շուրջ տասը տարվա (1695-1705 թթ.) ընթացքում Թովմա Վանանդեցին հրատարակում է 14 գիրք և «Համատարած աշխարհացոյց» կոչվող պղնձափորագիր քարտեզը: Իրենց տպագրական որակով Վանանդեցիների հրատարակությունները գերազանցում են մինչ այդ եղած բոլոր հայկական, անգամ՝ Ոսկանյան տպարանի հրատարակությունները:

Վանանդեցիների և Ոսկանյան հրատարակությունները աչքի են ընկնում շքեղ պատկերազարդմամբ: Պատկերազարդման բաղկացուցիչ մասն

են կազմում թեմատիկ փորագիր պատկերները, որոնց մեջ առանձնանում են Հովհաննեսի Հայտնության¹ (հուն.՝ ἀποκάλυψις – *Ապոկալիպսիս*) նկարազարդումները:

Ոսկան Երեւանցու և Վանանդեցիների հրատարակած գրքերում, այդ թվում նաև Աստուածաշնչում, հիմնականում տեղ են գտել ծագումով հոլանդացի, փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմի պատրաստած փորագրանկարները: Երևանցու հրատարակությունների փորագրանկարները կամ դրանց մեծ մասը ձեռք է բերել Մատթեոս Ծարեցին. այդ պատկերները կան նաև նրա հրատարակած՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքում և «Շարակնոցում»²:

Ծագումով գերմանացի Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը (1581 թ. Բազել - 1658 թ. Ամստերդամ) եղել է հայտնի փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմ Ավագի որդին, հոլանդացի հռչակավոր նկարիչ Հեն(դ)րիկ Գուցիուսի (1558-1617 թթ.) աշակերտը: 1600-ական թթ. Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը ապրել և ստեղծագործել է Ամստերդամում: Քրիստոֆել վան Ջիխեմը՝ կամ «հոլանդացի Դյուրերը», հայտնի էր որպես գրքեր նկարազարդող (ունի շուրջ 1200 փայտե փորագրություն): Մի շարք ինքնուրույն գործերից լավագույնները գտնվում են դիմանկարների այն ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Ամստերդամում 1609 թ. (*Iconica Haeresiarcharum*): Քրիստոֆել վան Ջիխեմի նկարազարդմամբ է լույս տեսել «Քրիստոսի մանկությունը» (1617 թ.), ինչպես նաև Աստվածաշնչի մի քանի հրատարակություններ, որոնցից երկուսը տպագրվել են Ամստերդամում (1646 թ.)³, Նոր Կտակարան՝ տպված Անտվերպենում (1646 թ.) և այլն: Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի այլ գործերի շարքում հայտնի են չորս ավետարանիչների

¹ Աստվածաշունչ մատյանի Նոր Կտակարանի գրքերից վերջինը: Պատմոս կղզի աքսորված Հովհաննես առաքյալի այս գրվածքը մարգարեական է՝ կազմված տեսիլքներից ու հայտնություններից: Գիրքը լի է վախճանաբանական այլաբանություններով և խորհրդանշաններով: Այն գրել է Հովհաննես առաքյալը, որը միաժամանակ իր անունը կրող Ավետարանի հեղինակն է: Հովհաննեսն այս գիրքը գրել է Պատմոս կղզում, ուր աքսորվել էր Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության դեմ սկսված հալածանքների ժամանակ՝ Քրիստոսի Ավետարանը քարոզելու համար: Նրա գիրքն ուղղված է Փոքր Ասիայի արևմտյան ափերին գտնվող յոթ եկեղեցիներին:

² **Քոլանջեան Ս.Ե.**, Հեթում Բ-ի ձեռագիր Աստուածաշունչը եւ Ոսկանեան հրատարակությունը (Էջմիածին, 1966, N ԺԱ-ԺԲ, էջ 152):

³ Տե՛ս **Mishel Bryan**. A biographical and critical dictionary of painters and engravers, II Voll., London, 1816, p. 398.

դիմանկարները, որոնք օգտագործվել են Թովմա Վանանադեցու հրատարակություններում և Ոսկան Երեւանցու Աստվածաշնչում (1666-1668 թթ.): Ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ Ամստերդամի տպարանի հրատարակությունների մեջ օգտագործված գրեթե բոլոր նկարները (փոքր բացառությամբ) Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի փորագրություններն են, որոնք պատճենված են Ռաֆայելի, Ալբրեխտ Դյուրերի, Հեն(դ)րիկ Գուլցիուսի, Մարտին վան Հենսկերկի, Աբրահամ Բլումարտի և եվրոպական ուրիշ նշանավոր վարպետների հայտնի նկարներից: Վերջիններս իրենց նկարչական գործունեությունը սկսել են որպես գեղանկարիչներ և հայտնի են եղել որպես ակադեմիական նկարչության հմուտ վարպետներ: Վան Ջիխեմի փորագրապատկերների մի մասը անմիջական կրկնօրինակներ են նաև Ջերոմ Նադալի (1507-1580) Պատկերազարդ Ավետարանից⁴: Հիսուսյան կարգի հիմնադիր Լոյալ Իգնատիոսի պատվերով, Ջերոմ Նադալի պատրաստած պատկերազարդ Ավետարանը, XVI դ. նշանավոր գրքերից է, որ 1593-1594 թթ. Անտվերպենում տպագրվել է Մարտին Նունթիոսի տպարանում: Գրքում օգտագործված է 153 փորագիր պատկեր, հիմնականում արված հոլանդացի հայտնի փորագրիչներ Վիրերիքս եղբայրների կողմից: Ջ. Նադալի պատկերազարդ Ավետարանը ոճական ու կառուցվածքային առումով հսկայական ազդեցություն ունեցավ հետագա, այդ թվում նաև Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի տպագիր հոգևոր գրքերի պատկերազրական համակարգի ձևավորման վրա:

Ուշագրավ է, որ մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Ջիխեմը թողել է նրանց նկարներից պատճենած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հեն(դ)րիկ Գուլցիուս, միաժամանակ դրել իր ստորագրությունը՝ CVS⁵: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարներն արված են փայտի երկայնակի փորագրության կամ քսիլոգրաֆիայի եղա-

⁴ **Jerome Nadal and Early Jesuit Art in Rome, Thomas Buser.** The Art Bulletin, Vol. 58, No. 3 (Sep., 1976), pp. 424-433.

⁵ Նմանօրինակ համառոտ ստորագրությունը կոչվում է էքսլիբրիս («ի գրեանց»)՝ գրքային նշան (լատ. ex libris գրքից), որի վրա սովորաբար արտահայտվում են հեղինակի անվան, ազգանվան սկզբնատառերը: Էքսլիբրիսի հայրենիքը համարվում է Գերմանիան, որտեղ այն ի հայտ է եկել տպագրության գյուտից հետո: Ա. Դյուրերը համարվում է առաջին նկարիչը, որը ստեղծեց իր էքսլիբրիսը (1523 թ.)՝ իր անվան և ազգանվան սկզբնատառերով:

նակով (հունարեն՝ xylon-փայտ եւ grapho-գրում եմ, նկարում եմ⁶): Քրիստոֆել վան Ջիխեմը, լինելով հմուտ փորագրիչ, կարողացել է վարպետորեն և մաքուր փորագրել իր ժամանակի նշանավոր նկարիչների աշխատանքները⁷: Նրա փորագրանկարների արդեն պատրաստի տպածները Ոսկան Երևանցին և Թովմա Վանանդեցին օգտագործել են իրենց հրատարակություններում՝ դրանք հարմարեցնելով իրենց գրքերի բովանդակությանը, սակայն փորագրանկարների մեծ մասը նրանք կիրառել են առանց փոփոխության, որի պատճառով ավետարանիչների անունները լատիներեն են գրված: Ինչպես նշում է բանասեր Հարություն Քյուրտյանը, հոլանդացի փորագրանկարիչը լատիներենով՝ A, B, C, D, և այսպես շարունակ, հաջորդաբար համարակալել է պատկերները և գրքի վերջում, ըստ համարների հերթականության, դրել դրանց մակագրությունները: Քանի որ գրքի վերջում հայերենը նման մակագրություններ չունի, ուստի տառերն անիմաստ են դառնում: Մեզ հայտնի չէ, թե սկզբնապես ում կամ որ գրքերի համար են արվել Ջիխեմի փորագրանկարները:

1498 թ. ստեղծված՝ Ալբրեխտ Դյուրերի⁸ «Ապոկալիպսիս» շարքը Աստվածաշնչի Հայտնության պատկերազարդման նախատիպ է դարձել շատ նկարիչների, այդ թվում նաև Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի համար: Ոսկան Երևանցու կողմից 1666-1668 թթ. տպագրված Աստվածաշնչում, ինչպես նաև Թովմա Վանանդեցու հրատարակած 1702 թ. Շարակնոցում զետեղված՝ Հովհաննեսի Հայտնությունը պատկերող փորագրապատկերների մեծ մասը կատարված են գերմանացի հայտնի նկարիչ փորագրապատկերների օրինակներից: Քր. Վան Ջիխեմը, նույնությամբ կրկնելով Ալ. Դյուրերի աշխատանքները, իր միացագրի հետ նշել է նաև Ալբրեխտ Դյուրերի անվան սկզբնատառերից կազմված միացագիրը՝ AD: Ուշագրավ է, որ Ոսկան Երևանցու Աստվածաշնչի հայտնութենական փորագրապատկերի հեղինակին հավանաբար ծանոթ է եղել Մաշտոցյան

⁶ Քիւրտեան Յ., Փայտափորագրչական մանրանկարչութիւնը եւ մանրանկարիչներ հայ տպագրութեան մէջ, Վենետիկ, 1939:

⁷ Սիմոնյան Ա., Քրիստոսի ծննդյան պատկերագրությունը Թովմա Վանանդեցու հրատարակությունների փորագրանկարներում (Էջմիածին, 2015, N 2, էջ 94-95):

⁸ 1496-1498 թթ. Հյուսիսային Վերածննդի հայտնի նկարիչ, ծագումով գերմանացի Ալբրեխտ Դյուրերը ստեղծում է իր հայտնի՝ «Ապոկալիպսիս» փայտափորագիր պատկերների շարքը: Այն բաղկացած է 15 փորագիր նկարներից, որոնք պատկերում են Հովհաննես աստվածաբանի տեսիլքները Պատմոս կղզում:

Մատենադարանում պահվող՝ Լվովի հայտնի Աստվածաշնչի պատկերագրությունը (ՄՄ., ձեռ. 351՝ Լվով, 1616-1619 թթ., գրիչ՝ Թորոս դպիր, ծաղկող՝ Ղազար վրդ. Բաբերդացի⁹), քանի որ մի շարք դրվագներ ուղղակիորեն կրկնում են միմյանց: Այս տեսանկյունից չենք բացառում, որ Քրիստոֆել վան Ջիխեմը ծանոթ է եղել նաև ֆրանկ-ֆլամանդացի փորագրիչ, ոսկերիչ Թեոդոր դը Բրայի (1561-1623) լատիներեն Աստվածաշնչի փորագրապատկերներին: Լվովի Աստվածաշնչի մանրանկարչության համար, հավանաբար, հիմք է դարձել 1609 թ. Մայնց քաղաքում դը Բրայի հրատարակած լատիներեն Աստվածաշունչը: Հարկ ենք համարում նշել, որ Թեոդոր դը Բրայի Աստվածաշնչի հայտնութենական փորագրապատկերների համար նույնպես հիմք է դարձել Դյուրերի «Ապոկալիպսիս» շարքը¹⁰: Ալբրեխտ Դյուրերի այս հրաշագեղ փայտափորագրությունները շրջադարձային երևույթ են նկարագարող գրքերի պատմության մեջ, որոնք դարեր շարունակ ոգեշնչել են ոչ միայն Արևմտյան Եվրոպայի նկարիչներին, այլ նաև, ինչպես տեսնում ենք, հայ մանրանկարիչներին: Չնայած Դյուրերի և Ջիխեմի փորագրապատկերներում ներկայացված է Հովհաննու Հայտնության տեսարանների միևնույն պատկերագրությունը՝ դրանք միմյանցից տարբերվում են փոփոխված կերպարների մեկնաբանությամբ և կատարողական վարպետությամբ: Ալ. Դյուրերը, հմտորեն զգալով փայտի փորագրման տեխնիկայի ընձեռած հուզական արտահայտչականության հնարավորությունը, իր աշխատանքներում արտահայտել է ժամանակի խռովահույզ, անհանգիստ ոգին, պատերազմի, սովի, համաճարակի, աշխարհի կործանման և «Ահեղ Դատաստանի» գաղափարները: Նրա աշխատանքները շատ ազդեցիկ ու տպավորիչ են: Փորագրանկարներում կիրառած անկյունային, սուր և կլորավուն գծերի, ինչպես նաև ուժեղ լուսաստվերային խաղի միջոցով նա կարողացել է ստեղծել չափազանց էքսպրեսիվ կերպարներ, վերարտադրել նրանց հոգեկան վիճակը: Կերպարների դեմքերի, ձեռքերի, հագուստների մեկնաբանության մեջ շատ են սուր, կտրուկ

⁹ Ղազար վրդ. Բաբերդացին Լվովի Հաճկատար Աստվածածին վանքում Թորոս գրչին պատվիրել է գրել Աստվածաշունչը, որը մասամբ նկարագարողել է ինքը:

¹⁰ **Silvie L. Merian**, Illuminating the Apocalypse in seventeenth-century Armenian manuscripts: The transition from printed book to manuscript: The Armenian Apocalyptic Tradition A Comparative Perspective. Essays presented in honor of professor Robert W. Thomson on the occasion of his eightieth birthday. Edited by Kevork B. Bardakjian and Sergio la porta. Brill, Leiden/Boston, p. 612-613:

գծերը: Կերպարները պատկերված են բարդ դիրքերով, ինչը ամբողջ հորինվածքին հաղորդում է մեծ լարվածություն և շարժում: Ա. Դյուրերի աշխատանքների համեմատ Քր. Վան Զիխեմի փորագրապատկերներն ավելի թույլ են տեխնիկական վարպետության և հուզական հագեցվածության տեսանկյունից: Հորինվածքները շատ պարզեցված են, ինչը նկատելի է կերպարների դիրքերի, հագուստների, ամպերի, երկնային լուսատուների և այլ մանրամասների պատկերման մեջ: Հորինվածքները չունեն Ա. Դյուրերի փորագրապատկերներին բնորոշ հագեցվածությունը, լարվածությունն ու շարժումը: Թույլ է նաև լուսաստվերային խաղը, որն իր հերթին նվազեցնում է հորինվածքի թողած ազդեցիկ տպավորությունը: Ինչպես նշեցինք, կերպարների մեկնաբանումը ևս զգալի փոփոխության է ենթարկված: Հագուստների և հատկապես դեմքերի ձևավորման մեջ նկատելի են ավելի շատ կտրավուն, քան սուր և կտրուկ գծերը: Այդ իսկ պատճառով, եթե Ա. Դյուրերի կերպարները շատ էքսպրեսիվ են, հուզական՝ իրենց տիրող տազնապի, վախի, սարսափի զգացումների հիանալի վերարտադրությամբ, ապա Քր. Վան Զիխեմի աշխատանքներում կերպարների մեկնաբանությունը մեղմ է՝ հույզերի ավելի զուսպ արտահայտությամբ: Այսուհանդերձ, Քր. Վան Զիխեմն իր կրկնօրինակներում կարողացել է դրսևորել վերահաս աղետի, աշխարհի կործանման և մարդկային տառապանքի գաղափարները:

Ստորև ներկայացնում ենք մի շարք փորագրապատկերներ, որոնք ընդհանրություններ ունեն Լվովի Աստվածաշնչի և Ա. Դյուրերի՝ Հայտնությունը արտացոլող նկարների հետ:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ (նկ. 1, 1ա, 1բ)

«Եւ յետ այսր ամենայնի, տեսի, եւ ահաւասիկ դրունք երկնից բացեալ էին, եւ ձայն փողոյն զոր լուա զառաջինն, որ խաւսեր ցիս եւ ասէր. Ել այսր, եւ ցուցից քեզ զինչ լինելոցն է յապա ժամանակի: Եւ ի ժամուն յայնմիկ եղև յիս Հոգին Աստուծոյ, եւ տեսի աթոռ մի զի կայր յերկինս. եւ ի վերայ աթոռոյն նստէր նմա տեսլեան ական յասպիս, եւ սարդիովն. եւ քահանայք շուրջ զաթոռովն նման տեսլեան զմրխտի, եւ էին այլ աթոռք քսան եւ չորք, եւ ի վերայ աթոռոյն նստէին երիցունք քսան եւ չորս, զգեցեալ հանդերձս սպիտակս եւ ի գլուխս իրեանց ունէին պսակս ոսկիս: Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք, եւ ձայնք եւ որոտմունք, եւ ելթն դամ-

բարձր հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եւթն զարութիւնք Հոգւոյն Սրբոյ...»¹¹:

Երկնականարում՝ փառապսակի մեջ, պատկերված է գահին բազմած Հայր Աստված՝ շրջապատված քսանչորս երեցներով, որոնցից ոմանք թագակիր են: Աստծո գահի շուրջ վառվում են յոթ ճրագակալներ, իսկ փառապսակից դուրս պատկերված է քառակերպը՝ ցուլը, առյուծը, հրեշտակը և արծիվը: Այս կենդանիները համարվում են հայտնութենական կենդանիներ: Ի տարբերություն Լվովի Աստվածաշնչում զետեղված մանրանկարի, փորագրանկարը ավելի հագեցած է կերպարներով, փորագրիչը կարծես տարածության յուրաքանչյուր հատված օգտագործել է: Մանրանկարում յուրաքանչյուր երեց պատկերված է թագակիր, տավիղ նվագելիս:

ՉՈՐՍ ՀԵԾՅԱԼՆԵՐԸ (նկ. 2, 2ա, 2բ)

«Եւ տեսի եւ ահաւասիկ ձի մի սպիտակ, եւ որ հեծեալն էր ի վերայ նորա, ունէր աղեղն, եւ տուաւ նմա պսակ, եւ եկն յաղթեալ զի յաղթեսցէ: Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կենդանոյն որ ասէր եթէ գամ: Եւ տեսի, եւ ել այլ ձի կարմիր եւ որ հեծեալն էր ի վերայ նորա, տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն ի վերայ երկրի. եւ տուաւ նմա սուր մեծ որով սատակեսցէ զամենայն բնակիչս երկրի: Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ: Եւ լուայ յերրորդ կենդանոյն զի ասէր եթէ գամ: Եւ ել այլ ձի սեաւ, եւ որ հեծեալն էր ի նմա, ունէր կշիռս ի ձեռինն իւրում. եւ լուայ զձայն ի միջոյ երրորդ կենդանոյն որ ասէր. Կապի՛ճ մի ցորեան դենարի միոջ, եւ երեք կապի՛ճ գարի դենարի միոջ. եւ ձէթ եւ գինի, մի վնասեսցի: Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ. լուայ ի չորրորդ կենդանոյն զի ասէր. եթէ գամ: Եւ ել այլ ձի աշխետ, եւ որ նստէր ի վերայ նորա ունէր զմահ. եւ դժոխք երթար զհետ նորա, եւ տուաւ նմա իշխանութիւն սատակել զչորրորդ մասն երկրի, սովով, եւ սրով, մահուամբ գազանաւք երկրի» (Ձ. 2-8):

Փորագրանկարում պատկերված են աղեղով, սրով, կշեռքով, եռաժանիով զինված չորս հեծյալներ: Նրանք մրրիկի նման սլանում են երկրի վրա՝ տարածելով սով և պատերազմ: Պատկերված են ձիերի սմբակների տակ զոհվող տարբեր տարիքի մարդիկ, աջ անկյունում՝ դժոխքի դար-

¹¹ Աստվածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Յայտնութիւն Յովհաննու Դ. 1-5, Ս. Էջմիածին, 1997: Այսուհետև «Յայտնություն»-ից արվող մեջբերումներին կից կնշվեն միայն գլխահամարները:

պասները խորհրդանշող Լևիաթան հրեշավոր կենդանին, որի բաց երախն է ընկնում թագակիր կայսրը:

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԷՍ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ (նկ. 3, 3ա)

«Յետ այսորիկ տեսի եւ ահա ժողովուրդ բազում որ ոչ գոյր թիւ, յամենայն ազգաց, եւ յամենայն ցեղից, եւ յամենայն լեզուաց, եւ յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ առաջի Գառինն, արկեալ զիրեամբք հանդերձս սպիտակս, եւ ունէին ի ձեռինս իւրեանց արմաւենիս. եւ ձայնիւ մեծաւ ասէին. «Փրկութիւն Աստուծոյ մերոյ որ նստի յաթոռ Գառին» (Է. 9-10):

Երկնականարում՝ պատկերված է աթոռին բազմած Հայր Աստված՝ շրջապատված երեցներով: Հայր Աստծո վերևում յոթ ճրագակալներ են: Երեցներից ոմանք քնար են նվագում: Աստծո փառապսակը շրջապատված է քերովքների պատկերներով: Փորագրանկարի կենտրոնում՝ փառապսակի մեջ, Աստծո գառն է: Ներքևում պատկերված են տարբեր ազգերի ներկայացուցիչները՝ սպիտակ զգեստներով, ձեռքերին արմավենու ճյուղեր: Վերջիններս երկրպագում են գառանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ԿՈՒԼ Է ՏԱԼԻՍ ԳԻՐՔԸ (նկ. 4, 4ա, 4բ)

«Եւ տեսի այլ հրեշտակս զաւրաւոր զի իջանէր յերկնից, եւ ծածկեալ էր զինքն ամպով. եւ էր ծիր ածեալ ի վերայ գլխոյ իւրոյ, եւ երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ ոտք նորա, իբրեւ զծիւն հրոյ. եւ ունէր ի ձեռինն իւր զիր բացեալ, եւ եդ զոտն իւր զաջ ի վերայ ծովու, եւ զձախն ի վերայ ցամաքի. եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ գոչեաց իբրեւ զառեւծ եւ յորժամ աղաղակեաց, խաւսեցան եւթն որոտմունքն յիւրեանց ձայնսն. եւ յորժամ խաւսեցան, որոտմունքն կամէի գրել. եւ լուայ ձայն յԱստուծոյ յերկնից զի ասէր. Կնքեա զորս խաւսեցան եւթն որոտմունք, եւ մի զդոսա գրեր. եւ հրեշտակն զորս տեսի որ եդ զոտս իւր ի վերայ ծովուն, եւ զմիսն ի վերա ցամաքի, համբարձ զձեռս իւր զաջ յերկինս. եւ երդուաւ ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս եւ որ ի նմա, եւ զերկիր, եւ որ ի նմա, զծով, եւ զամենայն ինչ որ ի նմա, զի ոչ եւս կայ այլ ժամանակ: Այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշտակին յորժամ հարցէ զփողն: Կատարեսցի խորհուրդ Աստուծոյ, որ աւետարանեցաւ ծառայից իւրոց մարգարէիցն: Եւ ձայնն զոր լուայ յերկնից, դարձեալ խաւսեցաւ ընդ իս եւ ասէ. Երթ առ զգիրն զոր ունի հրեշտակն բացեալ ի ձեռինն իւրում, որ կայր ի վերայ ծովու եւ ցամաքի: Եւ ես երթեալ առ հրեշտակն խնդրեցի զգիրն ի նմանէ. եւ

ասէ ցիս. Առ եւ կուլ զայդ. եւ դառնասցի ի փորի քում. եւ ի բերան քում է քաղցր իբրեւ զմեղր: Եւ առի զգիրն բացեալ ի հրեշտակէն, եւ կլի զնա. եւ լցաւ որովայն իմ դառնութեամբ...» (Ժ. 1-9):

Հանկարծ Հովհաննեսի առջև երևում է «ամպ հագած» մի հրեշտակ՝ արևի նման գլխով և կրակե սյուների նմանվող ոտքերով: Տալով Հովհաննեսին նոր, դեռ չկատարված աղետների մասին գրված գիրքը՝ նա հրամայում է Հովհաննեսին կուլ տալ այն: Գործողությունը պատկերված է ծովի մոտ, աջ կողմում կղզին է, որից այն կողմ անծայրածիր ծովն է, որում լողում են նավեր, կարապ և դելֆին: Ափին, որտեղ պատկերված են ծառեր և թփեր, որտեղ առաջին հատվածում, հենց ջրի մոտ նստած է Հովհաննեսը, որը վերցրել է գիրքը և կուլ է տալիս այն: Նրա կողքին թափված են գրենական պիտույքներ և բացված գիրք: Այս իրական հենքի վրա կտրուկ առանձնանում է արևի նման գլխով և կրակի սյուների նման ոտքերով հրեշտակի կերպարը, որը համաձայն բնագրի՝ մի ձեռքով ցույց է տալիս երկինքը, որտեղ Աստծո տաճարն է, և Հովհաննեսին է մեկնում գիրքը:

ԿԻՆԸ ԵՒ ՎԻՇԱՊԸ (նկ. 5, 5ա, 5բ)

«Եւ նշան մեծ երեւցաւ յերկինս: Կին մի արկեալ գիւրեաւ զարեգակն, եւ լուսինն ի ներքո ոտից նորա, եւ ի վերայ գլխոյ նորա պսակս աստեղաց յերկոտասանից. եւ էր յղի, եւ ճէր յերկնելն բազում վշտաւք, մերձ էր ի ծնանել. եւ երեւցաւ այլ նշան յերկինս. եւ ահա վիշապ հրեղէն մեծ յոյժ, որոյ էին գլուխք եւթն, եւ եղջիրք տասն, եւ ի վերայ գլխոյ նորա եւթն խոյր. եւ տուտն նորա քարշէր մինչեւ յեւթներորդ մասն աստեղաց երկնից, եւ ընկեաց զնոսա յերկիր, եւ վիշապն կայր առաջի կնոջն որ կամէր ծնանել, զյորժամ ծնցի կինն զորդին իւր, կլցէ զնա վիշապն: Եւ ծնաւ կինն որդի արու որ հովուեսցէ զժողովուրդ իւր գաւազանաւ երկաթեալ...» (ԺԲ. 1-5):

Փորագրանկարի կենտրոնում յոթգլխանի վիշապի պատկերն է, որի դիմաց՝ փառապսակի մեջ պատկերված է Տիրամայրը՝ որպես երկնային թագուհի: Վերջինս կանգնած է կիսալուսնի վրա: Տիրամոր՝ նման պատկերագրությունը հայտնի է Հայտնութեանական Տիրամայր անվանումով: Տիրամոր վերևում երկու հրեշտակներ պահել են նորածին մանկանը: Երկնակամարի կենտրոնում Հայր Աստվածն է՝ շրջապատված հրեշտակներով, քերովբեներով և սերովբեներով:

ԵՐԿՈՒ ԳԱԶԱՆՆԵՐԸ (նկ. 6, 6ա, 6բ)

«Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գազան մի, եւ ունէր գլուխս եւթն, եւ եղջերս տասն, եւ ի վերայ եղջերաց նորա տասն խոյր, եւ ի վերայ գլխոյ նորա, անուն հայիոյութեան. եւ գազանն զոր տեսի նման էր ընծու, եւ ոտք նորա իբրեւ զարջոյ, եւ բերան նորա իբրեւ զառիծու. եւ ետ նմա վիշապն զգաւրութիւն իւր, եւ զիշխանութիւնն իւր մեծ....» (ԺԳ. 1-2):

Երկնականարի կենտրոնում Հայր Աստծո պատկերն է՝ շրջապատված չորս հրեշտակներով: Հրեշտակներից մեկը աղոթում է, մյուսը երաժշտական գործիք է նվագում, երրորդի ձեռքում մանգաղ է, իսկ չորրորդին՝ սուր: Ներքևում՝ գետնի վրա, պատկերված են յոթգլխանի և տասը եղջյուր ունեցող վիշապը, նաև գառան եղջյուրներով մի կենդանի: Նրանց դիմաց ծնրադիր ժողովրդի հոծ բազմությունն է:

ԱՍՏՇՈ ՑԱՍՄԱՆ ՅՈԹ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐԸ (նկ. 7, 7ա)

«Եւ լուայ ձայն մեծ ի տաճարէն զի ասէր ցեւթն հրեշտակսն. երթայք հեղէք զեւթն սկաւառակսդ ցասման Աստուծոյ յերկիր...» (ԺԶ. 1-21):

Պատկերված են յոթ հրեշտակներ, յուրաքանչյուրի ձեռքում՝ մեկական սկավառակ: Գազանի բերանից դուրս են գալիս երեք թագավորների կերպարները: Առաջին հրեշտակի սկավառակի պարունակությունը թափվում է երկրի վրա, երկրորդին՝ ծովի մեջ, երրորդին՝ գետերի ու ջրերի աղբյուրների, չորրորդին՝ արևի վրա, իսկ հինգերորդ հրեշտակի սկավառակի պարունակությունը՝ գազանի վրա:

ԿԱՐՄԻՐ ԳԱԶԱՆԻ ՎՐԱ ՆՍՏԱԾ ԿԻՆԸ (նկ. 8, 8ա)

«Եւ տարաւ զիս յանապատ Հոգւով եւ տեսի կին մի զի նստէր ի վերայ կարմիր գազանի, եւ լի էր անուամբք հայիոյութեան, եւ գազանն զոր տեսի ունէր գլուխս եւթն եւ եղջեր տասն...» (ԺԷ. 3-3):

Պատկերված է յոթ գլուխ և տասը եղջյուր ունեցող վիշապը, որի վրա նստած է շքեղ հագուստ հագած, թանկարժեք զարդերով և թագով երիտասարդ մի կին, որի ձեռքին գավաթ է: Նրա առջևում հետաքրքրասերների ամբոխն է՝ ազնվականներ, զինվորներ, հոգևորականներ, առևտրականներ: Հեռվում կրակի բոցերի մեջ երևում է Բաբելոնը:

ՍՊԻՏԱԿ ԶԻԱԽՈՐԸ (նկ. 9, 9ա)

«Եւ տեսի զերկինս բացեալ, եւ ահաասիկ ձի մի սպիտակ, եւ որ հեծեալն էր ի նմա կոչի Հաւատարիմ եւ Ճշմարիտ, եւ արդարութեամբ դատի եւ պատերազմի. եւ էին աչք նորա իբրեւ զջահս հրեղէնս, եւ ի վերայ գլխոց

նորա պսակ բազում անուանս ունելով գրեալս, զոր ոչ ոք կարէ գիտել բայց միայն ինքն: Եւ արկեալ զիւրեաւ հանդերձ զանկեալ արեամբ, եւ կոչի անուն նորա, Բան Աստուծոյ. եւ զաւրավարք երկնից եւ զաւրք զհետ նորա երթային ձիաւք սպիտակաւք, զգեցեալ բեհեզս սուրբս եւ սպիտակս. եւ ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զագինս, եւ նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, եւ նա կոխեսցէ զնոսա իբրեւ զինձան զինոյ ցասման բաժակի բարկութեան Աստուծոյ ամենակալի...» (ԺԹ. 11-15):

Երկնականմարի կենտրոնում պատկերված է ձեռքերը բացված հրեշտակը: Նրանից ներքև Հավատարիմ և Ճշմարիտ կոչվող հեծյալի կերպարն է, որի հետևից գնում են երկնքի զորավարները և զորքերը՝ հագած սպիտակ բեհեզները: Հեծյալի բերանից դուրս է գալիս սուր, որով նա պետք է հարվածեր ազգերի ներկայացուցիչներին: Հեծյալի դիմաց պատկերված են երկրի թագավորները և զորքերը: Ներքևում բոցավառ կրակի մեջ այրվում է հինգ գլխանի գազանը:

ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ (նկ. 10, 10ա, 10բ)

«Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ եւ հանցէ ի բանդէ անտի, ելցէ եւ մոլորեցուցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի, զԳոգ եւ զՄագոգ, առցէ ի ձեռն, ժողովել նոքաւք զամենայն զաւրս ի պատերազմ, որոց թինն նոցա իբրեւ զաւազ ծովու, անհամար. եւ ելցեն ի լայնութիւնս երկրի, եւ պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն, եւ զքաղաքին սիրելոյ. եւ իջցէ հուր յերկնից առ ի յԱստուծոյ եւ կերիցէ զնոսա, եւ զզաւրագլուխս նոցա զսատանայ որ մոլորեցոյց զնոսա, եւ արկցէ զնոսա ի ծով հրոյ եւ ի ծծմբոյ ուր է գազանն եւ սուտ մարգարէքն եւ չարչարեսցին զտիւ եւ զգիշեր յաւիտեանս յաւիտենից...» (Ի. 7-10):

Երուսաղեմի համայնապատկերի հենքին պատկերված է սրբերի բանակը: Երկնականմարի կենտրոնում Հայր Աստծո կերպարն է՝ շրջապատված մեղյալներով: Աստծու աջ կողմում հրեշտակն է՝ բացված գիրքը ձեռքին: Ինչպէս նշվում է Աստվածաշնչում. «Եւ այլ գիրք բանային որոց անուանք նոցա գրեալ են ի դպրութիւն կենաց. եւ դատաստան եղեւ մեռելոցն ի գիրս ըստ իւրաքանչիւր գործոց իւրոց» (Ի. 12): Երկնականմարից բխում է կրակե անձրև: Սատանան վիշապի տեսքով է և այրվում է կրակի բոցերում:

ՆՈՐ՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ (նկ. 11, 11ա)

«Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն որք ունէին զեւթն սկաւառակսն լցեալ եւթն վախճանաւ կատարածովք. խաւսեցաւ ընդ իս եւ ասէ. Յուցա-

նեմ քեզ զհարսն եւ զկին Գադինն. եւ առ տարաւ զիս ի լեառն մի բարձր եւ մեծ, Հոգւով Սրբով, եւ եցոյց ինձ զքաղաքն սուրբ, զվերինն Երուսաղէմ, եւ զլեառնն խաղաղութեան զի իջանէր յերկնից առ ի յԱստուծոյ ամենակալէ...» (ԻԱ. 9-10):

Փորագրանկարի կենտրոնում պատկերված է երկնային Երուսաղէմը՝ տասներկու դռներով: Այդ տասներկու դռների կամարների կենտրոնում տասներկու հրեշտակներ են: Երկնականարում՝ փառապսակի մեջ, Հայր Աստծո պատկերն է՝ շրջապատված յոթ հրեշտակներով: Հայր Աստծուց ներքև Սուրբ Հոգին է՝ աղավնու տեսքով: Տեսարանի աջ անկյունում հրեշտակն է, որը ձեռքում պահում է ոսկե եղեգ: Հրեշտակի կողքին պատկերված է Յովհաննեսը՝ երիտասարդ, գանգրահեր, եղեգը ձեռքին:

ՓՈՂԵՐԻ ԶԱՅՆԸ (նկ. 12, 12ա, 12բ)

«Եւ յորժամ եբաց զկնիքն եպօներորդ. եղև լռութիւն յերկնս իբրեւ զկէս ժամու. եւ տեսի հրեշտակս եպօն զի կային առաջի Աստուծոյ. եւ տուաւ նոցա եպօն փող....» (Ը. 1-2):

Երկնքում Աստծո սեղանի մոտ պատկերված է խնկամանով հրեշտակը, որը Աստծո կրակով լի խնկամանը նետում է երկրի վրա: Նրանց շուրջը պատկերված են փողերով յոթ հրեշտակներ, որոնցից չորսը փչում են փողերը, որի հետևանքով կրակ և կարկուտ է թափվում երկրի վրա: Պատկերված են ամպերի մեջ խավարող արևն ու լուսինը, այրվող ծառեր ու խոտեր, ծովի մեջ խորտակվող նավեր և մարդիկ:

Այսպիսով, Ամստերդամի տպարանի հրատարակությունների պատկերագրողման մեջ օգտագործված թեմատիկ փորագրապատկերներն ունեն արևմտյան պատկերագրություն, ինչը պայմանավորված է գրքերի՝ եվրոպական միջավայրում հրատարակված լինելու և եվրոպական փորագրող-նկարչի՝ Քրիստոֆել վան Ջիխեմի տպատախտակների օգտագործվելու հանգամանքով: Դրանք աչքի են ընկնում կանոնավոր պատկերագրության մեջ հեղինակի ներմուծած կերպարներով կամ այլ մանրամասնություններով, որոնք բացակայում են մանրանկարներում: Փորագրապատկերները հիմնականում ներկայացնում են բազմակերպար հորինվածքներ, որոնցում հեղինակը դրսևորում է տարածության, հեռանկարի կառուցման մեծ վարպետություն:



Նկ. 1. Պաշտամունք երկնքում,
Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 1ա. Պաշտամունք երկնքում, Ա. Դյուրեր,
Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 1բ. Պաշտամունք երկնքում, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 2. Չորս հեծյալներ, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 2ա. Չորս հեծյալներ, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 2բ. Չորս հեծյալներ, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 3. Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 3ա. Եկեղեցին՝ որպես ընտրյալների բազմություն, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս 1496-1498 թթ.



Նկ. 4. Հովհաննեսը կույ է տալիս գիրքը, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 4ա. Հովհաննեսը կույ է տալիս գիրքը, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 4բ. Հովհաննեսը կույ է տալիս գիրքը, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 5. Կինը եւ վիշապը, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 5ա. Կինը եւ վիշապը, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 5բ. Կինը եւ վիշապը, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 6. Երկու գազանները, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 6ա. Երկու գազանները, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 6բ. Երկու գազանները, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 7. Աստծո ցամառան յոթ սկավառակները, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 7ա. Աստծո ցամառան յոթ սկավառակները, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 8. Բաբելոնյան անառակ, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 8ա. Բաբելոնյան անառակ, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 8բ. Բաբելոնյան անառակ, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 9. Սպիտակ ձիավորը,
Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 9ա. Սպիտակ ձիավորը,
ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 10. Սատանայի պարտությունը, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 10ա. Սատանայի պարտությունը,
Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 10բ. Սատանայի պարտությունը, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 11. Նոր Երկնային Երուսաղեմ,
Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 11ա. Նոր Երկնային Երուսաղեմ,
ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.



Նկ. 12. Փողերի ձայնը, Աստվածաշունչ, 1666-1668 թթ.



Նկ. 12ա. Փողերի ձայնը, Ա. Դյուրեր, Ապոկալիպսիս, 1496-1498 թթ.



Նկ. 12բ. Փողերի ձայնը, ՄՄ, N 351, Աստվածաշունչ, 1616-1619 թթ.

ГРАВЮРЫ АПОКАЛИПСИСА В ПУБЛИКАЦИЯХ ВОСКАНА ЕРЕВАНЦИ И ТОВМА ВАНАНДЕЦИ

СИМОНЯН А.А.

Резюме

Типографии Восканян и Ванандеци, основанные В. Ереванци и Т. Ванандеци, сыграли значимую роль в истории армянской типографии в Амстердаме. Издания Восканян и Ванандеци были снабжены великолепными

иллюстрациями. Для тематических гравюр, использованных в иллюстрациях публикаций типографского центра Амстердама, характерна типично западная иконография. Это обусловлено тем, что они были напечатаны в европейской среде с использованием трафаретов художника-резчика Кристофеля ван Зихема. Гравюры интересны тем, что автор внедрил в каноническую иконографию образы и некоторые детали, отсутствующие в миниатюрах. Гравировки изображений в основном представляют собой многогранные композиции, в которых автор проявляет большое мастерство при построении пространства перспективы.

ENGRAVINGS OF THE APOCALYPSE IN PUBLICATIONS OF VOSKAN EREVANTSİ AND THOVMA VANANDETSİ

A. SIMONYAN

Abstract

The Voskanian's and the Vanandetsi's printing houses founded by Voskan Erevantsi and Thovma Vanadetsi played a significant role in the history of the Armenian Printing houses in Amsterdam. The publications of the Voskanian's and Vanadetsi's have been marked by gorgeous illustrations. The thematic caricatures used in the illustrations of Amsterdam publishing houses have western characters, due to the fact that they have been published in European publications and used engraving forms of the artist Crhistoffel van Sichem. The engravings are featured in regular illustrations with the characters or other details brought by the author, which are missing in the miniatures. The engraved images are mainly multifarious compositions in which the author manifests a great deal of space in perspective construction.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

ԱՐՏԵՄՅԱՆ Լ.Ռ.

Միջազգային մրցույթների դափնեկիր, 18-ամյա տաղանդավոր ջութակահար և դիրիժոր Սերգեյ Սմբատյանը նվագախումբ ստեղծելու իր նվիրական գաղափարի շուրջը 2005 թ. համախմբեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում ուսանող՝ համախոհ շնորհաշատ երիտասարդ երաժիշտների (Աննա Անդրիասովա՝ նվագախմբի կոնցերտ-մայստերն առ այսօր, Գառնիկ Ենգիբարյան՝ թավջութակահարների կոնցերտմայստեր և այլք) և Երևանում հիմնադրեց երիտասարդական նվագախումբ, որի ամենակարևոր նպատակն ինչպես հայ կատարողական արվեստի ավանդույթների պահպանումն ու զարգացումն է Հայաստանում և արտերկրում, այնպես էլ հայ և համաշխարհային դասական ու ժամանակակից լավագույն ստեղծագործությունների կատարումը: Ի դեպ, հայ իրականության մեջ առաջին երիտասարդական նվագախումբն էր, որին կատարողական վարպետության համար ՀՀ կառավարության որոշմամբ շնորհվել է պետական կոլեկտիվի կարգավիճակ (2008 թվականից): Ի սկզբանե որպես Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ հայտնի կոլեկտիվն այսօր արդեն ներկայանում է որպես Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ (2017-ից, տնօրեն՝ արվեստագիտության թեկնածու Սարգիս Բալբաբյան), որի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորն է ՀՀ վաստակավոր արտիստ, արվեստագիտության թեկնածու Սերգեյ Սմբատյանը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գործունեությունը ընթացել է հետևյալ ուղղություններով՝ համերգների և փառատոների կազ-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6E045 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

մակերպում, երաժշտական բազմաբնույթ նորարարական նախագծերի նախաձեռնում, տարբեր կամերային կազմերի ձևավորում²:

Նվագախմբի՝ Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը 2006 թ. հունվարի 25-ին կայացած դեբյուտի հաջողությունը (մենակատար՝ Յուկո Յուբո, Ճապոնիա) խոստումնալից էր. դրա վառ ապացույցն առ այսօր ծավալվող բուռն համերգային գործունեությունն է: Ս. Սմբատյանի և նվագախմբի երաժիշտների նվիրյալ և համառ աշխատասիրության շնորհիվ կոլեկտիվը կարճ ժամանակահատվածում ձեռք է բերել միջազգային ճանաչում: Նվագախումբն իր գործունեության 12 տարիների ընթացքում շուրջ 550 համերգով հանդես է եկել Հայաստանում, Ռուսաստանում (2006, 2008, 2009, 2017), Ֆրանսիայում (2006, 2015), Գերմանիայում (2007, 2010, 2011), Չինաստանում (2016), Նիդերլանդներում (2011), Բելգիայում (2011), Իսպանիայում (2015), Լիբանանում (2014, 2015), Ավստրիայում (2015), Լեհաստանում (2017), մի շարք հեղինակավոր համերգասրահներում, այդ թվում՝ *Opera Garnier* (Գրանդ Օպերա, Փարիզ, 2006), *Konzerthaus* (Բեռլին, 2007, 2010, 2011), *Dr. Anton Philipszaal* (Հաագա, 2011), Պ. Չայկովսկու անվան համերգասրահ և Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի Մեծ համերգասրահ (Մոսկվա, 2006, 2008, 2009, 2017), *Palais des Beaux-Arts* (Բրյուսել, 2011), *Musikverein* (Վիեննա, 2015), *Elbphilharmonie* (Համբուրգ, 2017) և այլն:

Նվագախմբի համերգներին որպես մենակատարներ մասնակցել են և՛ հայ՝ Վահագն Պապյան, Արմեն Բաբախանյան, Սերգեյ Խաչատրյան, Նարեկ Հախնազարյան և այլք, և՛ օտարազգի կատարողական արվեստի աշխարհահռչակ բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Զախար Բրոնը, Դմիտրի Խվորոստովսկին, Բորիս Բերեզովսկին, Վադիմ Ռեպինը, Մաքսիմ Վենգերովը, Դենիս Մացուկը և այլք, որոնք բարձր են գնահատել կոլեկտիվի կատարողական վարպետությունը: Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ, ՌԴ պետական (1993, 1998, 2016) և Կառավարության (2015) մրցանակների դափնեկիր, դիրիժոր Վալերի Գերգիևը նվագախմբի մասին ասել է. «...Սերգեյ Սմբատյանը ստեղծել է հրաշալի նվագախումբ: Այս ստեղծագործական կոլեկտիվը վստահաբար լավ ապագա ունի: Ես դրանում համոզվեցի, երբ վարպետության դասերով հանդես էի գալիս

² Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի մասին տեղեկությունները քաղել ենք նվագախմբի արխիվային նյութերից:

կոնսերվատորիայում³, ինչպես նաև մեր համատեղ համերգի ընթացքում, երբ այս պատանի տղաներն ու աղջիկները, ելույթ ունենալով Մարիինյան թատրոնի նվագախմբի հետ, ամբողջությամբ միաձուլվեցին «Զատկի» և «XXI հեռանկարներ» փառատոներում թևածող մթնոլորտներին...»⁴:

Նվագախմբի հարուստ երկացանկում ընդգրկված են դասական և ժամանակակից հայ⁵ և օտարազգի⁶ կոմպոզիտորների բազմաթիվ լավագույն երկեր: Նվագախմբի կատարմամբ հնչել են ավելի քան 1000 ստեղծագործություններ, առաջին անգամ՝ հայ կոմպոզիտորների 138 ստեղծագործություններ, այդ թվում՝ Վարդ Մանուկյանի «Խոստովանություն» սիմֆոնիան լարային նվագախմբի և տամ-տամի համար, Վարդան Աճեմյանի 4-րդ սիմֆոնիան մեծ նվագախմբի համար և այլն: Նվագախումբն իրականացրել է Ռիխարդ Շտրաուսի կոնցերտի (հոբոյի և փոքր նվագախմբի համար), Քչիշտոֆ Պենդերեցկու 3-րդ սիմֆոնիայից Ադաջոյի և այլ հայաստանյան և Դեյվիդ Դեբուսի Կանֆիլդի՝ Արամ Խաչատրյանին նվիրված սաքսոֆոնի և նվագախմբի կոնցերտի, Էնտոնի Լեբաունտիի Շարականի (սիմֆոնիկ նվագախմբի համար (2010) համաշխարհային պրեմիերաները:

Նվագախմբին իրենց ստեղծագործություններն են նվիրել Էդուարդ Հայրապետյանը (Սիմֆոնիա 4, 2016 և «Սիբեյիուս-երազը» լարային նվագախմբի համար, 2011), Վարդ Մանուկյանը («Խոստովանություն» սիմֆո-

³ Խոսքը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մասին է:

⁴ Նվագախմբի արխիվային նյութերից:

⁵ Այդ թվում՝ Տիգրան Չուխաճյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան, Բարսեղ Կանաչյան, Հարո Ստեփանյան, Արամ Խաչատրյան, Գրիգոր Եղիազարյան, Ալան Հովհաննես, Ալեքսանդր Հարությունյան, Ղազարոս Սարյան, Առնո Բաբաջանյան, Էդվարդ Միրզոյան, Էդուարդ Բաղդասարյան, Ալեքսանդր Աճեմյան, Գրիգոր Հախինյան, Ավետ Տերտերյան, Գեղունի Չթյան, Էդգար Հովհաննիսյան, Գագիկ Հովունց, Ստեփան Շաքարյան, Հարություն Դելլալյան, Մելիք Մավիսակալյան, Մարտին Վարդազարյան, Մարտուն Իսրայելյան, Տիգրան Մանսուրյան, Ռոբերտ Ամիրխանյան, Նուբար Ասլանյան, Միխայիլ Կոկժան, Կոնստանտին Պետրոսյան, Գարեգին Գրիգորյան, Արամ Սաթյան, Վահրամ Բաբայան, Երվանդ Երկանյան, Արմեն Սմբատյան, Վարդ Մանուկյան, Ստեփան Լուսիկյան, Վարդան Աճեմյան, Վաչե Շարաֆյան, Հովհաննես Մանուկյան և այլք:

⁶ Այդ թվում՝ Տոմասո Ալբիոնի, Վոլֆգանգ Ամադուս Մոցարտ, Լյուդվիգ վան Բեթհովեն, Կարլ Մարիա Ֆոն Վեբեր, Հեկտոր Բեռլիոզ, Յոհաննես Բրամս, Ջորջ Բիզե, Անտոնին Դվորժակ, Կամիլ Սեն-Սանս, Ջուզեպպե Վերդի, Ջոակինո Ռոսսինի, Ռիխարդ Վագներ, Կլոդ Դեբյուսի, Մորիս Ռավել, Պյոտր Չայկովսկի, Սերգեյ Ռախմանինով, Իգոր Ստրավինսկի, Սերգեյ Պրոկոֆև, Դմիտրի Շոստակովիչ, Սամյուել Բարբեր, Լեոնարդ Բերնստայն, Քչիշտոֆ Պենդերեցկի, Գիա Կանչելի և այլք:

նիա լարային նվագախմբի և տամ-տամի համար, 2011 և Լարային սիմֆոնիա, 2013), Կարեն Անանյանը («Լեգենդ» լարային նվագախմբի համար, 2011) և Ժիրայր Շահիրմանյանը (Սիմֆոնիա, 2016):

Համերգային գործունեությանը զուգահեռ՝ նվագախումբն ակտիվ կազմակերպել է փառատոներ: 2010 թվականից անցկացվում է Հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոնը, 2013-ից՝ Արամ Խաչատրյանի ամենամյա միջազգային փառատոնը, 2017-ից՝ Կենդանի լեգենդ-կոմպոզիտորների արվեստի՝ Գիա Կանչելիի (2017), Քշիշտոֆ Պենդերցկու (2018) և «Արմենիա» միջազգային փառատոները:

Նվագախմբի գործունեության կարևոր ուղղություններից է հայ երաժշտության հանրահռչակումը: Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որի ստեղծման գաղափարը դիրիժոր Սերգեյ Սմբատյանինն է, արդեն 9 տարվա պատմություն ունի և իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայաստանի երաժշտական կյանքում: Փառատոնի նպատակներն են հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների հանրահռչակումը, հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների պահպանումն ու դրա արդի նվաճումների ներկայացումը աշխարհի տարբեր երկրներում: Արտասահմանյան բազմաթիվ համերգները ցույց տվեցին, որ ժամանակակից հայ դասական երաժշտարվեստը մեծ պահանջարկ ունի ոչ միայն հայրենիքում, այլև դրա սահմաններից դուրս, հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները հետաքրքիր և գրավիչ են օտարերկրյա ունկնդրի համար: 2010 թվականին Ս. Սմբատյանի նախաձեռնությամբ ծնունդ առած Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնն ունի մի շատ կարևոր առաքելություն՝ թվայնացվում են դրա շրջանակներում հնչող բոլոր ստեղծագործությունները, և իրականացվում է բոլոր համերգների ձայնագրությունը՝ ապահովելով դրանց հետագա պահպանումն ու փոխանցումն սերունդներին: Սա փառատոնի թերևս ամենամեծ ձեռքբերումներից է, քանի որ այն ոչ թե պարզապես հերթական երաժշտական միջոցառում է, այլ կարևոր արժեք՝ հատկապես մասնագիտական տեսանկյունից: Կարևորելով փառատոնի դերն ու նշանակությունը հայաստանյան երաժշտական խճանկարում՝ ստեղծման առաջին իսկ օրից այն անցկացվել է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո և կառավարության աջակցությամբ:

Ամենամյա փառատոնը յուրաքանչյուր տարի նվիրվում է հայ անվանի կոմպոզիտորներից մեկին. Սարյան-ֆեստ (2010), Բաբաջանյան-ֆեստ (2011), Չուխաջյան-ֆեստ (2012), Ռոմանոս Մելիքյան-ֆեստ (2013), Տերտերյան-ֆեստ (2014), Էդգար Հովհաննիսյան-ֆեստ (2015), Միրզոյան-ֆեստ (2016), Հարո Ստեփանյան-ֆեստ (2017) և Գրիգոր Եղիազարյան-ֆեստ (2018): Փառատոնի համերգների ընթացքում Հայաստանում գործող երգչախմբերի, նվագախմբերի և կամերային անսամբլների կատարմամբ հնչել է շուրջ 300 ստեղծագործություն (կամերային երկերից մինչև մեծակտավ ստեղծագործություններ):

Նվագախումբն ակտիվորեն մասնակցել է Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած հայ ժամանակակից երաժշտության փառատոներին (2014, 2015, 2016), որոնց ընթացքում հնչել են ժամանակակից հայ կոմպոզիտորների ինչպես արդեն կատարողական հարուստ կենսագրություն ունեցող և ունկնդիրների կողմից սիրված (Արամ Սաթյանի «Համլետ» սիմֆոնիկ պոեմը, 2004), Վարդ Մանուկյանի «Խոստովություն» սիմֆոնիան լարային նվագախմբի և տամ-տամի համար, 2011) և այլն, այնպես էլ նոր ստեղծագործությունները (Միխայիլ Կոկժակի լատինական տեքտերով գրված «Lux aeterna» ռեքվիեմը երգչախմբի և նվագախմբի համար, Նարինե Զարիֆյանի տանգո-ռապսոդիան ալտի և լարային նվագախմբի համար, Ժիրայր Շահիրմանյանի սիմֆոնիետտան և այլն)⁷:

2013 թ. լրացավ աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյա հոբելյանը: Այդ առիթով Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց Ա. Խաչատրյանի անվան միջազգային փառատոնը, որը դարձավ ամենամյա և կարճ ժամանակում ձեռք բերեց միջազգային ճանաչում: Փառատոնը, որի գեղարվեստական ղեկավարը Սերգեյ Սմբատյանն է, նպաստում է Ա. Խաչատրյանի երաժշտության հանրահռչակմանը՝ միջազգային մշակութային երկխոսություն ձևավորելով հայ և օտարազգի կատարողների և կոմպոզիտորների ձեռքբերումների միջև, միջազգային նոր հարթակ հանդիսանալով դասական երաժշտության պրոպագանդման համար: Փառատոնն ընդգրկում է ինչպես սիմֆոնիկ, այնպես էլ կամերային համերգներ, ներկայանում նոր հետաքրքիր ծրագրերով՝ «Խաչատրյան նոն-ստոպ»,

⁷ Ասատրյան Ա., Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Ե., 2017, էջ 79-80, 82-84:

«Խաչատրյանը և ջազը» և այլն: Համերգները հեռարձակվում են առցանց, ինչպես նաև ներառվել են դասական երաժշտության առցանց հեռարձակում իրականացնող հանրահայտ «Մեդիչի թիվի» հեռարձակումների ցանկում, որի շնորհիվ մեծացել են փառատոնի հեղինակությունն ու միջազգային լսարանը:

Նվագախումբը բազմաթիվ հրավերներ է ստացել միջազգային հեղինակավոր փառատոներից և համերգասրահներից, մասնակցել Մոսկովյան Զատկի (2010, Մոսկվա, Ռուսաստան), *Young Euro Classic* (2011, Բեռլին, Գերմանիա), *Kultursommer Nordhessen* (Կասսել, Գերմանիա), *Young Classic Bratislava* (2010, Վրոցլավ, Լեհաստան), Լյուդվիգ վան Բեթհովենի անվան Զատկի (2017, Վարշավա, Լեհաստան), MIDEA (2015 թ., Կանն, Ֆրանսիա) և մի շարք այլ միջազգային փառատոների, բազմիցս հանդես եկել որպես միջազգային հեղինակավոր միջոցառումների պաշտոնական նվագախումբ՝ Արամ Խաչատրյանի անվան մրցույթ (2007-ից մինչ օրս), *Musica Riva* փառատոն (2013, Ռիվա դել Գարդա, Իտալիա), Ֆրեդերիկ Շոպենի անվան երիտասարդ դաշնակահարների 9-րդ մրցույթ (2014, Ֆոշան, Չինաստան) և *Al Bustan* փառատոն (2014, 2015, 2016, Բեյրութ, Լիբանան), Մալթայի միջազգային երաժշտական փառատոն (2018, Վալետա, Մալթա) և այլն:

Նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ս. Սմբատյանի նախաձեռնությամբ կոլեկտիվը մշտապես հանդիսատեսին է ներկայացնում երաժշտական նորարարական հետաքրքիր նախագծեր և համերգաշարեր, այդ թվում՝ «24/04» համաշխարհային սիմֆոնիկ նվագախումբ, «Անկախության սերունդ» համահայկական երգչախումբ և նվագախումբ, Համահայկական նվագախումբ և երգչախումբ, *Hollywood Non-Stop*, *Cartoon Non-Stop*, «Ճանապարհորդություն դեպի...», «Սիմֆոնիկը հանդիպում է...» և այլն: Իսկ 2018 թ. նոյեմբերից Ս. Սմբատյանի նախաձեռնությամբ նվագախումբն իրականացնում է յուրօրինակ կրթական «Դաս Ա» նախագիծը, որի նպատակը ժամանակակից ինտերակտիվ և ստեղծարար մեթոդներով երիտասարդ սերնդի ուղղորդումն է դեպի դասական արվեստ: Նախագիծն անցկացվում է ՀՀ կրթության և գիտության և մշակույթի նախարարությունների աջակցությամբ, որը հավանության է արժանացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և կառավարության կողմից:

2011 թ. Sony ձայնագրման ստուդիայում նվագախումբը Ս. Սմբատյանի ղեկավարությամբ թողարկել է անդրանիկ “Music is the Answer” (թարգմ.՝ «Երաժշտությունն է պատասխանը») ձայնասկավառակը, որում ընդգրկվել են Պ. Չայկովսկու «Սերենադը» լարայինների համար, Դ. Շոստակովիչի Կամերային սիմֆոնիան և Էդուարդ Հայրապետյանի «Կորուսյալ օդապարիկը» լարային նվագախմբի համար (1998):

Նվագախմբի կազմում հաջողությամբ գործում են տարբեր կամերային անսամբլներ, այդ թվում՝ Արգար Մուրադյանի անվան դուետը, Օտրի տրիոն, Ալ. Հարությունյանի անվան փայտափողային-դաշնամուրային քառյակը, Ղազարոս Սարյանի անվան լարային քառյակը, Պղնձափողային անսամբլը:

Նվագախումբն արժանացել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի սահմանած «Հայկյան-2012» մրցանակին՝ «Երիտասարդության շրջանում մշակութային արժեքների լավագույնս ներկայացրած կազմակերպություն» անվանակարգում, իսկ «Հայկյան-2015»-ը նվագախմբին շնորհվել է հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ:

2009 թ. Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբն անդամակցել է Եվրոպայի ազգային երիտասարդական նվագախմբերի ֆեդերացիային (EFNYO), իսկ 2013 թ. հունիսից առ այսօր Երաժշտական գործակալների միջազգային ասոցիացիայի (International Artist Managers' Association - IAMA) անդամ է:

Ստեղծագործական սերտ հարաբերություններ են ձևավորվել սիմֆոնիկ նվագախմբի և բեմի աշխարհահռչակ վարպետներ Վալերի Գերգիևի, Քչիշտոֆ Պենդերեցկու, Վլադիմիր Սպիվակովի, Մաքսիմ Վենգերովի, Դենիս Մացունի, Վադիմ Ռեպինի, Վահագն Պապյանի, Բորիս Բերեզովսկու և այլ նշանավոր արվեստագետների միջև:

Նվագախումբն ակտիվ համագործակցում է Հայաստանում գործող պետական երգչախմբերի, այդ թվում՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի, «Հովեր» պետական կամերային երգչախմբի, Հայաստանի պետական կամերային երգչախմբի հետ: Առանձնահատուկ նշենք ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի և նրա ղեկավարած Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հետ բեղմնա-

վոր համագործակցությունը, որը սկիզբ է առել նվազախմբի ստեղծման առաջին իսկ օրից և շարունակվում է առ այսօր⁸:

Նվազախումբը սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ: 2013 թ. հոկտեմբերի 15-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր միջոցառման ընթացքում Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ ԳԱԱ արվեստի վաստակավոր գործիչ պրոֆեսոր Արամ Սաթյանի երաժշտությամբ և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանի խոսքերով գրված ՀՀ ԳԱԱ օրհներգի⁹ առաջին կատարումը վստահված էր Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբին և Հայաստանի պետական երիտասարդական նվազախմբին՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, որն «...արժանացավ նրբաճաշակ ունկնդիրների ջերմ ընդունելությանը»¹⁰: Իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի գեղարվեստական խորհրդի անդամ է: Ի վերջո, նվազախումբը թերևս այն եզակի կոլեկտիվներից է, որի և՛ գեղարվեստական ղեկավարը (Սերգեյ Սմբատյան), և՛ տնօրենը (Սարգիս Բալբաբյան) արվեստագիտության թեկնածուներ են, որոնք իրենց թեկնածուական ատենախոսությունները պաշտպանել են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում գործող արվեստագիտության ոլորտում գիտական աստիճանաշնորհման միակ՝ Օ16 մասնագիտական խորհրդում:

Այսպիսով, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվազախմբի գործունեությունը, անկասկած, նպաստել է հանրապետության երաժշտական կյանքի աշխուժացմանը, հատկապես երիտասարդների շրջանում դասական երաժշտության հանդեպ մեծ հետաքրքրության առաջացմանը, միջ-

⁸ Տե՛ս **Բալբաբյան Ս.**, Սերունդների խաչմերուկում. Մանստրո Հովհաննես Չեքիջյանը և Հայաստանի պետական երիտասարդական նվազախումբը, Հովհաննես Չեքիջյան – 85, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (26-27 սեպտեմբերի, 2014), Նստաշրջանի նյութեր, Ե., 2014, էջ 170-176:

⁹ ՀՀ ԳԱԱ օրհներգի մասին տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ հիմնը (Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Ե., 2014, էջ 353-360):

¹⁰ Նույն տեղում, էջ 353:

ազգային մշակութային երկխոսության ամրապնդմանը և հայ երաժշտության հանրահռչակմանը: Նվագախումբն այսօր Հայաստանի առաջատար կոլեկտիվներից է, որը կարևոր դեր է կատարում Հայաստանի Հանրապետության երաժշտական կյանքում: Ուստի լիահույս ենք, որ մոտ ապագայում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն իր ուրույն տեղը կզբաղեցնի նաև համաշխարհային նվագախմբային կատարողական արվեստի որմնախորշում այնպիսի աշխարհահռչակ նվագախմբերի կողքին, ինչպիսիք են Լոնդոնի սիմֆոնիկ նվագախումբը (London Symphony Orchestra), Բեռլինի պետական նվագախումբը (Staatskapelle Berlin), Բավարիայի պետական նվագախումբը (Bayerisches Staatsorchester) և այլն՝ անմար պահելով հայ երաժշտական մշակույթի կանթերը...

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО СИМФОНИЧЕСКОГО ОРКЕСТРА

АРТЕМЯН Л.Р.

Резюме

Деятельность Армянского государственного симфонического оркестра протекала в следующих направлениях: организация концертов и фестивалей, инициирование разнообразных музыкальных инновационных проектов, формирование разнородных камерных составов.

Оркестр под управлением художественного руководителя и главного дирижера, заслуженного артиста РА Сергея Смбатяна имел около 550 концертов как в Армении, так и в России, Франции, Германии, Китае, Нидерландах, Бельгии, Испании, Ливане, Австрии, Польше и других странах. Оркестр выступал в таких престижных залах, как *Opera Garnier* (Париж), *Konzerthaus* (Берлин), *Dr. Anton Philipsaal* (Гаага), Зал им. Чайковского и Большой зал консерватории им. Чайковского (Москва), *Palais des Beaux-Arts* (Брюссель), *Musikverein* (Вена), *Elbphilharmonie* (Гамбург), а также организовал ежегодный фестиваль Армянского композиторского искусства (с 2010 года), ежегодный фестиваль Арама Хачатуряна (с 2013 года), фестиваль искусств живых легенд-композиторов – Гии Канчели (2017), Кшиштофа Пендерецкого (2018), международный фестиваль “Армения” (2017, 2018).

MAIN DIRECTIONS OF THE ARMENIAN STATE SYMPHONY ORCHESTRA'S CREATIVE ACTIVITIES

L. ARTEMYAN

Abstract

Activities of the Armenian State Symphony Orchestra were developed in the following directions: organization of concerts and festivals, initiating a range of musical innovative projects, formation of chamber ensembles.

The Orchestra, under the direction of the artistic director and chief conductor, Honored Artist of the Republic of Armenia Sergey Smbatyan, delivered about 550 concerts not only in Armenia, but also in Russia, France, Germany, China, Netherlands, Belgium, Spain, Lebanon, Austria, Poland and other countries, in prestigious halls, such as Opera Garnier (Paris), Konzerthaus (Berlin), Dr. Anton Philipszaal (The Hague), Hall after Tchaikovsky and the Great Hall of the Conservatory after Tchaikovsky (Moscow), Palais des Beaux-Arts (Brussels), Musikverein (Vienna), Elbphilharmonie (Hamburg), as well as organized the annual festival of Armenian Composers Art (since 2010), the annual Aram Khachaturian festival (since 2013), the festival of art of Alive Legend Composers - Gia Kancheli (2017), Krzysztof Penderecki (2018), the international festival "Armenia" (2017, 2018).

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱԹԵՆԻԿԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա.Ե.

Հայկական և հյուսիսկովկասյան էպիկական ավանդույթների համընկնումները նկատվել են արդեն XIX դարում. Դ. Լավրովը գրել է «Վիպասանքի» Սաթենիկի և նարթական էպոսի մեծ հերոսուհու՝ Սաթանայի համապատասխանության մասին¹, իսկ Վ. Միլլերը՝ քննարկել ժայռերում շրջաթափված կովկասյան և հայկական հերոսների առասպելները²: Ավելի ուշ Ժ. Դյումեզիլը նշել է հայկական Արտաշեսի և օսական Ուրուզմագի՝ խնջույքի ժամանակ դավադրության³, հայ ու օսական երկվորյակների՝ ծովը/լիճը մտնելու դրվագների⁴ և մի քանի այլ համապատասխանություններ: Իսկ Վ. Աբաևը կանխադրել է հայ-օսական «Վարազման և Սաթենիկ» վիպական ցիկլի գոյությունը, որի սյուժեներն ու մոտիվներն են հասել մեզ օսական «Ուրուզմագ և Սաթանա» վեպում⁵:

Հայկական և հյուսիսկովկասյան վիպական ավանդույթներն առաջին անգամ համակարգված ձևով համեմատվել են մեր աշխատություններում⁶:

¹ **Лавров Д.** Заметки об Осетии и осетинах (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. III, раздел I, Тифлис, 1883, с. 189).

² **Миллер В.Ф.** Кавказские предания о великанах, прикованных к горам. Фольклор народов Северного Кавказа. Тексты и исследования, М., 2008, с. 826-837.

³ **Дюмезиль Ж.** Осетинский эпос и мифология, М., 1976, с. 50-55.

⁴ **Dumézil G.** Le roman des jumeaux, Paris, 1994, p. 120-121.

⁵ **Абаев В.И.** Нартовский эпос (Известия северо-осетинского научно-исследовательского института, т. X, вып. I, Дзауджикау, 1945, с. 43).

⁶ **Պետրոսյան Ա.**, Արամի առասպելը համեմատական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Ե., 1997, **նույնի՝** Հայկական էպոսի հնագույն ակունքները, Ե., 1997, **նույնի՝** Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը. Հայ ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Ե., 2012, էջ 8-51, **նույնի՝** Армянский эпос и мифология, Е., 2002, **նույնի՝** Армянский Мхер, западный Митра и урартский Халди (Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Ե., 2004, էջ 42-60), **նույնի՝** Некоторые армяно-западнокавказские эпические параллели, Эволюция

Հայ և օսական վիպական ընդհանրությունների վերաբերյալ մանրամասն գրել է Տ. Դալայանը, որը բացահայտել է մի շարք կարևոր իրողություններ⁷: Հայկական և կովկասյան որոշ վիպական ընդհանրությունների, հատկապես հինարևելյան առասպելաբանական կապերի համատեքստում, անդրադարձել է Հ. Հմայակյանը⁸: Այդ աշխատություններում քննարկվել է նաև Սաթենիկի և կովկասյան էպոսների՝ համանման անուններով հերոսուհիների կապերի խնդիրը:

Սաթենիկ թագուհու պատմությունը պատմվում է Մովսես Խորենացու գրքից հայտնի (Ա, Լ. Բ, խթ-կա) հին հայկական «Վիպասանք» էպոսի վերջին մասում: Խորենացին ներկայացնում է պատմական իրադարձություններ՝ երբեմն էպոսից մեջբերելով երգեր և չափածո հատվածներ, հաճախ ռացիոնալ բացատրություններ տալով առասպելական դրվագներին («այլաբանությունը ճշմարտելով», Բ. խթ): «Վիպասանքը», ինչպես և մյուս հայկական էպոսները, բաղկացած է մի քանի «ճյուղերից», որոնք պատմում են հայ թագավորների մի քանի սերունդների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մասին, որտեղ Սաթենիկը հանդես է գալիս Արտաշեսի ճյուղում: Ահա ինչ կարելի է այստեղ ներկայացնել նրա մասին էպոսի մեզ հասած դրվագներից:

эпической традиции: к 80-летию академика АН Абхазии Ш.Х. Салакая, Сухум, 2014, с. 192-195, **նույնի՝** Структурные связи армянских и осетинского нартского эпосов (Армянский народный эпос и всемирное эпическое наследие, IV, Е., 2014, с. 47-53), **նույնի՝** The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington DC, 2002, **նույնի՝** The Indo-European *H₂ner(t)-s and the Danu Tribe (Journal of Indo-European Studies, 2007, p. 297-310).

⁷ **Դալայան Տ.**, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, N 2, էջ 191-213], **նույնի՝** «Սասնա ծռերի» և օսական «նարթյան դիցավեպի» համեմատական քննության ուրվագիծ. Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ավանդությունը, Ե., 2004, էջ 82-87, **նույնի՝** Օսական Վարխագի և հայկական Վահագնի մասին (Հայ ժողովրդական մշակույթ XII, էջ 37-39, Ե., 2004), **նույնի՝** Դրվագներ հայ-ալանական դիցանվանական առնչություններից (Հայ ժողովրդական մշակույթ XIII, Ե., 2004, էջ 44-54), **նույնի՝** On the Character and Name of Caucasian Satana (Sat'enik) (Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 1, 2006, p. 239-253):

⁸ **Հմայակյան Հ.**, Սոսանվեր Անուշավանը և նրա կովկասյան ու խուդիական զուգահեռները. Մերձավոր Արևելք II. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Ե., 2005, էջ 28-34, **նույնի՝** Խուդիական Ša(w)uš(k)a աստվածուհու անվան և կերպարի դրսևորումները հայկական առասպելական և լեզվական նյութում (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Ե., 2011, էջ 239-250):

Արտաշեսի արքայության ժամանակ ալանները, միավորված մյուս կովկասյան լեռնցիների և Վիրքի կեսի հետ, հսկայական ամբոխով հարձակվում են Հայաստանի վրա: Հայերը ճակատամարտում հաղթում են նրանց, իսկ ալանական արքայազնը գերվում է: Ալանները նահանջում են և բանակում Կուրի հյուսիսային ափին, իսկ Արտաշեսը ճամբար է դնում հակադիր ափին: Ալանական արքայադուստր Սաթենիկը կամ Սաթինիկը (անունն ավանդված է երկու ձևով) գետի բարձրադիր ափից դիմում է Արտաշես արքային բանաստեղծական խոսքով՝ խնդրելով վերադարձնել իր եղբորը, քանի որ «ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել, եւ թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել»: Լսելով արքայադուստր «իմաստուն խոսքերը»՝ Արտաշեսը «ցանկանում» է կույսին և մարդ է ուղարկում ալանների թագավորի մոտ, որ Սաթենիկին կնության տա իրեն: Թագավորը մերժում է, և այնժամ Արտաշեսը, ձի հեծնելով, անցնում է գետը, արկանում աղջկան և հասցնում իր ճամբարը: Նկարագրվում է Արտաշեսի ու Սաթենիկի հարսանիքը՝ «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»: Նա դառնում է արքայի կանանցից առաջինը և արքայազնների մայրը: Այս պատմությունից որոշ չափով կտրված՝ ասվում է, որ Սաթենիկը վիշապազուններ է սիրել և «տենչացել» վիշապազուն Արգավանին՝ թագավորության երկրորդ գահի տիրոջը:

Մեր թեմայի համար կարևոր է նաև Արտաշեսի և Սաթենիկի որդու՝ Արտավազդ արքայի կերպարը: Պատմվել է, որ Արգավանը դավ է լարել Արտաշեսի դեմ «ի տաճարին վիշապաց»: Արտավազդը սպանում է Արգավանին, ոչնչացնում նրա տոհմը և ինքը դառնում երկրորդը արքայից հետո: Նրա մասին պատմել են, որ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և դև փոխանակ եղին»: Երբ Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորության համաձայն, շատ մարդ է զոհվում, Արտավազդը բողոքում է՝ «Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»: Ի պատասխան՝ Արտաշեսն անիծում է նրան, որ որսի ժամանակ բռնվի քաջքերի կողմից և զնդանվի Մասիսի վիհում: Եվ պատմել են, որ նա շղթայված է այնտեղ մի քարանձավի մեջ. երկու շուն կրծում են նրա կապանքները, նա ջանում է դուրս գալ և վերջ

տալ աշխարհին, բայց դարբինների կռանահարության ծայնից շղթաներն ամրանում են (Խորենացի Ա, լ. Բ, խը, ծ, կա):

Կովկասյան էպոսների մեծ հերոսուհու՝ Սաթանա/Սաթանեյի (հանդես է գալիս տարբերակային ձևերով՝ Սաթանեա, Սաթանեյ-Գուաշա, Սելա Սաթա և այլն), ինչպես և Սաթենիկի կյանքի նշանավոր դրվագը կարելի է կոչել «գետափնյա արկած»: Հայոց էպոսում Արտաշեսը ձիով անցնում է գետը և առևանգում Սաթենիկին, իսկ կովկասյաններում՝ նարթերի հովիվը կամ մի ուրիշ կերպար, տեսնելով գետափին (կիսա)մերկ (լողացող) հերոսուհուն, բեղմնավորում է քարը կամ բաց թողնում իր «նետը» նրա ուղղությամբ: Նետի թռիչքն ուղեկցվում է փոթորկով, ամպամածությամբ, որոտով, կայծակով և երկրաշարժով⁹: Նետը խոցում է մի քար, որի վրա առաջանում է հերոսի (օս. Սոսլան, աղըղ. Սոսրուկո, աբխազ. Սասըկվա) սաղմը: Որոշ տարբերակներում հերոսուհին ինքն է հղիանում «նետ»-սերմից:

Օսական էպոսում Սաթանայի ամուսինն է Ուրուզմագը: Չնայած որոշ տարբերություններին (նա Սաթանայի եղբայրն է), նա պարզորոշ համապատասխանում է Արտաշեսին. նա նարթերի՝ էպոսի առասպելական հերոսների ցեղի առաջնորդն է, իսկ Արտաշեսը՝ հայոց արքան, հմմտ. և Դյումեզիլի նկատած՝ Արտաշեսի և Ուրուզմագի դեմ նյութված դավի դրվագների նմանությունը: Ակնհայտ է և հաջորդ սերնդի հերոսների՝ Արտավազդի և Սոսլան/Սոսրուկոյի համապատասխանությունը: Եթե առաջինը զնդանված է լեռնային քարայրում, որտեղից նա ձգտում է ազատվել («վերածնվել» մահվան աշխարհից), ապա երկրորդը ծնվում է քարից (այսինքն, կովկասյան հերոսի ծնունդը համապատասխանում է հայ հերոսի վերածնությանը)¹⁰: Սոսլան-Սոսրուկոն Սաթանա/Սաթանեյի նշանավոր «չծնած» որդին է, ինչպես մանուկ հասակում դևով փոխարինված Արտավազդը՝ Սաթենիկի: Սոսլանը թաղվում է կենդանի և երբեմն դուրս է գալիս գերեզմանից նարթերին օգնելու համար: Իսկ Սոսրուկոն, ինչպես Արտավազդը, ջանում է ազատվել գետնի տակից: Ընդ որում, նրա գալուստը,

⁹ Տե՛ս, օրինակ, **Ардзинба В.Г.** Нартский сюжет рождения героя из камня (Древняя Анатолия, М., 1985, с. 139):

¹⁰ Կովկասյան ավանդույթներում քարից ծնվող և լեռներում զնդանված հերոսները տարբեր կերպարներ են: Հայոց մեջ չկան առաջին տիպի հերոսներ՝ նրանց փոխարինում են երկրորդ տիպի հերոսները (Արտավազդը և «Սասնա ծռերի» Փոքր Միերը):

ինչպես և Արտավազդինը, պետք է հանգեցնի աշխարհի կործանմանը (երկիրը կդադարի պտղաբերել)¹¹:

Սաթենիկը սիրահարվում է Արգավանին՝ վիշապագունների առաջնորդին: Խորենացին (Ա. լ) մեջբերում է մի դժվար մեկնաբանելի հատված «Վիպասանքից» նրա՝ Արգավանի սերը տենչալու մասին: Եվ Արտավազդը, որ փոխարինվում է դևով, հենց «վիշապային» մի կերպար է¹², վերակազմության մեջ՝ Արգավանի որդին¹³: Իսկ արխագական էպոսում Սաթանեյ Գուաշան («տիկինը») տենչում է հանդիպել հովվին՝ «նույնիսկ երազում այդ հանդիպումն էր տեսնում»¹⁴: Սոսրուկո/Սասրըկվայի հայրը, ով էլ որ նա լինի, նարթերի հովիվը կամ որևէ այլ մեկը, հանդես է գալիս որպես խթոնիկ, օձային կերպար¹⁵: Արգավանի հետ փաստորեն նույնանուն՝ ռուսական տառադարձմամբ՝ Аргванэ, Аргун, երբեմն Аргунэ, Аргонезж, անգլ. Argwana, մի հերոս աղբյուրական տարբերակներում հանդես է գալիս որպես մեծ և հզորագույն մի այր, նարթ, կամ նարթերի հակառակորդ՝ նա փախցնում է Սաթանեյին, դառնում Սոսրուկոյի հայրը, որն, ինչպես և Արգավանը, վերջում պատժվում է՝ սպանվում¹⁶:

«Վիպասանքը» պատմական էպոս է: Դեպքերը պատմվում են վիպական ձևով, կան ակնհայտ առասպելական տարրեր՝ Տիգրան Երվանդյան արքան սպանում է մարական արքա Աժդահակին (սա համապատասխանում է իրանական առասպելաբանության Աժի Դահակա օձ-վիշապին, որին սպանում է հերոս Թրաետաոնան) և նրա նրա զարմը՝ վիշապագուն-

¹¹ **Дюмезиль Ж.** Скифы и нарты, М., 1990, с. 29, 84-90; Кабардинский фольклор, М.-Л., 1936, с. 30-33; Нарты: адыгский героический эпос, М., 1974, с. 137.

¹² **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 148:

¹³ **Պետրոսյան Ա.**, Հնդեվրոպական անագրամը Խորենացու «զարտախոր խաւարտ» հատվածում (տպագրության մեջ):

¹⁴ Приключения нарта Сасрыквы и его 99 братьев, Сухуми, 1988, с. 29.

¹⁵ **Արձինբա В.Г.**, նշվ. աշխ., էջ 132-133, 143:

¹⁶ **Дьячков-Тарасов Н.** Абадзехи (историко-этнографический очерк). Записки Кавказского отдела императорского русского географического общества, кн. 22, вып. 4, Тифлис, 1902. http://www.vostlit.info/Texts/Dokumenty/Kavkaz/XIX/1840-1860/Djachkov_Tarasov_N/text4.htm; **Гадагатль А.М.** Героический эпос «Нарты» и его генезис, Краснодар, 1967, с. 273-278; **Colarusso J.** Nart Sagas from the Caucasus, Princeton/Oxford, 2002, p. 34-43; Արգավանի և Արգվանայի նույնացման վերաբերյալ տե՛ս **Russell J.** Argawan: the Indo-European Memory of the Caucasus (Journal of Armenian Studies, 2006, vol. VIII, 2, p. 110-147).

ներին, բնակեցնում Մասիսի ստորոտին, նույն լեռան մի քարայրում է գնդանվաճ Արտավազդը և այլն, բայց բազում այլ իրադարձություններ՝ Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը, ալանների հարձակումը և գործող անձինք՝ հատկապես Արտաշեսը և Արտավազդը պատմական են (այդ անունները մ.թ.ա. II դ. Արտաշեսյան արքայատոհմի իրական արքաների անուններ են): Ալանների՝ Հայաստանի վրա հարձակման վերաբերյալ գրել են Հովսեփոս Փլավիոսը, Դիոն Կասիոսը, Տակիտոսը, Խորենացին և այլք: Համարվում է, որ ալաններն առաջին անգամ հայտնվել են Անդրկովկասում և Հայաստանում մ.թ. I դ. (մ.թ. 35 և 72 թթ.)¹⁷: Ահա թե ինչ է գրում Հովսեփոս Փլավիոսը ալանների՝ երկրորդ արշավանքի ժամանակ Մարաստանից հետո Հայաստանն ասպատակելու վերաբերյալ («Հրեական պատերազմի մասին» VII, 7, 4). «...Նրանք շարունակեցին իրենց ամայացնող արշավանքը մինչև Հայաստան: Այսպես արքան էր Տիրիդատեսը (Տրդատ I – Պ.Ա.), որը, թեպետ և դուրս եկավ նրանց դեմ և ճակատամարտ փվեց, բայց և ինքը հազիվ կենդանի գերի չընկավ: Նրանցից (ալաններից) մեկը հեռվից նրա վրա նետեց արկանը և կփախցներ նրան կովի դաշտից, եթե արքային չհաջողվեր ժամանակին սրով կտրել պարանը և այդպիսով փրկվել: Եվ ալանները, այդ ճակատամարտից ավելի մոլեգնած, ամայացրին ողջ երկիրը և երկու թագավարություններից թալանված գերիների ու ավարի հսկայական զանգվածով վերադարձան հայրենիք»¹⁸:

Ալանական արքայադստեր՝ Արտաշեսի կողմից առևանգվելու դրվագը, որը, ի միջի այլոց, լավ զուգահեռ ունի «Շահնամեում» (Սուիրաբի և Գուրդաֆարիդի պատմությունը)¹⁹, հավանաբար, ստեղծվել է այս պատմության հիման վրա՝ հայոց արքայի արկանումը և փրկությունը վերածվել է ալանական արքայադստեր արկանման և առևանգման²⁰: Էպոսում արքաների ծննդաբանությունը և նրանց հաջորդականությունը, ինչպես հա-

¹⁷ Скрипкин А.С. О времени появления аланов в Восточной Европе и их происхождении (Историко-археологический альманах, 7, Армавир, 2001, с. 15-40). <http://www.kro raina.com/alan/skripkin.html>.

¹⁸ http://lib.ru/POEEAST/FLAWI/flavii_voina.txt; <https://www.gutenberg.org/files/2850/2850-h/2850-h.htm#link2HCH0007>. տե՛ս նաև Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. է, Ե., 1975, էջ 165:

¹⁹ Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. է, էջ 169: Տեսականորեն հնարավոր է, որ սա հայկական ազդեցության արդյունք լինի, բայց և չի բացառվում, որ արկանով աղջիկ առևանգելու մոտիվը հին ակունքներ ունենա իրանական ավանդույթում:

²⁰ Հմմտ. Халатьянц Г.А. Армянский эпос в "Истории Армении" Моисея Хоренского, М., 1896, с. 244, Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. է, էջ 164-178:

ճախ լինում է, խախտված է՝ շատ կերպարներ իրենց վրա են վերցրել այլ, հերոսների հատկանիշներ: Այսպես, վիպական Արտաշեսը, որը կառուցում է Արտաշատը, ակնհայտորեն Արտաշես I-ն է (մ.թ.ա. 189-160), որի կերպարը խառնվել է Արշակունյաց արքայատոհմի առաջին արքայի՝ Տըրդատ I-ի հետ (մ.թ. շուրջ 52-88), որը վերակառուցել է Արտաշատը և կռվել ավանների դեմ: Արտաշեսի որդին՝ Արտավազդը, հավանաբար, Արտավազդ II-ն է, Տիգրան Մեծի որդին (մ.թ.ա. 56-34)²¹: Իսկ Տրդատ I-ի արկանման պատմությունը Խորենացու երկում պատմվում է Տրդատ III-ի մասին (տե՛ս ստորև): Այսպիսով, կարելի է ասել, որ «Վիպասանքում» իրար են խառնվել մի քանի՝ Արտաշես և Տրդատ անունով արքաների կերպարներ²² (Տրդատի որոշ գործեր անցել են Արտաշեսին՝ ժողովրդի կողմից սիրված մեծ արքայի կերպարը մոռացության է մատնել Տրդատին, կամ Տրդատին տրվել է Արտաշես պատվավոր անունը)²³:

Պատմական են և «Վիպասանքին» հաջորդած երկու էպոսների՝ «Պարսից պատերազմի» և «Տարոնի պատերազմի» հերոսները, որոնցում պատմվում է, համապատասխանաբար, Արշակունիների իշխանության վերջին շրջանի և հետարշակունյաց դարերի Տարոնի իշխանների կոիվների մասին: Պատմական կերպարների առասպելականացումը, ակնհայտորեն, տեղի է ունեցել հերոսների մահից հետո, պատմության հաջորդ փուլերում: Առասպելական Արտավազդը մտել է նաև վրացական և օսական ավանդույթներ, ընդ որում, օսական Արտավազդը փոխառված է թվում ուղիղ հայկական ավանդույթից, առանց վրացական միջնորդության՝ հայ և օսական հերոսներին բնորոշ գծերը բացակայում են վրացական կերպարի մեջ²⁴: Վրացական և օսական էպոս են մտել նաև հայկական քաջքերը (վրաց. *քաջի*, օս. *կաձի*, *կաջի*)²⁵, և, այս դեպքում ևս, օսականի վրա երևում

²¹ Պետրոսյան Ա., Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ (ՊԲՀ, 2006, N 2, էջ 273-274):

²² Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 116, 119-124:

²³ Նույն տեղում, էջ 118:

²⁴ Dalalyan T. On the Character and Name..., p. 249. Հայկական և օսական այս կերպարների մասին տե՛ս Gevorgian N. On the Ossetic Legend About Art' awyz. Iran and the Caucasus 11 (2007), p. 101-105:

²⁵ Քաջքերի անվանումը բնիկ հայերեն՝ հնդեվրոպական ծագման բառ է՝ «հաջող», «ընտիր», «խիզախ», նշանակություններով, որն անցել է առասպելական ոգիների մի դասի՝ հմմտ. որոշ ոգիների տաբուացված անվանումները՝ «մեզնե լավեր», «մեզանե աղեկներ»: Նրանք նախապես կազմել են «քաջ» Վահագն աստծու զորքը,

է հայկական ուղղակի, չմիջնորդավորված ազդեցությունը (նրանք բռնում են Սոսլանին որսի ժամանակ, ինչպես քաջքերը Արտավազդին, ինչը չկա վրացական նյութում)²⁶: Հայկական առասպելները կարող էին Կովկաս հասցնել և՛ Հայաստան արշաված ալանական ռազմիկները, և՛ Կովկաս տեղափոխված հայերը: Չէ՞ որ շատ օսական տոհմեր իրենց համարում են հայոց արքայազնի (Tagawer, Tagaur, հմմտ. հայ. *թագաւոր*), իսկ ժողովուրդը՝ հայերի և տեղացիների ժառանգներ²⁷ (այդ մասին տե՛ս ստորև):

Այսպիսով, կովկասյան նարթական էպոսներում հայոց «Վիպասանքի» Սաթենիկի ցիկլի ընդհանուր անուններն ու անվանումները (Արտավազդ, Արգավան, քաջքեր), փոխառված են հայկականից: Շեշտենք, որ այս անունները հայտնի են հայոց մեջ շատ ավելի վաղ ժամանակներից՝ Արտավազդը հայ արքայի պատմական անուն է, որը ոչ մի հիմք չունի վրացական և կովկասյան ավանդույթներում, քաջքերի ստուգաբանությունը բնիկ հայկական է, Արգավանն էպոսի կենտրոնական դեմքերից է, հայտնի պատճառով՝ իրանական անունով (նա ծագումով մար է), իսկ Արգվանան միայն մի քանի աղբյուրական պատումներում հանդիպող էպիզոդիկ կերպար է, որի անունը ոչ մի բացատրություն չունի²⁸: Սաթանայի ամուսնու Wryzmæg/Urzmæg (Վըրըզմագ/Ուրուզմագ) անունը ալանական-օսական չէ, այլ ծագում է իրանական Վարազման անունից՝ ավանդված միայն հայկական աղբյուրներում (այս անունը կրել են Գարդմանի և Աղվանքի

իսկ հետագայում, հատկապես քրիստոնեական դրաշխանում վերածվել չար ոգիների և որպես այդպիսիք՝ անցել վրացական և օսական ավանդույթներ: Օս. *կաճի/կաջին*, ինչպես ցույց է տալիս - *ի* վերջավորությունը, պետք է որ փոխառված լինի վրացական միջնորդությամբ: Վրացական էպոսում հենց քաջիներն են բռնում Ամիրանին՝ Արտավազդի վրացական համապատասխանությանը (քաջիները կարևոր դեր են կատարում նաև Ռուսթավելու պոեմում): Այս հարցերի շուրջ տե՛ս **Petrosyan A.** From Armenian Demonology: The K'ajs. Journal of Indo-European Studies 46 (2018), 206-218.

²⁶ **Dalalyan T.** On the Character and Name..., նշվ. աշխ., էջ 248-249.

²⁷ **Гутнов Ф.Х.** Генеалогические предания осетин как исторический источник, Орджоникидзе, 1989, с. 7-10 et passim: Օսերին տեղացիների և Հայաստանից ու Վրաստանից տարված գերիների հետնորդներ է ներկայացնում և վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին, տե՛ս **Цулая Г.В.** Жизнь кавказских царей, М., 1979, с. 25: Այս մասին տե՛ս <http://galgai.com/forum/archive/index.php/t-8150.html>: Այս տվյալները հաստատվում են նաև գենետիկական մակարդակով՝ տե՛ս ստորև:

²⁸ Արգվանայի՝ Արգավանից փոխառվելու մանրամասն հիմնավորումը տե՛ս **Russell J.** Argawan..., p. 139-141:

Միհրանյան իշխանների չորս ներկայացուցիչներ VII-VIII դդ.)²⁹, որի վերջավորությունը փոխարինվել է օսական տարածված -æg ածանցով³⁰: Եվ Ուրուզմագի անունը ևս, այսպիսով, փոխառված է հայկական իրականությունից: Ուրեմն, Սաթանայի անունը նույնպես կարող էր փոխառվել հայերենից: Հատկանշական է, որ որոշ արխագական տվյալների համաձայն, Սաթանեյ-գուաշան սերում էր Հայխուզ տոհմից, որը, ըստ արխագ հայագետ Գուրամ Գումբայի, պետք է կապվի *հայ* ցեղանվան հետ (անձնական հաղորդում, 1990 թ.): Այսպիսով, եթե հայոց մեջ Սաթենիկը համարվել է ալանուհի, ապա արխագական ավանդույթում նրան, հավանաբար, հայկական ծագում են վերագրել³¹:

Սաթանա/Սաթանեյ անունը չունի ընդունված ստուգաբանություն³²: Իսկ հայերենում Սաթենիկը միանգամայն թափանցիկ անուն է, կազմված *սաթ* արմատից, *-ենի*, *-ենիկ* (նախորդի նվազականն է) ածանցով, ինչպես ունենք Նագենիկ/Նագինիկ, Արփենիկ, Վարսենիկ (համապատասխանաբար՝ *նագ*, *արփի* և *վարս* արմատներից)³³: Հրաչյա Աճառյանը, որն իր անձնանունների բառարանում տալիս է անվան այս ստուգաբանությունը,

²⁹ **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան (այսուհետև՝ ՀԱՆԲ), հ. Ե, Ե., 1962, էջ 64-65:

³⁰ **Абаев В.И.** Нартовский эпос, с. 25-26; **նույնի՝** Историко-этимологический словарь осетинского языка (այսուհետև՝ ИЭСОЯ), т. IV, М.-Л., 1989, с. 127-128:

³¹ **Петросян А.Е.** Армянский эпос и мифология, с. 181.

³² ИЭСОЯ, т. III, М.-Л., 1979, с. 39-40, հմմտ. **Гуриев Т.А.** Наследие скифов и алан, Владикавказ, 1991, с. 32; **Челахсаев Р.** К вопросу о происхождении имени Шатана, Дарьял, 2007, 1. http://www.darial-online.ru/2007_1/chelehsaev.shtml: Առանձին պետք է նշվի Fritz S, Gippert J. Nartica I: The Historical Satana Revisited. Nartamongae. The Journal of Alano-Ossetic Studies, 2005, III, 1-2, 159-201 (<http://titus.uni-frankfurt.de/personal/jg/pdf/jg2000d.pdf>) աշխատությունը, որտեղ հեղինակները, ցուցադրելով լայն էրուդիցիա և բերելով բազում բնագրային մեջբերումներ հին հայկական և վրացական աղբյուրներից, չեն հիշում Աբեղյանի հիմնարար աշխատություններն ու Սաթենիկի՝ Աճառյանի մատնանշած ստուգաբանությունը և առանց հիմնավոր փաստարկների նոր մեկնաբանություն են առաջարկում նրա անվան համար (իրան. *xšaθriyān- > *sart'īān- > *sa t'ean- > sat'en-ik).

³³ ՀԱՆԲ, հ. Դ, Ե., 1948, էջ 342-343, *-ենի* վերջածանցի մասին տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը (ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 64): Ի միջի այլոց, Գ. Խալաթյանցը կարծում էր, որ Արտաշեսի ու Սաթենիկի անունները և նրանց ողջ պատմությունը ստեղծվել է Եսթերի աստվածաշնչյան գրքի հիման վրա (**Халатьянц Г.А.** Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского, М., 1896, с. 263-270): Աբեղյանի ջախջախիչ քննադատությունից հետո (1899) այդ գաղափարը դուրս եկավ շրջանառությունից. տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., հ. Է, էջ 165-172:

ծանոթ էր Ժորժ Դյումեզիլի աշխատանքին Սաթենիկի և օսական Սաթանայի կապի վերաբերյալ³⁴, և քանի որ Սաթենիկն ինքը, ըստ հայկական ավանդույթի, ավանական արքայադուստր էր, նա չի պնդում իր այս ստուգաբանությունը: Բայց ակնհայտ է, որ օտար թագուհին Հայաստանում կարող էր վերանվանվել հայկական անունով: Սաթանա/Սաթանեյի անվան՝ հայոց Սաթենիկից ծագելու վարկածը մեր օրերում առաջ է քաշել Տորք Դալայանը³⁵: Ստորև ներկայացնենք փաստարկներ այդ մեկնաբանության օգտին:

Կարո՞ղ է մի երկրի թագուհին դառնալ այլ ժողովուրդների առասպելների և էպոսի գլխավոր հերոսուհին: Մենք տեսանք, որ Սաթենիկի ցիկլի կերպարները (Արտավազդ, Արգավան, քաջքեր) անցել են Կովկաս, ընդ որում, որոշ դեպքերում ուղիղ հայկական ավանդույթից, առանց վրացական միջնորդության: Ուրեմն, Սաթենիկը ևս կարող էր անցնել Կովկաս՝ նույն ճանապարհով: Ընդհանրապես, մանավանդ հնդեվրոպական մշակույթներում, կանանց առասպելական անուններն ու կերպարները փոխառվել են ավելի հաճախ, քան արականները: Ներկայացնենք և մի ակներև զուգահեռ: Ասորեստանի պատմական թագուհի Շամմուրամատը (մ.թ.ա. շուրջ 811-805) վերածվել է դիցաբանական և էպիկական կերպարի ասորեստանցիների հակառակորդների և նրանց հարևանների՝ պարսիկների, հայերի և այլոց մեջ (հուն. Սեմիրամիս, հայ. Շամիրամ): Նրան է վերագրվել անցյալի նշանավոր հուշարձանների կառուցումը, որոնց ծագումն արդեն մոռացվել էր³⁶ (Բաբելոնի կախված այգիներ, Դարեհ I-ի բեհիստունյան արձանագրություն և այլն, հայոց մեջ՝ ուրարտական նշանավոր հուշարձաններ, Ժայռափոր արձանագրություններ, Վան քաղաքը, Մենուա արքայի ջրանցքը, տե՛ս Խորենացի Ա. Ժգ): Եվ հայոց ավանդական պատմության մեջ նա ուղղակի հանդես է գալիս որպես Ուրարտուի էպոնիմ³⁷:

³⁴ Dumézil G. Le dit de la princesse Satinik, Revue des études arméniennes, 1929, IX, f. 1, 41-53.

³⁵ Դալայան Տ., Հայոց վիպական Սաթենիկ թագուհու..., նույնի՝ On the Character and Name...:

³⁶ Շամիրամի վերաբերյալ, այս համատեքստում, տե՛ս Боржак И. Возникновение и отголоски легенды о Семирамиде (Древний Восток 3, Е., 1978, 212-217).

³⁷ Петросян А.Е. Армянский эпос и мифология, с. 188-189, նույնի՝ Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Ե., 2018, էջ 187-189:

Սիրո հետ կապված ավանդական հերոսուհիները, այսպես թե այնպես, կրկնում են սիրո հին դիցուհու կերպարը: Այդպիսին էր հայոց Աստղիկը, որը հեյլենիստական ժամանակներում նույնացվել էր Ափրոդիտեի հետ: Նա համարվում էր սիրուհին Վահագն աստծու (Ագաթանգեղոս, 809), որն իր հերթին նույնացվել էր Հերակլեսի և Արեսի հետ (այսինքն, Աստղիկ-Վահագն զույգը համապատասխանում է հունական Ափրոդիտե-Արես սիրային զույգին): Համարվում է նաև, որ Շամիրամը (որ սիրահարվել էր հայոց առաջնորդ Արա Գեղեցիկին), Աստղիկի պատմականացած, վիպական տարբերակն է³⁸: Նույնը կարելի է ասել և Սաթենիկի մասին: «Գետափնյա արկածը»՝ Սաթենիկի և Սաթանայի կերպարների բնութագրական դրվագը, համեմատելի է Աստղիկի մասին հայտնի լեգենդի հետ: Պատմել են, որ նա սիրել է լողանալ Արածանի գետում, Գուրգուռա կոչվող տեղում: Երիտասարդ տղաները ցանկացել են տեսնել նրա մերկությունը, և Աստղիկը, որպեսզի անտեսանելի մնա, իրեն ծածկել է մշուշով³⁹: Մոտիվների մի ողջ շարք՝ լողանալը գետափին, դիցուհու մերկությունը, նրան դիտելը, մշուշը, որոտի ակնարկը (հմտ. Գուրգուռա, որն ակնարկում է ամպի գոռոցը) և այլն, համապատասխանում են Սաթանա/Սաթանեյի առասպելին: Ընդ որում, Աստղիկը և Սաթանեյը կապված են մթնոլորտային երևույթների հետ (Աստղիկը մշուշ է բարձրացնում, իսկ Սաթանեյը՝ ցուրտ, անձրև և ձյուն)⁴⁰:

Ըստ Թովմա Արծրունու (Ա. ը), Արտաշես արքան Արտամետում կանգնեցնում է Աստղիկ դիցուհու կուռքը, որին պաշտում էր իր կին Սաթենիկը: Կերպարների նմանությունը և սիրո դիցուհու հատուկ պաշտամունքն ակնհայտ են դարձնում, որ Սաթենիկը «Վիպասանքում» ներկայացնում է Աստղիկի այնպիսի մի վիպական տարբերակ, ինչպիսին Շամիրամն է ազգածին ավանդության մեջ: Հատկանշական է և անունների նմանությունը՝ *աստ...իկ* և *սաթ...իկ*, նույն նվազական ածանցով, ինչը նույնպես խոսում է ասվածի օգտին: Ի միջի այլոց, արմատների հնչողության

³⁸ Մատիկյան Ա., Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 101, Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 253-254, Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. է, էջ 157-162, Petrosyan A. State Pantheon of Greater Armenia, p. 194:

³⁹ Սրվանձոյան Գ., Երկեր, հ. I, Ե., 1978, էջ 71-72:

⁴⁰ Պետրոսյան Ա., Արամի առասպելը..., էջ 110-116: Աստղիկի և Սաթանեյի այս հատկանիշների վերաբերյալ համապատասխանաբար տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. է, էջ 158, Инал-Ипа Ш.Д. Памятники абхазского фольклора, Сухуми, 1977, с. 17-18, 64:

մակարդակով սրանք կրկնում են հին միջագետքյան մեծ դիցուհու՝ Իշտարի (ասորեստանյան՝ Իստար) և սիրիական Աստարտեի անունները, որոնք նշանակալի դեր են կատարել Աստղիկի կերպարի ձևավորման գործում⁴¹։ Ինչպես ասվեց, Շամիրամը փոխարինել է հին բնիկ դիցուհուն՝ Աստղիկին, իսկ մյուս կողմից, ակնհայտ է, որ Շամիրամը՝ Նինվեի առասպելականացած թագուհին, պետք է շարունակեր տեղի մեծ դիցուհու՝ Նինվեի Իշտարի կերպարը⁴²։

Իշտարի բնորոշ ատրիբուտն է թանկագին քարերի ուլունքը։ Հին աքադական «Գիլգամեշ» էպոսում, ջրհեղեղից հետո, Իշտարը բարձրացնում է իր լաջվարդի (լագուրե) ուլունքը և երգվում, որ չի մոռանա այդ օրերը (պնակիտ XI, 162-165)⁴³։ Ուլունքը նաև Շամիրամի հայտնի ատրիբուտն էր, որով նա հմայել է տղամարդկանց⁴⁴։ Լեգենդի վերջում այն նետվում է ծովը, և հմայությունը վերանում է (պահպանվել է հին ասացվածքը՝ «ուլունք Շամիրամայ ի ծով», Խորենացի Ա. Ժը)։ Կարելի է կարծել, որ Սաթենիկը եղել է հին դիցուհու (Իշտար/Աստղիկ/Շամիրամ) մի մակդիրը՝ տրված նրան սաթեն ուլունքի համար, որը դարձել է նրա վիպական ժառանգի անունը։

Հայոց մեջ սաթը հանդես է գալիս որպես սևի խտացում, հմմտ. *սաթի նման սև*, արտահայտությունը⁴⁵ (համապատասխան անգլ. jet-black-ին)։ Եվ սաթն այստեղ պետք է հասկացվի ոչ թե որպես ռուս. янтарь, անգլ. amber «քարացած բրածո խեժ», այլ *սև սաթ, գիշեր, գիշերաքար, գազալ, խեժածուխ*, ռուս. гагат, гишер, черная яшма, гишма, անգլ. jet «սև սաթ»՝ «բրածո ածխի մածուցիկ տարատեսակը» նշանակությամբ։ Հատկանշական է, որ Սաթենիկ անունը, որը մեզանում սկսվել է կիրառվել նոր ժամանակներում, հաճախ տրվում է թուխ և սևահեր աղջիկներին (ըստ ազգագրագետ Նիկոլ Մարգարյանի անձնական հաղորդման)։ Հայաստանում հայտնի է եղել Կարսի շրջանի Օլթի (Ուլտիք) քաղաքի մերձակա վայրից հանվող սև սաթը (ըստ հնագետ Արամ Գևորգյանի սիրալիր տեղեկատվության, Հայաստանում, ինչպես և ողջ Մերձավոր Արևելքում, հնում տարածված է եղել միայն գիշերաքար-սաթը, իսկ «բրածո խեժ»-սաթը չի հան-

⁴¹ Տե՛ս, օրինակ, **Petrosyan A.Y.** State Pantheon of Greater Armenia, p. 186-187:

⁴² **Պետրոսյան Ա.**, Հայկական և հյուսիսկովկասյան..., էջ 39-40:

⁴³ Эпос о Гильгамеше (пер. И.М. Дьяконова), М.-Л., 1961, с. 77.

⁴⁴ Այդ մասին տե՛ս **Պետրոսյան Ա.**, Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Ե., 2006, էջ 53:

⁴⁵ **Պետրոսյան Ա.**, Հայկական և հյուսիսկովկասյան..., էջ 44:

դիպում մինչև նոր ժամանակներ): Սաթը համարվել է թանկագին քար, իսկ էպոսներում հերոսուհիների անունները երբեմն կապված են թանկագին քարերի հետ: Այսպես, անունը գեղեցկուհի Ազունդայի, որին ձգտում են կովկասյան հերոսները, նշանակում է «հակինթ», իսկ Փոքր Միերի՝ «Սասնա ծռերում» Արտավազդի կրկնակի կնոջ անունն է Գոհար⁴⁶: Հատկանշական է, որ Սոսլան/Սոսրուկոն, Սաթանա/Սաթանեյի որդին, որոշ տարբերակներում ծնվում է սև քարից⁴⁷, իսկ աղբյուրական ավանդույթում Սոսրուկոն հաճախ ուղղակի կոչվում է «սև տղամարդ»⁴⁸: Մինչդեռ ավելի արխաիկ տարբերակներում, ինչպես ասվեց, Սաթանա/Սաթանեյն ինքն է հղիանում «նետ-սերմից»: Այսինքն, «սև քարն» այստեղ համապատասխանում է Սաթանա/Սաթանեյին, որին միանգամայն կպատշաճեր սև սաթի հետ կապված անունը:

Հայոց արքայի, նրա ալանուհի կնոջ և զնդանված հերոսի վերաբերյալ սյուժեն հայկական ավանդույթում ի հայտ է գալիս երկու անգամ: Տրդատ III Մեծը (մ.թ. 287-330), որն ընդունեց քրիստոնեությունը՝ որպես Հայաստանի պետական կրոն, իր կին Աշխենի և քրոջ՝ Խոսրովիդուխտի հետ սրբացվել է: Կա հաստատուն ավանդույթ, որ Աշխենն ալանական արքայադուստր է եղել⁴⁹ (բայց ամենահին և վավերական աղբյուրները՝ Ագաթանգեղոսն ու Խորենացին, այդ մասին լուր են): Հայոց դարձի վիպական պատմության մեջ Տրդատ III-ը զնդանում է Գրիգոր Լուսավորչին խոր վիրապում: Քրիստոնյաների հալածանքի պատճառով Տրդատը վերածվում է խոզ/վարազի (Ագաթանգեղոս 212, 219, 727, 763, 773): Հետո նա զնդանից ազատում է Գրիգորին, որն իր աղոթքներով առողջացնում է

⁴⁶ Ազունդայի, հին սկյութան դիցուհու և Սաթենիկի՝ թանկարժեք քարերի հետ կապի մասին տե՛ս **Dalalyan T.** On the Character and Name..., p. 246-248, տե՛ս նաև **Մարտիրոսյան Հ.**, Լեոնային ակունքի ֆառնը, արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհածեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում, Վիշապ քարակոթողները, Ե., 2015, էջ 155:

⁴⁷ **Ардзинба В.Г.**, նշվ. աշխ., էջ 158-159:

⁴⁸ Кабардинский фольклор, М.-Л., 1936, с. 15, 23, 24, 29, 39, 199, 200, 215; **Ардзинба В.Г.**, նշվ. աշխ., էջ 158-159: **Бербеков Х.Б.** Уникальный тип эпического героя и цветовые коды в адыгском нартском эпосе. Современные наукоемкие технологии, 2005, 4. <http://www.rae.ru/snt/pdf/2005/04/Berbekov.pdf>.

⁴⁹ **Չամչեանց Մ.**, Հայոց պատմութիւն, Վենետիկ, 1784, էջ 379, **Ազերեան Մ.**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց, որք կան ի հին տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց, Վենետիկ, 1810, էջ 379, ՀԱՍԲ, հ. Ա, Ե., 1942, էջ 430, աղբյուրներով: **Габриелян Р.А.** Алано-армянские отношения (I-X вв.), Е., 1989, с. 72:

նրան և վերադարձնում մարդկային կերպարանքը: Այս «եկեղեցական էպոսում» Գրիգոր Լուսավորիչը կրկնում է քարայրում փակված «մեռնող և վերածնվող» հերոսի կերպարը (Թամմուզ, Ադոնիս, Ատտիս և այլն)⁵⁰:

Տրդատի կնոջ՝ Աշխեն անունը կապում են կամ պահլ. *axšēn* «գորշ, կապտավուն կամ կանաչավուն» (ավեստ. *axšaēna* «մուգ սև», հին պրսկ. *axšaina* «կապտասև քար, լազուրիտ») կամ ավեստ. *xšōiθni* «իշխանուհի» (>*xšēhn > xšēn), օս. *æxsīn* «տիկին» բառերի հետ⁵¹: Պետք է ավելացնել, որ օսերենում կա նաև սրանցից առաջինի հետ կապված *æxsīn* «մուգ գորշ» բառը⁵²: Սաթանան հաճախ կոչվում է Ախսինա-աֆսինա (*Æxsinae-æfsinae*) «տիկին-տիրուհի», իսկ որոշ դիգորական տարբերակներում նա ուղղակի հանդես է գալիս *Æxsinae* «տիրուհի» անունով⁵³: Եթե Աշխենն իրոք եղել է ալանուհի, նրա անունը կարող էր կապվել նշված օսական բառերի հետ⁵⁴: Ընդհանրապես, մեծ դիցուհիները հաճախ կոչվում են «տիկին, տիրուհի», ինչպես աստվածները՝ «տեր» կոչումներով (հմմտ. «Տեր Աստված», «Անահիտ տիկին» և «Սաթենիկ տիկին»), իսկ Սաթանան հին դիցուհու վիպական ժառանգն է: «Տիրուհին» նաև ամենուրեք տարածված անձնանուն է (հմմտ. հայերեն Տիրուհին՝ որպես անձնանուն)⁵⁵: Մյուս կողմից, «մուգ, սև գույն» և «մուգ գույնի (թանկագին) քար» նշանակությունները համընկնում են Սաթենիկի անվան քննարկման ժամանակ բերված օրինակներին: Ըստ այդմ, կարելի է պակերացնել մի քանի հնարավորություն: Այսպես, Սաթենիկի պատմական նախատիպի անունը կամ կոչումը կա-

⁵⁰ Այս մասին, համեմատական առասպելաբանության համատեքստում, տե՛ս **Ադոնց Ա.**, նշվ. աշխ., էջ 271-274: **Петросян А.Е.** Армянский эпос и мифология, с. 116-124, հայկական առասպելաբանության մեջ վարագի առասպելության իրանական կապերի մասին՝ **Garsoïan N.** The Iranian Substratum of the 'Agathangelos' Cycle. East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period, Washington DC, 1982, p. 151-174:

⁵¹ **Hübschmann H.** Armenische Grammatik, Leipzig, 1897, S. 20, ՀԱՆԲ, հ. Ա, էջ 179:

⁵² ИЭСОЯ I, М.-Л., 1958, с. 110.

⁵³ Նույն տեղում, էջ 110-111, 220, **Dalalyan T.**, On the Character and Name..., p. 244-246.

⁵⁴ **Налбандян Г. М.** Армянские личные имена скифо-алано-осетинского происхождения (Вопросы иранской и общей филологии, Тбилиси, 1977, с. 212); **Габриелян Р.А.** նշվ. աշխ., էջ 72-73; **Гутнов Ф.Х.** Ранние аланы в закавказских источниках, Дарьял, 2002, 4. http://www.darial-online.ru/2002_4/gutnov.shtml; **Դավալյան Տ.**, Դրվագներ հայալանական դիցանվանական կապերից, էջ 50: Հ. Մարտիրոսյանը, որը պատրաստել է հայոց մեջ իրանական անունների կորպուսը, նույնպես այս անվան ալանական ծագումը համարում է հավանական (անձնական հաղորդում):

⁵⁵ ՀԱՆԲ Ե, էջ 169:

րող էր լինել *Æxsinæ* «տիրուհի, տիկին», ինչը կարող էր ընկալվել նաև «մուգ գույնի թանկարժեք քար» իմաստով: Եվ հայերեն Սաթենիկն էլ կարող էր լինել այդ անվան երկրորդ իմաստավորման հայերեն թարգմանությունը: Հնարավոր է նաև, որ արքայադստեր ալանական անունը ի սկզբանե կապված է եղել «մուգ գույնի թանկարժեք քար» իմաստի հետ: Եվ սա կարող է լինել ալանական արքայադստեր անվան հայկական ծագման բացատրություններից մեկը:

Հայ առասպելաբանության համատեքստում Տրդատ III-ը և Աշխենը կրկնում են Վահագն և Աստղիկ աստվածային զույգի կերպարները: Տրդատը, որը կոչվում է քաջ, ինչպես Արտաշեսը և Վահագնը, լեգենդար ռազմիկ է, հսկա, շատ մրցությունների (այդ թվում՝ օլիմպիական խաղերի) և ճակատամարտերի հաղթող (Ագաթանգեղոս, 202, Խորենացի, Բ. հթ, ձբ), ակնհայտորեն համադրելի է Վահագնի հետ: Դա հաստատվում է նաև այն բանով, որ Լուսավորչի մասին ասքում և «Վարք սրբոցում», նա, ի տարբերություն հայոց այլ սրբերի և հերոսների, հանդես է գալիս եռյակով՝ կնոջ և քրոջ հետ⁵⁶, այդպիսով, փաստորեն կրկնելով Վահագնի եռամաս տաճարում պաշտվող դիցաբանական եռյակը՝ Վահագն, Աստղիկ, Անահիտ (Ագաթանգեղոս, 127): Վահագն անունը հանգում է հին իրանական աստծու պարթևական ժառանգին (<*Varhagn < պարթ. Varhagn < հին իրան. *Varθragna/*Vrθragna,=ավեստ. Vərəθrayna)⁵⁷: Ավեստայում Վըրըթ-րաղնայի մարմնավորումներից էր վարազը (Յաշտ, XIV, 15): Ի միջի այլոց, խոզ/վարազի կերպարը հանդես է գալիս նաև Աստղիկի հիշյալ լեգենդում՝ նրա լոգանքի վայրը՝ Գուռգուռան, գտնվում էր Տարոն նահանգում (Վահագնի պաշտամունքի կենտրոնում), Կնճան լեռներում, Խոզմո լեռան տակ⁵⁸ (*կինճ* «վարազ, խոզ» և *խոզ* բառերից):

Այսպիսով, ուրվագծվում են վարազի հետ կապված հեթանոսական աստծու և նրա զուգակցի՝ սիրո դիցուհու կերպարները, որոնք հիմք են դարձել խոզի վերածված թագավորի և ալանուհի թագուհու վիպական պատմության համար: Ակնհայտ է, որ Տրդատն ու Աշխենը կրկնում են

⁵⁶ **Մաթևոսյան Ռ.**, Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, Էջմիածին, 1999, էջ 65-68:

⁵⁷ **ՀԱՆԲ Ե**, էջ 8, **Petrosyan A.** State pantheon..., էջ 181:

⁵⁸ **Սրվանձությանց Գ.**, Երկեր, հ. I, Ե., 1978, էջ 71-72; **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Ե., 1986, էջ 979:

«Վիպասանքի» հին հերոսների՝ Արտաշեսի ու Սաթենիկի կերպարները: Իրոք, վիպական Արտաշեսը, ինչպես ասվեց, Արտաշես և Տրդատ անուններով արքաների մի հավաքական կերպար է, ալանների պատմական արշավանքը տեղի է ունեցել Տրդատ I-ի ժամանակ, Տրդատ I-ի՝ ալանական ռազմիկի կողմից արկանման պատմությունը Խորենացու մոտ վերագրված է Տրդատ III-ին (ալաններին ազգակից բասիլների դեմ ճակատամարտի ժամանակ՝ Խորենացի, Բ. ձե), Աշխեն անունը, համապատասխանում է Սաթանայի օսական մակդիրին և, հավանաբար, եղել է Սաթենիկի ալանական անունը կամ կոչումը, Տրդատի հերոսական արարքների մեջ հիշվում է նրա՝ Եփրատի անցումը ձիով, որը հիշեցնում է Արտաշեսի՝ Կուր գետի անցումը (Ագաթանգեղոս, 202, Խորենացի, Բ. հթ), Արտաշեսի և Տրդատի պատմություններում, որպես խնամախոս, հանդես են գալիս «Սմբատ Բագրատունի» կոչվող նույնանուն հերոսներ (Խորենացի, Բ. ծ, ձգ): Այսպիսով, Տրդատ Մեծի և Աշխենի վեպը ձևավորվել է Արտաշեսի և Սաթենիկի վեպի հիման վրա:

Արտաշեսի վիպական կերպարը կապված չէ՞ր նաև վարագի հետ: Խորենացին, ինչպես ասվեց, էպոսից պատմականն առանձնացնելով, հնարավորինս ռացիոնալացնում է այն՝ երբեմն նույնիսկ չհիշելով չափազանց առասպելական հատվածները (այսպես, Արամ նահապետի սխրագործությունների վերաբերյալ գլուխը նա ավելացրել է միայն Սահակ Բագրատունու խնդրանքով): Բայց և այնպես, մնացել են այդ կապի հետքերը: Արտավազդը կործանվում է ըստ Արտաշեսի անեծքի, վարազների և վայրի էշերի որսի գնալիս (Խորենացի, Բ. կա): Հենց այդպես, վարագի որսի ժամանակ են զոհվում տարածաշրջանի համապատասխան հերոսները՝ Ադոնիսը, Ատտիսը և այլն (դա վարազը՝ որպես խորհրդանիշ ունեցող աստծու կողմից որդուն պատժելու առասպելի տարբերակներից մեկն է)⁵⁹: Ուրեմն, կարելի է կարծել, որ «Վիպասանքի» հին տարբերակներում Արտաշեսի և վարագի կապն ավելի վառ պետք է արտահայտվեր:

⁵⁹ Այսպես, Ադոնիսը սպանվում է որսի ժամանակ, վարագի տեսք ընդունած Արես աստծու կամ Արեսի ուղարկած վարագի կողմից (նույնը վերաբերում է նաև Ատտիսին, տե՛ս **Петросян А.Е.** Армянский эпос и мифология, с. 119-120). Կարելի է ասել, որ այս համատեքստում Արտաշեսը, Սաթենիկը և Արտավազդը այնպես, ինչպես և Տրդատը, Աշխենն ու Գրիգոր Լուսավորիչը համապատասխանում են Արեսին, Ափրոդիտեին և Ադոնիսին:

Իսկ ի՞նչ ունենք մենք Օսիայում: Սաթանայի ամուսնու Վըրըզմագ/Ուրուզմագ անունը, ինչպես ասվեց, ծագում է հայկական աղբյուրների Վարազմանից և կապված է իրանական *վարազ* բառի հետ: Հատկանշական է, որ մի դրվագում Ուրըմագն ուղղակի համեմատվում է վարազի հետ⁶⁰: Ըստ այդմ, Ուրուզմագի՝ իր որդուն սպանելու մոտիվը կարող է մեկնաբանվել որպես վարազի կերպարով հայր աստծու կողմից որդուն սպանելու առասպելի արձագանք:

Այսպիսով, ուրվագծվում է հետևյալ պատկերը: Հայ Արշակունի արքաներից մեկը, հավանաբար, ամուսնացած է եղել ալանական արքայադստեր հետ, ինչն արտացոլվել է «Վիպասանքում»՝ Արտաշեսի և Սաթենիկի պատմության ձևով: Ագաթանգեղոսը, որը գրում է Տրդատի և Աշխենի պատմությունը, ապրել է իր հերոսներից ընդամենը մեկ դար անց: Պատմական հիշողությունը դեռ թարմ է եղել և Տրդատի ու Աշխենի ասքի պատմության ստեղծողներն ու Ագաթանգեղոսն ինքը չէին կարող չափազանց ազատ լինել իրենց ստեղծագործության մեջ: Ըստ Խորենացու (Բ. ձգ), Տրդատը հրամայում է Աշխենին «գրել Արշակունի, ծիրանին հագցնել և թագ կապել, որպեսզի թագավորին հարսնանա»: Այսինքն, Աշխենը արքայական ծագում չունի, և Տրդատն արհեստականորեն է բարձրացնում նրա տոհմը: Ըստ այդմ, նա կարող էր լինել Հայաստանում հաստատված ալաններից (Հայաստանի ալանների մասին տե՛ս Խորենացի, Բ. ձբ, ձը):

Հայկական և հյուսիսկովկասյան էպիկական ավանդություններում շատ բան ընդհանուր է՝ կերպարներ, մոտիվներ, հերոսների հաջորդականությունը⁶¹: Ոչ բոլոր ընդհանրություններն են բացատրվում փոխառությամբ, բայց և այնպես, փոխառություններ եղել են թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից: Դրանք տեղի են ունեցել ալանների արշավանքների և Հայաստանում հաստատվելու, ապա և հայերի՝ Կովկաս տեղափոխվելու հետևանքով: Ինչպես տեսանք, ընդհանուր անունների, կերպարների և մոտիվների քննությունը ցույց է տալիս, որ փոխառության հիմնական ուղղությունը եղել է հարավից հյուսիս (այնպես, ինչպես որ աշխարհի և տարածաշրջանի մշակութային զարգացումները Վրաստան և Կովկաս էին հասնում Հա-

⁶⁰ Dumézil G. Mythe et épopée, t. 1, Paris, 1968, p. 465.

⁶¹ Պետրոսյան Ա., Հայ և հյուսիսկովկասյան..., նույնի՝ Некоторые армяно-западнокавказские эпические параллели, նույնի՝ Структурные связи армянских и осетинского нартского эпосов:

յաստանի վրայով)⁶² և Սաթանա/Սաթանեյ անունը փոխառվել է հայկական ավանդույթից: Չնայած դրան, կովկասյան հերոսուհիների կերպարներում քիչ բան է հայկական՝ նրանք, իրենց բնութագրերի մեծամասնությամբ, տեղական դիցուհու կամ դիցուհիների վիպական տարբերակներ են: Ավելին, հայոց Սաթենիկն ալանուհի է, ինչը նշանակում է, որ նրա պատմության մեջ որոշակի ալանական տարր պիտի լիներ⁶³: Դա միանգամայն բացատրելի է: Չէ՞ որ Հայաստանում Շամիրամի՝ Սաթենիկի վիպական նախորդի բանահյուսական կերպարում էլ, բացի անունից, քիչ բան է ասորեստանյան. նա հիմնականում հայ դիցուհու վիպականացած տարբերակն է:

Սաթ բառի ծագումն անհայտ է: Այդ բառը հայկական, օսական կամ հյուսիսկովկասյան չէ: Հնարավոր է, որ այն ունի խուդիական ծագում: Հյուսիսային Միջագետքի խուդիական Նուզի քաղաքի՝ մ.թ.ա. II հազարամյակի աղբյուրներից հայտնի են šat- սեպագիր տարրով (կարդալ sat-՝ ասորեստանյան և խուդիական սեպագրում š-ով հաղորդվել է s հնչյունը) բազմաթիվ անուններ՝ šata, šaten-, šati, šatiya, šatim, šatu-, šatuya, šatuke, šatum-, šatuša, šatar, šaten, šatn-, šatt, šattu, šattuya, šatta⁶⁴, որոնց գոնե մի մասի իմաստն անհասկանալի է:

Խուդիական արիստոկրատիայի անունները նման են հին հնդկականներին, խուդիական աստվածների շարքում հիշվում են հին հնդկական աստվածներ: Դա բացատրվում մի հնդիրանական ցեղի՝ «միջագետքյան արիացիների» կամ «միտաննիական արիացիների» ազդեցությամբ, որոնք կազմել են խուդիական հասարակության վերին շերտը:

Հնդկական առասպելաբանության մեջ հայտնի է երկու հերոսուհի, որոնց կյանքում տեղի է ունենում հիշված «գետափնյա արկածը» հիշեցնող մի միջադեպ: Սատյավատի (Satyavati) անունով մի կին, ծնված ձկան տեսքով ջրահարսից, կապի մեջ է մտնում արքայի հետ գետափին, մառախու-

⁶² Պետրոսյան Ա., Հայ և հյուսիսկովկասյան..., էջ 32-34:

⁶³ Ըստ Հրաչ Մարտիրոսյանի, Սաթենիկի սիրո տենչանքի մասին խորթն բանաստեղծության մեջ առկա են ալանական բառեր [տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, «Արտախուր խավարտի» մեկնաբանության նոր փորձ (Պատմա-բանասիրական հանդես, 1996, N 1-2, էջ 311-316)]:

⁶⁴ Gelb I. J., Purves P.M. MacRae A.A. Nuzi Personal Names, Chicago, 1963, p. 126-127, 252.

դի մեջ, որի հետևանքով ծնվում է Դվայապայանան («Սև կղզիաձին», այլ անունով՝ Վյասա), որին բախտ է վիճակվում դառնալ «Մահաբհարատա» էպոսի հերոսների պապը և այդ էպոսի ստեղծողը («Մահաբհարատա» I, 57): Մեկ այլ Սատյավատի, Պարաշուրամա («Սև կացնավոր») հերոսի մայրն ականատես է լինում, թե ինչպես է արքան զվարճանում իր կնոջ հետ գետում, ինչի հետևանքով պատժվում է («Մահաբհարատա» III, 115-116): Այս Սատյավատիները, բացի անվան նմանությունից և «գետափնյա արկածից», ունեն այլ ընդհանրություններ Սաթենիկ/Սաթանայի հետ՝ օսական Սաթանայի մայրը, Ձերասսան, որը կարողանում էր ձուկ դառնալ, համադրելի է առաջին Սատյավատիի մոր հետ, գետի վրա տարածվող մառախուղը հիշեցնում է Աստղիկի ու Սաթանեյի լեգենդները, կովկասյան հերոսուհիների հետ համեմատելի է նաև հնդկական հերոսուհիների որդիների կապը սև գույնի հետ (հմմտ. «սև» Սոսրուկոյի կերպարը), իսկ առաջին Սատյավատիի հինգ թոռները և երկրորդի հինգ ծոռները համադրելի են Սաթենիկի հինգ որդիների հետ: Սատյավատի անունը հնդկերենում նշանակում է «ճշմարտացի»: Այն ծագում է *snt-yo- դերբայական նախածնից (արմատն է *es- «լինել»): Հավանական է թվում, որ հնագույն փոքրասիա-կովկասյան՝ քարից ծնվող աստվածության առասպելությամբ Մերձավոր Արևելքում համադրվել է Սատյավատիի «միջագետյան արիական» առասպելի հետ: Վերջինիս անունն իմաստավորվել է տեղական *սաթ* բառով, իսկ նրա կերպարը բաղարկվել՝ խառնվել է Իշտարի, Աստարտեի և Աստղիկի հետ, որի ժառանգն է և հայոց Սաթենիկը⁶⁵:

Կովկասյան էպոսների մեծ հերոս Սոսլան/Սասրուկոն ծնվում է բեղմնավորված քարից: Պատմությանը հայտնի ամենահին քարից ծնվող կերպարը խուռիական Ուլիկումմին է (որը ծնվում է բեղմնավորված ժայռից)⁶⁶: Ավելի ուշ շրջանից հայտնի են փոքրասիական համանման առասպելներ Ագդիս/Ագդիստիսի մասին⁶⁷:

⁶⁵ Պետրոսյան Ա., Արամի առասպել..., էջ 110-116:

⁶⁶ Hoffner H.A. Hittite Myths, Atlanta, 1990, p. 52-60.

⁶⁷ Եվ հատկանշական է, որ Ագդիստիս-Կյուբելեի խորհրդանշն էր մի սև քար, որը մ.թ.ա. 204 թ. տեղափոխվեց Հռոմ (տե՛ս **Ирмшер Й.** Словарь античности, М., 1989, с. 260): Այս առասպելների վերաբերյալ, կովկասյան հերոսների առնչությամբ տե՛ս **Ардзинба В.Г.**, նշվ. աշխ., **Петросян А.Е.** Армянский Мхер, западный Митра и урартский Халди:

Խոտիներենը և նրան ազգակից ուրարտերենը, ինչպես և Փոքր Ասիայի բնակիչների հին լեզուն՝ խաթերենը, հաճախ համարում են ազգակից հյուսիսկովկասյան լեզուներին⁶⁸: Հնարավոր է, որ քարից ծնվող հերոսի կերպարը սկզբնապես բնորոշ է եղել այդ լեզուների կրողների առասպելաբանությանը: Այդպիսով, խոտիական և փոքրասիական հին առասպելները կարող են ծագումնաբանորեն նույնական լինել կովկասյանների հետ: Իսկ Սաթանա/Սաթանեյի առասպելը կարելի է դիտել որպես երկու՝ հնդեվրոպական և հյուսիսկովկասյան ավանդույթների համադրման արդյունք:

Ասվաճի հիման վրա ուրվագծվում են պատմական վերակազմության որոշ հնարավորություններ: Խուսափելով միարժեք լուծումներից՝ կարելի է ասել, որ Սաթենիկի առասպելը մեզանում, հավանաբար, ունի շատ հին արմատներ: Այն անցել է Արտաշեսի վեպին, որը, իր հերթին, յուրացրել է Տրդատ I-ի դարաշրջանի ավանական արշավանքի որոշ տարրեր, ապա և հիմք ծառայել Տրդատ III-ի և Աշխենի վեպի համար: Հայկական այս վեպն ավանների արշավանքներից հետո անցել է Կովկաս և էական դեր կատարել տեղի նարթական էպոսների ձևավորման գործում:

Ինչպես գրում է Վ.Ի. Աբաևը, օսական նարթական էպոսի բոլոր գլխավոր հերոսների անունները, փաստորեն, բնիկ օսական չեն, իսկ Ուրուզմագի անունը, լինելով ծագումով իրանական, անցել է Օսիա՝ «հայաաղվանական միջնորդությամբ» (Վարազման անունն ավանդված է միայն Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ): Ինչպես տեսանք, կովկասյան էպոսների մի շարք կարևոր անուններ նույնպես ծագում են Հայաստանից, և Աբաևը կանխադրում էր հայ-ավանական «Վարազման-Սաթենիկ» վեպի գոյությունը՝ որպես հիմք օսական (ապա և աղըղական ու բալկարական) էպոսի համապատասխան մասի համար: Այս լույսի ներքո պետք է նշել, որ ըստ Հովան Սիմոնյանի գենետիկական ուսումնասիրության, Արցախի Հասան-Ջալալյանները ծագում են Բագրա-

⁶⁸ **Дьяконов И.М., Старостин С.А.** Хуррито-урартские и восточнокавказские языки (Древний Восток: этнокультурные связи, М., 1988, с. 164-207); **Иванов Вяч. Вс.** Об отношении хаттского языка к северо-западнокавказским (Древняя Анатолия, М., 1985, с. 26-59); հմմտ. **Kassian A.** Hattic as a Sino-Caucasian language, Ugarit-Forschungen. Internationales Jahrbuch für die Altertumskunde Syrien-Palästinas, Bd. 41, 2010, p. 309-447; Idem, Hurro-Urartian from the lexicostatistical viewpoint. Ugarit-Forschungen. Internationales Jahrbuch für die Altertumskunde Syrien-Palästinas, Bd. 42, 2011, p. 383-451.

տունիներից, և նույն ծագումն ունեն իրենց՝ հայոց թագավորներից սերված համարող օսական տոհմերը (այդ թվում և Հյուսիսային Օսիա-Ալանիա Հանրապետության ներկայիս նախագահ Թեյմուրազ Մամսուրովը)⁶⁹: Ըստ այդմ, չի բացառվում օսական էպոսի հայկական տարրերի գոնե մի մասի ծագումը Հայաստանի արևելյան այս շրջանից, թերևս «Արտաշես և Սաթենիկ» արքայական վեպի մի տեղական տարբերակից: Մյուս կողմից, Հայկական լեռնաշխարհում արդեն ուրարտական ժամակաշրջանում հաստատված են եղել ալանների լեզվական ազգակիցները՝ սկյութները⁷⁰, և այս հայ-օսական ընդհանրությունների գոնե մի մասը կարող էր սկզբնավորվել արդեն հնագույն ժամանակներում, գուցե և նույն տարածքներում:

АРМЯНСКАЯ САТЕНИК И ЕЕ КАВКАЗСКИЕ ПАРАЛЛЕЛИ

ПЕТРОСЯН А.Е.

Резюме

В кавказских эпосах прослеживается влияние армянской мифологии и эпоса: например, образы кадзей, Артави́за и Аргвана в осетинской и западнокавказской традициях имеют армянские прототипы. Имя Сатана/Сатаней не этимологизируется на основе осетинского или кавказского языков и не имеет принятой этимологии. Между тем, Сатеник/Сатиник имеет прозрачную армянскую этимологию и образовано от корня сит "гагат, янтарь", с суффиксом -ení (k), ср. аналогичные женские имена Назиник, Арпеник и Варсеник (Х. Ачарян, Т. Далалян). Таким образом, имя Сатана/Сатаней, равно как и ряд имен в кавказских эпосах, восходит к армянской традиции.

⁶⁹ <https://www.youtube.com/watch?reload=9&v=etBNo0638Pw&feature=youtu.be>.

⁷⁰ Տե՛ս, օրինակ, Հայաստանի հարակից երկրների պատմություն, Ե., 2013, էջ 432:

ARMENIAN SATENIK AND HER CAUCASIAN PARALLELS

A. PETROSYAN

Abstract

In Caucasian epics there are traces of influence of Armenian mythology and epic: e.g., the characters of the kadzis, Artawyz and Argwana in Ossetian and Western Caucasian traditions are derived from Armenian prototypes. The name of Satana/Sataney is not etymologized on the basis of Ossetic or Caucasian languages and does not have an accepted etymology. Meanwhile, Satenik/Satinik has transparent Armenian etymology from the root sat‘ ‘jet, amber’ with the suffix -eni(k), cf. similar female names Nazinik, Arpenik and Varsenik (H. Acharyan, T. Dalalyan). The study of all data shows that the name of Satan/Satan, along with the mentioned names of Caucasian epics, dates back to the Armenian tradition.

ՆՈՐԱՀԱՅՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴՈՒՄ

ԲԱԲԱՅԱՆ Ֆ.Ս.

Դվին մայրաքաղաքի պեղումների ուսումնասիրությունն անցյալ դարի 30-80-ական թթ. բարձրացավ մի նոր աստիճանի, ձեռք բերեց լուրջ հաջողություններ քաղաքաշինության, արհեստագործության, նյութական մշակույթի տարբեր հարցերի քննության ասպարեզում, որոնք կարևոր նշանակություն ունեցան միջնադարյան Հայաստանի պատմագիտության զարգացման համար¹: Այդ աշխատանքի շարունակությունն են կազմել Դվինի միջնաբերդի հյուսիսարևմտյան և արևելյան լանջերում կատարված պեղումները: Բացված բնակելի և արտադրական կառույցները տեղակայված էին երկար, լայն փողոցում՝ հարավակողմ մուտքերով: Վերջիններս առաջին և երկրորդ դարավանդների հետ կապվել են մի քանի նրբանցքներով, իսկ առանձին հարկաբաժիններ միմյանց հաղորդակցվել են ընդհանուր մուտքերով և միջանցքներով:

Երրորդ դարավանդը լանջի բարձրադիր մասն է, որտեղ 1986-1988 թթ. բացվել է առանձնակի շինություն. այն պայմանականորեն անվանել ենք «մեծ սրահ»: Սրահի ներսում՝ արևմտյան պատին կից բացվել են շինության երկրորդ հարկ տանող աստիճանները, որոնք շարված են տեղում պահպանված կիկլոպյան քարերով: Շինության հիմնապատերի շարվածքում օգտագործվել են անտիկ ժամանակաշրջանին պատկանող երկրորդական օգտագործման քարեր²: Սրահի հատակը աղյուսաշար է: Պահպանվել են պատերի սվաղի հատվածները և գունավոր ներկերի հետքերը:

¹ **Քալանթարյան Ա.**, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Մուղնի, 2005, էջ 102:

² **Բաբայան Ֆ.**, Դվինի ստորին բերդի պեղումների արդյունքները (1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Ե., 1987, էջ 61-63): Տե՛ս նաև **Քալանթարյան Ա., Բաբայան Ֆ., Քոչարյան Գ. և ուրիշներ**, Դվինի հնագիտական արշավախմբի 2006 թ. աշխատանքների հիմնական արդյունքները (Հին Հայաստանի մշակույթը, XIV, Նյույթեր հանրապետական գիտական նստաշրջանի, Ե., 2008, էջ 265-287):

Սրահը ուղղանկյուն հատակագծով թեքվում է դեպի բլրի արևմտյան լանջի բնակելի տարածք, որը նույնպես ունի աղյուսաշար հատակ: Նշենք, որ այստեղով անցել է Դվինի միջնաբերդի պարիսպը, որի փլատակների վրա 894 թ. երկրաշարժից հետո X-XII դդ. կատարվել են կառուցապատումներ:

Լայն փողոցի երկայնքով տեղակայված բնակելի տները մինչև բլրի գագաթը ունեցել են փայտե սյան քարե խարիսխներ, հարթ տանիքներ, պատուհաններ (հայտնաբերվել են նաև ապակե բեկորներ): Բնակարանների անբաժանելի մասն են կազմել բազմաթիվ թոնիրները, արտադրական նպատակի ծառայող արհեստանոցները, ջրամատակարարման համակարգը, տնտեսական հորերը և այլ մանրամասներ: Նյութական մշակույթի հայտնաբերված օրինակները դարաշրջանին բնորոշ ոճի՝ ջնարակապատ թասեր, քրեղաններ, մետաղե գործիքներ, զարդեր, դրամներ և բազմաթիվ այլ իրեր են: Դվինում գտնվել են իլդեգիզյան պղնձե դրամներ, որոնցով կատարվել է քաղաքի ներքին առևտուրը: Իլդեգիզյանները Իրաքի սելջուկների վասալներն էին, որոնք նվաճել էին Աղվանքը Խուդինյանից մինչև Վրաստան, Հայաստանի հյուսիսային շրջանները³:

Միջնաբերդի հյուսիսարևելյան լանջում կատարված պեղումներով բացվել է միջնաբերդի հյուսիսային կողմով անցնող պարսպապատը: Համալիրի կարևոր կառույցը 1 մ լայնություն ունեցող գետաքարերի կանոնավոր շարվածքով, 21 մ երկարությամբ հիմնապատն է, որը արևելյան կողմով հարում է պարսպին, այնուհետև ձգվում դեպի հարավ-արևմուտք:

Հիմնապատի ներսում, անմիջապես բլրալանջի տակ բացվել են սենյակների հիմնապատեր, որոնք ունեցել են մեկ ընդհանուր միջանցք, երեք առանձնացված մուտքեր: Սենյակների հատակները եղել են աղյուսաշար: Քառակող և բազմանկյուն աղյուսները շարված են որոշակի դասավորությամբ, ամրացվել են սպիտակ կրաշաղախով: Պատերի որոշ հատվածներում պահպանվել են շրիշակներ: Բնակելի սենյակներն ունեցել են շինարարական երկու, նույնիսկ երեք հատակ, որոնք իրարից անջատվել են 30-40 սմ հողի շերտով: Այս սենյակների հարդարանքի բաղադրիչներից էին գիպսե քանդակազարդերը և քաղաքատիպ բնակարանի անբաժանելի մասը կազմող ուղղանկյուն աղյուսներով շարված բուխարիները, իսկ տնտեսական հարկաբաժիններում՝ կավե թոնիրներն ու օջախները: Սեն-

³ Տե՛ս **Մուշեղյան Խ.Ա.**, Դրամական շրջանառությունը Հայաստանում V-XV դդ., Ե., 1988, էջ 215-216:

յակներն ունեցել են դասական չափանիշներին համապատասխանող 16-20 քմ և ավելի մակերես (պայմանական քառակուսիներն են՝ +d-10, +n-10, m-11): Բոլոր բացված շինությունների քարե հիմնապատերի վրա բարձրացել է թրձած, տեղ-տեղ նաև հում աղյուսե պատի շարվածքը:

Սույն կառույցների տեղադրության նախնական քննությունը վկայում է, որ միջնաբերդի այս հատվածում բլրի թեք լանջի պատճառով շինությունների պատերը լիցք են ունեցել: Պարզվում է, սակայն, որ միջնադարյան տները պարզապես մտել են վաղ շրջանի կավակերտ կառույցների մեջ, իսկ տեղ-տեղ պահպանված, դժվար քանդվող հին կավակերտ պատերի մնացորդներն էլ որպես լիցք են օգտագործվել: Չպեղված հողի կտրվածքում 1-2 մ բարձրությամբ հստակ ուրվագծվում են այդ հին կառույցների պատերը, որոնց մասին ժամանակին խոսել է նաև Կարո Ղաֆադարյանը⁴:

2009 թ. բնակելի մեծ շինությանը կից բացվել է աղյուսաշար, ուղղանկյուն հատակագծով փոքր շինություն: Այն իր չափով և տեղադրությամբ տարօրինակ տպավորություն թողեց, քանի որ հպված էր համալիրի քարակերտ պատին՝ ներառելով վերջինիս գլխավոր մուտքերից մեկը, որը տանում է դեպի լանջի տակ տեղադրված հարկաբաժինները: Հաշվի առնենք այն հանգամանքը, որ 1.48 մ չափերով աղյուսաշար կառույցի երկու պատերը հպված են քարակերտ շինությանը՝ ներառելով դրա մուտքերից մեկը, որը պայմանականորեն կոչել ենք «միջանցք» (նկ. 1):

2010 թ. Դվինի միջնաբերդում պեղումներ չեն կատարվել:

2011 թ. նորից անդրադարձանք այդ տարօրինակ կառույցին: Վերջինիս հատակը ստուգելու ժամանակ 40 սմ խորության վրա երևաց տոփանված մեկ այլ հատակ: Նույն պատի արտաքին կողմը բացելու ընթացքում 64 սմ խորությամբ գտնվող տոփանված հատակի տակ հայտնաբերվեց 40 սմ խորությամբ մեկ այլ աղյուսաշար պատ: Պարզվեց, որ այն մի առանձին շինության հատված է (նկ. 2): Տոփանված հողի՝ մոտ 2 մ հաստությամբ շերտը հեռացնելուց հետո երևան եկավ 4x3 մ տարածք ունեցող ամբողջական շինություն: Պատկերը հետևյալն է. կառույցի ներսի պատերի ազատ տարածությունը լրացնում են ութ սրածայր վերջավորությամբ աղյուսաշար խորշերը, որոնց միջև եղած ազատ տարածությունը ծածկված է սպիտակ սվաղով: Թաց սվաղի վրա սուր գործիքով արված են փորագիր հնգաթև, վեցաթև աստղեր, խորանարդ, վեցանկյուն և այլ հարդարանքներ (նկ.

⁴ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Ե., 1952, էջ 24:

3): Խոնարհված ութանկյուն գմբեթի աղյուսաշար շարվածքի մեջ տեղադրված են եղել թվով յոթ երկնագույն հախճապակե թասիկներ և լայն մակերեսով կոբալտե ափսե (նկ. 4, 5): Կառույցի հյուսիսային կողմի կենտրոնի խորշերից մեկում բացվել է շինության մուտքը (նկ. 6):

Մուտքի երկու կողմերի պատերի վրա արված են փոքրիկ փոստրակներ՝ թերևս իջնելու և բարձրանալու համար: Քանի որ վերջինս որպես մուտք լրիվ բացված չէ, ուստի պայմանականորեն դրանք կոչել ենք «աստիճանախորշ»: Մուտքի երկու կողմերում՝ պատի մեջ, բացվել են աչքի չզարնող օդամուղ խողովակներ: Շինությունը ունի սալահատակ (նկ. 7): Ութ խորշերից հինգն ունեն ավելի սխեմատիկ մակերես, երեքն ավելի խորն են: Կառույցի նախնական քննությունը վկայում է, որ այն իր հասարակական դերը կորցնելուց հետո ծառայել է որպես ապաստարան՝ պատահական անձի համար: Տվյալ դեպքում՝ մի կնոջ, որը բնակության համար տնօրինել է տարածքը: Որպես ննջարան ընտրել է արևելյան կողմի խորշը: «Բնակիչը» հանել է խորշի առջևի հատակի սալիկները և տեղում տեղադրել հատակը կոտրված կավե կարաս, որը թոնրի դեր է կատարել: Վերջինս լցված էր մոխրով, վրան՝ կավե կճուճ: Վթարային շինությունը կործանվել է՝ գմբեթի փլատակների տակ թողնելով տեղի «բնակիչին»: Նրա գլուխը հայտնաբերվեց շինության հյուսիսային, իսկ մարմինը՝ հարավ-արևմտյան կողմում (նկ. 8): Ժամանակի ընթացքում քանդված շինությունը լցվել է աղբով, տոփանվել հողի հաստ շերտով, ծածկվել տեսադաշտից:

Կիսափոր աղյուսաշար շինությունը գետնափոր է, գտնվում է «միջանցք» կոչված աղյուսաշար, արևելյան և հարավարևմտյան կողմերով քարե հիմքեր ունեցող հում աղյուսե պատերի մեջ: Այս աննախադեպ հայտնագործությունը Դվինի միջնաբերդի տարածքում թույլ է տալիս անդրադառնալու Դվին քաղաքի հոգևոր շինություններին՝ հիմնականում մզկիթներին, որոնց մասին կան գրավոր տեղեկություններ: Կարևոր ենք համարում դրանք մի փոքր ընդարձակ ներկայացնել:

Այսպես՝ արաբ աշխարհագիր Մուկադդասին գրում է. «Հայաստանը մի մեծ նահանգ է, որը հիմնել է Նոյի որդի Հաբեթի որդի Թորգոմի որդի Արմինին: Նրա մայրաքաղաքն է Դվինը (Դաբի): Դվինը կարևոր քաղաք է, ունի անառիկ բերդ (միջնաբերդ)... **Մայր մզկիթը** բարձր բլրի վրա է, և նրա կողքին է եկեղեցին... Ունի միջնաբերդ: Նրա շենքերը կավից և քարից են:



Նկ. 1. Հուշարձանի տարածքը չբացված վիճակում



Նկ. 2. Կառույցի պեղման ընթացքը




Նկ. 3. Աղյուսաշար խորշերի միջև քանդված մուտքը



Նկ. 4. Գմբեթի մեծ ափսեի շուրջ յոթ երկնագույն թասերը



Նկ. 5. Գմբեթի առաստաղին ագուցված կորալտե մեծ ափսեն



Նկ. 6. Վերջնականորեն չպեղված ենթադրյալ քանդված մուտքը




Նկ. 7. Կառույցի բացված խորշերը և սալահատակը



Նկ. 8. Շինության հարավարևմտյան հատվածը



Նկ. 9. Հախճապակե փիրուզագույն սափոր՝ փորագիր հարդարանքով



Նկ. 10. Հախճապակե ափսեի շուրթի բեկոր՝ արձանագրությամբ

Բազմաթիվ դռներ ունի, որոնցից են Քայդարի (Քինդար) դուռը, Տփղիսի դուռը և Անիի դուռը, սակայն նրա (բնակչության) մեծամասնությունը կազմում են քրիստոնյաները և նրանց ազնվականները, բայց նրա բնակչությունը պակասել է, և նրա բերդն ավերվել⁵:

Բազմավաստակ հնագետ Կարո Ղաֆադարյանը Դվինի միջնաբերդում մզկիթի գոյության փաստը չի ընդունել՝ գտնելով, որ ամեն մարդ չէր կարող մուտք ունենալ միջնաբերդ: Նա համոզված էր նաև, որ Մուկադդա-

⁵ Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXXVIII, Тифлис, 1908, с. 10. Տե՛ս նաև **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 120, Արաբ մատենագիրներ, Թ-ժ դարեր, թարգմ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 653: Նշենք, որ Կ. Ղաֆադարյանի «Դվին I»-ի համապատասխան հղման մեջ վրիպակ կա. Сборник материалов... (вып. XXXVIII) գրքից արված հղումը էջ 10-ի փոխարեն սխալմամբ գրվել է էջ 92:

սին այդ, ինչպես և այլ տեղեկություններ, արտագրել է ուրիշ մատենագիրներից, որոնց աշխատություններում այդ բլրի մասին հիշատակություն չկա: Իսկապես, եթե անառիկ բերդ ասելով պետք է հասկանալ միջնաբերդ, ապա անառիկ «բերդն ավերվել է» բառերը նույնպես միջնաբերդին են վերաբերում: Մուկադդասին անհասկանալի ձևով օգտագործում է «ունի միջնաբերդ» արտահայտությունը, իսկ մզկիթն ու եկեղեցին տեսնում է ինչ-որ անորոշ բլրի վրա:

Հակառակ այս տեղեկության՝ X դ. մատենագիր Իսթախրին գրում է. «Դվինը (Դաբիլ) Արդաբիլից մեծ քաղաք է և Հայաստանի մայրաքաղաքն է: Նրա մեջ է կառավարչի նստավայրը (Դար-ալ Իմարա): Ունի պարիսպ և քրիստոնյաները նրանում մեծաթիվ են... Դվինում կա մի հսկա լեռ, որը կոչվում է Մասիս (Հարիս), և նրա գագաթը կարելի չէ բարձրանալ, քանզի շատ բարձր է... Ձյունը միշտ մնում է նրա վրա: Նրանից ցածր կա մի փոքր լեռ, որը կոչվում է Փոքր Մասիս (Հուայրաս): Մասիսից են գալիս նրանց ջրերը, այնտեղ են նրանց փայտ հայթայթելու վայրերը և որսավայրերը: Մայր մզկիթը եկեղեցու կողքին է... Նա (Հայաստանը) գտնվում է նրանց քրիստոնյա մեծամեծերի ձեռքում և նրանք են (հայերը), որ գերակշռում են Հայաստանի բնակչության մեջ»⁶:

Կարո Ղաֆադարյանը կարծես թե ընդունում է «մայր մզկիթը եկեղեցու կողքին է» տեղեկությունը՝ մտածելով, որ 894 թ. երկրաշարժի հետևանքով ավերված կաթողիկոսարանը կարող էր թերևս վերածվել մզկիթի: Գիտնականը հնարավոր է համարում և այն, որ Դվինի արևելադիր շենքերն արաբների կողմից կարող էին օգտագործվել մզկիթի համար: Ավելացնում է նաև, որ կաթողիկոսարանի հարավային թևի կենտրոնական սենյակում պահպանված հում աղյուսե պատերը մզկիթի մեհրաբի հետքերը կարող են լինել⁷:

Իսթախրիի տեղեկությունը լրացնում է նաև արաբ աշխարհագիր Իբն Հաուկալը, որը գրել է. «Դվինը շրջապատված է պարսպով: Քրիստոնյաներն այնտեղ բազմամարդ են: Մայր մզկիթը (քրիստոնեական) տաճարի կողքին է, ինչպես Եմեսայի մզկիթը, որը տաճարին կից է և կպած»⁸: Ավել-

⁶ Сборник материалов для описания..., т. XXIX, с. 19: Տե՛ս նաև Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 120, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 574:

⁷ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 120:

⁸ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 630-631:

լացնում է նաև, որ անցյալում (քաղաքը) պատկանում էր բոլոր հայերի (հայոց) թագավոր Սմբատին (Սինբաթ)՝ Աշոտի (Աշութ) որդուն և նրա պապերին... Արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանը նույնպես գտնում է, որ Ս. Գրիգոր մայր տաճարի կողքին կաթողիկոսարանի ավերակների վրա կարող էր կառուցված լինել մզկիթը⁹:

Այն, որ տաճարները, հետագայում նաև քրիստոնեական հոգևոր շինությունները, օգտագործվել են մահմեդականների կողմից, վկայում է նույն ինքը՝ Իբն Հաուկալը: Նա նշում է, որ Սիցիլիայի Պալերմո քաղաքում մի մայր մզկիթ կա, որը արաբական նվաճումից առաջ հռոմեոսների եկեղեցի է եղել: Հսկայական չափերի այս տաճարում, տախտակե դագաղի մեջ դրված է եղել հույն փիլիսոփա Արիստոտելը: Քրիստոնյաները նրա գերեզմանը մեծարել են և նրա միջոցով բուժվել՝ իմանալով, որ հույները նույն ձևով են վերաբերվել տաճարին¹⁰: Նույն օրինակն առկա է միջնադարյան Երևանում: XVII-XVIII դդ. մահմեդականները սովորություն են ունեցել քաղաքի քրիստոնեական եկեղեցիներ հաճախել իրենց հիվանդներին բուժելու համար¹¹: Դվինի մզկիթների մասին մեկ այլ տեղեկություն է տվել նույն արաբ պատմիչ Իբն Հաուկալը. «Դուինը մեծ քաղաք է, հարուստ՝ բարիքներով, պարտեզներով, մրգատու ծառերով, ցանքատարածություններով և ունի պարիսպ: Նրանում կան ջրի աղբյուրներ և հոսող ջրեր: Հիմնականում ցանում են բրինձ և բամբակ: Այժմ քաղաքի կենտրոնում վերակառուցված է մայր մզկիթը՝ շրջապատված այլ պարսպով, և նրա շուրջը խրամատ կա, նրա մզկիթի մեջտեղում կա ջրի աղբյուր...»¹²:

Դվինի մզկիթների մասին տեղեկություն է տալիս նաև ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը՝ վկայակոչելով պրոֆեսոր Մելիքսեթ Բեկին: Նա գրում է, որ 1063 թվականին վրաց թագուհի Թամարայի հայրը՝ Գեորգի Ը-ն, Դվինը ազատել է սելջուկներից և քանդել մզկիթը¹³: Ցավոք, նման տեղեկություն չկա Մելիքսեթ Բեկի աշխատության մեջ¹⁴: Ասենք միայն, որ

⁹ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայություններ, Ե., 1965, էջ 220:

¹⁰ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 600:

¹¹ Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա., Ուրվագծեր Երևանի պատմության և հնագիտության, Ե., 2015, էջ 15:

¹² Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 626-627:

¹³ Հարությունյան Վ., Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Ե., 1950, էջ 29:

¹⁴ Տե՛ս Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 7:

միջնադարյան Դվին քաղաքի մահմեդական կառույցների վերաբերյալ գրավոր աղբյուրները բազմիցս վերանայել են հայ և օտարերկրյա հեղինակները: Քննարկման նյութը եղել է հիմնականում Բագրատունյաց շրջանի՝ IX-X դդ. Դվինի տարբեր տարածքներում գոյություն ունեցող մզկիթների հարցը: Ուսումնասիրողները փորձել են հիմնավորումներ տալ այդ խնդրին՝ չունենալով որևէ իրական փաստ¹⁵: Իրական փաստը 2011 թ. Դվինի միջնաբերդում ամբողջապես բացված մահմեդական կառույցն է, որը հայտնաբերվել է խիտ բնակեցված տարածքում: Ինչպես է այն հայտնվել այս վայրում, և ովքեր են շինության տերերը: Միջնաբերդի հարավարևելյան, հարավարևմտյան և լանջի գագաթի տարածքում պեղումներով բացված բնակելի տներին առնչվող մանրամասները ինչ-որ չափով պատասխան են տալիս այդ հարցին: Այսպես՝ Կարո Ղաֆադարյանը առանձնացնում է մինչև 1950 թ. միջնաբերդի տարածքում բացված, իր տեսակի մեջ եզակի կավակերտ պալատական շինությունը: Վերջինս ունեցել է աղյուսաշար հատակ, ծովածո գաջի վրա արված հարդարանք, ձևավոր աղյուսներից կազմված տերակոտային որմնազարդեր: Կարո Ղաֆադարյանը պեղումներով բացված շենքերի հիմնապատերի վրա առանձնացնում է XI-XII դդ. վերաշինության հետքերը¹⁶:

1951 թ. ստորին բերդի հարավարևմտյան կողմում, բերդապարսպին կից պեղումներով բացված բնակելի տան գլխավոր սրահը նույնպես ունեցել 20-22 քառ. սմ չափերի թրծած աղյուսից շարված հատակ, պատերի գիպսե ծովածո որմնազարդեր: Նույն տան աստիճանավոր խորշերից մեկում հայտնաբերվել է հախճապակե փիրուզագույն սափոր (նկ. 9): Տեղում պահպանվել է հյուսածո ժապավենաձև քանդակազարդ պատի մի հատված: Այս փոքրիկ տարածքում հատակը նույնպես պատված է եղել մեծ, թրծած աղյուսներով: Կենտրոնում հոր է, վրան՝ քարե ծածկ: Հորի մեջ հայտնաբերվել է հախճապակե փոքր սափոր¹⁷: Գիտնականը, ելնելով տեղում բացված բնակարանների ներքին հարդարանքի մանրամասներից, նյութը թվագրել է X-XIII դարերով¹⁸:

¹⁵ Шахназарян А.С. Двин. Историко-географический очерк, Е., 1940, с. 135.

¹⁶ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 128-129:

¹⁷ Նույն տեղում, հ. II, Ե., 1982, էջ 14-15:

¹⁸ Նույն տեղում, հ. II, էջ 102-105:

Վերջին տարիների (1986-1991, 2006-2008 թթ.)՝ միջնաբերդի հյուսիսարևելյան հատվածում կատարված պեղումներով բացված շինություններն իրենց ճարտարապետական հնարանքներով նույնպես կրկնում են վերը ներկայացված կառույցների ինտերիերի մանրամասները, որոնք թվագրվում են XI-XII դարերով, չնայած Կ. Ղաֆադարյանը Դվինի գիպսե ծուլածո որմնազարդերի զուգահեռները տեսնում է ուշ արաբական, մավրիտանական, սելջուկյան արվեստներում, սակայն համոզված է, որ «արաբեսկը», սելջուկյան շղթան, «սասանյան», բյուզանդական, սիրիական ոճերը Հայաստանում տեղական երևույթներ են, ծագել և զարգացել են հենց տեղում, իհարկե, շրջակա երկրների հետ փոխազդեցության մթնոլորտում¹⁹։ Այո՛, դա հստակ նկատվում է Իրանում, որտեղ XI-XII դդ. գերիշխել են մոնոքրոմ ճարտարապետական հարդարանքը, զարկով փորագրությունը, ձևավոր աղյուսների կամ տարբեր զարդարանքով պատված տերակոտե (կավե) սալիկների շարվածքը։ Այն մեծ տարածում է ստացել հատկապես Խորասանում, եղել տեղական ճարտարապետական դպրոցի առանձնահատկություններից մեկը²⁰։

Դվինի պեղումների արդյունքները վկայում են, որ միջնաբերդի բնակելի շինություններն իրենց ինքնատիպ քանդակագործական և նկարչական հնարանքներով հիմք են դարձել XI-XII դդ. շինարարական արվեստի մի նոր՝ քաղաքային ոճի, որի արձագանքները տեսնում ենք Անիում։ Նույն ժամանակ Անին, ինչպես Ն. Մառն է նշում, առևտրի և փոխանակության կենտրոնակետն է եղել։ Արևմուտքի և Արևելքի երկրների միջև կատարվող հաղորդակցության ճանապարհների կարևոր երակներից էր, որը ժառանգել է բացարձակապես ավելի հնագույն և ավելի հայտնի հայկական քաղաք Դվինից²¹։

Դվինի միջնաբերդում բացված բնակելի կառույցները վկայում են, որ տեղի բնակիչները ոչ միայն միջին և բարձր խավի ապրելակերպ են ունեցել, այլև առանձնահատուկ հոգևոր կերտվածք, որի արդյունքը սույն հոգևոր կառույցն է։ Պեղումները դեռևս անավարտ են։ Նախապես կարող ենք միայն ասել, որ այն դամբարան չէ, քանի որ տեղում թաղման հետքեր չկան։ Ասենք նաև, որ մզկիթ չէ, քանի որ վերջինիս պատերից մեկը ուղղված

¹⁹ Նույն տեղում, հ. I, էջ 135-136։

²⁰ Всеобщая история искусств, М., 1961, с. 80.

²¹ Март Н.Я. Ани, Е., 2011, с. 35.

չէ դեպի Մեքքա՝ Քաաբա, որը կրում է «Միհրաբ» անվանումը: Հայտնի է, որ աղոթքի ժամանակ մարդիկ պետք է դեմքով կանգնած լինեն դեպի աշխարհի բոլոր մուսուլմանների միասնությունը խորհրդանշող պատը: Շինությունը, թերևս, կարող է միջնակարգ կամ բարձրագույն հաստատություն լինել (մեդրեսե) մահմեդական հոգևորականների, ուսուցիչների և պետական համակարգում աշխատողների համար:

Պեղումները դեռևս անավարտ են. հետագա աշխատանքները թերևս նոր բացահայտումներ արձանագրեն: Ներկայացնենք պեղված շինությունը մեր պատկերացմամբ:

Շինության գմբեթի աղյուսե շարվածքի մեջ ագուցված երկնագույն կոբալտե մեծ ափսեն և դրա շուրջը օղակ կազմած յոթ երկնագույն թասիկներն իրենց գեղարվեստական դասավորությամբ և գունային ներդաշնակությամբ, մեր համոզմամբ, թերևս, երկնային լուսատուները խորհրդանշող գաղափարակիրներ են: Գաղափարը հետևյալն է. կառույցի գնդաձև գմբեթը տիեզերքն է, կենտրոնի մեծ ափսեն՝ երկրագունդը: Վերջինիս շուրջն օղակաձև պտտվող յոթ երկնագույն թասերը աստղերն են (նկ. 4,5):

Զարմանալի զուգադիպությամբ այս ամենը մենք տեսնում ենք պլատոնյան իդեալիստական փիլիսոփայության մեջ, ըստ որի՝ աշխարհը աստվածային Դեմիուրգի (աշխարհի արարիչ) արարչագործությունն է: Այսինքն՝ տիեզերքը ստեղծված է գնդաձև, որի կենտրոնում երկրագունդն է. նրա շուրջը պտտվում են մոլորակներն ու աստղերը՝ հոգի և մարմին ունեցող տեսանելի աստվածները: Այդ ամենը շարժման մեջ է դնում համաշխարհային Ոգին²²:

Բացառված չէ, որ շինության փոքրիկ միջավայրում կարող էին հավաքվել իդեալիստական կրոնափիլիսոփայական միասիկ մտածողության տեր սուֆիները, որոնք, իրենց հոգևոր ուսուցչի օգնությամբ ինքնակատարելագործման ճանապարհն անցնելով (տարիկա), փորձել են հասնել և

²² Տե՛ս **Արևշատյան Ս.**, Պլատոն (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 325):

միավորվել աստծուն²³: Նշենք, որ Դվինում իշխել է Աբու Հանիֆայի մագ-հալը²⁴:

Ի դեպ X-XII դդ. արևելաքրիստոնեական խորհրդապաշտական գրականության մեծ ներկայացուցիչ, տիեզերական վարդապետ սուրբ Գրիգոր Նարեկացու աշխարհայացքի հիմնական գաղափարն է եղել հոգեկան բոլոր ուժերի գերագույն լարումով Աստծու հետ ձուլվելը, որի համար անհրաժեշտ է համարում «անդադրում և հանապազ» քավել մեղքերը, հաղթել մեղանշական մարմինը, միանալ գերագույն Տիրոջը, դառնալ նրա մասնիկը:

Փրկության գաղափարը Գրիգոր Նարեկացու ուսմունքի հիմքն է, որի վրա կառուցված է նրա միստիցիզմը: Նարեկացին Աստծու նկատմամբ իր հարաբերության հիմքում դնում է հավատը, որ ուղղված Աստծուն՝ իրեն, այլ ոչ թե եկեղեցուն, քանի որ ոչ թե եկեղեցուց, այլ Աստծուց և միայն Աստծուց է բխում շնորհը: Գրիգոր Նարեկացին պանթեիստ է և ըստ նրա՝ Աստված և բնությունը ներհյուսված են իրար...²⁵:

Մահմեդական սույն կառույցի տարածքում 2011 թ. հայտնաբերվել էր պարսկերեն արձանագիր կավե սնդկամանի իրանի մաս և հախճապակե ափսեի շուրթի բեկոր՝ արաբերեն գրությամբ (նկ. 10): Երկար տարիների փնտրտուքից հետո՝ միայն 2018 թ., հնարավոր եղավ իրականացնել տեքստերի վերծանությունը շնորհիվ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Աղբյուրագիտության բաժնի աշխատակից Տիգրան Միքայելյանի, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Ափսեի արաբերեն գրությունը բառացի կարդացվում է՝ «լույսը Գիտելիքով»: Իմաստը՝ գիտելիքը լույս է, կամ՝ բարությամբ դեպի լույս: Համառոտ, սակայն, բազմիմաստ այս գրությունը կարծես կրկնում է հայ միջնադարի փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչ Գրիգոր Մագիստրոսի (990-1058 թթ.) աստվածային էության մասին թողած այն խոսքը, թե՝ «Մերձենալ առ Աստված՝ բարի է յոյժ եւ ոչ այլ ինչի հնար մերձենալ, եթե ոչ գիտութեամբ լուսավորել

²³ Всемирная история искусств, т. II, М., 1961, с. 77, տե՛ս նաև Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Ե., 1985, էջ 213:

²⁴ Կրոնափրավագիտական դպրոց, որի հետևորդները գտնվում էին որոշ քաղաքներում և սուֆիզմի մասին հարուստ տեղեկություններ ունեին (տե՛ս Արաբ մատենագիրներ, Թ-Ժ, էջ 655):

²⁵ Արևշատյան Ս.Ս., Գրիգոր Նարեկացի (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Ե., 1976, էջ 334-335): Տե՛ս նաև Չալոյան Վ.Կ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975, էջ 349-368:

զայն»։ Մագիստորսը բնությունը համարում է Աստծո ստեղծագործություն։ Բնական աշխարհի բացահայտված օրենքները նա տարածում է Աստծո վրա և բանականորեն հիմնավորում նրա գոյությունն ու էությունը։ Նա մեծ նշանակություն է տալիս բնագիտությանը և մաթեմատիկային, որոնք նախապատրաստում են մարդկային միտքը բնությունից վեր գտնվող գերագույն գոյի ճանաչմանը²⁶։ Հոգևոր կառույցի տարածքում հայտնաբերված հախճապակե անոթը պատրաստող (թրծող) վարպետը և, իհարկե, պատվիրատուն խորհրդապաշտական և կրոնափիլիսոփայական մտածողություն են ունեցել այնպես, ինչպես միջնաբերդի շքեղ տներում ապրող տարբեր դավանանքների տեր ընտանիքները։

Պատմական աղբյուրները վկայում են, որ X-XII դդ. Դվինի՝ իրանական-քրդական ծագում ունեցող Շադդադյան ամիրաները խիստ քաղաքականություն չեն վարել հայկական թագավորությունների և իշխանությունների նկատմամբ։ Նրանք ճանաչել են Անիի Բագրատունիների գերիշխանությունը և նույնիսկ խնամիական կապեր են ունեցել նրանց հետ։ Այսպես՝ Մանուչեն (1072-1110 թթ.) մոր կողմից հայ էր և Անիում իրեն շրջապատում էր հայ իշխաններով, իսկ Դվինում իշխում էր նրա եղբայր Աբունասը (1105 թ.)։ Այսպիսով, Գանձակի, Դվինի, Անիի Շադդադյան տոհմի ամիրայությունները իրար հետ կապված ֆեոդալական պետություններ էին²⁷։

Անկախ նմանատիպ այլ օրինակներից՝ ասենք, որ Դվինի միջնաբերդի՝ վերը նկարագրած բնակելի շինություններն ու մահմեդական կառույցը կառուցվել են Հայաստանի համար որոշակի բարենպաստ պայմաններում։ Հայտնի է, որ XI դ. Առաջավոր Ասիայի քաղաքական ուժը Սելջուկյան պետությունն էր, որն իր հաղթանակին հասավ քաղաքակիրթ երկրներ նվաճելու ճանապարհով²⁸։ Թուրքը նվաճեց, սակայն դրա փոխարեն, ինչպես Հ. Գելցերն է նկատել, կարողացավ հռոմեական փառահեղության ավերակների վրա միայն իր վրանը հաստատել²⁹։ Նման դիպուկ գնահատա-

²⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը (լոյս է ընծայել Կ. Կոստանեանցը), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 97։ Տե՛ս նաև **Արևշատյան Ս.Ս.**, Նեոպլատոնականության վերջալույսը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 336-339)։ Գրիգոր Մագիստրոսի մասին առավել մանրամասն տե՛ս **Մխիթարյան Ս.**, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, 164 էջ։

²⁷ **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Ե., 1952, էջ 81-84։

²⁸ **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, Ե., 1971, էջ 146։

²⁹ **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն..., էջ 65։

կանը խոսում է այն մասին, որ սելջուկները չէին կարող կառավարել քաղաքակիրթ երկրներում: Վարչական և ֆինանսական գործերը նրանք ստիպած հանձնեցին իրանական ծագում ունեցող հեղինակավոր մարդկանց: Այդ մարդկանցից էր Նիզամ ալ-Մուլքը (Աբու Ալի ալ-Հասան ալ-Թուսին Խորասանի Թուս քաղաքից): Նա տաղանդավոր պետական գործիչ էր, «Կառավարման ձեռնարկ» (Սիասեթ Նամե) հանրահայտ աշխատության հեղինակը, գիտնականների և բանաստեղծների հովանավոր, մեդրեսեների հիմնադիր³⁰:

Այս վեզիրի հանձնարարությամբ էր, որ Մալիք-շահը բարեփոխումներ ձեռնարկեց Անդրկովկասի և Փոքր Ասիայի ավերված քաղաքներում և գյուղերում: Կարգի բերվեցին հաղորդակցության ճանապարհները, թեթևացվեցին առևտուրը կասեցնող ծանր մաքսերը, կառուցվեցին քարավանատներ, կամուրջներ և կատարվեցին բազմաթիվ այլ գործեր: Մատթեոս Ուռհայեցին, հաշվի առնելով Մալիք-շահի իրականացրած լայնածավալ աշխատանքները, խորը կսկիծով ողբում է Սուլթանի մահը³¹:

Հենվելով Դվինում կատարված պեղումների արդյունքների վրա՝ կարող ենք ասել, որ քաղաքական տեսակետից հենց այս նպաստավոր պահին է, որ Հայաստանում, հատկապես Դվինում, վերականգնվել և կառուցվել են ժամանակի պահանջներին համապատասխան բնակելի և հասարակական շինություններ: Դվինը, ինչպես ողջ Հայաստանը, XI-XII դդ. Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի երկրների հետ ունեցավ ոչ միայն քաղաքական, տնտեսական, այլև մշակութային արժեքների ներթափանցման համար նպաստավոր հարաբերություններ³²: Յուրացնելով իրանական, արաբական, բյուզանդական, հայկական և նվաճված այլ ժողովուրդների դարավոր մշակույթը՝ սելջուկները իրենց հերթին ինչ-որ հետք թողեցին այդ ժողովուրդների մշակութային կյանքում³³:

Այդ ամենի հետևանքով, ստեղծվեց դարաշրջանին հատուկ ճարտարապետական, շինարարական, կիրառական արվեստի մի նոր ոճ, որը հստակ ընդգծվում է Դվինի իշխանական տների՝ հատկապես իրանական

³⁰ **Բոռնազյան Ս.Վ.**, Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Ե., 1980, էջ 92-166:

³¹ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 240: Տե՛ս նաև **Նույնի**՝ Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի), Ե., 1991, էջ 261:

³² **Մաքս Հ.Բ.**, նշվ. ախ., էջ 35-40:

³³ **Բայբուրդյան Վ.**, Իրանի պատմություն, Ե., 2006, էջ 234-236:

մշակույթը կրող կառույցի մանրամասներում, որի վերականգնումը մի նոր էջ կբացի միջնադարյան Դվին քաղաքի պատմության կնճռոտ էջերը վերանայելու համար:

НОВОВЫЯВЛЕННОЕ СТРОЕНИЕ В ДВИНСКОЙ ЦИТАДЕЛИ

БАБАЯН Ф.С.

Резюме

В 2011 г. в результате раскопок в Двине была найдена уникальная полуподвальная пристройка к большому строению, примыкавшему к юго-восточному участку крепостной стены. Изнутри стены из сырцового кирпича были дополнены 8-ю остроконечными стрельчатыми нишами, пространство между которыми покрыто штукатуркой с выгравированными геометрическими фигурами. В руинах свода обнаружено 7 расположенных по кругу маленьких голубых «плошек» (в центре которых находилась широкая кобальтовая тарелка), по-видимому, символизирующих небесные светила. Это помещение XI-XII вв. площадью 4х3 м могло быть местом сбора суфийской секты. Восстановление этой постройки откроет новую страницу в истории средневекового Двина.

A NEWLY FOUND STRUCTURE IN THE CITADEL OF DVIN

F. BABAYAN

Abstract

A unique semi-basement extension to a large structure adjacent to the southeast section of the fortress wall of Dvin was unclosed in 2011. Inside the mud brick walls were supplemented with 8 lancet niches, the space between which was covered with engraved terracotta overlays. The ruined vault was ornamented with 7 small heaven blue puddles arranged in a circle with a wide cobalt plate in the center, apparently symbolizing the luminaries. In the 11-12th centuries this room of 4x3 m could be a meeting place for a Sufi sect. Its restoration would open a new page in the revision of the complicated history of medieval Dvin.

ON THE RAIN-RELATED RITUALS OF TATEV VILLAGE, ARMENIA (Ethnographic field-notes)

R. HOVSEPYAN

Village Tatev is situated in the south of the Republic of Armenia, in the region called Syunik or Zangezour. Geographically, the village (N39°23'8.79", E46°14'29.34"; 1500-1670 m a.s.l.) is in the basin of Vorotan River, a tributary of Araxes. The village is a part of the Tatev community (villages Tatev, Tandzatatap, Svarants, Halidzor, Shinuhayr, Khot, Harzhis and Kashuni). Nowadays, village Tatev has a population of circa one thousand people, practically all are Armenians¹.

Rituals related to the rain are an intangible part of folk beliefs in Armenia although they may vary in different regions of the country and for different communities². Several rituals related to the rain are recorded and published for the Syunik region (including the village of Tatev)³. During our fieldwork in Tatev, we recorded narratives regarding the rain-making and rain-stopping rituals that had been practiced in the village of Tatev in the 20th century. Most of the memories and narratives refer to the Soviet period, 1930-1990.

Narratives about the rain-making and rain-stopping rituals in the Tatev village were gathered as a part of ethnographic survey aiming to study plant-related practices (including the use of wild plants resources, agriculture, vegetal food, folk medicine, agriculture-related rituals, etc) during field-works in

¹ Official website of the administration of Syunik region. About Tatev Community. <http://syunik.mtad.am/about-communities/991/> [in Armenian].

² For example, see **Bdoyan V.H.** Agrarian Culture in Armenia, Yerevan, 1972, pp. 484-501 [in Armenian]; **Lalayan E.** Worship of Elements and Physical Phenomena. Borchalu Province (Ethnographic Journal, N 10, 1903, pp. 200-202) [in Armenian]; **Lisitsyan S.** Armenians of Zangezur, Yerevan, 1969, pp. 129-130 [in Armenian].

³ See **Lisitsyan S.**, op. cit., 1969, pp. 129-130; **Grigorov N.** Village Tatev (Collection of Materials Describing Localities and Tribes of the Caucasus, Issue 13, Tiflis, 1892, pp. 67-68, 115-116) [in Russian].

the village of Tatev in 2017 and 2018⁴. Our interactions with research participants started with an introduction of ourselves, our work, interests and plans. Then, if we obtained their oral consent, we used semi-structured interviews (in some cases we asked also for reproductions of fragments of rituals and made observations). More than twenty locals were interviewed, both woman and man. After several interviews, it was clear that nobody practices rain-related rituals anymore in the village and only elderly people remember those rituals from their younger times, mostly from childhood. The narratives told by the locals have begun to repeat each other after several interviews. A summary based mostly on the interviews is given in this article. Particular interviews are cited only in the cases when specific information is given; for the rest, narratives are repeated in all interviews or in the majority of them.

There were three main groups of rain-related rituals in the village of Tatev; we conventionally named those *Stone & water/fire* (*Petrosakhach*, *Khozaghbyur*, *Kotrats khach*, etc), “*Ghodi-ghodi*” and *River plowing* (from the most popular to the less). Many details of these rituals were forgotten. I tried to gather as many details as possible, but some are still missing (e.g. a part of the *Ghodi* song). There are notes on the rain-related rituals of Tatev also in earlier publications⁵; ethnographic data I gathered partly repeat the data from the earlier publications. In addition to the rituals described in this article, there were several more in Tatev in the second half of the 19th century. For example, to stop the rain, old women boiled rain-water until it fully evaporated⁶, or opened backside of a first child under the rain⁷.

Stone & water/fire. The main idea of this ritual is that a cross-stone should be wetted to induce rain. According to some of the locals of Tatev, any cross-stone can be used for the rain-making ritual. However, there are three

⁴ I am thankful to all our research participants for their contribution to this study. Also, I wish to thank my colleagues, Nina Stepanyan-Gandilyan, who was present during some of the interviews and assisted me, and Christina Ayzvazyan, for professional transcription of the interviews. Ethnobotanical investigations in the community of Tatev have been initiated by Christian Stollberg, Nina Stepanyan-Gandilyan and the author in 2017 and continued by the last two.

⁵ See **Grigorov N.**, op. cit., 1892, pp. 67-68, 115-116, 118; **Lisitsyan S.**, op. cit., 1969, p. 129.

⁶ See **Grigorov N.**, op. cit., 1892, p. 115.

⁷ See **Grigorov N.**, op. cit., 1892, p. 118.

particular places which locals visited to conduct rain-related rituals (from more popular to the less): Petrosakhach, Khozaghyur and Kotrats khach. Although there is the main action – wetting a stone by a female (sometimes male⁸) virgin, the rituals are somewhat different in these places⁹.

Petrosakhach, translated as the cross of Peter¹⁰, refers to a pilgrimage destination and a *khachqar* (cross-stone) in the top of a mountain. Ethnographic notes regarding Petrosakhach from the earlier publications refer the following: When drought, girls went from a house to a house, collected food products and (with boys) took those offerings to the top of a hill to NW from the village Tatev, where, according to the legend, the grave of hermit Petros was situated. Here they organized a party: eating, drinking, singing and entertaining. After that, they took the cross-stone from the grave and headed to the mountain spring nearby. The girls did not look back while carried the stone. At the spring, they immersed the stone into water and left it there. When there was no need of rain they took the cross-stone back to its place, else strong rains might wash away all sowings¹¹.

Nowadays there is a broken cross-stone on the summit of the mountain. Only the lower part of that cross-stone, identified by the locals as Petrosakhach, is present there (Coordinates: N39°24'24.11", E46°13'53.58"; Altitude: 2031 m a.s.l.; Fig. 1a,c). According to our interviews, the villagers, seeking for rain, sent virgin/unmarried women to this place to pour water on it. Lighting candles and praying for rain was a part of this ritual. To stop the rain, the women made a fire on the cross-stone. The ritual was so accustomed in Tatev at the end of the 20th century that an unmarried and blind woman (“Muni dada”) was in charge for conducting this ritual for many years (after her death this practice discontinued in the village). The locals strongly believed

⁸ Interview N RH18061601.

⁹ A similar ritual was described for Gandzak province for the end of 19th century (See **Lalayan E.** Worship of Elements and Physical Phenomena. Gandzak Province (Ethnographic Journal, N 6, 1900, p. 347) [in Armenian]).

¹⁰. According to epigraphist Arsen Harutyunyan, who later visited Petrosakhach and Khozaghyur and studied the inscriptions on them, a man named Degh erected the cross in memory of his parents (there is no any indication of “Petros” or “rain”). The cross is dated to 11th-12th centuries A.D. (see **Harutyunyan A.** Newly-Found Inscription of “Petrosakhach” (“Etchmiadzin”: Review of Religious Studies and Armenology, (submitted)) [in Armenian]).

¹¹ See **Grigorov N.**, op. cit., 1892, pp. 67-68, 115-116.

in the ritual of Petrosakhach; there were cases when unmarried women were sent to Petrosakhach and requested to pour water on it to verify their virginity before the marriage¹² (it had been expected that rain will fall only if virgin pours water on the cross). Nowadays, there are no narratives and memories regarding the taking the cross-stone from the top of the mountain to the spring as it had been practiced at the end of 19th century (see above)¹³.

Khozaghbyur, translated as spring of pig, refers to a spring in the foothill of the same mountain where Petrosakhach is situated (N39°24'10.86", E46°13'52.89", 1871 m a.s.l.; Fig. 1a,b). This locality is an assemblage of two old, medieval stone basins and a piece of cross-stone (Fig. 1b). The rain-making ritual at Khozaghbyur, according to our interviews, was the following: the villagers visited the spring and immersed the cross-stone in the basins of water. An elderly man attests that Muni dada (see Petrosakhach above) was performing that ritual with immersing the cross-stone into the water. And, when there was too much rain after this ritual the same woman was asked to go to Khozaghbyur and take out the cross-stone from the water basin¹⁴.

Having the above-mentioned ethnographic notes from the end of 19th century¹⁵, it is easy to conclude that Khozaghbyur is the spring where the Petrosakhach cross-stone was carried as a part of the rain-making ritual, and the piece of the cross-stone at the Khozaghbyur spring is the missing upper part of Petrosakhach. However, nowadays the locals were not aware of it and they consider Petrosakhach and Khozaghbyur rituals separately. Possibly, at one point the Petrosakhach cross-stone was broken during the moving. Then the locals decided to take only the smaller piece (upper half) to the spring of Khozaghbyur. After that, from some point on, the locals decided do not take the piece of the Petrosakhach cross-stone back to the top of the mountain. Possibly the war, revolution and negative attitude towards religion and beliefs from the side of ruling communistic authorities at the beginning of 20th century resulted in discontinuation of the practice, described for the second half of

¹² Interview RH18041904abcd.

¹³ See **Grigorov N.**, op. cit., 1892, pp. 67-68, 115-116.

¹⁴ Interview RH18041801.

¹⁵ See **Grigorov N.**, op. cit., 1892, pp. 67-68, 115-116.




Fig. 1. Petrosakhach and Khozaghbyur, Tatev, Armenia. a – Petrosakhach mount, where both cross-stones are situated, b – Khozaghbyur spring: the cross-stone and the basins, c – Petrosakhach cross-stone with remains of lighted candles in front

the 19th century¹⁶. Discontinuation of that practice resulted in the loss of memory about the origin of this piece of stone at the Khozaghbyur spring.

Carrying this stone piece from its original place (Petrosakhach) to the spring and back in the earlier past, apparently, had been done many times (possibly for centuries) as the stone is heavily eroded: edges are rounded, the carving of the cross is barely visible on it. There is a custom that may serve as a link for these two, Khozaghbyur and Petrosakhach contexts: the visitors that frequent Petrosakhach first should stop at Khozaghbyur, put the hand on the cross-stone (Fig. 1b), drink water from the spring and only then start the climbing (according to the locals, after doing it the climbing is easier)¹⁷.

¹⁶ See **Grigorov N.**, op. cit., 1892, pp. 67-68, 115-116.

¹⁷ Interview RH180618ab.

Kotrats Khach, translated as a broken cross, is an assemblage with a small chapel like a building, which has carved crosses and inscriptions on it. A ritual similar to the one practiced for Petrosakhach had been practiced also for this case: an unmarried woman (women) went to this place, found a boulder, lighted candles and prayed, asking for rain¹⁸.

In addition to the above-mentioned, the locals also used to send girls or virgin/unmarried women to a random cross-stone or just a boulder to pour water on it for rain or make a fire for sunny weather. To stop the rain they also went to the monastery of Tatev, lighted candle and prayed¹⁹.

Ghodi²⁰. The locals call the ritual *Ghodi-ghodi* (Դոդի-դոդի). The main actor/figurant of the ritual is a female – often a doll (in a broad sense) and/or children. Young girls or children in general were the main actors of this ritual. Name *Ghodi* was referred to a spoon or a ladle that was “dressed” (usually wrapped using white cloth²¹) and used in the ritual. The spoon was danced while singing. The procession of children, particularly young girls or virgin women (two²²) dressed like old women²³ or like boys/men²⁴ or sackcloth²⁵ walked from a house to a house in the village, singing and gathering food products and sweets (eggs, milk, butter oil, bread, wheat grains, candies, walnuts, etc). The landladies sang something (the words are forgotten) as a reply while giving the food²⁶. The gathered food (dedicated to the ‘*Ghodi*’ and put in the scoop of the “dressed” ladle²⁷) had been later prepared and consumed by

¹⁸ Interview RH18041905a.

¹⁹ Interview RH18041705a.

²⁰ To the question what is the *ghodi*, what is the meaning of that word, the locals mostly tell that *ghodi* is the jewel made of a row of coins that elderly women of Syunik were wearing on their foreheads. One elderly woman attested that saying *Ghodi* during the ritual they referred to the doll made of ladle [RH18041902]. Another elderly woman [RH18061704] noted that they call *ghodi* also the red flower and the capsule of a wild poppy (‘pot’ (պոտ) in the local dialect).

²¹ Interviews RH18041902, RH18061601.

²² Interview RH18041705a.

²³ Interview RH18041801.

²⁴ Interview RH18061702.

²⁵ Interview RH18061704.

²⁶ Interview RH18061601.

²⁷ Interview RH18041902.

the procession members or shared²⁸. In one case, girls had gathered milk and rice that later used to prepare a traditional milk-soup called *katnav*²⁹.

Normally, this ritual was served as a rain-making one but two of the participants³⁰ noted that they (girls' groups) had done it also to stop the rain and to have sunny weather (although the words of the song that one of them³¹ cites say that it is for having rain).

Here are the words of the song³².

Ղո՛ղի, ղո՛ղի, մըեր ղողի՛, / Ghodi, Ghodi, our Ghodi,

Մա՛րթը մըեռած, մըեր ղողի՛, / The one, whose husband died, our Ghodi,

Տըղա՛ն կորած, մըեր ղողի՛, / The one, whose son was lost, our Ghodi,

...

The majority of the research participants remember the above-mentioned segment of the song only; almost nobody remembers the rest. Here are some pieces for the continuation. For example,

Խոփըները ընջըռտըլալ ա, / The mouldboards [of plows] got rusty,

Փոկները թըզոտըլալ ա... / The straps got dusty...

...

Եղ տո քցե՛նք հարսին վարսը... / Give us butter that we oil the bride's hair...³³

...

Ձյու՛ տըվեք, տանըք ճաշ եփըք, / Give us eggs that we take and cook a meal,

²⁸ Interview RH18041705a.

²⁹ Interview RH18061704.

³⁰ Interviews RH18061601, RH18041902.

³¹ Interview RH18041902.

³² There were similar songs in other villages of Syunik region but “Choli, Choli” (Ճօլի, Շոլի) was used instead of “Ghodi, Ghodi” (See **Lisitsyan S.**, op. cit., 1969, pp. 129-130). First three lines of the song repeat the one for *Godi* in Artsakh (see **Ghaziyani A.** Artsakh (Armenian Ethnography and Folklore, vol. 15, Yerevan, 1983, p. 156) [in Armenian]). This song and the ritual of *Godi* in Artsakh, contrary to the one of Tatev, had been used predominantly for the rain-stopping ritual, although dual use is also noted (see **Hayrapetyan T.** On the Dual Perception of Rites to Call for Rain and to Stop Raining (Historical-Philological Journal, 2004, N 3, pp. 217-227) [in Armenian]).

³³ Interview RH18041902.

Յո՛ւղ տըվեք, տանըք ճաշ եփըք... / Give us butter that we take and cook a meal...³⁴.

In another version by the same woman:

Յո՛ւղ տըվեք, տանըք [գութանի] փոկերը թըրչենք, որ վեսկով (եզների լուծը) վարընեն,... որ անձրև կյա հետի:/Give butter that we take and dunk the straps [of plow] and use the yoke³⁵ to till ...that it rains³⁶.

Փա՛յ տուր, տանըք ճաշ էփըք.../Give us a share that we take it and cook a meal...³⁷.

In the second part of the song, a share, particularly a food share was requested; even those who did not remember the exact words of the song, noted it.

A similar ritual was recorded for the village at the end of the 19th century³⁸: if drought lasted long, girls sculpted a turtle/tortoise or a doll resembling a naked child from clay, went from a yard to a yard, where dwellers came out and poured water on the sculpture and gave food products to the girls.

Plowing of river. Apparently, for recent times, the tilling of a river had been practiced less frequently than the other rituals. This might be conditioned by the decreasing of the use of the traditional plow in the Soviet period as those were replaced by the tilling machine. During this ritual, women got into the river, which got shallow or dried because of the drought, and tilled the riverbed with a plow. There is more information on this ritual in the earlier publications³⁹: Eight women should have been tilling the river; meanwhile, one of them had to be dressed as men and should have been leading the group, and two other women from the group should have been driving their hitched friends.

These ethnographic notes complement the previous studies and enrich our knowledge about the rain-related rituals of Armenians.

³⁴ Interview RH18061601.

³⁵ See **Lisitsyan S.**, op. cit., 1969, Table 74 for photos of the yoke.

³⁶ Interview RH18061601.

³⁷ Interview RH18061601.

³⁸ See **Grigorov N.**, op. cit., 1892, p. 116.

³⁹ See **Grigorov N.**, op. cit., 1892, p. 115; **Lisitsyan S.**, op. cit., 1969, Table 78 for the photo of the ritual in Zangezour.

ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂԻ (ՀԱՅԱՍՏԱՆ)՝ ԱՆՁՐԵՎԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԵՍԵՐԻ ՄԱՍԻՆ

(ազգագրական դաշտային գրառումներ)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռ.Ա

Ամփոփում

Տաթև գյուղում եղել են անձրևաբեր և անձրևախափան բազմազան ծեսեր, որոնք կիրառվել են մինչև XX դ. վերջը: Այս ծեսերի վերաբերյալ նախկինում հրատարակված ազգագրական նյութերը հիմնականում վերաբերում են XIX դ. վերջ (Ն. Գրիգորով, 1892) – XX դ. 60-ական թթ. (Ս. Լիսիցյան, 1969) ժամանակաշրջանին: Տաթևում կատարված ազգագրական հետազոտությունների շնորհիվ հավաքվել են խորհրդային շրջանին վերաբերող տվյալներ, որոնք լրացնում են անձրևաբեր և անձրևախափան ծեսերի մասին մեր գիտելիքները: Ըստ առկա տվյալների, Տաթև գյուղում XX դ. կենցաղավարել են երեք տարբեր բնույթի անձրևաբեր և անձրևախափան ծեսեր. սուրբ քարերը (խաչքարեր) թրջելու (անձրևախափանը՝ վրան կրակ անելու)՝ Պետրոսախաչ, Խոզաղբյուր, Կոտրած խաչ և այլն, «Ղոդի-ղոդի» (Նուրիի համարժեքը) և գետը վարելու ծեսերը:

О РИТУАЛАХ СЕЛА ТАТЕВ (АРМЕНИЯ), СВЯЗАННЫХ С ДОЖДЕМ

(этнографические полевые заметки)

ОВСЕПЯН Р.А.

Резюме

В селе Татев были распространены обряды, связанные с дождем, в частности, с их помощью пытались вызвать и прекратить дождь. Подобные обряды практиковались до конца XX в. Ранее опубликованные этно-

графические материалы об этих обрядах относятся к периоду с конца XIX в. (Н. Григоров, 1892) до 60-х годов XX в. (С. Лисицян, 1969).

Обряды можно выделить в три группы: 1. обряды, вызывающие дождь (во время которых священные камни – хачкары поливали водой), и прекращающие дождь, сопровождающиеся разжиганием огня на этих камнях: Петросахач, Хозахбюр, Котрац хач и др., 2. "Годи-годи" (эквивалент обряда Нури), 3. обряд вспашки реки.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԿՐՏՉՅԱՆ Լ.Ա.

Հոդվածում անդրադառնում ենք կոնաձև բլուրների կամ պարզապես բարձրադիր վայրերում առանձին կանգնած, մեծածավալ քարերի չոր շարվածքով կառուցված, ամրաշինական պարսպապատերից հիմնականում առանձնացված և ինքնուրույն հուշարձանի միավոր հանդիսացող աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությանը¹: Այս շինությունների ավերակները հանդիպում են հիմնականում բնակավայրերից դուրս, քարացրոններում և առապարներում, դամբարանադաշտերի համատեքստում: Սակայն պետք է նշել, որ առավել բարձրադիր վայրերում տեղակայված աշտարակները տեսանելի կապի մեջ են շրջակա ամրոցների հետ²: Այս կառույցներին ժողովուրդը կնքել էր տարբեր օտար անուններով՝ «քյալաֆեք»³, «կալաներ»⁴ և «օյուղներ»⁵, իսկ հուշարձանն արձանագրողները շեշտել են դրանց հիմնականում երկու՝ ծիսական և պաշտպանական նշանակությունը⁶: Սակայն բաց է մնում հուշարձանի գործառույթի և թվագրության հարցը, քանի որ դրանք սակավ են ուսումնասիրված:

¹ Օգտակար դիտողությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում Ա. Բոբոխյանին, Ա. Գնունուն, օգալուսանկարները կազմելու համար՝ Հ. Դանիելյանին, իր չիրատարակված հոդվածը մեզ տրամադրելու համար՝ Մ. Բադալյանին:

² Աշտարակների համատեքստի մասին տե՛ս **Մկրտչյան Լ.**, Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան աշտարակատիպ կառույցները, «Մեծամորյան ընթերցումներ» I (Գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2017, էջ 298-317:

³ **Ղափանցյան Գ.**, Հնութեան մի քանի յիշատակարաններ, «Արարատ», 1914, N Ա, էջ 92:

⁴ **Ատրպետ**, Վիշապազանց պաշտամունքը (Բազմավեպ, 1931, N 7-8, էջ 309):

⁵ **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետություն II, Ե., 1948, էջ 218-219:

⁶ Թորամանյանը այս կառույցները բնութագրում էր որպես սրբարաններ, տե՛ս **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., իսկ Քալանթարը՝ «տաճար», տե՛ս **Քալանթար Ա.**, Հայաստան. Քարե դարից միջնադար, Ե., 2007, էջ 202-203: Սակայն խորհրդային տարիներին արդեն Հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության հուշարձանների համահավաքի պասպորտավորման արշավախմբի 1980-1991 թթ. կատարած դաշտային աշխատանքներում այս կառույցները հաշվառվեցին որպես «դիտա-

Հիշատակություններ. Հայաստանի աշտարակատիպ շինությունների մասին առաջին պատմական հիշատակությունը կարելի է համարել Քսենոփոնի այն տեղեկությունը, թե Արևմտյան Տիգրիսի մոտ գտնվող հայկական գյուղում տներն ունեին աշտարակներ, սակայն այս կառույցները բնակելի էին և գտնվում էին բնակավայրերում⁷:

Քննարկվող կառույցներից առաջինը Դաշտ-Օշական ճանապարհի ձախ մասում Արդար Դավթի բլրի կառույցն է⁸ (նկ. 1): XIX դարի առաջին կեսին Ա. Արարատյանը «Արտեմի Արարատսկիի կյանքը և արկածները» ինքնակենսագրական վեպում, որտեղ նկարագրում է «բրգաձև շարված քարերի կուտակում», նշում է, որ այցելել է վերոնշյալ վայրը⁹: Այս շինությանը, ինչպես նաև Աշտարակի «Ուլատիտիկ» աշտարակին (նկ. 2) հսկաների դամբարանների («օղուզի տներ») համատեքստում անդրադառնում է նաև Գ. Ղափանցյանը¹⁰: Մ. Թադիսյանը նույնպես խոսում է «Արդար Դավթի Տուն» կոչված «քարակարկառ շինուածոց» «բլրաձև աւերակի» մա-

կետ-աշտարակներ»՝ առանց որևէ հիմնավորման, տե՛ս ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արխիվ:

⁷ **Քսենոփոն, Անաբասիս**, IV, 4, Ե., 1970, IV, 4 (էջ 93): Բնակավայրերում աշտարակատիպ պաշտպանական տները, որպես կանոն, կարող էին սոցիալապես ակտիվ և կենտրոնախույզ դարձնել համայնքին: Ահա թե ինչու են դրանք պահպանվել մեկուսի վայրերում: **Джандиери М.** Древнее башенное общинное жилище [Вестник древней истории (ВДИ), 1981, N 2, с. 120]: Այսպիսի պաշտպանական տները, ըստ Ա. Զարյանի, եղել են որոշ չափով անկախ և պատկանել են մեկ ընտանիքի, տե՛ս **Զարյան Ա.**, Աննարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Ե., 1986, էջ 21:

⁸ Տե՛ս **Մկրտչյան Լ.**, «Արդար Դավթի». Առասպել և իրականություն (Էջմիածին, 2017, հուլիս, էջ 111-116):

⁹ Жизнь Артемия Арапатского, Л., 1980, с. 49.

¹⁰ **Ղափանցյան Գ.**, նշվ. աշխ., էջ 93: Հետագայում Ղափանցյանը Աշտարակ տեղանունը փորձում է կապել ասորա-փյունիկյան Իշտար աստվածուհու հետ «Հնարավոր է, որ հայերեն Աշտարակը (բուրգ) իր նշանակությունն առած լինի Աշտար-աթ հիմքից՝ Իշտար աստվածուհու անվան ասոր-փյունիկյան ձևից: Փյունիկիայում, ի պատիվ Իշտարի, կանգնեցվում էին վիթխարի հուշայուններ (բավականաչափ կոպիտ ձևով, որոնք և կարող էին կոչվել աստվածուհու անունով)», տե՛ս Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 82: Ըստ Թ. Արծրունու՝ Արտաշեսը Վանում «կառուցեց բարձրաբերձ աշտարակ և նրա վրա կանգնեցրեց Աստղիկի պատկերը», **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 74: Հետաքրքիր է, որ, ըստ Ն. Մառի, Ծիրանավոր բազիլիկ եկեղեցու տեղը եղել է վիշապ-Աշտարակ-Աժդահակի պաշտամունքի մի տաճար, **Март Н.Я.** Избранные работы, т. 5, Л., 1935, с. 59:

սին՝ Օշականի մոտ¹¹։ Բյուրականի լեռների գագաթների աշտարակատիպ շինությունների մասին են թերևս Ատրպետի նկարագրած «աչքկատարեան (կիկլոպյան) բազինները¹²»։ Այս լեռներից հարավ-արևելք գտնվող Խամուրի լեռների Կոլիբաբայի գագաթին Հ. Լինչը խոսում է մի մարգարեի սրբավայրի մասին, որը կապում է «հսկայի գերեզմանի» հետ։ Ըստ նրա՝ այդ ամբողջ տարածքում, ընդհուպ Բինգյոլ, բարձունքների մեծ մասը պսակված է մի ինչ-որ իմաստունի պարսպապատ գերեզմանով¹³։ Այս կառույցների առկայության հետ կապված՝ չափազանց հետաքրքիր տեղեկություն է հայտնում Ա. Մխիթարյանը՝ Արարատից իջնելիս նկատել է «աշտարակաձև հսկայական քարաժայռերի մի շարք»¹⁴։ Նա նույնպես այս կառույցների ծագումը կապում է առասպելի հետ՝ համարելով «քաջերի բնակարաններ» (Արտավազդի առասպել), որոնց մասին խոսում է նաև Ալիշանը «Աշտարակաձե վեմն ցցուեալս»՝ կապված Սիսի հետ¹⁵։ Չըլդըր լճի շրջակայքը նկարագրելիս Ա. Իվանովսկին հիշատակում է առանձին կանգնած կլոր աշտարակի մասին, որի քարերը շաղախով են ամրացրած¹⁶։

Ուսումնասիրություններ. Սկսած XX դարի սկզբից՝ հայ գիտական շրջանակներում հետաքրքրություն առաջացավ քննվող կառույցների նկատմամբ։ Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեն հուշարձանների ցուցակագրման համար կազմակերպեց գիտարշավներ դեպի Արագածի հարավահայաց լանջեր։ Այս աշխատանքների շնորհիվ խնդրո առարկա կառույցներն առաջին անգամ ճարտարապետորեն ուսումնասիրեց հայ

¹¹ **Թադիադյան Մ.**, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Ե., 1975, էջ 115-117։

¹² **Ատրպետ**, նշվ. աշխ։

¹³ **Линч Х.** Армения, т. II, Тифлис, 1912, рис. 189, с. 451. Հատկանշական է, որ Գ. Սրվանձոյանցը Մանազկերտի մի քրդական գյուղում նշում է «քարակոյտով մը բարձրացած» գերեզմանի մասին, որին տեղի հայերը ազնավորի գերեզման են ասում։ Իսկ ըստ քուրդ շեյխի՝ դա իր նախնու շիրիմն է, որին մեծարում է ինչպես մարգարեի, տե՛ս **Սրվանձոյանց Գ.**, Գրոց ու բրոց (Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 56)։ Նմանատիպ կառույցների մասին հիշում է նաև Է. Ռեկյուն՝ Սևանա լճի ավազանում առանձին կամ շարքերով կանգնած՝ բարձրադիր վայրերում, տե՛ս **Ռեկյու Է.**, Ռուսական Հայաստան, Վաղարշապատ, 1891, էջ 19։ Օղուզ հսկաների մասին հայկական ավանդության մեջ տե՛ս **Լալայան Ե.**, Երկեր, հ. 3, Ե., 2004, էջ 195, 204։

¹⁴ **Մխիթարեան Ա.**, Դէպի Արարատ, Թիֆլիս, 1904, էջ 147-148։

¹⁵ **Ղ. Ալիշան**, Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 481, 485։

¹⁶ **Ивановский А.** По Закавказью. Материалы по археологии Кавказа, вып. VII, М., 1911, с. 82-84, рис. 69.

ճարտարապետության երախտավոր Թ. Թորամանյանը. նա նկարագրեց Աղավնատան «օյուղ» (նկ. 3) և Դավթի բլրի աշտարակները¹⁷: Իսկ հնագիտորեն դրանք շրջանառության մեջ դրեց Ա. Քալանթարը՝ մեգալիթյան ընդհանուր հուշարձանների համատեքստում¹⁸: Աղավնատան և ևս 12 աշտարակատիպ կառույցների մասին է ակնարկում Ն. Ադոնցը Հայաստանի նախապատմական դարաշրջանի հուշարձանների մասին խոսելիս¹⁹: Հղում անելով Թորամանյանի և Քալանթարի աշտարակատիպ կառույցներին՝ Ս. Սարգսյանը նկարագրում է նաև Ծիծեռնակաբերդում, Գառնիում և Դաշտադեմում առկա նմանատիպ կառույցները²⁰: Արտանիշի կիկլոպյան ամրոցից հյուսիս՝ բարձր բլրի վրա, կիսաշրջանաձև աշտարակ է նկարագրում Գ. Միքայելյանը²¹: Սևանի ավազանում այլ աշտարակների ավերակների մասին են հիշատակվում Լճաշենի ամրոցի հետ կապված²²: Աշտարակատիպ շինություններ են նկարագրում Երևանի համալսարանի հայագիտական կենտրոնի և հնագիտական գիտահետազոտական լաբորատորիայի արշավախմբերը Շամիրամի Հրվանդանի ծայրամասում²³, Մուլնիում, Աշտարակ-Ապարան խճուղու ծախ կողմում, բլրի գագաթին²⁴, Ագարակի դամբանաբլուրների համատեքստում²⁵, Բյուրական և Բազմաղբյուր գյուղերի միջև, բարձունքների գագաթներին²⁶, Օրգով և Տեղեր գյուղերի

¹⁷ **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 218-220: Կառույցներին հեղինակը անդրադարձել է նաև իր «Հայաստանի նախնական ճարտարապետական մնացորդները» ուսումնասիրության մեջ, «Բոլորակ աշտարակներ» առանձին գլխով, տե՛ս Հայկական ճարտարապետություն, Ե., 1942, էջ 10-11:

¹⁸ **Քալանթար Ա.**, նշվ. աշխ.:

¹⁹ **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Ե., 1972, էջ 11-12:

²⁰ **Սարգսյան Ս.**, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Ե., 2004, էջ 443-445:

²¹ **Միքայելյան Գ.**, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, ՀՀԻ, Ե., 1968, էջ 46:

²² **Մնացականյան Հ.**, Լճաշենի կիկլոպյան ամրոցի կոմպլեքսը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, N 1, էջ 290]:

²³ **Արեշյան Գ., Սիմոնյան Հ.**, ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները [Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), N 1, 1976, էջ 286]:

²⁴ **Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա.**, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում (Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, N 4, էջ 80):

²⁵ **Սիմոնյան Հ., Երանոսյան Հ.**, Ամբերդի ավազանի պատմական հուշարձանները [Երևանի համալսարան (այսուհետև՝ ԵՀ), N 3, 1977, էջ 47]:

²⁶ Նույն տեղում, էջ 48, 49:

միջև, «Կուռ թափա» տեղամասում²⁷, Սերկևիլի դղյակի մոտ²⁸ և Ներքին Բազմաբերդ տանող ճանապարհի մոտ²⁹: Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների կառույցների մասին խոսելիս Հ. Սարգսյանն անդրադառնում է «առանձին կանգնած» աշտարակներին, մանրամասն խոսում Աղավնատան աշտարակի ճարտարապետական առանձնահատկությունների մասին³⁰: Իսկ Ս. Մնացականյանը այս կառույցները քննարկում է որպես «հելլենիստական Հայաստանում գոյություն ունեցած մեմորիալ ամբողջական համալիրներ»՝ անդրադառնալով Մերձավանի, Աղավնատան «Օյուղ» և Դաշտ գյուղի «Արդար Դավիթ» աշտարակատիպ կառույցներին³¹: Կիկլոպյան կառույցները քննելիս Վ. Հարությունյանն անդրադառնում է նաև «բոլորակ աշտարակներին»՝ հիմնականում կրկնելով Թ. Թորամանյանին³²: Պահակակետերի կամ Անահիտի տաճարի հետ են կապում Ադրբեջանում լեռների վրա գտնվող «Կույսի աշտարակ» անվամբ շինությունները, որոնք հետագայում վերածվել են սրբավայր-ամրոցների³³: Կարևոր անդրադարձ է Օ. Բելլիի աշխատանքը Վանա լճից հարավ ընկած շրջաններում տեղացիների կողմից «հսկաների տուն» անվանված շինությունների մասին³⁴: Նման կառույցներ հայտնի են նաև Արդահանում³⁵: Վերջերս այս կառույցներին անդրադարձել է նաև Մ. Բադալյանը³⁶:

²⁷ Նույն տեղում, էջ 54:

²⁸ Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Քասախի միջին հոսանքի աջափնյա հուշարձանները (ԵՀ, N 1, 1978, էջ 50):

²⁹ Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ., Հայագիտական կենտրոնի 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները (ԲԵՀ, N 2, 1979, էջ 221):

³⁰ Սարգսյան Հ., Հայաստանի բրոնզեդարյան շինարարական կառույցների մասին (ՊԲՀ, N 4, 1979, էջ 76-77):

³¹ Մնացականյան Ս., Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Ե., 1982, էջ 51:


³² Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 17:

³³ Джидди Г., Джидди Н. Районы распространения «Девичьих башен» («Гыз галасы») и исторические корни этого названия (Материальная культура Азербайджана, IX, 1980, с. 139-145).

³⁴ Belli O. Archaeology in Turkey 1932-2000, Istanbul, 2001, p. 350-351.

³⁵ Patataci S. Archaeological Surveys of Ardahan in Northeastern Anatolia in 2013 (Recent Studies on the Archaeology of Anatolia, 2015, p. 469-479).

³⁶ Badalyan M. Toros Toramanyan and the Research of "Giants' Houses" (հրատարակության ընթացքում):



Նկ. 1. Արդար Դավիթ, օդալուսանկարը՝ Հ. Դանիելյանի



Նկ. 2. Ուլատիտիկ, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի



Նկ. 3. Աղավնատուն 1 «Օյուղ», լուսանկարը՝ Լ. Մկրտչյան



Նկ. 4. Մերձավան 1, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի

Պեղումներ. Աշտարակատիպ շինությունների առաջին պեղումները կարելի է համարել Ե. Բայբուրտյանի կողմից ներկայիս Երևան քաղաքի Մուխաննաթ թափա հնավայրի «բոլորածև սրբարանը»: Այն բնակավայրից հեռու է, զբաղեցրել է բլրի գագաթը և պահպանված լուսանկարում ու հատակագծում նման է մեր խնդրո առարկա շինություններին³⁷: Սակայն թվագրությամբ ավելի վաղ՝ Ք.ա. 3000 թվականին է վերաբերում Մոխրաբլուր հնավայրում հայտնաբերված տաճարը՝ բաղկացած տաճարական քարաշեն աշտարակից (տուֆ և բազալտ քարերով) և նրան կից գտնվող ոչ

³⁷ **Байбуртян Е.** Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Е., 2011, с. 57, рис. 18а, 18б.

այնքան բարձր աղյուսաշեն կառույցներից³⁸: 1961 թ. Գ. Տիրացյանը պեղեց Մերձավանի աշտարակատիպ շինությունը, որով պարզ դարձավ, որ 5 մ տրամագծով աշտարակը կառուցված է 10,5 մ տրամագծով տասանկյուն թեք հարթակի վրա: Աշտարակի մեջ հետագայում օվալաձև շարվածքով իջեցույթ թաղում է եղել³⁹: Այնուհետև աշտարակը պեղել է Ֆ. Մուրադյանը՝ հայտնաբերելով միջին բրոնզի դարաշրջանի նյութեր⁴⁰ (նկ. 4): Որսատեղի-որսադարանների (desert kites) համատեքստում ուսումնասիրվել և պեղվել են նաև Աղավնատան⁴¹ և Արտենիի մոտ գտնվող⁴² մի քանի աշտարակներ: Ավելի ուշ շրջանի աշտարակատիպ կառույց՝ շների թաղմամբ, պեղվել է Շաղատում⁴³: Ուշանում 2017 թ. վերջին սկսվեցին Ուշան-6 աշտարակի պեղման աշխատանքները, որը նպատակ է հետապնդում պարբերական պեղումներով պարզել աշտարակների շերտագրական և թվագրական հարցերը:

Այսպիսով, ի մի բերելով աշտարակների մասին հասանելի բոլոր տեղեկությունները, կարող ենք ասել, որ, հանձինս քննարկվող կառույցների,

³⁸ **Аресян Г.** Искусство Куро-аракской культуры (II Международный симпозиум по армянскому искусству, Е., 1978, с. 5-9), **նույնի՝** Մոխրաբլուր բնակավայրի ստորին շերտերի բնութագրման շուրջ, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1979, էջ 147, **նույնի՝** Early Bronze Age Settlements in the Ararat Plain and its Vicinity, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Bd. 37, Berlin, 2005, p. 71-88: Խոսելով բնակավայրում առկա աշտարակատիպ շինությունների մասին, որոնք ունեն ծիսական նշանակություն, արժի հիշատակել նաև վաղբրոնզեդարյան Ջրահովիտ բնակավայրի հում աղյուսից պատրաստված աշտարակի մասին, տե՛ս **Խանզադյան Է.**, Ջրահովիտ, «Հայաստանի հնագույն մշակույթը», 3, Ե., 2003, էջ 13-14, **նույնի՝** Ջրահովտի պեղումները, ՀՀ-ում 89-90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Ե., 1990, էջ 11-12:

³⁹ **Տիրացյան Գ.**, Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում (ԲԵՀ, 1970, N 1, էջ 229-231):

⁴⁰ Նյութերը հրատարակված չեն, տե՛ս **Մուրադյան Ֆ.**, Մերձավանի պեղումների հաշվետվությունները, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

⁴¹ **Nadel D., Bar-Oz G., Malkinson D., Spivak P., Langgut D., Porat N., Khechoyan A., Nachmias A., Crater-Gershtein E., Katinaa A., Bermatov-Paz G., Nahapetyan S., Gasparyan B.** New Insights into Desert Kites in Armenia: The Fringes of the Ararat Depression, Arabian Archaeology and Epigraphy, 2015, N 26, p. 120-143.

⁴² Աշխատանքներն իրականացվում են հայ-ֆրանսիական համատեղ “LIA” ծրագրի շրջանակներում (Ի. Քալանթարյան):

⁴³ Պեղումները՝ **Zardaryan M.** Archaeological Investigations in Syunik Region, Armenia, and the Problems of Preservation of Historical and Cultural Heritage, “Icomos E-Journal”, № 1, <http://www.rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4&JID=1&AID=6>:

գործ ունենք իրենց նշանակությամբ եզակի մի հուշարձանի տեսակի հետ, որը, սակայն, շատ քիչ է հետազոտված: Աշտարակատիպ կառույցների հետագա ուսումնասիրությունն էական ճշտումներ կմտցնի հին Հայաստանի պատմության և մշակույթի տարբեր խնդիրներում:

ИЗ ИСТОРИИ ИЗУЧЕНИЯ БАШНЕПОДОБНЫХ СООРУЖЕНИЙ АРМЕНИИ

МКРТЧЯН Л.А.

Резюме

Башнеподобные сооружения – это строения, возведенные на конических холмах или на возвышенностях и выстроенные способом сухой кладки из крупных камней, в основном отдельно от оборонительных стен. Они являются самостоятельными историко-архитектурными памятниками. Развалины башнеподобных строений в большинстве случаев находятся вне поселений, на территории могильников. В народе эти сооружения связывают с захоронениями "гигантов". По своей функциональной предназначенности они делятся на ритуальные и оборонительные.

FROM THE HISTORY OF INVESTIGATION OF TOWER-LIKE CONSTRUCTIONS IN ARMENIA

L. MKRTCHYAN

Abstract

The article refers to the research history of conical hills or tower shaped constructions, which are located on conical hills or high-up locations. They are constructed in dry masonry style with massive stones, generally isolated from fortified constructions and stand as separate monuments. The ruins of those constructions occur generally far from settlements, in rocky and stony places, in the context of cemeteries. The people relate those constructions to cemeteries of "giants". Investigation of those monuments brought forth mainly two functional meanings - ritualistic and defensive.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԱՅԻՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Լ.Է.

Հրաշապատում և իրապատում հեքիաթների խոր և մանրակրկիտ հետազոտությունների, դրանց վերաբերյալ ստեղծված հիմնարար աշխատությունների¹ համատեքստում հայ բանագիտության ասպարեզում կենդանապատում հեքիաթը գրեթե ուսումնասիրված չէ՝ ի բացառություն հայ բանագետների առանձին դիտարկումների: Հայ ժողովրդական կենդանական կամ կենդանապատում հեքիաթները կազմում են մեր հեքիաթային ժառանգության մի արժեքավոր մասը և խմբավորվում են Աարնե-Թոմփսոնի «Ժողովրդական հեքիաթների տիպերի»² միջազգային համացույցի և դրա հիմքով կատարելագործված՝ Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերի»³ եռամաս նշացանկի 1-300 թվահամարների ներքո: «Կենդանապատում հեքիաթ» անվանումն արդեն իսկ հուշում է, որ բանահյուսական այս նյութի ժանրային դասակարգման համար հիմք են ընդունվել պատումների գլխավոր հերոսները՝ կենդանիները: Այսպես՝ Ս. Պալասանյանը իր «Պատմություն հայոց գրականության» աշխատության մեջ բանահյուսական այս նյութն անվանում է «կենդանական զրույցներ» կամ «կենդանական վեպեր»⁴: Ս. Հայկունին ևս կենդանապատում հեքիաթներն

¹ Տե՛ս **Հայրապետյան Թ.**, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Ե., 2016, **Ջաքարյան Ե.**, Հիվանդության և բուժման առասպելային հայկական հեքիաթներում, Ե., 2016, **Վարդանյան Ն.**, Հայոց իրապատում հեքիաթը, Ե., 2009:

² **Arne A., Thompson S.** The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's Verzeichnis der Märchentypen. FF Communications, № 184. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia scientiarum Fennica (first edition 1928, № 74).

³ **Uther H.-J.**, The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, II, III, FF Communications, Helsinki, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2004.

⁴ **Պալասանյան Ս.**, Պատմություն հայոց գրականության, հ. Առաջին, Բանալոր գրականություն, Թիֆլիզ, 1865, էջ 193:

անվանում է կենդանական վեպեր՝ գրելով, որ դրանք «ընդհանրապես կենդանիներու վրա պատմվածքներ են»⁵, այն է՝ կենդանական վեպ՝ պատմություն կենդանիների մասին: Այսինքն՝ «կենդանապատում հեքիաթ» բանահյուսական եզրույթը հանդես է գալիս իբրև ժանրային հիմնական ցուցիչ: Ասել է թե՛ հեքիաթային արձակի այս ժանրի առանձնացման համար կիրառվել է այլ սկզբունք՝ ի տարբերություն, օրինակ, հրաշապատում և շղթայաձև հեքիաթների, որոնց առանձնացման համար հիմք է ընդունվում կառուցվածքային վերլուծության մեթոդը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ Վ. Պրոպը գրում է, որ հեքիաթների ընդհանուր դասակարգումը զուրկ է միասնական սկզբունքից. «Իր կառուցվածքով հրաշապատում հեքիաթը միանգամայն տարբերվում է շղթայաձև հեքիաթներից: Հետևաբար՝ հեքիաթն ավելի լայն հասկացություն է, քան ժանրը»⁶: Նա ընդգծում է, որ գոյություն չունեն այնպիսի համընդհանուր չափանիշներ, որոնք հավասարապես կիրառելի կլինեին թե՛ հրաշապատում, թե՛ կենդանապատում, թե՛ իրապատում հեքիաթների համար:

Միջազգային բանագիտության մեջ հեքիաթային այս արձակի բնութագրման համար հիմք է ընդունվում պատումների գլխավոր հերոսների ընդհանրությունը. «Հեքիաթային հանրագիտարանում» կենդանապատում հեքիաթը բնութագրվում է հետևյալ կերպ. «Հեքիաթը կենդանիների մասին հեքիաթի հատուկ տեսակ է, որը տարածված է ամբողջ աշխարհում, և որի գլխավոր գործող դեմքերը կենդանիներն են»⁷: Վ. Պրոպի բնորոշմամբ՝ կենդանապատում հեքիաթներում կենդանին հանդես է գալիս իբրև պատումի գլխավոր օբյեկտ կամ սուբյեկտ⁸:

⁵ Հայկունի Ս., Կենդանական վեպեր, Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907: Հետաքրքիր է նկատել, որ Ս. Հայկունին «Ժողովրդական առակներ» ժողովածուում ընդգրկված բանահյուսական նյութն անվանել է կենդանական վեպեր և բաժանել չորս մասի՝ համապատասխան ենթավերնագրերով. այսպես՝ շղթայաձև (կումուլյատիվ) հեքիաթները, որոնց գլխավոր հերոսները դարձյալ կենդանիներն են, բանահավաքն ընդգրկել է «Պատանեկան առակ-ասելուկ», հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթների հիմնական մասը կազմող տրիքստեր-հերոսի՝ աղվեսի շուրջ խմբավորվող հեքիաթները՝ «Աղվեսավեպեր», այլ կենդանիների մասին սյուժեները՝ «Կենդանական վեպեր», իսկ այն սյուժեները, որտեղ գործում են մարդն ու կենդանին, «Կենդանական խառն վեպեր» ենթավերնագրերի տակ:

⁶ Пропп В. Сказка и действительность. Избранные статьи, М., 1976, с. 37.

⁷ Сказочная энциклопедия (ред. Будур Н.), М., 2005, с. 463.

⁸ Пропп В. Русская сказка, Л., 1984, с. 301.

Հայ բանագիտության մեջ լայն առումով կենդանական վեպ եզրույթն իր իմաստային դաշտում ներառում է կենդանիների մասին առասպելական-հավատալիքային նյութերը, բուն կենդանապատում հեքիաթները, բանահյուսական նյութից սերված, առակագրքերում ընդգրկված առակները: *Կենդանական վեպ* ասվածն այս կերպ է մեկնաբանում Ս. Պալասանյանը՝ անդրադառնալով կենդանիների մասին առասպելներին, կենդանակերպ և մարդակենդանակերպ ոգիներին, հավատալիքներին և պատմություններին՝ դրանք միասնաբար դիտարկելով որպես կենդանիների շուրջ ստեղծված *յուրահայտուկ դիցաբանություն*, որի հետագա փոփոխությունների հետևանքով ձևավորվել են ժողովրդական հեքիաթն ու գրական առակը⁹: Մ. Աբեղյանը ևս կարծում է, որ հայոց մեջ երբեմնի գոյություն ունեցած կենդանական վեպից են ծագում կենդանիների շուրջ ստեղծված, առակագրքերում ընդգրկված, նաև ժողովրդի մեջ պատմվող բազմաթիվ առակները, առած-ասացվածքները¹⁰: Ռուսական բանագիտական գրականության մեջ կիրառվող և հեքիաթային այս ժանրը բնութագրող «կենդանական էպոս» եզրույթն ունի գրեթե նույն իմաստն ու բովանդակությունը¹¹:

Ինչպես տեսնում ենք, բանագիտական որոշ դիտարկումների համաձայն՝ «*կենդանական վեպ*» ասվածը խոր և բազմաշերտ հասկացություն է, որն ընդգրկում է կենդանիների շուրջ ստեղծված բազմազան՝ թե՛ առասպելական, թե՛ ազգագրական-հավատալիքային, թե՛ բանահյուսական ժողովրդական նյութերը:

Նեղ իմաստով՝ *կենդանական վեպ* եզրույթն ընկալվում է որպես միայն կենդանապատում հեքիաթ, հեքիաթ կենդանիների մասին, այսինքն՝ այս դեպքում առավել ընդունելի է այս եզրույթի այն մեկնաբանությունը, որը հիմնավորվում է Ս. Հայկունու դասակարգմամբ՝ կենդանական վեպեր, այսինքն՝ ժողովրդական բանավոր ստեղծագործություն՝ զրույց, հեքիաթ կենդանիների մասին:

Հեքիաթ բառը հայերենում փոխառյալ է¹². *հեքիաթի* փոխարեն գործածվել են *զրույց* կամ *վեպ* եզրույթները:

⁹ Պալասանյան Ս., նշվ. աշխ., էջ 196-203:

¹⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Ե., 1970, էջ 200:

¹¹ Տե՛ս Костюхин Е. Типы и формы животного эпоса, М., 1987:

¹² Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Ե., 2010, էջ 161:

Ռուսական բանագիտական դպրոցի տարբեր ներկայացուցիչներ ևս կենդանապատում հեքիաթը տարբեր կերպ են մեկնաբանել՝ մի դեպքում ելակետ ունենալով ժանրի ծագումը, ինչպես, օրինակ, Պոմերանցևան, որը գրում է. «Սկզբնապես կենդանիների մասին հեքիաթները ծագել են իբրև առասպելական բնույթի պատմություններ՝ կապված տոտեմական կենդանու՝ տոհմի հովանավորի պաշտամունքի հետ՝ իբրև հմայական նշանակություն ունեցող պատմություններ»¹³։ Ե. Կոստյուխինը ևս կենդանապատում հեքիաթի ծագումը կապում է տոտեմական առասպելներին՝ ներկայացնելով կենդանապատում հեքիաթի յուրահատուկ ստուգաբանական ծագումնաբանություն, նշելով այն առանձնահատկությունները, որոնք կենդանապատում հեքիաթը «ժառանգել» է հնագույն առասպելից։ Ա. Նիկիֆորովը իր «Ռուսական հեքիաթի ժանրերը» հոդվածում (1936 թ.) ժանրային դասակարգում է կատարում՝ հիմք ունենալով բանահյուսական տվյալ նյութին վերագրվող գործառույթը, որը, նրա կարծիքով, կենդանապատում հեքիաթի պարագայում ունկնդիրներին զվարճացնելն է¹⁴։ Ավելի վաղ՝ 1928 թ., հեղինակը այն բնութագրում էր *դրամատիկ ժանրի ժողովրդական մանկական հեքիաթ* բառակապակցությամբ՝ կարևորելով դրա «կատարողական արվեստը», դրանից բխող թատերայնությունը՝ իրեն բնորոշ մանրամասներով, որոնք էլ Նիկիֆորովը համարում է այս հեքիաթների ժանրային ամենաբնորոշ առանձնահատկությունները¹⁵։

Ժանրային բազմազանությունը։ Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթների դիտարկումը մեզ բերում է այն եզրահանգման, որ այս հեքիաթների երկացանկը բազմազան է. այստեղ միատեղվել են տարաբնույթ՝ թե՛ արխաիկ-առասպելաբանական պատկերացումներ արտացոլող տեքստեր, թե՛ համեմատաբար ուշ շրջանում ստեղծված սյուժեներ, հեքիաթ-առակներ, սյուժեներ, որոնք իրենց կառուցվածքով հիշեցնում են հրաշապատում հեքիաթը, բուն կենդանապատում հեքիաթներ և այլն։ Օրինակ՝ այստեղ տեսնում ենք կենդանիների և թռչունների, նրանց ծագման, որոշ առանձնահատկությունների մասին պատմություններ, որոնք իրենց բովանդակությամբ և կառուցվածքով, մի կողմից, հիշեցնում են

¹³ Померанцева Э. Русская народная сказка, М., 1963, с. 74.

¹⁴ Никифоров А. Жанры русской сказки (Никифоров А. Сказка и сказочник: сборник статей, М., 2008, с. 83).

¹⁵ Նույն տեղում, էջ 106-107։

հնագույն առասպելը, մյուս կողմից, մոտենում են ավանդազրույցի, լեգենդի ժանրին: Այսպես՝ ATU 222 B թվահամարին պատկանող «Ճնճուղ ու մրջեն»¹⁶ հեքիաթը պատմում է, թե ինչու է ճնճուղը ոչ թե քայլում, այլ ցատկոտում: ATU 246 թվահամարին համապատասխանող «Լակլըկու հեքիաթում»¹⁷ պատմվում է, թե ինչու է արագիլը կանգնում մեկ ոտքի վրա և այլն: Այս հեքիաթները խիստ սեղմ են՝ մեկ, երբեմն նույնիսկ կես էջի սահմաններում: Սրանք առավելապես պատմողական, նկարագրական ոճի պատումներ են, որոնց հիմնական բովանդակությունը բացատրական է, որով էլ մոտենում են ավանդազրույցի ժանրին: Հեքիաթների այս խումբը, մյուս կողմից, հիշեցնում է հնագույն առասպելը, քանի որ պարունակում է ստուգաբանություն՝ ինչ-որ առումով պատճառաբանելով իրերի ներկա դրությունն աշխարհում: Թերևս ուշ շրջանի արդյունք են ATU 155 («Անշնորհակալ օձը»), ATU 159B («Խոսքի հասցրած վերքը չի լավանա») թվահամարով միավորված հեքիաթները, որոնք հիմնականում կառուցված են լավություն-երախտամոռություն հակադրության հիմքով. այսպես՝ մարդը փրկում է սառած (կրակի մեջ այրվող) օձին՝ ծոցում տաքացնելով նրան, սակայն օձը, ուշքի գալով, ուզում է խայթել մարդուն: Մարդուն փրկում է աղվեսը, սակայն մարդը աղվեսի լավության դիմաց սպանում է նրան և հանում մորթին: Ի տարբերություն առաջին հեքիաթախմբի՝ այս հեքիաթները բավական ծավալուն են, ունեն հստակ կառուցվածք՝ սկիզբ, ընդգծված կոնֆլիկտ և հանգուցալուծում: Բանահյուսական տեքստերն ամբողջական են և ավարտուն՝ ինչ-որ առումով հիշեցնելով հրաշապատում հեքիաթը¹⁸: Ինչպես տեսնում ենք, կենդանիներից բացի, հեքիաթի գործողություններում նաև մարդն է հանդես գալիս: Բովանդակությամբ, դաստիարակչական-խրատական երանգավորմամբ աչքի ընկնող ATU 133* («Աղվեսն անց է կացնում օձին ջրի վրայով»), ATU 75 («Թույլի օգնությունը») և այլ թվահամարների հեքիաթները մոտ են առակի ժանրին: Վերոհիշյալ սյուժեները

¹⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. X (Տոբուբերան. Մուշ-Բուլանըխ), Ե., 1967, № 22 (177), էջ 437-438:

¹⁷ Նույն տեղում, № 20 (175), էջ 434-435:

¹⁸ Հետաքրքիր է, որ կենդանապատում հեքիաթների ժանրային բազմազանությունը շեշտելիս Վ. Պրոպը նշում է, օրինակ, ATU 123 թվահամարին պատկանող և «Գայլը և յոթ ուլիկները» ընդհանուր խորագիրը կրող հեքիաթախումբը՝ ընդգծելով, որ հեքիաթային կառույցն այս դեպքում յուրօրինակ է՝ նման է հրաշապատում հեքիաթի կառույցին՝ ավագների հեռացում, արգելք և նրա խախտում, փորձանք և փրկություն, մեղավորի պատիժ (**Проп В.** Русская сказка, Л., 1984, с. 299):

դաստիարակչական երանգ ունեն, ինչ-որ բան ուսուցանելու միտում, թերևս պատմվում են հենց այդ նպատակով: Առավել խոսուն են այս հեքիաթների վերնագրերը, որոնք ձեռք են բերում առած-ասացվածքի ուժ, ինչպես, օրինակ՝ «Լավությունին տընդը փիտթուն»¹⁹, «Էրկու վըննանուն լիվություն ընելի չի»²⁰, «Աթամավություն մեչը բափա (երախտագիտություն) չը կա»²¹, «Հում կաթնակերին էյթիբար չկա»²² և այլն:

Ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները: Կենդանապատում հեքիաթների վերոնշյալ ժանրային բազմազանությունը բանագետներին ստիպել է բազմիցս շեշտել այս հեքիաթների դասակարգման դժվարությունը: Ե. Կոստյուխինը, նկատի ունենալով այդ խնդիրը, գրում է. «Ավելի արդար է խոսել ոչ թե կենդանական հեքիաթի ժանրի, այլ ժողովրդական կենդանական էպոսի՝ որպես տարբեր ժանրերի կոնգլոմերատի մասին»²³:

Կենդանապատում հեքիաթը՝ իբրև հեքիաթային արձակի ժանրերից մեկը, ունի ժանրը բնութագրող մի շարք առանձնահատկություններ: Դրանցից առաջինը, թերևս, կերպարների հաստատուն շրջանակն է, սակայն կենդանիների կերպարներ կան թե՛ հրաշապատում, թե՛ իրապատում հեքիաթներում: Բայց, հրաշապատում հեքիաթներում հանդես եկող կենդանիները հիմնականում միասնական բնութագիր ունեն և պատումի երկրորդ պլանում են՝ ի հաշիվ նրանց բնորոշ սյուժետային հիմնական գործառույթի, այն է՝ իբրև գլխավոր հերոսի՝ հրաշագործ օգնական և այնկողմնային աշխարհի ուղեկից. օրինակ՝ «Քեշիշ լեռը» հեքիաթում²⁴ թագավորի փոքր տղան, գնալով *գնացող, ետ չեկող* ճանապարհով, անդին աշխարհի սահմանագծին հանդիպում է հրաշագործ օգնականին՝ աղվեսին: Տղան երեք անգամ կերակրում է նրան, որից հետո նա հանձն է առնում գլխավոր հերոսին ուղեկցել անդրաշխարհ՝ ծիսական-նվիրագործական փորձությունների: Կենդանապատում հեքիաթներում կենդանիները պատումների գլխա-

¹⁹ ՀԺՀ, հ. V (Արցախ), Ե., 1966, էջ 113:

²⁰ ՀԺՀ, հ. VI (Արցախ-Ուտիք), Ե., 1973, էջ 249:

²¹ **Տէր-Աղեքսանդրեանց Գ.**, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, Թիֆլիս, 1885, էջ 379:

²² Հայկական ժողովրդական հեքիաթներ, բնագրերը հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին և բառացանկը կազմեցին Ն. Հակոբյանը, Ա. Սահակյանը, Ե., 1980, էջ 36:

²³ **Костюхин Е.**, նշվ. աշխ., էջ 79:

²⁴ **Սվազյան Վ.**, Մուսա լեռ (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, № 2, Ե., 1984, էջ 25-31):

վոր հերոսներն են, նրանց փոխհարաբերությունների հիմքով է ձևավորվում սյուժեն: Ընդ որում, պատումների առաջնային պլանում վայրի կենդանիներն են՝ իբրև գլխավոր հերոսներ՝ աղվեսը, գայլը, արջը, նապաստակը և այլն: Սրանց շուրջ է ձևավորվում սյուժեների մեծ մասը: Ընտանի կենդանիները կենդանապատում հեքիաթներում սովորաբար «գործում են» վայրի կենդանիների հետ, ընդ որում՝ առավելապես իբրև օժանդակ հերոսներ²⁵: Կենդանապատում հեքիաթների հերոսների կայուն շրջանակի մասին նշելիս խիստ կարևոր է այն հանգամանքը, որ բանահյուսական այս ժանրը չի կառուցվում միայն կենդանիների իրական վարքի դիտարկման շնորհիվ: Ինչպես կտեսնենք ստորև, կենդանապատում հեքիաթի հիմքում խորամանկ կենդանին է և նրա շուրջ հյուսված պատումները: Մենք աղվեսին իսկապես գիտենք իբրև խորամանկ և ճարպիկ կենդանու, սակայն, ինչպես գրում է Պրոպը. «խորամանկության հիմնախնդիրն այս դեպքում բանահյուսական է և ոչ թե կենդանաբանական»²⁶: Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթներում գայլը բնութագրվում է իբրև ագահ և հիմար, խաբված ու ծաղրված, իր բոլոր ձեռնարկումներում ձախողակ մեկը այն դեպքում, երբ զանազան որսորդական պատմությունները գայլին նկարագրում են իբրև խորամանկ և զգույշ կենդանու²⁷: Զուգադրական քննությունը վկայում է նաև, որ բանահյուսական նյութերը, տվյալ դեպքում՝ կենդանապատում հեքիաթը, չի բացատրվում կամ հիմնավորվում նաև հավատալիքային նյութերով: Հավատալիքները կենդանիների մասին «բարձր»՝ առասպելաբանական, սրբազան կրոնաժիսական պատկերացումների վերապրուկներ են: Հայկական հավատալիքներում գայլի մասին ամենատարածվածը մարդագայլի մասին պատմություններն են, ըստ որոնց՝ մեղքեր գործած կանանց և տղամարդկանց վրա գիշերները գայլի մորթի է ընկնում, նրանք մարդագայլեր են դառնում, ուտում նորածին մանուկներին, ըստ որի էլ, գայլի մորթին դիտվում է իբրև մթության և չարի խորհրդանիշ²⁸ և այլն: Ասել է թե՛ կենդանապատում հեքիաթի հիմնական իմաստն

²⁵ Ըստ Վ. Պրոպի՝ սա վկայում է կենդանապատում հեքիաթի խոր վաղնջականության մասին. անտառային կենդանիների առաջնային դերը բանահյուսական այդ ժանրում ապացուցում է, որ դրանք ստեղծվել են մարդկային մշակույթի զարգացման մինչդասակարգային, որսորդական շրջանում (Проп В. Русская сказка, с. 314):

²⁶ Նույն տեղում, էջ 302:

²⁷ Անանյան Վ., Երկեր, հ. 1, Գայլեր, Ե., 1968, էջ 47-61:

²⁸ Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Ե., 2017, էջ 281-284:

ու նշանակությունն այլ է. կենդանիների աշխարհը բանահյուսական այս ժանրում մարդկային մտքերի, զգացմունքների և արարքների արտացոլման ձև և միջոց է. «Կենդանիների արկածները պրոյեկտված են մարդկային կյանքի վրա և այդ իմաստով էլ դրանք հետաքրքիր են»²⁹, - գրում է Վ. Անի-կինը: Կենդանապատում հեքիաթի իմաստը աշխարհի, մասնավորապես մարդկային հարաբերությունների մասին պատկերացումներն են: Հեքիաթի այս ժանրում շեշտը դրվում է բնավորությունների կերտման վրա. կենդանիները դառնում են մարդկային որոշակի և կայուն բնավորությունների, արարքների և գործողությունների պայմանական կրողներ, յուրահատուկ անձնավորումներ, և դրանց կերպարները կիրառվում են մարդկային գործողությունների ու հարաբերությունների նկարագրության համար: Այդ պատճառով, բավական է այս կամ այն կենդանու անունը տալ, և ունկնդիրն անմիջապես կարող է պատկերացնել այն հասկացությունը կամ ուժը, որն անձնավորում է տվյալ կենդանին: Հայերենի խոսքային մշակույթում մարդկային կոնկրետ գործողություններն ու հատկանիշներն անվանվում են կոնկրետ կենդանիների անուններով՝ *գայլի ախորժակ*³⁰, անհազ, մեծ ախորժակ, *նապաստակի սիրտ ունենալ*³¹, լինել խեղճ և երկչոտ մարդ, *աղվեսամեռ կամ սուրմեռուկ տալ*³² սուտ մեռած կամ հիվանդ ձևանալ և այլն: Այսքանով հանդերձ՝ կենդանապատում հեքիաթները զերծ են առակին բնորոշ վերացարկված այլաբանությունից, որի հիմքում կենդանիների՝ խորհրդանիշ դարձած մի քանի հատկանիշներն են (առյուծ՝ ուժ, աղվես՝ խորամանկություն, գայլ՝ հիմարություն և այլն)³³: Մարդկային լեզվով խոսող, մարդկային տրամաբանությամբ առաջնորդվող կենդանիները հեքիաթային լիարյուն կերպարներ են, որոնք ստեղծում են այլ, «իրականության գիտակցման հեքիաթային աշխարհ, որտեղ միանգամայն բնական են խոսող կենդանիներն ու անշունչ առարկաները»³⁴: Սա կենդանապատում հեքիաթին խիստ բնորոշ այն հատկանիշն է, որը Ս. Հարությունյանն անվանում է «բնական այլաբանություն» և գրում. «Կենդանական հեքիաթներում առկա է ծավալուն սյուժե, որ զարգանում է կենդանիների բնական

²⁹ **Аникин В.** Русская народная сказка, М., 1984, с. 14:

³⁰ **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. I, Ե., 1944, էջ 410:

³¹ Նույն տեղում, հ. III, Ե., 1944, էջ 442:

³² Նույն տեղում, հ. I, էջ 47, հ. IV, Ե., 1945, էջ 250:

³³ **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, Ե., 2010, էջ 166:

³⁴ **Добжинская Т.** Метафора в сказке (Теория метафоры, СПб., М., 1990, с. 478).

արարքների, փոխհարաբերությունների հիմքի վրա, հետևաբար և հագեցված է լիարյուն գեղարվեստական իմաստով»³⁵։ Կենդանապատում հեքիաթներում կենդանիների փոխհարաբերությունների հիմքով ձևավորվում են սյուժետային հիմնական մոտիվները՝ ստեղծելով հեքիաթային իրավիճակների հետաքրքիր բազմազանություն, որը ենթադրում է նաև բնավորությունների դրսևորման բազմազանություն։ Այսպես՝ կենդանապատում հեքիաթների ամենահայտնի հերոսը՝ աղվեսը, մի դեպքում խելացի է և օգնում է մարդուն՝ փրկվելու օձից, խորամանկ է վտանգից փրկվելիս, շողորթ՝ սնունդ հայթայթելիս և այլն։ Տարբեր իրավիճակներում դրսևորվող բնավորությունների հարստությունը կենդանապատում հեքիաթը դարձնում է գաղափարապես ավելի ընդգրկուն, կերպարների և իրավիճակների ընկալումը՝ ոչ միագիծ և միանշանակ. սրանով էլ ժողովրդական հեքիաթը տարբերվում է առակից՝ վերջինին բնորոշ կտրուկ գնահատականներով և ցայտուն արտահայտված ուսուցողականությամբ³⁶։ Հետաքրքիր և հատկանշական է, որ կենդանապատում հեքիաթի հերոսների՝ աղվեսի, գայլի, աքաղաղի՝ մարդկային արարքների նմանողությամբ կառուցված գործողությունների հետևում հեքիաթների լիարյուն կերպարներն են՝ աղվեսը, գայլը, աքաղաղը և այլն։ Հունգարացի բանագետ Ա. Կովաչը հետևյալ կերպ է բնութագրում կենդանապատում հեքիաթը. «Հեքիաթը համարվում է կենդանական, եթե այնտեղ կենդանիները մարդկանց նման մտածում են, խոսում և գործում՝ իրենց այդ վարքով հրաշքի զգացողություն չառաջացնելով հեքիաթի մարդկային կերպարների, պատմողի կամ ունկնդիրների մեջ»³⁷։

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ կենդանապատում հեքիաթներում գործում են նաև մարդը, զանազան անշունչ իրեր ու առարկաներ, օրինակ՝ ATU 293 E* (Հատիկների, կերակուրների գրույցը), ATU 294 (Ամիսները և եղանակները)։ Սակայն սրանց մասին ստեղծված սյուժեների քանակը սահմանափակ է, իսկ մարդը առավել հաճախ գործողությունների երկրորդական պլանում է։

Կենդանապատում հեքիաթների երրորդ առանձնահատկությունը հնարանք-ճարպկություն-խաբեությունն է, որն ընկած է կենդանապատում

³⁵ Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Ե., 2010, էջ 166։

³⁶ Ведерникова Н. Русская народная сказка, М., 1975, с. 78.

³⁷ St' u Свод памятников фольклора народов Дагестана, М., 2011, с. 51։

հեքիաթի հիմքում, և որի հիման վրա ձևավորվում են կենդանապատում հեքիաթի երկացանկի սյուժետային հիմնական մոտիվները, օրինակ՝ նենգ խորհրդի, հանկարծակի վախեցնելու, խաբեությամբ հաղթելու և այլն: Հատկանշական է, որ Ս. Պալասանյանը, «կենդանական գրույցները» բնութագրելով որպես կենդանիների մասին «հին վիպասանության մնացորդներ»³⁸, գրում է. «Նրանց մեջ զվարճալի տեսարաններով նկարագրվում են խորամանկության, հնարագիտության ու խելքի տարած հաղթանակները բթամտության վրա»³⁹: Խաբեություն-հնարանքը վկայում է կենդանապատում հեքիաթների արխայիկության մասին. դրանք ձևավորվել են այն փուլում, երբ խորամանկությունը հավասարազոր է եղել խելքին և իմաստությանը: Կենդանապատում հեքիաթների երկացանկում հստակ առանձնանում և գերակշռում է ճարպիկ և հնարամիտ տրիքստեր հերոսի՝ աղվեսի շուրջ խմբավորված հեքիաթների խումբը, որը պայմանականորեն անվանում ենք տրիքստերի խմբաշար, և որի ներսում հեքիաթների սյուժեները միավորվում են՝ դրսևորելով յուրահատուկ շղթայականություն: Տրիքստերի խմբաշարի հեքիաթները կազմում են կենդանապատում հեքիաթների մեկ երրորդ, այն է՝ գերակշիռ մասը: Սակայն խմբաշարից դուրս այլ թվահամարներում ևս բավական շատ են նմանատիպ սյուժեները, ինչպես, օրինակ՝ ATU 103 A* թվահամարին համապատասխանող «Կատվի օժը»⁴⁰ հեքիաթում անտառում հայտնված կատուն իր ինքնավստահությամբ վախ է ազդում, ներկայանում իբրև անտառի տերը, որ եկել է բոլորից հարկ հավաքելու: Բոլոր կենդանիները սկսում են պատիվներ տալ նրան և նվերներ բերել: ATU 275, ATU 275A թվահամարներին համապատասխանող հեքիաթները պատմում են երկու կենդանիների մրցակցության մասին, որտեղ խորամանկության շնորհիվ հաղթում է թույլ և դանդաղաշարժ կենդանին: Այսինքն՝ սրանք ևս յուրահատուկ տրիքստերներ են, որոնց մասին պատմող հեքիաթները, սակայն, խմբաշար չեն կազմում և սակավաթիվ են: Այստեղ դրսևորվում է միայն կենդանապատում հեքիաթներին բնորոշ այն հատկանիշը, ըստ որի՝ հեքիաթների մի մասն ունի սյուժետային ինքնուրույնություն, մյուս՝ ավելի մեծաթիվ մասը՝ ոչ, և հիմնականում հանդես է

³⁸ Պալասանյան Ս., նշվ. աշխ., էջ 205:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Գրիգորյան-Սպանդարյան Մ., Լեոնային Ղարաբաղի բանահյուսությունը, Ե., 1971, էջ 359-361:

գալիս միավորված՝ խմբաշարի սահմաններում⁴¹: Ահա թե ինչու Վ. Պրոպը ևս «կենդանական էպոս» տերմինը միանգամայն հնարավոր և ճիշտ է համարում:

Կենդանապատում հեքիաթներին բնորոշ հաջորդ առանձնահատկությունը դրանց երգիծական բնույթն է: Այն ձևավորվում է դեռևս բանահյուսական այս ժանրի ծագման ակունքներում. այդ հեքիաթները կենդանիների մասին ապասրբայնացած, վերաիմաստավորված, բանահյուսական կարճառոտ երգիծական նյութի՝ հեքիաթի վերածված հնագույն առասպելներն են, որտեղ երբեմնի առասպելական, սրբազան-կրոնաճիսական հատկանիշներով օժտված հերոսները ներկայանում են հակադիր՝ ծաղրական ու երգիծական իմաստավորմամբ ու գնահատմամբ: Հեքիաթներում կենդանիների այս ընկալումն ու գնահատումը կապվում է նաև մարդկային հարաբերությունների հետ՝ ձեռք բերելով նոր իմաստ և բովանդակություն, ինչի շնորհիվ էլ ավելի է ընդգծվում այս պատումների երգիծական բնույթը: Այստեղ երգիծանքը կառուցվում է համապատասխան իրավիճակներով, դրանցում առկա կերպարների գործողություններով, սակայն առավել հաճախ՝ խոսքով:

Ըստ Ն. Անիկինի՝ կենդանապատում հեքիաթների «մտահղացման համադրումը երգիծականի հետ կազմում է կենդանական հեքիաթների գլխավոր հատկանիշը»⁴²:

Զուրկ լինելով հրաշապատում հեքիաթին բնորոշ կոտ կառուցվածքից, հերոսների կայուն գործառնություններից, որոնց շնորհիվ էլ համանման գործառնություններով հեքիաթները միշտ միատիպ են, կենդանապատում հեքիաթն աչքի է ընկնում կառուցվածքային մեկ այլ՝ երկխոսական առանձնահատկությամբ: Կենդանապատում հեքիաթները սովորաբար պարզ, համառոտ, սեղմ բովանդակությամբ, մեկ, հաճախ նույնիսկ կես էջում պարփակվող բանահյուսական տեքստեր են, որտեղ երկխոսությունը գերակշիռ դիրք ունի նկարագրական-պատմողական խոսքի նկատմամբ: Այստեղ իրավիճակները սովորաբար ոչ թե նկարագրվում են հեքիաթասացի կողմից, այլ ներկայացվում են հերոսների խոսքի միջոցով: Կենդանապատում հեքիաթներում երկխոսությունն ինչ-որ առումով հավասարազոր է գործողությանը, քանի որ այս ժանրում կերպարը գործում է խոսքի միջո-

⁴¹ Пропп В. Русская сказка, с. 311.

⁴² Аникин В., նշվ. աշխ., էջ 50:

ցով: Երկխոսությունը դառնում է նաև կերպարների բացահայտման յուրահատուկ միջոց. կերպարը դառնում է խաբեբա և շողոքորթ այն ժամանակ, երբ արտաբերում է շողոքորթ կամ խաբող խոսքեր, մյուս կերպարը դառնում է շողոքորթի զոհը այն իրավիճակում, երբ դառնում է այդ խոսքերի հասցեատերը: Այսպես՝ «Չախմախ աղվըսու ու ախմախ գիլու հեքիաթում»⁴³ թակարդի մեջ դմակ գտած աղվեսն ամեն կերպ աշխատում է հիմարացնել գայլին, որպեսզի վերջինս ինքը հանի դմակը թակարդից, և դրա համար շռայլում է շողոքորթ խոսքեր. «Շատ էրկրներ եմ ման էկի, քու բարի անուն լսեր իմ, օղորմի քու ծնողաց, քու շնորքին ընծի արժան էրե, դառնանք բարեկամ, դու ընծի աղա, ես քըզի ծառա, դատիմ-բանիմ, զքըզի պահիմ, մինակ քու բարի անուն ուր շուք թալի վրեսի»⁴⁴: Գայլը դառնում է շողոքորթ խոսքերի զոհն ու ընկնում թակարդը, իսկ դմակը բաժին է հասնում աղվեսին:

Կենդանապատում հեքիաթներում հեքիաթային խոսքը կարելի է բաժանել երկու մասի՝ *երկխոսություն-գործողություն*, որտեղ ընդգրկված է կերպարների խոսքը, և *պատումային երկխոսություն*, որտեղ հեքիաթասացի նկարագրություններն են, գնահատականները, որոնք այս կամ այն չափով ներկայացնում են նրա վերաբերմունքը հերոսների նկատմամբ: Երկխոսության մեջ ուշագրավ է կերպարների՝ մեկը մյուսին դիմելու ձևը, որը սովորաբար դրսևորվում է ազգակցական հարաբերությունները բնութագրող, ինչպես, օրինակ՝ *գել ախպեր, քավոր աղվես, հոխպեր* (հորեղբայր) *առուծ, վառեկ քուրիկ, սանամեր կամ քավորքուր*, մակդրային կիրառություն ստացած, նաև որպես սոցիալական որոշակի խավի պատկանելության ցուցիչ բառերով ու բառակապակցություններով: Այս առանձնահատկությունը հետաքրքիր դրսևորում ունի և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքում. օրինակ՝ աղվեսին բնութագրելու համար Մուշից գրառված «Աղվըսու ու գիլու հեքիաթում»⁴⁵ հեքիաթասացը անվանում է «սատանի պես բորոշիկ աղվես»⁴⁶ (բորոշիկ՝ գորշ)՝ նրան բնութագրելով ոչ միայն արտաքինապես, այլև ճարպկությունն ու խաբելու հատկությունները ընդգծելու համար: Վերոհիշյալ «Չախմախ աղվըսու ու ախմախ գիլու հեքիաթում»⁴⁷ գայլի անխելքությունն ու հիմարությունը բնութագրելու համար պատմողն ասում է.

⁴³ ՀԺՀ, հ. X (Տոբուբերան. Մուշ-Բուլանլի), Ե., 1967, № 15, էջ 421-426:

⁴⁴ Նույն տեղում, էջ 423:

⁴⁵ Նույն տեղում, № 23 (178), էջ 439-441:

⁴⁶ Նույն տեղում, էջ 439:

⁴⁷ Նույն տեղում, № 15, էջ 421-426:

«Կէրթա, կէրթա, կը հանալըտի յերկեն, չորթան աչքեր գիլու մե՛ խելքից պակաս ու փանաքի»⁴⁸: Մակդիրներն ավելի պերճախոս են աղվեսի խոսքում, երբ նա փորձում է ցույց տալ գայլի տգիտությունն ու իր սեփական իմաստությունը, երբ դառնում է իրավիճակի տերը՝ նրան անվանում է «գարշելի գուշ»⁴⁹ (գարշելիության աման), «կարճամիտ»⁵⁰, «ախմախ հարիֆ»⁵¹ և այլն: Աղվեսին արջն անվանում է «հավգող»⁵², նապաստակը գայլին՝ «փաշա»⁵³, աղվեսին՝ «ռես աղվես»⁵⁴ և այլն:

Այսպիսով, հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթին հատկանշական է հայ և համաշխարհային բանագիտության մեջ դրան տրվող միասնական բնութագիրը, ըստ որի՝ բանահյուսական այս նյութի ժանրային դասակարգման համար հիմք են ընդունվել պատումների գլխավոր հերոսները՝ կենդանիները, ուստի «կենդանապատում հեքիաթ» բանահյուսական եզրույթը հանդես է գալիս իբրև ժանրային հիմնական ցուցիչ: Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթների երկացանկը աչքի է ընկնում նաև վաղնջական ու համեմատաբար ուշ շրջանի պատկերացումներն ամփոփող բանահյուսական նյութերի ժանրային որոշակի բազմազանությամբ: Որոշակի տարերայնությամբ աչքի ընկնող կենդանապատում հեքիաթների հիմքում ընկած է հնարանք-ճարակություն-խաբեությունը, որը ձևավորում է այս հեքիաթների հիմնական մոտիվները: Կենդանապատում հեքիաթը հեքիաթի մյուս ժանրերից տարբերվում է նաև կառուցվածքային մի շարք առանձնահատկություններով, այն է՝ սեղմ և համառոտ տեքստերով, որտեղ գերակշռում է երկխոսությունը: Երկխոսությունը այս հեքիաթներում ոչ միայն բանահյուսական տեքստի կառուցման հիմքն է, այլև ծառայում է իբրև կերպարների և բնավորությունների կերտման և բացահայտման միջոց:

⁴⁸ Նույն տեղում, էջ 422:

⁴⁹ Նույն տեղում, № 23 (178), էջ 440:

⁵⁰ Նույն տեղում, էջ 441

⁵¹ Նույն տեղում, № 16 (171), էջ 428:

⁵² Նույն տեղում, № 6 (161), էջ 405:

⁵³ Նույն տեղում, № 17 (172), էջ 429

⁵⁴ Նույն տեղում:

ЖАНРОВО-КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗОК О ЖИВОТНЫХ

МКРТУМЯН Л.Э.

Резюме

Важной жанровой характеристикой рассматриваемых сказок является то, что в них животные становятся условными носителями человеческих характеров. При этом в сказках о животных нет аллегорий, столь характерных для басен, поскольку сюжет сказок развивается на основе отношений реальных сказочных героев: лисы, волка, зайца и т.д. Сказки о животных отличаются лаконичностью изложения текстов, в них преобладает диалог, который служит основой построения фольклорного сюжета и средством отражения характеров.

THE GENRE AND COMPOSITIONAL PECULIARITIES OF THE ARMENIAN ANIMAL FOLK TALES

L. MKRTUMYAN

Abstract

An important genre peculiarity of the tales under consideration is that the animals become conditional bearers of human characters, and are used to describe human relations and actions. At the same time, the animal tale is deprived of an allegory, characteristic of the parable, as the relationships of tales real heroes, i.e. wolf, fox, rabbit and others are at the very core of the plot development. The animal tales are based on the tricks-dexterity-deception, which forms their main motives and suggests the archaism of their origin. Animal tales are remarkable for the laconism and conciseness of the texts, in which the dialogue is prevailing. The dialogue forms both the foundation for the construction of folk text, and is a path for creation and revelation of the characters.

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ծննդյան 125-ամյակի առթիվ)

Հայ անվանի գրող և հրապարակախոս Վահան Թոթովենցը ծնվել է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Մեզիրե քաղաքում: Նրա ծնողներն ակնեցի էին, XVIII դ. վերջերին գաղթել և հաստատվել էին Մեզիրեում: Հայրը՝ Հովհաննեսը, պետական պաշտոնյա էր (գանձապահ), մայրը՝ տնային տնտեսուհի:

Վ. Թոթովենցի ծննդյան տարեթվի վերաբերյալ հայագիտական գրականության մեջ գոյություն չունի միանման մոտեցում: Գրողի կյանքն ու գրական ստեղծագործությունները ուսումնասիրած գրականագետների աշխատություններում հիմնականում երեք թվական է շրջանառվում՝ 1889, 1893 և 1894: 1889 թ. վկայակոչողներն առավելապես հիմնվում են նրա երկերի՝ 1957 թ. հրատարակության համար բանաստեղծ Վաղարշակ Նորենցի գրած առաջաբանի վրա: «Թոթովենցի ծննդյան թվականի մասին տեղեկությունները տարբեր են, ըստ մի տեղեկության՝ ծնված է 1894-ին, մեր կարծիքով, ճիշտը 1889-ն է», – գրում է նա¹: Այս տարեթիվն է նշվում նաև գրողի երկերի այլ հրատարակությունների առաջաբաններում, նաև «Վիկի-պեդիա» առցանց հանրագիտարանում, որտեղ նույնիսկ ծննդյան ամսաթիվ է նշված՝ սեպտեմբերի 1-ը²:

Թոթովենցին նվիրված մենագրությունում գրականագետ Սարիբեկ Մանուկյանը, հիմնվելով գրողի՝ պահպանված և իրեն հայտնի փաստաթղթերի վրա (զինվորական գրքույկ, լիտֆոնդի անդամության տոմս և

¹ Թոթովենց Վ., Երկեր, առաջաբանը՝ Վ. Նորենցի, Ե., 1957, էջ 3:

² Թոթովենց Վ., Երկեր երեք գրքով, առաջաբանը՝ Ա. Գևորգյանի, հ. 1, Ե., 1988, էջ 4, նույնի՝ [Ստեղծագործությունների ժողովածու], կազմեց և խմբագրեց Ն. Վիրաբյանը, Ե., 2013, https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6_%D4%B9%D5%B8%D5%A9%D5%B8%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81#cite_note-texanunneri_bararan-1 (այցելությունը՝ 12.06.2018 թ.):

այլն), միանգամայն տեղին՝ նրա ծննդյան տարեթիվ է ընդունում 1893 թ.³: «Սովետահայ գրականության պատմություն» բազմահատորյակում Վահան Թոթովենցի մասին գրած ակնարկում ևս նա գրողի ծննդյան տարեթիվ է նշում 1893 թ.⁴: Թոթովենցի ծննդյան նույն տարեթիվն է նշված նաև Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարան»-ում⁵:

Յավոք, Թոթովենցի գրական ժառանգությունը հետազոտած մյուս գրականագետները հավատ չեն ընծայել Ս. Մանուկյանի բերած փաստարկներին: Կարծում ենք՝ այս հարցում վճռորոշ նշանակություն է ունեցել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)՝ Վ. Թոթովենցի ֆոնդում պահվող հայերեն և ռուսերեն ինքնակենսագրությունը (ի դեպ, այն ծանոթ է եղել նաև Ս. Մանուկյանին): Դրանք մեքենագիր պատճեններ են՝ գրված 1936 թ.⁶: Ի դեպ, նույն փաստաթղթի մեկ այլ օրինակը (ռուսերեն մեքենագիր պատճեն) պահվում է Վ. Թոթովենցի՝ բռնադատվածի գործում⁷: Գրողի ինքնակենսագրության վերը նշված օրինակները մի դեպքում նրա արդարացման գործընթացի առթիվ 1955 թ. Հայկական ԽՍՀ դատախազություն է ուղարկել կինը՝ Լուսիկ Թոթովենցը (Հովսեփյան-Աբեղյան), որոնք ներկայումս պահվում են Հայաստանի ազգային արխիվում, իսկ մյուս օրինակները գրողի այլ փաստաթղթերի հետ հետազայում պահպանության է հանձնել ԳԱԹ-ին: Սույն ինքնակենսագրության օրինակներում գրողի ծննդյան տարեթիվ է նշված 1894 թ. «Ծնվել եմ 42 տարի առաջ, 1894 թվականին, Տաճկաստանում, Խարբերդի վիլայեթի Մազրա քաղաքում»: Ի տարբերություն ԳԱԹ-ում պահվող օրինակների՝ ՀԱԱ-ում պահվողի դեպքում այս նախադասությունում «1894 թ.»-ն և «Տաճկաստան/Турция»-ն ձեռագրով են ավելացված:

Հիմնվելով ԳԱԹ-ում պահվող վերը հիշատակված ինքնակենսագրության վրա՝ գրականագետներ Սևակ Արզումանյանը, Սուրեն Աղաբաբյանը և Նորայր Ադալյանն իրենց աշխատություններում Թոթովենցի ծննդյան

³ Մանուկյան Ս.Ա., Վահան Թոթովենց, Ե., 1959, էջ 7:

⁴ Սովետահայ գրականության պատմություն, հ. Առաջին (1917-1941), Ե., 1961, էջ 708:

⁵ Ստեփանյան Գ.Խ., Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., 1973, էջ 365:

⁶ ԳԱԹ, Վահան Թոթովենցի ֆոնդ, գ. 370, թ. 1-3, 4-6:

⁷ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 1086, թ. 229-231:

տարեթիվ են ընդունում 1894 թ.⁸: Նշենք, որ «Հայկական սովետական հանրագիտարանում» Թոթովենցի մասին շարադրած հոդվածում Ս. Արզումանյանը նրա ծննդյան օր է նշում 1894 թ. հուլիսի 18-ը, ինչը հետագայում տեղ է գտել նաև «Հայկական համառոտ հանրագիտարանում», «Ով ով է. հայեր» հանրագիտարանում և այլ հրատարակություններում⁹: Ընդգծենք, որ այս տեսակետից լրացուցիչ հիմնավորում է եղել այն, որ իր հուշերում գրողի դասընկեր Վ. Երեցյանը վկայում է, որ նա ծնվել է 1894 թ.¹⁰:

Բոլորովին վերջերս Հայաստանի ազգային արխիվում մեր հայտնաբերած՝ Վ. Թոթովենցի մեկ այլ՝ ինքնագիր հայերեն կենսագրականում (շարադրված 1926 թ. մարտի 20-ին) գրողն իր ծննդյան տարեթիվ է նշել 1893 թ.¹¹: Նույն տարեթիվն է առկա նաև 1925 թ. հուլիսի 3-ին իբրև պետական համալսարանի գիտական քարտուղարի և անգլերեն լեզվի դասախոսի՝ նրա լրացրած «պատասխանատու աշխատողի» անձնական հարցաթերթիկում¹²: Վ. Թոթովենցի՝ բռնադատվածի գործում պահվող բազմաթիվ փաստաթղթերում (կալանավորվածի անկետա, հարցաքննության արձանագրություն, կնոջ դիմում և այլն) նրա ծննդյան տարեթիվ է նշված 1893 թ.¹³: Նույն տարեթիվն է առկա նաև Լուսիկ Թոթովենցի՝ բռնադատվածի գործում¹⁴:

Այսպիսով, վերը բերված փաստերը, կարծում ենք, թույլ են տալիս վստահաբար պնդելու, որ Վահան Թոթովենցը ծնվել է 1893 թ.: Տրամաբանական է մտածել, որ նա լույս աշխարհ է եկել 1893 թ. երկրորդ կեսին: Սրանով է բացատրվում նաև այն իրողությունը, որ 1936 թ. առաջին կեսին (մինչև հուլիսի 20-ին կալանավորվելը) գրած ինքնակենսագրությունում

⁸ Արզումանյան Ս.Հ., Վահան Թոթովենց, Ե., 1961, էջ 9, Աղաբաբյան Ս.Բ., Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Ե., 1986, էջ 142, Աղաբաբյան Ս.Բ., Վահան Թոթովենց (կենսագրություն), Ե., 1992, էջ 3, նույնի՝ Թոթովենց, Ե., 1994, էջ 8:

⁹ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 195-196, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Ե., 1995, էջ 300-301, Ով ով է. հայեր (կենսագրական հանրագիտարան), հ. 1, Ե., 2005, էջ 434-435, Գասպարյան Դ.Վ., Քալանթարյան Ժ.Ա., Հայ գրականություն, Նորագույն շրջան, դասագիրք հանրակրթական ավագ դպրոցի ավարտական դասարանի համար, Ե., 1993, էջ 162, Կենսագրական հանրագիտարան, Ե., 2009, էջ 250 և այլն:

¹⁰ Նոր Կյանք, Բովսարեստ, 27.IX.1957, N 39:

¹¹ ՀԱՍ, ֆ. 122, ց. 5, գ. 13, թ. 2:

¹² Նույն տեղում, թ. 1:


¹³ Նույն տեղում, ֆ. 1191, ց. 3, գ. 1086, թ. 11 և շրջ. 13, 164, 241, գ. 1088, թ. 22, 24-25:

¹⁴ Նույն տեղում, ց. 1, գ. 818, թ. 1:

Թոթովենցն իրեն 42 տարեկան է համարել. այն է՝ նրա 43-ամյակը դեռևս չէր լրացել:

Փաստորեն, 2018 թվականը անվանի գրողի համար հոբելյանական է՝ լրանում է նրա 125-ամյակը: Այդ առթիվ ստորև հրապարակում ենք նրա նորահայտ ինքնակենսագրությունը: Այն պահվում է Հայաստանի ազգային արխիվի «ՀԽՍՀ լուսավորության նախարարություն և ենթակա կազմակերպություններ» ֆոնդում (ֆ. 122, ց. 5, գ. 13, թ. 2): Փաստաթղթի հրատարակման նպատակով կատարել ենք ուղղագրական և կետադրական մասնակի միջամտություն:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ.Կ.



Վ. Թոթովենցի ինքնակենսագրության լուսապատճենը

[ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ]

20 մարտի 1926 թ.


Երևան

Ծնված եմ Թուրքիայի Մամուրեթ-ու-Ազիզ վիլայեթի Մեզիրե քաղաքում 1893 թվին: Հայրս բուժուհի չինովնիկ էր: Նախնական կրթությունս ստացա Մեզիրե քաղաքի կենտրոնական վարժարանում: 1908 թվին անցա Եվրոպա և Ամերիկա, Ամերիկայում ստացա բարձրագույն կրթությունս գրականության, պատմության և ազատ արվեստների ֆակուլտետում (Ուիսքոնսին համալսարան): 1915 թվին Արխանգելսկով անցա Կովկաս և մասնակցեցի կամավորական շարժմանը: Հազիվ մի քանի ամիս մնացի կամավորական խմբերում՝ հիասթափվեցի և դուրս եկա: Թիֆլիսում ուրիշների հետ¹⁵ միասին հրատարակեցի «Հայաստան» անունով հակադաշնակցական օրաթերթը՝ մի տարի: 1920 թվին էլի անցա Եվրոպա և Ամերիկա և 1922 թվին վերադարձա Կովկաս՝ Հայաստան, Երևան: Երևանում պաշտոնավարել եմ Պետ. թատրոնում՝ իբրև քարտուղար, «Պայքար» պարբերականում՝ իբրև քարտուղար, Պետ. համալսարանում՝ իբրև քարտուղար, «Նոր Ակոս»-ում՝ իբրև քարտուղար, համալսարանի «Տեղեկագրում»՝ իբրև քարտուղար: Հրատարակել եմ Պոլսում, Ամերիկայում և Թիֆլիսում ու Երևանում ավելի քան 16 գրական աշխատություններ (վեպ, բանաստեղծություն և դրամա), պրոֆեսիայով և նախասիրությամբ դրամատուրգ եմ, Պետ. համալսարանում տալիս եմ անգլերեն լեզվի դասեր:

Վահան Թոթովենց

¹⁵ Փաստորեն, Թոթովենցը զգուշանում է այդ «ուրիշ»-ի՝ խորհրդային իշխանությունների համար ոչ ցանկալի դիտվող Անդրանիկ Օզանյանի, անունը հիշելուց:

ИРМА САФРАЗБЕКЯН, Ольга Туманян, Е., Эдит Принт, 2018, 232 с.



Приближается 150-летний юбилей великого Ованеса Туманяна, самого народного армянского поэта. В преддверии общенационального праздника стали издаваться научные монографии и воспоминания. Среди них – книга внучки поэта Ирмы Сафразбекян "Ольга Туманян" (Ереван, "Эдит Принт", 2018, 232 с.). Редактор монографии – Альберт Налбандян.

Книга посвящена преданной подруге жизни Ованеса Туманяна Ольге Туманян. На протяжении долгих тридцати лет Ирма Сафразбекян жила с бабушкой, то есть

была непосредственным очевидцем и свидетелем жизни героини своей книги. Образ Ольги Туманян, этой великой женщины, прожившей долгую и совсем не простую жизнь, создавался как на основе личных впечатлений и воспоминаний автора монографии, так и на основе услышанного от родных и близких, документальных материалов, опубликованной мемуарной литературы. Перед нами предстаёт цельная личность, беспрдельно преданная семье, супругу, детям и внукам. Это образ гордой, благородной, сильной армянки. Она всегда и во всём поддерживала Туманяна, никогда не отчаивалась в сложных жизненных ситуациях, которых в её жизни было более чем достаточно.

Сильный характер, волевая натура Ольги являлись для автора монографии определяющими факторами, и она сумела представить жизнь бабушки в контексте сложного времени, преисполненного важных и судьбоносных для всего армянского народа событий.

Это далеко не первый случай, когда Ирма Сафразбекян выносит на суд читателя историю семьи Ованеса Туманяна, семьи, в судьбах которой

преломилась судьба всего армянского народа, семьи, которую не миновало ни одно испытание, выпавшее на долю её соотечественников и современников в конце девятнадцатого и в первой половине двадцатого столетия. Скажем больше – навряд ли найдётся другая семья, которая по числу невинных жертв и трагических потерь смогла бы сравниться с семьей Туманяна. Любимейший и талантливейший сын поэта Артавазд Туманян, ставший последним армянским комендантом Вана, погиб в 1918 г.; другие трое сыновей, Мушег, Амлик и Арег, также очень одарённые и получившие прекрасное для своего времени образование, являвшиеся яркими представителями армянской интеллигенции, оказались жертвами сталинских репрессий, а единственный внук по мужской линии – Виген в самом начале Великой Отечественной войны ушёл добровольцем на фронт, оказался на передовой и был тяжело ранен в одном из сражений. Виген умер от ран в военном госпитале в 1942 г. А в добровольцы он записался потому, что просто не мог поступить иначе: ему необходимо было доказать окружающим, что никакой он не сын "врага народа", а носитель славной и великой фамилии. С гибелью Вигена на родословном древе Туманяна была срезана последняя ветка, продолжавшая фамилию Поэта Всех Армян.

На протяжении всей своей жизни Ольга Туманян продолжала надеяться на чудо, ждала какой-нибудь весточки, боролась во имя восстановления доброго имени своих сыновей, у которых не было даже могил. Она потеряла свою 29-летнюю дочь Ануш, затем бывших на её иждивении внуков – 26-летнего Ованеса и 21-летнего Вигена; она, как могла, утешала дочь, которая лишилась единственного сына – и это при том, что сама потеряла мужа, четырёх сыновей, трёх дочерей, двоих внуков...

Ирме Сафразбекян довелось стать единственной внучкой Туманяна, получившей филологическое образование, и обогатить туманяноведение рядом ценных исследований. В свои молодые годы она занималась армяно-русскими культурными взаимосвязями, изучала труды Ю. Веселовского, В. Брюсова, А. Луначарского, М. Горького, С. Городецкого, исследовала влияние мировой литературы на творчество Ованеса Туманяна и т.д. Именно благодаря её стараниям в научное обращение были введены все материалы из архива С. Городецкого, имевшие отношение к Армении и армянской культуре. Но со временем зов крови заставил её поменять на-

правление исследовательских работ, и главным предметом её творческих интересов, главной темой всей жизни стало изучение истории семьи Ованеса Туманяна. На этот раз И. Сафразбекян взялась за дело, которое было по плечу только ей. Одна за другой увидели свет, причём на русском и армянском языках, ценные книги – "Письма семьи Туманяна" и "Страницы жизни семьи Туманяна".

В первой части своей новой монографии, озаглавленной "Век жизни, век любви", автор рассматривает историю совместной жизни Туманяна и Ольги сквозь призму воспоминаний Ольги. 19-летний поэт и 17-летняя Ольга поженились 1 декабря 1888 г., прожили вместе 35 лет, вырастили десять детей. Для Ольги, безгранично преданной семье и мужу, Туманян прежде всего был любимым супругом, отцом семейства, главою в доме, поэтому его совершенно невероятное, безграничное гостеприимство, неимоверная щедрость и оказание помощи каждому "встречному и поперечному" за счёт благоденствия семьи воспринималось Ольгой безропотно, с покорностью и пониманием. В определённом смысле мы должны отдать должное Ольге Туманян, должны быть благодарны ей за её неординарную, поистине выдающуюся терпимость ко всем начинаниям и инициативам Туманяна, за литературный кружок "Вернатун", превращавший её дом в проходной дом и "каравансарай", за приём сотен и тысяч деятелей армянской литературы, искусства и культуры, иностранных дипломатов, за то, что она давала в своём доме приют и годами содержала армянских сирот... Даже в долгие месяцы отсутствия поэта его дом продолжал оставаться открытым для всех деятелей национальной культуры. В истории не только армянской, но и мировой литературы не найти аналога этому гостеприимству.

Во второй части книги: "Тепло её души: письма Ольги Туманян" представлены более пяти десятков писем героини книги, более двух десятков из которых публикуются впервые. И вообще, Ирма Сафразбекян первая собрала воедино, исследовала и опубликовала всё эпистолярное наследие семьи Туманяна и, в частности, Ольги. В этих письмах читатель находит не только реалии истории семьи армянского национального поэта, но и детали и подробности общественно-политической, литературной и культурной жизни эпохи. В них сохранились штрихи и нюансы из жизни

близкого окружения Туманяна, а также многочисленных гостей его тифлисской квартиры. Быть женой национального поэта, деятеля искусства или общественно-политического деятеля – уже само по себе большое испытание, но даже здесь Туманян был исключительным в силу своей чрезвычайной занятости; напомним по этому поводу, что он был председателем правления более десятка общественных организаций и зачастую проводил заседания в своей квартире.

Нередко Ольге Туманян в отсутствие мужа приходилось принимать и содержать в своём доме друзей поэта – семью Г. Агаяна, Д. Демирчяна, Ав. Исаакяна, К. Галфаяна и других. Когда Туманян находился на лечении в Абастумане, Л. Шант несколько месяцев проживал в его доме. Ольга в своих письмах выражала беспокойство по поводу того, что могут начаться кривотолки и пересуды. Однако Туманян сохранял "олимпийское спокойствие", и Ольга по своему обыкновению молча и безропотно подчинялась воле и решению супруга. Близкие друзья поэта, шутя, называли Ольгу "великомученицей", а Туманяна – "семейным бедствием". А католикос Всех Армян – Хримян Айрик, также в шутку обещал Ольге в случае необходимости пойти против своих убеждений и в виде исключения дать ей разрешение на развод.

Ольга проявляла большую чуткость и заботу ко всем гостям, однако особенно трогательной была её забота о Комитасе. "Зная его застенчивость и неразговорчивость, – пишет И. Сафразбекян, – бабушка стремилась создать вокруг него тёплую, непринуждённую атмосферу. В туманяновском доме Комитас чувствовал себя свободно и раскованно. Чтобы не смущать детей, он снимал чёрную рясу, садился за рояль, и дети, даже самые маленькие – Седа и Тамара – тут же окружали его" (с. 68).

После смерти Туманяна Ольга прожила долгих 48 лет и выполнила завет сына Амлика, который после смерти отца сказал ей: "Обнимаю твоё мужественное сердце, ты героически перенесла потерю Артика, ты должна продолжить свою стойкость до конца. Тяжким был твой крест... Дорогая мама... Все смотрят на тебя. Ведь ты сейчас замещаешь дорогого отца, будь стойкой". И Ольга продолжала оставаться опорой в доме.

Невозможно читать без волнения и последнюю часть книги: "Татик: воспоминания внуков и правнуков". Здесь воспоминаниями о бабушке

Ольге делятся внучки Сурма и Ирма, правнуки Карине, Татьяна и Рубен. Вспоминая отдельные случаи и фрагменты, они обобщают образ этой замечательной женщины. В книге особняком стоят подробные, обстоятельные воспоминания Сурмы с выразительным названием "Я считала её своей второй мамой". Когда Ольга содержала в своём доме детей-сирот, привезённых Туманяном из Александрополя, когда в голодные и полные лишений послевоенные годы практически ежедневно кормила усыновлённых Кавказским обществом армянских писателей сирот – В. Норенца, М. Тутунджяна и Н. Дабагяна, она, конечно, не могла знать, что от её десяти детей у неё будет всего лишь семь внуков, которые осиротеют в раннем детстве, и что она теперь уже без мужа будет содержать своих внуков-сирот, в частности, дочь Арега Сурму, отца которой расстреляли, а мать сослали. И 66-летняя бабушка взяла на себя заботу о семилетней внучке, заменив ей родителей как раз в те самые дни, когда сама потеряла сразу троих своих сыновей. Ей суждено было долгие годы обращаться в различные инстанции, ожидая хоть какого-то ответа, но так она и не дождалась его.

Ольга спасла и передала поколениям рукописи поэта, его личную библиотеку. Когда в годы Великой Отечественной войны в городе объявляли воздушную тревогу, она заставляла всех спуститься в подвал, а сама оставалась в квартире в качестве охранника имущества поэта. "Она охраняла кабинет дедушки, – пишет Сурма (с. 208). Каждую вещь, так или иначе связанную с Туманяном, Ольга бережно хранила, словно реликвию, при этом её стойкость и решимость не могли поколебать ни бесконечные лишения, ни годы бедствий и сталинского террора.

Когда в Ереване, в Москве и во многих центрах армянской диаспоры торжественно отмечался 100-летний юбилей Ованеса Туманяна, Ольга была ещё жива.

В те юбилейные дни было очень непросто пробиться к музею Туманяна. На подступах к музею яблоку негде было упасть, работа общественного транспорта была временно приостановлена. Правнучка Ольги Карине ценой невероятных усилий пробралась в музей и увидела свою 98-летнюю прабабушку, которая забилась в какой-то угол и выглядела очень печальной и озабоченной. "Лучше не устраивали бы такого пышного праздника

и не произносили таких признаний – но и не трогали моих детей... его сыновей" (с. 220).

В своём эпилоге, завершающем монографию, Ирма Сафразбекян отмечает: "Можно сказать, что это собирательный образ – Человека, Женщины, Матери, достойный подражания. Много пришлось ей увидеть и пережить за эти сто лет, может быть, слишком много для одного человека! Но несмотря на тяжёлые удары судьбы она смогла выстоять в самые трагические моменты жизни, не потеряла способности любить и согревать своим теплом сердца людей" (с. 228).

Образ Ольги Туманян символизирует собой образцовую хранительницу семейного очага, цельность и безграничную доброту женской души.

В заключение следует отметить, что монография Ирмы Сафразбекян "Ольга Туманян", написанная с большой человеческой теплотой и любовью, является заметным вкладом не только в современное туманяноведение, но и в историю армянской мемуаристики и эпистолярной литературы.

ОВАНЕСЯН С.Г.

Доктор филологических наук

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ, Ադրբեջանի հատուկ ծառայությունները և դրանց հակահայ գործունեությունը, Ե., ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, 2017, 301 էջ:



Գիտական և կիրառական տեսանկյունից մեծ կարևորություն ունեն տարածաշրջանի ռազմաքաղաքական և անվտանգային ոլորտին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունները՝ հաշվի առնելով տարածաշրջանում ընթացող գործընթացներն ու դրանց ազդեցությունը Հայաստանի ազգային անվտանգության շահերի ու մարտահրավերների վրա: Արդի տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների շրջանակում խիստ էական են Ադրբեջանի ռազմաքաղաքական հիմնախնդիրների վերհանման նպատակով իրականացվող գիտական հետազոտությունները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի խորհրդի որոշմամբ հրատարակված՝ Տիգրան Դավիթավյանի մենագրությունը, այս առումով, գիտական և կիրառական կարևոր նշանակություն ունի:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ պատերազմական իրավիճակում գտնվելը և Ադրբեջանի Հանրապետության (այսուհետև՝ ԱՀ) իշխանությունների կողմից սահմանի երկայնքով պարբերաբար իրականացվող ռազմական սադրանքներն ու մշտապես հնչող ռազմատենչ հայտարարությունները՝ նման թեմայի գիտական ուսումնասիրությունն առավել քան արդիական է և պահանջված: ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ գործի է դրված ԱՀ պետական-դիվանագիտական, ռազմական ու տեղեկատվական ողջ զինանոցը: Հայաստանի և Արցախի անվտանգությանն ուղղված սադրանքներից ու ռազմական ոտնձգություններից բացի, գործի են դրված նաև ադրբեջանական հատուկ ծառայությունների հետախուզադիվերսիոն, քայքայիչ գործունեության ողջ պաշարն ու ռեսուրսները: Ուստի, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, թեման ուղղակիորեն

առնչվում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը և ՀՀ ռազմական դոկտրինին: Առանձնապես դրվատելի է, որ նման թեմաները գիտական ուսումնասիրության են ենթարկվում նաև ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից և գիտահետազոտական ոլորտում ՀՀ ԱԱԾ-ի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջև ձևավորված համագործակցությունը տալիս է իր արդյունքները, և այս մենագրությունը դրա վառ վկայությունն է:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, հետազոտական մեթոդաբանական հիմքերը, սկզբնաղբյուրների և գրականության դերը սույն հետազոտության մեջ: Ուսումնասիրության համար առաջադրված խնդիրները, որոնք հնարավորություն են տվել թեման դիտարկելու և քննության առնելու ամբողջական, պատմական զարգացման համատեքստում, իրենց պատասխաններն են ստացել մենագրության մեջ:

Աշխատանքը գրվել է հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, անգլերեն և ռուսերեն տարաբնույթ աղբյուրների ու գրականության հիման վրա, օգտագործվել են չիրատարակված փաստաթղթեր, արխիվային նյութեր: Որպես սկզբնաղբյուրներ են ծառայել փաստաթղթերի ժողովածուներ, ժամանակակիցների հուշագրություններ, օրենքներ և իրավական այլ ակտեր, որոնք հնարավորություն են ընձեռել ավելի հանգամանորեն դիտարկել ադրբեջանական հատուկ ծառայությունների գործունեության ու հակահայ ուղղության շարժառիթները, ձևերը, մեթոդները, դրանց կառուցվածքն ու իրավական հիմքերը: Չափազանց կարևոր է, որ ադրբեջաներենից թարգմանվել և շրջանառության մեջ են դրվել իրավական բազմաթիվ ակտեր:

Նշենք, որ ուսումնասիրության համար բավական բարդ, գաղտնի և փակ այս ոլորտի վերաբերյալ տեղեկությունները, մեղմ ասած, սահմանափակ են: Այդուհանդերձ, բաց աղբյուրների հիման վրա կատարվող հետազոտությունը նույնպես կարևոր է դարձնում աշխատանքի գիտական, կիրառական նշանակությունը: Միջազգային պրակտիկայում գաղտնի թեմաների վերաբերյալ բաց աղբյուրներով հետազոտությունների բազմաթիվ փորձեր կան, որոնք տվել են, այսպես ասած, սպասված արդյունքը, իսկ նման հետազոտությունները ծանրակշիռ դեր ունեն նաև հատուկ ծառայությունների գործունեության մեջ:

Մենագրության մեջ առաջին անգամ ներկայացվում են ԱՀ հատուկ ծառայությունների կառուցվածքները (գլ. 3, էջ 78-92), որոնց վերաբերյալ տեղեկություններն այդ երկրում գաղտնի են, և ամբողջական պատկերն ստացվել է՝ բաց աղբյուրների ընձեռած տեղեկատվության համադրման, համեմատու-

թյան, վերլուծության հիման վրա: Հարկ է ընդգծել, որ մեզանում առաջին անգամ է հետազոտվում ԱՀ հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեությանը վերաբերող հարցերի մի ամբողջ շրջանակ: Թեմայի բնույթից ելնելով՝ հեղինակն անդրադարձել և ներկայացրել է ԱՀ հատուկ ծառայությունների կազմավորումն ու հակահայ գործունեությունը 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության շրջանում՝ այս համատեքստում գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք արխիվային փաստաթղթեր: Տ. Դավիթբախյանը իրավացիորեն նկատել է, որ ԱԴՀ հատուկ ծառայությունների հակահայ, հետախուզադիվերսիոն գործունեությունն ավելի լայն թափ ստացավ հատկապես Արցախյան հիմնախնդրի համատեքստում: Խորհրդային ժամանակաշրջանում Ադրբ. ԽՍՀ-ի իշխանությունների և հատուկ ծառայությունների հակահայ, որոշակի սքողված քայլերը ևս շարունակվել, ավելի ցայտուն են դրսևորվել Հ. Ալիևի՝ բարձր պաշտոններ զբաղեցնելուց հետո: Սույն ուսումնասիրության հեղինակը տարբեր փաստերի համադրմամբ կարողացել է ի ցույց դնել դրանց քողարկված հակահայ գործունեության առանձնահատկությունները:

Իրավիճակն էականորեն փոխվեց Արցախյան հիմնախնդրի ի հայտ գալուն պես, երբ ԱՀ-ն Արցախի ինքնորոշմանը պատասխանեց հայերի կոտորածներով, էթնիկ զտումներով ու սանձազերծած ռազմական գործողություններով և իր առաջնահերթությունը հռչակեց ռազմական ճանապարհով հիմնախնդրի լուծմանը հասնելու քաղաքականությունը: Զինադադարից հետո, չդադարեցնելով ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ ռազմական սադրանքները, ԱՀ-ն նոր թափ հաղորդեց հատուկ ծառայությունների գործունեությանը: Տ. Դավիթբախյանը մենագրության մեջ ուսումնասիրել և հստակ ներկայացրել է ԱՀ հատուկ ծառայությունների հետախուզության մի շարք առանձնահատկություններ: Նա իրավամբ նկատում է, որ այդ ծառայությունները ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ հետախուզական ակտիվություն են դրսևորում այնպիսի երկրներում, որտեղ կան հայկական համայնքներ և կապ Հայաստանի ու Արցախի հետ: Այս առումով աչքի է ընկնում հատկապես Թուրքիան, որը մեծ դերակատարություն ունի ոչ միայն Ադրբեջանի ռազմական ոլորտի արդիականացման հարցում, այլ նաև՝ ադրբեջանական հատուկ ծառայությունների հետ համագործակցության, ուղղորդման ու աջակցության գործում: Դեռևս 1990-ականներից Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT) բավական ակտիվ համագործակցում է ԱՀ համապատասխան կառույցների հետ, ինչի վկայությունը Թուրքիայի տարածքում ՀՀ-ի դեմ հետախուզական աշխույժ ակտիվ գործողություններն են: Հայտնի փաստ է, որ MIT-ը 1990-ականնե-

րի սկզբից ներկայացուցչություն է ունեցել Բաքվում: Այդ երկու երկրների միջև առկա է նաև ռազմական հետախուզության վերաբերյալ իրավապայմանագրային բազա¹:

Պատահական չէ, որ, ինչպես նշված է աշխատանքում, ՀՀ-ի դեմ լրտեսական գործունեության համար հավաքագրումներն ԱՀ հատուկ ծառայություններն իրականացրել են Թուրքիայի տարածքում բնակվող և աշխատող հայերի շրջանում (էջ 210-213): Այս համատեքստում Թուրքիայի և Ադրբեջանի հատուկ ծառայությունները ռազմական և հետախուզական ոլորտներում սերտորեն և համակարգված են գործում իրար հետ: «Ուսումնասիրելով ՀՀ-ում և Արցախում պետական դավաճանության և լրտեսության մեղադրանքներով դատապարտված անձանց մեղադրական եզրակացությունները և դատավճիռները՝ հստակ ուրվագծվում է, որ Թուրքիայի տարածքում տեղի հատուկ ծառայությունների հովանու ներքո Ադրբեջանի հատուկ ծառայությունները գործում են այնպես, ինչպես սեփական երկրի տարածքում» (էջ 213):

Հեղինակն արդարացիորեն նկատում է, որ Թուրքիայի կողմից ստեղծված Ադրբեջանի «խամաճիկային» հանրապետությունը գտնվում է այդ երկրի ռազմաքաղաքական ազդեցության ոլորտում, և Թուրքիան ամեն կերպ աջակցում է ԱՀ-ի հակահայկական գործունեությանը: Այս առումով ուշագրավ է Թուրքիայի ԶՈՒ ԳՇ նախկին պետ Ի. Բաշբուղի՝ 2016 թ. հարցազրույցներից մեկում արտահայտած այն միտքը, որ «իր երազանքը Թուրքիայի և Ադրբեջանի միավորմամբ՝ մեկ միասնական պետության ստեղծումն է»²: Սա թերևս գերակայող գաղափար է Թուրքիայի ռազմաքաղաքական շրջանակներում, իսկ ՀՀ-ն և ԼՂՀ-ն առկա ռազմաքաղաքական գործընթացներում բախվում են «թուրք-ադրբեջանական տանդեմի» լրջագույն սպառնալիքներին ու մարտահրավերներին:

Վերջին տարիներին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական համագործակցությունն ինտենսիվորեն զարգանում է՝ ընդգրկելով տարբեր ոլորտներ՝ ռազմական կրթությունից մինչև ռազմարդյունբերություն, հետախուզությունից մինչև համատեղ օպերատիվ պլանավորում և այլն³: Ընդ-

¹ Թուրքիա-Ադրբեջան ռազմական համագործակցության մասին տե՛ս **Овсеян Л., Иванов В.** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа и Центральной Азии, Е., 2010:

² İlker Başbuğ: En büyük hayalim, Türkiye ile Azerbaycan'ın..., <http://www.milliyet.com.tr/Ilker-basbug-en-buyuk-hayalim-gundem-2227302/>.

³ Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşması, 12.08.2010, T.C. Başbakanlık, Kanunlar ve Kararlar Genel Müdürlüğü, Sayı:B.02.0.KKG.0.10/101-246/5147.

գծենք, որ 2010 թ. Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրված «Ռազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագրով, փաստորեն, երկու երկրների միջև ռազմաքաղաքական դաշինքը նոր մակարդակի բարձրացվեց, և կողմերը միմյանց նկատմամբ փոխադարձ պաշտպանության պարտավորություններ ստանձնեցին:

Աշխատության մեջ, ի թիվս այլ խնդիրների, ԱՀ հատուկ ծառայությունների գործունեությունը դիտարկվում է ոչ միայն հակահայկական ուղղվածության, այլ նաև ներքաղաքական գործընթացների համատեքստում: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել երկրում տեղաբնիկ ժողովուրդների ճնշումների, կրոնադավանական տարրերի և քաղաքական այլախոհական շրջանակների դեմ հատուկ ծառայությունների գործի դնելու՝ ԱՀ իշխանությունների քաղաքականությանը: Ներկայացվել են նաև հատուկ ծառայությունների բարձրաստիճան պաշտոնյաների՝ կոռուպցիոն ու հակաօրինական գործունեության որոշ դրվագներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս ներադրբեջանական կլանային համակարգի վերաբերյալ: Գրքում վերլուծության է ենթարկված ԱՀ հատուկ ծառայությունների ուղղակի ներգործությամբ Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող տեղեկատվական պատերազմի շրջանակում նախաձեռնված՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև, այսպես կոչված, խաղաղության հարթակի խնդիրը, որը ոչ այլ ինչ է, քան հատուկ ծառայությունների հերթական քարոզչական ու տեղեկատվական գործողություն:

Մենագրության վերջում հանրագումարի են բերված հետազոտական աշխատանքի արդյունքները՝ ընդհանրացնող և հստակ եզրահանգումներով: Սույն ուսումնասիրությունը խիստ արժեքավոր և արդիական աշխատանք է, որը, բացի գիտական կարևորությունից, ունի նաև կիրառական մեծ նշանակություն: Նպատակամիտված է ՀՀ և ԼՂՀ պետական գերատեսչությունների ղեկավար կազմերի իրազեկվածությանը, ՀՀ ԱԱԾ աշխատակիցների որակավորման բարձրացմանը, նախատեսված է նաև ռազմաուսումնական հատուկ դասընթացներում ներառվելու համար:

Գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Սաֆրաստյանի և իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Քինակցյանի խմբագրությամբ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Լ.Ս.

Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ (հիմնադրման 75-ամյակի առթիվ)

1943 թ. նոյեմբերի 10-ին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ և ՀԽՍՀ ժողկոմխորհի № 702 հրամանով ԽՍՀՄ ԳԱ-ի Հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիման վրա ստեղծվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, իսկ նրա կազմում սակավաթիվ ինստիտուտների շարքում հիմնվեց նաև Պատմության ինստիտուտը:

Ինստիտուտի տնօրեններն են եղել միջազգային ճանաչում, ծանրակշիռ վաստակ, ինչպես նաև գիտակազմակերպչական կարողություններ ունեցող անվանի մտավորականներ, որոնց հմուտ ղեկավարության շնորհիվ Պատմության ինստիտուտը ոչ միայն կայացել է որպես հայագիտական հիմնարար հիմնարկ՝ համալրվելով կարող ու գիտակ մասնագետներով, այլ նաև ծնունդ է տվել ակադեմիական նոր հիմնարկների, որոնք մինչ այդ նույն ինստիտուտի կազմում սեկտորի կարգավիճակում էին (Փիլիսոփայության և արվեստի պատմության՝ 1947 թ., Արևելագիտության՝ 1957 թ., Հնագիտության և ազգագրության՝ 1959 թ.): Պատմության ինստիտուտը եղել և մնում է հանրապետության բուհերի և գիտահետազոտական հիմնարկների համար պատմաբան-մասնագետ պատրաստող յուրօրինակ դարբնոց:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեններ են եղել՝ ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին (1943-1947 թթ.), Աբգար Հովհաննիսյանը (1947-1953 թթ.), Սուրեն Երեմյանը (1953-1959 թթ.), պատմ. գիտ. դոկտոր Արամայիս Հարությունյանը (Արմո Հարենց) (1959-1963 թթ.), ակադեմիկոսներ Գալուստ Գալոյանը (1963-1979 թթ.), Հրանտ Ավետիսյանը (1979-2002 թթ.): 2002 թ. ի վեր ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

2018 թ. դեկտեմբերի 26-27-ին տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներ: Այդ օրերին Պատմության ինստիտուտի (ՊԻ) նիստերի դահլիճում անցկացվեց ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական՝ 39-րդ գիտական նստաշրջանը, որը ևս նվիրված էր ՊԻ հիմնադրման 75-ամյակին: Այս հանգամանքը ինստիտուտի լավագույն ավանդույթների շարունակակա-

նության առհավատյաներից է: Գիտաժողովին մասնակցում էին երիտասարդ գիտաշխատողներ և ասպիրանտներ ՊԻ-ի և հանրապետության գիտակրթական այլ հաստատություններից: Գիտական նստաշրջանի առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը, ՊԻ փոխտնօրեն, պ.գ.դ. Կարեն Խաչատրյանը:

Գիտաժողովի երեք նիստերի (նիստավարներ՝ Ալիսա Դումիկյան, Վահե Սարգսյան, Համո Սուքիասյան) ընթացքում հնչեցին շուրջ երկու տասնյակ զեկուցումներ, որոնցում անդրադարձ եղավ պատմագիտական խնդիրներին, Հայաստանի հին, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության ամենատարբեր հիմնահարցերի:

Զեկուցումները վերաբերում էին՝ 1930-ական թվականներին պատմագիտության խնդիրների առնչությամբ Հայկոմկուսի դիրքորոշմանը (Համո Սուքիասյան), Վանի թագավորության արքաների հյուսիսարևելյան արշավանքներին և Էրեբունի ամրոցի հիմնադրմանը (Վահե Սարգսյան), պատմական Սյունիքի Աղահեջք գավառի հնագույն պատմության վերաբերյալ նորահայտ հնագիտական վկայություններին (Հարություն Խուդանյան), Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման թվականի հարցին (Լիանա Նազարյան), X-XIII դդ. Անիում հայ ազնվական կանանց գործունեությանը (Մարիամ Գրիգորյան), XV-XVI դդ. Դիարբեքի քաղաքի հայ բնակչությանն ու քաղաքը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթի (վերա) հաստատմանը (Գոռ Երանյան), XVIII դ. և XIX դ. առաջին կեսին Վրաստանի տնտեսական կյանքում հայ վաճառականների ունեցած դերակատարությանը (Վարդան Եսայան), 1828-1834 թթ. Շուշիում բողոքականների հրատարակած գրքերի քննությանը (Ստյոպա Պետոյան), 1880-ական թթ. Երևանում Էմին Տեր-Գրիգորյանի ծավալած գրահրատարակչական գործունեությանը (Հայկունի Առաքելյան), Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանցի ղեկավարության շրջանում Վրացաիմերեթական թեմի կառավարման խնդրին (Վարդիթեր Գրիգորյան), Հայ եկեղեցին բարեկարգելու հարցում Կարապետ Տեր-Մկրտչյանի ունեցած մոտեցումներին (Անահիտ Ասատրյան), Հայոց ցեղասպանության ընթացքում օսմանյան պետական կառույցների, բանակի և զինված կազմավորումների փոխգործակցությանը (Աշխեն Բասենցյան), 1917 թ. հունիսին Պետրոգրադում գումարված խորհրդակցությունների ընթացքում Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրների քննարկումներին (Հայկ Մահտեսյան),

խորհրդային Հայաստանի պետական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատի ձևավորման ընթացքին ու խնդիրներին (Գևորգ Կետյան), 1924-1930 թթ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եվրոպայի թեմի վարչաժողովրդագրական նկարագրին (Մարիամ Հակոբյան), հետպատերազմյան առաջին տարիներին ՀԽՍՀ ներքին գործերի մինիստրության աշխատակիցների առօրյային (Գայանե Ղազարյան), Արցախյան պատերազմի սկզբնական փուլում կամավորականների առօրյային (Անուշ Ամիրբեկյան), Հայաստանի Երրորդ հանրապետության օրոք Հայ առաքելական եկեղեցու և պետության փոխհարաբերություններին (Նարինե Հարությունյան):

Ձեկուցումներից հետո տեղի էր ունենում հարց ու պատասխան, գիտական արդյունավետ բանավեճ, իսկ գիտական նստաշրջանի ավարտին կազմակերպվեց քննարկում և նստաշրջանի արդյունքների ամփոփում: Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ Հ. Սուքիասյանը հույս հայտնեց, որ գիտաժողովը կարևոր փորձառություն կլինի հետագայում երիտասարդների գիտական մտքի զարգացման ու կատարելագործման համար և հորդորեց ակտիվորեն պատրաստվել հաջորդ տարի կայանալիք հոբելյանական՝ 40-րդ երիտասարդական գիտական նստաշրջանին, որը նվիրված է լինելու Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի 40-ամյակին:

Վերջում ինստիտուտի փոխտնօրեն Կ. Խաչատրյանն ամփոփեց երկօրյա գիտաժողովի աշխատանքները՝ կարևորելով ինստիտուտի հիմնադրման կապակցությամբ հատկապես երիտասարդական գիտաժողով անցկացնելու հանգամանքը: Նա ներկայացրեց իր առաջարկ-նկատառումները և բարեմաղթանքի խոսքեր ուղղեց գեկուցողներին:

ՀՀ ԳԱԱ ՊԻ 75-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստին (27. XII) մասնակցում էին Հայաստանի գիտակրթական, պատմամշակութային, պետական և այլ հիմնարկների ղեկավարներ, գիտնականների տարբեր սերունդների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Նա պատմական ուրվագծով ներկայացրեց հայ պատմագիտական մտքի զարգացման անցած ուղին՝ սկսած XIX դ. մինչև մեր օրերը՝ կարևորելով հատկապես խորհրդային ժամանակաշրջանը, երբ ստեղծվեց հայ պատմագիտական հզոր դպրոցը, հրատարակվեցին բազմաթիվ հիմնարար աշխատություններ, աղբյուրագիտական և սկզբնաղբյուրային ժողովածուներ, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը և այլն: Գիտնականը առանձնապես շեշտեց պատմաբանի պատասխանատու առաքելության՝ անաչառ լինելու անհրաժեշտության մասին, որը հայ պատմագիտական դպրոցի

շարունակականության պահպանման գրավականն է: Պատմագիտությունը նաև գիտաճանաչողական նշանակություն ունի հայրենասեր քաղաքացի ձևավորելու առումով:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը գովեստով արտահայտվեց պատմագիտության և ընդհանրապես հայագիտության զարգացման ասպարեզում Պատմության ինստիտուտի անուրանալի ձեռքբերումների, միջազգային գիտական ոլորտում դրանք ներկայացնելու, պատմաբանների նորանոր սերունդներ աճեցնելու կարողության մասին, ինչպես նաև ընդգծեց ՀՀ պաշտպանության նախարարության հետ ՊԻ սերտ գործակցությունը պատմաճանաչողական և հայրենասիրական դասախոսություններ իրականացնելու կարևորության առումով: Յու. Սուվարյանը փոխանցեց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի շնորհավորանքները՝ նշելով, որ ԳԱԱ նախագահությունը ինստիտուտին է նվիրել համակարգչային համապատասխան տեխնիկա և սարքավորումներ:

Պատմության ինստիտուտի 75-ամյակի առթիվ շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը և ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանին շնորհեց ԵՊՀ «Ոսկե մեդալ» գիտակազմակերպչական ոլորտում ունեցած վաստակի համար: Ելույթ ունեցան նաև Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրեն, պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Ռոբերտ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ. Վարդան Դևրիկյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գևորգ Պողոսյանը, Երևանի պատմության թանգարանի տնօրեն, պ.գ.թ. Արմինե Սարգսյանը:

ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Սարգսյանը փոխանցեց նախարարի պաշտոնակատար Մխիթար Հայրապետյանի ողջույնի ուղերձը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը պարգևատրվեց ՀՀ սփյուռքի նախարարության «Ոսկե հուշամեդալով», իսկ ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը՝ նախարարության «Ոսկե մեդալով»: Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման բնագավառում ունեցած ներդրումների համար ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրերով պարգևատրվեցին ինստիտուտի փոխտնօրեն Կարեն Խաչատրյանը, Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի

պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. Արմեն Մարությանը, Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. Գևորգ Ստեփանյանը, ինչպես նաև նույն բաժնի աշխատակիցներ պ.գ.թ. Քնարիկ Ավագյանը, պ.գ.թ. Սեդա Օհանյանը, պ.գ.թ. Անի Ֆիշենկճյանը, բ.գ.թ. Արծվի Բախչինյանը և գիտաշխատող Էլիզաբեթ Թաջիրյանը:

Հանդիսավոր նիստի ընթացքում ընթերցվեցին Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների ընկերակցության նախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, պ.գ.դ. Ալեքսանդր Չուբարյանի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն, ֆ.-մ. գ.դ. Ալբերտ Սարգսյանի, «Հայկական Հանրագիտարանի» խմբագիր-տնօրեն, քիմ. գ.դ. Հովհաննես Ավագյանի շնորհավորական ուղերձները:

Շնորհավորանքի ու գնահատանքի խոսք ասաց նաև ՊԻ գիտահանրամատչելի տարբեր ձեռնարկների մշտական աջակից, «Թերմոռու-Ար» ընկերության տնօրեն, ֆ.-մ. գ.թ. Խորեն Քոթանջյանը, որը նաև դրամական պարգևներ հանձնեց Երիտասարդ գիտաշխատողների 39-րդ նստաշրջանի մասնակիցներին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատկառելի հոբելյանը նշանավորվեց շուրջ 300 էջից բաղկացած «Պատմության ինստիտուտ –75» գրքի լույս ընծայմամբ (պատ. խմբագիր՝ Կարեն Խաչատրյան), որի շնորհանդեսը նույնպես տեղի ունեցավ հանդիսավոր նիստի ընթացքում: Ներկայացնելով կատարված կոլեկտիվ աշխատանքը՝ Կ. Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ աշխատության մեջ արխիվային վավերագրերի, ինստիտուտի տարեկան հաշվետվությունների, փաստագրական այլ նյութերի և պատմագիտական գրականության հիման վրա ի մի է բերվել ՊԻ գիտական, գիտակազմակերպչական և գիտակրթական գործունեությունը: Ներկայացված են ինստիտուտի անցած ուղին, տարբեր բաժինների (Հին դարերի, Միջին դարերի, Նոր, Նորագույն, Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի, Հայկական գաղթօջախների և սփյուռքի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, Ընդհանուր պատմության) կատարած աշխատանքները, ՊԻ գործող ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի, Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի, հրատարակչության, «Մեսրոպ արք. Աշճյան» գիտահրատարակչական կենտրոնի, ինչպես նաև գործող ՀՀ

ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի գործունեությունը և «Հայոց պատմության հարցեր» տարեգիրքը: Գրքում տեղ են գտել 1943-2018 թթ. ինստիտուտի աշխատակիցների հեղինակած մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, ինստիտուտի հրատարակած աշխատությունների, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների ստվար մատենագիտությունը, նաև՝ հիշարժան լուսանկարներ:

Հոբելյանական նիստի ընթացքում ցուցադրվեց 2003 թ. հեռուստալրագրող Արփեն Մովսիսյանի նկարահանած «Պատմության ինստիտուտ – 60» դիտարժան ֆիլմը:

Մեր հարազատ Պատմության ինստիտուտին, մաղթում ենք հետագա նորանոր գիտական նվաճումներ՝ ի նպաստ հայագիտության, հայ ժողովրդի ներկայի ու ապագայի: Վստահ ենք, որ, շարունակելով 75-ամյա լավագույն ավանդույթները, այսուհետև ևս ինստիտուտի աշխատակիցները գիտական հանրության սեղանին կդնեն բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ:

ԱՎԱԳՅԱՆ Բ.Ռ.

Պատմական գիտությունների թեկնածու

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ.Կ.

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ (Գևորգ Գյոդակյանի ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ)



Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երկարամյա փոխտնօրեն, երաժշտության բաժնի վարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գյոդակյանի (1928-2015) ծննդյան 90-ամյակը:

Գևորգ Շմավոնի Գյոդակյանը ծնվել է 1928 թ. օգոստոսի 12-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Նույն թվականին ընտանիքով տեղափոխվում են Երևան: 1946-ին Գ. Գյոդակյանը ոսկե մեդալով ավարտում է Ֆ. Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը և Պ. Չայ-

կովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը: 1951 թ. նա գերազանցությամբ ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական (գիտական ղեկավար՝ պրոֆ. Գ. Տիգրանով), իսկ 1952 թ.՝ դաշնամուրային (պրոֆ. Գ. Սարաջյանի դասարան) բաժինները:

1953-1956 թթ. Գ. Գյոդակյանը սովորում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում (տեսության ամբիոն, գիտական ղեկավար՝ պրոֆ. Բ. Յարուստովսկի): 1957-ին աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորում (1958-ից՝ Արվեստի ինստիտուտ)՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1960-ին նշանակվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար: Նույն թվականից մինչև կյանքի վերջը նա Արվեստի ինստիտուտի գիտախորհրդի անդամ էր:

Գ. Գյոդակյանը 1961 թ. պաշտպանում է դիսերտացիա՝ «Ռոմանոս Մե-

լիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1965-2015 թթ., կես դար շարունակ, Գ. Գյոդակյանն Արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի վարիչն էր. հմուտ ղեկավար էր, և նրա շնորհիվ Արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժինը դարձավ Հայաստանի երաժշտագիտական գլխավոր կենտրոնը:

1979-2005 թթ. նա Արվեստի ինստիտուտի դիրեկտորի՝ գիտական գծով տեղակալն էր, 2005-2015 թթ.՝ տնօրենի խորհրդականը:

2007-ին պաշտպանելով «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիները» ատենախոսությունը՝ ստանում է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: Ծանրակշիռ է գիտնականի վաստակը հայ երաժշտության պատմության և տեսության հարցերի ուսումնասիրության ասպարեզում:

Հայրենական երաժշտագիտության կարևոր հանգրվաններից են 1963 թ. հրատարակված՝ Գ. Գյոդակյանի «Ակնարկ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրությունը (համահեղինակներ՝ Ք. Կուշնարյան և Մ. Մուրադյան. Գ. Գյոդակյանը հեղինակել է Խորհրդահայ երաժշտության բաժինը), ինչպես նաև “Пути формирования армянской музыкальной классики” և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» հիմնարար մենագրությունները: Արժեքավոր են նաև Տիգրան Չուխաճյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի և հայ երաժշտության մյուս դասականների ստեղծագործությունների վերաբերյալ նրա գիտական ուսումնասիրությունները:

Նշանակալից է երաժշտագետի վաստակը չուխաճյանագիտության ասպարեզում: Հայ երաժշտական թատրոնի առաջնեկին՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերային են նվիրված Գ. Գյոդակյանի՝ 1971-ին հայերենով և ռուսերենով լույս տեսած՝ «Տիգրան Չուխաճյանը և «Արշակ Երկրորդ» օպերան» աշխատությունը, ինչպես նաև “Пути формирования армянской музыкальной классики” և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» գրքերի համապատասխան գլուխները: Անուրանալի է Գ. Գյոդակյանի բազմակողմանի ներդրումը կոմիտասագիտության անդաստանում: Դրա վկայությունն են, առաջին հերթին, նրա՝ “Комитас” (1969), «Կոմիտաս» (2000) և “Komitas” (2014) ուսումնասիրությունները:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության ասպարեզում, անուրանալի՝ Արվեստի ինստիտուտի գիտական անձնակազմի մի քանի սերունդների ներկայացուցիչների ավանդը կոմիտասագիտության կայացման ու զարգացման գործում: Նկատենք, որ կոմիտասագիտության զարգացման

մեջ Արվեստի ինստիտուտի երեք կարկառուն սյուներից մեկը, որոնք իրենց գիտական գործունեությամբ մեծապես առաջ մղեցին այն, Մաթևոս Մուրադյանի և Ռոբերտ Աթայանի կողքին հենց Գևորգ Գյոդակյանն էր: 1969-ին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակվում է նրա “Комитас” մենագրությունը: 1969 թ. Պատմա-բանասիրական հանդեսի 4-րդ համարում տպագրվում է հոդվածաշար՝ նվիրված Կոմիտասին: «Կոմիտասը և համաշխարհային արվեստը» հոդվածում Գ. Գյոդակյանը գրում է. «Կոմիտասը ստեղծագործական ասպարեզ ելավ երաժշտական արվեստի համար դժվարին ժամանակներում, ավանդական շատ պատկերացումների հեղաբեկման շրջանում, երբ միշտ չէ, որ նորը առաջավորի հոմանիշ էր, իսկ նորի որոնումները հաճախ ձևական-ինքնաբավ բնույթ ունեին: Երաժշտական նյութի կազմակերպման կոմիտասյան նոր սկզբունքները առաջ եկան մի ձգտումից, որ նպատակ ուներ առավել խոր թափանցել ժողովրդական արվեստի, ժողովրդական երաժշտության էության մեջ և առավել լրիվ ու կատարյալ արտահայտել այն: Ինչպես ցույց տվեց պատմությունը, դա մեր ժամանակների երաժշտական արվեստի ճշմարիտ նորացման ամենագործուն ուղիներից մեկն էր»¹:

Կոմիտասագիտության նվաճումներից էր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» հիմնարար հոդվածը, որը հեղինակը ավարտում է հետևյալ եզրակացությամբ. «Ակնառու են Կոմիտասի նորարարական սկզբունքները, որ բացահայտվում են ոչ միայն հայ ազգային երաժշտության շրջանակներում, այլև առավել լայն պլանով՝ համաշխարհային երաժշտական արվեստի զարգացման հեռանկարում: Կոմիտասը մեծ է, թերևս, ամենից առաջ այն բանով, որ սեփական՝ ազգային մշակույթի առավել հրատապ խնդիրների լուծումը կարողացավ բարձրացնել 20-րդ դարի ամբողջ երաժշտական արվեստի առջև ծառացած պրոբլեմների լուծման մակարդակին: Ընդ որում, նա ոչ միայն հենվում էր իր նախորդների և ժամանակակիցների փորձի ու նվաճումների վրա, այլև նրանց շարքում էր, ովքեր անմիջականորեն երաժշտական մտածողության որակապես նոր հիմքերն էին դնում»²:

Հետագայում կոմիտասյան ժառանգության ուսումնասիրությամբ գիտնականը զբաղվեց իր ողջ կյանքում³: Կոմիտասին նվիրված հայերեն, ռուսե-

¹ Геодакян Г. Комитас и мировое музыкальное искусство (Պատմա-բանասիրական հանդես, 1969, N 4, էջ 82):

² Գյոդակյան Գ., Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը (Կոմիտասական, հ. 1, Ե., 1969, էջ 119-120):

³ Տե՛ս, օրինակ, Գյոդակյան Գ., Տ. Կոմիտաս վարդապետ (Նշանավոր ճեմարանականներ, պր. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 315-324), նույնի՝ Հայ երաժշտու-

րեն և անգլերեն մենագրություններով և գիտական հոդվածներով Գ. Գյոդակյանը *Կոմիտաս* երկույթը դուրս բերեց ազգային շրջանակից և դիտարկեց XX դ. համաշխարհային մշակույթի համատեքստում: Նշենք նաև, որ նրա ջանքերով և գիտական խմբագրությամբ հրատարակվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 7-14-րդ հատորները (1997-2006): Դա, հիրավի, ոչ միայն բացառիկ իրադարձություն է հայ ժողովրդի երաժշտական կյանքում, այլև կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող համազգային նշանակալի երևույթ:

Մեծ է երաժշտագետի վաստակը հայկական ռոմանսի վարպետ Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության բնագավառում: «Ռոմանոս Մելիքյան. կյանքը և ստեղծագործությունը» մենագրության մեջ հեղինակը, ուսումնասիրելով կոմպոզիտորի ստեղծագործությունները, հատուկ ուշադրություն է դարձրել ռոմանսի ժանրին, որտեղ առավելագույնս դրսևորվել է Ռ. Մելիքյանի տաղանդը: «Հայ երաժշտության ասպետի»՝ Ռ. Մելիքյանի ստեղծագործությունը շարունակելու էր մնալ Գ. Գյոդակյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Հենց նա էր իր հետազոտություններում, անդրադառնալով կոմպոզիտորի հարմոնիկ լեզվին, բացահայտելու, որ «հարմոնիայի ասպարեզում Ռ. Մելիքյանի նորարարական նվաճումներն ունեցան բացառիկ նշանակություն և կարևոր դեր կատարեցին հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի կայացման գործում»⁴:

1977-ին Գ. Գյոդակյանի խմբագրությամբ լույս է տեսում կոմպոզիտորի «Հոդվածներ, նամակներ, հուշեր» ժողովածուն, որտեղ տեղ է գտել նաև երաժշտագետի «Ռ. Մելիքյան՝ երաժշտական գործիչ և երգահան» հոդվածը: 2009-ին Գ. Գյոդակյանը կազմում և հրատարակում է Ռ. Մելիքյանի անտիպ ռոմանսներից մի քանիսը և պետերբուրգյան շրջանում գրված «Աշնան տողեր» վոկալ շարքը՝ կոմպոզիտորի լավագույն ստեղծագործություններից մեկը:

Էական է Գ. Գյոդակյանի վաստակը նաև խաչատրյանագիտության մեջ: Արամ Խաչատրյանի մահից (1 մայիսի, 1978) օրեր անց լույս տեսած «Սովետական արվեստ» հանդեսի (1978) առաջին ութ էջերը նվիրված էին մեծ կոմպոզիտորի հիշատակին: Այդ նյութերի շարքում իր ուրույն տեղն է գրավում Գ. Գյոդակյանի «Նոր աշխարհի շեփորահարը» հոդվածը:

թյան հանճարը, էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009, էջ 73-84, **նույնի՝** Стил Комитаса и музыка XX века (Пути формирования армянской музыкальной классики, Е., 2006, с. 96-129):

⁴ **Геодакян Г.** Рыцарь армянской музыки (Пути формирования армянской музыкальной классики, с. 163).

Գ. Գյոդակյանի կազմած և խմբագրած (Ռաֆայել Ստեփանյանի հետ) “Արամ Խաչատրյան” հոդվածների ժողովածուն⁵, որի առաջին բաժնի (“Как я понимаю народность в музыке” և “Волнующие проблемы”) հոդվածներում ու ասույթներում արտացոլվում են երաժշտական արվեստի, արդի աշխարհում արվեստագետի տեղի ու դերի վերաբերյալ կոմպոզիտորի հայացքները⁶:

Ուշագրավ է Գևորգ Գյոդակյանի կարդացած՝ «Արամ Խաչատրյանը՝ սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր» թեմայով զեկուցումը ՀԽՍՀ ԳԱ նիստերի դահլիճում ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանում (22.X. 1974), որը նվիրված էր կոմպոզիտորի ստեղծագործական ու գործունեությանը:

Խաչատրյանագիտության մեջ կարևոր հանգրվան դարձան Գ. Գյոդակյանի “Традиционное и новаторское в музыке А. Хачатуряна” և «Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը» հոդվածները: Քննության առնելով կոմպոզիտորի հարմոնիկ լեզվի առանձնահատկությունները՝ գիտնականը եզրակացնում է. «Արևելյան լադային կառուցվածքների ու քրոմատիկ տոնայնության միաձուլումը Ա. Խաչատրյանի ստեղծագործության մեջ գտնում է ինքնատիպ և զարմանալիորեն վառ մարմնավորում: Եվ միշտ այն հանդես է գալիս որպես օրգանական համադրություն, անքակտելի ամբողջություն, որտեղ մեղեդու արևելյան կերտվածքը բացահայտում է քրոմատիկ տոնայնությունը, և ինքն էլ բացահայտվում նրա միջոցով»⁷: Հավելենք, որ նրա անմիջական մասնակցությամբ են կազմակերպվել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի՝ Ա. Խաչատրյանին նվիրված երկու գիտական նստաշրջանները (1974, 1984):

Գ. Գյոդակյանը հեղինակ է ավելի քան 150 գրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուզբեկստանի, Գերմանիայի գիտական ժողովածուներում և հանդեսներում: Նրա գրչին են պատկանում քննադատական-հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված ժամանակակից երաժշտության խնդիրներին: Երաժշտագետը զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում:

⁵ Տե՛ս Խաչատրյան Արամ (сост. Геодакян Г., ред. Геодакян Г., Степанян Р.), 1972, 267 ст., 39 л. илл.:

⁶ Տե՛ս **Геодакян Г.** От составителя, Хачатурян Арам (сост. Геодакян Г., ред. Геодакян Г., Степанян Р.), Е., 1972, с. 6:

⁷ **Геодакян Г.** Традиционное и новаторское в музыке А. Хачатуряна (Пути формирования армянской музыкальной классики, с. 242).

Գ. Գյոդակյանը գիտական և գիտակազմակերպական արգասաբեր գործունեությունը հաջողությամբ համատեղել է հասարակական ակտիվ աշխատանքների հետ: 1959 թ. Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ էր, 1968-1995 թթ.՝ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, 1973-1991 թթ. վարել է ՀԿՄ վարչության՝ երաժշտագիտության գծով քարտուղարի պաշտոնը:

1979-1991 թթ. Գ. Գյոդակյանն ընտրվել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության անդամ: Մինչ այդ՝ 1973-ին, արժանացել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության “За лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года” մրցանակին: 2008-ին նրան շնորհվել են Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության մրցանակները:

1988-2001 թթ. Գ. Գյոդակյանը եղել է «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի, 1973-1989 թթ.՝ «Սովետական արվեստ» ամսագրի, 1995-ից՝ «Հայկական համառոտ հանրագիտարանի», 1998-ից՝ «Երաժշտական Հայաստան» հանդեսի խմբագրական խորհուրդների անդամ: 2000 թ. նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ էր:

Իր գիտական ու գիտակազմակերպական արդյունաշատ գործունեության համար 2003-ին և 2013-ին Գ. Գյոդակյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով, իսկ 2005-ին՝ ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

Երաժշտագետը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ, գիտական կադրեր պատրաստելով: 1973-ից նա դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1977-ին նրան շնորհվել են դոցենտի, իսկ 1997-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ: Նրա գիտական ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Երկար տարիներ Գ. Գյոդակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ էր:

Հայրենիքը բարձր է գնահատել Գ. Գյոդակյանի գիտական ու գիտակազմակերպական վաստակը: 1980-ին նրան շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 2009-ին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, 2011-ին՝ «Մովսես Խորենացի» մեդալով:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ.

Արվեստագիտության դոկտոր

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միրայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**

Հրատ. պատվեր N 914
Ստորագրված է տպագրության 21.XII.2018 թ.:
Տպագրական 25.5 մամուլ: Տպաքանակը՝ 180:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 21.XII.2018 г.
25.5 печ. л. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://lraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Официальный сайт журнала: <http://lraber.sci.am>
Электронная почта журнала: lraber@sci.am